ISSN 0135-0536
eISSN 3045-302X

# ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ
HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL

2

2025

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

# Պատմաբանասիրական Հանդես

**ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ**
**HISTORICAL AND PHILOLOGICAL JOURNAL**

2025, 2 (229)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА
PUBLISHING HOUSE «GITUTYUN» NAS RA

ԵՐԵՎԱՆ ЕРЕВАН YEREVAN
2025

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал издается с 1958 года
Редактор-основоположник М. Г. Нерсисян

The journal has been published since 1958
Editor-founder M. G. Nersisyan

**Խմբագրական խորհուրդ**

Նախագահ՝ ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
Գլխավոր խմբագրի տեղակալ՝ ՍՏՅՈՊԱ ՊԵՏՈՅԱՆ
Պատասխանատու քարտուղար՝ ԼԻԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ
Անդամներ՝ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՍԱՏՐՅԱՆ ԱՆՆԱ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ, ԲԱՐԴԱԿՋՅԱՆ ԳԵՎՈՐԳ (ԱՄՆ), ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ԴՈՒՄ-ԹՐԱԳՈՒԹ ԺԱՍՄԻՆ (Ավստրիա), ԶԵՔԻՅԱՆ ԼԵՎՈՆ (Իտալիա), ԿԱՏՎԱԼՅԱՆ ՎԻԿՏՈՐ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՏԵՐՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ (ԱՄՆ), ՏՈՆԱՊԵՏՅԱՆ ԱՆԱՀԻՏ (Ֆրանսիա), ԿՈՆՏԻՆ ԲԵՆԵԴԵՏՏԱ (Ավստրիա), ԿՐՅՈՒՉԿՈՎ ԻԳՈՐ (Ռուսաստան), ՈՐՍԿԱՆՅԱՆ ՀԵՐԻՔՆԱԶ, ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՄՈ

Редакционная коллегия

Председатель – АШОТ МЕЛКОНЯН
Главный редактор – АНУШАВАН ЗАКАРЯН
Заместитель главного редактора – СТЕПА ПЕТОЯН
Ответственный секретарь – ЛИАНА ОГАНЯН
Члены – АБРАМЯН ЛЕВОН, АВЕТИСЯН ПАВЕЛ, АСАТРЯН АННА, БАРДАКЧЯН ГЕВОРГ (США), ВОРСКАНЯН ЕРИКНАЗ, ДОЛУХАНЯН АЭЛИТА, ДУМ-ТРАГУТ ЖАСМИН (Австрия), ЗЕКИЯН ЛЕВОН (Италия), КАТВАЛЯН ВИКТОР, ОГАНИСЯН ГЕНРИК, ТЕРЯН АБРААМ (США), ТОНАПЕТЯН АНАИТ (Франция), КОНТИН БЕНЕДЕТТА (Австрия), КРЮЧКОВ ИГОР (Россия), СУКИАСЯН АМО

Editorial Board

Chair: ASHOT MELKONYAN
Editor-in-Chief: ANUSHAVAN ZAKARYAN
Deputy Editor-in-Chief: STYOPA PETOYAN
Responsible secretary: LIANA OHANYAN
Members: ABRAHAMYAN LEVON, AVETISYAN PAVEL, ASATRYAN ANNA, BARDAKJIAN KEVORK (USA), VORSKANYAN HERIKNAZ, DOLUKHANYAN AELITA, DUM-TRAGUT JASMINE (Austria), ZEKIYAN LEVON (Italy), KATVALYAN VIKTOR, HOVHANNISYAN HENRIK, TERIAN ABRAHAM (USA), TONAPETYAN ANAHIT (France), KONTIN BENEDETTA (Austria), KRUCHKOV IGOR (Russian), SUKIASYAN HAMO

© Պատմաբանասիրական հանդես, 2025
© Историко-филологический журнал, 2025
© Historical and Philological Journal, 2025

Հապավումը՝ ՊԲՀ
Аббревиатура – ИФЖ
Abbreviation: HPhJ

ՀՏԴ : 947.925«1915»

Doi:10.54503/0135-0536-2025.2-3

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
110-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

# ՎԱՆԻ 1915 Թ. «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԺԽՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Բանալի բառեր՝ Վանի 1915 թ. «ապստամբություն», ինքնապաշտպանություն, կոտորած, ժխտելիություն, խռովություն, պանթուրքիզմ, Հայոց ցեղասպանություն, թուրքական դիվանագիտություն, եվրոպական դիվանագիտական տեսակետներ:**

**Ամփոփում**

*Վանի 1915 թ. «ապստամբության» հիմնահարցն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական մեծ կարևորություն, քանի որ այն պատճառ դարձավ Օսմանյան կայսրության մեջ բնակվող հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների վատթարացմանն ու Հայոց ցեղասպանության իրականացման չարժահիմներից: Օսմանյան Թուրքիայի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն արևմտահայերի տեղահանության ու բնաջնջման իր դիվային քաղաքականությունն իրականացնելու համար ստեղծեց գաղափարական կեղծ հիմնավորում՝ արդարացնելու համար կառավարության հանցապարտ այն գործելակերպը, որի հետևանքով 1915–1916 թթ. բնաջնջվեցին չուրջ 1,5 մլն արևմտահայեր: Թուրքական քաղաքական շրջանակներն առաջ քաշեցին Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի՝ իրենց ձևակերպմամբ՝ Վանի «ապստամբության» կեղծ թեզը, որը ներկայացվեց որպես հայերի «դավաճանության» դրսևորում և հայկական կոտորածների դրդապատճառ:*

**Նախաբան**

*Թուրքական քաղաքական շրջանակները, թուրք պատմաբաններն ու նրանց աղրբեջանցի գրչակները[1] փորձել են և այսօր էլ փորձում են արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները, հատկապես՝ Վանի 1915 թ. ապրիլյան*

---

* *Ներկայացվել է 15. V. 2025 թ., գրախոսվել է 22. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

[1] *Տե՛ս* Feridun. 1962, 81; Гасымлы. 2014, 357; *նաև՝* Гасанлы. 2015.

*հերոսամարտը[2] իրենց ձևակերպմամբ՝ Վանի «ապստամբությունը», ներկայացնել որպես հայերի «դավաճանության» փաստարկ, և այն լայնորեն չահարկում են որպես «հայկական աղետի» սկզբնապատճառ[3]: Արևմտահայերի «ապստամբության» թեման առաջին անգամ կիրառվել էր դեռևս 1909 թ. Ադանայի կոտորածների առիթով[4]: Սակայն հայերին քաղաքականապես զրպարտելու այդ մեթոդաբանությունը լայնորեն գործողության մեջ է մտնում Առաջին աշխարհամարտի հայտարարման և Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունների ծավալմանը մեկտեղ:*

*Ե. Օտյանը վերհիշում է, որ «««Վանի դեպքեր»-ի մասին տարագրության ժամանակ շատ անգամներ լսած էի թուրքերու կողմէ, իբրեւ արդարացումը իրենց վայրագ անլուր գազանութիւններուն»[5]: Իսկ Ա. Խատիսյանն էլ նկատում է, որ Տրապիզոնի 1918 թ. բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը, որը գլխավորում էր Ռեուֆ բեյը, արևմտահայերի 1915 թ. հետապնդումները և կոտորածները փորձում էր բացատրել Վանում կազմակերպած հայերի «ապստամբությամբ» և այն պատճառաբանությամբ, որ հայերը զինված էին[6]:*

## Վանի «ապստամբության» հիմնախնդիրը

*Թուրքական պատմագիտության մեջ ժամանակի ընթացքում տիրապետող է դառնում հակահայկական և հակագիտական այն հայեցակարգը, որ Վանի նահանգի 1914–1915 թթ. կոտորածները, Կ. Պոլսի հայ մտավորականության ու հեռագրատների գրաքննիչների 1915 թ. ապրիլի 11 (24)-ի աքսորը, Կարինի, Բասենի, Դերսիմի տեղահանությունները և, ընդհանրապես, Հայոց մեծ եղեռնի դրդապատճառները պայմանավորված են եղել՝ ա) ռուսական իշխանությունների հետ արևմտահայերի քաղաքական հզոր դաշինքով (Ամենայն Հայոց կաթողիկոսի և Կովկասի փոխարքա կոմս Իլլարիոն Ի. Վորոնցով-Դաշկովի միջև կնքված 1914 թ. համաձայնագրի համաձայն Ռուսաստանը պետք է ստիպեր Բ. Դռանը բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, փոխարենը՝ հայերը պարտավորվում էին անվերապահորեն ռազմական օժանդակություն ցույց տալ ցարական կառավարությանը: Այդ նպատակով կաթողիկոսը 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում հանդիպեց Նիկոլայ Բ ցարին)[7], բ) Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների ռազմական գործողություններով և ռուսական զորքերի առաջխաղացմամբ, գ) օսմանյան «հայրենիքի» դեմ ուղղված Վանի նահանգի հայության 1914–1915 թթ. «հակապետական» (ինքնապաշտպանական) ելույթներով և*

---

[2] *Սահակյան. 2005:*

[3] *Ատոսթիս. 2009, 18:*

[4] *Տե՛ս* Mouchegh [Serobian]. 1909; *նաև Մուշեղ. եպս. 1910, նաև՝* Записки Джемаль Паши 1913–1919. 1923, 214; Danişmend. 1971, 374; Uras. 1950, 456; *նաև Ատանայի հայոց պատմութիւն. պատմագրական եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական. 1970, 225, 304:*

[5] *Օտեան. 2004, 452:*

[6] *Տե՛ս Խաչատրյան. 2010, 203:*

[7] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 72.

*դ) Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ. ֆոն Վանգենհայմի կարծիքով, հավանաբար, «ռուսական խարդավանքների» հետևանքով կազմակերպված Վանի ազգաբնակչության 1915 թ. «ապստամբությամբ»[8]:*

*Թուրք հեղինակների կողմից որպես ցեղասպանության անհերթեթ դրդապատճառ է ներկայացվում նաև հայերի ազգային անկախության ձգտումը, որը վտանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը: Որպես այդ ամենի «ապացույց»՝ թուրքական պատմագիտական ղպրոցը ելակետ է ընդունում այն հիմնազուրկ «փաստարկը», որ, իբր, ՀՅԴ կենտրոնական կոմիտեն իր տեղական օղակներին հրաման էր տվել այն մասին, որ երբ ռուսական զորքերը Կովկասյան ճակատում անցնեին ռուս-թուրքական սահմանը և թուրքական բանակը պարտություն կրելով սկսեր նահանջել, Արևմտյան Հայաստանի բոլոր վայրերում հարկավոր էր կազմակերպել ապստամբություններ, որպեսզի թշնամին հայտնվեր երկու քարի արանքում: Իսկ թուրքական զորքերի հնարավոր հարձակման դեպքում թուրքական բանակի հայ զինվորներն իրենց զենքով պետք է լքեին իրենց զորամասերը, կազմակերպեին պարտիզանական ջոկատներ և միանային ռուսական զորամիավորումներին: Ըստ թուրքական «հիմնավորման»՝ այս հրամանը և ցուցումը կարծես թե ի կատար ածվեց այն բանից հետո, երբ ռուսական բանակը հայ կամավորական ջոկատների ուղեկցությամբ 1914 թ. աշնանն անցավ հարձակման, և թուրքական բանակում ծառայող հայերը կա՛մ միացան ռուսական զորքերին, կա՛մ էլ կազմեցին պարտիզանական ջոկատներ[9]:*

*Ժամանակի թուրքական լրատվամիջոցներում պարբերաբար շրջանառվում էր այն տեղեկատվությունը, որ Ռուսաստանը պատերազմի նախօրյակին առանձնացրել էր 242.900 ռուբլի՝ արևմտահայերին սպառազինելու, պատրաստելու և թուրքերի դեմ ապստամբություն կազմակերպելու համար[10]:*

*Մեղադրանքի նման ոճն էր գործածում նաև Կ. Պոլսի թուրքական «Թուրան» պարբերականը, որը, 1914 թ. դեկտեմբերին լույս տեսած «Ռուսիա և հայեր» խորագիրը կրող խմբագրականներից մեկում մեջբերելով Վանի նահանգապետ Թահիր Ջևդեթի խոսքը, նշում էր, որ «... այո՛, եթե թուրքերը ուզէին հայերը մէջտեղէն վերցնել, կրնային անարգել իրենց այս նպատակը իրագործել և ոչ ոք կը համարձակէր անոնց գործին խառնուել: Այսպէս հաստատած էր երիտասարդ թուրքերի կառավարութիւնը և գործի էլ անցաւ ...Վանը իր շրջականերով ապստամբութեան դրօշակ պարզելու պատրաստութեան վրա է: Վռամեանն ու Արամը գաղտնի բանակցութիւնների մէջ են Պարսկաստանի կամաւորների հետ, այդ հաստատող մի գրութիւն, որ բռնած է սահմանի վրայ, մեր ձեռքին է»[11]:*

*Հայերի «ապստամբության» և դրանից բխող հայկական կոտորածների դրդապատճառների պաշտոնական բացատրությունն առաջին անգամ ներկա-*

---

[8] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 150:*

[9] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 73.

[10] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 74.

[11] *Ա–Դ օ. 1917, 162:*

*յացրել է անձամբ Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի, փոստի և հեռագրության նախարար Մ. Թալեաթը՝ նշելով. որ «...այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ՝ պատիժ էր Օսմանյան պետությանը նրանց դավաճանելու, պատերազմում նրանց՝ Ռուսաստանին միանալու և 1915 թ. ապրիլին Վանում ապստամբվելու համար»[12]:*

*Օսմանյան Թուրքիայի ծովային նախարար Ջեմալ փաշան ևս, որը բազմիցս փորձել էր իրեն չքմեղ ձևացնել հայերի տարագրության ու կոտորածների անմիջական կազմակերպման հարցում, հետ չմնալով Մ. Թալեաթից, ընդունում էր, որ հայերն ընդվզել էին իշխանությունների դեմ, և հայերի «ապստամբությունը» համարում էր աղետ օսմանյան պետության համար: Այդ առիթով նա նշում է. «Համենայն դեպս, յես այն հաստատ համոզմանն եմ, վոր հայերը ծրագրել եյին մի ապստամբություն, վորը վտանգում եր մեր բանակի թիկունքը և վորը, ըստ հանգամանքի, կարող եր նրան վոչնչացման տանել: Այդ ունենալով աչքի առաջ, իմ ընկերները յեկել են այն վորոշմանը, վոր անհրաժեշտ ե ամբողջ հայ ժողովուրդը մի այնպիսի յերկիր տեղափոխել, ուր նրանք մեզ վո՛չ մի վնաս չեյին կարող հասցնել, այնինչ, հայերին իրենց տեղերում թողնելով, նրանք Ոսմանյան հայրենիքը յենթարկած կլինեյին մի կատաստրոֆայի, վորը տեղի կունենար, յեթե Ռուսաստանը Փոքր-Ասիան տիրեր»[13]:*

*Վանի հայերի 1915 թ. ինքնապաշտպանության հարցը հետաքրքրել է նաև Աբդուլ Համիդ II-ին: Թուրք պատմաբան Մ. Հյուլագյուն իր հուշերում ներկայացրել է գահընկեց եղած սուլթանի մոտեցումը Վանի «ապստամբության» մասին, ուր վերջինս մանավորապես նշում է. «Թերթերում կարդացի, որ հայերը Վանում ռուսների հետ են դաշնակցում: Ես ճիշտ էի: Դավաճաններ: Միայն թե այստեղ էլ (Ստամբուլում) ապստամբություն չանեն: ... Այժմ ճշմարտությունն ի հայտ է գալիս: Եկեղեցիներում, պահեստներում ռումբ, ատրճանակ, զենք էին պահում: Այս ամենից ես ավելի քան տեղյակ եմ»[14]:*

*Վանի հերոսական ինքնապաշտպանությունը քննարկման նյութ է դարձել թուրքական կառավարության 1915 թ. հունիսի 16-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում էր, որ Ռուսաստանն Առաջին աշխարհամարտի կովկասյան ճակատում հաղթանակի հասնելու համար դիմեց այնպիսի օժանդակ քայլերի, որոնք անծանոթ էին ժողովուրդների ռազմական պատմության մեջ: Օգտվելով հայ բնակչության մի մասի անգիտությունից ու միամտությունից՝ Ռուսաստանը հայերին «սովորեցրեց ըմբոստանալու Օսմանյան կայսրության դեմ: Ռուսաստանը չամաչեց ... այդ սադրիչ չարժման հետևանքով Բաշկալեում և Վանի շրջակայքում ստեղծված իրավիճակն աշխարհին ներկայացնել որպես զենքի հաղթանակի արդյունք»[15]:*

*Վանի հայերի «ապստամբության» մտածածին այս հայեցակարգը դարձավ թուրքական գիտաքաղաքական գեղծարարության առաղձը: Ժամանակին այս ամենի մասին ճիշտ էր կանխազգում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանը, երբ նշում էր. «Հայութեան բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց*

---

[12] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2004, 139:*

[13] *Ջ ե մ ա լ-փ ա շ ա. 1927, 53:*

[14] H ü l a g ü. 2007, 253; *Մ ե լ ք ո ն յ ա ն, Պ ո ղ ո ս յ ա ն. 2022, 15–16:*

[15] *Պ ո ղ ո ս յ ա ն. 2011, 165:*

*յղացուած էր, գործադրութեան դրուելու պատրուակ բռնելով Վանայ դէպքերը Կովկասի սահմանագլուխի վրայ մերայնոց ըրած չարժումները եւ իբր թէ գաւառներուն մէջ հայոց ապստամբելու մտադրութիւնը, որուն համար պինուած է եղեր, կասեցնելու համար կարելի միջոցները գործադրուեցան մեր կողմէ»[16]:*

*Նման կանխազգացում ուներ նաև հայ ժողովրդական վրիժառու Ա. Շիրակյանը, երբ համոզմունք էր հայտնում, որ «Թրքական կառավարութիւնը պիտի չահագործէր» Վանի դեպքը՝ այն ներկայացնելով որպես ծրագրված հայկական ընդհանուր ապստամբության փորձ, որի նպատակն էր, իբր, թիկունքից հարվածել թուրքական բանակին[17]:*

*Հաշվի առնելով թուրքական զրպարտությանը հակազդելու կարևորությունը՝ անգլիացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան լորդ Ջ. Բրայսը կարևորում էր այն հանգամանքը, որ «Վանայ դէպքերը խիստ կարեւոր ըլլալով»՝ հարկավոր էր այն ուսումնասիրել անթաքույց անաչառությամբ, որովհետև Վանի ինքնապաշտպանությունը պատճառ դարձավ Օսմանյան կայսրության մեջ հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների խզմանը[18]: Հետևաբար, Վանի «ապստամբության» հիմնախնդիրը խորությամբ ուսումնասիրելու, ընկալելու և այն հասկանալի դարձնելու համար, փորձենք վեր հանել և ներկայացնել ինչպես Օսմանյան Թուրքիայի և Քառյակ միության, այնպես էլ Անտանտի երկրների առավել կարևոր պետական հայեցակարգային մոտեցումներն ու քաղաքական գործիչների և ուսումնասիրողների տեսակետները, որոնք, լինելով խիստ հակասական, պահպանվել են դիվանագիտական տարբեր զեկուցագրերում ու պատմագիտական աշխատություններում:*

## Վանի «ապստամբության» թուրքական հայեցակարգը

*Այս հարցի վերաբերյալ դիրքորոշումների բացարձակ նմանօրինականությունն է զգացվում թուրքական մեկնաբանություններում: Հիմք ընդունելով թալեաթածին հնարքը հայերի «ապստամբության» վերաբերյալ՝ թուրք պատմաբան Թ. Բըյըքլըօղլուն ամերիկացի պատմաբան Ս. Ֆիշերի «Մերձավոր Արևելքի պատմությունն» գրքի մասին գրած իր գրախոսականում նենգափոխելով իրական փաստերը՝ մինչև վերջ պաշտպանում է հեղինակի այն թյուր և հնարովի կարծիքը, որ, իբր, Վանի ու Կարինի նահանգներում բնակող հայերը 1915 թ. գենքի դիմեցին հատկապես ռուսական զորքերին օգնելու համար[19]:*

*Երիտթուրքերի կողմից կազմակերպված «պատժիչ միջոցառումները», այն է՝ արևմտահայերի կոտորածները, թուրք պատմաբան Հ. Բայուրը «Թուրքական հեղափոխության պատմությունը» գրքում ընութագրում է որպես հարկադրված քայլեր, որոնց նրանք ստիպված էին դիմել պետության անվտանգությունն ապահովելու համար: Այդ պատճառով էլ նա հանդիմանում է բոլոր նրանց, ովքեր սուլթանական կառավարության կողմից հայերի տեղահանումը 1914–1918 թթ. պատերազմի ժամանակ համարում էին բռնության գործողութ-*

---

[16] *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երևսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 41:*

[17] *Տե՛ս* Շ ի ր ա կ ե ա ն. *1991, 44:*

[18] *Տե՛ս* Պ ր ա յ ս. *1920, 46:*

[19] *Տե՛ս* F i s h e r. 1959, 326–327.

*յուն: Հ. Բայուրը, հենվելով թուրք պատմաբան է. Ուրասի կեղծարար պնդումների վրա, գտնում է, որ երիտթուրքական կառավարությունը մեղավորություն չի ունեցել հայկական ջարդերի կազմակերպման գործում, քանի որ վաղօրոք իմանալով Անտանտի երկրների օգնությամբ Վանում նախապատրաստվող հայերի ապստամբության մասին՝ իշխանությունները որոշել էին սահմանամերձ շրջաններից նրանց հեռացնել և տեղափոխել Միջագետք: Հ. Բայուրի ու է. Ուրասի «համոզմամբ» երիտթուրքական կառավարությունը մեղավոր չէր, որ «այդ հայերը զոհվեցին»[20]:*

*Մեկ այլ թուրք հեղինակ՝ Ա. Է. Յալմանը, փորձելով հերքել ռուս դիվանագետ և միջազգային իրավունքի դոկտոր Ա. Մանդելչտամի այն համոզիչ պնդումը, որ հայերի մտքում անգամ չէր եղել թուրքական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու գաղափարը, և որ նրանք զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ անխուսափելի մահը սպառնում էր իրենց, գրում է. «Հայերի վարքագիծը լիովին արդարացնում էր նրանց աքսորելը»[21]:*

## Գերմանական, ավստրո-հունգարական և իտալական դիվանագիտական տեսակետները

*Համանման մտայնությամբ է լեցուն նաև գերմանական, ավստրո-հունգարական և իտալական դիվանագիտական տեղեկատվությունը: Հիմք ընդունելով Վանից հաղորդվող թուրքական ստահոդ տեղեկությունները՝ գերմանական վավերագրերը «փաստում» են, որ հայերն ունեին «լիառատ զէնք ու պայթուցիկ նիւթեր ... Մեռելոց մէջ գտնուած են շատեր՝ ռուսական տարազով ... Հայ ապստամբները բազմիցս յայտնած են Վանէն միանալ ռուսերու հետ»[22]: Դեռ ավելին, դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմին ուղղված գերմանական դիվանագիտական տեղեկությունը հաղորդում էր, որ «հատկապես Վանը և այնտեղի ռուսական հյուպատոսությունը հնուց ի վեր եղել է ռուսների սադրիչ կենտրոնը, որը կարողացել է առավել անարգել գործել ...»[23]: Նույն մտայնությամբ էր առաջնորդվում նաև Կարինի գերմանացի հյուպատոս Մ. Է. Ֆոն Շոյբներ-Ռիխտերը, որը հայտնում էր՝ բացառությամբ Վանի, արևմտահայերի ապստամբությունները հանպատրաստից էին և կրում էին սոսկ ինքնապաշտպանական բնույթ[24]:*

*Դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմը ռայխսկանցլեր Թ. Ֆոն Բեթման-Հոլվեգին ուղղված 1915 թ. ապրիլի 30-ի հեռագրում կարևորում էր այն հանգամանքը, որ օսմանյան «կառավարության որոշումների վրա չէին կարող ազդեցություն չգործել Վանի դեպքերը և այս օրերին ռուսների իբր հաջորդող հարձակումները Բոսֆորում, ինչպես նաև ֆրանսիացիների և անգլիացիների միացյալ հարձակումները Դարդանելի վրա»[25], որոնք նպատակ են ունեցել վտանգել թուրքական բանակի թիկունքը:*

---

[20] B a y u r. 1940, 67.

[21] A h m e d. 1930, 215.

[22] *Տ ա շ ե ա ն. 1921, 12:*

[23] *Բ ա ր ս ե ղ յ ա ն. 2011, 13:*

[24] *Տե՛ս Տ ա տ ր յ ա ն. 2005, 17:*

[25] *Գ ո ւ ս տ. 2008, 40, նաև՝ Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 162:*

*Իր հերթին Դամասկոսի նախարար-ռեզիդենտ բարոն Մ. ֆոն Օպենհայմը ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին հղած 1915 թ. օգոստոսի 29-ի հեռագրում հավաստիացնում էր, որ «Վանի տարածքում և արևելյան Փոքր Ասիայում չուտով պարզ դարձավ, որ խոսքը թշնամու (ակնարկը նախևառաջ վերաբերում էր Ռուսաստանին – Ա. Հ.) հետ վաղուց ի վեր նախապատրաստված գործողությունների մասին է՝ թուրքական տերությունը տապալելու համար: Վանի իրադարձությունները հայտնի են»[26]:*

*Նմանատիպ բովանդակություն ունեն նաև ավստրո-հունգարական դիվանագիտական զեկուցագրերը: Դրանցից մեկում կարդում ենք, որ «ռուսական բանակի Ալաշկերտի դաշտավայրով առաջխաղացումը ամենայն հավանականությամբ ծառայելու է որպես ազդանշան Վանի վիլայեթում հայերի ապստամբության համար: Այդ գիտեին թուրքերը, ուստի և նրանք չատ խիստ զանգվածային միջոցներ են ձեռնարկել (խոսքը՝ հայերի կոտորածների մասին է – Ա. Հ.)»[27]:*

*Հար և նման է Իտալիայի արտաքին գործերի նախարար Սիդնեյ Կոնստանտինո Սոննինոյի 1915 թ. հուլիսի 19-ի հեռագիրը Վաշինգտոնում դեսպան Մաքքիին, որում մասնավորապես նշվում է. «Թալեաթի բեյը ... հայտարարել է, որ ստիպված է եղել միջոցներ ձեռնարկել հայկական շրջանակներում ուրվագծվող ապստամբությունը կանխելու համար»[28]:*

*Երիտթուրքերի կողմից հայկական կոտորածներն արդարացնելու նպատակադրությամբ գերմանական որոշ շրջաններում տարածվում էին նաև կեղծ ու սադրիչ լուրեր: Մասնավորապես, շրջանառվում էր այն տեղեկությունը, որ հայերը Վանում արդեն «դավադրություն էին կազմակերպել»[29]:*

*Ըստ մեկ այլ ապատեղեկատվության, որը գերմանացի ճանապարհորդները տարածեցին 1915 թ. հոկտեմբերին, հայերը, իբր, Վանում սպանել էին Թ. Ջևդեթին, ում դիակը «փողոցներուն մէջ քաշկռտած էին»[30]:*

*Վանի «ապստամբության» կանխամտածված լուրերի քողարկումը հաճախ առնչվում էր արևմտահայ քաղաքական գործիչների հակաթուրքական գործելակերպի հետ: Այսպես, Կ. Պոլսում Գերմանիայի դիվանագիտական հյուպատոս Յո. Հ. Մորգմանը 1915 թ. ապրիլի 28-ի իր զեկուցագրում հավաստիացնում էր, որ «Պաստերմաջյանին սպանել են, որովհետև նրա եղբայրը (խոսքը՝ Գարեգին Փաստրմաջյանի՝ Արմեն Գարոյի մասին է – Ա. Հ.)՝ նախկին պատգամավոր, Վանի վիլայեթում սադրիչ գործողություններ է կազմակերպել ռուսների օգտին»[31]:*

*Ռայքսկանցլեր Բեթման Հոլվեգին հասցեագրած 1915 թ. մայիսի 23-ի հեռագրում դեսպան Վանգենհայմը հայտնում էր, որ «Վանի հայտնի դեպքերը հայ հեղափոխականների գործն է ... Պետք է ավելացնեմ նաև, որ այս օրերին երկու պատգամավոր էլ են ձերբակալված՝ Վարդեսը (Էրզրումի) և Զոհրապ էֆենդին*

---

[26] *Գ ո ւ ս տ. 2008, 181:*

[27] *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, 15:*

[28] *Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, 1913–1923 թթ., հ. Ա, 2008, 165:*

[29] *Տե՛ս* Документы французских архивов о геноциде армян. 1985, 24.

[30] *Պ ր ա յ ս. 1920, 107:*

[31] *Գ ո ւ ս տ. 2008, 170:*

*(Ստամբուլ): Նրանց համարում են խիստ կասկածելի Վանի ապստամբության հետ»[32]:*

*Առանձնահատուկ ուշադրություն է դրավում կեղծիքի վրա հիմնված այն հաղորդագրությունը, թե ինչպես է Բարձր Դուռը Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը ներկայացրել Վանի «ապստամբության» ժամանակագրության իրեն ձեռնտու «գաղտնի» մեկնաբանությունը: Ուղարկված տեղեկություններն այսպիսին էին. «24-ը ապրիլի. պետբանկի և հեռագրատան շենքերը հօդս են թռել, փողոցային կռիվներ, 20 սպանված: 27-ը ապրիլի. Վանի խռովությունը ճնշված է: Քրդերը մասնակցում էին ապստամբությանը: Սպանված է 400 հայ, մնացածները փախել են Ռուսաստան: 6-ը մայիսի. նոր կռիվներ Վանում, թուրքական կողմից 600 մարդկային կորուստ: 9-ը մայիսի. հուզումները Վանում չարունակվում են: Թուրքերից՝ 1000, հայերից՝ 3000 սպանվածներ»[33]:*

*Պարզից էլ պարզ երևում է, որ երկու կողմերի կորուստների թիվը միտումնավոր աճում է թուրքաձև՝ 20-ից հասնելով 400-ի, հետո՝ 600-ի, իսկ հետո՝ 4000-ի: Սակայն Վանի չորսշաբաթյա հերոսամարտի ընթացքում՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի 17-ը, հայերն իրականում տվել էին ընդամենը 18 սպանված, իսկ թուրքերից հազիվ թե ավելի չատ մարդիկ զոհված լինեին[34]:*

*Այս փաստարկների անհերքելիությունը չի վրիպել ո՛չ ավստրո-հունգարական և ո՛չ էլ գերմանական դիվանագիտական անձնակազմերի ուշադրությունից, ըստ որի՝ «այդ մեղադրանքների մեջ տեղ են գտել հավանաբար չափազանցություններ»[35]: Իսկ ըստ Մ. Է. Ֆոն Շոյբներ-Ռիխտերի և Հ. Ֆոն Վանգենհայմի հավաստման (1915 թ. ապրիլի 30-ի հեռագիրն ուղղված ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին)՝ խռովությունների մասին այդ պնդումն անգամ Թալեաթ բեյը համարել է անհիմն[36]:*

*Այդ դեպքում հարց է ծագում, թե ի՞նչ նպատակ էին հետապնդում թուրքական իշխանությունների կողմից ներկայացված երկկողմանի կորուստների ուռճացված չափազանցությունները, չէ որ Վանի նահանգապետ Թ. Ջևդեթը, անկասկած, իր աներոտի Օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար Էնվերին պարբերաբար իրազեկում էր կատարված իրական դեպքերի մասին: Բանն այն էր, որ նրանք ցանկանում էին գերմանական դեսպանությանն «ապացուցել», որ իրավիճակը, իրոք, օրհասական էր Վանում, որ ամեն ինչ դրված էր խաղաքարտերի վրա, և որ Օսմանյան կայսրության հետագա գոյությանը սպառնում էր հայերի հույժ վտանգավոր Վանի «ապստամբությունը»:*

## Վանի «ապստամբության» վերաբերյալ Անտանտի երկրների դիվանագիտական մոտեցումները

*Սաղրիչ և ապակողմնորոշիչ վկայություններից, տարօրինակ է, բայց փաստ է, զերծ չէր նաև ամերիկյան, ֆրանսիական և ռուսական դիվանագիտական*

---

[32] *Գ ո ւ ս տ. 2008, 183:*

[33] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 24–25:*

[34] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 25:*

[35] *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, 17–18:*

[36] *Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 162, 165:*

*լրատվությունը: Այսպես, Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն, իրական համարելով «հայ-անգլիական խոռվության» հավանականությունը, 1915 թ. ապրիլի 30-ին ԱՄՆ պետքարտուղարին ուղղված նամակում նշում էր, որ, իբր, Թ. Ջևդեթն իր նստավայր Վանում վիրավորվել էր հայ ահաբեկիչների կողմից և մահացել ստացած վերքերից, և որ դատական ատյանը հայերի «խռովությունները» ճնշելու որոշում էր կայացրել[37]:*

*Նմանատիպ կարծիք էր հայտնում նաև Սալոնիկում ֆրանսիական հյուպատոս Սեռնը՝ արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեին հասցեագրված 1915 թ. մայիսի 8-ի իր հեռագրում, որտեղ հիմք ընդունելով Կ. Պոլսից ժամանող ճանապարհորդների տեղեկությունները՝ նշում էր. «Վանում հայերը պետք է ապստամբած լինեն և կոտորած աստիճանավորներին ու մահմեդականներին ... Այս իրադարձություններին պետք է հաջորդած լինի 2800 հայերի ձերբակալությունը Կոստանդնապոլսում, որոնց թվում կան բազմաթիվ երևելի անձինք»[38]:*

*Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպան Ա. Բենկենդորֆը, որպես հիմնավորում ընդունելով 1915 թ. մայիսի 12-ին Սալոնիկից ստացված ֆրանսիական հեռագրի հաղորդագրությունը, չտապում էր իրազեկել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին, որ «հայերը գրավել են Վանը, հրկիզել են իշխանատունը, ավերել քաղաքը, որից հետո թուրքերը այն նորից գրավել են և դրանից հետո ջարդեր են տեղի ունեցել»[39]:*

*Իսկ ամերիկացի միջազգայնագետ և իրավաբան Հ. Ա. Գիբբոնսը, 1915 թ. անդրադառնալով Վանի «ապստամբության» խնդրին, նկատում է, որ թուրքերը՝ բացառությամբ Վանի, ոչ մի տեղ նվազագույն հիմքեր չունեին անգամ կասկածելու, որ հայերի ինքնապաշտպանության փորձերը համաձայնեցված չէին թշնամու գործողությունների հետ[40]:*

## Վանի «ապստամբության» թուրքական փաստարկի ժխտելիությունը

*Կոտորածի թուրքական տրամաբանությունն այն է, որ եթե հայերը հանդգնել էին ապստամբել, ապա դրա դիմաց նրանք տեղահանվել են և բնաջնջվել: Դեռևս 1918 թ. Ստամբուլում հրատարակվող թուրքական «Թյուրքչե Իստանբուլ» թերթը գրում էր, որ «մեր՝ թուրքերիս կողմից առաջ քաշված պատճառաբանությունները, համաձայն որոնց Վանում հայերն են մեր վրա նախահարձակ եղել, և որ մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք», գոհացում կարող է տալ միայն նրանց, ովքեր «զգացմունքայնությամբ» և ոչ գիտական ու իրավական տրամաբանությամբ են գործում[41]:*

---

[37] *Տե՛ս* Genocide: Crime against Humanity.– Special Issue of the “Armenian Review”. 1984, 63; *նաև՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին. 2002, 28:*

[38] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 89:*

[39] Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878–1917 гг. 1931–1940, 416–417.

[40] *Գիբբոնս. 2003, 20:*

[41] *Տե՛ս Պողոսյան. 2011, 320:*

*Բ. Դռան կողմից ներկայացված տեղեկագրերի համաձայն՝ Օսմանյան կայսրության տարածքում հայերի ինքնապաշտպանական մարտեր հիմնականում տեղի են ունեցել Արևմտյան Հայաստանի և կայսրության հայաբնակ վեց վայրերում և վեց տարբեր ժամանակահատվածներում. այն է՝ Մուշում (1915 թ. մարտի սկզբներին), Զեյթունում (1915 թ. մարտի 25-ին), Վանում (1915 թ. ապրիլի 20-ին), Շապին Գարահիսարում (1915 թ. հուլիսի 3-ին), Սուեդիայում (1915 թ. հուլիսի 30-ին) և Ուրֆայում (1915 թ. հոկտեմբերի 1-ին): Կարծում ենք, որ Վանի «ապստամբության» մեղադրանքի ողջ սնանկությունը բացահայտելու համար արևմտահայերի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի հետ անհրաժեշտ է նախևառաջ տարբերակել այն եղելությունը, թե հայերի «ապստամբությունները» տեղի են ունեցել արևմտահայության տեղահանություններից առա՞ջ, տեղահանությունների ընթացքո՞ւմ, թե՞ տեղահանություններից հետո:*

*Ըստ իտալական դիվանագիտական փաստաթղթերի՝ տեղահանություններից առաջ «ապստամբություններ» տեղի են ունեցել միայն Մուշում, Զեյթունում և Վանում: Սակայն Զեյթունի, ինչպես նաև Մուշի պարագայում խոսքը ոչ թե «ապստամբությունների», այլ՝ ժանդարմների և դասալիքների միջև անհաղորդ ընդհարումների մասին է, որոնք հատկանշական են եղել նաև նախորդ խաղաղ ժամանակներում[42]: Շապին Գարահիսարում, Սուեդիայում և Ուրֆայում տեղի ունեցած հերոսամարտերի ժամանակագրական հաջորդականությունը ցույց է տալիս, որ դրանք տեղի են ունեցել Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության տեղահանություններից հետո:*

*Ինչ վերաբերում է Վանի «ապստամբությանը», ապա, կարծում ենք, որ այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ հայկական կոտորածները Վանի նահանգում սկսել են ոչ թե Կ. Պոլսի «դավադրությունից», Վանի 1915 թ. «ապստամբությունից» և արևմտահայ խաղաղ ազգաբնակչության տեղահանություններից հետո, այլ՝ Վանի 1915 թ. դեպքերից ամիսներ առաջ՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ Վանի նահանգի՝ Ախոռիկ, Հասան-Թամրան, Խարաբասորիկ, Հազարեն, Ավզարակ գյուղերում իրականացվել էին հայկական կոտորածներ, «երբ Վանայ դիպաց պատրուակ ալ չկար»[43]: «Ապստամբության» ժխտելիության հայեցակարգային առաջնային փաստարկն այն է, որ վանեցիների «ապստամբությունը», ինչպես արխիվային փաստաթղթերից մեկում է նշվում, պայմանավորված էր հայերի պարբերական հետապնդումներով, որոնք չէին թաքցնում իրենց համակրանքը Ռուսաստանի ու դաշնակիցների նկատմամբ[44], և ինչպես հայ լրագրող, հրապարակագիր և հասարակական գործիչ Ա. Անտոնյանն է նկատում՝ « ... կառավարությիւնը «տեղական» գոյն տուած էր, եւ ամէն ճիգ կ՚ընէր հայ ժողովուրդը ապահովցնելու թէ իրեն դէմ ոչինչ կը նկրտուի»[45]:*

*Իրողություն է նաև այն, որ հայ կամավորական ջոկատները 1914 թ. աշնանը Երևանից դեռ դուրս չէին եկել, երբ սկսեցին կոտորածներ Օլթիի, Արտանուշի և Արդվինի հայկական 1.276 (ըստ Լեփսիուսի՝ 7000) գյուղերում: Թուրքական*

---

[42] *Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրություններում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 30:*

[43] *Տ ա շ ե ա ն. 1921, 11:*

[44] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1267, ց. 1, գ. 6, թ. 4:*

[45] *Ա ն տ ո ն ե ա ն. 1921, 129:*

կառավարության հրամանով կոտորվեցին ու կողոպտվեցին նաև Ալաշկերտի, Դիադինի ու Բայազետի շրջանների հայկական 50 գյուղերի բնակիչները[46]:

Ինչ վերաբերում է ռուսական սահմանամերձ գոտուց բավականին հեռու՝ Կարինի, Աղանայի, Հալեպի նահանգների և Զեյթունի հայերի զանգվածային ձերբակալություններին ու տեղահանություններին, ապա դրանք սկսվել էին Վանի 1915 թ. ապրիլյան դեպքերից էլ առաջ՝ 1915 թ. մարտին: Այդ են վկայում նույնիսկ գերմանական աղբյուրները, որոնք Հայոց ցեղասպանությունը ժամանակագրորեն բաժանում են չորս շրջափուլի, որոնցից առաջին շրջանն ընդգրկում է 1914 թ. նոյեմբերի 1-ից (Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո) 1915 թ. ապրիլի 20-ը (հին տոմար)՝ մինչև Վանի դեպքերը[47]: Այսինքն, ակամայից փաստվում է այն ճշմարտությունը, որ նոյեմբերի 1-ից՝ ավելի քան հինգուկես ամիս հետո սկզբնավորված Վանի «ապստամբությունը» կարող էր ընդամենը պատրվակ դառնալ երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության իրագործման համար: Հետևաբար, այն կոտորածների ոչ թե պատճառն էր, այլ՝ առիթը:

Վանի «ապստամբության» թուրքական տեսակետի առաջին հակազդողներից մեկը՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովն էր, որը Լոնդոնում Ռուսաստանի դեսպանին ուղղված 1915 թ. մայիսի 1-ի հեռագրում վստահություն էր հայտնում, որ Վանի հայերի «ապստամբությունը» հարուցել է կոտորածը և ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև ռուսական զորքերի Վան ալշավելը չարժում սկսել թուրքերի դերակշիռ ուժերի դեմ[48]: Համանման լուսանգակություն ուներ նաև Փարիզում Ռուսաստանի դեսպանատան 1915 թ. մայիսի 15-ի հայտարարությունն այն մասին, որ Ս. Սազոնովը ժխտել է Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսի այն կարծիքը, թե հայերի կոտորածները կազմակերպվել են որպես պատասխան Վանում և Զեյթունում նրանց ապստամբության[49]:

Հետաքրքրական է հատկապես Ֆրանսիայի արտգործնախարարությանն ուղղված Փարիզում Ռուսաստանի դեսպան Ալ. Իզվոլսկու 1915 թ. մայիսի 15-ի հաղորդագրությունը, որի մեջ նշվում էր. «Կարելի է կասկածներ չտածել, որ կոտորածներն են տեղիք տվել հայերի ապստամբությանը Վանում և ոչ թե այդ կոտորածներն են հաջորդել ապստամբությանը, որովհետև ողջամտությանն անհարիր կլիներ, եթե հայերը ձեռնամուխ լինեին քրդերի ու թուրքերի գերակշռող ուժերի դեմ ուղղված գործողությունների, առանց նախապես հաշվի առնելու ռուսական զորքերի ժամանման հանգամանքը»[50]:

Այդ մասին են փաստում նաև դիվանագիտական բնույթի այլ հեռագրեր: Այսպես, Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Բենկենդորֆն արտաքին գործերի նախարար Սազոնովին ուղղված 1915 թ. մայիսի 20-ի թիվ 352 հեռագրում նշում է. «... երբ ես նրան (խոսքը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար է. Գրեյի մասին է – Ա. Հ.) ասացի, որ Վանում այսպես կոչված ապստամբության

---

[46] Տե՛ս Ա կ ո ւ ն ի. 1920, 34:

[47] Տե՛ս Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. 2007, 31.

[48] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 340:

[49] Տե՛ս Документы французских архивов о геноциде армян. 1985, 9–10.

[50] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 93:

*փաստը չի կարող ընդունվել ի գիտությյուն, քանի որ այն ակնհայտորեն հետևել է ջարդին, Գրեյը ոչինչ չառարկեց դրան»[51]:*

*Յո. Լեփսիուսը Վանի «ապստամբությունը» համարում է ինքնապաշտպանական մի գործողություն, առանձնահատուկ մի դրվագ հայոց կոտորածների պատմության մեջ և ոչ թե դավաճանություն երկրի հանդեպ, քանի որ հայերն օրինապահ էին մնացել մինչև այն պահը, երբ նրանք Վանում դիմադրություն էին կազմակերպել՝ իշխանություններին թույլ չտալով, որ իրենց սրի քաշեին իբրև «վնասակար և վտանգավոր» տարրի՝ հանուն օսմանյան հայրենիքի բարօրության ու անվտանգության[52]: Յո. Լեփսիուսը բարձրաձայնում է նաև, որ ձերբակալությունների և Վանի իրադարձությունների միջև իրականում ոչ մի կապ չհաստատվեց[53]:*

*Ժամանակին հայկական «խռովությունների» մասին թուրքական «պատճառաբանությունը» հիմնովին ժխտել է նաև Կարինում Գերմանիայի հյուպատոս Շոյքներ-Ռիխտերը, որն իր բարոյական պարտքն է համարել ցույց տալ, որ հայկական ընդհանուր խռովության մասին ապացույցներ չկան: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Է. ֆոն Հոհենլոհե-Լանգենբուրգին ուղղված 1915 թ. օգոստոսի 5-ի նամակում նա հաստատում է, որ «ընդհանրապես հայերի մտադրված և նախապատրաստված ապստամբության վերաբերյալ, ըստ իս, ոչ մի ապացույց չկա»[54]: Դեսպանին տեղեկացնելով, որ Էրզրումի նահանգում իշխանությունները չեն հայտնաբերել ոչ զենք, ոչ էլ հայերին անվանարկող որևէ փաստաթուղթ՝ նա եզրակացնում է, որ եթե այնտեղ խռովություն ծրագրվեր, ապա այն կիրականացվեր 1915 թ. հունվարին, որն ամենահարմար պահն էր, «երբ ռուսները կանգնած էին Էրզրումից 35 կմ հեռավորության վրա և ժանդարմերիան Էրզրումում կազմված էր ընդամենը մի քանի հարյուր մարդուց, այն դեպքում, երբ Էրզրումի միայն աշխատանքային գումարտակներում ընդգրկված էին 3–4 հազար հայեր (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[55]:*

*Իրավացի է նաև Ա. Մանդելշտամը, երբ հավաստում է, որ թուրքական կառավարության ստահոդ հայտարարություններին հակառակ՝ Վանում ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չէր եղել: Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան կոտորածի սպառնալիքը՝ իրենց կյանքը ենթարկելով հնարավորինս թանկ վաճառելու բնական ցանկության: Վանում նրանք զենքի դիմեցին միայն շրջակա գյուղերի բնակչության մեծ մասի կոտորածներից և նահանգապետ Ջևդեթ բեյի հրամանով իրենց անվանի չատ քաղաքացիների դավաճանական սպանություններից հետո, երբ նա իրենց թաղերը շրջապատել էր խրամատներով: Ռազմական գործողությունները սկսել էին թուրքերը, որոնք, սակայն, չէին կարողացել գրավել հայկական դիրքերը և 1915 թ.*

---

[51] *Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին. 2004, 26, նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.), օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու. 2011, 181:*

[52] *Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008, 316:*

[53] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 29:*

[54] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008. 245:*

[55] Армянский вопрос и Геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 455.

մայիսի 20-ին դադարեցրել էին պաշարումը ռուսների մոտենալու պատճառով[56]:

Վանի «ապստամբության» ժխտելիության մասին համոզիչ մեկնաբանություն է տվել Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի գինվորական կցորդ, գեներալ-մայոր Յո. Պոմիանկովսկին իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում, որտեղ գրում է. «Ապստամբությունները Զեյթունն և Վան քաղաքներում տեղի հայերի հուսահատ գործողություններն էին, որոնք տեսան, որ սկսել է համընդհանուր սպանդ ու մոտ ապագայում իրենց հերթին էլ է գալու»[57]: Եվ դա, իրոք, այդպես էր, քանի որ իթթիհատը լուրջ վտանգ էր տեսնում ռուսական սահմանի մոտ ապրող Վանի նահանգի 192.000 հայության մեջ[58]:

Անդրադառնալով Վանի «հեղափոխության»-ը (խոսքը Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի մասին է –Ա. Հ.)՝ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն նկատում է. « ... ամէն անգամ որ Հայերու նպաստին կը դիմէի էնվերի, Թալէաթի եւ նմաններուն, անոնք անփոփոխելիօրէն կը յիշէին Վանի «յեղափոխականները», իբր օրինակ «դաւադրութեան»: Ինչպէս որ այս պատմութիւնը ցոյց կու տայ, այդ համբաւաւոր «յեղափոխութիւնը» ուրիշ բան չէր, բայց եթէ հայերու դիմադրութիւնը՝ միտքերնին դրած ըլլալով պաշտպանել իրենց կիներուն պատիւը եւ իրենց կեանքը, երբ թիւրքերը իրենց դրացիներէն հազարատորներ ջարդելով՝ ցուցուցած էին, թէ ի՛նչ ճակատագիր կը սպասէր իրենց»[59]: Հետևաբար, Վանի «ապստամբությունը», ըստ Հ. Մորգենթաուի, ընդամենը «բացառություն» էր և «հուսահատ» դեպք[60]:

Իրավացի է լորդ Ջ. Բրայսը, թե Վանի «ապստամբություն» «ըստածը օրինական ինքնապաշտպանութեան արարք մը եղաւ եւ ջարդերու պատմութեան մէկ դրուագը, եւ երբեք դաւաճանութիւն մը»[61]:

Վանի «ապստամբության» խնդրի հստակեցման գործում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում միսիոներների հաղորդած վկայությունները: Վանի ամերիկացի միսիոներները վստահում են, որ «Հայերը, տեսնելէ ետք, թէ ինչեր կը կատարուին չրջաններու մէջ, լոկ ինքնապաշտպանութեան էին դիմած»[62]:

Արևմտյան Հայաստանում գործունեություն ծավալած կաթոլիկական քահանա Է. Շտիրը համոզմունք է հայտնում, որ Վանի և Զեյթունի ապստամբությունները եղել են սոսկ ինքնապաշտպանական միջոցառումներ[63]: Իսկ չվեդ միսիոներուհի Ա. Յուհանսոնը վստահ է, որ Վանի «ապստամբությունը» պայմանավորված է եղել կոտորածին չենթակվելու անհրաժեշտությամբ[64]:

Վանի «ապստամբության» խնդրի պարզաբանմանը հանգամանորեն անդրադարձ են կատարել պարսիկ ու արաբ հեղինակները, որոնք անաչառորեն

---

[56] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 590:

[57] Pomiankowski, 1928, 160; նաև՝ Օհանջանյան. 1997, 88:

[58] Վանի նահանգի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 542.000 (տե՛ս Ակուն. 1920, 34):

[59] Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները. 1919, 249:

[60] Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին. 2002, 13:

[61] Պրայս. 1920, 107:

[62] Շիրակեան. 1991, 44:

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 457, ց. 1, գ. 2, թ. 4:

[64] Յուհանսոն. 2008, 41–42:

*հանգել են արդարամիտ եզրակացությունների: Խոսելով Դարդանելի ռազմական գործողությանը[65] Վանի հայության ունեցած «մասնակցության» մասին՝ պարսիկ պատմաբան և գրող Ի. Ռայինը նկատում է, որ Անատոլիան Կովկասյան ռազմաճակատից և Դարդանելից հավասարաչափ հեռու է և պատերազմի տարիներին դաշնակիցների հետ համագործակցության հնարավորությունն ընդհանրապես չկար, ուստի նրանց կողմից Վանում ապստամբության դրոշ բարձրացնելը բացառվում էր, որովհետև «հայերը չունեին կազմակերպված համայնքներ և լայնատարած երկրով մեկ ապրում էին սփռված ու փոքրաթիվ խմբերով»[66]: Մեկ այլ պարսիկ հեղինակ՝ Բ. Էֆթեխարին, փաստում է, որ երիտթուրքերը, տեսնելով իրենց համար ստեղծված հույժ վտանգավոր իրավիճակը, որոշեցին հայերի նկատմամբ բռնություններ կիրառելով չեզոքացնել հասարակական կարծիքը[67]:*

*Եգիպտացի պատմաբան և իրավաբան Ֆուադ Հասան Հաֆիզը գտնում է, որ Վանում օսմանյան պետության դեմ ոչ մի ապստամբություն էլ տեղի չի ունեցել, քանի որ դրանից ամիսներ առաջ Ջևդեթի կողմից հայկական ջարդեր էին իրականացրել Ուրմիա քաղաքում՝ 1915 թ. հունվարի 2-ին քաղաքի թուրքական առաջին գրավումից հետո[68]: Շարունակելով Հաֆիզի միտքը՝ սիրիացի լրագրող և հեղինակ Ս. Արբաշը կատարում է հետաքրքիր համեմատություն և նշում, որ 1915 թ. փետրվարին Ուրմիայում ոչնչացվեցին հայեր՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ: Սակայն այդ առիթով թուրք հեղինակների մոտ չկա անգամ որևէ ակնարկ Ուրմիայի հայերի «ապստամբության» մասին: Հետևաբար, Ուրմիայում օսմանյան զորքերի իրականացրած հայերի կոտորածները գալիս են ոչ միայն հերքելու հայերի ապստամբության և դավաճանության վերաբերյալ թուրքական «տեսակետի» անհեթեթությունը, այլև հաստատում են հայերի ջարդերի կանխապես ծրագրված լինելը[69]:*

*Արաբ գործիչ, Խարբերդի գավառի նախկին կառավարիչ և Մեծ եղեռնի ականատես Ջայեդ էլ-Ղոսեյնը հաստատում է, որ կառավարությունը Վանի հայերից պահանջել է հանձնել զենքերը: Սակայն վերջիններս, վախենալով քրդերից և կառավարությունից, հրաժարվել են կատարել այդ պահանջը[70]:*

*Եգիպտացի պատմաբան Մ. Ռիֆաաթ ալ-Իմամը, խոսելով Վանի դեպքերի մասին, եզրակացնում է՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունեցել Վանում, կարևորն այն է, որ այն ապստամբություն չէր, այլ՝ զինված պաշտպանական գործողություն՝ դիմակայելու թուրքական պաշարմանը[71]:*

*Լիբանանցի պատմաբան, քաղաքական և մշակութային գործիչ Մուսա Պրենսը նույնպես անհիմն է համարում հայերի «ապստամբության» թուրքական վարկածը՝ գտնելով, որ Վանում հայկական ապստամբություն ամենևին էլ*

---

[65] *Դարդանելի-1 (1915 թ. փետրվարի 19 – մարտի 18) և Դարդանելի-2 (1915 թ. ապրիլի 25 – 1916 թ. հունվարի 9) ռազմական գործողությունները, ի վերջո, ավարտվեցին գերմանա-թուրքական միացյալ ուժերի հաղթանակով (տե՛ս Հ ա յ ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1983, 191–192):*

[66] *Ռ ա յ ի ն. 1999, 93–94:*

[67] *Տե՛ս Բ ե գ ի ջ ա ն յ ա ն. 2011, 108:*

[68] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 141–142:*

[69] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 142:*

[70] F â ' i z E l-G h u s e i n (Bedouin Notable of Damascus). 1917, 51.

[71] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 147:*

*տեղի չի ունեցել: Նա համոզմունք է հայտնում, որ Վանի նահանգի հայ բնակչության ջարդերը սկիզբ առան այն ժամանակ, երբ կուսակալ Ջևդեթի հրամանով թուրքական զորքը պաշարեց Վանի հայկական թաղամասերը, իսկ հայերը, հասկանալով թուրքերի մտադրությունները, հերոսաբար դիմադրեցին՝ իրականացնելով օրինավոր պաշտպանություն[72]:*

*Կարևոր մի հանգամանք ևս. վանեցիները ինքնապաշտպանություն էին կազմակերպել մինչև ռուսական զորքերի մուտքը Վան՝ չունենալով ստույգ տեղեկություններ նույնիսկ նրանց չարժընթացի վերաբերյալ: Հետևաբար, չէր կարող խոսք անգամ լինել «ներխուժած թշնամու» հետ համատեղ գործողություններ իրականացնելու մասին[73]: Երբ ռուսական բանակի հրամանատար, գեներալ-մայոր Ալ. Նիկոլաևը իր զորքով մտնում է Վան, Վանի հերոսամարտի ղեկավարներից Ա. Մանուկյանն իր ողջույնի խոսքում ասում է. «Երբ ասկից ամիս մը առաջ զէնք առինք, հաշուի չէինք առած ռուսերու ժամանումը: Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն: Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կա՛մ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կա՛մ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»[74]:*

*Եթե Վանի հայերը, իրոք, գործում էին ռուսների գաղտնի հրահանգով և ցուցումներով, ապա Վանում հայերի դեմ կռված թուրքական բանակի սպա, ծագումով վենետուելացի հրետանավոր Ռաֆայել դե Նոգալեսը չէր քննադատի նրանց՝ ասելով.« ... եթե Վանում շրջափակված հազարավոր հայերը չստեղծեին զինվորական նվագախմբեր, չզբաղվեին ժամանակավոր կառավարությունների ձևավորմամբ և չպատրաստեին մեղալներ ու զինվորական խաչեր, այլ դրա փոխարեն անցնեին հարձակման՝ զինված մահակներով, կացիններով և դանակներով և փորձեին մեր վրա թափվել ամբողջ կուլտով, ո՛վ գիտի, միգուցե նրանք վերջնական հաշվարկով գլխովին ջախջախեին մեզ կամ էլ ստիպեին մեզ նահանջել Բիթլիսի նահանգ»[75]:*

*Կարծում ենք, որ Վանի նահանգի հայերը ուրիշ տարբերակ չունեին, բացի իրենց կյանքը փրկելու համար ինքնապաշտպանության դիմելուց. այլապես արժանանալու էին մյուս նահանգների իրենց ազգակիցների ճակատագրին: Երիտթուրք ղեկավարները, ինչպես մինչև պատերազմի սկիզբը, այնպես էլ պատերազմի ընթացքում, մտահոգ էին հայերի «ապստամբության» մշտական վախով, որն ահագնացավ հատկապես 1915 թ. սկզբներին ռուսներից ու բրիտանացիներից կրած ռազմական մի շարք պարտություններից և թուրքերի կողմից ռուսների վրա հակահարձակման հնարավորության բացառումից հետո: Պաշտպանվելու համար օսմանյան պետության թիկունքը պետք է լիներ ամուր և անխոցելի, իսկ քանի դեռ հայերը գոյություն ունեին, որոնց թուրքերը չէին վստահում, պաշտպանվելու մասին անգամ խոսք լինել չէր կարող: Այս առումով դիպուկ է Կ. Սոլախյանի կարծիքն այն մասին, որ իշխանությունները սպանդի*

---

[72] Prince. 1967, 34.

[73] *Տե՛ս* Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 19.

[74] *Գաղտնի տեղեկագիր Տօքթ. Եօհաննէս Լեփսիուսի (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերման եւ հայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը. 1919, 106:*

[75] Де Ногалес. 2006, 64–65.

*մոլուցքի մեջ այնքան առաջ էին գնացել, որ Վանի հայության հետ հաշտության եզր գտնելու հնարավորություն չէր մնացել[76]:*

*Դրա համար էլ երիտթուրքերը, սկսած 1914 թ. օգոստոսի վերջից, պարբերաբար «հետազոտում» էին հայոց «ապստամբության» իրական հավանականությունը: Այդ նպատակով նրանք նահանգային պաշտոնյաներին ուղարկեցին հարցումների որոշակի ցանկ, որոնց պատասխանները զարմանալիորեն նման էին այն առումով, որ ամենևին էլ չէին ահազանգում ապստամբության կամ պետության անվտանգությանը սպառնացող որևէ վտանգի մասին: Թուրք պատմաբան և հասարակագետ Թ. Աքչամը, ուսումնասիրելով Թուրքիայի վարչապետարանի արխիվի փաստաթղթերը, ներկայացնում է Վանի նահանգապետ Հ. Թահսին բեյի 1914 թ. օգոստոսի 25-ի զեկույցը: Նահանգապետը նշում էր. «... ո՛չ մինչև ընդհանուր զորահավաքը, ո՛չ դրանից հետո հայ բնակչության մեջ որևէ մարդ չի եղել, որը գաղթած լինի Իրան, կամ փախած [իր տնից]: Տեղի հայերի մեջ ո՛չ խռովության, ո՛չ էլ նույնիսկ կառավարության հանդեպ ընդդիմության մտքեր կան ... Ընդհակառակը, ընդհանուր զորահավաքի և պատերազմի կապակցությամբ դաշնակների մեջ կարելի է տեսնել բարձրաձայն աջակցություն և օժանդակության [վերաբերմունք] կառավարության հանդեպ»[77]: Ի դեպ, զեկուցելու արժանի միակ դիտարկումը նահանգապետը համարել է այն, որ «մասնավոր ակումբներում, որտեղ հանդիպում են երիտասարդ հայ առևտրականներն ու ղեկավարները, խոսում են, որ չեն ուզում, որ ռուսները պարտություն կրեն գերմանացիներից, և որ հայկական բարենորոգումների [հարցը] կարող է առաջ գնալ [միայն], եթե Ռուսաստանը Եվրոպայում գերիշխող դառնա»: Հ. Թահսինը եզրափակում է՝ ասելով. «Բացի այդ համառ ցանկությունից, հայերի մեջ ոչ մի ջանք չկա քայլ անելու դեպի [քաղաքական կամ ռազմական] որևէ գործողություն»[78]:*

*Ալեքսանդրեттում Գերմանիայի փոխհյուպատոս Հերման Հոֆման-Ֆեղքերզամպը 1915 թ. նոյեմբերի 8-ին հայտնում էր. «Այլ է խնդիրը, երբ հայերի բռնագաղթեցումը կապում են այն երկյուղի հետ, որ իբր թե թշնամու ներխուժման պարագայում հայերը, ինչպես Վանում էր, կարող են հանդես գալ թշնամու հետ համատեղ: Այդ երկյուղն անկասկած հիմնավորված կլիներ, եթե այն վերաբերեր ոչ միայն հայերին, այլ նաև Թուրքիայի մյուս քրիստոնյաներին և անգամ շատ մահմեդականների, ինչպես բեդերան կուսակցության քրդերին և Իրաքի ու Արաբիայի արաբական նշանավոր խոշոր ցեղերին»[79]:*

*Կարծում ենք, որ վերոնշյալ ներկայացված փաստերի պարզ համադրությունը բերում է այն համոզման, որ եթե թուրքերը բավականաչափ զորք ունենային ռուսական առաջխաղացումը Հյուսիսային Պարսկաստանում և Վանի նահանգի հյուսիսարևելյան շրջաններում կանգնեցնելու համար, ապա հայերի նկատմամբ առաջ քաշված «ապստամբության» մեղադրանքի կծիկը, հավանաբար, որևէ կարևորություն չպետք է ստանար՝ պատերազմի ընդհանուր համատեքստում:*

---

[76] *Տե՛ս Սոլախյան. 2000, 9:*

[77] *Ակտ. 2015, 213–214:*

[78] *Ակտ. 2015, 214:*

[79] Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 291.

*Սակայն դա ամենևին էլ արդարացում չէր, քանի որ Հայոց ցեղասպանության իրական պատճառը եղել է երիտթուրքերի միահեծան և իսլամական հիմունքների վրա կառուցված պանթուրքիզմի գավթողական ծրագրերը, որոնք մշակվել էին դեռևս 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում կայացած «Միությունն և առաջադիմություն» կոմիտեի համաժողովում[80] և 1913 թ. սկսած վերածվել պետական քաղաքականության[81]:*

*1913–1914 թթ. հայկական բարենորոգումների նախագծերի պատճառով թուրքերն արդեն թշնամացել էին հայերի դեմ և մնում էր պատեհ առիթ, որ հայերին կոտորեին: Երբ 1915 թ. մայիսի 12-ին օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վարդգեսը (Հովհաննես Սերենգուլյան) անձամբ այցելում է Թալեաթին, ներքին գործերի նախարարն ակնարկում է, որ «մեր թուրքության օրերին դուք բռնեցիք մեր կոկորդից և առաջադրեցիք բարեփոխումների հայկական հարցը: Դրա համար էլ մենք պետք է օգտագործենք բարեպատեհ իրավիճակը՝ ձեր ժողովրդին ցրելու համար»: «Գուցե երիտթուրքերը դրանով ուզում են չարունակել Աբդուլ Համիդի բնաջնջման գո՞րծը», – հարցնում է Վարդգեսը՝ սուլթանի դեմ համատեղ պայքարի ժամանակների բարեկամությամբ: Թալեաթը պատասխանում է՝ «այո»[82]:*

*«Հայության բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց հղացված էր, – նշում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանն ամերիկահայերի հոգևոր առաջնորդ ծ. վարդապետ Վահունուն գրած 1915 թ. դեկտեմբերի 28-ի նամակում, – գործադրության դրվեցավ պատրվակ բռնելով Վանա դեպքերը, կովկասի սահմանագլուխի վրա մերայնոց ըրած չարժումները և իբր թե ներքին գավառներու մեջ Հայոց ապստամբելու մտադրությունը՝ որուն համար գինված է եղեր կասեցնելու համար կարելի միջոցները գործադրվեցան մեր կողմե: Օսման. պետական անձնավորություններն հայտարարած էին, թե չպիտի թույլ տան, որ Հայաստան ալ եվրոպական նահանգներու նման ձեռքե ելնե»[83]:*

*Անկախ կամավորական խմբերի ստեղծումից, թուրքերն արդեն նպատակադրվել էին կոտորել հայերին՝ Հայկական հարցն այդ եղանակով լուծելու համար և այդ մասին արդեն հայտնի էր: Ինչպես Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանատան թարգման Մ. Լեդուկն է նշում արտգործնախարար Մ. Դելկասեին ուղղված 1915 թ. ապրիլի 25-ի հեռագրում, « ... թուրքերը վախենում էին, որ նորից չծագի Հայկական հարցը», իսկ ապրիլի 29-ին հայտնում էր, որ թուրքերն «իբր ցանկացել են կասեցնել հայերի կողմից հնարավոր հեղաշրջման (խոսքը՝ ապստամբության մասին է – Ա. Հ.) փորձը»[84]: Երիտթուրքերը ստիպված էին խոստովանել, որ «բարենորոգումների հարցը վերջացած լինելու լուրը մեզ այնչափ էլ չէ խանդավառում, ինչպէս 1895 թ. հոկտեմբերին ...»[85]:*

*Վանի «ապստամբության» թուրքական վաստարկի ժխտելիության իրավական տեսանկյունից առկա է նաև մեկ ուրիշ համոզիչ հանգամանք ևս: Նույնիսկ*

---

[80] *Տե՛ս Լ ե փ ս ի ո ւ ս. 1916, 220:*

[81] *Ն ե ր ս ի ս յ ա ն. 1998, 103, Ն ե ր ս ի ս յ ա ն. 2005, 80–83:*

[82] *Գ ո ւ ս տ. 2002, 150:*

[83] *Ն ե ր ս ի ս յ ա ն. 1965, 94:*

[84] Документы французских архивов о геноциде армян. 1985, 9.

[85] *«Մշակ» (Թիֆլիս), 20. III. 1914:*

*եթե «ապստամբություն» էլ բռնկվեր Վանում, իթթիհատական կառավարությունը բարոյական որևէ իրավունք չուներ ցեղասպանության քաղաքականություն իրականացներ կայսրության մյուս վայրերի հայերի նկատմամբ: «Մշակ»-ի սեփական թղթակից Մտրակի (Վահան Մինախորյան – Ա. Հ.)՝ Վանից Թիֆլիս հասցեագրված 1915թ. հունիսի 23-ի նամակից ակնհայտ է, որ «... թիւրք կառավարութիւնը հայերին կոտորելու համար (խոսքը՝ Բիթլիսի կոտորածների մասին է – Ա. Հ.) նոյն պատրուակը չունէր, ինչ որ ունէր Վանում: Ջէվդէթը հայերին համարում էր ապստամբ, որովհետև բանակից դասալիք եղել և զինուր չէին տուել ընդհանրապէս...»[86]: Սակայն Բիթլիսի հայությունն առանց որևէ հիմնավորման ենթարկվեց զարզանդելի կոտորածների:*

*Եթե նույնիսկ որոշ հայեր օգնել էին ռուսներին և օսմանյան խորհրդարանի մի քանի հայ պատգամավորներ «ոճիրներ» էին գործել օսմանյան «հայրենիքի» հանդեպ, թուրքական կառավարության պարտականությունն էր ձերբակալել «ոճրագործներին» և նրանց՝ որպես օսմանյան պետության քաղաքացիներ պատժել: Համենայն դեպս, այդ է վկայում սուլթան Մուհամմեդ V-ին ուղղված Հռոմի Բենեդիկտոս XV պապի 1915 թ. սեպտեմբերի 10-ի նամակի այն հատվածը, որտեղ նա գրում է. «Եթէ հայերու մէջ դաւաճաններ եւ կամ յանցապարտներ գտնուին, թող անոնք օրինաւոր կերպով դատուին եւ պատժուին: Բայց, Ձեր Վեհափառութիւնը թող չթոյլատրէ, որ պատիժի ենթարկուին անմեղներ. Յանցապարտներուն հանդէպ ալ թող փայլի Ձեր ներողամտութիւնը»[87]:*

*Նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, երբ նկատում է. «Չեմ կրնար մեկնել որ Վանայ եղելութեան վրէժը Պրուսայէն կամ Նիկոմիդիայէն առնուի: Չեմ կրնար համոզուիլ որ ծեր ու տղայ, կին ու պառաւ հաւասարապէս պատուհասակոծ ըլլալու ենթարկուին: Չեմ կրնար հասկնալ որ յանկարծօրէն ամբողջ ժողովուրդներ տարագրութեան հանուին, կիներ ու այրեր իրարմէ զատուին եւ այրեր անծանօթ վայրերու եւ անկոխ ձորերու մէջ անհետանան: Չեմ կրնար բացատրել որ մանկամարդ կիներ, նորահաս աղջիկներ եւ անտիրական տղաներ կանանոցներու աւարաբաժին տրուին»[88]:*

*Այդ մասին է փաստում նաև «Թյուրքչե Իստանբուլ» թերթը, երբ նշում է. «Վանում կեղեքիչ ոճիրներ գործեցին մի քանի անհատներ, և կառավարական ուժը պարտավոր էր բնաջնջել միայն այս ոճիրների հեղինակներին, մինչդեռ մեր կառավարությունը որոշեց ջարդեր կատարել, մորթել տվեց մարդկային զանգվածներին, կողոպտել տվեց նրանց ունեցվածքը և հրապարակեց լքյալ գույքի օրենքը, այսինքն՝ բռնագրավել այն կալվածքները, որոնք հնարավոր չէր հափշտակել: Այսպիսով մեր կառավարությունը պաշտոնական բնույթ տվեց չարագործությանն ու հափշտակությանը»[89]: Իսկ թուրք պատմաբան և գրող*

---

[86] *«Մշակ» (Թիֆլիս), 04. VII. 1915:*

[87] *Տրապիզոնի թեմին վիճակուոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1918 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին. 1960, 589:*

[88] *Օ ր մ ա ն ե ա ն. 1923, 337:*

[89] *Պ ո ղ ո ս յ ա ն. 2011, 319:*

*Ահմեդ Ռեֆիք Ալթընայը, դատապարտելով Վանի «ապստամբությունը», միաժամանակ համոզմունք է հայտնում, որ իշխանությունները պետք է պատժեին միայն մեղավորներին, այլ ոչ թե ընտրեին Արևելյան հարցի լուծման ամենահեշտ տարբերակը՝ արևմտահայության տեղահանությունը*[90]*:*

*Նշենք, որ Վանի «ապստամբության» առիթով ողջ արևմտահայությանը բնաջնջման ենթարկելու խնդիրը վիճաբանության նյութ է դարձել նաև օսմանյան խորհրդարանի նիստերի հետպատերազմյան քննարկումներում, երբ Գոզանի (Սսի) երեսփոխան Մատթեոս Նալբանդյանը 1918 թ. նոյեմբերի իր ելույթում մատնանշում էր, որ «իրաւական կամ տրամաբանական ի՞նչ հիմ կայ, որ երկրի ամէն անկիւնը ապրող հայ տեղահան ըլլայ, ջարդուի եւ իր ինչքերը գրաւուելով իւրացուին Վանի դէպքերուն պատճառաւ»*[91]*:*

*Ի դեպ, ի զարմանս մեզ, համանման կարծիք է հայտնել նաև ադրբեջանական* “Turan” *գործակալության խմբագիր՝ Շահին Հաջիևը, որը 2019 թ. փետրվարին այցելել էր Երևան: Խոսելով Հայոց ցեղասպանության մի շարք խնդիրների և Օսմանյան կայսրության դեմ հայերի կազմակերպած «ապստամբության» մասին՝ նա նշում է, որ «եթե նույնիսկ հայերը զենք են բարձրացրել, ապա սպանել պետք չէր»*[92]*:*

*Ինչ վերաբերում է հայերի ազգային անկախության ձգտումը ցեղասպանության դրդապատճառ դիտարկելու թուրքական հերյուրանքին, ապա սեփական պետություն ունենալու ցանկությունը, ինչպես աշխարհի մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ բնական, օրինական և կենսական մի պահանջ էր և անտրամաբանական էր այն մեկնաբանել ցեղասպանության քաղաքականության արդարացման բարձունքից: Հաշվի առնենք, որ 1913–1914 թթ. բարենորոգումների շրջանում հայկական գլխացավանքից ազատվելու համար հենց երիտթուրքերն էին առաջ քաշում հայկական ինքնավար պետություն ստեղծելու գաղափարը*[93]*: Հետևաբար, հայկական կոտորածների դրդապատճառն անկախության գաղափարի մեջ փնտրելը պարզունակ անմտություն է:*

## Եզրակացություն

*Այսպիսով, բացահայտ կեղծիք են օտար հեղինակների, դիվանագետների այն կարծիքները, որ եթե տեղի չունենար Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտը, ապա արևմտահայությունը զերծ կմնար ցեղասպանությունից: Ըստ էության, միտումնավոր դիտավորությամբ՝ պատճառը շփոթվում է հետևանքի հետ: Հակառակ թուրքական կառավարության պաշտոնական ինքնարդարացման փորձի, Վանի հերոսական դոյամարտը բորբոքվեց միայն այն ժամանակ, երբ թուրքերն արդեն սկսել էին իրենց ջարդարարական քաղաքականությունը և ձեռնամուխ էին եղել կոտորելու Վանի նահանգի հայութ-*

---

[90] Altınay. 1999, 10.

[91] *Տ ա տ ր ե ա ն. 1995, 44:*

[92] *Ադրբեջանցի լրագրողը պատմել է Երևան այցի մասին.* – https://mamul.am/am/news/143264.

[93] Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарии. 2002, 130.

*յանը: Հայերը զենքի ղիմեցին միայն իրենք իրենց պաշտպանելու համար՝ հակառակ թուրքական այն պատկերացման, որ տիրող կարգերի դեմ կազմակերպված ամեն տեսակի ըմբոստացում հոմանիշ է պետության դեմ ապստամբության, իսկ հայերն էլ համարվում են «խըյանեթներ» (ըմբոստներ), ուստի արժանի էին պատժի:*

*Նշենք, որ Վանում կազմակերպված հերոսական ինքնապաշտպանությունն անգամ ապստամբության ձևով ներկայացնելն էլ լիովին արդարացվում է, քանի որ այն ուղղված էր թուրքական դարավոր բռնակալության ու հայության բնաջնջման քաղաքականության դեմ:*

*Վանի «ապստամբությունն» ընդամենը ինքնապաշտպանական ձեռնարկում էր սպառնացող ջարդերի դեմ, որը Վանի տարբեր գավառներում սկսեց դրսեւորվել միաժամանակ, երբ նահանգապետ Թ. Ջևդեթը դավադրաբար սպանեց տեղի հայ առաջնորդներին: Հավանաբար, այդ նկատի ուներ Ալեքսանդրետում Գերմանիայի փոխհյուպատոս Հերման Հոֆման-Ցեոլքերզամպը, երբ գրում էր, որ «նկատի առնելով հայերի կրած բոլոր տառապանքները, զարմանալի չէ, որ Վանի հայերն ապստամբեցին»[94]:*

*Իրականում արևմտահայության կոտորածները կապ չունեին ո՛չ պատերազմի և ո՛չ էլ ապստամբության հետ, այլև պայմանավորված էին ուրիշ շարժառիթներով. ա) բուն պատճառը պանթուրքիզմի այն ծրագիրն էր, որը թելադրում էր բնաջնջման այն ռազմարշավը, որը 1914–1915 թթ. ձմռանն առաջնորդեց թուրք-քրդական զորքերին Ուրմիայի և Սալմաստի ասորի ու հայ խաղաղ բնակչության դեմ, իսկ հետագայում էլ առաջ բերեց համընդհանուր հալածանք Դիարբեքիրի և Մոսուլի նահանգներում, որին զոհ գնացին հակոբյանները, քաղկեդոնականները, նեստորականները և հայերը: Հետևաբար, առանց «Վանի ապստամբության» էլ կոտորածի այդ ծրագիրն անցկացվելու էր: բ) Վանի «ապստամբությունը» մի պատրվակ էր, որպեսզի օսմանյան պետության պանթուրանիզմի ծրագիրն արտաքին աշխարհին ներկայացվեր ռազմական անհրաժեշտության քողի տակ: Պատահական չէ, որ Կարինում Գերմանիայի հյուպատոս Մ. Է. ֆոն Շոյբներ-Ռիխտերն իր երկրի արտգործնախարարությանը հասցեագրած 1915 թ. օգոստոսի 10-ի հեռագրում խոստովանում է. «Թուրքական կառավարությունն օգտագործեց պատերազմական վիճակը և Վանում, Մուշում, Գարահիսարում բռնկված հայկական ապստամբությունների առիթը, որպեսզի Անատոլիայի հայերին բռնի արտաքսի Միջագետք»[95]: գ) Թուրքական իշխանությունները, առաջնորդվելով Բալկանյան պատերազմների «դասը» փորձով, զգուշանում էին, որ հայերն առաջին իսկ առիթի դեպքում պատրաստ էին «դավաճանել» Թուրքիային. հետևաբար, անհրաժեշտ էր նրանց կոտորել: Այդ մասին խոսում ենք Կ. Պոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչի 1917 թ. մայիսի զեկույցից: Սակայն բնաջնջման ծրագրի իրականացումը հետաձգվեց Դարդանելի մատույցներում հայտնված անգլիական նավատորմից ունեցած վախի պատճառով: Երբ դաշնակիցները հետ չպրտվեցին Դարդանելից, թուրքական կառավարությունը որոշեց կազմակերպել հայկական կոտորածներ, որպեսզի*

---

[94] *Տ ա տ ր ե ա ն. 2005, 20:*

[95] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 249:*

*զերծ մնան վախից, որը թուրքական կառավարությանը ներշնչում էին հայ հեղափոխական կազմակերպությունները*[96]:

**Ավետիս Հարությունյան – պ. գ. թ., ս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին աշխարհամարտ, Հայոց ցեղասպանություն, Վանի նահանգի պատմություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 200 հոդվածի:**
ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am

*Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դօ. 1917, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թւականներին, Երեւան, «Լոյս», 488 էջ:

Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա. 1965, Մարդկությունը չպետք է ների (փաստաթղթեր հայ ժողովրդի բնաջնջման թուրքական հրեշավոր պլանների և Մեծ Եղեռնի մասին), «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 34–106:

Ակունի Ս. 1920, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914–1918), Կ. Պոլիս, «տպագր. Յ. Աստուրեան որդիք», 319 էջ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. հայոց ցեղասպանության մասին. 2002, կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան, Երևան, ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 32 էջ:

Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները. 1919, Կ. Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 350 էջ:

Անտոնեան Ա. 1921, Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշան. պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պօսթըն, տպ. «Պահակ», 397 էջ:

Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Արտեմ Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց Վառլամ Մարտիրոսյան, Երևան, «Նահապետ», 130 էջ:

Ատանայի հայոց պատմութիւն. պատմագրական եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական. 1940, խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1060 էջ:

Ատոսիտիս Ա. 2009, Հայերը եւ երիտասարդ թուրքերը, Կիլիկիոյ կոտորածները, ֆրանսերէնէ թարգմանեց Էմմա Ազարիկեան, Հալէպ, 166 էջ:

Աքչամ Թ. 2015, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, թարգմանեց Հասմիկ Հարությունյան, Երևան, «Տիգրան Մեծ», 583 էջ:

Բեգիջանյան է. 2011, Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության մասին, Երևան, «Էդիտ Պրինտ», 163 էջ:

[96] *Տե՛ս Ալեքսանյան, Էվոյան, Սարգսյան. 1965, 70:*

Գաղտնի տեղեկագիր Տօքթ. Եօհաննէս Լեփսիուսի (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերման եւ հայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը, 1919, Կ. Պոլիս, «Ասատուրեան որդիք», 318 էջ:

Գեղամեան Ե. ա. քահ. 1917, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ), Բագու, «տպ. Ն. Երեւանցեանի», 583–681 էջ:

Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, հ. I, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալյանի, Երևան, «Հայաստան», 391 էջ:

Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008, հ. II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալյանի, Երևան, «Հայաստան», 430 էջ:

Գիբբոնս Հ. Ա. 2003, Ժամանակակից պատմության ամենասև էջը: 1915-ի դեպքերը Հայաստանում: Փաստեր և պատասխանատվություններ, Երևան, «Նահապետ», 34 էջ:

Գուստ. Կ. 2002, Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան «Հայաստան», 294 էջ:

Գուստ Կ. (Հր.). 2008, Հայերի ցեղասպանությունը 1915–1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, «Հայագիտակ», 720 էջ:

Դերկոմս Պրայս Ճ. 1919, Անգղիական կառավարութեան Կապոյտ գիրքը հայկական Մեծ Եղեռնի մասին (1915–1916), Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 80 էջ:

Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, հ. Ա, 1913–1923 թթ. 2008, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց՝ Արամայիս Բալոյանը, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 280 էջ:

Լեփսիուս Յ. 1916, Հաղորդագրութիւն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին, Պոտսդամ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 280 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 286 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.), օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու 2011, հ. առաջին, կազմող, առաջաբանի հեղինակ՝ Լավրենտի Բարսեղյան, Երևան, «Նահապետ», 238 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.). օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու. 2011, հ. երկրորդ, կազմող, առաջաբանի հեղինակ՝ Լավրենտի Բարսեղյան, Երևան, «Նահապետ», 407 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. 1991 (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մկրտիչ Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» 758 էջ:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, հ. Ա, արխիվի թվայնացումն ու նախնական ցուցակագրումն իրականացրել են Լուսինե Սահակյանը և Անի Սարգսյանը, աշխատասիրեցին Լուսինե Սահակյանը, Անի Ոսկանյանը, Անի Սարգսյանը, առաջաբանը՝ Լուսինե Սահակյանի, Երևան, «Լուսակն», 1040 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 1, գ. 6, ֆ. 457 (Մելիք-Ղարագյոզյանի հավաքածու), ֆ. 1, գ. 2:

Հայոց ցեղասպանության սկանդինավյան արձագանքը ցուցադրության կատալոգ, Երևան, 2014, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, 114 էջ:

Հարությունյան Ա. Հ. 1983, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914–1918), Երևան, «Հայաստան» 375 էջ:

Հովհաննիսյան Ն. 2004, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 475 էջ:

Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն. 2022, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ – XX դարի կեսեր), Երևան, ԵՊՀ հրատ., 110 էջ:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. I, աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, «Հայաստան», 483 էջ:

«Մշակ», Թիֆլիս, 20. III. 1914, 04. VII. 1915:

Մուշեղ եպիսկոպոս. 1910, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, տպ. «Արարատ», 63 էջ:

Մուսա Փրենս գործակցութեամբ Մարի-Անժ Մուսա Փրենսի, Հայասպանութիւնը մարդկութեան դէմ գործուած ոճիրներու ծիրէն ներս, Պէյրութ, 1987, Հայ պայքար մատենաշար «Արարատ» օրաթերթի, 32 էջ:

Յուհանսոն Ա. 2008, Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, «Գասպրինտ», 147 էջ:

Ներսիսյան Մ. Գ. 2005, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, «Գիտություն», 335 էջ:

Ներսիսյան Մ. Գ. 1965, Նյութեր հայկական կոտորածների մասին. – ՊԲՀ, № 1, էջ 85-100:

Ներսիսյան Մ. Գ. 1998, Պատմության կեղծարարները (հոդվածներ եվ հաղորդումներ) Երևան, «Գիտություն», 342 էջ:

Շիրակեան Ա. 1991, Կտակն էր նահատակներուն, Երևան, «Ադանա», 367 էջ:

Պողոսյան Ս. 2011, II, Թուրքերը թուրքերի մասին, Երևան, ԵՊՀ, 551 էջ:

Պրայս Լ. 1920, Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա. մաս, կազմեց Վահան Միրագենց, Կ. Պոլիս, տպ. «Յովակիմեան», 175 էջ:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին. 2001 կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարուքյան, Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 73 էջ:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Ջեմալ-փաշա 1927, Հայկական հարցը, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, «Պետհրատ», 125 էջ:

Ռային Իսմայիլ 1999, Հայերի կոտորածները, Երևան, «Հայաստան», 219 էջ:

Սահակյան Ռ. Օ. 2005, Արևմտահայության Ցեղսպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 401 էջ:

Սոլախյան Կ. 2000, Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երևան, «Զանգակ-97», 92 էջ:

Տաշեան վրդ. Յ. հ. 1921, Հայ ազգի տպագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, տպ. «Մխիթարեան», 241 էջ:

Տատրեան Վ. 1995, Հայկական ցեղասպանութիւնը յետապատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ. Հայ երեսփոխաններու մեղադրական ելոյթները, Վաթերթաուն, «Պայքար», 147 էջ:

Տատրյան Վ. 2005, Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Երևան, Զորյան ինստիտուտ, 22 էջ:

Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1918 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին. 1960, թարգմանեց Հմայեակ Ստեփանեան, հ. Ա, Պէյրութ-Լիբանան, [Բոստոն] տպ. Հայ Կաթողիկե, 690 էջ:

Օհանջանյան Ա. 1997, 1915 թվական. անհերքելի վկայություններ, ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 238 էջ:

Օտեան Ե. 2004, Անիծեալ տարիներ 1914–1919 (անձնական յիշատակներ), աշխատասիրութեամբ Գրիգոր Հակոբյանի, Երևան, «Նաիրի», 581 էջ:

Օրմանեան Մ. 1929, արքեպիսկոպոս, Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց, 504 էջ:

Армянский вопрос и Геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, Сборник, составитель, отв. редактор, автор предисловия, введения и примечаний профессор Вардгес Микаелян. Ереван, «Гитутюн», 642 с.

Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, АН Арм. ССР, 97 с.

Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарий. 2002, т. 1, составитель, отвстственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов. Москва, «Гардарики», 816 с.

Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата паши. 2007, Стенографический отчет (под редакцией С. С. Степаняна). Ереван, 102 с.

Де Ногалес Р. 2006, Четыре года под полумесяцем. Москва. «Русский Вестник», 365 с.

Джамиль Гасанлы, Армянские добровольцы на Кавказском фронте 1914–1916, 2015 Апрель 24 (среда) 14:01:59, http://contact.az/docs/2015/Want%20to%20Say/033000110977ru htm#Vn5BeoWLS70

Документы французских архивов о геноциде армян. 1985, Ереван, Центр науч. информ. по обществ. наукам АН Арм.ССР, 44 с.

Записки Джемаль паши 1913–1919. 1923, Тифлис, Заккрайком РКП(б). 239 с.

Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878–1917 гг. серия III: 1914–1917 гг. т. 7, ч. 2. 1931–1938, М.–Л., Гос. соц. экон. изд. во 535 с.

Altınay R. A. 1999, Iki Komite Iki Kıtâl. Istanbul.

Bayur Yusuf Hikmet, Türk İnkılabı Tarihi, 10 kitap, 3 cilt. 1940–67, Ankara.

Danişmend İ. H. 1971, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt TAKIM, Cilt 4. İstanbul.

Fâiz El-Ghusein, Bedouin Natable of Damascus. 1917, Martyred Armenia. London, C. ARTHUR PEARSON, LTD, 56 p.

Feridun K. 1962, Yakın Tarihimiz, cilt. 1, Sayı: 1, Istanbul, 32 s.

Fisher S. N. 1960, The Middle East, A History, New York, 1959, Bulleten (Türk Tarih Kurumu), cilt XXIV, sayı 94, Ankara.

Genocide: Crime against Humanity. 1984, Special Issue of the "Armenian Review", Spring 1984, vol. 37, № 1.

Hülagü M. 2007, Sultan Abdülhamid in sürgün günleri: Hususi doktoru Atif Hüsein beyin hatiraları. Istanbul, PAN YAYINLARI, 347 s.

Mgr Mouchegh [Serobian]. 1909, Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents. Alexandrie, 95 p.

Pomiankowski J. Von. 1928, Der Zusammenbruch des Ottomanishen Reiches: Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges. Zürich, Amalthea-Verlag, 524 p.

Prince M. 1915, Un génocide impuni: L'Armenocide, Introduction, Beyrouth, 1967, Heidelberg Press, 101 p.

Uras E. 1950, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi. Ankara, 1950, "Turkeiya Matbaacılık Vev Jazetecılik A. O. Kitaplari" 785 s.

Yalman E. A. 1930, Turkey in the World War, New Haven. London Yale University Press, 310 p.

## REFERENCES

A-Do. 1917, Mets depk'ery Vaspurakanum 1914–1915 t'wakannerin, Yerevan, «Loys», 488 ej (In Armenian).

Ak'ch'am T'. 2015, Yeritt'urk'eri gortsats vochiry mardkut'yan dem. Hayots' ts'eghaspanut'yuny yev et'nik ztumnery Osmanyan kaysrut'yunum, Yerevan, t'argmanets' Hasmik Harut'yunyan, Yerevan, «Tigran Mets», 583 ej (In Armenian).

Alek'sanyan S., Evoyan V., Sargsyan A. 1965, Mardkut'yuny ch'petk' e neri (p'astat'ght'er hay zhoghovrdi bnajnjman t'urk'akan hreshavor planneri yev Mets Yegherni masin), «Banber Hayastani arkhivneri», № 1, ej 34–106 (In Armenian).

Amerikayi Miats'yal Nahangneri vaveragrery 1915–1916 t't'. hayots' ts'eghaspanut'yan masin. 2002, kazmogh yev neratsut'yan heghinak, Tigran Zak'aryan, Yerevan, GAA Hayots' TS'eghaspanut'yan t'angaran-institut, 32 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Amerikean despan Mr. Morkynt'aui yishataknery yev haykakan Yeghernin gaghtnik'nery. 1919, K. Polis, tp. «O. Arzuman», 350 ej (In Armenian).

Antonean A. 1921, Mets vochiry. Haykakan verjin kotoratsnery yev T'alead p'ashan. pashtonakan heragirner bnagirneru storagrut'eamb yev bazmat'iw patkernerov, Post'yn, tp. «Pahak», 397 ej (In Armenian).

Armyanskiy vopros i Genōtsid armyan v Turtsii. Materialy politicheskogo arkhiva ministerstva inostrannykh del kayzerovskoy Germanii. 1995, Sbornik, sostavitel', otv. redaktor, avtor predisloviya, vvedeniya i primechaniy Vardges Mikayelyan. Yerevan, «Gitutyun», 642 s (In Armenian).

Armyanskiy vopros na stranitsakh turetskoy pressy (1982–1983). 1984, AN Arm. SSR, 97 s.

Atanayi hayots' patmut'iwn. patmagrakan yeghernagrakan, azatagrakan, mshaku-t'ayin, azgagrakan, vawyeragrakan, zhamanakagrakan. 1940, khmbagrets', Biwzand Yeghiayean, Ant'ilias-Libanan, tp. Kat'voghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1060 ej (In Armenian).

Atositis A. 2009, Hayery yev yeritasard t'urk'ery, Kilikioy kotoratsnery, franserene t'argmanets' Emma Azarikean, Halep, 166 ej (In Armenian).

Avstro-Hungariayi divanagetneri haghordagrut'yunnery Hayots' ts'eghaspanut'yan masin (1915–1918 t't'.) (p'astat'ght'eri zhoghovatsu). 2004, kazmogh yev arajabani heghinak, Artem Ohanjanyan, germanerenits' t'argmanets' Varlam Martirosyan, Yerevan, «Nahapet», 130 ej (In Armenian).

Begijanyan E. 2011, Iranakan tesaketnery Hayots' ts'eghaspanut'yan masin, Yerevan, «Edit Print», 163 ej (In Armenian).

De Nogales R. 2006, Chetyre goda pod polumesyatsem. Moskva, "Russkiy Vestnik", 365 s (In Russian).

Derkoms Prays CH. 1919, Angghiakan karavarut'ean Kapoyt girk'y haykakan Mets Yegherni masin (1915–1916), K. Polis, tp. O. Arzuman, 80 ej (In Armenian).

Dzhamil' Gasanly, Armyanskiye dobrovol'tsy na Kavkazskom fronte 1914–1916, 2015 Aprel' 24 (sreda) 14:01:59, http://contact.az/docs/2015/Want%20to%20Say/03300 0110977ru htm#Vn5BeoWLS70 Dokumenty frantsuzskikh arkhivov o genotside armyan. 1985, Yerevan, Tsentr nauch. inform. ob obshchestv. naukam AN Arm. SSR, 44 s.

Gaghtni teghekagir Tok't'. Yeohannes Lep'siusi (nakhagah german Motawor Arevelk'i Misionin yev German yev haykakan ynkerut'ean). Hayastani jardery, 1919, K. Polis, «Asaturean vordik'», 318 ej (In Armenian).

Geghamean Ye. a. k'ah. 1917, Hayeri azatagrakan sharzhumnery XX darum kam Haykakan harts'i yeot'nerord shrjany (masn yerkrord), Bagu, «tp. N. Yerevants'eani», 583–681 ej (In Armenian).

Genotsid armyan pered sudom. Sudebnyy protsess Talaata pashi. 2007, Stenograficheskiy otchet (pod redakciej S. S. Stepanyana). Yerevan, S. Stepanyan, 102 s (In Armenian).

Genotsid armyan: otvetstvennost' Turtsii i obyazatel'stvo mirovogo soobshchestva, dokumenty i kommentariy. 2002, t. 1, sostavitel', otvetstvennyy redaktor, avtor predis-loviya i kommentariya Yu. G. Barsegov. Moskva, «Gardariki», 816 s (In Armenian).

Germanian yev Hayastany 1914–1918. divanagitakan p'astat'ght'eri zhoghovatsu. 2006, h. I, hratarakut'yuny yev neratsut'yuny, doktor Yohannes Lepsiusi, germanerenits' t'argmanut'yuny, Valentina Minalyani, Yerevan, «Hayastan», 391 ej (In Armenian).

Germanian yev Hayastany 1914–1918. divanagitakan p'astat'ght'eri zhoghovatsu. 2008, h. II, hratarakut'yuny yev neratsut'yuny, doktor Yohannes Lep'siusi, germanerenits' t'argmanut'yuny, Valentina Minalyani, Yerevan, «Hayastan», 430 ej (In Armenian).

Gibbons H. A. 2003, Zhamanakakits' patmut'yan amenasev ejy: 1915-i depk'ery Hayastanum: P'aster yev pataskhanatvut'yunner, Yerevan, «Nahapet», 34 ej (In Armenian).

Gust (Hr.). V. 2002, Hayeri ts'eghaspanut'yuny. ashkharhi hnaguyn k'ristonya zhoghovrdi voghbergut'yuny, Yerevan, «Hayastan», 294 ej (In Armenian).

Gust V. (Hr.). 2008, Hayeri ts'eghaspanut'yuny 1915–1916. Germaniayi artak'in gortseri nakhararut'yan k'aghak'akan arkhivi p'astat'ght'erits', Yerevan, «Hayagitak», 720 ej.

HA, t'iv 1: Akuni S. 1920, Milion my hayeru jardi amboghjakan patmut'iwny (1914–1918), K. Polis, «tpagr. Y. Asturean vordik'», 319 ej (In Armenian).

Harut'yunyan A. H. 1983, Arajin hamashkharhayin paterazmi razmadivanagitakan patmut'yunits' (1914–1918), Yerevan, «Hayastan» 375 ej (In Armenian).

Hayastani azgayin arkhiv, f. 1267, ts'. 1, g. 6, f. 457. Cucadrutyan katalog (Melik'-Gharagyozyani havak'atsu), f. 1, g. 2: Hayots' ts'eghaspanut'yan skandinavyan ardzagank'y, Yerevan, 2014, HH GAA Hayots' ts'eghaspanut'yan institut-t'angaran, 114 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan kaysrut'yunum. 1991 (p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu), Mkrtich' G. Nersisyani khmbagrut'yamb, Yerevan, «Hayastan» 758 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan T'urk'iayum (1915–1918 t't'.), otarerkrya petut'yunneri divanagitakan p'astat'ght'eri vkayut'yunnery, p'astat'ght'eri zhoghovatsu 2011, h. arajin, kazmogh, arajabani heghinak` Lavrenti Barseghyan, Yerevan, «Nahapet», 238 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan T'urk'iayum (1915–1918 t't'.). otarerkrya petut'yunneri divanagitakan p'astat'ght'eri vkayut'yunnery, p'astat'ght'eri zhoghovatsu. 2011, h. yerkrord, kazmogh, arajabani heghinak` Lavrenti Barseghyan, Yerevan, «Nahapet», 407 ej (In Armenian).

Haykakan harts'i yev Hayots' ts'eghaspanut'yan arkhivi teghekagir matyan. Yerusaghemi Hayots' patriark'aran. 2024, h. A, arkhivi t'vaynats'umn u nakhnakan ts'uts'akagrumn irakanats'rel yen Lusine Sahakyany yev Ani Sargsyany, ashkhatasirets'in Lusine Sahakyany, Ani Voskanyany, Ani Sargsyany, arajabany, Lusine Sahakyani, Yerevan, «Lusakn», 1040 ej (In Armenian).

Hovhannisyan N. 2004, Hayots' ts'eghaspanut'yuny arabakan patmagitut'yan k'nnakan luysi nerk'vo, Yerevan, HH GAA Arevelagitut'yan institut, 475 ej (In Armenian).

Italiayi artak'in gortseri nakhararut'yan patmakan divanagitakan arkhivi vaveragrery Haykakan harts'i masin, h. A, 1913–1923 t't'. 2008, nyut'y havak'ets', kazmets', t'argmanets', arajabany grets' yev hratarakut'yan patrastets', Aramayis Baloyany, Yerevan, Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 280 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Jemal-p'asha 1927, Haykakan harts'y, Ashot Hovhannisyani arajabanov, Yerevan, «Pethrat», 125 ej (In Armenian).

Khach'atryan A. 2010, Arevelahay yev t'urk' divanagitakan haraberut'yunnery, Yerevan, HH GAA patmut'yan institut, 286 ej (In Armenian).

Lep'sius Y. 1916, Haghordagrut'iwn T'urk'iayum hay zhoghovrdi vichaki masin, Potsdam, Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 280 ej (In Armenian).

Melk'vonyan R., Poghosyan N. 2022, Haykakan harts'n u Hayots' ts'eghaspanut'yan khndiry t'urk' bardzrastichan k'aghak'akan yev razmakan gortsich'neri husherum (XIX dari verj – XX dari keser), Yerevan, YePH hrat., 110 ej (In Armenian).

Mets terut'yunnery, Osmanyan kaysrut'yuny yev hayery fransiakan arkhivnerum (1914–1918). 2005, h. I, ashkhatasirut'yamb Art'ur Peyleryani, arajabany, Zhan-Batist Dyurozeli, franserenits' t'argmanets' Varuzhan Poghosyany, Yerevan, «Hayastan», 483 ej (In Armenian).

Mezhdunarodnyye otnosheniya v epokhu imperializma. Dokumenty iz arkhivov tsarskogo i vremennogo pravitel'stv. 1878–1917 gg. seriya III: 1914–1917 gg. t. 7, ch. 2, M.–L., 1931–1938 gos. sots. ekon. izd. vo 535 s.

«Mshak», T'iflis, 20. III. 1914, 04.VII. 1915 (In Armenian).

Musa P'rens gortsakts'ut'eamb Mari-Anzh Musa P'rensi, Hayaspanut'iwny mardkut'ean dem gortsuats vochirneru tsiren ners, Peyrut', 1987, Hay payk'ar matenashar «Ararat» orat'ert'i, 32 ej (In Armenian).

Mushegh yepiskopos. 1910, Atanayi jardy yev pataskhanatunery, Post'von, tp. «Ararat», 63 ej (In Armenian).

Nersisyan M. G. 1965, Nyut'er haykakan kotoratsneri masin. – PBH, № 1, ej 85-100 (In Armenian). Nersisyan M. G. 1998, Patmut'yan keghtsararnery (hodvatsner yev haghordumner) Yerevan, «Gitut'yun», 342 ej (In Armenian).

Nersisyan M. G. 2005, Hayots' ts'eghaspanut'yan anherk'eli p'astat'ght'er, Yerevan, «Gitut'yun», 335 ej (In Armenian).

Ohanjanyan A. 1997, 1915 t'vakan. anherk'eli vkayut'yunner, avstriakan vaveragrery hayots' ts'eghaspanut'yan masin, Yerevan, HH GAA Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 238 ej (In Armenian).

Ormanean M. 1929, ark'episkopos, Khohk' yev khosk' ir keank'in verjin shrjanin mej, Yerusaghem, Srbots' Yakobeants', 504 ej (In Armenian).

Otean Ye. 2004, Anitseal tariner 1914–1919 (andznakan yishatakner), ashkhatasirut'eamb Grigor Hakobyani, Yerevan, «Nairi», 581 ej (In Armenian).

Poghosyan S. 2011, II, T'urk'ery t'urk'eri masin, Yerevan, YePH, 551 ej (In Armenian).

Prays L. 1920, Haykakan jarderu p'astat'ght'ery, A. mas, kazmets' Vahan Miragents', K. Polis, tp. «Yovakimean», 175 ej (In Armenian).

Rayin Ismayil 1999, Hayeri kotoratsnery, Yerevan, «Hayastan», 219 ej (In Armenian).

Rusastani artak'in gortseri nakhararut'yan p'astat'ght'ery Hayots' 1915–1916 t't'. ts'eghaspanut'yan masin. 2001 kazmogh, arajabani, t'argamut'yan heghinak, Armen Maruk'yan, Yerevan, HH GAA hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 73 ej (In Armenian).

Sahakyan R. O. 2005, Arevmtahayut'yan TS'eghspanut'yuny yev ink'napasht-panakan krivnery 1915 t'., Yerevan, HH GAA patmut'yan institut, 401 ej (In Armenian).

Shirakean A. 1991, Ktakn er nahataknerun, Yerevan, «Adana», 367 ej (In Armenian).

Solakhyan K. 2000, T'ezh martery Vani K'aghak'amijum, Yerevan, «Zangak-97», 92 ej (In Armenian).

Tashean vrd. Y. h. 1921, Hay azgi tpagrut'iwny germanakan vawyeragirneru hamemat, masn A, Viyenna, tp. «Mkhit'arean», 241 ej (In Armenian).

Tatrean V. 1995, Haykakan ts'eghaspanut'iwny yetapaterazmean osmanean khorhrdaranin mej. Hay yeresp'vokhanneru meghadrakan yeloyt'nery, Vat'ert'aun, «Payk'ar», 147 ej (In Armenian).

Tatryan V. 2005, Hayots' ts'eghaspanut'yan zhkhtman t'urk'akan himnakan p'astarknery. Aghavaghman yev keghtsararut'yan usumnasirut'yun, Yerevan, Zoyan institut, 22 ej (In Armenian).

Trapizoni t'emin vichakawor Yovhannes ark'. Nazleani yushery Merdzawor Arevelk'i 1914–1918 shrjani k'aghak'akan-kronakan depk'erun masin. 1960, t'argmanets' Hmayeak Step'anean, h. A, Peyrut'-Libanan, [Boston] tp. Hay Kat'voghike, 690 ej (In Armenian).

Yuhanson A. 2008, Ak'soryal zhoghovurd. mek tari hayots' patmut'yunits', Yerevan, «Gasprint», 147 ej (In Armenian).

Zapiski Dzhemal' pashi 1913–1919. 1923, Tiflis, Zakkraykom RKP(b). 239 s.

## К ВОПРОСУ ОБ ОТРИЦАНИИ КОНЦЕПЦИИ «ВОССТАНИЯ» В ВАНЕ 1915 Г.

АВЕТИС АРУТЮНЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Ванское «восстание» 1915 г., самооборона, резня, отрицание подлог, бунт, пантюркизм, Геноцид армян, турецкая дипломатия, европейская дипломатия.*

Одной из восточных провинций Османской Турции была провинция Ван, центром которой был древний армянский город Ван. В апреле 1915 года армяне организовали самооборону в Ване и ряде других мест, спасаясь от турецких погромов. Вопрос самообороны Вана имеет как политическую, так и научную значимость, поскольку он стал причиной разрыва отношений между армянами и турками, живущими в Османской империи, и явился одним из мотивов Геноцида армян в 1915 г. Центральный комитет младотурецкой партии «Единение и прогресс» (Иттихад ве теракки) представил фальшивое идеологическое обоснование для переселения и уничтожения западных армян, чтобы оправдать деятельность руководства, ставшую причиной геноцида 1,5 млн западных армян. Т урецкие политические круги

Պատմություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

выдвинули ложный тезис о Ванском «восстании» как проявлении «предательства» армян и мотиве армянских погромов. Подобная трактовка турецких и некоторых иностранных политиков не соответствует истине и является искажением исторических реалий. Следует отметить, что тема «восстания» западных армян впервые стала предметом спекуляции турецких властей в 1909 году в связи с резней в Адане – одной из областей Османской империи. Однако она была задействована с объявлением Первой мировой войны и началом военных действий на Кавказском фронте. Мнения турецких и зарубежных историков о том, что если бы не было героической апрельской обороны Вана 1915 года, то западные армяне избежали бы геноцида, является фальсификацией фактов. В действительности героическая борьба за Ван началась тогда, когда турки организовали и осуществили резню армян. Следует отметить, что представление героической самообороны Вана в качестве восстания вполне оправдано, поскольку она была направлена против многовековой турецкой тирании и политики истребления армян.

*Аветис Арутюнян – к. и. н., профессор кафедры истории Армении Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы: Первая мировая война, Геноцид армян, история провинции Ван, историческая география Армении. Автор 3-х монографий и около 200 статей.*
*ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am*

## ON THE ISSUE OF DENIAL OF THE CONCEPT OF “REBELLION” OF VAN IN 1915

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

*Key words: Van “rebellion” in 1915, self-defense, massacre, forgery, riot, Pan-Turkism, the Armenian Genocide, Turkish diplomacy, position of European diplomacy.*

One of the eastern provinces of the Ottoman Turkey was the province of Van, the center of which was the ancient Armenian city Van. In April of 1915, the Armenians organized self-defense in Van and in a number of other places to escape the Turkish massacres. The issue of self-defense of Van has both political and scientific significance, as it caused rupture in relations between the Armenian and Turkish peoples living in the Ottoman Empire and was one of the motives for the Armenian Genocide in 1915. The Central Committee of “Union and Progress” party (Ittihad ve Terakki) of Young Turks presented a false ideological grounds for resettlement and extermination of Western Armenians to justify the

actions of the leadership which resulted in the genocide of 1,5 million Western Armenians. Turkish political circles put forward a false thesis about the "rebellion" of Van as a manifestation of "betrayal" of the Armenians and the motive for the Armenian massacres. Such interpretation by Turkish and some foreign historians does not correspond to the truth and is a distortion of historical realities. It should be noted that the issue of the "rebellion" of Western Armenians first became a subject of speculation by the Turkish authorities in 1909 in connection with the massacre in Adana, one of the provinces of the Ottoman Empire. However, it was activated with the declaration of the First World War and the beginning of military operations on the Caucasian Front. The opinion of Turkish and foreign historians that if it were not for the heroic defense of Van in April of 1915, the Western Armenians would have avoided the genocide is a falsification of facts. In reality, the heroic struggle for Van began when the Turks organized and carried out the massacre of the Armenians. It should be noted that presentation of the heroic self-defense of Van as a rebellion is entirely justified, since it was directed against centuries-old Turkish tyranny and the policy of extermination of Armenians.

*Avetis Harutyunyan – Candidate of Historical Sciencies, Professor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: First World War, the Armenian Genocide, history of Van province, historical geography of Armenia. Author of 3 monographs and about 200 articles.*
*ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am*

ՀՏԴ : 281.6 + 947.925

Doi:10.54503/0135-0536-2025.2-34

# ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (428–630-ական թվականներ)*

ՀԵՆՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

**Բանալի բառեր՝ Մարզպանական Հայաստան, Ուխտանես եպիսկոպոս, թեմ, եպիսկոպոսություն, եկեղեցաժողով, Բագրևանդ, Մարդպետական:**

**Ամփոփում**

*Հայոց եկեղեցին իր կառուցվածքով և գործառույթներով հայկական պետականության անբաժանելի մաս է կազմում: Եկեղեցու պատմության, թեմական կառուցվածքի, առանձին թեմերի անցած ուղու և կարգավիճակի, պետություն-եկեղեցի, եկեղեցի-իշխանական դաս հարաբերությունների, ինչպես նաև անկախ պետականության բացակայության պայմաններում եկեղեցու արտաքին փոխհարաբերությունների ուսումնասիրությունը ձեռք է բերում կարևոր նշանակություն:*

*Թեմական կառուցվածքը, հատկապես՝ մարզպանական ժամանակաշրջանում, թեև ուսումնասիրվել է, սակայն դրանք չեն արտացոլում ամբողջական թեմերի գոյությունը: Հիմնվելով հիմնականում եկեղեցաժողովներում ներկա գտնված եպիսկոպոսների ցանկի վրա՝ արձանագրել ենք թեմերի գոյությունն ու համեմատել դրանք տվյալ շրջանի քաղաքական և վարչական բաժանման հետ:*

*Հայտնի է, որ եկեղեցական թեմական բաժանումը մեծամասամբ համընկել է երկրի քաղաքական և վարչական կառուցվածքի հետ: Այս տեսանկյունից՝ Արշակունյաց հարստության անկումից հետո՝ 428 թ., Մարզպանական Հայաստանի սահմաններում ձևավորված եկեղեցական կառուցվածքը նույնպես պետք է համապատասխաներ այդ ժամանակի վարչական սահմաններին: Աղբյուրների վերլուծությունից պարզ է դառնում, որ քրիստոնեության պետական կրոն հռչակվելուց հետո Մեծ Հայքի առաջին կաթողիկոս Սբ Գրիգոր Լուսավորիչը (301–325) հաստատել է 36 եպիսկոպոսական աթոռ: Եկեղեցական ժողովների արձանագրություններից, ինչպես նաև պատմագիրների վոխանցած եպիսկոպոսների ցուցակներից տեղեկանում ենք մարզպանական ժամանակաշրջանի թեմական կառուցվածքի վերաբերյալ:*

*Հիմնվելով բացառապես Եղիշեի և Ղազար Փարպեցու եպիսկոպոսական ցանկերի վկայությունների վրա՝ եզրակացվել է, որ Մարզպանական Հայաստանում եղել են ընդամենը 18 թեմ, որոնք հետագայում ավելացել են: Սակայն*

* *Ներկայացվել է 26. III. 2025 թ., գրախոսվել է 28. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*աղբյուրների և ժողովների վկայությունների համադրությունը փաստում է, որ թեմերի թիվն ավելի շատ է եղել, և, ընդհանրապես, մարզպանական շրջան (428–630-ական թվականներ) եղրույրն ընդգրկուն է ու պահանջում է ժամանակագրական ճշգրտում՝ ըստ կոնկրետ շրջափուլի:*

## Նախաբան

*Ուսումնասիրելով եկեղեցու պատմությունը, թեմական կառուցվածքը, առանձին թեմերի եկեղեցու պատմությունն ու կարգավիճակը, վեր են հանվում պետություն-եկեղեցի, եկեղեցի-վերնախավ (նախարարներ), ինչպես նաև անկախ պետության բացակայության պարագայում եկեղեցի-օտար երկրներ հարաբերությունների առավել ճշգրիտ դիտարկմամբ: Ճիշտ է, այս կամ այն կերպ անդրադարձ է եղել մարզպանական շրջանի թեմական կառուցվածքին, սակայն դա, ըստ էության, ցույց չի տալիս իրական պատկերը: Քննելով սկզբնաղբյուրներում վկայված թեմերի գոյության արձանագրումը և դրանց համադրումը քաղաքական վարչական բաժանմանը՝ կատարվել են համապատասխան եզրակացություններ:*

## Հայ վաղմիջնադարյան սկզբնաղբյուրները թեմերի մասին

*Հայտնի է, որ եկեղեցական թեմականը համապատասխանում էր երկրի քաղաքական, վարչական բաժանմանը: Այս տեսակետից Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո՝ 428 թ. սկսած, եկեղեցական թեմական բաժանումը պետք է հիմնականում համապատասխաներ արդեն Մարզպանական Հայաստանի սահմաններին: Աղբյուրների քննությունից պարզվել է, որ քրիստոնեության պետական կրոն հռչակման ժամանակներում Սբ Գրիգոր Լուսավորիչը հաստատել էր 36 եպիսկոպոսական աթոռ[1]: Եկեղեցական ժողովների ցուցակներից, ինչպես նաև պատմիչների կողմից եպիսկոպոսների ցանկերի վերաբերյալ պահպանած տեղեկություններից իմանում ենք մարզպանական շրջանի թեմական բաժանման մասին: Այսպես, Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակված 30 թեմերը, ինչպես կարծում է Բ. Հարությունյանը, վերաբերում են մարզպանական շրջանին: Դրանք են.*

Աղյուսակ 1

| | | Ուխտանես[2] | | |
|---|---|---|---|---|
| Հարքայ եպ. | Այունեաց | Բագրեւանդայ | Գողթան | Անձեւացեաց |
| Ոստան | Ռշտունեաց | Խորխոռունեաց | Գաղղմանայ | Պալունեաց |
| Տայոց | Մոկաց | Վանանդայ | Ակէոյ | Մեհնունեաց |
| Մարդաղոյ | Ամատունեաց | Ապահունեաց | Բուժունեաց | Ելոյ |
| Արշամունեաց | Բասենոյ | Արշարունեաց | Երուանդակաց | Զարեհաւանից |
| Արծրունեաց | Մամկոնէից | Գնունեաց | Ասորեաց | Միւսաւորեաց |

[1] *Տե՛ս Հարությունյան. 2000, 126:*

[2] *Ուխտանէս եպիսկոպոս. 2011, 503:*

*Այս ցանկից կարելի է եզրակացնել դրա՝ մարզպանական շրջանին վերաբերելը, քանի որ այստեղ հստակ բացակայում են Արշակունյաց թագավորության շրջանի ծայրագավառների եպիսկոպոսությունները: Սակայն մարզպանական շրջանը (428–630-ական թվականներ) բավականին լայն հասկացություն է: Խոսքը դրանում հիշատակված Գարդմանի մասին է, որը Մարզպանական Հայաստանի կազմում է եղել մինչև 451 թ.[3], որով ինքնին սահմանազատում է դրվում այս կամ այն եպիսկոպոսության գոյության կամ վարչական պատկանելության հարցում: Այս շրջանին վերաբերող հաջորդ աղբյուրները ստորև բերվող Եղիշեի ու Ղազար Փարպեցու եպիսկոպոսական ցանկերն են:*

Աղյուսակ 2

| Եղիշե[4] | Ղազար Փարպեցի[5] |
|---|---|
| Յովսէփ եպ. Այրարատոյ | Յովսէփ կաթողիկոս Հայոց |
| Սահակ եպ. Տարաւնոյ | Անանիա Սիւնեաց եպ. |
| Մեղէտ եպ. Մանազկերտոյ | Մուշէ Արծրունեաց եպ. |
| Եզնիկ եպ. Բագրեւանդայ | Սահակ Տարաւնոյ եպ. |
| Սուրմակ եպ. Բզնունեաց | Սահակ Ըռչտունեաց եպ. |
| Տաճատ եպ. Տայոց | Մելիտէ Մանձկերտոյ եպ. |
| Թաթիկ եպ. Բասենոյ | Եզնիկ Բագրեւանդեայ եպ. |
| Քաոս եպ. Տուրուբերանոյ | Սուրմակ Բզնունեաց եպ. |
| Երեմիա եպ. Մարդաստանի | Թաթիկ Բասենոյ եպ. |
| Եւղաղ եպ. Մարդոյաղոյ | Երեմիա Մարդաստանի եպ. |
| Անանիա եպ. Սիւնեաց | Գաղ Վանանդեայ եպ. |
| Մուշէ եպ. Արծրունեաց | Բասիլ Մոկաց եպ. |
| Սահակ եպ. Ռըշտունեաց | Եղբայր Անձեւացեաց եպ. |
| Բասիլ եպ. Մոկաց | Տաճատ Տայոց եպ. |
| Գաղ եպ. Վանանդայ | Քաոսն Տարբերունոյ եպ. |
| Եղիշա եպ. Ամատունեաց | Զաւէն Մանանաղեոյ եպ. |
| Եղբայր եպ. Անձեւացեաց | Եղիշէ Ամատունեաց եպ. |
| Երեմիա եպ. Ապահունեաց | Երեմիա Ապահունեաց եպ. |

*Երկու պատմիչների մոտ ներկայացված են գրեթե նույն ցանկերը: Բացառություն է կազմում Եղիշեի մոտ Մարդաղիի եպ. և Ղազար Փարպեցու մոտ Մանանաղիի եպ. հիշատակումը: Մանանաղիի եպ., մեր կարծիքով, վրիպմամբ է նշվել, քանզի այն ոչ միայն դուրս էր Մարզպանական Հայաստանի սահմաններից, այլև հետագա աղբյուրներում այլևս չի հիշատակվում:*

[3] *Հ ա յ ո ւ թ յ ու ն յ ա ն. 2000, 111:*
[4] *Ե ղ ի շ է. 2003, 549–550:*
[5] *Փ ա ր պ ե ց ի. 2003, 2242:*

Նկատենք, որ այս ցանկերն ամբողջական չեն, ինչպես ենթադրվում է[6], այլ վերաբերում են Արտաշատի 450 թ. ժողովին ներկա եպիսկոպոսներին: Այստեղ բացակայում են Արշարունյաց, Բագրատունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Պալունյաց, Գողթան, Ակեի, Բուժունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի եպիսկոպոսությունները, որոնց գոյությունն անհերքելի է այլ աղբյուրներից: Եթե խոսքը գնար հայ Արշակունիների թագավորական շրջանի թեմական բաժանման մասին, ապա իրավացիորեն կարող էինք նշել, որ այդ եպիսկոպոսությունները հետագա տրոհման կամ ճյուղավորման արդյունք էին: Սակայն բացակայող թեմերը հենց մարզպանական շրջանում արդեն իսկ պետք է առկա լինեին, իսկ դրանցից առնվազն չորսը՝ Արշարունյացը, Բագրատունյացը, Գնունյացն ու Խոռխոռունյացը, թագավորական շրջանից:

Ի դեպ, Արշարունյաց թեմ գոյություն է ունեցել թեմական բաժանման հենց սկզբից: Արտաշատի ժողովին այդ թեմի եպիսկոպոսի չմասնակցելը և դրանով իսկ չհիշատակումը բացատրվում է, քանի որ Կամսարական նախարարությունը սկզբից ևեթ կանգնած էր Հայոց եկեղեցու և սպարապետ Վարդան Մամիկոնյանի կողքին և, անկասկած, պետք է ներկա լիներ այդօրինակ ժողովին: Փավստոս Բուզանդը հաղորդում է, որ Ներսես Ա Մեծ (353–373) կաթողիկոսը խաղին ձեռնադրել էր որպես Բագրևանդի և Արշարունիքի եպիսկոպոս[7]: Այս տեղեկությունից կարելի է եզրակացնել, թե ինչու ցանկում չկա Արշարունյաց եպիսկոպոսի անունը, որովհետև այն Բագրևանդի հետ կազմում էր մեկ միասնական թեմ[8]: Նշենք, որ Բագրևանդի ու Արշարունիքի եպիսկոպոսությունները հիշատակվում են իրարից արդեն առանձին VI դ. դումարված ժողովներից սկսած, ինչը նշանակում է՝ եպիսկոպոսությունը V դ. վերջերից արդեն տրոհվել էր[9]:

Ա. Ղազարյանի կարծիքով՝ Եղիշեի ու Փարպեցու մոտ հիշատակված Տուրուբերանի եպիսկոպոսությունը պետք է համապատասխաներ Արշամունյաց եպիսկոպոսությանը[10]: Սա հիմնավոր է թվում, քանի որ այդպիսով Տուրուբերան աշխարհի եպիսկոպոսություններն ամբողջանում են. դրանք են՝ Տարոնի, Բզնունյաց, Արշամունյաց, Մարդաղիի, Խոռխոռունյաց, Մանազկերտի (Հարքի)[11], Ապահունյաց ու Գնունյաց:

### Բագրատունյաց թեմի գոյության հարցը

Եթե Արշարունյաց եպիսկոպոսի բացակայությունը Եղիշեի ու Ղազար Փարպեցու ցանկերում հասկանալի է, ապա նույնը չի կարելի ասել Բագրատունի-

---

[6] Պատմաբան Ռ. Հարությունյանը գտնում է, որ Մարզպանական Հայաստանում առկա էին ընդամենը եկեղեցական 18 թեմ (Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2008, 147):

[7] Բ ո ւ զ ա ն դ. 2003, 334:

[8] Մ ա ն ո ւ չ ա ր յ ա ն. 2021, 187–189:

[9] Ա լ ի շ ա ն. 1890, 523:

[10] Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 97:

[11] Մինչև V դ. կեսերը Հարքի թեմը կոչվել է Մանազկերտի և միայն 450 թ. Արտաշատի ժողովից հետո այն անվանվել է Հարքի եպիսկոպոսություն (Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 99):

*ների վերաբերյալ, որոնց, ըստ Նիկողայոս Ադոնցի, կարելի է տեսնել Բագրևանդի եպիսկոպոսության կազմում[12]: Խնդիրն այն է, որ Բագրևանդ գավառը մեծամասամբ պատկանում էր Գրիգոր Լուսավորչի տոհմին, որը Սահակ Պարթևի (388–439) կտակով անցել էր Մամիկոնյաններին[13]: Այս համատեքստում, եթե ընդունենք, որ Բագրևանդի եպիսկոպոսությունը համապատասխանում է Բագրատունի նախարարությանը, ապա ոչ ամբողջ գավառի ընդգրկմամբ՝ միայն Բագավանն իր շրջակայքով: Տվյալ դեպքում էլ հարց է առաջանում, արդյո՞ք այս ընդգրկմամբ թեմը կարող էր կոչվել Բագրևանդի. իհարկե՝ ոչ: Ըստ Բ. Հաբրությունյանի՝ Բագրևանդն ու Կոգովիտը կազմել են մեկ միասնական թեմ[14]: Սա թվում է տրամաբանական, քանի որ Մարզպանական Հայաստանում Բագրատունիների տիրույթներն ամփոփված էին Կոգովիտ, Ծաղկոտն գավառներում և Բագավանի շրջակայքում[15]:*

*Սակայն դա հնարավոր չէր V դ. համար, քանզի այդ շրջանում Բագրևանդն Արշարունիքի հետ կազմում էր մեկ թեմ: Բագրևանդի ու Կոգովիտի միասնական հանդես գալը կարող էր հնարավոր լինել, օրինակ, VI դ., որը, սակայն, ենթադրություն է: Դարձյալ Արշարունիքի օրինակով նշենք, որ Բագրատունյաց թեմ արքայական շրջանում, անկասկած, պետք է ստեղծվեր: Ագաթանգեղոսի պատմության հունական տարբերակը հաղորդում է Գրիգոր Լուսավորչի կողմից Սպերում եպիսկոպոսի նշանակման մասին[16]: Ճիշտ է, 387 թ. բաժանմամբ Սպերը մնացել էր Արևելահռոմեական կայսրության կազմում, սակայն Բագրատունիները հողատիրույթներ ունեին Մարզպանական Հայաստանում ևս, որոնց շարքում էր, ինչպես նշվեց, Կոգովիտ գավառը: Այս համատեքստում հասկանալի է, որ 450 թ. Վասակ Սյունու կողմնակից Տիրոց Բագրատունին հենց Կոգովիտի Բագրատունիների ներկայացուցիչն էր[17], քանի որ Սպերը, ինչպես նշվեց, Արևելահռոմեական կայսրության մեջ էր:*

*Եղիշեի ու Ղազար Փարպեցու ցանկերում Բագրատունյաց եպիսկոպոսի բացակայությունն առաջին հերթին կապված էր եպիսկոպոսությունների ոչ ամբողջական ցանկով, իսկ, օրինակ, Խոռխոռունյաց եպիսկոպոսության բացակայությունն Արտաշատի 450 թ. ժողովին, բացատրվում է ոչ թե նրա չգոյության, այլ նրա՝ ժողովից խուսափելու հանգամանքով, ինչն արդյունք էր Գաղիշո Խոռխոռունու հակաապստամբական տրամադրությունների[18]: Ուստի տրամաբանական է կարծել, որ տվյալ դեպքում ևս, որպես Վասակ Սյունու կողմնակիցներ, Խոռխոռունիներից բացի, պետք է ավելացնել նաև Բագրատունյաց և Պալունյաց թեմերը, որոնք ևս իրենց ներկայացուցիչներին չէին ուղարկել ժողովին:*

---

[12] *Ադոնց. 1987, 376:* Դեռևս Ն. Ադոնցն է նկատել, որ Բագրևանդը պետք է կապված լիներ Բագրատունի նախարարների սկզբնական տիրույթների հետ (*Ադոնց. 1987, 341*): Այս լույսի ներքո իսկապես տրամաբանական է Բագրատունյաց թեմը տեսնել Բագրևանդի եպիսկոպոսության կազմում:

[13] *Փարպեցի. 2003, 2235:*

[14] *Հայաստանի ազգային ատլաս. 2008, 135:*

[15] Хачатрян. 2022, 51–53.

[16] *Բարթիկյան, Տեր-Ղևոնդյան. 2002, 178:*

[17] *Ադոնց. 1987, 341:*

[18] *Հարությունյան. 2000, 113–114, 116:*

**Հայ եկեղեցաժողովների վավերաթղթերում հիշատակված թեմերը**

*Հաջորդ աղբյուրները, որոնք պատկերացում են տալիս Մարզպանական Հայաստանի թեմական բաժանման վերաբերյալ, եկեղեցաժողովների վավերաթղթերն են: Այստեղ չեն ներառվում հայ մատենագիրների երկերում առկա եպիսկոպոսների կամ եպիսկոպոսությունների մասին հաղորդումները, քանի որ դրանք, ըստ էության, ոչինչ չեն ավելացնում եկեղեցաժողովների ցանկերին:*

Աղյուսակ 3

| Դվինի Ա (506 թ.) ժողով[19] | Ներսես կաթողիկոսի մեղադրական թուղթը (VI դ. կեսեր)[20] | Դվինի Բ (555 թ.) ժողով[21] | Դվինի Դ (645 թ.) ժողով[22] |
|---|---|---|---|
| Մամիկոնէից եպ. | Արծրունեաց եպ. | Տարաւնոյ եւ Մամիկոնէից եպ. | Ոստան եւ Մարզպետական եպ. |
| Մարզպետական | Ռշտունեաց | Սեպհական գնդին | Հարքայ |
| Հարքայ | Մոկաց | Հարքայ | Բասենոյ |
| Բզնունեաց | Անձեւացեաց | Բագրեւանդայ | Տայոց |
| Բասենոյ | Ակոյ | Բասենոյ | Մարդաղոյ |
| Արշարունեաց | Պալունեաց | Մարդաղոյ | Բզնունեաց |
| Խովսոռունեաց | Զարեհաւանից | Արշամունեաց | Արշարունեաց |
| Տայոց | Բժնունեաց | Սիւնեաց | Բագրատունեաց |
| Արշամունեաց | Մեհկունեաց | Արծրունեաց | Խորխոռունեաց |
| Ռշտունեաց | Տարաւնոյ եւ Մամիկոնէից | Խովսոռունեաց | Ռշտունեաց |
| Մոկաց | Մարզպետական | Ապահունեաց | Վանանդայ |
| Արծրունեաց | Հարքայ | Աւորեաց | Աշմունեաց |
| Ամատունեաց | Բագրեւանդայ | Վանանդայ | Ամատունեաց |
| Պալունեաց | Բասենոյ | Արշարունեաց | Անձաւացեաց |
| Գնունեաց | Սիւնեաց | Պալունեաց | Գնունեաց |
| Զարեհաւանի | Խովսոռունեաց | Գողթան | Պալունեաց |
| Տմորեաց | Ամատունեաց | Մեհկունեաց | Մեհկունեաց |
| Անձեւացեաց | | | |
| Մեհկունեաց | | | |

*Ինչպես կարելի է նկատել վերոբերյալ աղյուսակային ցանկերից, Բագրատունյաց նախարարության եպիսկոպոսության ուղղակի հիշատակում բացառությամբ Դվինի Դ (645 թ.) ժողովի, աղբյուրներում թվարկված եպիսկոպոսությունների մեջ չենք հանդիպում (օրինակ՝ «Բագրատունյաց եպ.», «Սպերի եպ.» կամ «Կոգովիտի եպ.» ձևերով): Բագրատունյաց թեմի չհիշատակվելը, սակայն, չի նշանակում, որ այն առաջացել է VII դ.: Այդ հիշատակումների*

[19] *Ոթմսեցի. 2004, 117:*
[20] *Բագրեւանդացի. 2004, 418:*
[21] *Բագրեւանդացի. 2004, 420:*
[22] *Կանոնագիրք Հայոց. 1971, 214–215:*

*բացակայությունը, թերևս, կարելի է ենթադրել, կապված էին արդեն VI դ. սկսած Բագրևանդի ու Կոգովիտի մեկ թեմ կազմելու հանգամանքով, այսինքն՝ Բագրատունյաց տիրույթ Կոգովիտը մտնում էր Բագրևանդի թեմի մեջ և գլխավոր միավորի անունով կոչվում Բագրևանդի: Բագրևանդն ու Կոգովիտը VII դ. դարձյալ առանձնանում են:*

*Անդրադառնանք Հայոց Ներսես Բ Բագրևանդցի (548–557) կաթողիկոսի մեղադրական թղթում հիշատակված «Բժնունյաց» եպիսկոպոսին: Կարելի է կարծել, թե խոսքը Բզնունյաց եպիսկոպոսի մասին է, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ նեստորականության մեջ մեղադրվող եպիսկոպոսներին ուղղված թղթում հիշատակված, այնուհետև Դվինի Բ ժողովին չմասնակցած եպիսկոպոսները միմիայն Վասպուրականից էին՝ Ոչտունյաց, Մոկաց, Անձևացյաց, Ակեի, Զարեհավանի, Ամատունյաց և Բժնունյաց: Ուստի խոսքը Վասպուրականի Բուժունյաց եպիսկոպոսության մասին է և ոչ թե Բզնունյաց[23]: Բուժունյաց եպիսկոպոսության գոյությունը փաստում են Ուխտանեսի և Դվինի Գ (608 թ.) ժողովի եպիսկոպոսների ցանկերը[24]:*

*Կարևոր է նաև անդրադառնալ Մարդպետականի եպիսկոպոսի խնդրին: Տեսնում ենք, որ Դվինի Ա ժողովում արդեն հիշատակված է ոչ թե Մարզաստանի, այլ՝ Մարդպետականի եպիսկոպոսը: Վերջինիս հիշատակում են նաև Մովսես Դասխուրանցին[25] ու Թովմա Արծրունին[26]: Սակայն սրանք նույն վարչական միավորները չեն, քանի որ Վասպուրականի Մարզաստան գավառը գտնվում էր Արտազ և Գառնի գավառների միջև, իսկ Մարդպետականը սկզբում տարածվում էր «յԱտրպատականէ մինչեւ ցՃոլաչ եւ ցՆախճաւան»[27]: Հետագայում Մարդպետականի տիրույթներն ընդլայնվել են, ինչի արդյունքում Մարդպետականի եպիսկոպոսական աթոռը Նախճավան քաղաքից տեղափոխվել էր Մարզաստան գավառի Համբուլրազան ավան[28], այսինքն՝ Մարզաստան գավառը մտել էր Մարդպետականի մեջ: Բացի այդ, Ներսես Բ կաթողիկոսի գլխավորած ժողովներում Մարդպետականի եպիսկոպոսը հիշատակվում է նաև որպես Սեպհական գնդի եպիսկոպոս, ինչը ցույց է տալիս, որ դրանք նույնարժեք են[29]: Կապված քաղաքական հանգամանքներով՝ Սեպհական գունդ/Վասպուրական գունդ[30] անվանումներն ընդհանրական ամբռնում են այն տարածքների վրա, որոնք հետագայում մտան Արծրունյաց թագավորության կազմ:*

---

[23] Ղ ա զ ա ր յ ա ն. 1995, 96:

[24] Գիրք թղթոց. 1994, 298:

[25] Կ ա ղ ա ն կ ա տ ո ւ ա ց ի. 2011, 168, 344, 346:

[26] Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 158:

[27] Խ ո ր ե ն ա ց ի. 1991, 112:

[28] Ա ր ծ ր ո ւ ն ի եւ Ա ն ա ն ո ւ ն. 2010, 246:

[29] В а р д а н я н. 2018, 29.

[30] *Որպես եպիսկոպոսություն Մարդպետական և Սեպհական գունդը համարժեք են: Լայն իմաստով Սեպհական գունդը համարժեք էր Վասպուրականին, իսկ այս համատեքստում Մարդպետականը համազոր չէր կարող լինել Վասպուրականին (Ա վ դ ա լ բ ե գ յ ա ն. 1969, 141–145):*

Քարտեզ 1

## ՄԱՐԶՊԱՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ (428-451 ԹԹ.)



*Մեզ ծանոթ թեմերին, որոնք կա՛մ գավառի, կա՛մ նախարարության անվամբ են հանդես գալիս, մնում է ավելացնել Ուխտանեսի ցանկում հիշատակված չորս՝ «Երուտակաց», «Ասորեաց», «Ելոյ» և «Միւսասորեաց» եպիսկոպոսություններ:*

*Այսպես, Ելոյ (Եղոյ, Էղոյ) եպիսկոպոսությունը համապատասխանում է Պարսկահայք նահանգի Այլի գավառին[31]: Ասորյաց եպիսկոպոսությունը կարելի է նույնացնել Դվինի Ա ժողովից հայտնի Տմորյացի հետ[32], իսկ մյուս ասորյացը կամ պետք է ընդգրկեր Կորդիք գավառը, կամ էլ՝ Տմորիքի մի հատվածը[33]: Այսպես՝ Ա. Ղազարյանն Երուտակը (Առուտակ, Ռուտակ) համարում է VII դ. սկզբին եկեղեցական թղթերում միայն հիշատակվող Առանի (Առնայոյ, Առնոյ, Առանայ) եպիսկոպոսությունը, որը, ըստ նրա, գտնվում էր Ուտիք նահանգում[34]: Ն. Ադոնցը սահմանազատում էր Երուտակի ու «Առնայ»-ի եպիսկոպոսությունները՝ նշելով, որ առաջինը դա Հովհաննես Դրասխանակերտցու հիշատակած Ռոտակ (Ռոստակ) նահանգն է (Հեր և Զարավանդ գավառներ), իսկ «Առնայ»-ը՝ Պարսկահայքի Առնա գավառը, որը մտել է էլի կամ Այլի եպիսկոպոսության կազմի մեջ[35]: Ընդհանուր առմամբ, Ն. Ադոնցի փաստարկներն ավելի հիմնավոր և ընդունելի են, քան Ա. Ղազարյանինը: Համաձայնվելով, որ Երուտակն ու Առնան առանձին եպիսկոպոսություններ են, այնուամենայնիվ, համամիտ չենք, որ Առնայի եպիսկոպոսությունը ներառվել է Այլիի կազմում, քանի որ այդ դեպքում այն ավելի շուտ պետք է մտներ Զարեհավանի եպիսկոպոսության մեջ (տե՛ս քարտեզ 1):*

*Վերոբերյալ եկեղեցաժողովների ցանկերի արդյունքում ունենում ենք մարզպանական շրջանի համար հետևյալ հիմնական թեմերը՝ Այրարատի (Ոստան), Տարոնի (Մամիկոնյան), Մանազկերտի (Հաղբի), Բագրևանդի (Բագրատունյաց), Բզնունյաց, Տայքի, Բասենի, Մարդաստանի (V դ. վերջերից՝ Մարզպետական / Սեպհական գնդի), Մարդաղիի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Արշամունյաց, Խոռխոռունյաց, Արշարունյաց, Գնունյաց, Գողթան, Գարդմանի (մինչև 451 թ.), Ակեի, Բուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Այլիի (Ելո), Առնայի, Երուտակի ու Տմորիքի (Ասորյաց):*

*Ինչպես նշվեց, եկեղեցական թեմական բաժանումը հիմնականում համապատասխանում էր երկրի վարչաքաղաքական բաժանմանը, ուստի եպիսկոպոսությունները համադրենք նախարարություններին ու համապատասխան միավորներին և տեսնենք դրանց համարժեքությունը:*

---

[31] *Ադոնց. 1987, 372, ծան. 1: Մ. Օրմանյանը «Ելոյ»-ը համարում էր Հերը (Օրմանեան. 2001, 582):*

[32] *Ադոնց. 1987, 370:*

[33] *Մ. Օրմանյանը Մյուսասորյաց եպիսկոպոսությունը համարել է Մարզպետականը (Օրմանեան. 2001, 582): Սակայն այդպիսի նույնականացումը հնարավոր չէ, քանզի, ինչպես նշվեց, Մարզպետականի եպիսկոպոսության կենտրոնը սկզբում Նախճավանում էր, ապա՝ Մարդաստան գավառի Համբույրազան ավանում, ինչն էլ բացառում է դրանց նույնացումը:*

[34] *Ղազարյան. 1995, 100:*


[35] *Ադոնց. 1987, 372, ծան. 1, 373, ծան. 1, 2:*

Աղյուսակ 4

| Եկեղեցական թեմեր | Նախարարություններ / գավառներ |
|---|---|
| Այրարատի (Ոստան) թեմ | Ոստան Հայոց/Դվնա գավառ |
| Տարոնի թեմ | Մամիկոնյաններ |
| Մանազկերտի (Հարքի) թեմ | Ասորի Աղբիանոսյաններ |
| Բագրևանդի թեմ (Կոգովիտի հետ) | Բագրատունիներ |
| Բզնունյաց թեմ | Ասորի Աղբիանոսյաններ |
| Տայքի թեմ | Մամիկոնյաններ, Դիմաքսյաններ |
| Բասենի թեմ | Բասենացիներ |
| Մարդաստանի թեմ (V դ. վերջերից՝ Մարզպետական/Սեպհական դնդի) | Մարզպետական վարչական միավոր, որը գլխավորում էին Արծրունիները |
| Մարդալիի թեմ | Մարդալի գավառ |
| Սյունյաց թեմ (Արցախի հետ մինչև 451 թ.) | Սյունիներ |
| Արծրունյաց թեմ | Արծրունիներ |
| Ռշտունյաց թեմ | Ռշտունիներ |
| Մոկաց թեմ | Մոկացիներ |
| Վանանդի թեմ | Վանանդացիներ, Դիմաքսյաններ, Աբեղյաններ, Գաբեղյաններ, Հավնունիներ |
| Ամատունյաց թեմ | Ամատունիներ |
| Անձևացյաց թեմ | Անձևացիներ |
| Ապահունյաց թեմ | Ապահունիներ |
| Արշամունյաց թեմ | Մանդակունիներ (մինչև V դ. վերջ) |
| Խոռխոռունյաց թեմ | Խոռխոռունիներ |
| Արշարունյաց թեմ | Կամսարականներ, Դիմաքսյաններ, Սահառունիներ |
| Գնունյաց թեմ | Գնունիներ |
| Գողթնի թեմ | Գողթնացիներ |
| Գարդմանի թեմ (մինչև 451 թ.) | Գարդմանացիներ |
| Ակեի թեմ | Ակեացիներ |
| Բուժունյաց թեմ | Բուժունիք գավառ |
| Պալունյաց թեմ | Պալունիներ |
| Մեհնունյաց թեմ | Մեհնունիներ |
| Զարեհավանի թեմ | Զարեհավանցիներ |
| Այլիի (Ելո) թեմ | Այլի գավառ |
| Առնայի թեմ | Առնա գավառ |
| Երուտակի թեմ | Հեր և Զարավանդ գավառներ |
| Տմորիքի (Ասորյաց) թեմ | Տմորիք գավառ |

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*Ինչպես երևում է աղյուսակից, մարզպանական շրջանի եպիսկոպոսական թեմերն իրենց քանակով և զբաղեցրած սահմաններով համապատասխանում էին երկրի վարչական բաժանմանը. այսինքն՝ դրա հիմքում ընկած էր հզոր նախարարական տոհմերի հողային տարածքը (տե՛ս քարտեզ 2):*




*Մարզպանական շրջանի համար ընդհանրական կոնկրետ թվով դժվար է ասել, թե եկեղեցական թեմերը քանիսն էին, որովհետև դրանցից որոշներն ինչ որ պահի եղել են առանձին կամ միասին: Օրինակ՝ Ագաթանգեղոսի պատմութ-յան հունական բնագրային տարբերակում նշվում է, որ Աղբիոսը կարգվել էր Տարոնի և Տայքի եպիսկոպոս[36], իսկ արաբական տարբերակում՝ Տարոնի և Բզնունիքի[37]: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ սկզբնական շրջանում Մամիկոնյանների եպիսկոպոսությունն ընդգրկում էր Տարոն, Տայք ու Բզնու-նիք (մի մասը) գավառները, որոնք հետագայում առանձնանում են: Փավստոս*

[36] *Բ ա ր թ ի կ յ ա ն, Տ ե ր-Ղ ե ւ ո ն դ յ ա ն. 2002, 178:*
[37] M a r r. 1905, 139.

*Ռուզանդը նշում է Բագրևանդի ու Արշարունիքի միասնական թեմի գոյության մասին, որը նույնպես բաժանվում է: Հովհաննես Բ Գաբեղյան (557–574) կաթողիկոսի թղթում հասեննն ու Մարդաղին հիշատակվում են միասին, որպես մեկ թեմ[38], որոնք մինչ այդ առանձին էին: Այս համատեքստում է, որ դժվար է ստույգ ասել՝ աղբյուրներում այս կամ այն եպիսկոպոսության բացակայությունն ինչով էր պայմանավորված: Դա անպայման չէր, որ չգոյության հետևանք լիներ, այլ կարող էր ժողովին չներկայանալու, այլ թեմի ենթակա, այն է՝ ստորակա լինելու կամ ընդհանուր թեմի մեջ գտնվելու հետևանք լինել: Բայց և այնպես փորձենք աղբյուրներից հայտնի թեմերը (հաշվի առնելով նաև տվյալ շրջանում առկա նախարարությունները) բաժանել շրջանների՝ նշելով համապատասխան եպիսկոպոսությունները.*

*428–451 թթ. – Այրարատի (Ոստան), Տարոնի (Մամիկոնյան), Մանազկերտի (Հարքի), Բագրևանդի (Արշարունիքի հետ), Բզնունյաց, Տայոց, Հասենի, Մարդաղիի, Մարղաստանի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Տուրուբերանի (Արշամունյաց), Բագրատունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Գողթան, Գարղմանա, Ակեի, Ռուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Տմորիքի, Այլիի:*

*506–630 թթ. – Այրարատի (Ոստան), Տարոնի և Մամիկոնյան, Հարքի, Բագրևանդի (Կոգովիտի հետ=Բագրատունիներ), Արշարունյաց, Բզնունյաց, Տայոց, Հասենի, Մարդաղիի, Ոստան և Մարզպետական / Սեպհական գնդի, Սյունյաց, Արծրունյաց, Ռշտունյաց, Մոկաց, Վանանդի, Ամատունյաց, Անձևացյաց, Ապահունյաց, Արշամունյաց, Խոռխոռունյաց, Գնունյաց, Գողթան, Ակեի, Ռուժունյաց, Պալունյաց, Մեհնունյաց, Զարեհավանի, Տմորիքի, Այլիի, Երուտակի, Առնայի:*

## Եզրակացություն

*Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել այն պնդումը, թե Մարզպանական Հայաստանում 428–451 թթ. առկա էր եպիսկոպոսական 18 թեմ, չի հաստատվում աղբյուրներով: Մարզպանական շրջանը լայն հասկացություն է և ընդգրկում է 428–630-ական թվականները, որով թեմերի քանակը կարելի է նշել 31: Թեմերը տարբեր պատճառներով մերթ մի քանի վարչամիավորներից կազմում էին միասնական եպիսկոպոսություն, մերթ՝ տրոհվում: Թեմերի կազմավորման մեջ նկատվում է ավատատիրական կարգերին համապատասխան վարչական բաժանումներ, ի դեմս հզոր նախարարական տոհմերի:*

Հենրիկ Խաչատրյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Միջին դարերի պատմության բաժնի պիտաչխատող: Գիտական հետաքրքրությունները՝ պատմական աշխարհագրություն, Հայաստանի և Իրանի իրավունքի պատմություն: Հեղինակ է 15 հոդվածի:
ORCID: 0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am

[38] *Գիրք թղթոց. 1994, 206, 210:*

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում. քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, «Հայաստան», 640 էջ:

Ալիշան Ղ. 1890, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Ս. Ղազար, 590 էջ:

Ավդալբեգյան Թ. 1969, Հայագիտական հետազոտություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 490 էջ:

Բաբգէն կաթողիկոս Որթմսեցի. 2004, Թուղթ Հայոց ի Պարսս, առ ուղղափառս. – «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 117–124:

Բարթիկյան Հ., Տեր-Ղևոնդյան Ա. 2002, Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք). – «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ., էջ 172–180:

Գիրք թղթոց. 1994, Երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, տպ. Սրբոց Յակոբեանց, 711 էջ:

Եղիշէ. 2003, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին. – «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 521–764:

Թովմա Արծրունի եւ Անանուն. 2010, Պատմութիւն տանն Արծրունեաց. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԱ, ժ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 46–313:

Կանոնագիրք Հայոց. 1971, հ. Բ, աշխատ.՝ Վազգեն Հակոբյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 476 էջ:

Հայաստանի ազգային ատլաս. 2008, հ. Բ, Երևան, «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, 264 էջ:

Հարությունյան Բ. 2000, Հայոց եկեղեցու թեմական բաժանումը Գրիգոր Լուսավորչի հովվապետության շրջանում. – ՊԲՀ, № 2, էջ 108–127:

Հարությունյան Ռ. 2008, Հայ եկեղեցու թեմական բաժանումը Մարզպանական Հայաստանում.– «Բանբեր Երևանի համալսարանի», № 2, էջ 141–148:

Ղազար Փարպեցի. 2003, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 2201–2375:

Ղազարյան Ա. 1995, Հայ Եկեղեցու թեմական բաժանումը Ե–է դարերում, «Էջմիածին», Զ-է, էջ 94–103:

Մանուչարյան Ա. 2021, Արշարունյաց եպիսկոպոսական թեմը (IV–XI դդ.). – ՊԲՀ, № 3, էջ 187–202:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները՝ Ա. Բ. Սարգսեանի, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 490 էջ:

Մովսէս Կաղանկատուացի. 2011, Պատմութիւն Աղուանից աշխարհի. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, ժ դար, Երեւան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 32–437:

Ներսէս Բագրեւանդացի. 2004, Թուղթ մեղադրութեան առ եպիսկոպոսունսն. – «Մատենագիրք Հայոց», հ. Գ, Զ դար, Անթիլիաս-Լիբանան, էջ 418–420:

Ուխտանէս եպիսկոպոս. 2011, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. ԺԵ, ժ դար, Երեւան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 441–616:

Փաւստոս Բուզանդ. 2003, Պատմութիւն Հայոց. – «Մատենագիրք Հայոց», հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, “Armenian Catholicosate of Cilicia”, էջ 277–428:

Օրմանեան Մ. 2001, Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հ. Ա, Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածին», 1870 սյունակ:

Варданян В. 2018, Очерки истории Васпураканского Армянского государства. Ереван, Изд. Института истории НАН РА, 375 с.

Марр Н. 1905, Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием (Арабская версия). СПб., “тип. Императорской академии наук”, 211 с.

Хачатрян Г. 2022, Нахарарские (княжеские) владения Марзпанской Армении (V–VI вв.). – ИФЖ, № 2, с. 47–62.

## REFERENCES

Adonts’ N. 1987, Hayastany Hustinianosi darashrjanum. k’aghak’akan kats’ut’yuny yst nakhararakan kargeri, Yeryevan, «Hayastan», 640 ej (In Armenian).

Alishan Gh. 1890, Ayrarat. bnashkharh Hayastaneayts’, Venetik-S. Ghazar, 590 ej (In Armenian).

Avdalbegyan T’. 1969, Hayagitakan hetazotut’yunner, Yerevan, HSSH GA hrat., 490 ej (In Armenian).

Babgen kat’oghikos Vot’msets’i. 2004, T’ught’ Hayots’ i Parss, ar ughghap’ars. – «Matenagirk’ Hayots’», h. G, Z dar, Ant’ilias-Libanan, ej 117–124 (In Armenian).

Bart’ikyan H., Ter-Ghevondyan A. 2002, Agat’angeghosi patmut’yan huna-kan norahayt khmbagrut’yuny (Vark’). – «Hay-byuzandakan hetazotut’yunner», h. A, Yerevan, YePH hrat., ej 172–180 (In Armenian).

Ghazar P’arpets’i. 2003, Patmut’iwn Hayots’. – «Matenagirk’ Hayots’», h. B, Ye dar, Ant’ilias-Libanan, ej 2201–2375 (In Armenian).

Ghazaryan A. 1995, Hay Yekeghets’u t’emakan bazhanumy Ye–E darerum, «Ejmiatsin», Z-E, ej 94–103 (In Armenian).

Girk’ t’ght’ots’. 1994, Yerkrord hratarakut’iwn, Yerusaghem, tp. Srbots’ Yakobeants’, 711 ej (In Armenian).

Harut’yunyan B. 2000, Hayots’ yekeghets’u t’emakan bazhanumy Grigor Lusavorch’i hovvapetut’yan shrjanum. – PBH, № 2, ej 108–127 (In Armenian).

Harut’yunyan R. 2008, Hay yekeghets’u t’emakan bazhanumy Marzpanakan Hayastanum.– «Banber Yerevani hamalsarani», № 2, ej 141–148 (In Armenian).

Hayastani azgayin atlas. 2008, h. B, Yeryevan, «Geodeziayi yev k’arte-zagrut’yan kentron» POAK, 264 ej (In Armenian).

Kanonagirk’ Hayots’. 1971, h. B, ashkhat., Vazgen Hakobyani, Yerevan, HSSH GA hrat., 476 ej (In Armenian).

Khachatryan H. 2022, Nahararskie (knâžeskie) vladeniâ Marzpanskoj Armenii (V–VI vv.). – IFŽ, № 2, s. 47–62 (In Russian).

Manuch’aryan A. 2021, Arsharunyats’ yepiskoposakan t’emy (IV–XI dd.). – PBH, № 3, ej 187–202 (In Armenian).

Mar N. 1905, Kreŝenie armân, gruzin, abhazov i alanov svâtym Grigoriem (Arabskaâ versiâ), SPb., “tip. Imperatorskoj akademii nauk”, 211 s. (In Russian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Movses Kaghankatowats'i. 2011, Patmut'iwn Aghowanits' ashkharhi.– «Matenagirk' Hayots'», h. ZHE, ZH dar, Yerewan, ej 32–437 (In Armenian).

Movses Khorenats'i. 1991, Patmut'iwn Hayots', k'nnakan bnagiry yev nera-tsut'iwny M. Abegheani yev S. Yarut'iwneani, lrats'umnery, A. B. Sargseani, Yeryevan, HH GA hrat., 490 ej (In Armenian).

Nerses Bagrevandats'i. 2004, T'ught' meghadrut'ean ar yepiskoposunsn. – «Matenagirk' Hayots'», h. G, Z dar, Ant'ilias-Libanan, ej 418–420 (In Armenian).

Ormanean M. 2001, Azgapatum. Hay ughghap'ar yekeghets'woy ants'k'ery skizben minch'ev mer orery yarakits' azgayin paraganerov patmowats, h. A, Ejmiatsin, «Mayr At'vor S. Ejmiatsin», 1870 syunak (In Armenian).

P'awstos Buzand. 2003, Patmut'iwn Hayots'. – «Matenagirk' Hayots'», h. A, Ye dar, Ant'ilias-Libanan, "Armenian Catholicosate of Cilicia", ej 277–428 (In Armenian).

T'ovma Artsruni yev Ananun. 2010, Patmut'iwn tann Artsruneats'. – «Matenagirk' Hayots'», h. ZHA, ZH dar, Ant'ilias-Libanan, ej 46–313 (In Armenian).

Ukhtanes yepiskopos. 2011, Patmut'iwn Hayots'.– «Matenagirk' Hayots'», h. ZHE, ZH dar, Yerevan, "Armenian Catholicosate of Cilicia", ej 441–616 (In Russian).

Yeghishe. 2003, Vasn Vardanay yev Hayots' paterazmin. – «Matenagirk' Hayots'», h. A, Ye dar, Ant'ilias-Libanan, ej 521–764 (In Armenian).

## ЦЕРКОВНО–ДИОЦЕЗАЛЬНОЕ ДЕЛЕНИЕ МАРЗПАНСКОЙ АРМЕНИИ (428–630-ые годы)

ГЕНРИК ХАЧАТРЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Марзпанская Армения, епископ Ухтанес, епархия, епископат, церковный собор, Багреванд, Мардпетакан.*

Армянская церковь, со своей структурой и функциями, являлась неотъемлемой частью армянской государственности. Изучение ее истории, епархиального устройства, истории и статуса отдельных епархий, а также отношений между государством и церковью, церковью и знатью (князьями), а также контактов церкви с иностранными государствами в условиях отсутствия независимой государственности позволяет составить более точное представление о данных процессах. Несомненно, епархиальная структура марзпанского периода в той или иной степени, изучена однако в целом исследования в этой области были либо односторонними, либо неполными.

Известно, что в большинстве случаев епархиальное деление соответствовало политико-административному устройству страны. С этой точки зрения, после падения Армянского царства династии Аршакидов в 428 году епархиальное деление должно было в основном совпадать с границами Марзпанской Армении. Исследование источников показывает, что в период

установления христианства как государственной религии первый католикос Великой Армении – святой Григорий Просветитель (301–325), основал 36 епископских кафедр. Списки церковных соборов, а также данные списков епископов проливают свет на епархиальное деление марзпанского периода.

Согласно свидетельствам историков Егише и Лазаря Парпеци, в Марзпанской Армении существовало всего 18 епархий, число которых впоследствии увеличилось. Однако анализ источников и списков церковных соборов показывает, что количество епархий превышало 18, а сам термин «марзпанский период» требует уточнения в зависимости от конкретного временного отрезка.

Итак, имеем следующее деление епархий: 428–451 гг. – Айрарат (Востан), Тарон (Мамиконян), Маназкерт (Харк), Багреванд (включая Аршаруник), Бзнуник, Тайк, Басен, Мардаги, Мардастан, Сюник, Арцруняц, Рштуняц, Мокк, Вананд, Аматуняц, Андзевацяц, Апахуняц, Туруберан (Аршамуник), Багратуняц, Хорхоруняц, Гнуняц, Гогтан, Гардман, Акей, Бужуняц, Палуняц, Мехнуняц, Зареаван, Тморик, Айли.

506–630 гг. Айрарат (Востан), Тарон и Мамиконян, Харк, Багреванд (включая Коговит = Багратуни), Аршаруни, Бзнуняц, Тайк, Басен, Мардаги, Востан и Мардпетакан / Сепхакан Гунд, Сюник, Арцруняц, Рштуняц, Мокк, Вананд, Аматуни, Андзевацяц, Апахуняц, Аршамуник, Хорхоруняц, Гнуняц, Гогтан, Акей, Бужуняц, Палуняц, Мехнуняц, Зареаван, Тморик, Айли, Ерутак, Арна.

*Генрик Хачатрян – к. и. н., научный сотрудник отдела средневековой истории Института истории НАН РА. Научные интересы: историческая география, история права Ирана и Армении. Автор 15 статей. ORCID:0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am*

## THE ECCLESIASTICAL DIOCESAN DIVISION OF MARZPAN ARMENIA (428–630s)

HENRIK KHACHATRYAN

Summary

*Keywords: Marzpan Armenia, bishop Ukhtanes, dioces, episcopacy, church council, Bagrevand, Mardpetakan.*

The Armenian Church, with its structure and functions, has been an inseparable part of the Armenian statehood. The study of its history, the diocesan structure, the history and status of individual dioceses, the relations between the state and the church, the church and the nobility (princes), as well as the church's

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

interactions with foreign states in the absence of an independent state, provides us with a more accurate understanding of the processes. Indeed, the diocesan structure of the marzpanate period has been addressed in one way or another, but, in the whole, the research conducted in this area was either one-sided or incomplete.

It is known, that for the most part, the ecclesiastical diocesan division corresponded to the political and administrative division of the country. From this perspective, after the fall of the Kingdom of Armenia under the Arsacid dynasty in 428, the ecclesiastical diocesan division was to coincide mainly with the borders of the Marzpan Armenia (Armenian marzpanate). The study of the sources indicates that during the establishment of Christianity as the state religion, the first Catholicos of Greater Armenia, St. Gregory the Illuminator (301–325), established 36 episcopal sees. The lists of church councils, as well as the data from the lists of bishops, shed light on the diocesan division of the Marzpanate period.

According to the historians Yeghishe and Ghazar Parpetsi, there were only 18 dioceses in the Marzpan Armenia, which later increased in number. However, the examination of the sources and the lists of church councils shows, that there were more than 18 dioceses, and the term "marzpanate period" needs to be clarified depending on the specific time frame.

Thus, we have the following division of dioceses: 428–451 AD – Ayrarat (Vostan), Taron (Mamikonyan), Manazkert (Hark), Bagrevand (with Arsharunik), Bznunyats, Tayots, Basen, Mardaghi, Mardastan, Syunik, Artsruni, Rshtuni, Mokats, Vanand, Amatunyats, Andzevatsyats, Apahuni, Turuberan (Arshamunik), Bagratuni, Khorhoruni, Gnuni, Goghtan, Gardman, Ake, Buzhunyats, Palunyats, Mehnunyats, Zarehavan, Tmorik, Ayli.

506–630 AD – Ayrarat (Vostan), Taron and Mamikonyan, Hark, Bagrevand (with Kogovit = Bagratunis), Arsharuni, Bznunyats, Tayots, Basen, Mardaghi, Vostan and the Mardpetakan/Sephakan Gund, Syunik, Artsruni, Rshtuni, Mokats, Vanand, Amatunyats, Andzevatsyats, Apahuni, Arshamunik, Khorhoruni, Gnuni, Goghtan, Ake, Buzhunyats, Palunyats, Mehnunyats, Zarehavan, Tmorik, Ayli, Yerutak, Arna.

*Henrik Khachatryan – Candidate of Sciences in History, Researcher at the Department of Medieval History of the Institute of History of NAS RA. Scientific interests: historical geography, history of Law of Armenia and Iran. Author of 15 articles. ORCID: 0000-0002-8518-9564. henrik.khachatryan@edu.isec.am*

ՀՏԴ : 93(=919.81)(479.22) + 070(479.25)

Doi:10.54503/0135-0536-2025.2-51

# ՁԱՎԱԽՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ «ՁԱՎԱԽՔ» ԱՄՍԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՄ (1990-ական թվականների սկիզբ)*

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

**Բանալի բառեր՝ Վրաստան, ջավախահայություն, «Ջավախք» ժողովրդական շարժում, «Ջավախք» ամսաթերթ, աջակցություն Արցախին:**

**Ամփոփում**

*«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադրած «Ջավախք» ամսաթերթը կարճ ու երկարատև ընդմիջումներով հրատարակվել է Ախալքալաքում 1990–1998 թվականներին: Չնայած անկանոն հաճախականությամբ և սահմանափակ տպաքանակով լույս տեսնելու իրողությանը՝ ԽՍՀՄ փլուզման և Վրաստանի անկախության առաջին տարիներին «Ջավախք»-ը նոր խոսքի ու մտքի տարածման հարթակ էր ջավախահայ հասարակական-քաղաքական կյանքում: Ամսաթերթում տեղ են գտել ինչպես «Ջավախք» ժողովրդական շարժման գործունեությանն ու բարձրացված հարցերին, այնպես էլ ջավախահայության՝ զարթոնք ապրող հասարակական-քաղաքական, ազգային, կրթամշակութային, հոգևոր կյանքին, Ջավախքի պատմության ուսանելի դրվագներին, մեծերի կյանքին ու գործունեությանը, Վրաստանի իշխանությունների ընդունած օրենքներին ու որոշումներին, հայ-վրացական առնչություններին ու կնճռոտ հարցերին, սոցիալական դժվարություններին, բարեգործությանը, եկեղեցաշինությանը վերաբերող հոդվածներ ու հրապարակումներ: Արժեքավոր են նաև ջավախահայության՝ Արցախյան գոյապայքարին ցուցաբերած օժանդակությունը ներկայացնող փաստառատ հրապարակումները: Անդրադարձ ենք կատարել «Ջավախք» ամսաթերթի 1990–1994 թթ. լույս տեսած համարներին:*

**Նախաբան**

*ԽՍՀՄ փլուզման նախօրյակին՝ 1980-ական թվականների վերջին, ինչպես նաև փլուզման փուլում և հետխորհրդային առաջին տարիներին Ջավախքում ստեղծված հայկական կազմակերպությունների միջոցով փորձ արվեց համակարգել երկրամասի հասարակական-քաղաքական կյանքը: Մինունդ առավ «Ջավախք» կոմիտե, «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն», «Ջավախք» ժողովրդական շարժում անվանումներով մի*

---

* *Ներկայացվել է 15. V. 2025 թ., գրախոսվել է 24. VI. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*կազմակերպություն, որը հետագայում (մինչ 1990-ական թվականների կեսերը) էական դերակատարություն էր ունենալու Ջավախքի ներքաղաքական կյանքում[1]: Հավելենք, որ ԽՍՀՄ ողջ տարածքում իրականացվող «վերակառուցման» քաղաքականության հետ կապված՝ շարժման սկզբնական փուլում (մինչև 1990 թ. հունվարի 27-ին տեղի ունեցած առաջին կոնֆերանսը), այն կոչվել է «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերություն» անունով և գործել որպես կամավոր հասարակական կազմակերպություն[2]: Առաջին կոնֆերանսի ընթացքում մեծ տեղ հատկացվեց Արցախին տրամադրվող օգնություններին վերաբերող ծրագրերի կազմմանը: Շարժման առաջնորդները կոչով դիմում էին շրջանի հասարակության լայն շերտերին՝ համախմբվելու շարժման շուրջ, միասնական պայքարելու առկա ազգային-քաղաքական, կրթամշակութային և սոցիալ-տնտեսական բնույթի հիմնախնդիրների լուծման համար[3]:*

### «Ջավախք» ամսաթերթի հիմնումը

*Կազմակերպության առաջին կոնֆերանսում ընդունված բանաձևում, ի թիվս մի շարք որոշումների, կարևոր է համարվել նաև «Ախալքալաքում ստեղծելու «Ջավախք» կազմակերպության գրավոր օրգան «Ջավախք» ամսաթերթի»[4]: 1990 թ. մայիսի 19-ի հերթական նիստով «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության նախագահությունը որոշում կայացրեց «հիմնել «Ջավախք» կազմակերպության տպագիր օրգան և այն անվանակոչել «Ջավախք»: Ամսաթերթի խմբագիր հաստատվեց խորհրդի անդամ, Ջավախքի անվանի մտավորական Մկրտիչ Խաչատրյանը»[5]:*

*1994 թ. օգոստոսին լույս տեսած համարից (3-րդ) սկսած՝ Մ. Խաչատրյանի անունը, իբրև խմբագրի, թերթում այլևս չի նշվում: Փոխարենը նշվում է «խմբագրական մարմին» հավաքական անունը: Թերթին թղթակցել են ինչպես*

---

*[1] 1988 թ. փետրվարի վերջին՝ Ղարաբաղյան շարժման սկզբնավորումից մեկ շաբաթ անց, Ախալքալաքում՝ հասարակական գործիչ Հ. Մանուկյանի տանը, հինգ անձանց կողմից (Սամվել Պետրոսյան, Հակոբ Մանուկյան, Գևորգ Համոյան, Միքայել Թադևոսյան և Վարոս Մահտեսյան) կյանքի կոչվեց «Ջավախք» կոմիտեն (տե՛ս* Грузия, Самцхе-Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, 12. 01. 2004. – https://regnum.ru/article/202173*): Հետագայում «Ջավախք» ժողովրդական շարժման ճևով ընդլայնված կազմակերպության հիմնադիրներ, ըստ մեկ այլ աղբյուրի, հանդիսացել են Ս. Պետրոսյանը, Հակոբ Ավետիսյանը, Վ. Մահտեսյանը և Հ. Մանուկյանը [տե՛ս «Մարտիկ» (Երևան), 2001, սեպտեմբեր, թիվ 37]:*

*[2] Տե՛ս կանոնադրություն «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության», ընդունված «Վերակառուցում ժողովրդական շարժում» ընկերության կողմից 01 հունիսի, 1989 թ., գրանցված Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի առ 08. 09. 1989 թ. № 118 որոշմամբ (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

*[3] Տե՛ս «Ջավախք» ժողովրդական շարժման կոչը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի ողջ աշխատավորությանը, տնտեսությունների և կազմակերպությունների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, բանվորներին ու կոլտնտեսականներին, մտավորականության բոլոր ներկայացուցիչներին, 1991 թ., ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

*[4] Տե՛ս Բանաձև «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության կոնֆերանսի (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

*[5] Տե՛ս Արձանագրություն № 3, 19. 05. 1990, ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):*

*Զավախքի հասարակական-քաղաքական գործիչները, այնպես էլ՝ անվանի մտավորականները, մանկավարժները, հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերող, Զավախքի ճակատագրով, Ջավախահայության հոգևոր, կրթամշակութային և սոցիալ-տնտեսական խնդիրներով մտահոգ մարդիկ:*


ԲՈՒՆՅՔՎԵԼՆ Է ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՒԹՅԱՆ

Զավախք

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆԻ «ՋԱՎԱԽՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ»

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ № 1 | ԴԵԿՏԵՄԲԵՐ 1990 Թ. ԳԻՆԸ՝ 30 ԿՈՊ.

*Ամսաթերթի առաջին համարը լույս տեսավ 1990 թ. դեկտեմբերին: Այն պաշտոնապես կոչվում էր Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժում[6] կազմակերպության պաշտոնաթերթ, գինը՝ 30 կոպեկ: Ամսաթերթի տարբերանշանն էր՝ «Ջավախք» անունը, Ջ մեծատառը ջահի պատկերով, հիմքում՝ սուր, վերևում՝ Մեծ և Փոքր Մասիսները, մեջտեղում՝ խաչը: Տարբերանշանի վերևում՝ «Բռունցքվելն է հավերժությունը հայության» գրությամբ կարգախոսը: Ամսաթերթը տպագրվել է Վրաստանի Հանրապետության տպագիր խոսքի պետական կոմիտեի Ախալցխայի պոլիգրաֆ արտադրական միավորման Ախալքալաքի շրջանային տպարանում: Տպաքանակի մասին, ցավոք, տեղեկություններ չեն բերված: Մեր տեղեկություններով՝ այն եղել է սահմանափակ քանակով:*

*Ամսաթերթը բաղկացած էր 4 էջից: Ծավալը փոփոխության է ենթարկվել 4-րդ (սեպտեմբեր, 1994, տպագրվել է 6 էջի ծավալով), 18-րդ (փետրվար, 1997 թ., տպագրվել է 2 էջ-ով) և 19-րդ (օգոստոս, 1998 թ., տպագրվել է 2 էջ ծավալով) համարներում:*

*Առաջին համարի լույս տեսնելուց հետո թերթը շուրջ երեք տարի լույս չի տեսել: Պատճառը, ամենայն հավանականությամբ, Վրաստանում առկա տնտեսական, էներգետիկ ճգնաժամն էր, վրաց-աբխազական՝ ավելի քան*

---

*[6] Ամսաթերթում կազմակերպության անվանումը գրված է «Ջավախք ժողովրդական շարժում» ձևով: Ամսաթերթի նյութերում և կազմակերպության այլ փաստաթղթերում օգտագործվում է նաև ««Ջավախք» ժողովրդական շարժում» և «Ջավախք» ժողովրդական շարժում ձևերը: Հոդվածում օգտագործել ենք «Ջավախք» ժողովրդական շարժում ձևը:*

*մեկամյա արյունալի պատերազմը, երկրում տիրող քաոսն ու ամենաթողությունը: «Ջավախք»-ը հաջորդիվ լույս տեսավ 1993 թ. սեպտեմբերին՝ նույն տարբերանշանով, կարգախոսով ու ճևավորմամբ: Բացառություն էր միայն այն, որ ամսաթերթը ներկայացվում էր ոչ թե Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության պաշտոնաթերթ, այլ, իբր, նույն շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթ[7]:*

*«Ջավախք» ամսաթերթը 1995 թ. փետրվարից և մինչ նույն թվականի սեպտեմբերը (15-րդ համարը) հրատարակվեց կանոնավոր՝ ամենամսյա հաճախականությամբ: 1996 թ. լույս տեսավ «Ջավախք»-ի երկու[8], 1997 թ.՝ մեկ, 1998 թ.՝ երկու համար: Այսպիսով, իբրև «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթի ամսաթերթն անկանոն հրատարակվեց մինչև 1998 թ. օգոստոս, ընդհանուր թվով 20 համար:*

## «Ջավախք»-ի անդրանիկ համարը. ամսաթերթի տպագրության ընդհատումը

*«Ջավախք»-ի առաջին համարում «Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադրման և նպատակների մասին ընդարձակ հոդված-խմբագրականում խոսվում է, թե ինչու է անհրաժեշտ ունենալ նաև տպագիր օրգան. ««Ջավախք» ժողովրդական շարժումը շրջանի ամենախոշոր հասարակական կազմակերպությունն է, որի կազմում ընդգրկված են շրջանի աշխատավորների ամենատարբեր շերտեր՝ բանվոր ու գյուղացի, մտավորականություն ու գյուղմասնագետների ներկայացուցիչներ: «Ջավախքը» միավորում է 61 սկզբնական կազմակերպություն, որոնք փաստորեն շրջանի սոցիալ-քաղաքական, տնտեսական, բնագավառներում ներգործուն հզոր ուժ են հանդիսանում: Սակայն, դժբախտաբար, այդ վիթխարի ուժը դեռևս պոտենցիալ վիճակի մեջ է: Հասկանալի է, որ հրամայական պահանջ է այն մեր շահերին ծառայեցնելու համար համապատասխան խթանիչ ստեղծել, որը «Ջավախք» կազմակերպության գործունեությունը աշխատավորների լայն մասսաների գիտակցությանը, սրտին ու հոգուն հասանելի դարձնի: Այդ հզոր ուժը դրավոր օրգանի ստեղծումն է: Ահավասիկ այդ պարբերականի անդրանիկ համարը: Ասենք, որ դեռևս դարասկզբին մեր գավառում եղել է «Ջավախք» շաբաթաթերթը[9]: Այդ պարբերականը պատով*

---

*[7] Նշենք, որ «Ջավախք»-ի հաջորդ համարը ևս, որը լույս տեսավ մոտ մեկ տարի անց՝ 1994 թ. օգոստոսին, հրատարակվեց իբրև Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթ: Դրան հաջորդող համարը, որը լույս տեսավ ավելի քան մեկ ամիս անց՝ 1994 թ. սեպտեմբերին, վերստին ներկայացավ որպես Ախալքալաքի շրջանի «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ:*

*[8] Ցավոք, Ջավախահայ հասարակական-քաղաքական գործիչների անճնական պահոցներում և այլուր մեր փնտրտուքներն իզուր անցան, քանզի չկարողացանք ձեռք բերել «Ջավախք»-ի 17-րդ համարը: «Ջավախք» ամսաթերթը չի փոխանցվել նաև ՀՀ գրադարաններին, գիտահետազոտական կենտրոններին և այլն: Արդյունքում, թերթի որևէ համար գտնել հնարավոր չէ նշված հաստատություններում: Հետևաբար, ենթադրում ենք, որ տվյալ համարը լույս է տեսել 1996-ին, և, քանի որ հաջորդ՝ 18-րդ համարը հրատարակվել է 1997 թ. փետրվարին, չի բացառվում, որ խնդրո առարկա 17-րդ համարը տպագրված լինի նաև 1997 թ. հունվարին:*

*[9] Ախալքալաքի գավառում հրատարակված հայերեն առաջին պարբերականը՝ «Ջավախք» երկշաբաթաթերթը, հրատարակվել է 1913–1916 թթ.: Այն հիմնադրել է հրապարակախոս, հասարակական-մշակութային գործիչ, գրող ու թատերագիր*

*կատարեց իր առաքելությունը: Նորաստեղծ «Զավախք» պարբերականը փաստորեն իր նախորդի լավագույն ավանդույթների շարունակողը պետք է լինի՝ արդի պայմաններում արտահայտելով ժողովրդական շարժման վեհ նպատակները: Այն պայքարելու է ժողովուրդների բարեկամության և մասնավորապես հայերի ու վրացիների դարավոր եղբայրությունն ամրապնդելու համար»[10]:*

*Ամսաթերթի նույն համարում ««Զավախք» կազմակերպության պահանջը կյանքի հրամայականով» խորագրի տակ անդրադարձ է կատարվել Զավախքի հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդման խնդրին, փաստել համապատասխան ծրագրի մշակման անհրաժեշտությունը, որպեսզի 8–9-րդ դասարաններում ֆակուլտատիվ առարկաների փոխարեն շաբաթական մեկ ժամ հատկացվի հայ ժողովրդի պատմության դասավանդմանը: Ամսաթերթում այդ խնդրին են անդրադառնում ամսաթերթի խմբագիր Մ. Խաչատրյանը և շրջանի անվանի մտավորական Երվանդ Շիրինյանը՝ «Մատաղ սերնդի հայեցի դաստիարակությունը՝ հրամայական պահանջ» խորագրով հոդվածում՝ փաստելով, որ 1990 թ. դրությամբ Ախալքալաքի շրջանում գործող 69 հանրակրթական և 2 պրոֆտեխնիկական ուսումնարանների՝ ավելի քան 14 հազար աշակերտների շուրջ 90 %-ը հայ մանուկներ էին, և վերջիններիս համար հայ ժողովրդի պատմության դասավանդումը պաշտոնապես ընդգրկված չէր պետական կրթական ծրագրերում: Հեղինակներն արդարացիորեն հույսեր չէին կապում Վրաստանի իշխանությունների հետ՝ նշելով, որ Հայկական ԽՍՀ լուսավորության նախարարությունը պետք է «հետևություն անի և առևտրական կազմակերպությունների միջոցով կամ այլ ուղիներով Զավախքի՝ Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ասպինձայի, Բորժոմի շրջանների[11] հայկական դպրոցների համար հատկացնի հայ ժողովրդի պատմության 10–12 հազար դասագիրք»[12]:*

*Զավախքում հայեցի դիմագծով սերունդ ունենալու խնդրին է նվիրված նաև Մ. Ադամյանի «Հարկավոր է փոխել դպրոցի պրոֆիլը» վերտառությամբ հոդվածը, որտեղ հեղինակն ավելորդ չհայտնություն է համարում տվյալ փուլում (1990 թ.) Ախալքալաքում 2 ռուսական դպրոցը: Այնտեղ սովորող շուրջ 1600*

---

*Վարդան Շահպարոնյանը (տե՛ս Մ ա ղ ա լ յ ա ն. 1997, 81–85, Ս ա ր գ ս յ ա ն. 2009, 251–274):*

*[10] «Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, էջ 1: Խմբագրության նպատակն էր «լրագիրը դարձնել ժողովրդի խոսափողը, ականջն ու աչքը, որպեսզի այն դառնա ... «Զավախք» կազմակերպության համար գաղափարախոսական աշխատանքի հզոր լծակ: ... Զավախք աշխարհի աշխատավորությունը պարտավոր է իր նպաստը բերել Վրաստանի սոցիալ-տնտեսական բարգավաճման գործում: Այս ասպարեզը մեր թերթի մշտական տեսադաշտում է գտնվելու: Եկեք խորապես գիտակցենք, որ մեր գավառի սոցիալ-տնտեսական, կուլտուր-մշակութային կյանքն իր ամբողջության մեջ պիտի արտացոլվի «Զավախք»-ում» («Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 1):*

*[11] 1989 թ. ԽՍՀՄ պաշտոնական մարդահամարի տվյալներով՝ համապատասխանաբար 42,81 %-ով (23.469) և 28,51 %-ով (12.671) հայաբնակ Ախալցխայի ու Ծալկայի շրջանները Ջավախահայ մտավորականների կողմից տվյալ հոդվածի միջոցով ներկայացված պահանջագրից դուրս թողնելը խոսում է այն մասին, որ «Զավախք» ժողովրդական շարժումը հայեցակարգային հողի վրա դեռևս չէր դրել սեփական քաղաքական ուղեգիծը, ինչը հետագայում ևս խիստ զգացնել տվեց իրեն՝ դառնալով ճախողումների հիմնական պատճառներից մեկը (այս մասին առավել հանգամանալից տե՛ս Ս ա ր գ ս ե ա ն. 2018, 487–508):*

*[12] «Զավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2:*

*աշակերտ, որի 90%-ը կազմում են հայ մանուկները, ըստ հեղինակի, իրենց ազգային պատկանելության մասին ենթագիտակցական պատկերացում հազիվ ունեն[13]:*

*Ամսաթերթի անդրանիկ համարում հոդվածագիր Ի. Անիսոնյանն անդրադարձել է հայ-վրացական եղբայրությանն ու դարավոր բարեկամական կապերին խոչընդոտող երևույթներին ու «երկու ժողովուրդների ազգային շահերին անհարիր տրամադրություններին», այն է՝ Վրաստանի մամուլում տեղ գտած առանձին հրապարակումներ, հայերի էթնոճնշման խրախուսում, հայաչատ շրջաններում ոչ հայանպաստ կադրային քաղաքականություն և այլն: Հեղինակը հատուկ քննության է արժանացնում նաև Ախալցխայի Սբ Նշան եկեղեցու խնդիրը, որը, հակառակ հայերի ձգտմանը՝ վերաբացել հայ առաքելական եկեղեցին, «Ախալցխայի տեղական իշխանությունները ամեն կերպ խուսափում էին հայերի օրինական պահանջը կատարել»՝ այն վերջին տարիներին զանազան ապրանքների պահեստից վերածելով «բարեկամության» թանգարանի[14]:*

*«Ջավախքի» երախտավոր զավակները» խորագրի տակ ամսաթերթում տեղ գտած ուշագրավ հրապարակում է «Ջավախք» ժողովրդական շարժման խորհրդի նախագահ Իսահակ Աբրահամյանի «Վարդան Շահպարոնյան» վերնագրով հոդվածը՝ դարասկզբի «Ջավախք» շաբաթաթերթի խմբագիր-հրատարակիչ, Ջավախքի հասարակական-մշակութային, տնտեսական կյանքի մեծ երախտավորի կյանքի և գործունեության մասին:*

*«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադիրներից Հակոբ Մանուկյանի «Միասնական նպատակի համար» վերնագրով հոդվածում խոսվում է «Ջավախք» կազմակերպության մեկամյա գործունեության, կազմակերպության բարձրացրած հարցերի, առաջ քաշած ծրագրերի ու գաղափարների, կազմակերպության և Ախալքալաքի շրջանի խորհրդային կուսակցական, տնտեսական ու հասարակական կազմակերպությունների համագործակցության, համատեղ միջոցառումների ու ծրագրերի անհրաժեշտության մասին[15]:*

*«Ջավախք» ժողովրդական շարժման հիմնադիրներից, տվյալ ժամանակ կազմակերպության նախագահի տեղակալ Մկրտիչ Թաղևոսյանն էլ իր «Քրիստոսի պատվիրանն է՝ օգնել ընկածին ու կարիքավորին» վերտառությամբ հոդվածում խոսում է երիտասարդ կազմակերպության բարեգործական ծրագրերի մասին, որոնց առանցքում Ջավախահայության կողմից Արցախին ցուցաբերած օգնությունն էր: Ըստ հոդվածագրի՝ 1988 թ. մարտից երկրամասում ամենուր սկսվեց նյութական միջոցների հանգանակում, և շրջափակված Արցախին առաջիններից մեկն օգնության ձեռք մեկնեց Ջավախքը[16]:*

*Ամսաթերթի հիմնադրման և առաջին համարի լուս ընծայման առիթով բարեմաղթանքներ ու չնորհավորանքի նամակներ են հղել «Խորհրդային Վրաստան» թերթի խմբագրությունն ու Բոգդանովկայի շրջանի «Փարվանա» հասարակական կազմակերպությունը:*

---

[13] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2:

[14] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 2: Առ այսօր եկեղեցին չի վերադարձվել Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմին:

[15] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 3:

[16] «Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, 4:

**«Զավախք»-ի վերահրատարակությունը՝ եռամյա ընդմիջումից հետո**

*1993 թ. սեպտեմբերին վերստին լույս տեսած «Զավախք» ամսաթերթի «Մեր նպատակը» առաջնորդողը ստեղծված տնտեսական, սոցիալական ճգնաժամից դուրս գալու գործում կարևորում է լրատվամիջոցների դերը. ««Զավախք» ամսաթերթը նեղ իմաստով «Արշալույս» բարեգործական կազմակերպության պաշտոնաթերթն է, սակայն այն հավակնություն ունի լայնորեն լուսաբանելու շրջանի հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործունեությունը, որի նպատակը մեկն է՝ գործուն մասնակցություն ցուցաբերել շրջանը տնտեսական ճգնաժամից դուրս բերելու, աշխատավորներին համախմբելու, ազգերի բարեկամությունն ամրապնդելու, բարեգործություն ծավալելու ասպարեզում»[17]:*

*«Բարեգործությունը հայի ազգային բնավորությունն է» խորագրի տակ հոդվածագիր Վ. Գալստյանն անդրադարձել է ադրբեջանական ջարդերից, պատերազմի մեջ գտնվող Արցախից, Աբխազիայից մազապուրծ հայության՝ Զավախքում ապաստանած բեկորներին աջակցություն ցուցաբերելու հարցերին: Նշվում է, որ 1992 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին շուրջ 100 ընտանիք է ապաստանել Ախալքալաքի շրջանում, որտեղ ստեղծված փախստականների հատուկ հանձնաժողովի միջոցով շուրջ մեկ տարվա ընթացքում նրանց համար ոչ միայն բնակարաններ են հատկացվել, այլև ստացել են պետական նպաստ՝ ավելի քան 4,2 մլն վրացական կուպոն[18]:*

*Ամսաթերթի տվյալ համարում տեղ գտած մյուս հոդվածները հիմնականում առնչվում են ինչպես առանձին գյուղերի (Օրջա, Տուրցխ), այնպես էլ ընդհանուր շրջանին վերաբերող սոցիալ-տնտեսական (Ախալքալաքի պանրագործարանի ճակատագիրը), առողջապահական, էներգետիկ (Զավախքի ազգաբնակչությանը քարածխով ապահովելու հարցը), բնապահպանական (մասնավորապես Ախալքալաքի մերձակա Տավշանկա բլրի վրա զանգվածային ապօրինի ծառահատումները) և կենսական այլ հարցերին:*

*«Հուսանք և սպասենք» հրապարակումն անդրադառնում է Ախալքալաքի շրջանային վարչության ընդլայնված նիստին, որտեղ քննարկվել է նաև Հայաստանի հեռուստատեսային հաղորդումների խափանման և այդ ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկման հարցը[19]: Հրապարակագիր Ջ. Ուզուն-*

---

[17] *«Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 1:*

[18] *«Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 1:*

[19] *«Զավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 3: Զավախահայության մտահոգող այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև մեկ տարի անց՝ 1994 թ. օգոստոսին լույս տեսած «Զավախք»-ում: «Պատրաստում են հեռուստահաղորդման էկրան» (հեղինակ՝ Ն. Տեփոյան) վերտառությամբ հրապարակմամբ հաղորդվում էր, որ Ախալքալաքի ճոպանուղիների սարքավորումների գործարանն իր միջոցներով պատրաստում է Հայաստանի հեռուստահաղորդումներն անդրադարձնող 50 մ$^2$ մակերեսով էկրան: Մեկ այլ՝ «Ստեղծվում է հիմնադրամ» վերնագրով ակնարկում (հեղինակ՝ Ս. Ղևենյան), հաղորդվում է, որ ավելի քան մեկ տարի է, ինչ Բոգդանովկայի շրջանի Սպասովկա գյուղի մոտակա բլրին տեղակայված հեռուստահայելիների վրայից պղնձյա մասերը, ցերեկային մարտկոցներն ու այլ սարքավորումները թալանելու պատճառով Զավախքում խա-*

*յանն իր «Մշակույթի կենտրոն» վերտառությամբ անդրադարձում ոգևորությամբ է խոսում Ախալքալաքի մշակույթի պալատում հայ մշակույթի կենտրոնի հիմնման մասին, որի նպատակն է Ջավախքի արվեստասեր հասարակությանը դաստիարակել ազգային մշակույթի ավանդույթներով. «Մեր շրջանի բնակավայրերի ակումբներին առընթեր գործող գեղարվեստական համույթները, ի դեմս մշակույթի կենտրոնի, կունենան արվեստի մի շարք բնագավառներում ինքնուս արտիստների կատարողական վարպետությունը բարձր ներկայացնելու դպրոց, այս ասպարեզում ծրագրվող միջոցառումներին ճիշտ ուղի ու մասնագիտական օգնություն տվող օջախ»:*

*Ջավախքի վաստակավոր մանկավարժներից ժողկրթբաժնի մեթոդիստ Վաչագան Ռոստակյանի՝ «Դասավանդվում է հայոց պատմություն» վերտառությամբ հոդվածում քննարկվում է Ջավախքի դպրոցներում «Հայոց պատմություն» առարկայի դասավանդման անհրաժեշտությունն ու առկա խնդիրները: Հոդվածագիրը նշում է, որ թեպետ վերացել են առարկայի դասավանդման՝ խորհրդային շրջանում առկա արգելքները, և Վրաստանի լուսավորության նախարարության համաձայնությամբ հնարավորություն է ընձեռվել համաշխարհային ու Վրաստանի պատմությանը զուգընթաց ուսուցանել նաև հայ ժողովրդի պատմությունը, սակայն կուտակված եռամյա փորձը (1991–1993 թթ.), ըստ Վ. Ռոստակյանի, շատ քիչ է: Առկա խնդիրների շարքում մանկավարժը նշում է, որ ծրագրերը վերջնականապես չեն ձևավորվել, չկան նոր դասագրքեր, կաբինետներ և մեթոդական անկյուններ, ուսումնանյութական համապատասխան բազա[20]:*

*Փաստենք, սակայն, խոսքը ոչ թե «Հայոց պատմություն» առարկայի դասավանդումը պետական կրթական ծրագրերի մեջ ընդգրկելու մասին էր, այլ խորհրդային շրջանում առկա որոշակի արգելքների բացակայության, ինչը հնարավորություն էր ընձեռում որոշ այլ և ֆակուլտատիվ դասաժամերի փոխարեն ներառել այդ առարկայի դասաժամեր: Իսկ բուն խնդիրը մնում էր չլուծված: Դա է վկայում «Ջավախք»-ի հաջորդ համարում (լույս է տեսել 1 տարի անց՝ 1994 թ. օգոստոսին) տեղ գտած բաց նամակը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի վարչությանը: Ջավախքի հայտնի գործիչներ՝ «Ջավախք» կրթամշակութային միության հանձնաժողովի նախագահ Իսահակ Աբրահամյանն ու նույն հանձնաժողովի գիտակրթական սեկցիայի նախագահ Երվանդ Շիրինյանը, բաց նամակով քննարկելով 1994–1995 թթ. ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին հարցը, մատնանշելով ուսուցիչների սոցիալական ծանր վիճակը, դպրոցների նյութատեխնիկական ու կադրային դժվարությունները, լայնորեն անդրադառնում են նաև Ջավախքում հայ ժողովրդի պատմության դասավանդման հարցին: «Ջայրացուցիչն այն է, որ մինչ օրս չվճռվեց հայկական դպրոցներում հայ ժողովրդի պատմության դասավանդման գործը: Կարծում ենք, որ Վրաստանի լուսավորության նախարարությունն այդ հարցում կչարունակի իր համառությունը: Դրա համար անհրաժեշտ ենք համարում ժողկրթբաժնի հետ համատեղ հրավիրել բոլոր դպրոցների*

---

*փանվել են Հայաստանի հեռուստահաղորդումները: Նշվում է, որ «Ջավախք» կազմակերպության նախաձեռնությամբ Երևանից 3 մլն ռուբլով ձեռք են բերվել անհրաժեշտ որոշ սարքավորումներ, ստեղծվել նաև հիմնադրամ, քանի որ հեռուստահաղորդումների վերականգնման համար պահանջվել են լրացուցիչ միջոցներ:*

*[20] «Ջավախք», № 1, սեպտեմբեր, 1993, 4:*

*տնօրեններին և պատմության ուսուցիչներին և պարտադրել, որ նրանք կատարեն 1989 թ. շրջխորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը, այսինքն՝ շրջանի բոլոր հայկական դպրոցներում պարտադիր կարգով դասավանդել հայ ժողովրդի պատմությունն՝ այն մտցնելով կայուն դասացուցակի մեջ, որպես պարտադիր ու հիմնական առարկա: Ուստարվա ընթացքում հետամուտ լինել, թե արդյոք դպրոցներում այդ օրինական պահանջը կատարվում է, թե ոչ»[21],— նշված է նամակում:*

*Ամսաթերթի նույն համարում Զավախքի դպրոցների ու մանկավարժների առջև ծառացած սոցիալ-տնտեսական ծանրագույն խնդիրներին է անդրադարձել նաև բարերար, գրող, մանկավարժ Օքրո Օքրոյանը՝ «Միթե ազգային աղետ չէ» վերտառությամբ հոդվածում[22]:*

*Զավախքում գործող հասարակական կազմակերպությունների, «Զավախք» ժողովրդական շարժման գործունեության ընդհանուր բնութագիրն է տրված Ախալքալաքի շրջանային վարչության նախագահի տեղակալ Ա. Սրմիկյանի «Պարտադրվածը դեմոկրատիա չէ» վերնագրով հոդվածում, որտեղ, մասնավորապես, առաջարկվում է Ախալքալաքի շրջանում «անցկացնել դեմոկրատական ընտրություններ՝ նպատակ ունենալով ընտրել օրենսդիր և գործադիր մարմիններ: ... Այսպիսի պայմաններում հանրապետության վերաղաս մարմինների ավանդական դարձած միջամտությունը բացառվում է: Դեռ ավելին, սողանցք չի մնա կաշառքի, կուսակցական թայֆաբազության միջոցով իշխանության հասնելու կամ ուզուրպացիայի համար»[23]:*

*Իրավաբան Ա. Հովսեփյանի ««Զավախք» ԺՇ-ի հերթական նիստը» վերտառությամբ հաղորդմամբ ներկայացվում է «Զավախք» ժողովրդական շարժման խորհրդի հերթական նիստում քննարկված հարցերը, որոնց միջոցով պատկերացում ենք կազմում 1990-ական թվականների կեսերին Ջավախահայության առջև ծառացած խնդիրների ու երկրամասի հասարակական-քաղաքական կյանքի մասին: «Մանավորապես բուռն կրքեր բորբոքվեցին երկու հանրապետությունների սահմանում (Հայաստանի և Վրաստանի— Վ. Ս.) տեղակայված ավազակաբարո մաքսատների վերացման, մեր դպրոցներում հայ ժողպատմության, աշխարհագրության ծրագրային առարկաներ դարձնելու, Ախալքալաքի նկարչական դպրոցին համապատասխան չենք տրամադրելու, շրջանի մանկավարժների սոցիալական վիճակը բարելավելու և այլ պրոբլեմային հարցերի մասին ընդունված որոշումները հաստատելու ընթացքում»,— նշում է հոդվածագիրը: Նիստում քննության է արժանացել նաև Սամցխե-Ջավախքի նահանգ ստեղծելու և այնտեղ Վրաստանի ղեկավարի հատուկ լիազոր-ներկայացուցիչ նշանակելու մասին էդ. Շևարդնաձեի 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագիրը[24], որուշվել է դրա դեմ իրականացնել քաղաքացիական անհնազանդություն[25]:*

[21] «Զավախք», № 1, օգոստոս, 1994, 1:

[22] «Զավախք», № 1, օգոստոս, 1994, 3:

[23] «Զավախք», № 1, օգոստոս, 1994, 2:

[24] Հրամանագրի և դրան առնչվող քննարկումների մասին տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2006, 170–178:

[25] «Զավախք», № 1, օգոստոս, 1994, 1: Նորաստեղծ Սամցխե-Ջավախքի նահանգի մեջ էին ներառվում հարավային՝ Ադիգենի, Ախալցխայի, Բորժոմի, Ասպինձայի,

*Վերը նշված խնդիրն է շոշափվում նաև ամսաթերթում զետեղված «Կրքեր բորբոքվեցին, և դա անցողիկ չէ» խորագրով հոդվածում, որտեղ թղթակիցը, ներկայացնելով Ախալքալաքի շրջանի ակտիվի ժողովում քննարկված օրակարգային հարցերը և հաղորդելով, որ այնտեղ ներկայացվել է նաև թիվ 237 հրամանագիրը, սուր քննադատության է արժանացնում Էդ. Շևարդնաձեի այդ քայլը: «Սահմանադրական ու բարոյադեմոկրատական և ոչ մի հիմք չունեցող այդ փաստաթուղթը, բացի կրքեր բորբոքելուց, ժողովրդի մեջ երկպառակտություն սերմանելուց ոչինչ չի տա: Այդ փաստաթուղթը հանդիսանում է տխրահռչակ 21 կիլոմետրանոց սահմանային տարածաշերտ ստեղծելու[26], Վրաստանում հայերին դեպորտացիայի ենթարկելու սնանկ քաղաքականության տրամաբանական շարունակությունը»[27]:*

*«Ջավախք»-ի 1994 թ. օգոստոսյան համարը լայնորեն անդրադարձել է նաև Ջավախահայության հասարակական-մշակութային կյանքին: Մանավորապես, հոդվածներ ու հրապարակումներ են տպագրվել Սաթխա գյուղի եկեղեցու վերակառուցման («Նորոգվում է եկեղեցին», հեղինակ՝ Ջավախահայ անվանի մտավորական, բանահավաք, կենսագիր Ալբերտ Իսոյան), առաջին անգամ Ախալքալաքում բացված Ջավախահայ արվեստի գործիչների ստեղծագործությունների ցուցահանդեսի («Ջավախքը Ջավախքցիների կտավներում», հեղինակ՝ Մ. Ադամյան), Ս. Կապուտիկյանի 75-ամյակի առիթով Նինոծմինդայում գրողի ներկայությամբ կայացած մեծարման երեկոյի [«Մեծարման երեկո», հեղինակ՝ Ջավախահայ անվանի մտավորական, Վահան Տերյանի տուն-թանգարանի (1957 թ.), Ախալքալաքի գավառագիտական թանգարանի (1958 թ.), «Պոեզիայի տերյանական օրեր» ավանդական հանդիսության (1967 թ.), Բոգդանովկայի շրջանային «Արշալույս» թերթի (1966 թ.), Նինոծմինդայի Մարտական փառքի թանգարանի (1970 թ., մայիսի 9), Վիկտոր Հովսեփյանի տուն թանգարանի (1997 թ.), «Փարվանա» կազմակերպության (1989 թ.) և համանուն թերթի (1991 թ.), «Գանձա» թերթի (1991 թ.) և այլնի հիմնադիր կամ համահիմնադիր Մոլիկ Սեդրակյան], ազատամարտիկ Մաքսիմ Ռախայանի («Մեր Մաքսիմը»), Գանձայում 27-րդ անգամ նշված պոեզիայի տերյանական օրվա («Պոեզիայի տոնը», հեղինակ՝ բանաստեղծ Վարդ Ղազարյան), Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանային մշակույթի տների կողմից ստեղծված համույթի՝ Հյուսիսային Կովկասում տված չուրջ 4 տասնյակ համերգների («Անմոռաց պահեր», հեղինակ՝ Մինաս Ղազարյան) մասին:*

*Հիշատակման է արժանի նաև Շմավոն քահանա Տեր-Սողոյանի «Նորօրյա ազգադավ «առաքյալները»» վերնագրով համարձակ հոդվածը, որտեղ հոգևորականը դատապարտում է Ջավախքում լայն տարածում գտնող աղանդավորների գործունեությունը:*

---

*Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջանները, դուրս էր թողնվում Ջավախքի օրգանական մասը կազմող նախկին հայաբնակ-հունաբնակ, իսկ հույների հեռանալու պայմաններում հիմնականում հայաբնակ շրջանի վերածվող Ծալկայի շրջանը:*

*[26] Հայտնի «սահմանային գոտու» կազմավորման մասին Վրաստանի իշխանությունները մի շարք որոշումներ են ընդունել 1992 թ. առաջին կեսին: Ջավախքի հասարակական կազմակերպությունների և ազգաբնակչության սուր դիմադրության արժանացած այդ որոշումների մանրակրկիտ քննությունը տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2006, 137–145:*

*[27] «Ջավախք», № 1, օգոստոս, 1994, 2:*

**«Զավախք»-ը վերստին «Զավախք» ժողովրդական չարժման պաշտոնաթերթ**

*Ինչպես նշվեց, «Զավախք»-ի հաջորդ համարը լույս տեսավ 1994 թ. սեպտեմբերին՝ վերստին իբրև Ախալքալաքի շրջանի «Զավախք» ժողովրդական չարժման պաշտոնաթերթ: Ամսաթերթի հաղորդմամբ՝ 1994 թ. օգոստոսի 24-ին կայացած «Զավախք» ժողովրդական չարժման նախագահության հերթական նիստում որոշվել է, որ «Զավախք» պաշտոնաթերթին այսուհետև հանդես է գալու իբրև «Զավախք» ժողովրդական չարժման օրգան[28]: Չնայած թերթը նշվել է որպես «Զավախք» ժողովրդական չարժման պաշտոնաթերթի 2-րդ համար, բայց փակագծերում գրվել է 4, հաշվի առնելով նաև «Զավախք»-ի՝ իբրև Ախալքալաքի շրջանի «Արշալույս» կազմակերպության պաշտոնաթերթի հրատարակված նախորդ երկու համարները:*

*«Զավախք»-ի 2-րդ (4-րդ) համարը (սեպտեմբեր, 1994 թ.), ինչպես նշեցինք, լույս է տեսել 6 էջ ծավալով՝ անդրադառնալով ինչպես նահանգի սոցիալ-տնտեսական խնդիրներին, այնպես էլ ազգային ու հասարակական-քաղաքական կյանքին, Զավախքի պատմական դեմքերին ու գաղափարական հարցերին: Ամսաթերթի հիմնական քննարկման թեմաներից մեկը, ինչպես նախորդ համարում, շարունակում էր մնալ էդ. Շևարդնաձեի թիվ 237 հրամանագիրը: Ըստ հաղորդման՝ հրամանագիրը բուռն վերլուծության է արժանացել «Զավախք» ժողովրդական չարժման նախագահության հերթական նիստում, որտեղ հրավիրված Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ֆերդինանդ Ալեքսանյանը տեղեկություններ է հաղորդել իր և Ախալքալաքի շրջանային վարչության ղեկավար Ստեփան Ստեփանյանի՝ Վրաստանի պետության ղեկավարի հետ ունեցած հանդիպման մասին[29]: Թերթում բերված է նաև Նինոծմինդայի շրջանի «Օղա» բարեգործական ընկերության խորհրդի ընդլայնված նիստում նահանգի ստեղծման թիվ 237 հրամանգրի քննարկումն ու դրա հենքի վրա էդ. Շևարդնաձեին ուղղված դիմում-պահանջագիրը: Հրապարակված է նաև Նինոծմինդայի շրջանային վարչությունում տեղի ունեցած հավաքի մասին հաղորդագրությունը, որտեղ վարչության նախագահ Ռաֆայել Արզումանյանը շրջանի ակտիվին է ներկայացրել Ախալցխայում նորաստեղծ նահանգի 6 շրջանների ներկայացուցիչների և էդ. Շևարդնաձեի հետ հանդիպման արդյունքներն ու խնդրո առարկա հրամանագիրը: Բոլոր հանդիպումներում և քննարկումներում նորաստեղծ նահանգի ու Վրաստանի ղեկավարի լիազոր-ներկայացուցչության ինստիտուտի ստեղծումը համարվել է անընդունելի թե՛ ժողովրդագրական պատկերի անհամաչափության, թե՛ տեղական ինքնակառավարման, թե՛ տնտեսական և այլ առումներով[30]:*

*Իբրև ջավախահայությանը հուզող առաջնային հիմնահարց՝ թերթը երեք ծավալուն հոդվածներով ահազանգում է Զավախքի դպրոցներում տիրող տնտեսական ծանր իրադրության, Վրաստանի ազգային արժույթի՝ կուպոնի ներդրման և արժեզրկման պատճառով ուսուցիչների սոցիալական տագնապալի*

---

[28] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1: Ամսաթերթի տպագրական ծախսերը հոգացել է բարերար, Ախալքալաքի շրջանի Տուրցխ գյուղի բնակիչ Օ. Օքրոյանը:*

[29] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1:*

[30] *«Զավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 5:*

*վիճակն ու ապրուստի միջոց չունենալու բերումով դպրոցը լքելու միտումների մասին[31]:*

*«Խմբագրությունը հարկադրված է այժմվանից տագնապ հնչեցնել, քանզի կրթօջախներին այսօր սպառնում է մի ահավոր աղետ, վտանգի տակ է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության սրբազան գործը: Այլևս չխոսելով այն մասին, որ անցած ուսումնական տարում վառելիքի պատճառով ամենուր դասերն անցնում էին կիսատ-պռատ, խիմիայլոց, և երեխաները չստացան անհրաժեշտ գիտելիքներ, ներկայումս հարյուրավոր որակյալ մանկավարժներ լքել են սիրած գործը, իրենց գոյությունը պահպանելու համար անցել են այլ գրաղմունքի կամ էլ մեկնել արտագնա աշխատանքի: Այդպիսով դպրոցների մեծամասնությունում մնացել են կենսաթոշակառուները, ընտանեկան հոգսերով ծանրաբեռնված կանայք, բարձրորակ մասնագետներին փոխարինում են միջնակարգ կրթությամբ երիտասարդներ, որոնք նույն դպրոցներում չեն վայելել իրենց գիտելիքներով»[32],— ահազանգում է «Ջավախք»-ի խմբագրությունը:*

*Ինչպես նշեցինք՝ ամսաթերթում մեծ տեղ էր հատկացված նաև պատմությանն ու գաղափարական հարցերին, ինչը բնորոշ է ազգային գարթոնքի արգասիք հանդիսացող կազմակերպությունների մամուլի օրգաններին: Ըստ այդմ՝ «Ջավախքի երախտավորները» խորագրի տակ ներկայացվում է Ախալքալաքի նշանավոր գերդաստաններից՝ Օհանջանյանների տոհմի պատմությունն ու վերջինիս անվանի ներկայացուցիչ, Հայաստանի առաջին Հանրապետության 3-րդ վարչապետ Համո Օհանջանյանի փոթորկուն կյանքի ուղին: Ամսաթերթում երկու ամբողջական էջով ներկայացվում է Ջավախահայ անվանի գրող, մտավորական Նազարեթ Կիրակոսյանի աշխատասիրությամբ վերահրատարակության պատրաստվող «Ղունկիանոսի ընծան»[33] գրքի նախաբանը («Սրտի խոսք, հոգու պարտք»): Արժեքավոր է նաև Թղթակից Գևորգ Այվազյանի՝ Ջավախահայ անվանի գործիչ Պողոս Աբելյանի՝ Խորհրդային Հայաստանի արտգործժողկոմ Աբգանաց Մռավյանին 1921 թ. ներկայացրած զեկուցագրի[34] մասին ծավալուն հոդվածը, որը քննել և արժևորել է ժամանակի պատմական իրադարձությունների լայն համապատկերի վրա:*

*Հետխորհրդային շրջանի Ջավախահայ հասարակական մտքի մեջ իր բնույթով նոր խոսք էր գաղափարական հարցերին նվիրված Արտաշես Տեր-Ղևոնդյանի՝ «Գրքերի աշխարհում» խորագրով լույս տեսած «Ճշմարտությունը վեր է ամեն ինչից» գրախոսական-հոդվածը՝ նվիրված Էդուարդ Հովհաննիսյանի «Պայքարի դարաշրջան» մենագրություն-երկհատորյակին[35] և ՀՅ Դաշնակցություն կուսակցության անցած մեկդարյա ուղուն:*

*«Ջավախք»-ի 1994 թ. հոկտեմբերի համարում տեղ է գտել Հայոց ցեղասպանության 80-ամյակի միջոցառումների ընդարձակ պլանը, որի 3-րդ կետով*

---

*[31] Խմբագրական՝ «Նոր ուսումնական տարվա առթիվ հարկադրված ենք տագնապ հնչեցնել», Ա. Սրմիկյան՝ «Ժամանակի հրամայականն է՝ օգնել դպրոցին», «Ազգը դպրոցով է լուսավոր ու գորեղ» (խմբագրության «Կոր սեղանի» շուրջը):*

*[32] «Ջավախք», № 2 (4), սեպտեմբեր, 1994, 1:*

*[33] Ն. Կիրակոսյանի աշխատասիրությամբ վերահրատարակված մեծանուն բանաստեղծ, պոետ, աշուղ Ղունկիանոս երգիչ Կարնեցու (1781, Կարին – 1841, Ախալքալաք, գյուղ Վարևան) բանաստեղծությունների գիրքը լույս է տեսել Երևանում 1995 թ. (տե՛ս Ղ ու ն կ ի ա ն ո ս երգիչ Կ ա ր ն ե ց ի. 1995):*

*[34] Ախալքալաքի հիմնահարցի մասին Պողոս Աբելյանի զեկուցագիրն ամբողջությամբ տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003, 467–493:*

*[35]* О г а н е с я н. 1991.

*նախատեսվում էր «Վրաստանի Հանրապետության ղեկավարի, պառլամենտի և կառավարության ուշադրությունը հրավիրել Հայոց ցեղասպանության 80-ամյակի օրը հիշատակելու վրա»[36]:*

*Ա. Սրմիկյանի՝ «Զավախքը՝ սարդոստայնում» ծավալուն հոդվածում Վրաստանում առկա քաոսային իրավիճակի (ազգայնական շարժումներ, փլուզված տնտեսություն, ազգամիջյան լարված հարաբերություններ և քաղաքական բախումներ, հանցավոր ու կլանային խմբավորումների բարգավաճում և այլն) համապատկերին ներկայացվում է հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակը Զավախքում, քննադատում երկրի իշխանություններին, քաղաքական ուժերին, կուսակցություններին և շրջանային կառավարիչներին ստեղծված քաոսի ու խմբակային շահեր սպասարկող համակարգի ստեղծման համար:*

*Հասարակական կյանքին առնչվող խնդիր էր ներկայացնում նաև «Զավախքցիների բողոքը տեղ հասավ» վերտառությամբ հրապարակումը, որտեղ անդրադարձ էր կատարվում Հայաստանի Հանրապետություն–Վրաստան սահմանի Նինոծմինդա-Բավրա հատվածում երկու երկրների իշխանությունների կողմից տեղադրված մաքսային հսկողության անցակետերի ապօրինի գործողություններին, որոնք, ըստ թերթի, հաճախ վերածվում էին թալանի: Ներկայացվում է նաև Ախալքալաքի շրջանային վարչությունում այդ հարցի վերաբերյալ տեղի ունեցած քննարկումը, որին Ախալքալաքի ղեկավարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնակցել էին նաև ՀՀ մաքսային վարչության պետ Երջանիկ Աբգարյանը, Աչոցքի մաքսատան պետի պաշտոնակատար Շալիկո Ջորջյանը և այլ պաշտոնյաներ Հայաստանից[37]:*

---

*[36] Պանում ներառված՝ Վրաստանի իշխանություններին ուղղված դիմումի մեջ նշվում էր, որ հարկ է Վրաստանի իշխանությունները խնդրեն Թուրքիայի կառավարությանը, որ ցուցաբերի քաղաքակիրթ մոտեցում և ընդունի Հայոց ցեղասպանության փաստը [«Զավախք», № 3 (5), հոկտեմբեր, 1994, 1]: Ինչպես տեսնում ենք, «Զավախք» ժողովրդական շարժման ղեկավարությունը, խանդավառվելով ազգային հարցերի բարձրաձայնման հնարավորություններով, երբեմն բարձրացնում էր չափազանց անիրատեսական հարցեր. Վրաստանի իշխանությունները, որոնք իրենք որևէ քայլ չէին արել (և մինչ օրս չեն արել) Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման ուղղությամբ, բնականաբար, հազիվ թե դա պահանջեին Թուրքիայից:*

*[37] Հատուկ նշենք, որ ամսաթերթի այդ համարում տեղ են գտել նաև Զավախքի սոցիալ-տնտեսական [Գ. Այվազյան՝ «Մենք ենք, մեր լեռնաչխարհը» (Զավախքին սպառնացող արտագաղթի, արտաքնա աշխատանքի մեկնելու մասին), Մոլիկ Սեդրակյան «Վա՛յ տեր, վա՛յ անտեր» (Զավախքի կոլտնտեսությունների և պետական տնտեսությունների անասնագլխաքանակի յուրացման, անասնաչենքերի թալանի ու ավերման մասին)], հոգևոր-մշակութային [Օքրո Օքրոյան՝ «Հավատացյալներ, համախմբվենք եկեղեցու շուրջը», Հովհաննես Բեգոյան՝ «Թեհրանեն… Հեչտիա» (Պարսկաստանի հայ կաթոլիկության պատվիրակության՝ Զավախք այցի և Հեչտիա կաթոլիկ գյուղում տրված պատարագի և հաջորդած գեղարվեստական միջոցառման մասին), Ա. Խաչատրյան, Գ. Խոդիկյան՝ «Քսան համերգ» (Ախալքալաքի մշակույթի շրջանային տան կոլեկտիվի՝ Հյուսիսային Կովկասում ունեցած շուրջ երկու տասնյակ համերգների մասին), «Երիտասարդ բարերարը» (Թորիա գյուղի եկեղեցու նորոգման մասին), Մոլիկ Սեդրակյան՝ «Հպարտացիր քո որդիներով, Զավախք. Ակադեմիկոսը»*

*Ուշադրության է արժանի «Գրիգոլ Լորիքիփանիձեի նամակը Ստալինին (թե ովքեր են հայերի իսկական բարեկամները)» վերտառությամբ հրապարակումը, որտեղ ներկայացվում է վրաց անվանի քաղաքական գործչի 1936 թ. գրած նամակի՝ հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հարաբերություններին վերաբերող հատվածները: Նամակը հասցեագրված է եղել ԽՍՀՄ սահմանադրական հանձնաժողովի նախագահ Ի. Ստալինին, անդամներ Վ. Մոլոտովին, Մ. Լիտվինովին և Կ. Ռադեկին:*

*«Ջավախք» 1994 թ. վերջին (նոյեմբեր) համարում շարունակվում են ջավախահայության առջև ծառացած սոցիալ-տնտեսական, կրթամշակութային խնդիրների քննարկումները: Հասարակական-քաղաքական բնույթի որոշ հարցերին գումարվում են նորերը: Ամսաթերթը հրապարակել է Հայաստանում գործող «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության[38] կոչն ուղղված Ջավախքի բնակիչներին, ուսուցիչներին, դպրոցների տնօրեններին, շրջանի ղեկավարներին: Նկարագրելով Ջավախքի կրթական ոլորտում ստեղծված անմխիթար վիճակը, որը պայմանավորված էր Վրաստանի սոցիալ-տնտեսական ծանրագույն իրավիճակով, ինչպես նաև ներկայացնելով դպրոցներն ամեն գնով պահելու, ուսուցիչների արտագաղթը և կրթական կյանքին հասցված անդառնալի վնասները նվազեցնելու կարևորությունը՝ հայրենակցական միությունն անում է գործնական մի շարք առաջարկներ: Մասնավորապես, (1994 թ. վերջին)*

---

*(Ջավախքի Խոջաբեկ գյուղում ծնված, ԽՍՀՄ, այնուհետև ՌԴ ռազմական պաշտպանունակության, զենքի կատարելագործման և սպառազինության խորագիտակ, Ջերժինսկու անվան ռազմական ակադեմիայի պետի՝ ուսումնական և գիտական աշխատանքների գծով տեղակալ Վլադիմիր Զորանյանի անցած ուղում մասին)] կյանքը ներկայացնող և այլ հրապարակումներ, լուրեր և այլն: «Ջավախք» պաշտոնաթերթի վերածննդի (վերահրատարակության) առիթով թերթին շնորհավորել են հայտնի հաշվապահ Վլադիմիր Մխիչյանը (Ախալցխայից) և Վ. Ղազարյանը (Ջավախքի Գանձա գյուղի ծնունդ, երևանաբնակ բանաստեղծ):*

*[38] «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունը հիմնադրվել է 1990 թ. հունվարին Երևանում՝ ԽՍՀՄ Սահմանադրության 51-րդ, ՀԽՍՀ Սահմանադրության 49-րդ հոդվածների և իր Կանոնադրության հիման վրա: Վերջինիս նպատակն է միավորել հայ, վրացի և մյուս ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, Ջավախքի և մերձակա վայրերի հայաստանաբնակ հայության ազգապահպանության, մշակութակենցաղային և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանն ուղղված հայաստանաբնակ հայրենակիցների ջանքերը: Ժամանակի ընթացքում կազմակերպությունն իր մասնաճյուղերը բացեց նաև ՀՀ մարզերում [տե՛ս Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20. 01. 1990 թ., ք. Երևան (Վ. Սարգսյանի անձնական արխիվ)]: Միության առաջին նախագահն էր ջավախահայ Ռուբեն Նահատակյանը (1990–1992 թթ.), երկրորդը՝ դրող, հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանը (1992–1994 թթ.): Բազմաթիվ նշանավոր ջավախահայերի համախմբած միությունը հիմնադրեց «Ասպնջական» պաշտոնաթերթը [ընդհատումներով տպագրվել է 1991 թ. մարտի 25-ից 2010 թ. հոկտեմբեր (124 համար)]: «Ասպնջականը» 2006–2010 թթ. (99–124-րդ համարներ) տպագրվել է «Հայրենիք» անվամբ: Մ. Սահակաշվիլու իշխանության տիրահռչակ տարիներին Հայաստանից Վրաստան գրքերի, թերթերի և մշակութային առարկաների տեղափոխման արգելքների պայմաններում «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միությունն այլևս չշարունակեց «Ասպնջական» – «Հայրենիքի» հրատարակությունը Երևանում:*

*մասնակի վճարովի համակարգին անցնելը դիտվել է իբրև մարտահրավերն ինչ-որ կերպ հաղթահարելու միջոց: Գործընթացն առաջարկվում էր կազմակերպել այդ նպատակով ստեղծվելիք ծնողական խորհուրդների, կոլտնտեսությունների վարչությունների, շրջանի իշխանությունների միջոցով:*

*Ստեղծված դժվարին պայմաններում Զավախքում մշակութային կյանքը վառ պահելու անհրաժեշտության մասին է խոսում Գանձա գյուղի մշակույթի տան տնօրեն Ժորա Իգիթյանը՝ «Հանուն մշակույթի պահպանման» խորագրի տակ զետեղելով իր մտորումները:*

*Ամսաթերթի 4-րդ (6-րդ) համարում ավանդաբար զետեղված է մայր կազմակերպության՝ «Զավախք» ժողովրդական շարժման խորհրդակցության մասին հաղորդում, որից տեղեկանում ենք նահանգի հասարակական-քաղաքական անցուդարձի մասին: Կազմակերպության ներկայացուցիչների և Ախալքալաքի շրջանի ղեկավարության ու առանձին ծառայությունների ղեկավարների հետ ընդլայնված հանդիպում-խորհրդակցությանը քննարկված օրախնդիր հարցերն առնչվում էին սոցիալական անապահով իրադրությանը, գյուղատնտեսական ձեռնարկությունների գործունեությանը, էլ. Շևարդնաձեի թիվ 237 հրամանագրին և այլն:*

*Ազգային-քաղաքական նշանակության հարցերի թվում թերթն անդրադարձել է թուրք-մեսխեթցիների՝ Զավախքի շրջաններ վերադարձի ցանկության և դրանով առաջացող մի շարք խնդիրների ու մարտահրավերների [«Թուրքը նույնն է՝ անկախ տեղանունից» (հեղինակ՝ Մ. Անանունի)][39]:*

*Ամսաթերթի նոյեմբերյան համարը հարուստ է Զավախքի պատմության էջերը, մշակութային իրադարձություններն[40] ու նշանավոր գործիչների դիմապատկերները ներկայացնող հրապարակումներով: Այսպես, «Զավախքի երախտավորները» շարքով ներկայացվել է Հայաստանի առաջին Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունու (Իգիթխանյան) կյանքն ու գործունեությունը, իսկ Զավախքի կրթամշակութային կյանքի կազմակերպման երախտավոր, մեծանուն մտավորական Մ. Սեդրակյանի «Ճակատագրով դատապարտվածները» հոդված-ուսումնասիրությունը ներկայացնում է 1930–1950 թթ. Զավախքի Նինոծմինդայի շրջանից աքսորվածների թիվը՝ ըստ բնակավայրերի: Հեղինակի եզրահանգմամբ՝ նշված թվականներին շրջանից աքսորվել է շուրջ 1300 հոգի, վերադարձել՝ մոտավորապես 25–30 հոգի: Մնացածների ճակատագիրն անհայտ է: Նվիրյալ մտավորականը նաև ափսոսանք է հայտնում, որ անհայտ մնացած Զավախքցիների (բոզդանովկացիների) ճակատագրերի հիշատակը հավերժացնող հուշակոթող չի կանգնեցվել տասնամյակների ընթացքում. «Նոր սերունդը ոչինչ չգիտի այս ահավոր ոճիրի մասին: Գիտի, որովհետև ոչ մի գյուղում հուշակոթող չի կանգնեցվել անմեղ զոհերի հիշատակին, թանգարաններում նյութեր չկան այդ մասին, դպրոցներում սովորաբար շրջանցում են այդ թեման»:*

*Ն. Տեփոյանի «Նահատակն անմահացավ» վերտառությամբ ակնարկն Ախալքալաքի շրջանի Բուղաշեն գյուղի զավակ, Արցախյան գոյապայքարում*

---

*[39] «Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 1:*

*[40] «Մանկակեցեցին փառատոնին» վերտառությամբ անդրադարձում ներկայացված է Ախալքալաքի մշակույթի շրջանային տան «Հայկ» մանկական պարի համույթի (պարուսույց և դեղարվեստական ղեկավար՝ Ս. Խոդիկյան) և ժողգործիքների անսամբլի (ղեկավար՝ Ա. Էլբակյան) մասնակցությունը ՀՀ-ում անցկացված ժողովրդական պարի միջազգային փառատոնին, տված համերգներն ու ունեցած հաջողությունները:*

*մարտի 6-ին նահատակված հետախույզ Մհքայել Ավագյանի[41] կիսանդրին հայրենի գյուղում տեղադրելու, ազատամարտիկի անցած ուղին արժևորելու մասին է[42]: Հասարակական-քաղաքական գործիչ, խմբագիր և հրատարակիչ Մելս Թորոսյանը, «Իմացյալ մահն անմահություն է» հոդվածում շարունակելով ազատամարտի թեման, ներկայացնում է մեկ այլ ազատամարտիկի՝ Պետրոս Աբաջյանի[43] մարտական ուղին և Ախալքալաքի Վարևան գյուղում 1993 թ. վեր խոյացած հուշարձանախմբի խորհուրդը. «Վարևան գյուղի վրա հսկող բլուրի արևակող լանջին է կառուցվել այդ հուշահամալիրը, կենտրոնում հայ ժողովրդի լինելիությունը հավաստող միջնադարյան հզոր աշտարակն է կամարակապ խոյակներով՝ վերևում հայ խաչը՝ ազգասիրության, միասնության ու հավատի սիմվոլը: Իսկ ներքևի հաղթակամարի տակից կարծես դեպի իր ժողովրդի*

---

*[41] Ազատամարտիկի կենսագրությունը տե՛ս Ղ ա զ ա ր յ ա ն. 2013, 45–46:*

*[42] 2019 թ. հունվարի 20-ին Ախալքալաքի շրջանի Բուղաչեն գյուղում վերաբացվեց Մ. Ավագյանի կիսանդրին: 1994 թ. տեղադրված հին հուշարձանը վնասվել էր, և ազատամարտիկի ազգականների բարեգործության միջոցով տեղադրվեց նոր կիսանդրին, որի բացումը տեղի ունեցավ երկրի պաշտոնատար անձանց ներկայությամբ: 2019 թ. փետրվարի 8-ին Վրաստանի խորհրդարանի չենքի դիմաց երկրի ազգությամբ աղրբեջանցի մի խումբ քաղաքացիներ բողոքի ցույց էին անցկացրել՝ պահանջելով ապամոնտաժել Մ. Ավագյանի վերաբացված կիսանդրին: Որպեսզի ավելի չիկացվեր մթնոլորտը, և վրաց հասարակության շրջանում ատելության մթնոլորտ ձևավորվեր Մ. Ավագյանի հանդեպ՝ աղրբեջանական շրջանակները, նրանց հետ նաև վրաց որոշ ընդդիմադիր-թուրքամետ շրջանակներ կեղծ տեղեկություններ տարածեցին առ այն, թե, իբր, նա գործել է ոչ միայն Արցախում և «ահաբեկել» աղրբեջանցիներին, այլև եղել է աբխազական պատերազմի մասնակից և պայքարել Վրաստանի տարածքային ամբողջականության դեմ: Այս կեղծիքը շատ արագ բացահայտվեց. ազատամարտիկի կինը՝ Մանուշակ Ավագյանը, հրապարակելով ամուսնու անձնական փաստաթղթերը, հայտարարեց, որ նա վրաց-աբխազական պատերազմին պարզապես չէր կարող մասնակցել, քանի որ այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում [ըստ Մ. Ավագյանի՝ 1990 թ. վերջին իրենք ընտանիքով տեղափոխվել են ՌԴ, իսկ 1991 թ. Մ. Ավագյանն արդեն բնակվել է Հայաստանում և գրանցվել Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղում: Դրա մասին է վկայում անձնագրում կատարված գրանցումը: 1992 թ. ՀՀ-ում ծնվել է նրանց դուստրը: Մ. Ավագյանն այդ թվականներին աշխատել է «Հայգազարդ» ընկերության Գորիսի մասնաճյուղում, իսկ արդեն 1993 թ. նա ընտանիքով տեղափոխվել է Արցախ և կամավոր մասնակցել Արցախյան ազատամարտին՝ որպես հետախուզական ջոկատի հրամանատար (տե՛ս «Ազատամարտիկ Մհքայել Ավագյանը չի մասնակցել վրաց-աբխազական բախումներին. մերկացվել է հերթական աղրբեջանական սուտը».– https://armenpress.am/hy/article/9638 67): Լարվածությունը թուլացնելուն, Բաքվի և Վրաստանի ինչպես աղրբեջանական, այնպես էլ ընդդիմադիր-աղրբեջանամետ շրջանակների սադրանքները կանխելուն էր միտված նաև Ջավախքում գործող Սամցխե-Ջավախքի և Քվեմո-Քարթլիի հայկական հասարակական կազմակերպությունների խորհրդի ծավալուն հայտարարությունը: Խորհուրդը, ներկայացնելով իրերի իրական պատկերը, խստորեն դատապարտեց Վրաստանի ներքին գործերին միջամտելու դրսևորումները, քաղաքական նպատակներով երկիրը և տարածաշրջանն ապակայունացնելու փորձերը՝ իր դրակցությունը հայտնելով Վրաստանի իշխանություններին (տե՛ս «Խորհրդի արձագանքը Ավագյանի կիսանդրու շուրջ ծավալված իրարանցմանը». – https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU):*

*[43] Ազատամարտիկի կենսագրությունը տե՛ս Ղ ա զ ա ր յ ա ն. 2013, 30–32:*

*ապագան է չարժվում արցախյան հերոս Պետրոս Աբաջյանը՝ զենքը ձեռքին, արդար գայրույթն ու ցասումը դեմքին դրոշմված: Հուշահամալիրի աջից լանջնիվեր բազալտե պատվանդաններին տեղակայված են հայ ազատագրական պայքարի ռահվիրաների՝ Անդրանիկի, Սերոբի, Գևորգ Զաուշի ու Նժդեհի կիսանդրինները, որոնց ջերմ հայացքի տակ հանդչում է ազգի նահատակ Պետրոս Աբաջյանի աճյունը: ... Այս սքանչելի սրբավայրը կոլեկտիվ մտքի ու աշխատանքի արգասիք է: Այն հեղինակել են հայր և որդի Վենետիկ և Պետրոս Բաղնիքյանները, իսկ քանդակներն արարողը Յուրա Մինասյանն է»[44]:*

*Արցախյան գոյապայքարի թեման ամսաթերթում ամփոփվում է ԼՂՀ պաշտպանության բանակի շտաբի ինժեներական ծառայության պետի տեղակալ, «Արցախ ագրոսպասարկում» արտադրական միավորման գլխավոր տնօրեն Ռուդիկ Ազարյանի հետ հարցազրույցով: «Վրացգյուղտեխնիկայի» Ախալքալաքի ճեռնարկությունից Արցախի գյուղմեքենաների համար քանյութ և պահեստամասեր ձեռք բերելու նպատակով այդ օրերին Զավախք այցելած պինվորականը պատմում է 1994 թ. մայիսյան հաղթական զինադադարից հետո Արցախի տնտեսության և կրթամշակութային կյանքի վերաշինության և ձեռքբերումների մասին («Արցախը չտկում է մեջքը»):*

*«Զավախք»-ն առանձնակի հպարտությամբ է ազդարարում երիտասարդ պատմաբան, լեռնաչխարհի զավակ Աշոտ Մելքոնյանի (ակադեմիկոս Ա. Մելքոնյանը 2002 թվականից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրենն է) «Էրզրում» աշխատության[45] լույսընծայումն ու «Էրզրում. արժեքավոր գիրք» խորագրով ներկայացնում գրքի գրախոսականը՝ փաստելով, որ «... խորհրդային իշխանության տարիներին այդպես էլ չի հրատարակվել Զավախքի պատմական անցյալին, քսաներորդ դարում այստեղ կատարված էթնոժողովրդագրական գործընթացներին և տեղաշարժերին նվիրված ծավալուն գիրք[46]: Պատմաբանները լուռ էին անցնում նաև այնպիսի կարևորագույն իրադարձության կողքով, ինչպիսին էր, ասենք, 1829–1830 թվականների Կարնո մեծ գաղթը, որի արդյունքում Զավախքում, Ախալցխայի, Ասպինձայի, Ծալկայի շրջանների տերիտորիաներում ստեղծվել են հարյուրավոր հայկական նոր բնակավայրեր: Հասկանալի է, որ այդ բնակավայրերում ապրողները միշտ էլ հետաքրքրվել ու այսօր էլ հետաքրքրվում են իրենց նախնիների բնաշխարհով, գաղթի պատմության մանրամասներով, սոցիալ-քաղաքական այն նախադրյալներով, որոնք պատճառ դարձան զանգվածային տեղափոխմանը: Այս և այլ հարցերի սպառիչ պատասխանները ընթերցողը կարող է ստանալ երիտասարդ պատմաբան, մեր հայրենակից Աշոտ Մելքոնյանի «ԷՐԶՐՈՒՄ» գրքից»[47]:*

## Եզրակացություն

*ԽՍՀՄ փլուզման և Վրաստանի անկախության առաջին տարիներին Զավախքում տեղի ունեցած գործընթացների ուսումնասիրման, խնդիրները համակողմանի ու անաչառ լույսի ներքո քննելու գործում մեծ է հատկապես տեղական մամուլի դերը: 1990 թ. հիմնադրված և մինչև 1998 թ. անկանոն*

---

[44] *Տե՛ս «Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 3:*

[45] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 1994:*

[46] *Այդ բացը լրացվեց հետագա տարիներին, երբ լույս տեսավ Ա. Մելքոնյանի կապիտալ աշխատությունը (տե՛ս Մ ե լ ք ո ն յ ա ն. 2003):*

[47] *«Զավախք», № 4 (6), նոյեմբեր, 1994, 3:*

*հրատարակված «Ջավախք» ամսաթերթը, իբրև տվյալ ժամանակահատվածում երկրամասում մեծ դերակատարում ունեցած «Ջավախք» ժողովրդական շարժման պաշտոնաթերթ, կարևոր, իսկ հաճախ՝ աղբյուրագիտական նշանակություն ունեցող նյութեր է պարունակում Ջավախահայության՝ հասարակական-քաղաքական, ազգային, կրթամշակութային, հոգևոր կյանքի, Վրաստանի իշխանությունների ընդունած օրենքների ու որոշումների, Արցախին ցուցաբերած օժանդակության մասին: Իրեն հայտարարելով 1913–1916 թթ. Ախալքալաքում հրատարակված «Ջավախք»-ի ավանդույթների շարունակող՝ 1990 թ. հիմնադրված «Ջավախք»-ը նոր խոսք ու երևույթ էր Ջավախքում, Ջավախահայության առջև ծառացած մարտահրավերների վերհանման ու քննարկման հարթակ: Ամսաթերթում տպագրված նյութերի համակողմանի ուսումնասիրումը նոր լույս է սփռում Ջավախքի հետխորհրդային շրջանի պատմության մի շարք անցքերի ուսումնասիրման վրա:*

**Վահե Սարգսյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Սփյուռքի և հայ գաղթօջախների պատմության բաժնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Վրաստանի հայության, մասնավորապես՝ Ջավախահայության հիմնախնդիրներ, Հայաստան–Վրաստան հարաբերություններում Վրաստանի տեղաբնիկ ժողովուրդների ու ազգային փոքրամասնությունների խնդիրներ: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի:**
ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ազատամարտիկ Միքայել Ավագյանը չի մասնակցել վրաց-աբխազական բախումներին. մերկացվել է հերթական ադրբեջանական սուտը, 11.02.2019.– https://armenpress.am/hy/article/963867 (դիտվել է 15. III. 2025 թ.):

Արձանագրություն № 3, 19.05.1990, ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Բանաձև «Ջավախք» ժողովրդական շարժում կազմակերպության կոնֆերանսի, անթվակիր (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Խորհրդի արձագանքը Ավագյանի կիսանդրու շուրջ ծավալված իրարանցմանը, 11.02.2019.– https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU (դիտվել է 15. III. 2025 թ.):

Կանոնադրություն «Ախալքալաքի «Վերակառուցման ժողովրդական շարժում» ընկերության», ընդունված «Վերակառուցում ժողովրդական շարժում» ընկերության կողմից 01 հունիսի, 1989 թ., գրանցված Ախալքալաքի շրջխորհրդի գործկոմի առ 08. 09. 1989 թ. № 118 որոշմամբ (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Կանոնադրություն «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության, ընդունված «Ջավախք» հայրենակցական-բարեգործական միության համայնքային ներկայացուցիչների հիմնադիր ժողովում, 20. 01. 1990 թ., ք. Երևան (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Ղազարյան Վ. 2013, Ջավախքի արծիվները Արցախի լեռներում, Երևան, «Հայաստան» հրատ., 184 էջ:

Ղունկիանոս երգիչ Կարնեցի. 1995, Ղունկիանոսի ընծան, Երևան, «Գիր գրոց», 110 էջ:

Մաղալյան Վ. 1997, Ջավախքի անդրանիկ պարբերականը. – «Հանդես Երևանի համալսարանի, գիտահինֆորմացիոն լրատու», № 1 (87), էջ 81–85:

«Մարտիկ» (Երևան), 2001, սեպտեմբեր, թիվ 37:

Մելքոնյան Ա. 1994, էրզրում. էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը ԺԹ դարի առաջին երեսնամյակին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, «Հայաստան», ՀՀ ԳԱԱ հրատարակչություններ, 180 էջ:

Մելքոնյան Ա. 2003, Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, «Զանգակ-97» հրատ., 544 էջ:

«Ջավախք», № 1, դեկտեմբեր, 1990, № 1, սեպտեմբեր, 1993, № 1, օգոստոս, 1994, № 2 (4), սեպտեմբեր, 1994, № 3 (5), հոկտեմբեր, 1994, № 4 (6), նոյեմբեր, 1994:

«Ջավախք» ժողովրդական շարժման կոչը՝ ուղղված Ախալքալաքի շրջանի ողջ աշխատավորությանը, տնտեսությունների և կազմակերպությունների ղեկավարներին, դպրոցների տնօրեններին, բանվորներին ու կոլտնտեսականներին, մտավորականության բոլոր ներկայացուցիչներին, 1991 թ., ք. Ախալքալաք (Վ. Սարգսյանի անձնական արխիվ):

Սարգսյան Հ. 2009, «Ջավախք» պարբերականը (Վրաստանի հայ պարբերական մամուլի պատմությունից). – Հայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի (հոդվածների ժողովածու), գիրք 4, Երևան, «Միտք» վերլուծական կենտրոն, էջ 251–274:

Սարգսյան Վ. 2006, Սամցխե-Ջավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում (1980-ական թթ. վերջ – 1990-ական թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ., 376 էջ:

Սարգսեան Վ. 2018, Ջաւախքը յետխորհրդային Վրաստանի վարչատարածքային բաժանման գործընթացներում.– «Հայկազեան հայագիտական հանդէս» (Պէյրութ), էջ 487–508:

Грузия, Самцхе-Джавахетия и «тюркское кольцо» вокруг Армении, 12. 01. 2004.– https://regnum.ru/article/202173 (դիտվել է 15. III. 2025):

Оганесян Э. 1991, Век борьбы. Очерк 100-летней истории дашнакской партии и национально-освободительной борьбы армянского народа, в двух томах. Мюнхен– Москва, изд. «Феникс», т. 1, 1–383 с., т. 2, 384–701 с.

Указ № 237, Глава Грузинского государства, 1994 г., 31 июля, г. Тбилиси (Վ. Սարգսյանի անձնական արխիվ).

## REFERENCES

Azatamartik Mik’ayel Avagyany ch’i masnakts’el vrats’-abkhazakan bakhumnerin. merkats’vel e hert’akan adrbejanakan suty, 11. 02, 2019.– https://armen press.am/hy/ article/963867 (ditvel e 15. III. 2025 t.) (In Armenian).

Ardzanagrut’yun № 3, 19.05.1990, k’. Akhalk’alak’ (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Banadzev «Javakhk’» zhoghovrdakan sharzhum kazmakerput’yan konferansi, ant’vakir (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Khorhrdi ardzagank’y Avagyani kisandru shurj tsavalvats irarants’many, 11.02.2019.– https://jnews.ge/am/28375/#.XGF8jjMzbIU (ditvel e 15. III. 2025 t.) (In Armenian).

Kanonadrut'yun «Akhalk'alak'i «Verakaruts'man zhoghovrdakan sharzhum» ynkerut'yan», yndunvats «Verakaruts'um zhoghovrdakan sharzhum» ynkerut'yan koghmits' 01 hunisi, 1989 t'., grants'vats Akhalk'alak'i shrjkhorhrdi gortskomi ar 08. 09. 1989 t'. № 118 voroshmamb (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Kanonadrut'yun «Javakhk'» hayrenakts'akan-baregortsakan miut'yan, yndunvats «Javakhk'» hayrenakts'akan-baregortsakan miut'yan hamaynk'ayin nerkayats'uts'-ich'neri himnadir zhoghovum, 20. 01. 1990 t'., k'. Yerevan (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian)

Ghazaryan V. 2013, Javakhk'i artsivnery Arts'akhi lernerum, Yerevan, «Hayastan» hrat., 184 ej (In Armenian).

Ghunkianos yergich' Karnets'i. 1995, Ghunkianosi yntsan, Yerevan, «Gir grots'», 110 ej (In Armenian).

Maghalyan V. 1997, Javakhk'i andranik parberakany. – «Handes Yerevani hamalsarani, gitainformats'ion lratu», № 1 (87), ej 81–85 (In Armenian).

Maghalyan V. 2009, Javakhk'i andranik parberakany. – Hayots' hyusisayin darpasnery. Javakhk', Lori (hodvatsneri zhoghovatsu), girk' 4, Yerevan, «Mitk'» verlutsakan kentron, ej 275–281 (In Armenian).

«Martik» (Yerevan), 2001, september, tiv 37 (In Armenian).

Melk'vonyan A. 1994, Erzrum. Erzrumi nahangi hay azgabnakch'ut'yuny ZHT' dari arajin yeresnamyakin (patmazhoghovrdagrakan usumnasirut'yun), Yerevan, «Hayastan», HH GAA hratarakch'ut'yunner, 180 ej (In Armenian).

Melk'vonyan A. 2003, Javakhk'y 19-rd darum yev 20-rd dari arajin k'arordin, Yerevan, «Zangak-97» hrat., 544 ej (In Armenian).

«Javakhk'», № 1, dektember, 1990, № 1, september, 1993, № 1, ogostos, 1994, № 2 (4), september, 1994, № 3 (5), hoktember, 1994, № 4 (6), noyember, 1994 (In Armenian).

«Javakhk'» zhoghovrdakan sharzhman koch'y, ughghvats Akhalk'alak'i shrjani voghj ashkhatavorut'yany, tntesut'yunneri yev kazmakerput'yunneri ghekavarnerin, dprots'neri tnorennerin, banvornerin u koltntesakannerin, mtavorakanut'yan bolor nerkayats'uts'ich'nerin, 1991 t'., k'. Akhalk'alak' (V. Sargsyani andznakan arkhiv) (In Armenian).

Sargsyan H. 2009, «Javakhk'» parberakany (Vrastani hay parberakan mamuli patmut'yunits'). – Hayots' hyusisayin darpasnery. Javakhk', Lori (hodvatsneri zhoghovatsu), girk' 4, Yerevan, «Mitk'» verlutsakan kentron, ej 251–274 (In Armenian).

Sargsyan V. 2006, Samts'khe-Javakhk'-T'reghk'y hay-vrats'akan harberut'yunneri holovuyt'um (1980-akan t't'. verj – 1990-akan t't'.), Yerevan, HH GAA patm. inst., 376 ej (In Armenian).

Sargsean V. 2018, Jawakhk'y yetkhorhrdayin Vrastani varch'ataratsk'ayin bazhanman gortsynt'ats'nerum.– «Haykazean hayagitakan handes» (Peyrut'), ej 487–508 (In Armenian).

Gruzia, Samtskhe-Javakhetia I «tyurkskoe koltso» vokrug Armenii, 12.01.2004, https://regnum.ru/article/202173 (ditvel e 15. III. 2025) (In Russian).

Oganesyan E. 1991, Vek borbi. Ocherk 100-letney istorii dashnakskoy partii i nacionalno-osvoboditelnoy borbi armqnskogo naroda, v dvukh tomakh, Myunkhen – Moskva, izd. «Feniks», t. 1, 1–383 s., t. 2, 384–701 s. (In Russian).

Ukaz N 237, Glava Gruzinskogo gosudarstva, 1994 g., 31 iyulya, g. Tbilisi (heghinaki antsnakan arkhiv) (In Russian).



# ОТРАЖЕНИЕ ЖИЗНИ АРМЯН ДЖАВАХКА НА СТРАНИЦАХ ЕЖЕМЕСЯЧНОЙ ГАЗЕТЫ «ДЖАВАХК» (Начало 1990-х годов)

ВАЭ САРКИСЯН

## Р е з ю м е

*Ключевые слова: распад СССР, Грузия, армяне Джавахка, народное движение «Джавахк», ежемесячная газета «Джавахк», поддержка Арцаха.*

Газета «Джавахк», основанная народным движением «Джавахк», издавалась в Ахалкалаки с 1990 по 1998 год. Хотя и газета издавалась с нерегулярной периодичностью и ограниченным тиражом, но она служила платформой для распространения новых идей в общественно-политической жизни джавахкских армян в период распада СССР и в первые годы независимости Грузии. В газете издавались статьи и публикации о деятельности народного движения «Джавахк», об озвучиваемых ими проблемах, а также об общественно-политической, национальной, культурно-образовательной и духовной жизни армян Джавахка, очерки о жизни и деятельности выдающихся личностей. Помимо этого, газета освещала вопросы, связанные с армяно-грузинскими отношениями, с проблемами социального характера. В круг обсуждаемых вопросов входили благотворительность и церковное строительство, а также принимаемые грузинскими властями законы. Весьма ценными являются публикации, представляющие множество фактов о поддержке, оказываемой армянами Джавахка Арцаху. Предметом рассмотрения являются публикации газеты за 1990–1994 гг.

*Ваэ Саркисян – к. и. н., научный сотрудник отдела истории диаспоры и армянских колоний Института истории НАН РА. Научные интересы: проблемы армянства Грузии, в частности Джавахка, различные вопросы армяно-грузинских отношений, проблемы коренных народов и национальных меньшинств Грузии. Автор 1 монографии и около 35 статей.*
*ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com*

# COVERAGE OF JAVAKHK ARMENIANS' LIFE ON THE PAGES OF "JAVAKHK" MONTLY NEWSPAPER (In the early 1990s)

VAHE SARGSYAN

S u m m a r y

*Keywords: Collapse of the USSR, Georgia, Javakhk Armenians, "Javakhk" people's movement, "Javakhk" monthly newspaper, support for Artsakh.*

"Javakhk" newspaper, founded by the "Javakhk" people's movement, was published in Akhalkalaki from 1990 to 1998. Although the newspaper was published with irregular periodicity and in limited circulation, it served as a platform for spreading new ideas in the social and political life of the Javakhk Armenians in the period of the collapse of the USSR and the first years of the independence of Georgia. The newspaper put out articles and publications about the activities of the "Javakhk" people's movement, the problems they raised, as well as about the social and political, national, cultural, educational, and spiritual life of the Javakhk Armenians, essays about the life and activities of prominent individuals. In addition, the newspaper covered issues connected to the Armenian-Georgian relations and the problems of social character. The range of issues discussed included charity, church building and laws adopted by the Georgian authorities. The publications that presented many facts about the support provided by the Armenians of Javakhk to Artsakh are very valuable. The publications of the newspaper for 1990–1994 are subject of examination.

*Vahe Sargsyan – Candidate of Historical Sciences, Researcher at the Department of History of Diaspora and Armenian Colonies of the Institute of History of NAS RA. Scientific interests: problems of the Armenians of Georgia, particularly of Javakhk, various issues on relations between Armenia and Georgia, problems of indigenous peoples and national minorities of Georgia. Author of 1 monograph and about 35 articles.*
*ORCID: 0009-0003-8437-5845. vsargsyan83@gmail.com*

ՀՏԴ : 929:891.981.09 Աբեղյան + 001

Doi:10.54503/0135-0536-2025.2-73

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 160-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

# ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԸ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ*

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

**Բանալի բառեր՝ Մանուկ Աբեղյան, մանկավարժ, ազգային-հասարակական գործիչ, հայագետ, ուղղագրական բարեփոխումներ, տաղաչափություն, տեսություն, մեթոդաբանություն:**

**Ամփոփում**

*Հայ բանասիրության կարկառուն ներկայացուցիչներից է փիլիսոփայության, բանասիրական գիտությունների դոկտոր, գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի ԳԱ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը: Նրա հետազոտությունները հիմնարար նշանակություն են ունեցել հայագիտության մի քանի ճյուղերում՝ բանագիտություն, գրականագիտություն, լեզվաբանություն: Նա դրել է հայկական տաղաչափության գիտական ուսումնասիրության հիմքը:*

*Մ. Աբեղյանն ազգային-հասարակական, մանկավարժական, գիտական գործունեությամբ կերտել է մտավորականի, գիտնական քաղաքացու իր նկարագիրը՝ ընդգծված ազնվությամբ ու սկզբունքայնությամբ, գիտական ճշգրտության ձգտելու բծախնդրությամբ, հայ ժողովրդի պատմության ու մատենագիտության, համաշխարհային գրականության պատմության, գրական դպրոցների և ուղղությունների խորքային իմացությամբ, անսահման աշխատասիրությամբ, հայրենի երկրին ու ժողովրդին անձնուրաց նվիրվածությամբ:*

**Նախաբան**

*160 տարի է անցել մեծանուն հայագետ Մ. Աբեղյանի ծննդյան օրից:*

*Հայագիտության բազմաթիվ երախտավորների կողքին նա առանձնանում է մի քանի բնագավառներում իրականացրած բոլորանվեր գործունեությամբ. բանաստեղծ է, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ, մանկավարժ, գրաքննադատ, գրականագետ, բանագետ, լեզվաբան, բնագրագետ: Կարճ է տևել միայն գրական գործունեությունը:*

---

* *Ներկայացվել է 18. IV. 2025 թ., գրախոսվել է 22. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*Գիտնականի մեծարժեք ժառանգությունը հիմնական մասով ընդգրկված է 8 ստվարածավալ հատորներում[1], որոնք կազմվել են Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:*

*Բազում սերունդներ են գնահատել նրա գործունեությունն[2] ու հայագիտության զարգացման համար պատմական նշանակություն ունեցած և «ցարդ ելակետային»[3] համարվող հետազոտությունները, որոնք աչքի են ընկնում պատկառելի քանակով, օժտված են այսօրվա գիտության պահանջներին համարժեք որակական հատկանիշներով:*

*Անընդմեջ ձեռնամուխ լինելով գիտական նորանոր խնդիրների լուծմանը՝ Աբեղյանը մշտապես դրսևորում է ակնհայտ միտում՝ վերականգնել քննվող նյութի ամբողջական պատկերը, լինեն դրանք հայոց հին վեպի նշխարները, հայ ժողովրդական բանաստեղծության հարուստ նմուշները, լեզվական թե տաղաչափական իրողությունները: Ձգտում է բացահայտել պատճառահետևանքային կապերը, օրինաչափությունները, փոխազդեցությունները, պարզաբանել խրթին հարցերը, հայ հոգևոր արժեքները դիտարկել համաշխարհային մշակույթի համատեքստում:*

*Գիտական փաստերը քննելով պատմական զարգացման ընթացքի մեջ՝ Աբեղյանը ղառնում է հայ բանասիրության մի քանի ճյուղերի՝ բանագիտության, գրականագիտության, լեզվաբանության «խոշորագույն սիստեմավորող-տեսաբանը»[4]:*

### Կյանքը, մանկավարժական և հասարակական գործունեությունը

*Մանուկ Խաչատուրի Աբեղյանը ծնվել է 1865 թ. մարտի 17-ին Նախիջևանի Աստապատ գյուղաքաղաքում: 1876 թ. դարձել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան՝ զբաղեցնելով հիվանդության պատճառով ճեմարանից ազատված աշակերտներից մեկի տեղը: Ավարտել է այն 1885 թ. բարձր առաջադիմությամբ: Աբեղյանի դիմում-խնդրանքի հիման վրա հաշվի առնելով նրա պատրաստվածության աստիճանը՝ ճեմարանի վարչությունը նրան նշանակում է դասարանական բաժնի հայոց լեզվի ուսուցիչ, գրաղարանապետ ու ճեմարանի խորհրդի քարտուղար:*

*Ճեմարանական տարիներին Մ. Աբեղյանը սկսում է բանաստեղծություններ գրել՝ թղթին հանձնելով պատանեկան ապրումները, հույզերն ու զգացմունքները, սակայն առավելապես մշակում է ժողովրդական ավանդապրույցներ, կերպավորում պատմաառասպելական հերոսների: Իր այս նախասիրության շրջանակում կատարում է նաև թարգմանություններ ռուս և եվրոպական բանաստեղծներից: Աբեղյանի բանաստեղծությունները տպագրվում են 1886 թ. Թիֆլիսի «Աղբյուր» մանկական ամսագրում:*

---

[1] *Աբեղյան. 1966, Աբեղյան. 1967, Աբեղյան. 1968, Աբեղյան. 1970, Աբեղյան. 1971, Աբեղյան. 1974, Աբեղյան. 1975, Աբեղյան. 1985: Մ. Աբեղյանի գիտական աշխատությունների մատենագիտական թեմատիկ ցանկը տե՛ս Հարությունյան, Պողոսյան. 2015, 92–127:*

[2] *Տե՛ս Հարությունյան. 1970, 5–11:*

[3] *Դոլուխանյան. 2023, 215:*

[4] *Հարությունյան. 1970, 640:*

Աբեղյանն ազատ ժամանակը տրամադրում է նաև բանահյուսական, ազգագրական նյութեր հավաքելով: 1886 թ. ճեմարանի դռնապան Նախո քեռուց՝ Նահապետից, գրի է առնում հայ ժողովրդական էպոսի պատումը:

Մ. Աբեղյանը դասավանդում է ճեմարանում 2 տարի, 1887 թ.՝ տեղափոխվում Շուշիի թեմական հոգևոր դպրոց, աշխատում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Շուշիում հրատարակվում են նրա բանաստեղծությունների ժողովածուն [«Նմուշներ» (1888)] և էպոսի իր գրառած պատումը «Դավիթ և Մհեր» վերնագրով: Շուշիում Աբեղյանն ուսուցիչների անդամակցությամբ կազմում է գրական խմբակ: Տարբեր հարցերի շարքում քննարկման նյութ են դառնում նաև Աբեղյանի բանաստեղծությունների ժողովածուն և «Դավիթ և Մհեր» պատումը: Արձագանքները որոշիչ էին Աբեղյանի համար՝ ընտրելու գիտության ճանապարհը. նա սկսում է էպոսի խորքային ուսումնասիրությունը:

Շուշիից հետո Աբեղյանը, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, պաշտոնավարում է Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց վարժարանում՝ շարունակելով ակտիվորեն մասնակցել գրական, հանրային կյանքին: Թղթակցում է «Նոր-Դար» օրաթերթին՝ հանդես գալով հայ գրականությանը, հայոց լեզվին, թատրոնին նվիրված գրական-քննադատական հոդվածներով, աշխատակցում է «Մուրճ» ամսագրին, թարգմանում Գոգոլի «Տարաս Բուլբան» (Թիֆլիս, 1892), դառնում Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության խմբագրական մասնաճյուղի անդամ՝ զբաղվելով նաև գրական-հրատարակչական աշխատանքով: Դեռ այդ տարիներին Աբեղյանը մեծապես կարևորում է ազգային մամուլի դերը՝ ժողովրդին հուզող խնդիրները բարձրացնելու, հասարակությանը քաղաքականապես հասունացնելու, կազմակերպելու հարցերում: Ազգային, քաղաքական, ընտանեկան, բարոյական հարաբերությունների նոր ըմբռնումների պայմաններում Մ. Աբեղյանն առաջադրում է ազգի նկարագիրն իր լավագույն կողմերով պահպանելու, եվրոպականից միայն առաջադիմության և լուսամիտ գաղափարները վերցնելու, ժողովրդին կրթելու, կազմակերպված հասարակությունն ունենալու և ազգային միասնության հասնելու խնդիրները: Առաջարկում է յուրաքանչյուր գաղափար կիրառելիս հաշվի առնել տվյալ երկրի հասարակական կյանքի պայմանները[5]:

Աբեղյանը կարևորում է սեփական լեզվի ու մշակույթի գնահատման, պահպանման խնդիրները՝ առաջ քաշելով գրական հուշարձանների, գեղարվեստական երկերի հրատարակման, անցյալի իմացության, հայ հին գրականության ուսումնասիրության, արժեքների վերագնահատման հարցերը: Չի վարանում պատեհ առիթով ընդգծելու հայոց պատմության համար հայ եկեղեցու ունեցած նշանակությունը՝ պայմանավորված նրա ազգային բնույթով[6]:

Հայագիտության առջև ծառացած տարատեսակ խնդիրներին քաջատեղյակ Աբեղյանը, հետամուտ գիտելիքների խորացմանը, 1893 թ. մեկնում է Գերմանիա՝ ուսանելու բարձրագույն հաստատություններում: Ենայի, Լայպցիգի, Բեռլինի համալսարաններում 1893–1895 թթ. ծանոթանում է գերմանական գրականությանը, ուսումնասիրում հնդեվրոպական ժողովուրդների առասպելաբանությունը, խորանում փիլիսոփայության մեջ: ԵՒս մեկ տարի սովորում է

[5] «Նոր-Դար» (Թիֆլիս), 28. XI. 1889:

[6] «Նոր-Դար», 14. VI. 1891:

*Ֆրանսիայում՝ Սորբոնի համալսարանում: Ավարտական քննությունները հանձնում է Ենայի համալսարանում: 1898 թ. պաշտպանում է «Հայ ժողովրդական հավատալիքը» (գերմաներեն) ատենախոսությունը և ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան: Աշխատությունն արժանանում է բարձր գնահատականի և 1899 թ. տպագրվում Լայպցիգում:*

*Արտասահմանում գտնվելու տարիներին էլ Մ. Աբեղյանը չարունակում է թղթակցել «Նոր-Դար»-ին, «Արարատ» ամսագրին: 1897 թ. «Արարատ»-ում տպագրում է «Մեր երկու գրական լեզվի միության խնդիրը» հոդվածը: Մեկ գրական լեզվի հարցը համարում է պատմական անհրաժեշտություն՝ կապված ինչպես գրականությունը բոլորին հասանելի դարձնելու խնդրի հետ, այնպես էլ քաղաքական առումով. «Մի՛ ազգային գրականությունն է առաջ բերում ազգային գիտակցությունը, միության ինքնաճանաչությունը»[7],– գրում է Աբեղյանը: Նա առաջադրում է լեզուների միավորման տևական գործընթաց սկսելու քայլերը, ցույց տալիս ուղիները:*

*1898 թ.՝ Գերմանիայից վերադառնալուն պես, Մ. Աբեղյանը հրավիրվում է դասավանդելու Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Իրեն կրթած հաստատությունում նա մանկավարժությամբ է զբաղվում չուրջ 16 տարի՝ դասավանդելով մի շարք առարկաներ (հայոց լեզու՝ գրաբար և աշխարհաբար, հայոց հին գրականություն, պատմություն, տաղաչափություն, ժողովրդական բանահյուսություն և այլն):*

*1898 թ. ճեմարանի հիմնադրման 25-ամյա հոբելյանն առիթ է դառնում Աբեղյանի համար լուսաբանելու Գեորգ Դ կաթողիկոսի ազգանվեր գործունեությունը, մասնավորապես՝ կրթության զարգացմանը նպաստող ձեռնարկումները[8]: Միևնույն ժամանակ չի կարողանում անտարբեր մնալ ճեմարանում կուտակված բազմաթիվ խնդիրների հանդեպ, որոնցից մեկն էլ ուսուցիչների նյութական անապահով վիճակն էր:*

*1900-ական թվականներին Աբեղյանն ակտիվորեն արձագանքում է թե՛ ազգային քաղաքական կյանքին, թե՛ ճեմարանի բարեփոխումների պահանջներին: «Հայ-թրքական կռիվը» վերնագրով հոդվածաշարը[9] գրում է հայ-թաթարական ջարդերի դրդապատճառները վեր հանելու միտումով:*

*Այդ տարիներին քննարկումների տեղիք էր տվել նաև հայոց լեզվի ուսուցիչների՝ մայրենիին լավ չտիրապետելու իրողությունը: Ի պատասխան «Հորիզոն» թերթում Հովհ. Թումանյանի «Հայերեն չգիտեն» բաց նամակին[10]՝ Աբեղյանը նույն թերթում տպագրում է «Մեր դպրոցական կյանքից» հոդվածաշարը[11]: Նա մատնանշում է մի քանի պատճառներ՝ հասարակական-քաղաքական, սոցիալական, հոգեբանական: Պակաս կարևոր չի համարում հայոց լեզվի ծրագրերն ու դասավանդման եղանակները, գրաբարի համեմատ կենդանի լեզուն երկրորդական պլան մղելը, հանրակրթական մյուս առարկաների շարքում հայոց լեզվին որևէ արտոնություն չտալը: Կարևորում է նաև ուսուցչին օգնելու ձեռնարկների անհրաժեշտությունը:*

---

[7] *Ա բ ե ղ ե ա ն. 1897, 426:*

[8] *Ա բ ե ղ ե ա ն. 1899:*

[9] *«Նոր-Դար», 31. I, 02–05, 07–08. II. 1906:*

[10] *«Հորիզոն» (Թիֆլիս), 17. VI. 1910:*

[11] *Հոդվածաշարի քննությունը տե՛ս Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 2023, 252–260:*

*Ինչ վերաբերում է ճեմարանի ուսումնական ծրագրերի, նպատակի և կենցաղավարման փոփոխություններին՝ Մ. Աբեղյանը հիմնավորումներով ու առարկարկություններով դիմում է կաթողիկոսին: Էջմիածնի բարձրագույն հոգևոր իշխանությունը իրականացնում է միայն մասնակի փոփոխություններ:*

*Ճեմարանում աշխատելու տարիներին Աբեղյանը զբաղվում է նաև գիտական գործունեությամբ, գրում լեզվաքերականական հարցերին նվիրված աշխատություններ, ուսումնասիրում XIX դարի հայ գրականությունը:*

*1915 թ. Մ. Աբեղյանն ազատվում է աշխատանքից: Հեռանալուց հետո Աբեղյանը դասավանդում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում: Թիֆլիսը նրան հնարավորություն է տալիս հասարակական և գիտահետազոտական առավել լայն գործունեություն ծավալելու: Աբեղյանն ընդգրկվում է Հայ գրողների կովկասյան և Հայոց ազգագրական ընկերությունների կազմում, որոնք զբաղվում էին գիտական ու մշակութային խնդիրներով, հայ գրականությունը հանրահռչակելու ծրագրերով, ուսումնական դասընթացների կազմակերպմամբ: Այդ ընկերությունների ամբիոններից կարդում է մի շարք զեկուցումներ՝ նվիրված անվանի հայագետներին, հայոց հին գրականության տարբեր հարցերին: Գրիգոր Նարեկացուն նվիրված դասախոսությունը հրատարակվում է «Ազգագրական հանդես»-ում[12], իսկ հայ հին բանաստեղծության պատմական զարգացման մասին դասախոսությունը՝ Թիֆլիսում 1917 թ. Հովհ. Թումանյանի նախաձեռնությամբ[13]: «Դա հայ ժողովրդի պատմական իրական կեցությամբ պայմանավորված հայոց հին բանաստեղծության բոլոր էական փուլերի հազարամյա զարգացման գեղագիտական ու պատմա-փիլիսոփայական խոր իմաստավորումն էր»[14]:*

*1917 թ. Հայոց ազգագրական ընկերության հիմնադրած բարձրագույն դասընթացներում Աբեղյանը ներկայացնում է հին վեպի զարգացման իր տեսությունը: Մեծ հետաքրքրություն են առաջացնում նաև Մ. Գոչի և Վ. Այգեկցու առակներին նվիրված դասախոսությունները:*

*Մ. Աբեղյանը շարունակում է մանկավարժական գործունեությունը. դասավանդում է Թիֆլիսի նորաբաց Հայկական պետական դիմնազիայում, 2 տարի՝ Կովկասյան Համալսարանում:*

*Իբրև մտավորական ու հայրենանվեր քաղաքացի՝ Աբեղյանը չի կարողանում անտարբեր մնալ 1918 թ. Թիֆլիսից ու Անդրկովկասի տարբեր գավառներից տեղահանված, թուրքական սրից փախած հայ գաղթականների վիճակի ու ճակատագրի հանդեպ: Նրա համար անընդունելի էր վրաց մենշևիկյան կառավարության վարած քաղաքականությունը, որը իրար դեմ էր լարում երկու հարևան ժողովուրդներին: Աբեղյանը «Հայեր և վրացիներ» հոդվածաշարում[15] առաջ է քաշում անդրկովկասյան ժողովուրդների համերաշխության խնդիրը: Նրա գրիչն ուղղված էր նաև հայ քաղաքական այն գործիչների դեմ, որոնք*

---

[12] *Աբեղեան. 1916, 85–136:*

[13] *Տե՛ս Աբեղյան. 1975, 315–339:*

[14] *Հարությունյան. 1970, 91:*

[15] *«Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 04–06, 14–15, 19. IX. 1918, 05. X. 1918, տե՛ս նաև Զաքարյան. 2013, 197–217:*

*ընտանիքներով լքում էին Հայաստանը՝ վախենալով թուրքական հարձակումներից[16]: Լոռու համար սկսած ազգամիջյան ընդհարումների առիթով Աբեղյանը քննադատում է մենշևիկյան Վրաստանի նկրտումները բուն հայկական տարածքի նկատմամբ և բարձրացնում Վրաստանում ապրող հայերի քաղաքացիական իրավունքները վերականգնելու, հայաբնակ գավառները Հայաստանին վերադարձնելու խնդիրները:*

*Այդ օրերին է ծնվում Մ. Աբեղյանի «Մանուկ Հայաստան» հոդվածը՝ «նվիրված հայոց պետականության վերականգմանը և այդ առնչությամբ ժամանակի մտավորականության պահվածքին»[17]: Նրանում արտացոլվել են հայրենասեր քաղաքացու ըմբռնումներն ու դիրքորոշումները տեղի ունեցող իրադարձությունների և երկրի ապագայի հանդեպ:*

*1918 թվականից բարձրացվում են պետական հայերենի մշակման, տարբեր բնագավառներում հայերենի տերմինների ստեղծման հարցերը, բնակչության համատարած անգրագիտության վերացման խնդիրները:*

*1919 թ. Մ. Աբեղյանը վերադառնում է Հայաստան: 1921 թ. հայոց լեզվի ուղղագրության բարեփոխումների հանձնաժողովին նա ներկայացնում է արմատական առաջարկություններ, որոնք պետք է կատարվեին աստիճանաբար՝ սկսելով նվազագույն փոփոխություններից: Սակայն բարեփոխումները գործադրվում են մեխանիկորեն, ինչն էլ առաջ է բերում մտավորականների դժգոհությունը: 1922 թ. Աբեղյանը հրատարակում է «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» գրքույկը, իսկ Ստ. Մալխասյանցի «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության» հոդվածից հետո[18] «Ուղղագրության ռեֆորմը» գիրքը (1925), որում հիմնավորում է իր կողմից առաջ քաշված դրույթները: 1940 թ. ՀՀ պետական լեզվի՝ 1922 թ. կառավարության կողմից հաստատված ուղղագրական բարեփոխումները ենթարկվում են միայն մանակի փոփոխությունների, և, ինչպես գրում է Ս. Հարությունյանը, «Աբեղյանը դառնում է հայոց լեզվի արդի ուղղագրության հիմնադիրը»[19]:*

*Չնայած ծանրաբեռնվածությանը՝ Մ. Աբեղյանը երկրի նյութատնտեսական ծանր պայմաններում իր նպաստն է բերում ժողովրդին՝ անդամակցելով Հայաստանի օգնության կոմիտեին (1921): Հետագայում դառնում է Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեի անդամ (1925), Երևանի քաղաքային խորհրդի անդամ (1927), Անդրկովկասի կենտգործկոմի նախագահությանն առընթեր կազմված ՀԽՍՀ բնակավայրերի անունների ճշգրտման ու ձևավորման հանրապետական հանձնաժողովի նախագահ (1932):*

*1935 թ. մատուցած ծառայությունների համար Աբեղյանին շնորհվում է գիտության վաստակավոր գործչի կոչում, ապա՝ բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ առանց ատենախոսության պաշտպանության: 1943 թ. Մ. Աբեղյանն արժանանում է ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսի բարձր կոչման:*

---

[16] *«Ժողովրդի ձայն», 21, 28. IX, 02. X. 1918:*

[17] *Տե՛ս Զ ա ք ա ր յ ա ն. 2012, 240–245: Աբեղյանի հրապարակախոսական ժառանգության մի մասը տե՛ս Էջեր Մանուկ Աբեղյանի պատմահրապարակախոսական ժառանգությունից. 2013:*

[18] *«Մարտակոչ» (Թիֆլիս), 12–13. I. 1924:*

[19] *Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 1970, 118:*

*1943 թ. նոյեմբերին հիմնադրվում է Հայաստանի գիտությունների ակադեմիան: Բացման նիստում ելույթ է ունենում նաև ակադեմիկոս Մ. Աբեղյանը: Նրա ելույթը մատնանշում է ակադեմիայի զարգացման ուղղությունները, ընդգծում է ակադեմիայի դերը ժողովրդի կենսամակարդակը բարձրացնելու գործում, ակադեմիայի ազգային բնույթը և հայագիտության զարգացման նշանակությունը՝ իբրև առանձին ազգ գոյություն ունենալու իրավունքի համար[20]:*

*1944 թ. Հայաստանի ակադեմիայի նախագահ Հովսեփ Օրբելին Մ. Աբեղյանին առաջարկում է ստանձնել գրականության ինստիտուտի տնօրենի պաշտոնը: Վատթարացող առողջության պատճառով վերջինս մերժում է առաջարկը:*

*Գիտնականը վախճանվում է 1944 թ. սեպտեմբերի 25-ին: Հայաստանի գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը և Երևանի թիվ 36 միջնակարգ դպրոցը կոչվում են Մ. Աբեղյանի անունով: Նշանակվում են Մ. Աբեղյանի անվան կրթաթոշակներ: Որոշում է կայացվում կազմել և հրատարակել Աբեղյանի գիտական աշխատությունները:*

## Մանուկ Աբեղյանը տեքստաբան

*Խորապես գիտակցելով հայ ժողովրդի բազմադարյան հարուստ մշակույթը նույն այդ ժողովրդին և օտարներին ճանաչելի դարձնելու անհրաժեշտությունը՝ Աբեղյանը, ինչպես արդեն նշել ենք, 1886 թ. գրի է առնում «Սասնա ծռեր» էպոսի երկրորդ պատումը[21] և հրատարակում: Նա արժևորում է պատումը բարբառագիտական, կուլտուր-պատմական, գեղարվեստական տեսակետներից, այն համարում ազգային վեպ[22]:*

*Տարիներ անց՝ 1932 թ., չնայած չափազանց զբաղվածությանը, Մ. Աբեղյանն ընդունում է պետական հրատարակչության գեղարվեստական բաժնի վարիչ Եղիշե Չարենցի առաջարկը՝ կազմելու էպոսի գիտական բնագիրը[23]: Աբեղյանը և Կ. Մելիք-Օհանջանյանը հավաքված տպագիր և անտիպ 65 պատումներից ընտրում են առավել ամբողջական 48 պատումները, դրանց տիպաբանական նկարագրի հիման վրա դասակարգում, հնարավորության դեպքում տողատում արձակ պատումները, բաժանում հատվածների, վերնագրում: Ընդհանուր նեբածության բացի, ուր դիտարկվում են էպոսի ծագման, զարգացման, բովանդակության խնդիրները, գեղարվեստական առանձնահատկությունները, յուրաքանչյուր պատում ներկայացնում են առաջաբանով՝ բանասացի, բանահավաքի, գրառման հանգամանքների հետ կապված տվյալներով:*

*Կազմողների մշակած բնագրագիտական սկզբունքների չնորհիվ պատումները ներկայանում են գիտական հարուստ ապարատով՝ ընդարձակ առաջաբան, ծանոթագրություններ, հերոսների ճյուղագրություն, առարկայական և*

---

[20] *Ելույթի ամբողջական բնագիրը տե՛ս Զ ա ք ա ր յ ա ն. 2013, 3–12:*

[21] *Առաջին պատումը հրատարակել էր բանասեր-բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը (տե՛ս Գրոց ու բրոց եւ Սասունցի Դավիթ կամ Մհէրի դուռ. 1874):*

[22] *Ա բ ե ղ յ ա ն. 1985, 7–65:*

[23] *Ե. Չարենցը դիմել էր Աբեղյանին 1931 թ.: Երկրորդ անգամ դիմել է 1932 թ.: Աբեղյանը ստանձնում է չափազանց աշխատատար գործը՝ ունենալով բանասեր Կ. Մելիք-Օհանջանյանի համաձայնությունը՝ աշխատակցելու բնագրի կազմման գործում: Առաջին հատորը լույս է տեսնում 1936 թ., երկրորդ հատորի առաջին մասը՝ 1944 թ., երկրորդ մասը՝ 1951 թ.:*

*անվանական ցանկեր, վեպի տարածման քարտեզ: Հաջողությամբ լուծվում է նաև բարբառային-հնչյունական տարբեր առանձնահատկություններ ունեցող գրություններն ուղղագրական միօրինակության բերելու հարցը: «Սասնա ծռեր»-ի պատումների երեք հատորները մեծարժեք նյութ էին պարունակում գիտական նոր ուսումնասիրություններ կատարելու համար:*

*«Սասունցի Դավիթ» ժողովրդական վեպի հազարամյա հոբելյանը կազմակերպելու առիթով ստեղծված հոբելյանական հանրապետական կոմիտեն Մ. Աբեղյանի առաջարկությամբ որոշում է կայացնում կազմել և տպագրել «Սասունցի Դավիթ» գիտական համահավաք բնագիրը՝ հայերեն և ռուսերեն: Առաջին ճյուղը՝ «Սանասար և Բաղդասար» վերնագրով, կազմում է Մ. Աբեղյանը: Բնագիրը թարգմանվում է մի քանի լեզուներով՝ հասանելի դառնալով տարբեր ժողովուրդների:*

*1901 թ. Մ. Աբեղյանը բանասեր Սեթ Հարությունյանի աշխատակցությամբ ձեռնարկում է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» համեմատական բնագիրը կազմելու աշխատանքները: Գիրքը լույս է տեսնում 1913 թ.[24]: Հենվելով նախորդ բանասերների ձեռքբերումների վրա՝ Աբեղյանը ճշգրտում է 35 ձեռագրերի և տպագիր օրինակների խմբային պատկանելությունը, առանձնացնում բնագրաբանական տարբերությունները: Առաջաբանում տալիս է օրինակների նկարագրությունը, բացատրում բնագիրը կազմելու հանգամանքները: Հրատարակությունն առանձնանում է նաև հանգամանալից ծանոթագրություններով, հատուկ անունների ցանկով: Այդ բնագիրը «ի հայտ էր բերում Խորենացու «Պատմության» բնագրաբանական գրեթե բոլոր էական հատկանիշներն ու օրինաչափությունները»[25]:*

*Տեքստաբանական նույն սկզբունքներով է կազմում Աբեղյանը Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի բնագիրը: Գրում է երկի պատմական և բանասիրական արժեքը ներկայացնող առաջաբան, ծանոթագրություններ, կազմում հատուկ անունների ցանկ, կատարում ճշգրտումներ՝ 9 ձեռագիր և տպագիր օրինակների համեմատության հիման վրա, տարընթերցվածների դասակարգում, կետադրական և ուղղագրական ուղղումներ: Քննական բնագիրը լույս է տեսնում 1941 թ.՝ տեքստին զուգահեռ դրված աշխարհաբար փոխադրությամբ[26], որն առավել նպաստում է երկի տարածմանը: Այդ բնագրից են հետագայում թարգմանվում Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի ռուսերեն[27], անգլերեն[28] հրատարակությունները:*

*1940 թ. Մ. Աբեղյանը կազմում է հայրենների և անտունիների համահավաք ժողովածուն[29]: Նրանում ներառված են 500-ից ավելի երգեր իրենց տարբերակներով: Հարյուրավոր փոքր տաղերի քննական բնագրերը կազմելն ուներ իր դժվարությունները: Աբեղյանը հիմք է ընդունում տաղի համեմատաբար կատարյալ փոփոխակը և մնացածը համեմատում նրա հետ, առանձնացնում տարբերակները, նշում բնագրական տարբերությունները, կատարում սխալների,*

---

[24] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1913:*

[25] *Հարությունյան. 1970, 603:*

[26] *Կորյուն. 1941:*

[27] Корюн. 1962.

[28] Koriwn. 1964.

[29] *Աբեղյան. 1940:*

*վրիպակների ուղղումներ, վերծանում անհասկանալի բառերը, տեքստերը ենթարկում ուղղագրական միօրինակության: Կցված են նաև օգտագործված աղբյուրների, հատուկ անունների ցանկերը:*

*Մանրակրկիտ, բծախնդիր աշխատանք էր պահանջում նաև 1940 թ. տպագրված «Ժողովրդական խաղիկներ. գյուղական փոքր երգեր իրենց փոփոխակներով» ժողովածուն: Կոմիտասի հետ Աբեղյանը 1900 թվականից գրառում, ապա դասակարգում է տասնյակ հազարավոր խաղիկները: 1903–1905 թվականներին Մ. Աբեղյանը և Կոմիտասը մի քանի մասով հրատարակում են «Հազար ու մի խաղ» երգարանը: Ընդհատված աշխատանքն Աբեղյանը վերսկսում է 1927 թ. արդեն առանց Կոմիտասի: Մի քանի անգամ դասակարգման սկզբունքը փոխելուց հետո Աբեղյանը գտնում է երգերն ու տարբերակները համակարգելու ձևը. առաջնորդվում է երգերն ըստ հանգերի այբբենական կարգով դասավորելու սկզբունքով: Նա նաև բարբառային վերջավորություն ունեցող հանգաբառերը վերածում է գրական ձևերի և, առհասարակ, կատարում լեզվի մասնակի գրականացում՝ հանրամատչելի դարձնելով ժողովածուն:*

*Այսպես, Մ. Աբեղյանը նպաստում է հայ տեքստաբանության զարգացմանը, մշակում, լրացնում և ամբողջացնում է քննական բնագրեր կազմելու գիտական չափանիշները՝ դառնալով «բանասիրության այդ ճյուղի հիմնադիրներից ու զարգացողներից մեկը մեզանում»[30]:*

## Մանուկ Աբեղյանի բանագիտական հետազոտությունները

*Նիկոլ Աղբալյանը XIX դ. վերջի և XX դ. առաջին կեսի հայ նշանավոր մտավորականներից է, գրականագետ, գրաքննադատ, հանրային, քաղաքական, պետական գործիչ ու մանկավարժ: Նրա՝ որպես մարդու, հայի և գործչի ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել իր ծննդավայրը՝ Թիֆլիսի Հավլաբար թաղը, Սայաթ-Նովայի արվեստը, միջնադարյան հայ գրականությունը, եվրոպական ու ռուս գրականությունը և քննադատական միտքը, ինչպես նաև՝ խոր հարգանքն ու սերը Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ: Աղբալյանի գրական գործունեությունը սկսվել է 1896 թ. Թիֆլիսի «Մուրճ» ամսագրում տպագրված գրախոսականով և շարունակվել ընդհուպ մինչև մահ: Այդ տարիների ընթացքում նա գրել է գրականագիտական, քննադատական և լեզվաբանական հարյուրավոր աշխատություններ, որոնցից շատերն իրենց նշանակությունը չեն կորցրել նաև մեր օրերում:*

*1910-ական թվականների երկրորդ կեսին Ն. Աղբալյանը ժամանակի հրամայականով ավելի շատ զբաղվել է քաղաքական գործունեությամբ, եղել հայկական կամավորական գնդերի կազմակերպիչներից, այնուհետև՝ Ազգային բյուրոյի (1912–1917 թթ.) և նրան փոխարինած Ազգային խորհրդի (1917–1918 թթ.) անդամ: 1918 թ. մայիսին ակտիվորեն մասնակցել է Հայաստանի անկախության գործընթացին, դարձել Հայաստանի առաջին խորհրդարանի (Հայաստանի խորհուրդ) պատգամավոր, իսկ 1919–1920 թթ. լայն գործունեություն է ծավալել որպես Հայաստանի առաջին Հանրապետության հանրային կրթության և արվեստի նախարար:*

*1920 թ. դեկտեմբերին Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1921 թ. ապրիլին, Աղբալյանը տարագրվել է Պարսկաստան: Տա-*

* *Ներկայացվել է 03. III. 2025 թ., գրախոսվել է 14. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*


*© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*րագրության երկարաձիգ տարիների ընթացքում մշտապես տառապելով իր ընտանիքի և հայրենիքի կարոտից՝ նա զբաղվել է հիմնականում մանկավարժությամբ և գրական գործունեությամբ: 1928 թ. մայիսին՝ Հայաստանի անկախության 10-րդ տարեդարձի օրը, նա Լևոն Շանթի ու ևս 7 համախոհների հետ Կահիրեում հիմնել է Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերությունը (այժմ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միություն), որն իր հայանպաստ գործունեությունը հաջողությամբ շարունակում է մինչ օրս: 1929 թ. Աղբալյանը և Շանթը Բեյրութում հիմնել են Հայ ճեմարանը, ուր հայեցի կրթություն են ստացել սիյուռքահայերի բազմաթիվ սերունդներ: Այդ կրթօջախում էլ Աղբալյանը դասավանդել է հայ գրականություն և գրաբար՝ մինչև իր մահը հայ երեխաներին սեր ներարկելով հայոց լեզվի ու գրականության, հայոց պատմության ու մշակույթի նկատմամբ:*

*Իր բեղմնավոր գործունեության համար Աղբալյանը և՛ կենդանության օրոք, և՛ մահից հետո Սփյուռքում արժանացել է մեծ սիրո ու հարգանքի, մինչդեռ Խորհրդային Հայաստանում նրա անունը հիշել են միայն 1970-ականների վերջերին: «Վերադարձը» հայրենիք տեղի է ունեցել արդեն Հայաստանի անկախացումից՝ 1991 թվականից հետո, և այսօր նա իրավացիորեն արժանի տեղ է գրավում հայ մեծանուն գործիչների շարքում:*

**Նախաբան**

*Ապրելով հայ ժողովրդի պատմության բախտորոշ մի ժամանակաշրջանում՝ Ն. Աղբալյանն աշխատեց հնարավորության սահմաններում նպաստել իր ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացմանն ու անկախության ձեռքբերմանը, որպես քաղաքական ու պետական գործիչ՝ արեց հնարավորն ու անհնարինը՝ իր երկիրը մի լուսավոր ուղի հանելու համար: Որտեղ էլ նա եղավ և ինչ գործով էլ զբաղվեց, ամենուրեք և միշտ նրա մտքում հայ ժողովուրդն էր, նրա գրականությունն ու մշակույթը և նրա վաղվա լուսավոր օրվա երազանքը …*



*Նրա երազանքն էր հին ու նոր օրերի իր ընկեր-բարեկամների հետ խնջույքի նստել Երևանում՝ Հրազդանի ափին, կամ Վանի Այգեստանում՝ բարդիների տակ, կամ Մշո Սբ. Կարապետի հովանու ներքո՝ Սասնո լեռների ղիմաց … Նրա երազանքն էր իր երիտասարդ տարիների մտերիմ բարեկամի՝ Ավ. Իսահակյանի գրական գործունեության 50-ամյակը տոնել Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանում[1], բայց … նրան բախտ չվիճակվեց արժանանալ անգամ իր ընտանիքի տեսությանը …*

*Ն. Աղբալյանի անձն ու գործն արդեն իր կենդանության օրոք չատերի համար առասպել ու լեգենդ էին դարձել, իսկ մահը ընդամենը եկավ հաստատելու այն միտքը, որ հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկի կյանքն ու գործը դեռ երկար տարիներ դառնալու են ուսումնասիրության առարկա, և*

[1] *Տե՛ս Ա ղ բ ա լ ե ա ն. 1946, 3:*

*լուսավոր գաղափարներով առաջնորդվելու են հայությեան բազմաթիվ սերունդներ:*

**Մարդու, մտավորականի, քաղաքական-պետական գործչի ձևավորման ակունքները**

*Նիկոլ Պողոսի Աղբալյանը ծնվել է 1875 թ.[2] մարտի 24-ին Թիֆլիսում՝ հայաշատ ու հայաշունչ Հավլաբար թաղամասում: Ծննդավայրի՝ գրեթե բոլոր հայ հեղինակների համար կարևոր իրողությունը կրկնակի կարևոր է Աղբալյանի պարագայում, քանի որ Հավլաբարում էր ծնվել ու ապրել Սայաթ-Նովան, որի մասին հիշողությունները և ապրած ժամանակների հետքերը դեռ լիովին չէին անհետացել Աղբալյանի մանկության տարիներին[3]: Հավլաբարցի համեստ, խնջույքների ժամանակ պատմություններ պատմել ու երգել սիրող փոապան Պողոսի զավակը իր ծննդյան օրից լսել է Սայաթ-Նովայի երգերը՝ հայ ոգու մեծագույն արտահայտություններից մեկը, և սիրել այն աստիճան, որ սովորել է դրանցից շատերը, երգել ու հետագայում սովորեցրել ուրիշների: Նույնիսկ, իր ասելով, նշանավոր կոմպոզիտոր Սպիրիդոն Մելիքյանը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին խնդրել է Աղբալյանին երգել Սայաթ-Նովայի երգերը և ձայնագրել է դրանք[4]:*

*Ժամանակակիցների վկայությամբ՝ Աղբալյանը շատ լավ է երգել[5], և նրա սերը մեծ աշուղ-բանաստեղծի ու երգչի արվեստի նկատմամբ չի մարել ընդհուպ մինչև մահ: Նրա գործընկեր և մտերիմ բարեկամ Արշակ Հովհաննիսյանի վկայությամբ՝ մահվանից առաջ հաճախ է երգել. «Երեկոյեան, վերջացուցած իր բոլոր այցելութիւնները, իր մեծ տան երկրորդ յարկի ընդունարանում Աղբալեան զուսպ ու անուշ ձայնով երգում էր Սայաթ Նովայի երգերը: Երգում էր յաճախ, երբեմն յուզւում այնքա՛ն, որ արցունքով լցւում էին աչքերը, ու երգը վերջ էր գտնում»[6]: Ահա այսպես Սայաթ-Նովան իր հմայիչ արվեստով ուղեկցել է Աղբալյանին ծնված օրից մինչև գերեզման՝ դառնալով հայ մշակույթի, հայ երգի ու գրականության նկատմամբ նրա անսպառ սիրո ու պաշտամունքի հզոր ազդակներից մեկը:*

---

*[2] Մեզ անհայտ է որպես նրա ծննդյան թվական նշվող և ավելի հաճախ չրջանառվող 1873 թվականի աղբյուրը, մինչդեռ հենց ինքը երկու տեղ հստակորեն նշել է 1875 թվականը՝ որպես իր ծննդյան տարեթիվ՝ 1919 թ. գրած ինքնակենսագրության մեջ [տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28, մեքենագիր օրինակ Աղբալյանի ստորագրությամբ] և 1928 թ. Սիմոն Վրացյանի խնդրանք-պարտադրանքով իր ձեռքով գրված ինքնակենսագրական տեղեկություններում (տե՛ս Ա ղ բ ա լ ե ա ն. 1948, 204–205):*

*[3] Ա ղ բ ա լ ե ա ն. 1944ա:*

*[4] Ա ղ բ ա լ ե ա ն. 1944բ: Նման ձայնագրություններ, որքան տեղյակ ենք, առ այսօր հայտնի չեն: Ի դեպ, Ս. Վրացյանն Աղբալյանի մասին գրած իր ընդարձակ հուշերում ակնոսանք է հայտնել այդ առիթով. «Կարելի չէ ներել նրա Լիբանանի ընկերներին, որ գոնէ մի քանի ձայնապնակ պատրաստել չտին յաւերժացնելու համար Նիկոլի ձայնը» (Վ ր ա ց ե ա ն. 1957դ, 46):*

*[5] Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 20. III. 1913, Վ ր ա ց ե ա ն. 1964, 40–41, Մ ա ր ո ւ թ ե ա ն. 1977 և այլն:*

*[6] Ա ր շ ա կ ո ւ ն ի (Յ ո վ հ ա ն ն ի ս ե ա ն). 1951, 78:*

*Կրթությունը Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում (ավարտել է 1892-ին) և Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ուր ուսանել է երկու տարի, էլ ավելի է ուժգնացրել ու դիտակից դարձրել այդ սերը: Ընթերցանության անհագ կիրքը, գրքի նկատմամբ պաշտամունքը ծնվել են հենց այդ տարիներին և դարձյալ չեն մարել մինչև մահ: Կարդացել է հայ, ռուս, եվրոպական գրականություն, բառացիորեն կլանել ամեն ինչ: «Նիկոլը զարմանալի ընթերցող էր, նա կարդում էր ամէն ինչ, որ ընկնում էր ձեռքը: Գիտութեան և արուեստի բոլոր ճիւղերից: Սպունգի պէս ծծում էր գիտութիւնն ու գիտելիքները ...»[7],– վկայում է Ս. Վրացյանը: Այս տողերը վերաբերում են 1928 թ. և լիովին բնութագրում Աղբալյան ընթերցողին հատկապես 1890-ական թվականներին, երբ ուսումնասեր պատանին իր ունակությունները դրսևորելու համար մտավոր պաշար էր հավաքում: Նրա հետաքրքրությունների շրջանակում առանձին տեղ էր գրավում հայ միջնադարյան գրականությունը, հատկապես՝ մատենագրությունը, որտեղ ամբողջ խորությամբ ու չքեղությամբ մարմնավորվել է հայ ոգին: Իսկ խորքային ծանոթությունը եվրոպական փիլիսոփայությանը, գրականությանն ու գրականագիտական-քննադատական մտքին ավելի է լայնացրել նրա մտահորիզոնը և վճռական դեր կատարել աշխարհայացքի ձևավորման ու գրական հետագա ուղու ընտրության հարցում: Օգյուստ Կոնտ, Հիպոլիտ Տեն, Գեորգ Բրանդես, Վիսարիոն Բելինսկի և Ալեքսանդր Պիպին՝ ահա այն հեղինակները, որոնք դարձել են Աղբալյանի գրական ուսուցիչները, և որոնց անունները հաճախ են հանդիպում նրա գրվածքներում:*

*Անկարելի է չշրջանցել նրա՝ որպես մարդու, հայի և հասարակական-քաղաքական գործչի ձևավորման գործում մեծ դեր խաղացած մեկ այլ իրողություն. վաղ մանկական տարիներից Ն. Աղբալյանը խոր ակնածանք ու սեր է տածել Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ, եղել նրա հավատավոր զավակն ու հետևորդը: Այդ սերն ու ակնածանքն առավել ուժգնացել են համայն հայության անդրանիկ սրբավայրի՝ Էջմիածնի Մայր տաճարի հարևանությամբ՝ Գևորգյան ճեմարանում սովորելու ընթացքում: Ճիշտ է, ազգային վեհ գաղափարներով տարված պատանին, ստանալով վկայագիր, 1894 թ. ապրիլին հեռացել է ճեմարանից՝ առանց այն ավարտելու[8], և նույն թվականին գրած իր «Հիւսուածականաց»-ում դաժան քննադատության ու ծաղրի է ենթարկել հայ տգետ հոգևորականներին[9], այնուամենայնիվ, նրա մեջ մշտապես անսասան է եղել ակնածանքը Հայ եկեղեցու և նրա բարձրագույն ներկայացուցիչների հանդեպ, և դրա ապացույցները բազմաթիվ են՝ սփռված նրա գրվածքներում ու նրա մասին հուշերում: Ըստ մի վկայության՝ նա դեռ երեխա ժամանակ այնքան տեղյակ է եղել Հայ եկեղեցու ծիսակատարություններին, որ կիրակի և տոն օրերին, հավաքելով ընկերներին, փողոցում, որպես խաղ, ինքն էլ է պատարագ մատուցել «չնորհքով ու հաճելի ձայնով՝ ի մեծ զուարճութիւն ընկերների եւ ի զարմանս ու ի ցաւ փողոցով անցնող մեծերի»[10]: Տարիներ անց, երբ Աղբալյանը քաջածանոթ էր հայ միջնադարյան գրականությանը և այնքան էր ուսումնա-*

---

[7] *Վ ր ա ց ե ա ն. 1957դ, 44:*

[8] *Ա ն ա ն յ ա ն. 2002, 12:*

[9] *Ա ղ բ ա լ յ ա ն. 1989, 113–115:*

[10] *Ա ս տ ո ւ ա ծ ա տ ր ե ա ն. 1947, 55:*

*սիրել «Պատարագամատույցը», որ «կարող էր տիրացուի, քահանայի եւ բարձրաստիճան հոգեւորականի պաշտօնները անթերի կատարել պատարագի միջոցին եւ միաժամանակ»[11], այս խաղը պիտի վերածվեր իսկական պատարագի, այն էլ այնպիսի պայմաններում, որ ներկաները միաժամանակ սարսուռ ու հիացմունք պիտի ապրեին: 1921 թ. փետրվարին, երբ Աղբալյանը բանտարկված էր Երևանի բանտում և ժամ առ ժամ սպասում էր իր արյունալի վախճանին, իր մտերիմ բարեկամ Շանթի վկայությամբ, նա փորձված քահանայի նման պատարագ է մատուցել իր և նենգաբար բանտարկված մյուսների փրկության համար[12]: Արհամարհելով իրենց կոչումն աշխարհիկ վայելքներով փոխարինող հոգևորականներին՝ նա հետագայում ևս իր անվերապահ հարգանքն է ցուցաբերել Հայ եկեղեցուն ու նրա ականավոր ներկայացուցիչներին, ինչպես, օրինակ, Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս Բաբգեն Ա-ին, որի մահվան առիթով 1936-ին վեճ է ունեցել Հայ ճեմարանի մյուս տնօրենի՝ Լ. Շանթի հետ և հրաժարվել դաս անելուց, երբ վերջինս չի ընդունել դասերը դադարեցնելու իր պահանջը[13]:*

## Կյանքի բովում. դրականագետն ու քննադատը

*Մանկության ու պատանեկան տարիներից գործելու ազդակներ ստանալով և տարվելով իր ժողովրդին օգտակար լինելու, նրա առաջադիմության գործին «նվիրված մարտիկներից» մեկը դառնալու գաղափարով[14] երիտասարդ Ն. Աղբալյանը, կյանքին ծանոթ գրեթե բացառապես գրքերից, նետվել է նույն այդ կյանքի մեջ՝ երկու տարի, կարիքից ղրղված, ուսուցչություն անելով Կաղզվանում և Վերին Ագուլիսում, այնուհետև երեք տարի մասնավոր դասեր տալով Թիֆլիսում:*

*Կովկասյան փոխարքայության կենտրոն Թիֆլիսը, ուր հնուց ի վեր մեծ թվով հայեր էին ապրում, XIX դ. վերջին և XX դ. սկզբին դարձել էր Այսրկովկասի հայության մշակութային կենտրոնը և հնարավորություն ընձեռեց երիտասարդ Աղբալյանին՝ ցուցաբերելու իր ամբարած գիտելիքներն ու ունակությունները: Նրա համար, որպես գրական քննադատի և գրականագետի, ճակատագրական է եղել հանդիպումը Թիֆլիսի՝ այդ ժամանակ, թերևս, ամենաազատամիտ ու առաջադեմ «Մուրճ» քաղաքական, հասարակական, գրական ամսագրի խմբագիր Ավետիք Արասխանյանի հետ: «Մուրճ»-ն իր ուղղությամբ լավագույնս էր համապատասխանում Աղբալյանի նախասիրություններին. այդ հեղինակավոր ամսագրի 1896 թ. 9-րդ համարում «Ն. Աղբալեան» ստորագրությամբ տպագրվել է բոլորին անհայտ քննադատի առաջին գրախոսությունն Ակ. Շիրվանզադեի «Կրակը» վիպակի մասին (էջ 1172–1174): «Ա. Արասխանյանի ուշադրությունը երևան է հանում մի չնորհալի ուժ ևս»[15], և ամսագրի հետագա համարներում երեք տարվա ընթացքում տպագրվել են Աղբալյանի մի քանի տասնյակ գրախոսություններ և «Ղուկաղը իբրև տիպ հայ վիպագրության մեջ» ու «Վ. Գ. Բելինսկի» ուսումնասիրությունները, որոնք որոշակի համբավ են բերել երիտասարդ քննադատին: Դա նրան հնարավորություն է ընձեռել*

---

[11] *Ա լ ա ն ե ա ն. 1951, 4:*

[12] *Լեւոն Շանթը իր մասին. 1960, 32:*

[13] *«Ալիք» (Թեհրան), 03. I. 1973:*

[14] *Տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 1989, 114, Ա ն ա ն յ ա ն. 2002, 13:*

[15] *Ա ն ա ն յ ա ն. 2002, 24:*

*ծանոթանալու Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի, Ղ. Աղայանի, Լ. Շանթի և Դ. Դեմիրճյանի հետ ու դառնալու 1899 թ. դեկտեմբերին հիմնադրված «Վերնատան» անդամներից մեկը[16]: «Վերնատուն»-ը, անկասկած, նույնպես իր բացառիկ ազդեցությունն է թողել երիտասարդ քննադատի աշխարհայացքի մշակման գործում, նրա գեղագիտական հայացքների հետագա զարգացման վրա:*

*1900-ական թվականներն Աղբալյանի համար նշանավորվել են կանոնավոր համալսարանական կրթություն ստանալու ջանքերով, ինքնակրթությամբ և իր կոչումն ու տեղը կյանքում գտնելուն ուղղված անդուլ աշխատանքով: 1900–1901 թթ.[17] որպես ազատ ունկնդիր նա սովորել է Մոսկվայի համալսարանի պատմալեզվաբանական բաժնում, 1902–1904 թթ. Սանկտ Պետերբուրգի գրադարաններում և պահոցներում նյութեր է հավաքել իր ապագա գրքերի՝ «Հայոց գրականության պատմության» համար: 1904 թ. Ն. Աղբալյանն անդամագրվել է ՀՅԴ-ին:*

*30 տարին դեռ չբոլորած գրականագետ-քննադատը մեծ ծրագրեր ուներ: «Այս՝ համարձակվում եմ ասել, հսկա ձեռնարկությունը (Պետերբուրգում նյութեր հավաքելը – Ա. Մ.) մի նախապատրաստական աշխատանք է իմ ապագա հոդվածների, կենսագրությունների, բնորոշումների և՝ իբր վախճան ու վերջնական նպատակ այս ամենի՝ «Հայոց նոր գրականության պատմություն», եթե մի կերպ Վիեննա ընկա, և «Ռուսահայ գրականության պատմություն», եթե այս քանդված երկրում փտելու դատապարտվիմ վերջնականապես»[18],– Պետերբուրգից գրել է Ավ. Իսահակյանին 1902 թ. դեկտեմբերի 6-ին: Այս մտահղացման իրագործումով նա հակված էր բոլորին ներկայացնելու հայ գրականության, հայ մշակույթի համամարդկային արժեքը, բացահայտելու հայ ժողովրդի ազգային ոգին ու նկարագիրը՝ մատնանշելով հայ լինելու և հայ մնալու ուղիներն ու դրանով իսկ հերքելով իր մեկ այլ նամակում արտահայտած դժգոհությունը. «Ոչ ոք չի մտածում, որ հայը պիտի հայ մնա և ցույց տա իրան աշխարհին ոչ իբրև եվրոպացի, այլ իբրև հայ»[19]: Բայց ճակատագիրն այլ բան էր նախանշել երիտասարդ մտավորականի համար. իր վիճակը 1904-ի հունվարի 7-ին Պետերբուրգից Թումանյանին գրած նամակում ներկայացրել է այսպես. «… մեր Ավետիքը մի լավ բան ունի ասած.*

---

[16] *1900 թ. մարտին Ն. Աղբալյանը նամակ է գրել Ավ. Արասխանյանին, որից երևում է՝ նա ծանոթ է Հովհ. Թումանյանի հետ (Աղբալյան. 2003, 23–24): Աղբալյանի՝ վերնականներին, ինչպես նաև վերնականների՝ միմյանց գրած նամակներում խմբակի անդամների առնչությամբ արտահայտված ջերմությունից ակնհայտ է, որ Աղբալյանը եղել է նրա հիմնադիր անդամներից (տե՛ս Աղբալյան. 2003, 26, 29, 33, 36, 38, 44, Հովհաննիսյան. 2007, 43–51, Իսահակյան. 2017, 47–56 և այլն):*

[17] *Գ. Անանյանն Աղբալյանի Մոսկվա գնալը վերագրել է 1899 թ. (Անանյան. 2002, 25), որը նշել է ինքը՝ Աղբալյանն ինքնակենսագրության մեջ (ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28): Բայց դա ակնհայտ վրիպում է (տե՛ս Անանյան. 2002, 25, Աղբալյան. 2003, 35–38, ինչպես նաև 24–44 էջերի մյուս նամակները):*

[18] *Աղբալյան. 2003, 28:*

[19] *Աղբալյան. 2003, 35:*

**Սազը չի թողնում, որ հայդուկ դառնամ,**
**Սուրը չի թողնում, որ աշուղ դառնամ:**

*Հիմի իմն է դառել. դասը չի թողնում, որ գրող դառնամ, գիրը չի թողնում — հացատեր դառնամ… »[20]: Նա ստիպված էր միաժամանակ մի քանի գործ անել, ինչը բնորոշ է եղել նրան ողջ կյանքի ընթացքում: 1906–1907 թթ. ուսանել է Լոզանի համալսարանում, բայց նյութական անապահովությունը խափանել է բարձրագույն կրթություն ստանալու բոլոր ծրագրերը. 1907-ի փետրվարին Լոզանից Թումանյանին գրած հերթական աղաչական նամակը «պարտքակոխ և սովակոխ եղած»[21] Աղբալյանն ավարտել է դառը խոստովանությամբ. «Այ քեզ նամակ. փոխանակ գրականությունից և այլն գրելուց, գրում եմ չորս երես դրամի մասին. գրականությունը սիրելու համար էլ պետք է կուշտ լինել»[22]: Տարիներ անց նա նույնպես եկել է հայ հեղինակի համար անեծք դարձած այն մտքին, որ «գրելու համար մարդու միտքը պետք է ազատ լինի ամեն տեսակ ոչ գրական հոգսերից, այլապես լավ բան չի դուրս գա գրանից»[23]: Եվս երկու տարի անց Ա. Չիլինգարյանին գրած մեկ այլ նամակում նա ցավով արձանագրել է իր համակերպումը ճակատագրին. «Վերջապես՝ ամեն մարդ իր ճակատագիրն ունի, իմն էլ այս է. — գրող ծնվել և ամեն բան անել, բացի գրականությունից»[24]:*

*Այստեղ Աղբալյանը, իհարկե, իրավացի չէ. և՛ 1900-ական թվականներին, և՛ հետագայում նա կուսակցական, հանրային, պետականաշինական, մանկավարժական գործունեությանը զուգընթաց, այնուամենայնիվ, ինչ-որ չափով նաև «գրականություն է արել», գրել է բազմաթիվ գրախոսություններ ու հոդվածներ, այդ թվում՝ Ա. Զեխովի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի և Լ. Տոլստոյի մասին, որոնք նրա քննադատական-վերլուծական գրվածքների լավագույն նմուշներից են: Իսկ 1912 թ. հոկտեմբերին, երբ Թիֆլիսում ստեղծվել է Հայ գրողների կովկասյան ընկերությունը, ակտիվորեն մասնակցել է նրա աշխատանքներին՝ դառնալով ընկերության գրական երեկույթների հերթակալ (պատասխանատու)[25] և ասուլիսների պխավոր դեմքերից:*

*1913 թ. մարտի 14-ին ընկերության 6-րդ երեկույթում «Ժողովրդական երգիչ Սայաթ-Նովան» թեմայով նա կարդացել է դասախոսություն, որը ներկաների կողմից ընդունվել է ծափերով, իսկ հետո ներկա հասարակության խնդրանքով երգել է Սայաթ-Նովայի «Դուն էն գլխեն իմաստուն ես» երգը՝ կրկին արժանանալով ջերմ ծափահարությունների[26]:*

*Ընդհանրապես 1910-ական թվականների առաջին կեսը բեղմնավոր է եղել Աղբալյան գրական գործչի համար. «Հորիզոն» թերթում և իր հիմնադրած «Նոր*

---

[20] Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 39–40: Իսահակյանի «Մասըս Մանուկը» և «Գողթան քնարը, որ ազատության… » պոեմներից վերցված այս միտքը հետագայում տեղ պետք է գտներ «Պատմութիւն Հայոց գրականութեան» հատորի «Խօսք ընթերցողին» նախաբանում (տե՛ս Ա ղ բ ա լ ե ա ն. 1970, 10):

[21] Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 58:

[22] Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 59:

[23] 1924 թ. հուլիսի 31-ին Ալեքսանդրիայից Արտաշես Չիլինգարյանին գրած նամակից (տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 104):

[24] Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 114:

[25] Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2007, 142:

[26] «Հորիզոն», 20.III.1913: Սա Աղբալյանի միակ դասախոսությունը չէր. նա դասախոսություններ է կարդացել նաև Լ. Շանթի, Գ. Սունդուկյանի, Դ. Դեմիրճյանի և ուրիշների մասին:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*հոսանք» ամսագրում նա տպագրել է հարյուրավոր գրախոսություններ ու գրականագիտական, հրապարակախոսական հոդվածներ, որոնցից չատերում ակնհայտ են գրական և քաղաքական երևույթների խորքը թափանցելու, արժեքավորն անարժեքից, առողջ հատիկը հիվանդից ու որոմից զատելու նրա զարմանալի ունակությունը, հստակ չափանիշները և բարձր ճաշակը: Նա նույնիսկ նոր անվանում է հորինել՝ «տգիտական գրականություն»՝ բնորոշելու համար այն անարժեք գրքերը, որոնք ոչ մի օգտակար բան չեն տալիս մարդու մտքին ու հոգուն և նույնիսկ արհնացնում են նրա մեջ ստոր բնազդներ ու լցնում գլուխը վնասակար մտքերով[27]:*

*1910-ական թվականների երկրորդ կեսին էլ նա հավատարիմ է մնացել իր կոչմանը՝ անդրադառնալով ուշադրության արժանի հեղինակներին ու արժևորելով նրանց ստեղծագործությունը հայ գրականության ապագայի տեսակետից: Այդպիսին են Ստեփան Զորյանի անդրանիկ՝ «Տխուր մարդիկ» պատմվածքների ժողովածուի առաջաբանը և 1919 թ. հոկտեմբերի 16-ին Երևանում Եղիշե Չարենցի մասին կարդացած զեկուցումը[28], որոնք փաստացի արճանագրել են երկու նոր տաղանդների մուտքը հայ գրականություն և, ըստ էության, հանրահռչակել նրանց անունը:*

## Քաղաքական ու պետական գործիչը

*1910-ական թվականների երկրորդ կեսին, սակայն, գրական հարցերը չէին, որ առաջնային էին Ն. Աղբալյանի համար: 1914-ին սկված Առաջին աշխարհամարտն Արևմտյան Հայաստանը վերջապես թուրքական լծից ազատելու հույսեր էր արթնացրել, և խանդավառ հայորդիները կամավորական գնդեր էին կազմավորում՝ ռուսական զորքերի հետ ազատագրելու հայկական հողերը դարավոր ոսոխից: Այդ օրերին Աղբալյանը կամավորական չարժման կիզակետում էր, իր ասելով՝ «1914 թվից վարել եմ կամաւորական գործը իբր Կարգադրիչ Յանձնաժողովի անդամ, իսկ յետոյ իբր պահեստի բաուալիոնի (գումարտակի – Ա. Մ.) պետ»[29]: Այս համեստ բառերի հետևում քրտնաջան գործունեություն և հոգեկան ծանր դրամաներ են թաքնված, որ ներկայացրել է Աղբալյանի օգնականը՝ Ս. Վրացյանը նրա մասին գրած հուշերում. մանրակրկիտ ու անճնվեր աշխատանք՝ հայ կամավորականներին անհրաժեշտ ամեն ինչով ապահովելու, «բարեխիղճ, բծախնդիր ու պարկեշտ» վերաբերմունք իրեն վստահված գործին[30], «սարսափելի տագավորություն» Մեծ եղեռնի մասին լուրերը լսելուց, բայց և մի զարմանալի լավատեսություն, որ «այս աղէտն էլ կ'անցնի»[31], սրտաբուխ աղոթք Նարեկացու գերեզմանին՝ հայ ժողովրդին այդ և վերահաս այլ աղետներից փրկելու համար, և խոր ափսոսանք ու հիասթափություն ռուսական զորքերի նահանջի ու 1916-ին կամավորական գնդերը ցրելու առիթով[32]: Հոգեկան ծանր, «գրեթե խելագարվելու վիճակից», ըստ Վրացյանի, Աղբալյանին փրկել է 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում:*

---

[27] Տե՛ս Աղբալյանի գրախոսությունն Ա. Զանյանի «Լիլի» գրքույկի մասին («Հորիզոն», 02. X. 1912):

[28] Տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 69–70, Գ ա ս պ ա ր յ ա ն. 2022, 384–387 և այլն:

[29] ՀԱԱ, ֆ. 307, ց. 1, գ. 18, թ. 28:

[30] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 70:

[31] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 71:

[32] Վ ր ա ց ե ա ն. 1957ա, 68–72:

*Փետրվարյան հեղափոխությունը շատերի մոտ էր ոգևորություն և մեծ սպասումներ առաջացրել՝ հայության ապագայի տեսակետից համարվելով բարեբախտ իրադարձություն. Աղբալյանը ևս նրանց թվում էր: 1917-ին՝ հեղափոխությունից անմիջապես հետո, Բաքվի «Արև» լրագրում նա հրապարակել է մի շարք քաղաքական հոդվածներ ու վերլուծություններ, որոնցում արտահայտել է իր անվերապահ համակրանքը հեղափոխության նկատմամբ և սպասումները: Բայց Աղբալյանին և մեծ հույսեր փայփայող մյուսներին դարձյալ սպասում էր մեծ հիասթափություն: Օրեր ու ամիսներ անց, երբ պարզվել է ժամանակավոր կառավարության ապիկարության՝ հսկա երկրում կարգ ու կանոն հաստատելու, հարձակվող գերմանացիներին կանգնեցնելու, ժողովրդին հացով ապահովելու և կենսական այլ հարցեր լուծելու գործում, Աղբալյանի խանդավառությունն աստիճանաբար փոխվել է զարմանքի, զարմանքը՝ անհանգստության, և անհանգստությունը՝ տագնապի, մանավանդ, երբ հոկտեմբերի 25-ի հեղաշրջումով իշխանությունը բռնազավթել են բոլշևիկները, և ռուսական կազմալուծված զորքը սկսել է լքել Կովկասյան ճակատը: Այս ամենն արտահայտվել է «Հորիզոն», որի երեք խմբագիրներից էր[33], և իր խմբագրած «Ազատամարտ» ու «Ռազմիկ» լրագրերում հրապարակած հոդվածներում ու վերլուծություններում, որոնք, ինչպես և նրա 1917 թ. հրապարակագրությունն ընդհանրապես, մինչ օրս գրեթե լիակատար անուշադրության են մատնվել, մինչդեռ նրա գրվածքներից շատերն արժանի են լուրջ ուշադրության և գիտական ուսումնասիրության:*

*Թիֆլիսում Աղբալյանի հանրային և քաղաքական բուռն գործունեությունը չի սահմանափակվել միայն հրապարակագրությամբ: Եղել է նախ Ազգային բյուրոյի (Թիֆլիսի ազգային կենտրոնական բյուրո, 1912 թ. հոկտեմբեր – 1917 թ. հոկտեմբեր), ապա նրան փոխարինած Ազգային խորհրդի (Հայոց ազգային խորհուրդ, Արևելահայ ազգային խորհուրդ, 1917 թ. հոկտեմբեր – 1918 թ. հուլիս) անդամ, ակտիվորեն մասնակցել է վերջինիս ստեղծմանը և լծվել տքնաջան աշխատանքի՝ ուղիներ որոնելով ծանր ժամանակներում հայ ժողովրդին նոր աղետներից փրկելու համար:*

*Քաղաքական դեպքերի զարգացումը, ի վերջո, հասցրել է 1918 թ. մայիսի 28-ին՝ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակմանը: Ն. Աղբալյանը, որն իր ազդու խոսքով՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր, միշտ գտնվում էր իրադարձությունների կենտրոնում, ամենաանմիջական մասնակցությունն է ունեցել նաև այդ պատմական իրադարձությանը: Ս. Վրացյանի վկայությամբ՝ Ազգային խորհուրդը Վրաստանի և Ադրբեջանի անկախության հռչակումից հետո (մայիսի 26-ին և 27-ին) կանգնել է պատասխանատու որոշում ընդունելու հրամայականի առջև. պետք էր արագ արձագանքել հարևաններին՝ հռչակելով Հայաստանի անկախությունը, բայց Ազգային խորհրդում կասկածամիտներ ու տատանվողներ կային, որոնց համար թեկուզև բոլշևիկյան Ռուսաստանից կտրվելը չափազանց վտանգավոր էր թվում: Այդ վճռորոշ պահին հենց Աղբալյանն է իր ելույթով կշեռքի նժարը թեքել անկախության հռչակման կողմը[34]:*

*Այսպես է կերտվել պատմությունը, և նրա կերտողներից մեկը գրականագետ ու քննադատ, հռետոր, հանրային ու քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանն*

---

[33] Վ ր ա ց ե ա ն. 1957բ, 52:

[34] Վ ր ա ց ե ա ն. 1957բ, 58:

*էր, որը չուտով դարձել է նաև պետական գործիչ՝ Հայաստանի առաջին խորհրդարանի պատգամավոր (1918-ի օգոստոսի 1 – 1919-ի ապրիլի 27)[35], ապա՝ Հանրային կրթության և արվեստի նախարար (1919-ի օգոստոսի 10 – 1920-ի մայիսի 5): Ե՛վ պատգամավորի, և՛ նախարարի պարտականությունները նա կատարել է իրեն հատուկ բարեխղճությամբ, ակտիվորեն մասնակցել է օրինաստեղծ աշխատանքներին և հանրապետության շուրջ տեղի ունեցող իրադարձություններին՝ իր ուժն ու եռանդը, գիտելիքները և ունակությունները ի սպաս դնելով կյանքը նորաստեղծ հանրապետությունում չաստ թե քիչ բարվոքելու ու երկրի արտաքին անվտանգության գործին: Նա մասնակցել է հանրապետության համար կենսական նշանակություն ունեցող բազմաթիվ հարցերի քննարկմանը, բայց նրա ջանքերն առավելապես ուղղված են եղել երկրում կրթական գործի բարելավմանը: Ըստ Ս. Վրացյանի՝ «Նրան է պատկանում պատիվը Հայաստանի Հանրապետության կրթական գործի կազմակերպությանը: Հայաստանի Խորհուրդի և ապա Խորհրդարանի կրթական-մշակութային գործին վերաբերող բոլոր օրէնքները, կարելի է ասել, Աղբալեանի մտքի դրոշմը կը կրեն իրենց վրայ: Նա անխոնջ աշխատող էր Խորհրդարանական յանձնախմբում և հիանալի զեկուցող Խորհրդարանի նիստերին»[36]: Շատ ավելի արդյունավետ է եղել նրա աշխատանքը Հանրային կրթության և արվեստի նախարարի պաշտոնում: Աղբալյանի նախաձեռնությամբ է խորհրդարանում ընդունվել օրենքը ընդհանուր և պարտադիր ուսուցման մասին, մի շարք այլ նախաձեռնություններով կարգավորվել են կրթական գործը, մշակութային գործունեությունը, դպրոցարանային ու հրատարակչական գործերի կազմակերպումը և այսպես շարունակ[37]: Այս ամենին զուգընթաց՝ նրա ուշադրությունից չի վրիպել նաև գրական գործի կազմակերպումը: Հայ գրողների կովկասյան ընկերության երևանաբնակ անդամների աջակցության նա ստեղծել է գրական նոր ընկերություն, որը կոչվում էր Հայաստանի գրական ընկերություն, և որի նիստերից մեկում էլ 1919 թ. կարդացել է իր նշանավոր զեկուցումը Եղիշե Չարենցի մասին:*

*Այս շրջանում Ն. Աղբալյանի գործունեության պսակը եղավ Հայաստանի (Երևանի) համալսարանի բացումն Ալեքսանդրապոլում 1920 թ. հունվարի 31-ին: Հայաստանի նորանկախ հանրապետության անդրանիկ համալսարանի ստեղծման աշխատանքներն սկսվել էին ավելի վաղ. դեռ 1919 թ. մայիսի 16-ին՝ Աղբալյանի նախարար նշանակվելուց առաջ, ՀՀ կառավարությունը (վարչապետ՝ Ալեքսանդր Խատիսյան) որոշում էր ընդունել Երևանում համալսարան հիմնադրելու վերաբերյալ՝ գումար հատկացնելով այդ նպատակով[38]: Բայց միայն Աղբալյանի նախարար դառնալուց հետո են լուծվել կազմակերպչական բոլոր հարցերը՝ բացի շենքի հարցից, ինչի պատճառով էլ համալսարանը բացվել է Ալեքսանդրապոլի առևտրական գիմնազիայի շենքում: Դասերը սկսվել են փետրվարի 1-ին: Համալսարանի բացումը կայացել է մեծ շուքով, ներկա են գտնվել երկրի նախարարների խորհուրդը ողջ կազմով, արտասահմանյան ռազմական և դիվանագիտական ներկայացուցիչներ, քաղաքների, կոնսակցութ-*

---

[35] Հ ա կ ո բ յ ա ն. 2015, 26, 30:

[36] Վ ր ա ց ե ա ն. 1957գ, 53:

[37] Տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 55–66, Վ ր ա ց ե ա ն. 1957գ, 53:

[38] Ա ն ա ն յ ա ն. 2002, 66:

յունների, հասարակական կազմակերպությունների ու մամուլի ներկայացուցիչներ: Համալսարանի ռեկտոր (տեսուչ), պրոֆեսոր Յու. Ղամբարյանի բացման խոսքից հետո «Հանդէսի նախագահ ընտրուեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Ն. Աղբալեանը, որը մի ճառով բնորոշեց համալսարանի կատարելիք դերը հայ ժողովրդի կեանքում»[39]: Հայաստանի առաջին Հանրապետությունն ապրում էր իր կարճատև պատմության երկրորդ ծանր ձմեռը. այդ պայմաններում համալսարանի հիմնումը բացառիկ սխրանք էր, պատմական մի իրագործություն, որի նշանակությունը դժվար է գերագնահատել: Ն. Աղբալյանն այդ պատմությունը կերտողներից էր, ու նաև այդ պատճառով նրա անունը հավիտյան պետք է հիշվի հայ ժողովրդի մեծագույն զավակների շարքում[40]:

1920 թ. մայիսի 5-ից՝ մայիսյան խռովությունների պատճառով Ա. Խատիսյանի ղեկավարած կառավարության հրաժարականից հետո, Աղբալյանն այլ գործերով էլ է զբաղվել՝ իր նախասիրություններին և հակումներին բոլորովին անհարիր, իր ասելով՝ «նախագահ Կարսի Մայիսեան ապստամբութիւնը վերացնող մասնաճիւղի, Շարուրի ցանքերի բաշխման եւ օգտագործման վարիչ»[41], այն է՝ «բրինձի և լքեալ գոյքերի հաւաքման կոմիսար Շարուրում: Կրթական նախարարը ո՛ւր, բրինձի կոմիսարը ուր ... »[42],– ցավով ու ափսոսանքով գրել է Ս. Վրացյանը:

Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1921 թ. փետրվարի 9-ին, ղրժելով իրենց տված անձեռնմխելիության խոստումը, Հայաստանի նոր իշխանությունները շատերի հետ ձերբակալել են նաև Ն. Աղբալյանին ու բանտարկել Երևանի բանտում: Երկու ամսից էլ պակաս ժամանակամիջոցում նախկին նախարարը երկու անգամ փրկվել է ստույգ մահից, առաջին անգամ՝ փետրվարի 18-ին, երբ ապստամբած ժողովուրդը բանտից ազատել է մտքում կյանքին արդեն հրաժեշտ տված բանտարկյալներին[43], ապա՝ ապրիլի սկզբին, երբ բոլշևիկների՝ երկրորդ անգամ Երևան մտնելուց առաջ քաղաքից փախած հիվանդ Աղբալյանին այլ վախտականներ փրկել են ձյունների մեջ սառչելուց[44]:

## Օտար ափերում. մանկավարժն ու գիտունը

1921 թ. ապրիլին փչած տիկերից չինված լաստերով Արաքսն անցնելով՝ Ն. Աղբալյանը հաստատվել է Թավրիզում և զբաղվել դասախոսություններ կարդալով ու ՀՅԴ պատմության համար նյութեր հավաքելով: 1920-ական թվականները նրա կյանքում նշանավորվել են մանկավարժական և գրական գործունեությամբ, անդուլ աշխատանքով ու նոր պայմաններում իր տեղը գտնելու փնտրտուքով: Նրա համար միշտ առաջնայինը եղել է հայ ոգին վառ պահելու,

[39] «Ժողովուրդ» (Երևան), 04. II. 1920: Աղբալյանի ճառի որոշ մանրամասներ տե՛ս Ա ն ա ն յ ա ն. 2002, 67:

[40] Այսօր Ն. Աղբալյանի բրոնզաձույլ կիսանդրին զարդարում է ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահը՝ խորհրդանշելով ականավոր գործչի դերը համալսարանի հիմնադրման գործում:

[41] Ա ղ բ ա լ ե ա ն. 1948, 204:

[42] Վ ր ա ց ե ա ն. 1957գ, 55:

[43] Մ. Ն. 1921:

[44] Ա լ ա ն ե ա ն. 1951, 16–18:

*հայ լեզուն, գրականությունն ու մշակույթը պահպանելու և սերունդներին փոխանցելու մտահոգությունը: Հենց այդ մտահոգությունն էլ Աղբալյանին և նրա մի խումբ համախոհների ստիպել է 1928 թ. Կահիրեում ստեղծել մի հաստատություն, որն իր վրա կվերցներ այդ ծանր առաքելությունը: 1928 թ. մայիսի 28-ին մի խումբ հայորդիներ, որոնց թվում էին Ն. Աղբալյանը, Լ. Շանթը և 7 այլ գործիչներ, ստեղծել են այդ հաստատությունը՝ անվանելով այն Հայ կրթական և հրատարակչական համազգային ընկերություն (այժմ՝ Համազգային հայ կրթական և մշակութային միություն): 1930 թ. մարտի 3-ին ընդամենը 14 աշակերտների առջև իր դռներն է բացել Բեյրութի Հայ ճեմարանը (այժմ՝ Համազգայինի Մելանքթոն և Հայկ Արսլանյան ճեմարան)՝ Աղբալյանի ու Շանթի ստեղծագործ մտքի ու անկոտրում կամքի երկրորդ արգասիքը, որը չոտտով դարձել է Մերձավոր Արևելքի հայ լավագույն կրթօջախներից:*

*1930 թ. մարտից մինչև իր մահն Աղբալյանն առանց դադարի հայ գրականություն և գրաբար է դասավանդել Հայ ճեմարանում՝ տարբեր դաղթօջախներից ժամանած հայ տղաներին ու աղջիկներով կրթելով ու դաստիարակելով ոչ միայն խոր գիտելիքներով, այլև իր մարդկային բարձր նկարագրով՝ հաճախ զարմացնելով նրանց իր անհատակ իմացության փայլատակումներով ու համեստ անզերազանցելի հոգեորի իր անուրանալի տաղանդով: Շատերը նրանցից, ովքեր բախտ են ունեցել հանրագիտարանային գիտելիքների տեր մանկավարժի ու հոգեորի աշակերտը լինելու, հետագայում մեծ ջերմությամբ են հիշել իրենց ճեմարանական տարիներն ու մեծ ուսուցչին, որն իրեն անմոռացորդ նվիրել էր հայ երեխաների հայեցի կրթության գործին: Նրանց մեջ քիչ չեն եղել հետագայում գրող, խմբագիր, կուսակցական և հանրային գործիչ դարձած պատանիներն ու աղջիկները: Հայ ճեմարանի շրջանավարտների համար, անկասկած, անմոռանալի իրադարձություն են դարձել «վկայականներու բաշխման հանգիստները», որոնցից մեկի ժամանակ՝ մահվանից մեկ տարի առաջ, Աղբալյանը հետևյալ բնորոշ խոսքերն է ուղղել նրանց. «Մեր նպատակը եղաւ պատրաստել եւ հանրութեան տալ գիտակից հայեր: Մենք մեր աչակերտներուն տուած ենք ազգային ոգին. շրջանաւարտներուն կը մնայ այդ ոգին վառ պահել կեանքին մէջ ալ: Մեր գերագոյն ցանկութիւնն է, որ մեր շրջանաւարտները առաջին հերթին գնահատէին Ազգը, ապա միայն ընտանիքը»[45]:*

*Ն. Աղբալյանի՝ որպես Բեյրութի Հայ ճեմարանի նվիրյալի կերպարն ամբողջացնող մեկ փաստ էլ իր գրքում բերել է նրա լավագույն սաներից մեկը՝ Անդրանիկ Ծառուկյանը. 1933 թ., երբ ԱՄՆ-ից ստացվող ֆինանսական միջոցների ուշացման պատճառով Հայ ճեմարանը կանգնել է փակման վտանգի առջև, հենց Աղբալյանի առաջարկով է որոշում ընդունվել կրճատել յոթ մնայուն ուսուցիչների (ներառյալ դասավանդող երկու տնօրեններին) աշխատավարձը, մինչև հասնեն ավելի լավ ժամանակներ[46]: Ավելորդ է ասել, որ առանց այն էլ ցածր աշխատավարձի կրճատումը բացասական հետևանքներ է ունեցել տնօրենների և ուսուցիչների, մասնավորապես՝ Աղբալյանի նյութական վիճակի վրա, որն իր ստացածի մի մասն ուղարկում էր Հայաստան՝ ընտանիքին[47]:*

---

[45] *«Ակօս» (Պէյրութ), 1954, № 8, 70:*

[46] *Տե՛ս Ծ ա ռ ո ւ կ յ ա ն. 2019, 143–144:*

[47] *Տե՛ս Ա ղ բ ա լ յ ա ն. 2003, 166–170:*

*1930–1940-ական թվականներին ևս մանկավարժությանը զուգահեռ Ն. Աղբալյանը զբաղվել է գրական աշխատանքով, հանդես է եկել ելույթներով ու դասախոսություններով, աշխատակցելով տարբեր պարբերականների՝ գրել է հոդվածներ և ուսումնասիրություններ՝ իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնելով հայոց լեզվի ու իր սրտին այնքան մոտ հայ հին գրականության: 1937 թ. Բեյրութում լույս է տեսել «Բանասէրի յուշադիւրը» գիրքը՝ նվիրված հայոց լեզվի ուսումնասիրությանը, 1944-ին՝ «Պատմութիւն Հայոց գրականութեան» գիրքը, իսկ 1951-ին՝ արդեն նրա մահից հետո՝ «Դասախոսութիւններ հայ մատենագրութեան մասին» գիրքը, որոնք ուղղակի վկայությունն են նրա լեզվաբանական ու գրականագիտական բացառիկ ունակությունների և այսօր էլ ընթերցվում են մեծ հետաքրքրությամբ: Գուցե նոր գրքեր ևս ստեղծեր նրա բեղուն գրիչը, եթե 1947-ին չընդհատվեր նրա կյանքի թելը: «Յոյս ունիմ, որ այս թերատ վաստակով պիտի կարենամ խառնուիլ Բանի սպասաւորաց երամին եւ արժանի լինել յիշատակութեան նրանց հետ եւ նրանց շարքում»[48],– իրեն հատուկ համեստությամբ գրել է «Պատմութիւն Հայոց գրականութեան» գրքի «Գիրք և գրիչ» գլխի վերջում: Իր կյանքով և գրական ժառանգությամբ Աղբալյանն անվերապահորեն նվաճել է այդ իրավունքը:*

## Մեծ տառապյալը

*Տարիների հեռվից ուսումնասիրելով Ն. Աղբալյանի կյանքի զիգզագները, նրա գործունեությունն ընդհանրապես և ամփոփելով նրա կյանքի հետագիծը՝ մի բնական հարց է առաջանում. երջանի՞կ մարդ էր արդյոք Նիկոլ Աղբալյանը: Նա, անկասկած, երջանկության բազմաթիվ պահեր է ապրել իր ոչ կարճ կյանքի ընթացքում, բայց երջանկությունը հարաբերական բան է, և մարդ չի կարող իր ողջ կյանքում երջանիկ լինել, մանավանդ իր ազգի համար ապրող մարդը, առավել ևս՝ իր ազգի համար ապրող հա՛յ մարդը: Աղբալյանի պարագայում այս ճշմարտությունն ավելի քան ակնհայտ է. նա երկար տարիներ ապրել է հայրենիքից և ընտանիքից հեռու՝ երկու մեծ ցավ, որ տասնամյակներ շարունակ կրել է սրտում: Թափառել է երկրից երկիր, մինչև որ Լիբանանի հյուրընկալ հողը դարձել է իր երկրորդ հայրենիքը:*

*Իսկ ընտանի՞քը ... Ընտանիքն այդպես էլ մնացել է Խորհրդային Հայաստանում՝ երկրում, որն այլևս իրենը չէր: Ճիշտ է, Երևանը լքելուց առաջ տնեցիներին խոստացել էր՝ «Մի՛ անհանգստացեք. ես կվերադառնամ, կանցնի մեկ-երկու տարի՝ կվերադառնամ»[49], բայց չվերադարձավ ո՛չ մեկ-երկու տարի, ո՛չ էլ երկար տարիներ անց: Խորհրդային իշխանությունը 1922-ին փորձ է արել նրան հայրենիք վերադարձնելու, այդ նպատակով նույնիսկ թռչյուն են տվել նրա կնոջը՝ Հրարփիին, այցելել Թավրիզ ու տեսակցել ամուսնուն[50]: Բայց Աղբալյանը չի ցանկացել վերադառնալ. հավանաբար, նրա հիշողության մեջ դեռ թարմ էին Երևանի բանտում կրած սարսափները: Այնուհետև երկար տարիներ անց՝ 1945 թ. հունիսին, Էջմիածնում կայացած Համազգային եկեղեցական ժողովի կողմից*

[48] Ա ղ բ ա լ ե ա ն. 1970, 236:
[49] Ա ն ա ն յ ա ն. 2002, 77:
[50] Վ ր ա ց ե ա ն. 1957դ, 42, Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1993:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*Ամենայն հայոց կաթողիկոս ընտրված Գևորգ Զ Զորեքչյանը և ժողովի պատվիրակ Ավ. Իսահակյանը Փարիզից ժամանած պատվիրակ Արտավազդ արքեպիսկոպոսի միջոցով, ենթադրվում է՝ կառավարության անունից, կրկին հրավիրել են Աղբալյանին Հայաստան, ու նա կրկին մերժել է[51]: Այս մերժումը, սակայն, հակասում է նրա երկար տարիների բարեկամ Խոսրով Թյությունճյանի վկայությանը, թե «Նիկոլ Աղբալեան հեռացաւ մեզմէ, պարտաստուն և հիասթափ՝ հայկական Սփիւռքէն, հայեացքը հայրենիքին ուղղած, ուր զօրաւոր փափաք ունէր իր հարուստ կեանքի վերջին օրերը անցնելու»[52]:*

*Ինչևէ, նա աչքերը հավիտյան փակել է հայրենիքից ու ընտանիքից հեռու, քանի որ գիտակցաբար չի ցանկացել (կամ չի կարողացել) վերադառնալ, իսկ կնոջն ու երեք երեխաներին, հակառակ ձեռնարկված փորձերին, թույլ չեն տվել հեռանալ Հայաստանից՝ հայտարարելով. «Դուք կմնաք որպես պատանդներ, որպեսզի Ձեր ամուսինը այնտեղ կուսակցական գործունեություն չծավալի»[53]: Իշխանությունների այս քայլը մասամբ աշխատել է. Աղբալյանը թեև չի հրաժարվել կուսակցական գործունեությունից, բայց Խորհրդային Միության ու Խորհրդային Հայաստանի նկատմամբ չի ցուցաբերել այն մարտնչող անհանդուրժողական, թշնամական վերաբերմունքը, որը ցուցաբերել են Շանթը և բազմաթիվ այլ վտարանդիներ: Նույն Խ. Թյությունճյանի վկայությամբ՝ «Ն. Աղբալեանը առանձին դուրգուրանքով և խանդավառութեամբ կը վերաբերէր հայրենադարձ չարժումին և մեծ հոյսեր կը կապէր անոր»[54]:*

*Ն. Աղբալյանի երեք երեխաներն այդ նույն ժամանակ զրկված էին հայրական սիրուց, հայր, որը հեռվից հեռու հետևել է իր երեխաների մեծանալուն ու կարեցածի չափ օգնել նրանց, բայց նրա սիրտն ու հոգին այդ երկարաձիգ տարիների ընթացքում ծվատել է անափ ու անփարատելի կարոտը: «Նա մեծ մի վիշտ ունէր եւ չէր բաժանում ուրիշների հետ»[55],– գրել է հուշագիրներից մեկը: Սակայն այդ վիշտը՝ ապրելը հայրենիքից ու ընտանիքից հեռու, և իր տառապանքը ուրիշներից թաքցնելն անհնար էր: Եվ հաճախ են միայնության մեջ կամ հավաքույթների ժամանակ նրա չուրթերից հնչած կարոտի երգին միացել աչքերից թափվող կարոտի արցունքները. «Շատ ստեն հավաքույթներուն պ. Աղբալյանը չատ դարդոտ երկու կարոտի երգ ուներ. ծխիկը վառած կերգեր ու արցունքները կհոսեին այտերեն վար, իրեննները հիշելով…*

Ասում ես դիմացիր,
Ես ոնց դիմանամ,
Թղթիկ մ՚ալ չես գրում
Դարդերդ իմանամ»[56]:

---

[51] *«Ակօս» (Պէյրութ), 1947, ԻԱ–ԻԲ, 148–149, Լ ա զ ե ա ն. 1949, 272:*

[52] *Տե՛ս Թ ի ւ թ ի ւ ն ճ ե ա ն. 1947, 5:*

[53] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1993:*

[54] *Թ ի ւ թ ի ւ ն ճ ե ա ն. 1947, 5: Խոսքը 1946 թ. սկսված, այսպես կոչված, Մեծ հայրենադարձության մասին է, որի ժամանակ՝ 1946–1948 թթ., հայրենիք եկան 90 հազար սիյուռքահայեր:*

[55] *Մ ա ր ո ւ թ ե ա ն. 1977, 2:*

[56] *Ա ն ա ն յ ա ն. 2002, 82–83, Լ ա զ ե ա ն. 1949, 272, Ժ ա մ կ ո չ ե ա ն. 1954, 32:*

*Իսկ մահից հետո հազուստի գրպաններից մեկում հայտնաբերել են կնոջ՝ Երևանից ուղարկած խմբանկարը՝ ինքն ու արդեն մեծացած երեք երեխաները…*

*Այսպես է ապրել ու տառապել հայ մտքի լավագույն մշակներից մեկը, և նա, իրավամբ, արժանի է խոնարհումի ոչ միայն բեղուն գործունեության ու գրական ժառանգության, այլև մեծ տառապանքի ու այդպես էլ չփարատված կարոտի համար:*

## Հավերժի ճամփորդը. դժվար վերադարձ

*Կենդանության օրոք և մահից հետո Սիլյուքում Ն. Աղբալյանը հարգանքի ու սիրո պակաս չի զգացել: Եղել է սիրված մանկավարժ, հանրային ու քաղաքական գործիչ, դասախոս և ընկեր, պարզապես հայ մարդ, որի հետ հետաքրքիր էր խոսելն ու չփվելը: Նրա գործունեությունը՝ անցյալ և ներկա, խոսքի ուժը, մարդկային կերպարն ու տխուր ճակատագիրը իր անձի շուրջ ստեղծել են սիրո, ակնածանքի, գնահատանքի ու մեծարանքի մի լուսապսակ և ստիպել 20 հազար մարդու՝ հայերի ու ոչ միայն, մասնակցել նրա թաղման հանդեսին 1947 թ. օգոստոսի 19-ին Բեյրութի Ազգային գերեզմանատունը (աննախադեպ և հետագայում էլ չկրկնված երևույթ)[57]: Բայց Աղբալյանի իսկական մեծությունը զգացվել է նրա մահից հետո թեև. սկսվել են նրա գրական, մանկավարժական, հանրային, քաղաքական և պետական գործունեության գնահատումն ու արժևորումը: Աղբալյանի մասին գրվել են տասնյակ հուշեր ու հոդվածներ, տպագրվել են նրա գրականագիտական աշխատությունները ու, իր բառով ասած, գրաքաոտականները, քաղաքական և հրապարակախոսական հոդվածներն ու ելույթները, կայացել են նրա հիշատակին նվիրված սգահանդեսներ: Սիլյուքահայ մտավորականներն ու գործիչները և առաջին հերթին նրանք, ովքեր տարիներ շարունակ աշխատել էին Աղբալյանի հետ (Ս. Վրացյան, Գ. Իփեկյան և ուրիշներ) և աշակերտել նրան (Մուշեղ Իշխան, Գ. Բանյան, Ա. Ծառուկյան և ուրիշներ), իրենց գրվածքներում բացահայտել են Աղբալյան քննադատի, գրականագետի, պատմաբանի, քաղաքական և պետական գործչի, մանկավարժի և գեղագետի տեղն ու դերը XIX դ. վերջի – XX դ. առաջին կեսի հայ գրական, քաղաքական, պետական, հանրային կյանքում, հայ երեխաներին ազգային կրթության տալու գործում, ընդգծել նրա գործունեության ու գրական ժառանգության մնայուն արժեքը և կարևորությունը Սիլյուքում հայ ոգին վառ պահելու, հայ լեզուն ու մշակույթն անխոնջ պահպանելու ու զարգացնելու գործում:*

*Գնահատականները, որ տրվել են Ն. Աղբալյանին, ընդհանուր առմամբ, ճիշտ են ու հիմնավորված, թեև երբեմն գրված լինելով նրա մահվան անմիջական ազդեցության տակ՝ կրում են զգացական բնույթ: Աղբալյանը կրթել է սերունդներ, «մասնաւորապէս Միջին Արեւելքի մեր երիտասարդ մտաւորականները մեծ բան կը պարտին Նիկոլի չունչին և լուսաւոր միտքերուն»[58],– գրել է Գ. Լազյանը: Բայց միայն Մերճավոր ու Միջին Արևելքի հայությունը չէ, որ կրել է Աղբալյանի զաղափարների ազդեցությունը և առաջնորդվել դրանցով: Նա մտքի առաջնորդ է եղել աշխարհասփյուռ ողջ հայության համար և այդպիսին է մնացել իր մահից հետո դեռ երկար ժամանակ, ինչպես բնութագրել է*

[57] *Ժամկոչեան. 1954, 33:*
[58] *Լազեան. 1949, 271:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*նրան Բեյրութի «Ազդակ» օրաթերթը մահվան 13-րդ տարելիցի առիթով տպագրված առաջնորդողում. «Աղբալեան խորհրդանիշ մըն է, հայ ժողովուրդի անմահութեան հանդէպ մեր հաւատքը զօրացնող անզուգական դեմք մը, որ քուրմի մը ջերմեռանդութեամբ մօտեցաւ իր դաւանած միակ կրօնքին՝ հայ ժողովուրդին և անոր ստեղծագործող հանճարին»[59]:*

*Մայր հայրենիքում կենդանութեան օրոք Ն. Աղբալյանին հազվադեպ են հիշել, մահից հետո էլ տասնամյակներ շարունակ նրա անունն ու վաստակը հետևողականորեն անտեսվել են: Այդպես շարունակվել է գրեթե մինչև 1970–1980-ական թվականները, երբ հայտնի գրականագետներ Էդ. Ջրբաշյանի և Ժ. Քալանթարյանի գրքերում կարճ անդրադարձներով[60], և Գ. Անանյանի «Նիկոլ Աղբալյանը քննադատ» դասախոսությամբ ու հոդվածներով, նրա նամակների հրապարակումով սկսվել է Աղբալյանի ուշացած, բայց անխուսափելի «վերադարձը» հայրենիք: Մանավանդ Գ. Անանյանի հետևողական ջանքերի շնորհիվ սառույցը կոտրվել է, հետագա տարիներին՝ արդեն Հայաստանի անկախացումից հետո, լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ Ն. Աղբալյանի կյանքի ու գործունեության վերաբերյալ, իսկ 2000-ական թվականներին տպագրվել են նրան նվիրված մենագրություններ, Աղբալյանի երկու հատորները՝ «Նամակներ, պաշտոնական գրություններ» և «Ընտրանի» (2005), «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցության մասին» աշխատությունը (1992 և 2005), կազմվել է 1896–1920 թթ. մամուլում տպագրված երկերի մատենագիտությունը: Այս ամենը լուրջ ներդրում է աղբալյանագիտության մեջ և տալիս է շատ հարցերի պատասխաններ: Այդուհանդերձ, այս ասպարեզում դեռևս շատ բան է մնում անելու. նրա կյանքի ու գործունեության որոշ դրվագներ բավականաչափ լուսաբանված չեն, գրական ժառանգության՝ առայժմ հասարակության անծանոթ կամ քիչ հայտնի երկերի ուսումնասիրության ու արժևորման հարցը նույնպես արդիական է:*

*1991 թվականից Երևանում գործում է ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միությունը, նույն թվականին Երևանի № 19 դպրոցը (նախկին Ն. Կրուպսկայայի անվան դպրոցը) կոչվել է Նիկոլ Աղբալյանի անունով, Հայաստանի գրողների միությունը սահմանել է ամենամյա «Նիկոլ Աղբալյան» գրական մրցանակ գրականագիտության բնագավառում ճեռք բերված նվաճումների համար, իսկ 2005 թ. նոյեմբերին Երևանում տեղի է ունեցել գիտաժողով՝ նվիրված Աղբալյանի ծննդյան 130-ամյակին, որի մասնակիցներն ամենայն ուշադրությամբ քննության նյութ են դարձրել մեծ մտավորականի կյանքի և գործունեության, գրական ժառանգության արժևորմանն ուղղված բազմաթիվ հարցեր: Այս ամենը հայրենիքի ուշացած, բայց ոչ անտեղի երախտագիտությունն է իր կյանքը հայ ժողովրդին անմնացորդ նվիրած գործչին:*

*Ի վերջո, հայրենիքն էլ է Աղբալյանին մատուցել այն հարգանքը, որին նա Սկյուռքում արժանացել էր տասնամյակներ առաջ: Գնահատականների, բնութագրումների և մեծարանքի խոսքերի մեջ կարելի է նկատել նրան տրված մի բնորոշում, որը հաճախ է հանդիպում և որը նրան լավագույնս է բնութագրում՝*

---

[59] «Ազդակ» (Պէյրութ), 13. VIII. 1960:

[60] Տե՛ս Ջրբաշյան. 1979, 163–167, Քալանթարյան. 1986, 362–365:

*հայ ոգու կրող: Հայ լեզվի, հայ եկեղեցու, հայ գրականության ու մշակույթի, հայոց պատմության խոր իմացություն, պաշտամունք և քարոզ՝ ահա հայ ոգու տարածված ըմբռնումը, որը գեղեցիկ ձևակերպել է Գ. Իփեկյանը. «Իր պաշտածը Հայաստիանն էր, հայ մշակույթը իր բոլոր տեսակներով, հայ կրօնը, հայ եկեղեցին, հայ լեզուն, հայ պարը, հայ գիրը, հայ պատմութիւնը, հայ գրականութիւնը իր բոլոր երեսներով, հայ երաժշտութիւնը, որուն բոլոր նրբութիւններուն թափանցած էր, հայ ճարտարապետութիւնը, ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅ ՄԱՐԴՆ ԷՐ, իր առաւելութիւններով ու թերութիւններով, որոնք յաճախ կը բղխէին իր առաւելութիւններէն»[61]: Սակայն գեղեցիկ բառերի, բնորոշումների ու բնութագրերի տակ, որպես կանոն, անհասանելի է մնում Աղբալյանի հայ ոգին իր խորքային ըմբռնումով՝ որպես հայի ազգային, անցյալից եկող համապարփակ նկարագիր, և չեն ընդգծվում ու կարևորվում այդ նկարագրի պահպանման՝ Աղբալյանի մատնանշած միջոցներն ու ուղիները՝ որպես հայության ներկան ու ապագան երաշխավորող անհրաժեշտ կուվան: Թերևս մինչ այժմ այդ ոգուն ամենից շատ մոտեցել և նրա խորքային բաղադրիչները բացահայտել է հայտնի գրականագետ Սերգեյ Սարինյանը 1993 թ. գրած իր «Նիկոլ Աղբալյան. գրականագետը, մտածողը, գործիչը» հոդվածում, որտեղ նա նշել է Աղբալյանի «մտավոր որոնումների փիլիսոփայական առանցքը» ամբողջացնող գաղափարը, որի հայտնաբերմանը հետամուտ է եղել նա. «Դա ազգային ոգու, հայոց հոգևոր ու ֆիզիկական կերտվածքի էթնիկական ինքնությունն է»[62]: Այդ ինքնությունն Աղբալյանը հայտնաբերել է հայ ժողովրդի առասպելապատմական անցյալում՝ որպես «հայկական հատկություն», որը միավորում է չորս բաղադրիչ՝ «1. ըմբոստություն, բռնության չհանդուրժելը, 2. անկախության բուռն սերն ու ոգին, 3. չինարարության պաշտամունք, 4. ընտանեկան պատվի սրբություն, հավատարմություն, այլ ցեղերի հետ խառնվելու պժգանք»[63]: Գրականագետը նշել է, ըստ Աղբալյանի, դարերից եկող հայ ոգին ներկայում և ապագայում պահպանելու միակ գրավականը՝ հայ նոր սերնդի ձևավորումը. այդ սերնդի նպատակը պետք է լինի վերադարձնել հային իր պատմական հայրենիքը, և այս գաղափարի խորհրդանիշը Մայիսի 28-ն է՝ հայի դարավոր երազանքների, ձգտումների, ազատասիրության, արժանապատվության, ճիգերի ու տառապանքների ապացույցը. սխրանք, որն իրրև արժեք պետք է փոխանցվի սերնդեսերունդ[64]:*

## Եզրակացություն

*Նիկոլ Աղբալյանն այն բացառիկ գործիչներից է, որոնք իրենց կյանքով ու գործունեությամբ արժանիորեն վաստակել են հայ մշակույթի, հայ գրականության և քաղաքական կյանքի պատմության մեջ իրենց արժանի տեղն ունենալու իրավունքը: Որպես գրականագետ ու քննադատ՝ նա արժևորել է հայ գրականության բարձրարժեք ստեղծագործությունները՝ ճանաչում ապահովե-*

[61] *Իփեկեան. 1951, 9:*
[62] *Սարինյան. 2002, 233, 236:*
[63] *Սարինյան. 2002, 236–237, Աղբալեան. 1970, 278:*
[64] *Սարինյան. 2002, 239:*

*լով մի շարք հեղինակների համար: Որպես մտավորական, հանրային, քաղաքական ու պետական գործիչ՝ նա ամեն ինչ արել է հայ ժողովրդի կյանքը բարվոքելու, նրա ներկան ու ապագան ազատ ու անվտանգ դարձնելու համար: Որպես մանկավարժ՝ նա հիմնադրել է երկու նշանավոր կրթօջախներ՝ Երևանի համալսարանն ու Բեյրութի Հայ ճեմարանը, կրթել ուսումնածարավ հայորդիների բազմաթիվ սերունդներ, որոնց ներարկել է հայ ոգին միշտ վառ պահելու, հայ լեզուն, գրականությունն ու մշակույթը սիրելու իր պատգամները:*

*Անվանի մտավորականի ու գործչի գրական ժառանգությունն ու գաղափարները, լուսավոր մտքի ճառագումներն այսօր էլ՝ նրա մահից գրեթե 80 տարի անց, չեն կորցրել իրենց այժմեականությունը և կարող են մեծապես օգտակար լինել հայ ժողովրդին իր կյանքի տարբեր բնագավառներում:*

**Արմեն Մանուկյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տեքստաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ նոր և նորագույն գրականություն, հայ բանահյուսություն, եվրոպական գրականություն: Հեղինակ է ավելի քան 20 հոդվածի:**
ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ազդակ» (Պէյրութ), 13. VIII. 1960:

Ալանեան Ա. 1951, Նիկոլ Աղբալեան. – «Հայրենիք» (Պոսթոն), № 11, էջ 1–18:

«Ալիք» (Թեհրան), 03. I. 1973:

«Ակօս» (Պէյրութ), 1947, № ԻԱ–ԻԲ, էջ 148–149, 1954, № 8, էջ 70:

Աղբալեան Ն. 1944ա, Սայաթ-Նովային հետ. – «Ազդակ» շաբաթօրեակ, 03. III:

Աղբալեան Ն. 1944բ, Սայաթ-Նովային հետ. – «Ազդակ» շաբաթօրեակ, 10. III:

Աղբալեան Ն. 1946, Աւետիք Իսահակեան, դասախոսություն 1946 թ. հունվարի 26-ին՝ նվիրված Իսահակյանի ծննդյան 70-ամյակին. – «Ազդարար» (Պէյրութ), 09. II:

Աղբալեան Ն. 1948, Ինքնակենսագրական տեղեկութիւններ. – «Հայրենիք», տարեգիրք-տօնացոյց 1948 (Պոսթըն), էջ 204–205:

Աղբալեան Ն. 1970, Ամբողջական երկեր, հ. IV, Պատմութիւն Հայոց գրականութեան, Պէյրութ, «Համազգային» հայ մշակութային ընկերակցութեան հրատ., 500 էջ:

Աղբալյան Ն. 1989, Հիշատակարան. – «Մշակույթ» (Երևան), № 2–3, էջ 112–115:

Աղբալյան Ն. 2003, Նամակներ, պաշտոնական գրություններ (կազմեց և ծանոթագրեց Գ. Անանյանը), Երևան, «Հայաստան» հրատ., 276 էջ:

Անանյան Գ. 2002, Նիկոլ Աղբալյան, Երևան, ԵՊՀ հրատ., 313 էջ:

Աստուածատրեան Ա. 1947, Նիկոլ Աղբալեան. – «Հայրենիք», № 6, էջ 54–61:

Արշակունի (Յովհաննիսեան) Ա. 1951, Ն. Աղբալեանի կեանքի վերջին օրերը. – «Հայրենիք», № 2, էջ 75–82:

Գասպարյան Դ. 2022, Եղիշե Չարենցի բանաստեղծությունները (1912–1922). – Եղիշե Չարենց. Երկերի ժողովածու 13 հատորով, հ. 1, Երևան, «Անտարես» հրատ., էջ 343–390:

Թիւթիւնճեան Խ. 1947, Նիկոլ Աղբալեան. – «Ազդարար», 06. IX:

Ժամկոչեան Յ. 1954, Լ. Շանթ եւ Ն. Աղբալեան. – «Ակօս», № 11–12, էջ 28–32:

«Ժողովուրդ» (Երևան), 04. II. 1920:

Իսահակյան Ա. 2017, «Վերնատան» զավակները, Երևան, «Գիտություն» հրատ., 64 էջ:

Իփեկեան Գ. 1951, Նիկոլ Աղբալեան. – Աղբալեան Ն., Դասախօսութիւններ հայ մատենագրութեան մասին, Պէյրութ, «Համազգային մշակութային ընկերութեան» հրատ., էջ 6–9:

Լազեան Գ. 1949, Դէմքեր հայ ազատագրական շարժումէն, Գահիրէ, տպ. «Յուսաբեր», 398 էջ:

Լեւոն Շանթը իր մասին. 1960. – «Հայրենիք», № 4, էջ 24–34:

Ծառուկյան Ա. 2019, Հակադիր երկվորյակներ՝ Շանթ-Աղբալյան. – Լևոն Շանթ. Մարդը և գործը, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., էջ 141–159:

Հակոբյան Ա. 2015, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանական կառավարման փորձը. – «Վէմ» (Երևան), № 4, էջ 22–40:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 307, ց. 1, գ. 18:

Հովհաննիսյան Ա. 1993, Աղբալյանների ընտանիքը. – «Հայություն» (Երևան), 01–15. IV:

Հովհաննիսյան Ս. 2007, Թումանյանը և Հայ գրողների կովկասյան ընկերությունը, Երևան, «Գիտություն» հրատ., 340 էջ:

«Հորիզոն» (Թիֆլիս), 02. X. 1912, 20. III. 1913:

Մ. Ն. 1921, Սարսափի օրերը Երեւանի բանտին մէջ. Բանտարկեալի մը յիշատակները. – «Ճակատամարտ» (Կ. Պոլիս), 12. XI:

Մարութեան Մ. 1977, Նիկոլ Աղբալեան. – «Ալիք», 19. V:

Զրբաշյան է. 1979, Գրական քննադատություն. – Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 138–245:

Սարինյան Ս. 2002, Նիկոլ Աղբալյան. գրականագետը, մտածողը, գործիչը. – Հայոց գրականության երկու դարը, գիրք 3-րդ, Երևան, «Զանգակ-97» հրատ., էջ 231–140:

Վրացեան Ս. 1957ա, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 9, էջ 62–72:

Վրացեան Ս. 1957բ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 10, էջ 49–58:

Վրացեան Ս. 1957գ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 11, էջ 51–59:

Վրացեան Ս. 1957դ, Նիկոլ Աղբալեանի մասին. – «Ակօս», № 12, էջ 41–47:

Վրացեան Ս. 1964, Բան մը Սայաթ Նովայի մասին. – «Բագին» (Պէյրութ), № 1, էջ 40–41:

Քալանթարյան ժ. 1986, Հայ գրականագիտության պատմություն (5–19-րդ դարեր), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 428 էջ:

## REFERENCES

Aghbalean N. 1944a, Sayat’-Novayin het. – «Azdak» shabat’oreak, 03. III. (In Armenian).

Aghbalean N. 1944b, Sayat’-Novayin het. – «Azdak» shabat’oreak, 10. III. (In Armenian).

Aghbalean N. 1946, Avetik’ Isahakean, dasakhosut’yun 1946 t’. hunvari 26–in, nvirvats Isahakyani tsnndyan 70-amyakin. – «Azdarar» (Peyrut’), 09. II. (In Armenian).

Aghbalean N. 1948, Ink’nakensagrakan teghekut’yunner.– «Hayrenik’» taregirk’-tonats’uyts’ 1948 (Post’yn), ej 204–205 (In Armenian).

Aghbalean N. 1970, Amboghjakan yerker, h. IV, Patmut’yun Hayots’ grakanut’ean, Peyrut’, «Hamazgayin» hay mshakut’ayin ynkerakts’ut’ean hrat., 500 ej (In Armenian).

Aghbalyan N. 1989, Hishatakaran. – «Mshakuyt’» (Yerevan), № 2–3, ej 112–115 (In Armenian).

Aghbalyan N. 2003, Namakner, pashtonakan grut’yunner (kazmets’ yev tsanot’agrets’ G. Ananyany), Yerevan, «Hayastan» hrat., 276 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

«Akos» (Peyrut'), 1947, № IA-IB, ej 148–149, 1954, № 8, ej 70 (In Armenian).

Alanean A. 1951, Nikol Aghbalean. – «Hayrenik'» (Post'on), № 11, ej 1–18 (In Armenian).

«Alik'» (T'ehran), 03. I. 1973 (In Armenian).

Ananyan G. 2002, Nikol Aghbalyan, Yerevan, YePH hrat., 313 ej (In Armenian).

Arshakuni (Hovhannisean) A. 1951, N. Aghbaleani keank'i verjin orery. – «Hayrenik'» (Post'on), № 2, ej 75–82 (In Armenian).

Astvatsatrean A. 1947, Nikol Aghbalean. – «Hayrenik'», № 6, ej 54–61 (In Armenian).

«Azdak», 13. VIII. 1960(In Armenian).

Gasparyan D. 2022, Yeghishe Ch'arents'i banasteghtsut'yunnery (1912–1922). – Yeghishe Ch'arents', Yerkeri zhoghovatsu 13 hatorov, h. 1, Yerevan, «Antares» hrat., ej 343–390 (In Armenian).

Hakobyan A. 2015, Hayastani arajin hanrapetut'yan khorhrdaranakan karavarman p'vordzy. – «Vem» (Yerevan), № 4, ej 22–40 (In Armenian).

Hayastani azgayin arkhiv, f. 307, ts'. 1, g. 18 (In Armenian).

«Horizon» (T'iflis), 02. X. 1912, 20. III. 1913 (In Armenian).

Hovhannisyan A. 1993, Aghbalyanneri yntanik'y. – «Hayut'yun» (Yerevan), 01–15. IV (In Armenian).

Hovhannisyan S. 2007, T'umanyany yev Hay groghneri kovkasyan ynkerut'yuny, Yerevan, «Gitut'yun» hrat., 340 ej (In Armenian).

Ip'ekean G. 1951, Nikol Aghbalean. – Aghbalean N., Dasakhosut'yunner hay matenagrut'ean masin, Peyrut', «Hamazgayin mshakut'ayin ynkerut'ean» hrat., ej 6–9 (In Armenian).

Isahakyan A. 2017, «Vernatan» zavaknery, Yerevan, «Gitut'yun» hrat., 64 ej (In Armenian).

Jrbashyan E. 1979, Grakan k'nnadatut'yun. – Hay nor grakanut'yan patmut'yun, h. 5, Yerevan, HSSH GA hrat., ej 138–245 (In Armenian).

K'alant'aryan Zh. 1986, Hay grakanagitut'yan patmut'yun (5–19-rd darer). – Yerevan, Yevani hamalsarani hrat., 428 ej (In Armenian).

Lazean G. 1949, Demk'er hay azatagrakan sharzhumen, Gahire, tp. «Husaber», 398 ej.

Levon Shant'y ir masin. 1960. – «Hayrenik'», № 4, ej 24–34 (In Armenian).

M. N. 1921, Sarsap'i orery Yerevani bantin mej. Bantarkeali my hishataknery. – «Chakatamart» (K. Polis), 12. XI. (In Armenian).

Marut'ean M. 1977, Nikol Aghbalean. – «Alik'», 19. V. (In Armenian).

Sarinyan S. 2002, Nikol Aghbalyan, grakanagety, mtatsoghy, gortsich'y. – Hayots' grakanut'yan yerku dary, girk' 3-rd, Yerevan, «Zangak-97» hrat., ej 231–140 (In Armenian).

Tsarukyan A. 2019, Hakadir yerkvoryakner, Shant'-Aghbalyan. – Levon Shant'. Mardy yev gortsy, Yerevan, «Tigran Mets» hrat., ej 141–159 (In Armenian).

T'yut'yunchyan Kh. 1947, Nikol Aghbalean. – «Azdarar» (Peyrut'), 06. IX. (In Armenian).

Vrats'ean S. 1957a, Nikol Aghbaleani masin. – «Akos» (Peyrut'), № 9, ej 62–72 (In Armenian).

Vrats'ean S. 1957b, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 10, ej 49–58 (In Armenian).

Vrats'ean S. 1957c, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 11, ej 51–59 (In Armenian).

Vrats'ean S. 1957d, Nikol Aghbaleani masin. – «Akos», № 12, ej 41–47 (In Armenian).

Vrats'ean S. 1964, Ban my Sayat' Novayi masin. – «Bagin», № 1, ej 40–41 (In Armenian).

Zhamkoch'ean H. 1954, L. Shant' yev N. Aghbalean. – «Akos», № 11–12, ej 28–32 (In Armenian).

«Zhoghovurd» (Yerevan), 04. II. 1920 (In Armenian).

## НИКОЛ АГБАЛЯН: ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ

АРМЕН МАНУКЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Никол Агбалян, Тифлис, Саят-Нова, армянская средневековая литература, литературоведение, министр, эмиграция, Армянский лицей Бейрута.*

Никол Агбалян (1875–1947) – один из выдающихся армянских деятелей конца XIX и первой половины XX века, литературовед, критик, общественный, политический, государственный деятель и педагог. На его становление как человека, армянина и деятеля большое влияние оказали место его рождения – квартал Авлабар в Тифлисе, творчество Саят-Новы, армянская средневековая литература, европейская и русская литература и критическая мысль, неоценима также роль Армянской Апостольской церкви. Начало литературной деятельности Агбаляна восходит к 1896 г., когда была опубликована его рецензия в тифлисском журнале «Мурч». За годы долгой творческой деятельности им были написаны сотни литературных, критических, публицистических и лингвистических работ, многие из которых не потеряли своего значения и в наши дни.

Во второй половине 1910-х годов Агбалян, по велению времени, больше занимался политической деятельностью, был одним из организаторов армянских добровольческих полков, затем – членом Национального бюро (1912–1917) и сменившего его Национального совета (1917–1918). В мае 1918 года он активно участвовал в процессе обретения Арменией независимости: сначала стал депутатом парламента, а в 1919–1920 годах развернул широкую деятельность в качестве министра народного образования и искусств Республики Армения.

В апреле 1921 года, после установления советской власти в Армении в декабре 1920 года, Агбалян эмигрировал в Персию. В течение долгих лет эмиграции, постоянно испытывая ностальгию по родине, он занимался в основном педагогической и литературной деятельностью. В мае 1928 года, в день 10-й годовщины независимости Армении, вместе с Левоном Шантом и еще семью единомышленниками он основал Армянское образовательное

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

и издательское общенациональное товарищество (ныне Общенациональный армянский образовательный и культурный союз), которое по сей день успешно продолжает свою деятельность. В 1929 году Агбалян и Шант открыли в Бейруте Армянский лицей, где многие поколения армян диаспоры получили образование на родном языке. В этом же учебном заведении Агбалян до конца своих дней преподавал армянскую литературу и древнеармянский, прививая армянским детям любовь к родному языку и литературе, армянской истории и культуре.

За свою плодотворную деятельность Агбалян снискал огромную любовь и уважение в диаспоре, между тем в Советской Армении о нем вспомнили лишь в конце 1970-х годов. «Возвращение» на родину произошло уже после обретения Арменией независимости в 1991 году, и сегодня он по праву занимает достойное место в ряду известных армянских деятелей.

*Армен Манукян – к. ф. н., старший научный сотрудник отдела текстологии Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: новая и новейшая армянская литература, армянский фольклор, европейская литература. Автор более двадцати статей.*
*ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am*

## NIKOL AGHBALYAN: LIFE AND ACTIVITY

ARMEN MANUKYAN

### Summary

*Keywords: Nikol Aghbalyan, Tiflis, Sayat-Nova, Armenian medieval literature, literary studies,minister, emigration, Armenian Lyceum in Beirut.*

Nikol Aghbalyan (1875–1947) was one of the outstanding Armenian figures of the late 19th and first half of the 20th centuries, a literary critic, public and political figure, statesman and teacher. His formation as an individual, an Armenian and public figure was greatly influenced by his birthplace (Havlabar quarter in Tiflis), the art of Sayat Nova, Armenian medieval literature, European and Russian literature and critical thought; it should be also mentioned the priceless role of the Armenian Apostolic Church. Aghbalyan's literary activity began in 1896 with a review published in the «Murch» journal in Tiflis. Over the years of his long creative activity, he wrote hundreds of literary, critical, journalistic and linguistic works many of which have not lost their importance even today.

In the second half of the 1910s, Aghbalyan, at the behest of time, was more involved in political activities, he was one of the organizers of the Armenian volunteer regiments, then he was a member of the National Bureau (1912–1917) and then a member of the National Council (1917–1918) that succeeded the

National Bureau. In May 1918, he actively participated in the process of gaining Armenia's independence; first, he became a member of the Parliament and in 1919–1920, he launched extensive activities as Minister of Education and Arts of the Republic of Armenia.

In April 1921, after the establishment of the Soviet power in Armenia in December 1920, Aghbalyan immigrated to Persia. During the long years of immigration, constantly feeling homesick, he was mainly engaged in pedagogical and literary activities. In May 1928, on the day of the 10th anniversary of Armenia's independence, he, together with Levon Shant and seven other like-minded people, founded the Armenian Educational and Publishing Nationwide Partnership (now Nationwide Armenian Educational and Cultural Society), which successfully continues its activities to this day. In 1929, Aghbalyan and Shant opened the Armenian Lyceum in Beirut, where many generations of Diaspora Armenians received education in their mother tongue. In this same educational institution, Aghbalyan taught Armenian literature and old Armenian until the end of his days, instilling in Armenian children love for their native language and literature, Armenian history and culture.

For his fruitful work, Aghbalyan earned great love and respect in the Diaspora, while in the Soviet Armenia his name was remembered only in the late 1970s. His "return" to his homeland took place after Armenia gained independence in 1991, and today he rightfully occupies his worthy place among the great Armenian figures.

*Armen Manukyan – Candidate of Philological Sciences, Senior Researcher at the Textology Derartment of the M. Abeghyan Institute of Literature of NAS RA. Scientific interests: modern and contemporary Armenian literature, Armenian folklore, European literature. Author of more than twenty articles.*
*ORCID: 0000-0002-3050-1055. armenmanukyan@litinst.sci.am*

Պատմավրանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

ՀՏԴ : 929:891.981 Թումանյան + 947.925

Doi:10.54503/0135-0536-2025.2-124

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆԱՎԱՐՏ ԵՐԿԵՐՈՒՄ
## (Պատմական դրամաներ և պատմվածքներ)*

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, Հայոց պատմություն, պատմական դրամաներ, Անիի կործանումը, «Արտավազդ Բ», «Հովհաննես Թագավոր» կամ «Սմբատ Բ», «Պատերազմի տպավորություններից»:**

**Ամփոփում**

*Հովհաննես Թումանյանի պատմափիլիսոփայական աշխարհայեցողությունն արտահայտվել է անավարտ երկերում, որոնք առայսօր առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել, թեև տպագրվել են բանաստեղծի 2022 թ. «Երկերի լիակատար ժողովածուի» V հատորում: Գրողի պատմագիտական հայացքների քննաբանությունն ունի արդիական նշանակություն և պայմանավորված է վերջին տարիներին անվտանգային խնդիրների սրվելով՝ հայ ազգի և նրա պետականության դեմ արտաքին ուժերի չավարտվող պատերազմով: Թումանյանի պատմական անավարտ ողբերգություններից պահպանվել են «Արտավազդ Բ» և «Հովհաննես Թագավոր» կամ «Սմբատ Բ» դրամաները, որոնք ներկայացնում են Հայոց պատմության բեկումնային շրջանները: Արտաշես արքայի անեծքի և նրա երախտամոռ որդու՝ Արտավազդի տրտունջի հիմքում բանաստեղծը դրել էր իշխանության ու փառքի համար պայքարի գաղափարը: «Հովհաննես Թագավոր» ողբերգությունում հեղինակը մատնանշում է Անիի կործանման ներքին մի շարք պատճառներ: «Պատերազմի տպավորություններից» շարադրանքում բարձրացվում է մարդկային անհատականության ոչնչացման խնդիրը: Այդ ընդհանուր խորագրի տակ բանաստեղծը ներկայացրել է գեղարվեստական երեք երկերի ուրվագիծը: Ավարտվելու դեպքում կստեղծվեր պատերազմի թեմայով պատմվածքների մի շարք, որը, սակայն, մնաց բանաստեղծի հերթական անկատար ծրագրերից: Այնուամենայնիվ, պահպանված պատառիկներն անգամ վկայում են պատերազմի տեսակների, նրա տարբեր կողմերի մասին թումանյանական մեկնությունը, որն արժեքավոր է իբրև հումանիստ մտածողի ներդրում համաշխարհային գիտական ու գեղարվեստական մտքի պատմության մեջ:*

* *Ներկայացվել է 20. I. 2025 թ., գրախոսվել է 13. II. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

**Նախաբան**

*Պատմությունը բազմիցս իր տարատեսակ անդրադարձներն է ունեցել Հովհ. Թումանյանի թե՛ գիտական ուսումնասիրություններում, թե՛ գեղարվեստական երկերում: Այս կամ այն չափով ավարտուն գործերին անդրադարձներ եղել են, սակայն առանձին քննության նյութ չեն դարձել անավարտ գիտական ու գեղարվեստական երկերը, որոնք կարևոր նշանակություն ունեն ոչ միայն Թումանյանի աշխարհայացքի ու կենսափիլիսոփայության բացահայտման առումով, այլև իբրև Հայոց պատմության ամենատարբեր շրջանների մասին տաղանդավոր մտածողի գիտական հարցադրումներ, վերլուծություններ ու իրենց գիտական արժեքը պահպանած մոտեցումներ:*

*Հովհ. Թումանյանի հետաքրքրությունը մեծ է եղել ինչպես հայ ժողովրդի բազմադարյան պատմության, այնպես էլ նրա առանձին թագավորությունների, հատկապես՝ Վանի, Կիլիկիայի և Բագրատունյաց իշխանությունների պատմության, հայոց թագավորական տների ճակատագրի ու համազգային կարևորության պատմաքաղաքական զրեթե բոլոր խնդիրների հանդեպ: Եվ այդ ամենին նա անդրադարձել է թե՛ իր պատմագիտական ուսումնասիրություններում, հրապարակախոսական հոդվածներում, թե՛ գեղարվեստական երկերում և, նույնիսկ, նամակներում:*

*Պատմության իմացության անհրաժեշտության գիտակցումը երիտասարդ տարիներից բանաստեղծին մղել է պատմական թեմաներով երկերի ստեղծման: Մասնավորապես, պատմական ողբերգություններ գրելը երկար տարիներ եղել է Թումանյանի ստեղծագործական ծրագրերի անբաժան մասը: Դրամայի նկատմամբ հետաքրքրությունը նա ցուցաբերել է դեռևս ղպրոցական տարիներին: Այդ մասին վկայում է նրա մանկության ընկերուհին՝ Վարսենիկ Գևորգյանը: Նա գրում է. «Թումանյանն առանձին սեր էր տածում և դեպի դրաման»[1]: Ժամանակակիցների (Լեո, Նվ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Մ. Թումանյան, Դ. Դեմիրճյան, Ս. Գորոդեցկի, Ան. Աբովյան) վկայությամբ՝ Թումանյանը բազմիցս կրկնել է, որ ինքը դրամատուրգի կոչում ունի, թեև դրամաներ չի գրել[2]: 1916 թ. «Ադամյանի օրերից» հուշագրության մեջ Թումանյանն արդեն գրավոր խոստովանել է. « ... ես ինձ ավելի դրամատուրգ եմ համարում քան ուրիշ մի բան»[3]: Իսկ իր գրած դրամաները ոչնչացրել է, քանի որ «Շեքսպիրի գրածների նման չէին դուրս եկել» (Հ. 7, 255): Այդ մասին ասել է նաև Ս. Գորոդեցկուն, որի կարծիքով սեփական ստեղծագործությունը ոչնչացնել կարող է «Ուժերի անսպառ պաշարի տեր բանաստեղծը միայն»[4]: Թումանյանի դրամատիկական երկերից պահպանվել են միայն սևագիր պատառիկներ, ծրագրային նշումներ, աղբյուրներ և աղբյուրագիտական նյութերի գրառումներ: «Պատերազմի տալվորությունները» չարադրանքում Թումանյանը, հստակ սահմանելով պատերազմում հարձակվողի ու պաշտպանվողի միջև տարբերությունը, ուրվագծում է բռնությամբ զորակոչված և պատերազմի զոհ դարձած երկու զինվորի կերպարներ, որոնք ունեն երազներ, անչար հոգի, բայց դառնում են չարիքի արմատ, քանի որ իրենց կամքից անկախ հայտնվել են մեծագույն չարիքի՝ պատերազմի թոհուբոհում: Այս ամենը հնարավորություն է ստեղծում մեկնելու պատմության Թումանյանական ընկալումը:*

---

[1] *Թումանյանը ժամանակակիցների հուշերում (այսուհետ՝ ԹԺՀ). 2019, 202:*

[2] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1997, 345, Նվ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. 2009, 345, ԹԺՀ. 2019, 17, 27, 472:*

[3] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1995, հ. 7, 255: Այսուհետ հիշյալ հատորից կատարված մեջբերումների հատորը և էջը կնշվեն տեքստում:*

[4] *ԹԺՀ. 2020, 505:*

*Բանաստեղծի դրամատիկական փորձերից և «Պատերազմի տպավորություններից» չարաղրանքից մեզ հասած բեկորներն ունեն ոչ այնքան գեղարվեստական, որքան պատմագիտական արժեք, և կարևոր են բանաստեղծի աշխարհայացքի որոշ կողմեր բացահայտելու և Թումանյան մտածողի ստեղծագործական դիմանկարն ամբողջացնելու առումով:*

**«Արտավազդ Բ» և «Հովհաննես Թագավոր» կամ «Սմբատ Բ» դրամաները**

*Երիտասարդ տարիներին Թումանյանը պատմական դրամաներ էր գրել, որոնք մնացել են անավարտ: Դրանք մեզ հասել են հատվածաբար, սևագրությունների տեսքով, սակայն օգնում են բացահայտել Հայոց պատմության, ժողովրդի պատմական ճակատագրի հանդեպ բանաստեղծի մոտեցումները: Ամենևին պատահական չէ, որ նա մտադրվել էր գրել ողբերգություններ հայ ժողովրդի պատմության այնպիսի շրջաններից, որոնցում առավել ակնառու է եղել ազգային անմիաբանության կործանարար հետևանքները: Առաջին դրամատիկական երկի՝ «Արտավազդ Բ»-ի[5] նյութը Հայոց թագավորի ճակատագիրն էր: Ինքը՝ հեղինակը, փաստում է պատմական աղբյուրներն ուսումնասիրելու իր ջանքերը. «1893 թ. մտածեցի մի բան հյուսել մեր աշխարհահռչակ Արտաշես II-ի մեծ վշտերից և նրա մեծ որդու՝ նախանձոտ Արտավազդ II-ի կրքերից: // Այս նպատակի համար սկսեցի ուսումնասիրել Արտաշեսի ընտանեկան կյանքի առասպելախառն և փոթորկալի պատմությունը»[6]: Դիմելով Արտաշես Հոր և նախանձոտ, երախտամոռ որդու՝ Արտավազդի պատմությանը՝ վերջինիս տրտունջի ու հոր անեծքի հիմքում բանաստեղծը դրել էր անմիաբանության, իշխանության ու փառքի համար անառողջ պայքարի գաղափարը:*

*Թումանյանի անձնական գրադարանում և արխիվում պահպանված բազմաթիվ նյութեր վկայում են, թե ինչպիսի մեծ հետաքրքրությամբ ու եռանդով է նա ուսումնասիրել Հայոց պատմությունը: «Տեղեկություններ (1021–1047) Բագրատունյաց թագավորության անկման» խորագիրը կրող բանաստեղծի տետրում նրա ձեռքով նշված են պատմական այն աղբյուրները, որոնք օգտագործել է իր գիտական և գեղարվեստական երկերի համար: Նա հիշատակում է. Ալիշան՝ «Շիրակը», Արիստակես Լաստիվերտցի, Մատթեոս Ուռհայեցի, Ջամչյան՝ «Պատմություն Հայոց», Սմբատ պատմագիր (Գունդստաբլ)[7], Ջալալյան՝ «Ճանապարհորդություն (արձանագրություն)»[8],* Ган[9] «История Грузии средних веков» кн. Баратова, «Известия о кавказских, римских и греческих писателях»»[10]: *Պահպանվել են նաև զանազան նյութեր ու քաղվածքներ պատմական այլ աշխատություններից: Պատմությունը Թումանյանի*

---

[5] *Այդ մասին վկայում է Վրեն քահանա Տաշրացին (Հովհաննես Վերանյան). տե՛ս ԹԺՀ. 2019, 293:*

[6] *Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1994, 18:*

[7] *Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը Երևանում. 1987, 49–51, 81–82, 277, 374–375, 433:*

[8] *Թումանյանը նկատի ունի Սարգիս վարդ. Ջալալյանցի «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» աշխատությունը (Ջ ա լ ա լ յ ա ն ց. 1842, Ջ ա լ ա լ յ ա ն ց. 1858):*

[9] *Տե՛ս* Г а н. 1884; Г а н. 1890.

[10] *Տե՛ս ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Թումանյանի ֆոնդ, № 127:*

*համար գիտությունն էր, որի իմացությունը սկսվում է նրան ճանաչելուց, նրա բնությունը, պատմական հուշարձաններն ուսումնասիրելուց: Բանաստեղծը 1901 և 1904 թթ. ոչ մեկ անգամ եղել էր Անիում, այցելել Գագիկ Ա Թագավորի օրոք (989–1020) կառուցված Մայր տաճարը, եղել պալատի ավերակներում, աշտարակում, Աշոտ Գ Ողորմածի 964 թ. կառուցած «Աշոտաշեն» և Սմբատ Բ-ի կառուցած Ծաղկոցաձոր–Իգաձորի եզրերով Գայլաձորին միացող Սմբատաշեն պարիսպների ավերակներում, Հոռոմոսի նշանավոր վանքում, Գրիգոր Լուսավորիչ, Աբուղամրենց Սբ Գրիգոր, Փրկչի եկեղեցիներում, Կուսանաց վանքում, Տիգրան Հոնեցի այր-դամբարանի սրահներում[11]:*

*Մինչ Անին տեսնելը՝ 1890-ական թվականների վերջին Թումանյանը մտահղացել և գրել է դրամա Անիի պատմությունից՝ նպատակ ունենալով վեր հանել հայոց գահազրկված Բագրատունյաց վերջին թագավորի և կործանված Անիի պատմությունը: Ի սկզբանե բանաստեղծը փորձում էր խորանալ Անիի ողբերգական պատմության պատճառների մեջ և մտադիր էր ստեղծել հայոց այն թագավորի կերպարը, ով Անին իր մերձակայքով կտակեց Բյուզանդիային: Հենց նրա անունով էլ կոչել էր իր պատմադրամատիկական ողբերգությունը՝ «Հովհաննես թագավոր» կամ «Սմբատ Բ», որը պահպանվել է հատվածաբար, սևագիր վիճակում: Ըստ ամենայնի՝ գրվել է 1900–1901 թթ.: Այն դրամատիկական ժանրում Թումանյանի երկրորդ փորձն էր: Բանաստեղծը մտադիր էր «մարդկայնացնել» պատմական անձերին և ստեղծել մարդկային ընդգծված անհատականությունների մասնակցությամբ այնպիսի ողբերգություն, որը, ի վերջո, վեր է աճում պատմական ողբերգության: Բանաստեղծն ընտրել էր Հովհաննես Թագավորի (Սմբատ Բ) տիրապետության ժամանակահատվածը՝ XI դարի սկիզբը՝ 1020–1041 թթ.: Տվյալ ժամանակահատվածն Անիի պատմության փոթորկալից ու ճակատագրական շրջանն էր: Պատմության հենց այդ փուլում առավել սրվեցին ներքին երկպառակությունները Գագիկ Ա Թագավորի որդիների՝ Հովհաննես Սմբատ Թագավորի և նրա եղբայր Աշոտ Դ-ի միջև: Անիի անկման արտաքին պատճառներից հիմնականը սելջուկների արշավանքն էր և դաշնակից Վրաստանին օգնելու պարտավորությունը, բյուզանդական բանակի ներխուժումից հետո Տայքի ապստամբների պարտությունը 1023 թ. և իշխանության վախն ապագա պարտություններից:*

*Թումանյանը, արտաքին գործոններից բացի, մատնանշում է Անիի կործանման ներքին մի շարք պատճառներ. ա) իշխողների ապիկարություն ու անպատասխանատվությունը, բ) ամեն գնով իշխանության հասնելու պայքարը, որը ծնում է, գ) ազգային անմիաբանությունը՝ հանձին Թագավորի և նրա եղբոր երկպառակության, դ) յուրայինների դավաճանությունը, ե) ժողովրդի, հասարակ մարդու դժգոհությունը իշխողներից: Ստեղծելով հիմնականում պլխավոր դերակատարների գեղարվեստական կերպարները՝ բանաստեղծը դրամայում մեկ առ մեկ անդրադառնում է վերոնշյալ պատճառներին:*

*ա) Ապիկարության ու անպատասխանատվության կրողը իշխանությունն է՝ Սմբատ Թագավորը, որը ներկայանում է խաղաղասեր, թույլ ու կամազուրկ, ով չի համապատասխանում Թագաժառանգության իրավունքով ստանձնած իր դերին: Նրան պակասում է պայքարի վճռականությունը, գործելու և իր պարտ-*

[11] *Անի կատարած առաջին և երկրորդ ուղևորության մանրամասները տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2012, 250–256, 336–338:*

*քը մինչև վերջ կատարելու կամքն ու կարողությունը: Միայն այդպիսի բնավորությամբ իշխողը կարող էր Անիի բանալիները հանձնել Բյուզանդիայի Կոստանդին կայսերը և հետագա ողբերգական իրադարձությունների պատճառ դառնալ: Թումանյանի այդ մոտեցումը բխում էր մեր պատմիչների կերտած թագավորի ոչ հերոսական նկարագրից. չափազանց գեր ու դանդաղաշարժ լինելու պատճառով «թանձրամիտ ու թանձրամարմին» բնորոշումները ստացած մի թագավոր, որը միայն արհամարհանքի է արժանի, թեև պատմության մեջ հռչակվել էր նաև «իմաստասեր», քանի որ աչքի էր ընկել կրթության ու գիտության հանդեպ իր սիրով: Նրա անվան հետ է կապվում X դ. կեսերին կառուցված Հոռոմոսի վանքի վերաշինությունը 1038 թ.: Թումանյանը, սակայն, ի տարբերություն մեր պատմիչների, փորձում է ոչ միայն դատապարտել, այլև ցույց տալ մարդուն իր թերություններով ու թուլություններով: Նա ընդգծում է թագավորի լուսավորական հայացքները: Մեզ հասած դրամատիկական երկի սևագիր պատառիկներում Սմբատ թագավորը լուսավորյալ այր է, գիշեր-ցերեկ նստած է մատենադարանում շրջապատված գիտնականներով, որոնց հանձնարարում է ուսումնասիրել օրենսգրքեր, մարդակազմություն և այլն, երազում է կառուցել վանքեր ու դպրոցներ, լույս տարածել, և, կարծես, այնքան էլ մեղք չունի, որ երկիր կառավարել չի կարողանում: Նա իր կամքից անկախ է հայտնվել թագավորական գահի վրա, որն իր տեղը չէ, և չի ցանկանում դիմադրել արտաքին թշնամուն, պատերազմել պարտադրված կռվում: Դավաճանում է հայրենիքինասես ակամա՝ չկարողանալով ճիշտ գնահատել արտաքին ու ներքին մարտահրավերները: Ինչպես երևում է սևագիր գրառումներից, Թումանյանը պետք է ներկայացներ նաև թունավորված արքայազնի անխուսափելի մահվան հանդեպ թագավոր-հոր տառապանքները, որպեսզի ուժեղացներ նրա ապրած անհատական ողբերգությունը:*

*բ) Ըստ Թումանյանի՝ Անիի կործանման մյուս պատճառն ամեն գնով իշխանության հասնելու պայքարն էր: Աչոտ Դ-ն հանուն իշխանության դավաճանում է հարազատ եղբորը և այդպիսով անմիաբանություն սերմանում, վրացիներին խորհուրդ է տալիս հայերից օգնություն խնդրել հունաց կայսեր դեմ, և դրանով մեծացնում թշնամանքը Բյուզանդիայի ու Հայաստանի միջև: Եղբոր մասին խոսելիս թագավորը նրան բնորոշում է «իր թշնամիների եղբայրը»: Այդ պատմական ողբերգության մեջ իշխանատենչությունը ծնում է անմիաբանություն, որն էլ ընկալվում է իբրև հայ ժողովրդին ուղեկցող մեծագույն չարիք:*

*գ) Ազգային անմիաբանության կործանարար լինելն ընդգծելու համար գրողը ներկայացնում է միմյանց դեմ դուրս եկած երկու եղբայրների՝ Հովհաննես-Սմբատի և Աչոտի Դ-ի մոր դրաման. մայր, որը չի կամենում իր որդիներից և ոչ մեկի հաղթանակը: Նա ասում է. «Այդ բոլոր սրերն ու տեգերը իմ սիրտը կտրատելու համար են բերել իմ որդիքը … Ես էլ այնպես կաղոթեմ, որ երբեք չի աղոթել ոչ մի մայր … Աստվա՛ծ, հաղթություն մի՛ տուր իմ որդիներից ո՛չ մեկին»[12]:*

*դ) Թումանյանի գրառումները վկայում են, որ դավաճանությունը, որպես Բագրատունիների անկման պատճառ, ներկայացվելու էր ոչ թե դավաճանների՝ Գետադարձ կաթողիկոսի և Վեստ Սարգիսի՝ թուլակամ թագավորի տխրահռչակ կտակի իրականացմանն ուղղված անխոչընդոտ ջանքերի, այլ դրանց դեմ թագավորի եղբորորդու՝ Գագիկ Բ-ի և Վահրամ Պահլավունու՝ դավաճանների դեմ պայքարի միջոցով, որը, սակայն, արդյունք չունեցավ:*

---

[12] *Թ ու մ ա ն յ ա ն. 2022, հ. 5, 611: Այսուհետ հիշյալ հատորից կատարված մեջբերումների հատորը և էջը կնշվեն տեքստում:*

*ե) Անիի կործանման պատճառներից նույնքան կարևոր էր քաղաքի բազմազգ ու բազմատարր բնակչության դժգոհությունն ու հուզումները իշխանության դեմ: Թումանյանը նկատում է, որ քաղաքի էթնիկ բազմազանությունը նույնպես վտանգ էր ներկայացնում: Թագավորն ասում է, որ Անիում «... հազար մի ազգի ժողովուրդ է ապրում, այս մի անտանելի, վտանգավոր գազանանոց է դարձած» (հ. 5, 605): Եվ փոխանակ ինչ-որ միջոց ձեռնարկելու ստեղծված իրավիրճակից դուրս գալու, բնակչության դժգոհությունը մեղմացնելու՝ թագավորը գնում է աղոթելու: Խաղաղասեր Թումանյանի կարծիքով՝ հայոց թագավորի չափից դուրս խաղաղասիրությունը չարիքի արմատ է դառնում: «—Ես պատերազմն ատեցի, — նա ինձ եղբայրացավ. Ի՞նչ են ուզում այս [մեկ անընթեռնելի] ... վայրենիները ... Ի՞նչ են ուզում» (հ. 5, 606), — ասում է Անիի թագավորը:*

*Այսպես, Թումանյանը հայոց թագավորին չի ներկայացնում որպես միակ մեղավոր: Նրա հերոսը տարբերվում է իր պատմական նախատիպից: Հենց խաղաղ կյանքի աշխարհընկալումն է Սմբատ թագավորին հանգեցնում զիջելու և վերջին հաշվով դավաճանելու իր հայրենիքի շահը: Զգտելով վրացիների հետ բարեկամության հաստատման՝ արքան խորհում է պատգամավոր ուղարկել արտաքին թշնամիների մոտ և հարցնել նրանց. «... Ի՞նչ եք կամենում: Մենք ձեր թշնամին չենք, մենք չենք դիպել ձեր անունին, ոչ էլ ծուռ նայել ենք դեպի ձեր կողմը: Ինչո՞ւ եք դուք սրով ու կրակով գալիս, այո՛, ես ասում եմ, ոչ թե պարտության երկյուղից, այլ այն մտքից, թե ինչո՛ւ պետք է զուր տեղը մարդիկ կորչեն, Ի՞նչ եք ուզում, Ի՞նչ արդարություն է, որ ձեզ առաջնորդում է մեր կողմը այդպիսի նպատակով:*

*Ժողովուրդների անե՞ծքն եք ուզում, ավելի լավ չէ՞ր, եթե օրհնեին» (հ. 5, 610):*

*Անին մշտապես եղել է Թումանյանի ստեղծագործական և պատմագիտական հետազոտությունների ոլորտում: Աբովյանի մասին իր գիտական աշխատության՝ «Երևանի կռիվը և «Վերք Հայաստանին» իբրև պատմություն»-ում[13] էլ նա հիշատակում էր Անիի կործանումը պայմանավորող պատմական հանգամանքները, որոնք առավել հանգամանորեն ու գեղարվեստի լեզվով պիտի բացահայտվեին արդեն «Հովհաննես Թագավոր» դրամայում, եթե, իհարկե, այն ավարտին հասցվեր: Սակայն այն, ինչ պահպանվել է, հստակ պատկերացում է տալիս հայոց թագավորության անկման՝ Թումանյանի պատմական ընկալման մասին:*

## «Պատերազմի տպավորություններից» չարքը

*Մարդկության պատմությունը նաև պատերազմների պատմություն է՝ ազգամիջյան, համաշխարհային, ազատագրական, քաղաքացիական և այլն: Թումանյանն իր կյանքի վերջին երկու տասնամյակներում ոչ միայն ականատեսն է եղել բոլոր տեսակի պատերազմներին, այլև դարձել է անմիջական մասնակիցը: Նա միշտ գտնվում էր պատերազմական իրադարձությունների կենտրոնում ոչ միայն իբրև կողքից դիտող ու արձանագրող, այլև՝ ուղղորդող [հայ թաթրական բախումների (1905–1906 թթ.) չրջանում Լոռիում էր, ցեղասպանության ու եղեռնի տարիներին երկու անգամ՝ 1914 թ. և 1915 թ. ուղևորվել էր Արևմտյան*

[13] *Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 97–235:*

*Հայաստան, ռազմաճակատ, զոյաբանական պայքարի օրերին՝ 1918-ին, Ղարաքիլիսայում գենք է բաժանում և Ղևոնդ երեցի դերում էր, 1921 թ. փետրվար–մարտին Դիլիջանում էր, չփման գծում, ապա Երևանում՝ ազգային համերաշխության հասնելու առաքելությամբ]:*

*Առաջին աշխարհամարտի օրերին՝ ռազմաճակատից վերադառնալուց հետո, Թումանյանը փորձում է իր տպավորություններն արտահայտել գեղարվեստական արձակի կամ գրական ակնարկի ժանրերում: Արդյունքում ստեղծում է գրական ստեղծագործության ու հոդվածի մի խառնուրդ, անավարտ՝ «Ավերակների ու դիակների աշխարհում» վերնագրով, որն այդպես էլ չստացավ մաքրագիր տեսք և չհրապարակվեց գրողի կենդանության օրոք որպես կոնկրետ ժանրի ստեղծագործություն[14]:*

*Թումանյանը եթե բանահյուսական ժանրի գործերում, մասնավորապես՝ էպոսներում, ընդգծում էր պատմության հերոսական բովանդակությունը, կարևորում մաքառումի, տառապանքի ու հերոսացման էջերը, անհատի ճակատագիրը դիտում էր իբրև ժողովրդի ճակատագրի ուշագրավ արդյունք, ապա «Պատերազմի տպավորություններից» չարքի սևագրություններում անդրադառնում է մարդու՝ որպես բանական էակի, նրա անհատականության ոչնչացման խնդրին: Վերջինս հուզել է նաև համաշխարհային գրականության այնպիսի նշանավոր դեմքերի, ինչպիսիք են Անրի (Հանրի) Բարբյուսը («Կրակը», 1916), Էրիխ Մարի Ռեմարկը («Արևմտյան ռազմաճակատում անփոփոխ է», 1929) և այլք:*

*Պատմվածքների չարքի երկի առաջին գրառումներում Թումանյանն ուրվագծում է բռնությամբ զորակոչված և պատերազմի գոհ դարձած երկու զինվորի կերպարներ, որոնք միևնույն երևույթի տարբեր դրսևորումներն են: Նկարագրում է պատերազմական թոհուբոհն ու իրարանցումը, զենքերի աղմուկն ու դժոխային կրակը, զազանացած մարդուց խուճապահար փախչող մարդուն, պատերազմին մասնակից, բայց չուրջբոլոր կատարվող զարհուրանքներից ոչինչ չհասկացող զինվորին, ով հրաման է կատարում՝ դառնալով չարիք, չընկալելով դրա արմատը, զոհվում՝ հասկանալով, որ իր կյանքն արժեք չունի մարտի դաշտում: Գրողի նպատակն էր այդ ամենը լսելի ու տեսանելի դարձնել ամենքին. «Լսում են, լսում են [էն բոլոր մարդիկ, որոնց լսելիքն ու խիղճը] ամենքը, որոնք չեն խլացել թնդանոթների որոտումից [ու պատերազմի չռինդից]: Տեսնում են ամենքը, [նրանք որոնց պայծառ աչքերը վերևից են նայում] որոնք չեն կուրացել [աղմուկով որոտներից բարձրացած փոշուց, թեկուզև հայրենի դաշտերից է էն փոշին] հայրենի դաշտերից բարձրացած փոշուց» (հ. 7, 442):*

*«Պատերազմի տպավորություններից» ստեղծագործությունում զերմանացիներն են գնդակների ու ռումբերի հեղեղ թափում Անտվերպենի վրա, և այնտեղից «... ժողովուրդը դժոխային կրակի մեջ օրհասական խուճապով ալեկոծվում էր, փողոցից-փողոց փախչելով, հրապարակից-հրապարակ խռնվելով, պատից-պատ դիպչելով...» (հ. 7, 443): Անտվերպենը բոլոր այն երկրների*

---

*14 Առաջին անգամ «Պատերազմի տպավորություններից» ստեղծագործությունը՝ որպես հուշագրական-գեղարվեստական ու հրապարակախոսական ժանրերը միաձուլող գրական երկ, հրապարակել է բանաստեղծի դուստրը՝ Նվարդ Թումանյանը (Նվ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. 1941):*

*խորհրդանիշն է, որոնց վրա հարձակում է գործել արտաքին թշնամին: Եվ այդ թշնամին կարող էր նաև նախկին «բարեկամ» ու, նույնիսկ, «հարազատ» լինել կամ այդպիսի դիմակի տակ թաքնված: Անտվերպենից վախչողների մեջ է երկրի խորհրդանիշ Թագուհին, որ, «Հին Հեկուբի նման» վազելով, հարցնում է, թե ով է առաստորեն թափում անվերջ տեղացող դժոխային կրակը: Պատասխանը լինում է կարճ ու հստակ. «– Ձեր եղբայրը, Բավարիայի Ռուպրեխտ իշխանը» (հ. 7, 443): Դրանով հեղինակն արտահայտում էր մարդկությյան ընտանիքում բոլոր ազգերի հարազատական՝ քույր ու եղբայր կապերով միավորված լինելը, հետևաբար՝ ամենքի ապրելու իրավունքը: Կարկուտի պես թափվող ռումբերի տարափի տակ ոչ ոք չի լսում Թագուհուն. «... խոսելու ժամանակ չկար, աչք թարթելու ժամանակ չկար ... » (հ. 7, 443): Ռումբերի պայթյունը խլացնում է մարդկանց, մահ ու ավեր տարածում, սաստկացնում խուճապը և այդ իրարանցման մեջ անհայտ է մնում Անտվերպենի Թագուհու ճակատագիրը: Ամեն ինչ պայմանական է. Թումանյանը կարող էր պատերազմը սանձազերծող երկրի անուն էլ չտալ, ինչպես սովորաբար անում էր՝ երևույթի ընդհանրական լինելն ընդգծելու համար: Սակայն այդ պահին մեծ էր նրա զայրույթը Գերմանիայի դեմ, այդ պատճառով էլ չարիք տարածողի անունը դնում է Գերմանիա: Թագուհու անորոշ ճակատագիրն ավելի է ընդգծում պատերազմի անմարդկային էությունը, հարազատի դեմ դուրս գալը, ոչ մեկին և ոչինչ չխնայելը: Կերպարի ողբերգականությունը չեչտելով՝ հեղինակը կամենում էր նաև հետագայում հանցավորի մեջ խղճի խայթ արթնացնել: Ինչ վերաբերում է Գերմանիային և, առհասարակ, Եվրոպային, բանաստեղծի հիասթափությունը մեծ էր պատերազմի տարիներին: Առաջին աշխարհամարտի հենց առաջին շրջանում՝ 1914–1915 թթ. գրած հոդվածներում («Ապաշավանք», «Վերջին տագնապը» և այլն) բանաստեղծը բարձրաձայնում է ոչ միայն հայերի, այլ տարբեր ազգերի նկատմամբ սկիզբ առնող պատերազմական անմարդկային բռնությունների մասին[15]:*

---

*[15] «Ապաշավանք» հոդվածում դիմելով իր ժողովրդի դարավոր թշնամուն՝ թուրքին և Հայոց եղեռնին մասնակից քրդերին՝ Թումանյանը հեգնանքով «ներողություն» է խնդրում իր ազգի դահիճներից. «Ներեցեք մեզ, ո՛վ քրդեր, ո՛վ թուրքեր, որ 1878 թվականին մենք գնացինք Բեռլին ու գանգատվեցինք ձեր կատարած կողոպուտների, բռնաբարումների, սպանությունների, հրդեհների ու ավերումների դեմ՝ ձեզ անվանելով բարբարոսներ ու գազաններ, իսկ նրանց մարդասեր դատավորներ: ... ստիպված ենք սրտի բեկումով խոստովանելու մեր մխամտությունը և ձեզանից ներողություն խնդրելու ենք խղճության համար, որ դրել ենք ձեր ու քաղաքակիրթ մարդու մեջ» (հ. 7, 147–148): Մարդու դիտակցված, բանականությունից ծնված գազանությունը սարսափեցնում է բանաստեղծին և հանգեցնում տխուր եզրակացության. «Թերևս ազնիվ կլիներ ներողություն խնդրել և գազաններից, որ մարդկային էս բոլոր վայրագություններն անվանել ենք «գազանություն» ... »(հ. 7, 148): Նրա համար եվրոպական լուսավորության մեջ այլևս « ... ոչ աստվածային չունչն է տիրում, ոչ մարդկային խղճմտանքն է թագավորում» (հ. 7, 148): Այդ իսկ պատճառով բարեկեցիկ Բելգիայի բնակիչներն անգամ դարձրել են «Մուչի հայ գաղթականներ» (հ. 7, 153): 1915-ին «Վերջին տագնապը» հոդվածում դարձյալ զուգահեռները բարբարոսի ու քաղաքակիրթ Եվրոպայի միջև է: Եվ եթե քրդերը վխտում են իբրև «լեշակեր ագռավներ» և «պատերազմի սև նախակարապետներ», ապա գերմանացիները դարձել են «նոր-եվրոպական քրդեր»՝ դրսևորելով նույն «ավազակային» վարքագիծը (հ. 7, 156–157):*

*«Պատերազմի տպավորություններից»-ի երկրորդ մասում, որը, ըստ ամենայնի, երկրորդ պատմվածքի ուրվագիծն է, Թումանյանը պատմում է խրամատում նստած մի զինվորի մասին, ով հրացանների ճայթյունից վախենում է գլուխը բարձրացնի. «…երբեմն միայն ծիկրակում էր … տեսնելու, թե ինչ կա իր դեմն ու շուրջը … հրացանն արձակում է դեպի թշնամու դիրքերը: Արձակում էր հենց էնպես, թեկուզ մարդ էլ չսպանվեր …» (հ. 7, 444):*

*Զինվորը, որն անուն չունի, քանի որ խորհրդանիշ է, մտածելու ժամանակ և իրավունք չունի, սակայն միշտ աչքերի առջև մահն է, այդ պատճառով էլ միշտ էլ աչքի առջև է անցած ողջ կյանքը՝ «անցած օրերը, ապրած դեպքերը, սիրելի դեմքերը» (հ. 5, 444): Պատերազմը չարիք է նաև այն պատճառով, որ նա գործ չունի մարդու բարոյական նկարագրի հետ և կարող է հանցագործ ու մարդասպան դարձնել ամենաանմեղ մարդուն. «Ու էնպես անչար էր նրա հոգին, էնպես արի ու անփուլթ, որ պատրաստ էր գրկելու նույնիսկ իրեն գնդակ արձակող թշնամուն … որ զարմանում էր, թե ինչպես են հրացան արձակում … Եվ նա երբեք էլ չէր երազել առաջ էլ, որ ուրիշներին կոտորի: Նա ուրիշ երազներ ուներ՝ պայծառ, բարի, ազնիվ և նրանց մի չնչին մասն էլ չկարողացավ իրագործել կյանքում կամ գոնե պատմել, որ աշխարհքն իմանար, թե ինչ լավ բաներ էր երազում նա» (հ. 5, 444): Եվ զինվորը սպանվում է թշնամու պատահական գնդակից: Նրա անչնչացած դին այլ սպանվածների հետ թաղում են ընդհանուր գերեզմանում, իսկ նույն օրը հրամանատարը վերաշասին հեռագրում է. «Ամեն ինչ անփոփոխ է արևելյան դիրքերում» (հ. 5, 445):*

*«Պատերազմի տպավորություններից» անավարտ շարքի երրորդ ստեղծագործության գրառումները դարձյալ անանուն մի զինվորի մասին են, որն անվերջ, մինչև վիրավորվելն ու հիվանդանոցում մահանալը, մինչև իր վերջին շունչն արթուն, թե զառանցանքի մեջ կրկնում էր. «Ինճանից ի՞նչ են ուզում»: Պատերազմի հոսանքը նրան ասես տանում էր սարսափազդու մի երազի մեջ, որից արթնանալ չէր կարողանում: Այդպիսի տարօրինակ ու զարհուրելի երազ նա դեռ երբեք չէր տեսել:*

*«Պատերազմի տպավորություններից» խորագրով սևագրությունը, ինչպես ասվեց, գեղարվեստական երեք ստեղծագործության ուրվանկար է, որոնք ավարտվելու դեպքում կունենայինք պատերազմի թեմայով պատմվածքների շարք, որոնցից յուրաքանչյուրը պատերազմի տարբեր կողմերի թումանյանական մեկնությունը կլիներ: Բանաստեղծը իրատես էր, ռեալիստ և զգում էր նաև իր ժողովրդին սպասվող արհավիրքները: Նրա համար մարդու կյանքը, առավել ևս հայ մարդու կյանքն ավելի թանկ էր, քան ցանկացած երկրի ու իշխանությունների կամ կոալակցությունների ամենաարդար հավակնությունները:*

## Եզրակացություն

*Թումանյանի անավարտ երկերում, մասնավորապես՝ ղրամաներում («Արտավազդ Բ», «Հովհաննես Թագավոր» կամ «Սմբատ Բ») և պատերազմի թեմայով պատմվածքների («Պատերազմի տպավորություններից» շարք) սևագրություններում, հատակորեն արտացոլվում են բանաստեղծի քաղաքական հայացքները, աշխարհամարտի նկատմամբ վերաբերմունքը, հայ ժողովրդի չափազանց անորոշ ճակատագրի հանդեպ մտահոգությունը: Պատմության թումանյանական ընկալումն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը և դարձել է*

*պատմության դասերը սերտելու հրամայական: Նա մեկն էր համաշխարհային գրականության այն հումանիստ գրողներից, ով իր ձայնն էր բարձրացնում ընդդեմ պատերազմի՝ ստեղծագործություններում ցուցադրելով պատերազմից ծնվող ողբերգությունը:*

**Սուսաննա Հովհաննիսյան – բ. գ. դ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 17 մենագրության և ավելի քան 270 հոդվածների:**
ORCID: 0000-0001-8718-6079. susannahovhannisyan@litinst.sci.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Թումանյան Հովհ. 1994, Երկերի լիակատար ժողովածու, 10 հատորով, հ. 6, Քննադատություն և հրապարակախոսություն (1887–1912), Երևան, «Գիտություն» հրատ., 670 էջ:

Թումանյան Հովհ. 1995, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Քննադատություն և հրապարակախոսություն (1912–1922), Երևան, «Գիտություն» հրատ., 705 էջ:

Թումանյան Հովհ. 1997, Երկերի լիակատար ժողովածու, հ. 9, Նամակներ. 1885–1904, Երևան, «Գիտություն» հրատ., 707 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Ուսումնասիրություններ, օրագրեր, ինքնակենսագրական նոթեր, հոդվածներ, գրառումներ, թարգմ. հատվածներ, Երևան,1999, «Գիտություն» հրատ., 709 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Նամակներ (1905–1922), Երևան, «Գիտություն» հրատ., 769 էջ:

Թումանյան Հովհ. 2022, Երկերի լիակատար ժողովածու, հ. 5, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինստիտ. և Թումանյանի թանգարանի հրատ., 1176 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2019, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինստ. և Թումանյանի թանգարանի հրատ., 624 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2020, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրակ. ինստիտ. և Թումանյանի թանգարանի հրատ., 576 էջ:

Թումանյան Նվ. 1941, Հովհաննես Թումանյան, Պատերազմի տպավորություններից. – «Սովետական գրականություն» (Երևան), № 12, էջ 25–26:

Հովհաննես Թումանյանի անձնական գրադարանը Երևանում. 1987, Մատենագիտական նկարագրություն, գիրք 1, հայերեն գրքեր և պարբերական հրատարակություններ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 584 էջ:

Հովհաննիսյան Ս. Գ. 2012, Հովհ. Թումայնանի կյանքի ու ստեղծագործության պատմությունը (1900–1912) (գիտական կենսագրություն), Երևան, «Գրական էտալոն», 752 էջ:

Ձալալեանց Ս. 1842, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մաս Ա, Տփղիս, տպ. Ներսիսեան հոգեւոր դպրոցի, 235 էջ:

Ձալալեանց Ս. 1858, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Մաս Բ, Տփղիս, տպ. Ներսիսեան հոգեւոր դպրոցի, 517 էջ:

Ган К. Ф. 1884–1890, Известия древних греческих и римских писателей о Кавказе! Собрал и перевел с подлинников К. Ган, Тифлис,Тип. Канцелярии Главноначальствующего гражданской частью на Кавказе: ч. I. т. 1. 1884, От Гомера до 6-го столетия по Р. Х.. Тифлис, 248 с. ч: 2. 1890, Византийские писатели: А. Лазика и Иберия, Тифлис, XIV, 215 с.

REFERENCES

Gan K. F. 1884–1890, Izvestiya drevnikh grecheskikh i rimskikh pisateley o Kavkaze! Sobral i perevel s podlinnikov K. Gan, Tiflis,Tip. Kantselyarii Glavno-nachal'stvuyushchego grazhdanskoy chast'yu na Kavkaze: ch. I. t. 1. 1884, Ot Gomera do 6-go stoletiya po R. X.». Tiflis, 248 s. ch: 2. 1890, Vizantiyskiye pisateli: A. Lazika i Iberiya, Tiflis, XIV, 215 s. (In Russian).

Hovhannes T'umanyani andznakan gradarany Yerevanum. 1987, Matenagitakan nkaragrut'yun, girk' 1, hayeren grk'er yev parberakan hratarakut'yunner, Yerevan, HSSH GA hrat., 584 ej (In Armenian).

Hovhannisyan S. G. 2012, Hovh. T'umaynani kyank'i u steghtsagortsut'yan patmut'yuny (1900–1912) (gitakan kensagrut'yun), Yerevan, «Grakan etalon», 752 ej (In Armenian).

Jalaleants' S. 1842, Chanaparhordut'yun i Metsn Hayastan, Mas A, Tp'ghis, tp. Nersisean hogevor dprots'i, 235 ej (In Armenian).

Jalaleants' S. 1858, Chanaparhordut'yun i Metsn Hayastan, Mas B, Tp'ghis, tp. Nersisean hogevor dprots'i, 517 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 1994, Yerkeri liakatar zhoghovatsu, 10 hatorov, h. 6, K'nna-datut'yun yev hraparakakhosut'yun (1887–1912), Yerevan, «Gitut'yun» hrat., 670 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 1995, Yerkeri liakatar zhoghovatsu, h. 7, K'nnadatut'yun yev hraparakakhosut'yun (1912–1922), Yerevan, «Gitut'yun» hrat., 705 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 1997, Yerkeri liakatar zhoghovatsu, h. 9, Namakner. 1885–1904, Yerevan, «Gitut'yun» hrat., 707 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 1999, Yerkeri liakatar zhoghovatsu, h. 10, Namakner (1905–1922), Yerevan, «Gitut'yun» hrat., 769 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 1999, Yerkeri liakatar zhoghovatsu, h. 8, Usumnasi-rut'yunner, oragrer, ink'nakensagrakan not'er, hodvatsner, grarumner, t'argm. hatvatsner, Yerevan, «Gitut'yun» hrat., 709 ej (In Armenian).

T'umanyan Hovh. 2022, Yerkeri liakatar zhoghovatsu, h. 5, Yerevan, HH GAA M. Abeghyani anv. grak. instit. yev T'umanyani t'angarani hrat., 1176 ej (In Armenian).

T'umanyan Nv. 1941, Hovhannes T'umanyan, Paterazmi tpavorut'yunnerits'. – «Sovettakan grakanut'yun» (Yerevan), № 12, ej 25–26 (In Armenian).

T'umanyany zhamanakakits'neri husherum. 2019, Yerevan, HH GAA M. Abegh-yani anv. grak. inst. yev T'umanyani t'angarani hrat., 624 ej (In Armenian).

T'umanyany zhamanakakits'neri husherum. 2020, Yerevan, HH GAA M. Abegh-yani anv. grak. instit. yev T'umanyani t'angarani hrat., 576 ej (In Armenian).

# ИСТОРИЯ В НЕЗАВЕРШЕННЫХ ПРОИЗВЕДЕНИЯХ ОВАНЕСА ТУМАНЯНА
(Исторические драмы и рассказы)

СУСАННА ОВАНЕСЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Ованес Туманян, история Армении, исторические драмы, падение Ани, «Артавазд II», «Царь Ованес» или «Смбат II», «Впечатления от войны».*

Историко-философское мировоззрение Ованеса Туманяна нашло свое выражение и в его незавершенных произведениях, которые по сей день не стали предметом изучения, хотя и в 2022 г. были изданы в V томе «Полного собрания сочинений» поэта. Критическое осмысление исторических взглядов Туманяна имеет актуальное значение, обусловленное углублением вопросов безопасности в последние годы и непрекращающейся войной внешних сил против армянского народа и его государственности.

Из незавершенных исторических трагедий Туманяна сохранились драмы «Артавазд II» и «Царь Ованес» или «Смбат II», которые отражают переломные периоды армянской истории. В основу проклятия царя Арташеса и жалоб его неблагодарного сына Артавазда поэт заложил идею борьбы за власть и славу. В трагедии «Царь Ованес» автор указывает на ряд внутренних причин падения Ани. В очерке «Впечатления от войны» поэт затрагивает проблему уничтожения индивидуальности человека. Под этим общим заголовком поэт создал эскизы трех художественных произведений. Если бы этот замысел был реализован, мы получили бы серию рассказов на тему войны, однако этот проект остался незавершенным. Тем не менее даже сохранившиеся фрагменты свидетельствуют о туманяновской интерпретации различных аспектов войны, что являет собой ценность в качестве вклада мыслителя-гуманиста в историю мировой научной мысли.

*Сусанна Ованесян – д. ф. н., доцент, ведущий научный сотрудник отдела древней армянской литературы Института литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: история армянской культуры и армянской классической литературы, туманяноведение. Автор 17 монографий, более 270 научных статей.*
*ORCID: 0000-0001-8718-6079. susannahovhannisyan@litinst.sci.am*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

# HISTORY IN THE UNFINISHED WORKS OF HOVHANNES TUMANYAN
(Historical dramas and stories)

SUSANNA HOVHANNISYAN

S u m m a r y

*Keywords: Hovhannes Tumanyan, history of Armenia, historical dramas, fall of Ani, "Artavazd II", "King Hovhannes" (or "Smbat II"), "Impressions of War".*

The historical and philosophical worldview of Hovhannes Tumanyan is reflected in his unfinished works, which have yet to become a subject of scientific study, although, in 2022, they were published in the 5th volume of the poet's "Complete Collection of Works". Critical comprehension of Tumanyan's historical perspectives holds true significance, driven by the intensification of security issues in recent years and the ongoing war of external forces against the Armenian people and their statehood.

Among Tumanyan's unfinished historical tragedies, the dramas "Artavazd II" and "King Hovhannes" (or "Smbat II") have been preserved, which reflect pivotal periods in the history of Armenia. The poet rooted the curse of King Artashes and the grievances of his ungrateful son, Artavazd, in the idea of a destructive struggle for power and glory. In the tragedy "King Hovhannes", the author highlighted several internal causes for the fall of the city Ani. In the essay "Impressions of War", the poet touched upon the issue of the destruction of the individuality of a person. Under the general title, the poet created sketches for three literary works. Had this concept been fully realized, it would have resulted in a series of stories on the theme of war, but this project was not completed. Nevertheless, even the preserved fragments testify to Tumanyan's interpretation of various aspects of war, which is valuable as a contribution of the humanist thinker to the history of the world scientific thought.

*Susanna Hovhannisyan – Doctor of sciences in Philology, Associate Professor, Leading Researcher at the Department of Ancient Armenian Literature of the Institute of Literature after M. Abeghyan of NAS RA. Scientific interests: history of Armenian culture and Armenian classical literature, Tumanyan studies. Author of 17 monographs and over 270 scientific articles.*
*ORCID: 0000-0001-8718-6079. susannahovhannisyan@litinst.sci.am*

ՀՏԴ : 891.981 + 891.56 +398.22

Doi:10.54503/0135-0536-2025.2-137

# ՎԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԽԵՄԱՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՕՍԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ*

ՏՈՐԴ ԴԱՎԱԼՅԱՆ

**Բանալի բառեր՝** էպոս, քառաճյուղ կառուցվածք, ամպրոպային նախակերպար, երկվորյակներ, եռորյակներ, «միհրական» հերոս, գլխավոր վիշապամարտիկ հերոս, մեռնող-հառնող հերոս:

**Ամփոփում**

*Հայոց երեք էպոսները՝ ազգածնական, հեթանոսական ու միջնադարյան-քրիստոնեական, ինչպես և օսական «Նարթյան» էպոսը իրենց վերջնական ձևավորումը ստացել են պատմական տարբեր ժամանակաշրջաններում: «Հայկյանների» ազգածնական էպոսի ձևավորումն ավարտվել է մ. թ. ա. IX–VIII դդ., «Երգք վիպասանաց» կամ «Վիպասանք» հեթանոսական էպոսի կազմավորումը՝ մ. թ. ա. II – մ. թ. I դդ, իսկ «Սասնա ծռեր»-ը՝ վերջնական տեսք ստացել է գլխավորաբար IX–X դդ: Օսական «Նարթյան» էպոսի հիմնական կորիզը կազմավորվել է միջնադարում՝ XIII–XIV դդ., սակայն ամենահին սյուժեների ձևավորումը վերաբերում է սկյութական ժամանակաշրջանին՝ մ. թ. ա. VIII–VII դդ.: Համեմատական առասպելագիտության ու էպոսագիտության մեթոդի կիրառմամբ, մեր և այլ հետազոտողների նախկին աշխատանքների արդյունքները հանրագումարի բերելով, փորձ ենք անում հիմնավորելու այն տեսակետը, որ նշված բոլոր էպոսներում առկա է հերոսների հինգսերնդանի տոհմածառը և քառաճյուղ վիպաբանական կառուցվածքը, ընդ որում՝ բացի առաջին ճյուղից, մյուս բոլոր ճյուղերը հյուսված են մեկ գլխավոր հերոսի շուրջ: Ըստ այդմ՝ տրվում է յուրաքանչյուր սերնդի գլխավոր հերոսի առասպելաբանական նկարագիրը և ամեն մի էպոսում նրա վիպական արտահայտությունը՝ ա. ամպրոպային նախակերպար, բ. երկվորյակ / եռորյակ եղբայրներ, գ. արդարությունն հաստատող հերոս, դ. գլխավոր վիշապամարտիկ, ե. մեռնող-հառնող հերոս: Բանաձևված եզրահանգումն այն է, որ նշված բոլոր էպոսներում առկա են հետևյալ քառաճյուղ կառույցները. «Հայկյանների» էպոսում՝ 1. Հայկ, Արամանյակ-Արամայիս, 2. Ամասիա / Գեղամ / Հարմա, 3. Արամ, 4. Արա Գեղեցիկ, «Երգք վիպասանաց»-ում՝ 1. Ծովինար, Տիգրան, 2. Սանատրուկ, 3. Արտաշես, 4.*

---

* *Ներկայացվել է 18. III. 2025 թ., գրախոսվել է 04. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.: Հոդվածը գրվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ 21AG-6A080 ծածկագրով գիտական նախագծի և «Քաղաքական և մշակութային գործիչների կերպարների վիպականացումն ու արտացոլումը բանահյուսության մեջ» բազային թեմայի շրջանակում:*

*© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*Արտավազդ, «Սասնա ծռեր»-ում՝ 1. Ծովինար, Սանասար-Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր, օսական «Նարթյան» էպոսում՝ 1. Վարխագ, Ախշար-Ախշարթագ, 2. Վըրըզմագ, 3. Բաթրաճ, 4. Սոլան:*

**Նախաբան**

*Վերջին տարիներին հայոց էպոսների վերաբերյալ գրված մի շարք հետազոտությունների հեղինակներ փորձել են ընդհանրացնել և տեսականացնել այդ թեմային անդրադարձած նախորդ բանագետների ու էպոսագետների ուսումնասիրությունները[1]: Նշված նոր հոդվածներում ու գրքերում քննության են առնվել ոչ միայն մեր վերջին գրի առնված էպոսը՝ «Սասնա ծռեր»-ը, այլև նախորդ դարաշրջաններից հայտնի էպոսները՝ «Հայկյանների» մասին պատմող ազգածնական ասքերը, որոնք պահպանվել են հատվածաբար և խիստ պատմականացված չարադրանքով, ինչպես և «Երգք վիպասանաց» էպոսը, որից ունենք գրի առնված ամբողջական բանաստեղծական պատառիկներ:*

*Առասպելագիտական և էպոսագիտական համեմատական ուսումնասիրություններում, ի թիվս այլ հարցերի, նաև հատուկ առանձնացվել են որոշակի վիպաբանական սխեմաներ, որոնք ներհատուկ են մեր տարածաշրջանի էպոսներին[2]: Ընդ որում, այս սխեմաները վերաբերում են նաև կովկասյան էպոսներին, որոնցից հատկապես լավ է հետազոտվել օսական «Նարթյան» էպոսը: Առանձին հետազոտությամբ անդրադառնալով «Սասնա ծռեր»-ի և օսական «Նարթյան» էպոսի համեմատական քննությանը՝ ժամանակին փորձել ենք ճևակերպել ընդհանրությունների՝ այդ թվում վիպաբանական սխեմաների որոշակի ուրվագծեր, իսկ ավելի ուշ այդ համեմատությանն ավելացրել ենք նաև «Երգք վիպասանաց» կամ «Վիպասանք» էպոսի վիպաբանական սխեման[3]: Ընդհանուր եզրահանգումն այն է, որ ինչպես հայոց, այնպես էլ օսերի վիպաբանական մտածողության բնորոշ է գլխավոր հերոսների հետևյալ տոհմածառը՝ ա. ամպրոպային նախակերպար, որ հանդես է գալիս նախահոր կամ նախամոր տեսքով, բ. վերջինիս զավակները՝ ամպրոպային երկվորյակ կամ եռորյակ եղբայրները, գ. արդարության հաստատող առաջին «միհրական» հերոս, դ. գլխավոր վիշապամարտիկ հերոս, որի կերպարն առանցքային է տվյալ էպոսում, ե. արդարության համար մարտնչող երկրորդ «միհրական»՝ մեռնող-հառնող կամ ժայռում փակված հերոս[4]:*

---

*[1] Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2010, 139–148, Դ ա լ ա լ յ ա ն. 2015, 58–65, Դ ա լ ա լ յ ա ն. 2017, 38–53, Դ ա լ ա լ յ ա ն. 2018, 134–135, Հ ա մ բ ա ր ձ ու մ յ ա ն. 2018, Պ ե տ ր ո ս յ ա ն. 2018, 414–425, Հ ա մ բ ա ր ձ ու մ յ ա ն. 2020, 312–326:*

*[2] Պ ե տ ր ո ս յ ա ն. 1997, 29–33, 74–76,* П е т р о с ян. 2002, 124–131.

*[3] Դ ա լ ա լ յ ա ն. 2004ա, 82–87, Դ ա լ ա լ յ ա ն. 2008, 43–44: «Վիպասանք» – «Սասնա ծռեր» – «Նարթյան» էպոս վիպաբանական կառուցվածքային ընդհանրությունը հետագայում փորձել է վերլուծել Ա. Պետրոսյանը հետևյալ հոդվածներում՝ Պ ե տ ր ո ս յ ա ն. 2012, 16–19,* П е т р о с я н. 2014, 48–51.

*[4] Մոտավորապես նույն սկզբունքով՝ Ս. Հարությունյանը «Սասնա ծռեր»-ում առանձնացրել է չորս հիմնական առասպելներ՝ 1. երկվորյակների, 2. ամպրոպային հերոս – վիշապամարտիկի, 3. Միթրա-Միհր աստծո, 4. աստղա-արևային (Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 2004ա, 9), սակայն նա այս չորս առասպելների արձագանքները*

*Շատ հավանական է, որ այս հնգափուլ վիպական կառույցը զարգացած լիներ առավել պարզունակ և վաղնջական առասպելաբանական եռյակից, որը կազմված պետք է լիներ՝ ա. երկնային հին աստված, բ. երկվորյակ զլխավոր վիշապամարտիկ, գ. մեռնող-հառնող հերոս իրարահաջորդ սերունդներից[5]: Ամեն դեպքում, վիպաբանական-առասպելաբանական շղթան ավարտվել է «մեռնող-հառնող» հերոսով:*

## Էպոսների առանձնահատկությունները

*Հատկանշական է, որ «մեռնող-հառնող» կերպարով են եզրափակվում թե՛ «Հայկյանների», թե՛ «Երգք վիպասանաց», թե՛ «Սասնա ծռեր» էպոսների և թե՛ օսական «Նարթյան» դիցավեպի հիմնական հերոսապատումները[6]: Սակայն «Սասնա ծռեր»-ի վերաբերյալ որոշ վիպասացներ տեղեկություններ են հաղորդել, որ այն շարունակվել է նաև «մեռնող-հառնող» կերպարի՝ Փոքր Մհերի ճյուղից հետո և, ընդհանուր առմամբ, բաղկացած է եղել 7 ճյուղից կամ նույնիսկ՝ 40 ճյուղից, որոնք ընկած են եղել երկվորյակների և Մեծ Մհերի միջև[7]: Հետևաբար՝ էպոսի զլխավոր հերոսների թիվը, վիպասացների համաձայն, նույնպես պետք է համապատասխան քանակով լիներ:*

*Այսուհանդերձ, հարկ է նշել, որ նման բազմաճյուղ կառույցներն ավելի շատ բնորոշ են խիստ պատմական էպոսներին և, հատկապես, ազգածնական ասքերին: Նմանաբնույթ ծննդաբանական շարքերի մեջ, մանավանդ՝ էպոսների գրքային-պատմականացված շարադրանքներում, հերոսների սերունդների թիվը սովորաբար ավելի շատ է լինում, բայց և այնպես դրանց մեջ վիպական մտածողությունը, որպես կանոն, առանձնացնում է վերոնշյալ հնգափուլ կառույցը՝ առավել վառ ու ընդգծված կերպարների միջոցով: Երբեմն էլ վիպաբանորեն առանձնացված այդ կերպարները կարող են իրենց մեջ խտացված պահել մի քանի պատմական դեմքերի գործերն ու հատկանիշները:*

*Այսպես, օրինակ, «Հայկյանների» էպոսի խորենացիական պատմական շարադրանքում թվարկվում է հերոսների 10 սերունդ, որոնց մեջ առանձնացվում են՝ թվացյալ ամպրոպային նախակերպարը՝ Հայկը, որին հաջորդում է Արամանյակ-Արամայիս ենթադրյալ «երկվորյակային» զույգը, այնուհետև՝ «միհրական» հերոս կարող են համարվել Ամասիան կամ Գեղամը կամ Հարման, իսկ ամպրոպային զլխավոր հերոսն ակնհայտորեն Արամն է, որին հաջորդում է իր որդի՝ «մեռնող-հառնող» կերպար Արա Գեղեցիկը: Պատմագիրներ Մար Աբաս Կատինայի (մ. թ. ա. II դ.) և Մովսես Խորենացու (V դ.) գրվածքներում ներառված՝ «Հայկյանների» էպոսի հատվածները V դարից հետո արդեն փոխանցվել են զուտ գրական ճանապարհով, և այժմ բավական դժվար է հստակ որոշել, թե*

---

*տեսնում է միաժամանակ տարբեր ճյուղերում, ըստ այդմ՝ տվյալ պարագայում խոսքը չի վերաբերում վիպաբանական սխեմային:*

[5] Петросян. 2002, 124–129.

[6] *Այստեղ միտումնավոր չենք քննարկում հայոց միջնադարյան երկու նշանավոր վեպերը՝ «Պարսից պատերազմ»-ը և «Տարոնի պատերազմ»-ը, քանզի որոշակի բանադիտական չափանիշներից ելնելով՝ դրանք, թերևս, առավել ճշգրիտ կլիներ սահմանել որպես* վիպաչար *և ոչ էպոս: Այս տեսական սահմանազատման մանրամասնումը, սակայն, այլ հոդվածի նյութ է:*

[7] *Տե՛ս Սահակյան. 1975, 61–63:*

*առաջին անգամ ո՛ր դարաշրջանում են դրանք գրի առնվել, մինչև ե՛րբ են բերանացի պատմվել ժողովրդի մեջ, ի՛նչ գեղարվեստական ձևերով ու հնարանքներով են վիպասվել, հերոսների կերպարներն ինչպե՛ս են խմբավորվել ու խտացվել, և էպոսի ժողովրդական տարբերակը քանի՛ հիմնական ճյուղերից է բաղկացած եղել: Ուշագրավ է, սակայն, որ «Հայկյաններ»-ից՝ Արամ դյուցազնին վերաբերող պատումների վերաբերյալ Խորենացին մի տեղ նշում է, որ «փոքր և աննշան մարդկանց» գուսանական երգերից քաղվել էին Արամի մասին քաջագործությունները և զետեղվել Մծբինի արքունի արխիվում, որտեղից էլ հետագայում օգտվել է Մար Աբասը[8]: Մ. Աբեղյանը, հիմնվելով Խորենացու համապատասխան հատվածի բանասիրական քննության վրա, կարծում է, որ այդ «գուսանական» պատմությունը, այլ խոսքերով ասած՝ երգվող էպոսն ընդգրկել է Հայկից մինչև Արամ բոլոր հերոսների մասին սխրագործությունները[9]:*

*Պատկերը զգալիորեն տարբեր է «Երգք վիպասանաց»-ի պարագայում: Սա հայոց ամենահին գրի առնված էպոսն է, քանի որ այստեղ արդեն ունենք բանավոր էպոսից պահպանված ամբողջական բանաստեղծական պատառիկներ, որոնք համարյա բնագրով ներկայացնում են տվյալ ժամանակաշրջանի որոշ ասքերի ժողովրդական բնույթը: Ինչպես բառագիտական քննության հիման վրա նշում է Հ. Աճառյանը, փոխանցված հատվածների լեզուն ակնհայտորեն հարազատ է ժողովրդական երգիչների լեզվին, և մեծ է տարբերությունը Խորենացու «հետմեսրոպյան լեզվից»[10]: Նույն միտքը զարգացնում է Գ. Ջահուկյանը՝ քննելով «վիպասանական հայերենի» բառակազմական և շարահյուսական առանձնահատկությունները[11]: «Երգք վիպասանաց» էպոսում առանձնանում են հետևյալ չորս ճյուղերը՝ 1. Ծովինար և եռոլյակները, որոնցից կրտսերը Տիգրանն է, 2. Սանատրուկ, 3. Արտաշես, 4. Արտավազդ: Արտաշեսին թեև նախորդում են երկվորյակներ Երվանդն ու Երվազը, սակայն նախ՝ նրանք մաս չեն կազմում հերոսների ընդհանուր տոհմածառի, երկրորդ՝ նրանց մասին վիպական գործողություններով պատումները գրեթե բացակայում են, և գերակշռում են պատմական բնույթի տեղեկությունները, վերջապես՝ նրանք «գլխավոր վիշապամարտիկ հերոսի» հակառակորդներն են:*

*Ուշ գրառված էպոսներում՝ հայոց «Սասնա ծռեր»-ում և օսական «Նարթյան» դիցավեպում արդեն նշված հինգ սերունդներով տոհմածառը հստակ բյուրեղացած է, ընդ որում՝ ամպրոպային նախակերպարը հանդես է գալիս ոչ թե առանձին ճյուղով, այլ երկվորյակ եղբայրների հետ՝ ամենաառաջին ճյուղում: Հետևաբար, այդ երկու էպոսներն էլ ունեն միևնման չորսճյուղանի կառուցվածք. «Սասնա ծռեր»-ում՝ 1. Ծովինար, Սանասար և Բաղդասար, 2. Մեծ Մհեր, 3. Դավիթ, 4. Փոքր Մհեր, իսկ «Նարթյան» էպոսում՝ 1. Վարխագ, Ախշար և Ախշարթագ, 2. Վրրըզմագ (և Սաթանա / Շաթանա), 3. Բաթրաձ, 4. Սոսլան /*

---

*[8] Խ ո ր ե ն ա ց ի. 1981, I, ԺԴ, 58–59: Բնագրում «գուսանական»-ը գործածվում է գոյականաբար՝ բնորոշելով վիպասքերը. «Որպէս Մար Աբաս Կատինայ պատմէ՝ ի փոքունց ոմանց եւ յաննշանից արանց, ի գուսանականէն այս գտանի ժողովեալ ի դիւանի արքունեաց»:*

*[9] Ա բ ե ղ յ ա ն. 1985, 267–270:*

*[10] Ա ճ ա ռ յ ա ն. 1946, 168–169, Ա ճ ա ռ յ ա ն. 1951, 70–71:*

*[11] Ջ ա հ ո ւ կ յ ա ն. 1987, 368–370:*

*Սոզրըկո[12]: Իմաստաբանական ներքին առանձնահատկություններով հանդերձ՝ նշված չորս իրարահաջորդ ճյուղերը ստեղծում են տրամաբանական կուռ շղթա, որն արտահայտում է տվյալ հանրույթի սոցիալական զարգացման ընթացքի փուլայնությունը, և որն արդեն իսկ բնութագրվել է հետևյալ փուլային անվանումներով՝ 1. ծնունդ-արարում-աստվածայնություն, 2. կայացում-ամրացում-իշխանություն, 3. պաշտպանություն-հերոսականություն-հզորացում, 4. անկում-հեռացում-հավերժական կյանք[13]:*

*Օսական էպոսի առնչությամբ հարկ է նշել, որ այստեղ, բացի նշված հիմնական չորս ճյուղերից, կան նաև կարճառոտ երկրորդական ճյուղեր, ինչպես, օրինակ՝ Սըղդոն և Ացամազ անունով հերոսների շուրջ հյուսված, նաև՝ անկախ հերոսների շուրջ պատմվող բազմաթիվ ինքնուրույն պատումներ, որոնք կա՛մ առհասարակ չեն մտնում «Նարթյան» էպոսի ընդհանուր կառույցի մեջ, կա՛մ էլ առնչվում են բավական հպանցիկ: Բացի այդ, քանի որ «քարից ծնված» հերոս Սոսլանը համարվում էր Շաֆանայի որդին, և նրա մասին գրառված վիպական պատումներն ու սյուժեները ամենաբազմաթիվն են, ուստի Սոսլանի ճյուղը օսական էպոսի համահավաք պատումում դրվել է Բաթրաձի ճյուղից առաջ, և հետևաբար՝ օսական էպոսի չորս ճյուղերը գիտական գրականության մեջ փոքր-ինչ այլ հերթականությամբ են թվարկվում[14]:*

## Ամպրոպային նախակերպար

*Սովորաբար էպոսները սկսվում են մի նախակերպարով, որը դառնում է դյուցազնապատումի նախահայրը կամ նախամայրը: Որպես կանոն, այս կերպարը էպոսի ամենաառասպելական և արխաիկ հերոսն է: Հաճախ այդ նախակերպարը կապված է լինում որևէ տոտեմ կենդանու հետ: «Սասնա ծռեր»-ում նախակերպարը Ծովինարն է, և ինչպես երևում է բանահյուսական-ազգագրական նյութի հետ համադրությունից՝ նրա խորհրդանիշ կենդանին վաղնջական ժամանակներում եղել է կովը, որն ըստ ժողովրդական հավատալիքների՝ ամպրոպի ժամանակ բառաչում է արնագույն Մհերանի ծովից[15]: Կարմիր կովի մոտիվը բավական տարածված է նաև հայ ժողովրդական հեքիաթներում, որտեղ այս առասպելական կերպարը հանդես է գալիս որպես հալածված երեխա(ների)ի հովանավոր[16] (համմտ. Բաղդադի խալիֆայից հալածված երկվորյակ եղբայրների մասին սյուժեն «Սասնա ծռեր»-ի բազմաթիվ պատումներում):*

*Համեմատական քննությունը բերում է այն եզրահանգման, որ «Երզք վիպասանաց» էպոսի հնագույն տարբերակում նույնպես ամպրոպային նախակերպարը Ծովինարն էր, որին հաջորդող ը. կերպարը ոչ թե երկվորյակներ էին, այլ եռորյակներ[17]: Այս առումով «Երզք վիպասանաց»-ում կարելի է առանձնացնել հնագույն շերտ, որն էպոսի՝ մեզ հասած տարբերակում հանդես է գալիս*

[12] *Համմտ. Դալալյան. 2004ա, 83:*

[13] *Համմտ. Համբարձումյան. 2018, 77–79, Համբարձումյան. 2020, 325:*

[14] *Համմտ., օրինակ,* Абаев. 1978, 6–7.

[15] *Այս նյութի վերաբերյալ գրականությունը և առասպելագիտական վերլուծությունը տե՛ս Դալալյան. 2008, 22–24:*

[16] *Հայրապետյան. 2010, 228–241:*

[17] *Այս մասին առաջին անգամ հպանցիկ ակնարկում է Ս. Հարությունյանը (տե՛ս Հարությունյան. 2004բ, 291):*

*կիսաթաքնված՝ եղիաշերտի տեսքով: Ասել է թե՝ Խորենացու պատմական շարադրանքում Ծովինարի կողմից եռոլյակ եղբայրների լույս աշխարհ բերելու հնագույն առասպելը հանդես է գալիս էպոսի միջնամասում և ներկայացվում իբրև Աժդահակի երազ[18]: Սակայն գործողությունների պատճառահետևանքային ժամանակագրական կարգը վերականգնելու դեպքում նշված առասպելը պետք է լիներ էպոսի ամենասկզբում: Ըստ այդմ, «Երզք վիպասանաց»-ի առաջին ճյուղը միանգամայն կարելի է կոչել «Ծովինար և եռոլյակներ», որոնցից կրտսերն ու ամենազորեղը Տիգրանն է: Վերջինիս հակառակորդ Աժդահակը Խորենացու շարադրանքում հենց ինքն է իր երազի միջոցով պատում Տիգրանի ծննդյան առասպելական դրվագը[19]:*

*Օսական էպոսում հերոս-դյուցազունների՝ նարթերի նախահոր անունն է Վարխագ / Ուարխագ (Wærxæg). նա համարվում է տոհմածին երկվորյակների հայրը: Վ. Աբաևը համեմատական առասպելագիտության և լեզվաբանական ստուգաբանության տվյալներով հանգում է այն մտքին, որ Վարխագի անունը ծագել է սկյութական *varka- «գայլ» բառից: Գիտական այս վերակազմության հիման վրա նա գտնում է, որ «Նարթյան» էպոսի առաջին ճյուղի գլխավոր հերոսները՝ երկվորյակ եղբայրները, ունեն տոտեմական ծագում, և նրանց հայրը, ըստ էության, գայլն է կամ գայլային խորհրդանիշ ունեցող աստվածությունը[20]: Այսուհանդերձ, օսական էպոսի որևէ պատումում Վարխագի վերաբերյալ, բացի անվանաբանական հնարավոր ակնարկից, չկա պահպանված տոտեմական առասպել:*

*Մեկ այլ վարկածի համաձայն՝ Վարխագի անունը կարող էր ծագած լինել հին իրանական *vah(r)- / va(r)h- «հողմ, քամի» (ավեստերենում՝ *vərəθra- / *vārəθra- «խափանարար, արգելափակիչ») արմատից: Վարխագի առաջին կինը՝ ժայռերի աստծո դուստր Սայնագոնն էր (բառացիորեն՝ «ժայռային»), իսկ երկրորդ կինը՝ ծովային աստծո դուստր Ջերասան, որն օսական էպոսի տարբեր պատումներում պատկերվում է ձկնակերպ, աղավնակերպ և եղջերվակերպ: Համեմատական առասպելագիտության տվյալները բերում են այն եզրահանգման, որ Վարխագն օսական դիցաբանության մեջ անձնավորում էր բնության տարերային երևույթները, մասնավորապես՝ հողմն ու փոթորիկը: Այսպես, «Նարթյան» էպոսի առաջին ճյուղում նկարագրվում է, թե ինչպես է Վարխագն առևանգելով քշում-տանում նարթերի խոշոր եղջերավոր նախիրները, ծովում խեղդում նրանց կամ ցած նետում բարձրաբերձ ապառաժներից[21]:*

*Թվում է՝ օսական էպոսի «Վարխագն – Սայնագոն / Ջերասա» ամուսնական զույգը գործառութային հատկանիշներով համապատասխանում է «Սասնա ծռեր»-ի «Բաղդադի խալիֆ – Ծովինար» զույգին, որի երկրորդ անդամը հանդես է գալիս նաև «Երզք վիպասանաց»-ի հնագույն տարբերակում: Ինչ վերաբերում է «Հայկյանների» էպոսին, ապա դրա պատմականացված տարբերակում կանանց դրական կերպարներն արտացոլված չեն (բացառությամբ Նուարդի*

---

[18] *Այս մասին մանրամասն, գրականության հղմամբ տե՛ս Դալալյան. 2008, 24–26, 44:*

[19] *Խորենացի. 1981, I, ԻԶ, 90–91:*

[20] Абаев. 1938, 321, 328–329, 336; Абаев. 1990, 305, 313, 319.

[21] *Դալալյան. 2004բ, 37, Դալալյան. 2006, 48:*

*սոսկ հիշատակութ յան), և ուստի կարելի է միայն ենթադրութ յուններ անել, թե ով կարող էր լինել իրական ամպրոպային նախակերպարն այդ էպոսի՝ մեզ չհասած ժողովրդական անաղարտ տարբերակում:*

### Երկվորյակ / եռորյակ եղբայրներ

*«Սասնա ծռեր»-ում ամպրոպային նախակերպար Ծովինարը գերբնական հղիացմամբ ծննդաբերում է երկվորյակ եղբայրների, որոնցից ավագը և զորեղը Սասնա տան հերոսների անվանադիր-նախահայրն է: Բանագիտական քննութ յունը ցույց է տալիս, որ ավելի հնում գրի առնված «Երգք վիպասանաց» էպոսում Ծովինարը կամ նրա հետ նույնացվող դիցուհին լեռան գագաթին ծննդաբերում է եռորյակների[22], և այս պարագայում արդեն ամենազորեղը կրտսեր եղբայրն է: Ըստ էութ յան, «Երգք վիպասանաց»-ի մեզ հասած տարբերակի առաջին ճյուղում եռորյակների մասին միակ այժեն նրանց ծննդյան դրվագն է, իսկ մնացած չարադրանքում հանդես է գալիս միայն երրորդ եղբայր Տիգրանը, որն իր քույր Տիգրանուհու և հակառակորդ Աժդահակի հետ կազմում է այս ճյուղի գլխավոր հերոսների եռանկյունին: Մյուս երկու եռորյակ եղբայրների մասին պատումներ չեն պահպանվել:*

*Օսական էպոսում նույնպես երկվորյակ եղբայրներից կրտսերը՝ Ախշարթագը, առավել զորեղ է, քան Ախշարը, ինչպես որ «Երգք վիպասանաց»-ում Տիգրանը եռորյակ եղբայրներից ամենակրտսերն ու ամենազորեղն է: Սակայն «Սասնա ծռեր»-ի հետ այժետային համեմատական քննութ յունից երևում է, որ օսական էպոսի կրտսեր եղբայր Ախշարթագը համապատասխանում է ավագ եղբայր Սանասարին, իսկ Ախշարը՝ Բաղդասարին: Ստորև առանձնացված 5 այժեների մեծ մասում (բացի ե.-ից) հստակ ի հայտ է գալիս նշված նմանութ յունը: Այսպես՝ ա) երկու էպոսներում էլ երկվորյակ եղբայրների հիմնական զբաղմունքը որսորդութ յունն էր. հայկական երկվորյակները, որսորդութ յամբ զբաղվելով, հասնում են Ծովի ափ, և Սանասարն իջնում է ջրի հատակը, իսկ Բաղդասարը սպասում է նրան ափին, նմանապես օսական երկվորյակները, որսի ժամանակ իրենց վիրավորած թռչնի արյան կաթիլների հետքերով հասնում են Ծով, Ախշարթագն իջնում է հատակը, իսկ Ախշարը սպասում է նրան ափին: բ) Երկու էպոսներում էլ երկվորյակ եղբայրներն ընդգծված դիցաբանական առնչութ յուն ունեն ջրային տարերքի հետ, եղբայրներից մեկն իր ուժն ու զենքերը ստանում է Ծովի հատակից, սակայն «Սասնա ծռեր»-ում դա զորեղ եղբայր Սանասարն է, իսկ «Նարթյան» էպոսում՝ «ոչ-զորեղ» եղբայր Ախշարը: գ) Ստորջրյա կաթնաղբյուրը կամ կաթնալիճը էլ ավելի զորեղացնում ու հաղթանդամ է դարձնում Սանասարին և կենդանացնում է մարտում զոհված Ախշարթագին: դ) Երկու էպոսներում էլ զորեղ եղբայրն իջնում է ստորերկրայք կամ դրա հետ նույնացվող տարածք և ազատում գերութ յան մեջ հայտնված եղբորը: ե) Երկվորյակ եղբայրները մենամարտում են միմյանց հետ գեղեցկուհու պատճառով. «Սասնա ծռեր»-ում՝ Դեղձուն Ծամի, իսկ «Նարթյան» էպոսում՝ Ծովային աղջկա: Հայոց էպոսում Բաղդասարը մենամարտում վիրավորվում է,*

---

[22] *Խ ո ր ե ն ա ց ի. 1981, I, ԻԶ, 88–89. կինը միաժամանակ ծնում է երեք դյուցազունների՝ « … ծնաւ յանկարծ կինն երիս կատարեալս ի դիւցազանց հասակաւ և բնութեամբ … »:*

*Սանասարին էլ թվում է, թե նա մեռել է, մինչ օսական որոշ պատումներում մի եղբայրը՝ զոհվում, իսկ Ծովի հատակին հզորացած մյուս եղբայրն ամուսնանում է Ծովային աղջկա հետ, սակայն այլ տարբերակներում երկու երկվորյակ եղբայրներն էլ զոհվում են[23]:*

*«Հայկյանների» էպոսում Արամանյակն ու իր որդի Արամայիսը համարվում են «երկվորյակային կերպար», ընդ որում՝ չատ հավանական է, որ էպոսի նախնական տարբերակում նրանք հանդես գային որպես երկվորյակ եղբայրներ՝ մայրաքաղաք Արմավիրի հիմնադիրներ ու անվանադիրներ, ինչպես որ Սանասարն ու Բաղդասարն են ներկայանում որպես Սասուն (Սանասուն) բերդաքաղաքի հիմնադիր-անվանադիրներ[24]: Օսական Ախշարի և Ախշարթագի վերաբերյալ քաղաք հիմնելու ավանդազրույց մեզ հայտնի չէ, սակայն նրանց հետ համեմատվող Հռեմոսն ու Հռոմուլոսը, լատինական ավանդազրույցի համաձայն, հիմնում են Հռոմ քաղաքը[25]:*

## Արդարությունն հաստատող հերոս

*Քննարկվող էպոսների երկրորդ ճյուղը, որպես կանոն, հյուսվում է այս հերոսի չուրջ, որը սովորաբար զորեղ երկվորյակի որդին է լինում: Նա առաջին «միհրական» հերոսն է, բնութագրվում է հատկապես արդարություն և կարգուկանոն հաստատելու իր գործունեությամբ: «Սասնա ծռեր»-ում դա Առյուծաճև կամ Մեծ Մհերն է, որը Հ. Օրբելու բնորոշմամբ՝ «բոլոր հերոսներից ամենակատարյալն է, իր իսկ անվան մեջ պարունակում է իր կոսմիկական էության բացահայտումը»[26]: Մհերը ժառանգորդն է հեթանոսական Միհր աստծո, որի պաշտամունքը, բացի Հայաստանից, տարածված էր Հնդկաստանից մինչև Հռոմեական կայսրություն[27]: Մհերի կերպարը նախաքրիստոնեական Միհրի վիպականացված տարբերակ են համարել արդեն իսկ «Սասնա ծռեր»-ի առաջին պատումների գրառողները՝ սկսած Գարեգին Սրվանձտյանցից[28]: Թեև վերջինիս գրառած տարբերակն ունի եռաճյուղ կառույց՝ հերոսների հետևյալ տոհմածառով՝ «1. Սանասար-Աբամելիք, 2. Դավիթ, 3. Մհեր», այսինքն՝ Սրվանձտյանցի կատարած զուգահեռը վերաբերում է Փոքր Մհերին, սակայն մի քանի տարի անց Մ. Աբեղյանը նշում է, որ Մեծ Մհերն «իսկապես կրկնությունն է Պտիկ Մհերի, և նրա վրա պատմվածները Սանասարի և Դավթի վրա պատմված*

---

*[23] Դալալյան. 2004ա, 84–86: Օսական էպոսում Ախշարին ու Ախշարթագին հաջորդում են վերջինիս և Ծովային դիցուհու որդիներ՝ նույնպես երկվորյակներ Խամըցն ու Վըրըզմագը: Այս մոտիվը, երբ երկվորյակներից մեկն ունենում է նույնպես երկվորյակ որդիներ, հանդիպում է «Սասնա ծռեր»-ի մի քանի պատումներում, հնդկական «Մահաբհարատա» էպոսում և այլուր:*

*[24] Պետրոսյան. 2024, 52:*

*[25] Համմ.* Абаев. 1938, 317–337; Абаев. 1990, 302–325.

*[26] Օրբելի. 1956, 114:*

*[27] Համմ. Օրբելի. 1956, 114–116, նաև՝ Մելիք-Օհանջանյան. 1946, 306–309:*

*[28] «Ուրեմն այս կերպով Մհեր կը լինի աշխարհի բաղդը դարձընող ու ոսկի բաշխող չաստուած մը. գուցէ Մհերն ինքն Միհր մեծն լինի, և իւր դուռը ուղղակի հարաւոյ հանդէպ կամ արեւու լինելով՝ պաշտելու պատճառ» (Սրուանձտեանց. 1874, 135):*

*միջադեպերից կազմված կրկնություն է միայն»[29]: Այս պնդումից հետագա ուսումնասիրություններով հաստատվեց միայն այն մասը, որ վերաբերում էր երկու Մհերների միջև որոշ ընդհանուր գծերի առկայությանը:*

*Աբեղյանի՝ նշված թյուր կարծիքը հերքում է ինքն՝ իր իսկ հաջորդ նախադասությամբ, երբ գրում է. «Կարևոր դիցազնական գիծը, որ միայն այս (Մեծ – Տ. Դ.) Մհերի վրա է պատմված, որից և նա իր մականունն է ստացել, է մանուկ հասակում մի առյուծ սպանելը»: Առյուծասպանության առասպելը հեթանոսական Մհրի ամենաառանցքային հատկանիշներից էր, ուստի և Մեծ Մհերի կերպարը «Սասնա ծռեր»-ում կարելի է վստահաբար համարել ինքնուրույն ու անկախ կերպար: Մեծ Մհերը միայնակ արդար մարտիկ է՝ առանց զենք մենամարտում է առյուծի հետ, նաև «Սասնա ծռեր»-ի հերոսներից միակն է, որ դաշինք է կնքում հակառակորդի հետ, որով հիշեցնում է հնդիրանական Միհրի «Միթրա» դիցանվան բառացի նշանակությունն («դաշինք») ու գործառույթը[30]: Նա սանձում է իշխանությունը, առասպելում՝ սպանում իշխանության խորհրդանիշ առյուծին, բայց միևնույն ժամանակ նույնանում այդ իշխանությանը, քանի որ հռոմեական որոշ բարձրաքանդակներում Միհրը պատկերվում է առյուծի գլխով և մարդու մարմնով[31]: Քրիստոնեության օրոք հայոց հոգևոր երգերում՝ չարականներում, գործածվում է Միհրի բնորոշումը՝ «արեգակն արդարութեան», այն վերագրելով Քրիստոսին[32]:*

*«Երգք վիպասանաց» էպոսում Տիգրանից հետո երկրորդ գլխավոր հերոսը Սանատրուկն է, ով փորձում է արդարություն հաստատել և վերականգնել երկու մասի բաժանված Հայոց թագավորության ամբողջականությունը[33]: Մի հոդվածում, համեմատական առասպելագիտության և լեզվաբանության ընձեռած տվյալներով, փորձել ենք ցույց տալ, որ Սանատրուկի կերպարը կարող էր հնում կապված լինել Միհր-Միթրայի պաշտամունքին, և ինչպես որ «Սասնա ծռեր»-ում Միհրի կերպարը երկփեղկվել է երկու հերոսների՝ Մեծ և Փոքր Մհերների, այնպես էլ «Երգք վիպասանաց»-ում Սանատրուկը նախակարապետն է իր թոռան՝ Արտավազդի[34]: Ըստ Ա. Փերիխանյանի՝ «Սանատրուկ»-ը նախապես պետք է եղած լիներ արևային հնվարա աստվածության կամ Միթրա-Միհրի մակդիրներից մեկը, և նրա անվան ստուգաբանության ամենահավանական վարկածներից մեկն այն է, որ *sānat-ruk կազմությունը պետք է որ նշանակեր «լույսը բարձրացնող / ծագեցնող» կամ «ծագող լույս», ինչպես որ սողդերենում վկայված է xvar-ā-sān «արևածագ» բարդ բառը[35]: «Սանատրուկ – Արտա-*

[29] Աբեղյան. 1966, 419:

[30] Համմ. Համբարձումյան. 2006, 99:

[31] Համմ. Հարությունյան. 2004ա, 13:

[32] Տե՛ս Арутюнян. 1992, 160.

[33] Խորենացի. 1981, II, ԼԴ, 184–185. «Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիայ, և քեռորդի նորա Սանատրուկ՝ ի Հայս…», Խորենացի. 1981, II, Լե, 186–187. «Սանատրուկ թագաւորեալ՝ զօրս ժողովէ… իջանել տալ պատերազմ ընդ որդիան Աբգարու, զի բռնորումս տիրեսցէ թագաւորութեան»:

[34] Դալալյան. 2012, 67–68:

[35] Периханян. 1993, 81–82.

*վազդ» և «Մեծ Մհեր – Փոքր Մհեր» զույգերի առաջին անդամները, այդպիսով, խորհրդանշում են այգաբացը և արևի հզորանալ-բարձրանալը, մինչդեռ երկրորդ կերպարները՝ մայրամուտը[36]: Այս բնորոշումն է տվել Հ. Օրբելին «Սասնա ծռեր»-ում Մհերի կերպարի երկփեղկվածության առնչությամբ. «... առաջինը պապի կերպարն է, որն արտացոլում է ծագող արևի՝ ճաճանչափայլ և կենսալից արևի հատկանիշները, իսկ երկրորդը թոռան կերպարն է, որն արտացոլում է հոգնած՝ մայր մտնող արևի հատկանիշները»[37]:*

*Օսական «Նարթյան» էպոսում արդարություն հաստատող հերոս է Վըրըզմագը, որը զորեղ երկվորյակ Ախշարթագի որդին է: Վըրըզմագը գտնում է նարթերի կողմից արհամարհված ու անտեսված իր պապին, վերադարձնում նարթերի համայնք: Վըրըզմագն է միշտ գլխավորում նարթերի խորհրդատվական մարմինը՝ «Նըխաս»-ը, ինչպես և՝ լինում սեղանապետ խնջույքների ժամանակ, կռվում է միաչքանի հսկայի հետ, արծվի վրա նստած ուղևորվում է անդրշիրիմյան աշխարհ և կատարում այլ քաջագործություններ[38]: «Հայկյանների» էպոսում, ենթադրաբար, «արդարություն հաստատող» կերպարներ կարող էին լինել Ամասիան կամ Գեղամը կամ էլ՝ Հարման, սակայն նրանց մասին, բացի իրենց անունների ստուգաբանության և տեղանվանական ավանդությունների վրա հիմնված որոշակի վերակազմություններից, պահպանված ավանդազրույցներ վկայված չեն:*

### Գլխավոր վիշապամարտիկ հերոս

*Այս հերոսի մենամարտը իր վիշապային հակառակորդի հետ կազմում է էպոսի «յուրային-օտար» հակադրության և հակամարտության հանգուցային սյուժեն («Սասնա ծռեր»-ում խաչապաշտներ – կռապաշտներ, «Երզնք վիպասանաց»-ում՝ հայեր – վիշապագուն մարեր): Ինչպես դիպուկ նկատում է Հ. Օրբելին՝ չորրորդ սերնդի այս հերոսը էպոսի հիմնական դեմքն է, որի սխրանքները գերիշխող ու կենտրոնական տեղ են գրավում էպոսում: «Սասնա ծռեր»-ում Դավիթը «օժտված է թե՛ իր նախնիներին՝ պապին ու հորը, թե՛ իր որդուն հատուկ բնավորության գծերով»[39]: Ս. Հարությունյանը համապատասխան սյուժեների քննության հիմնավորապես ցույց է տվել Դավթի և Մսրա Մելիքի հակամարտության վիշապային բնույթը, երբ առաջինը հանդես է գալիս որպես տիպիկ առասպելական վիշապամարտիկ, իսկ երկրորդը՝ վիշապ: Թեև Ս. Հարությունյանը վիշապամարտի հստակ գծեր է ի ցույց դնում նաև Սանասարին ու Մեծ Մհերին վերաբերող դրվագներում, սակայն իրավամբ նշում է՝ վիշապամարտի լավագույն արտահայտությունն առկա է հենց երրորդ ճյուղում՝ Դավիթ – Մսրա Մելիք հակադրության մեջ[40]: Այս ճյուղը մյուս երեք ճյուղերից անհամեմատ ավելի տարածված էր. այն պատմել են գրեթե բոլոր վիպասացները (մինչդեռ մյուս ճյուղերը կարող էին բաց թողնվել). Դավթի*

---

[36] *Դալալյան. 2012, 68:*

[37] *Օրբելի. 1956, 115:*

[38] Сказания о нартах. 1978, 59–60, 67–75.

[39] *Օրբելի. 1956, 71–72:*

[40] *Հարությունյան. 1981, 76–80, 83, Հարությունյան. 2004ա, 11–12, համմ. նաև՝* Абрамян. 2012, 103–120.

*չուրջն են համախմբվում վիպական-ավանդական բոլոր թեմաներն ու մոտիվները[41]:*

*«Երգք վիպասանաց» էպոսում Արտաշեսն է տիպիկ գլխավոր վիշապամարտիկը, թեև նրա հակամարտությունը վիշապազունների հետ սկիզբ է առնում դեռևս եռօրյակ եղբայրներից ամենազորեղից՝ Տիգրանից, ինչպես որ «Սասնա ծռեր»-ում է երկվորյակ եղբայրներից զորեղը՝ Սանասարը, սկսում վիշապների դեմ պայքարը, իսկ այնուհետև այդ գործը շարունակում են Մեծ Մհերը և Դավիթը: «Երգք վիպասանաց»-ում Արտաշեսն արշավանքներ է կազմակերպում երկրի տարբեր ուղղություններով, հաղթում է վիշապային չար աչք ունեցող Երվանդին և նրա եղբորը՝ Երվազին, պատերազմում Ալանաց թագավորի դեմ, գերեվարում նրա որդուն և ամուսնանում թագավորի դստեր՝ Սաթենիկի հետ, կռվում է վիշապազունների դեմ ու կոտորում նրանց, ընդ որում՝ այս անցքերի մեծ մասը, Խորենացու վկայությամբ, վիպասվել է Գողթան երգիչների ասքերում[42]: Էպոսի պատմական շարադրանքում Արտաշեսը թեև Սանատրուկի անմիջական հաջորդը չէ, սակայն նրանց ժառանգական կապն ու հաջորդականությունը երևում է այն դրվագում, երբ Երվանդին հաղթելուց հետո Սմբատն արքունական գանձարանում գտնում է Սանատրուկի թագը և Արտաշեսին թագադրում Մեծ Հայքի արքա[43]:*

*Օսական էպոսում գլխավոր վիշապամարտիկը Բաթրաձն է, թեև նա ոչ թե «արդարություն հաստատող» հերոս Վըրըզմագի որդին է, ինչպես Դավիթը՝ Մեծ Մհերի, և Արտաշեսը՝ Սանատրուկի, այլ համարվում է Վըրըզմագի երկվորյակ եղբայր Խամըցի որդին: Այդուհանդերձ, Դավթի և Բաթրաձի նմանությունն ակնհայտ է, և դա արդեն իսկ նկատվել է մասնագիտական գրականության մեջ[44]: Ամեն դեպքում, Բաթրաձն օսական էպոսում ուղղակիորեն կապվում է Վըրըզմագի սերնդին՝ պարզապես վերջինիս եղբոր միջոցով. այսինքն՝ «արդարություն հաստատող» հերոսին հաջորդում է «գլխավոր վիշապամարտիկը», ինչպես համեմատվող մյուս էպոսներում: Ինչ վերաբերում է «Հայկյաններին» էպոսին, ապա այստեղ աներկբա է, որ կենտրոնական վիշապամարտիկ հերոսը Արամն է, ով արշավանքներ է կատարում աշխարհի երեք ուղղություններով և ընդարձակում Հայոց երկրի սահմանները:*

### Մեռնող-հառնող / ժայռում վակված հերոս

*Այս հերոսին կարող ենք անվանել նաև երկրորդ «մհրական» հերոս. նա հայոց բոլոր էպոսներում վառ արտահայտված կերպար է, նրանով են ավարտվում այդ էպոսները, սակայն ինքը՝ թեև արգելափակված, ողջ է մնում՝ այդպիսով վերածվելով «հավերժ ապրող» հերոսի և խորհրդանշելով կյանքի շարունակականությունն ու պատմական շրջափուլի կրկնելիությունը («Հայկյաններ»՝ Արա Գեղեցիկ, «Երգք վիպասանաց» Արտավազդ, «Սասնա ծռեր»՝ Փոքր Մհեր): «Հայկյաններ»-ի Արան գլխավոր վիշապամարտիկ Արամի որդին է, նմանապես և «Երգք վիպասանաց»-ի Արտավազդը՝ Արտաշեսի, իսկ Փոքր Մհերը՝ Դավթի:*

---

*41 Ս ա հ ա կ յ ա ն. 1975, 133:*

*42 Համմ. Խ ո ր ե ն ա ց ի. 1981, II, խթ, 208–209. «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բազում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան – չինել զքաղաքն, և խնամութիւն ընդ Ալանս, և ծնունդք զարմից, և իբր տրփանք Սաթինական ընդ Վիշապազունս՝ առասպելաբար …»:*

*43 Խ ո ր ե ն ա ց ի. 1981, II, խէ, 206–207:*

*44 Տե՛ս Պ ե տ ր ո ս յ ա ն. 2012, 19, 22:*

*Հատկանշական է, որ «Երգք վիպասանաց»-ի Արտավազդը, ի տարբերություն Փոքր Մհերի և, հատկապես, Արայի, խիստ հակասական՝ երկվությամբ բնորոշվող կերպար է, և վիպական պատումներում հաղորդվում է անգամ երկու Արտավազդների գոյության մասին, որոնցից մեկը կարող էր ընկալվել որպես Արտաշեսի որդի, իսկ մյուսը՝ Արգավանի (քանի որ վերջինիս հետ էր Արտաշեսին դավաճանում իր կին Սաթենիկը): Նմանապես, օսական Սոսլանը ուներ իր բացասական հակոտնյան՝ Սըրդոնը, որն ամեն կերպ փորձում էր խանգարել ու վնասել Սոսլանին, ինչպես նաև գոյություն ունեին երկու Սաթանաներ՝ քաջքերի և նարթերի[45]:*

*Ըստ «Երգք վիպասանաց» էպոսի՝ Արտավազդը Մասիսի ստորոտում՝ Գինա ակունքների մոտ, վարագների և ցիռերի որսի ժամանակ «ինչ-որ ցնորքից» չփոթվում-խելագարվում ու ընկնում է խորը վիհի մեջ, որտեղ և փակված է մնում ու չղթայվում առասպելական էակների՝ քաջքերի կողմից: Այդպիսով կատարվում է Արտաշեսի անեծքը, որը մահամերձ ժամանակ (կամ ըստ այլ մեկնաբանության՝ մահանալուց հետո) անիծել էր Արտավազդին[46]: Ինչպես տեսնում ենք, Արտավազդի կերպարը համատեղում է ժայռին զամված հերոսի այուժեի երկու բնորոշ գծերը՝ հայրամարտությունը և վնասարար «վիշապայնությունը»[47]: Մի շարք հետազոտողներ նշել են Արտավազդի կերպարի երկվությունը, ինչպես նաև՝ նրա առասպելի կապը որոշակի ժամանակագրական շրջափուլի ավարտի հետ: Արտավազդի հնարավոր դուրս գալը Մասիսի վիհից առնչվել է Ամանորին՝ Նավասարդի նախօրեին կամ առաջին օրվան, իսկ Խորենացու տարբերակում ծիսական տարեշրջանին փոխարինում է յոթնօրյա կամ շաբաթական շրջանը, ընդ որում՝ ժայռում փակված Փոքր Մհերին առնչվող առասպելական դրվագներում ևս վերապրուկի ձևով պահպանվել է հին տարեշրջանի գաղափարը[48]:*

*Եթե «Երգք վիպասանաց»-ում Արտավազդը Սաթենիկի որդին է, ապա օսական էպոսում Սոսլանը «հրաշալի հղիացմամբ» Սաթանայի / Շաթանայի որդին է, որը վերջնականապես ծնվում է քարից[49]: Այդպիսով, Սոսլանը դիցաբանական Միհրի նման տիպիկ «քարից ծնված» հերոս է, որն անհաջող կերպով փորձում է ամուսնանալ Արևի դստեր՝ Ացըրուխսի հետ, նրան հասնելու համար երկարատև ճամփորդություն կատարում անդրշիրիմյան աշխարհ, որպեսզի այնտեղից բերի Ազա ծառի տերևները: Քաջքերը նետերով սպանում են Սոսլանի նժույգին, իսկ Սոսլանը զոհվում է «արևային սկավառակ»-ից[50]: Ըստ մեկ այլ օսական պատումի՝ երբ Սոսլան-Սոզըրկոն որս էր անում, նրան բռնում են քաջքերը և մեխում պատին[51]: Այս բոլոր օրինակներում ակնհայտ են զուգահեռները թե՛ «Երգք վիպասանաց»-ի քաջքերի հետ, որոնք հանդես են գալիս որպես Արտավազդի հակառակորդներ, թե՛ «Հայկյաններ»-ի Անուշավան Սոսանվերի հետ, որը համարվում էր Արայան Արայի որդին և գուշակություններ էր կատարում սոսի ծառերի տերևներով, ընդ որում այդ սոսիների սրբազան*

---

[45] *Համմտ. Դալալյան. 2002, 202–203, 209:*

[46] *Խորենացի. 1981, II, ԿԱ, 230–231. «Զսմանէ երգիչք Գողթան առասպելաբանեն այսպէս. եթէ ի մահուանն Արտաշիսի բազում կոտորած լինէին ըստ օրինի հեթանոսաց …»:*

[47] *Աբրահամյան. 2004, 15:*

[48] *Հարությունյան. 2014, 12, 17:*

[49] *Տե՛ս Դալալյան. 2002, 202–203, Դալալյան. 2006, 49–51:*

[50] Сказания о нартах. 1978, 117–244.

[51] *Տե՛ս Դալալյան. 2002, 209, Դալալյան. 2006, 51–52:*

*պուրակը գտնվում էր Արմավիրում՝ սեպագրային աղբյուրներից հայտնի Ազա երկրում: Ինչ վերաբերում է «արևային սկավառակ»-ին, ապա այն հար և նման է Փոքր Մհերի առասպելում ճակատագրական դեր կատարող Բախտի անիվին (Զարխի ֆալաք), որը ժամանակի առասպելաբանական մարմնավորումն է: Ուշագրավ է նաև վախճանաբանական դրվագում նժույգի դերը, որը հանդես է գալիս թե՛ Սոսլանի, թե՛ Փոքր Մհերի և թե՛ Արտավազդի պատումներում:*

## Եզրակացություն

*Այսպիսով, հերոսների հինգաերնդանի տոհմածառը և համապատասխանաբար քառաճյուղ վիպաբանական կառուցվածքը բնորոշ են հայկական և օսական էպոսներին: Պարտադիր չէ, որ այս ընդհանրությունն անպայմանորեն և բոլոր դեպքերում բացատրվի ցեղակցական կապերով ու ընդհանուր ծագումնաբանական հիմքով: Առհասարակ, վիպաբանական սխեմաներն արդյունք են առասպելաբանական աշխարհայացքին և որոշ առումով դրանից սերող գեղարվեստական մտածողությանը հատուկ կաղապարների համադրության, իսկ այդ կաղապարները կարող են պայմանավորված լինել մարդկային մտքի միանման աշխատանքով՝ անկախ որոշակի տարածաշրջանից: Այսպես, օրինակ, տեսակետ կա, որ վիպաբանական քառաճյուղ կառույցը տարածված է եղել հնուց առավել լայն տարածաշրջանում, և որպես դրա ապացույց բերվում է Հոմերոսի «Ողիսական»-ի կերպարային համակարգի վերլուծությամբ առանձնացվող չորսերնդանի կառույցը[52]: Այս միտքը գալիս է լրացնելու այն ընկալումը, որ առասպելն ու առասպելությունը հիմքն են վիպական և դրանից հետագայում զարգացած գեղարվեստական մտածողության: Ընդ որում, որքան տվյալ էպոսի ակունքները թաղված են վաղնջական ժամանակներում, այնքան առավել զգալի է առասպելաբանության ազդեցությունը[53]:*

Տորք Դալալյան – բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վոխտնօրեն, բանագիտության բաժնի վարիչ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ-կովկասյան և հայ-իրանական բանագիտության, էպոսագիտության և լեզվաբանության խնդիրներ: Համահեղինակ է 2 գրքի, հեղինակ՝ ավելի քան 100 հոդվածի:
ORCID:0000-0002-8686-5341. tork.dalalyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. Խ. 1966, Հայ վիպական բանահյուսություն. – Երկեր, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 572 էջ:

Աբեղյան Մ. Խ. 1985, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. – Երկեր, հ. Ը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 66–272:

Աբրահամյան Լ. Հ. 2004, Բավիղ-լաբիրինթոս. արտավազդյան առասպելը Կովկաս-առաջավորասիական համատեքստում. – «Հայ ժողովրդական մշակույթ–XII» (հանրապետական գիտաժողովի նյութեր), Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին, (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան, Դ. Ս. Վարդումյան), Երևան, «Մուղնի» հրատ., էջ 13–18:

[52] *Տե՛ս Համբարձումյան. 2020, 323–324:*

[53] *Համմ.* Егиазарян. 2014, 125.

Աճառյան Հ. Հ. 1946, Վիպասանական հայերեն.– «Գրական-բանասիրական հետախուզումներ (Մանուկ Աբեղյանի հիշատակին)», գիրք 1 (խմբ.՝ Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 161–174:

Աճառյան Հ. Հ. 1951, Վիպասանական հայերեն. – «Հայոց լեզվի պատմություն», II մաս, Երևան, Հայպետհրատ, էջ 65–75:

Դալալյան Տ. Ս. 2002, Հայոց վիպական Սաթենիկ թագուհու կերպարի ծագումնաբանության շուրջ. – ՊԲՀ, № 2, էջ 191–213:

Դալալյան Տ. Ս. 2004ա, «Սասնա ծռեր»ի և օսական «Նարթյան դիցավեպի» համեմատական քննության ուրվագծեր. – «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը». միջազգային գիտաժողովի զեկուցումներ (խմբ.՝ Ա. Կ. Եղիազարյան, Ս. Բ. Հարությունյան և այլք), Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 82–87:

Դալալյան Տ. Ս. 2004բ, Օսական Wærxæg-ի և հայկական Վահագնի մասին.– «Հայ ժողովրդական մշակույթ–XII» (հանրապետական գիտաժողովի նյութեր), Մեսրոպ արք. Աշճյանի հիշատակին (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան, Դ. Ս. Վարդումյան), Երևան, «Մուղնի» հրատ., էջ 37–39:

Դալալյան Տ. Ս. 2006, Դրվագներ հայ-ալանական դիցանվանական առնչություններից.– «Հայ ժողովրդական մշակույթ–XIII» (նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի), Դ. Ս. Վարդումյանի հիշատակին (խմբ.՝ Դ. Ս. Վարդումյան, Ս. Բ. Հարությունյան, Ս. Գ. Հոբոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 44–54:

Դալալյան Տ. Ս. 2008, «Վիպասանք» էպոսի առաջին ճյուղը և ամպրոպային դյուցազնատոհմի ծագումը. – «Շնորհ ի վերուստ. առասպել, ծես, իրականություն». հոդվածների ժողովածու՝ նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 19–50:

Դալալյան Տ. Ս. 2012, Հայոց «Վիպասանք» էպոսում Սանատրուկի կերպարը և նրա դիցաբանական զուգահեռները. – «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան, Ա. Կ. Եղիազարյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 65–71:

Դալալյան Տ. Ս. 2015, «Վիպասանք» ժողովրդական դիցավեպի ավանդման եղանակները. – «Էջմիածին», թիվ ժ, էջ 58–65:

Դալալյան Տ. Ս. 2017, Վիպասանական արուեստը, երաժիշտ-կատարողները եւ նուագարանները վաղմիջնադարեան Հայաստանում. լեզուա-մշակութաբանական ակնարկ.– «Հնչյուն եւ լռություն. երաժիշտը եւ նվագարանը դարերի հոլովույթում» (խմբ.՝ Հ. Վ. Պիկիչյան), Երևան, Կոմիտասի թանգարան-ինստիտուտ, էջ 38–53:

Դալալյան Տ. Ս. 2018, «Սասնա ծռեր»-ը և հայկական մյուս էպոսները. – «Հայաստանը՝ ծանոթ և անծանոթ. հանրագիտարան» (խմբ.՝ Ս. Դիլանյան, Վահան սարկավագ Սահակյան), Երևան, «Արեգ» հրատ., էջ 134–135:

Համբարձումյան Հ. Ա. 2006, Փոքր Միեր. գենեզիս և տիպաբանություն.– «Գրականագիտական հանդես», Ա (Ե), էջ 89–100:

Համբարձումյան Հ. Ա. 2018, «Սասնա ծռեր». պատում, մոտիվ, գրքային ավանդույթ (խմբ.՝ Ս. Բ. Հարությունյան), Երևան, ԵՊՀ հրատ., 320 էջ:

Համբարձումյան Հ. Ա. 2020, «Սասնա ծռեր» էպոսի կառուցվածքային համակարգի ձևավորումը. առասպելական սխեմանե՞ր, թե՞ գրական ավանդույթ.– «Գրականագիտական հանդես», թիվ 20/1, էջ 312–326:

Հայրապետյան Թ. Լ. 2010, Կարմիր կովի մոտիվը հայկական հրաշապատում հեքիաթներում. – ՊԲՀ, № 3, էջ 228–241:

Հարությունյան Ս. Բ. 1981, Վիշապամարտը «Սասնա ծռեր»-ում.– ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 11, էջ 65–85:

Հարությունյան Ս. Բ. 2004ա, «Սասնա ծռեր» հերոսավեպի առասպելաբանական հիմքերը.– «Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը». միջազգային գիտաժողովի զեկուցումներ (խմբ.՝ Ա. Կ. Եղիազարյան, Ս. Բ. Հարությունյան և այլք), Երևան, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, էջ 9–16:

Հարությունյան Ս. Բ. 2004բ, Петросян А. Е. 2002, Армянский эпос и мифология: истоки, миф и история. Ереван, Институт археологии и этнографии НАН РА, 239 с. – ՊԲՀ, № 1, էջ 291–294:

Հարությունյան Ս. Բ. 2010, Բանագիտական ակնարկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 263 էջ:

Հարությունյան Ս. Բ. 2014, Ժայռում փակված կամ ժայռին գամված հերոսի առասպելույթի դրսևորումները հայկական վիպական ավանդույթում.– «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 9–25:

Մելիք-Օհանջանյան Կ. Ա. 1946, Միթրա-Միհրի արբանյակներն ու գործակալները.– «Գրական-բանասիրական հետախուզումներ (Մանուկ Աբեղյանի հիշատակին)», գիրք 1 (խմբ.՝ Խ. Սարգսյան), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 269–327:

Մովսես Խորենացի. 1981, Պատմութիւն Հայոց (քննական բնագիրը՝ Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները՝ Ստ. Մալխասյանի), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 592 էջ:

Պետրոսյան Ա. Ե. 1997, Հայկական էպոսի հնագույն ակունքները, Երևան, «Վան Արյան» հրատ., 96 էջ:

Պետրոսյան Ա. Ե. 2012, Հայկական և հյուսիսկովկասյան նարթական էպոսների հարաբերությունը. – «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» (խմբ.՝ Ա. Ե. Պետրոսյան, Ա. Կ. Եղիազարյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 8–51:

Պետրոսյան Ա. Ե. 2018, Հայ ժողովրդական հերոսական էպոսը. – «Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ–1. հայ ժողովրդական մշակույթ XVII. ավանդականը և արդիականը հայոց մշակույթում», Երևան, ՀԱԻ հրատ., էջ 414–425:

Պետրոսյան Ա. Ե. 2024, Նոր քաղաքի հիմնման առասպելը հնդեվրոպական վիպական ավանդության մեջ. – «Էպոս, ինքնություն և մշակույթ». «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության 150-ամյակին նվիրված միջազգային էպոսագիտական 6-րդ գիտաժողովի ամփոփագրերի ժողովածու (խմբ.՝ Տ. Ս. Դալալյան), Երևան, ՀԱԻ հրատ., էջ 51–53:

Ջահուկյան Գ. Բ. 1987, Ստանդարտ լեզու և բարբառներ. «Վիպասանական հայերեն».– «Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 364–371:

Սահակյան Ա. Շ. 1975, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 191 էջ:

Սրուանձտեանց Գ. Վ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Մհէրի դուռ, Կ. Պոլիս, Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 192 էջ:

Օրբելի Հ. Ա. 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 139 էջ:

Абаев В. И. 1938, Опыт сравнительного анализа легенд о происхождении нартов и римлян.– «Памяти академика Н. Я. Марра» (отв. ред. И. И. Мещанинов). М.–Л., Изд. АН СССР, с. 317–337.

Абаев В. И. 1978, Нартовский эпос осетин: циклы, сюжеты, герои.– «Сказания о нартах». М., «Советская Россия», с. 5–42.

Абаев В. И. 1990, Избранные труды. Религия, фольклор, литература (отв. ред. и составитель В. М. Гусалов). Владикавказ, «Ир», 640 с.

Абрамян Л. А. 2012, Убийство Мсра Мелика в ритуально-мифологическом контексте.– «Армянский эпос и всемирное эпическое наследие» (ред. А. Е. Петросян, А. К. Егиазарян). Ереван, изд. «Гитутюн» НАН РА, с. 103–120.

Арутюнян С. Б. 1992, Михр.– «Мифы народов мира», М., «Советская энциклопедия», с. 160.

Егиазарян А. К. 2014, Эпическое повествование.– Армянский эпос и всемирное эпическое наследие. Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, с. 125–131.

Периханян А. Г. 1993, Материалы по этимологичекому словарю древнеармянского языка. Ереван, Изд. НАН РА, 144 с.

Петросян А. Е. 2002, Армянский эпос и мифология: истоки, миф и история. Ереван, Институт археологии и этнографии НАН РА, 239 с.

Петросян А. Е. 2014, Структурные связи армянских и осетинского эпосов.– «Армянский эпос и всемирное эпическое наследие». Ереван, Изд. «Гитутюн» НАН РА, с. 47–53.

Сказания о нартах. 1978. Осетинский эпос, издание переработанное и дополненное (перевод с осетинского Ю. Лебединского). М., «Советская Россия», 512 с.

## REFERENCES

Abaev V. I. 1938, Opyt sravnitel’nogo analiza legend o proishoždenii nartov i rimljan.- «Pamjati akademika N. Ja. Mara» (otv. red. I. I. Meŝaninov), Moskva-Leningrad, Izd. AN SSSR, s. 317–337 (In Russian).

Abaev V. I. 1978, Nartovskij épos osetin: cikly, služety, geroi. – «Skazanija o nartah», Moskva, «Sovetskaja Rossija», s. 5–42 (In Russian).

Abaev V. I. 1990, Izbrannye trudy. Religija, fol’klor, literatura (otv. red. i sostavitel’ V. M. Gusalov), Vladikavkaz, «Ir», 640 s. (In Russian).

Abeghyan M. Kh. 1966, Hay vipakan banahyusut’yun.– Yerker, hator 1, Yerevan, HSSH GA hrat., 572 ej (In Armenian).

Abeghyan M. Kh. 1985, Hay zhoghovrdakan araspelnery M. Khorenats’u Hayots’ patmut’yan mej.– Yerker, hator 8, Yerevan, ej 66–272 (In Armenian).

Abrahamyan L. H. 2004, Bavigh-labirint’os. artavazdyan araspely kovkas-arajavorasiakan hamatek’stum.– «Hay zhoghovrdakan mshakuyt’–XII» (hanrapetakan gitazhoghovi nyut’er), Mesrop ark’. Ashchyani hishatakin, khmb.` S. B. Harut’yunyan, D. S. Vardumyan, HH GAA HAI, Yerevan, «Mughni», ej 13–18 (In Armenian).

Abramjan L. A. 2012, Ubijstvo Msra Melika v ritual’no-mifologičeskom kontekste:- «Armjanskij épos i vsemirnoe épičeskoe nasledie» (red. A. E. Petrosjan, A. K. Egiazarjan), Erevan, izd. «Gitutjun» NAN RA, s. 103–120 (In Russian).

Acharyan H. H. 1946, Vipasanakan hayeren.– «Grakan-banasirakan hetakhuzumner (Manuk Abeghyani hishatakin)», girk’ 1, khmb.` Kh. Sargsyan, Yerevan, HSSR GA hrat. [448 ej], ej 161–174 (In Armenian).

Acharyan H. H. 1951, Vipasanakan hayeren, «Hayots’ lezvi patmut’yun», II mas, Yerevan, Haypethrat, ej 65–75 (In Armenian).

Arutjunjun S. B. 1992, Mihr. – «Mify narodov mira», Moskva, «Sovetskaja énciklopedija», s. 160. Egiazarjan A. K. 2014, Épičeskoe povestvovanie, «Armânskij épos i vsemirnoe épičeskoe nasledie», Erevan, Izd. «Gitutjun» NAN RA, s. 125–131 (In Russian).

Dalalyan T. S. 2002, Hayots' vipakan Sat'enik t'aguhu kerpari tsagumnabanut'yan shurj.– PBH, № 2, ej 191–213 (In Armenian).

Dalalyan T. S. 2004a, «Sasna tsreri» yev osakan «Nart'yan dits'avepi» hamematakan k'nnut'yan urvagtser.– «Haykakan «Sasna tsrer» eposy yev hamashkharhayin epikakan zharangut'yuny»: mijazgayin gitazhoghovi zekuts'umner (khmb.` A. K. Yeghiazaryan, S. B. Harut'yunyan yev aylk'), Yerevan, HH GAA M. Abeghyani anvan grakanut'yan institut, Hnagitut'yan yev azgagrut'yan institut, ej 82–87 (In Armenian).

Dalalyan T. S. 2004b, Osakan Wærxæg-i yev haykakan Vahagni masin.– «Hay zhoghovrdakan mshakuyt'–XII» (hanrapetakan gitazhoghovi nyut'er), Mesrop ark'. Ashchyani hishatakin (khmb.` S. B. Harut'yunyan, D. S. Vardumyan), Yerevan, «Mughni», ej 37–39 (In Armenian).

Dalalyan T. S. 2006, Drvagner hay-alanakan dits'anvanakan arnch'ut'yunnerits'.– «Hay zhoghovrdakan mshakuyt'–XIII» (nyut'er hanrapetakan gitakan nstashrjani), D. S. Vardumyani hishatakin (khmb.` D. S. Vardumyan, S. B. Harut'yunyan, S. G. Hobosyan), Yerevan, HH GAA HAA «Gitut'yun», ej 44–54 (In Armenian).

Dalalyan T. S. 2008, «Vipasank'» eposi arajin chyughy yev ampropayin dyuts'aznatohmi tsagumy.– «Shnorh i verust: araspel, tses, irakanut'yun»: hodvatsneri zhoghovatsu` nvirvats Sargis Harut'yunyani 80-amyakin (khmb.` A. E. Petrosyan), Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., ej 19–50 (In Armenian).

Dalalyan T. S. 2012, Hayots' «Vipasank'» eposum Sanatruki kerpary yev nra dits'abanakan zugahernery.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut'yuny» (khmb.` A.Ye. Petrosyan, A. K. Yeghiazaryan), Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., ej 65–71 (In Armenian).

Dalalyan T. S. 2015, «Vipasank'» zhoghovrdakan dits'avepi avandman yeghaknery.– «Ejmiatsin», t'iv 10, ej 58–65 (In Armenian).

Dalalyan T. S. 2017, Vipasanakan aruesty, yerazhisht-kataroghnery yev nuagarannery vaghmijnadarean Hayastanum: lezua-mshakut'abanakan aknark:– "Hnch'yun yev lrut'yun: yerazhishty yev nvagarany dareri holovuyt'um" (khmb.` H. V. Pikich'yan), Yerevan, Komitasi t'angaran-institut, ej 38–53 (In Armenian).

Dalalyan T. S. 2018, «Sasna tsrer»-y yev haykakan myus eposnery.– «Hayastany, tsanot' yev antsanot': hanragitaran» (khmb.` S. Dilanyan, Vahan sarkavag Sahakyan), Yerevan, «Areg» hrat., ej 134–135 (In Armenian).

Hambardzumyan H. A. 2006, P'ok'r Mher: genezis yev tipabanut'yun.– «Grakanagitakan handes», A (Ye), ej 89–100 (In Armenian).

Hambardzumyan H. A. 2018, «Sasna tsrer»: patum, motiv, grk'ayin avanduyt' (khmb.` S. B. Harut'yunyan), Yerevan, YePH hrat., 320 ej (In Armenian).

Hambardzumyan H. A. 2020, «Sasna tsrer» eposi karuts'vatsk'ayin hamakargi dzevavorumy.araspelakan skhemaner, t'e grakan avanduyt'? – «Grakanagitakan handes», t'iv 20/1, ej 312–326 (In Armenian).

Harut'yunyan S. B. 1981, Vishapamarty «Sasna tsrer»-um.– HH GA «Lraber hasarakakan gitut'yunneri», № 11, ej 65–85 (In Armenian).

Harut'yunyan S. B. 2004a, «Sasna tsrer» herosavepi araspelabanakan himk'ery.– «Haykakan «Sasna tsrer» eposy yev hamashkharhayin epikakan zharangut'yuny»: mijazgayin gitazhoghovi zekuts'umner (khmb.` A. K. Yeghiazaryan, S. B. Harut'yunyan yev aylk'), Yerevan, HH GAA M. Abeghyani anvan grakanut'yan institut, Hnagitut'yan yev azgagrut'yan institut, ej 9–16 (In Armenian).

Harut'yunyan S. B. 2004b, grakhosut'yun – Petrosjan A. E. 2002 menagrut'yan veraberyal.– PBH, № 1, ej 291–294 (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Harut'yunyan S. B. 2010, Banagitakan aknarkner, Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., 263 ej (In Armenian).

Harut'yunyan S. B. 2014, Zhayrum p'akvats kam zhayrin gamvats herosi araspeluyt'i drsevorumnery haykakan vipakan avanduyt'um.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut'yuny» (khmb.` A. Ye. Petrosyan), Yerevan, «Gitut'yun», ej 9–25 (In Armenian).

Hayrapetyan T. L. 2010, Karmir kovi motivy haykakan hrashapatum hek'iat'nerum.– PBH, № 3, ej 228–241 (In Armenian).

Jahukyan G. B. 1987, Standart lezu yev barbarner. «Vipasanakan hayeren».– «Hayots' lezvi patmut'yun. nakhagrayin zhamanakashrjan», Yerevan, HSSH GA hrat., ej 364–371 (In Armenian).

Khorenats'i. 1981, Movsisi Khorenats'woy Patmut'iwn hayots' (k'nnakan bnagiry M. Abeghyani yev S. Harut'yunyani, ashkharhabar t'argm. yev meknabanut'yunnery St. Malkhasyani), Yerevan, YePH hrat., 592 ej (In Armenian).

Melik'-Ohanjanyan K. A. 1946, Mit'ra-Mihri arbanyaknern u gortsakalnery.– «Grakan-banasirakan hetakhuzumner (Manuk Abeghyani hishatakin)», girk' 1, khmb.` Kh. Sargsyan, Yerevan, HSSR GA hrat., ej 269–327 (In Armenian).

Orbeli H. A. 1956, Haykakan herosakan eposy, Yerevan, HSSR GA hrat., 1956, 139 ej (In Armenian).

Perikhanyan A. G. 1993, Materialy po etimologichekomu slovaryu drevnearmyanskogo yazyka. Yerevan, Izd. NAN RA, 144 s. (in Russian).

Petrosyan A.Ye. 1997, Haykakan eposi hnaguyn akunk'nery, Yerevan, «Van aryan», 96 ej (In Armenian).

Petrosjan A. E. 2002, Armjanskij épos i mifologija: istoki, mif i istorija, Erevan, Institut arheologii i étnografii NAN RA, 239 s (In Russian).

Petrosyan A.Ye. 2012, Haykakan yev hyusiskovkasyan nart'akan eposneri haraberut'yuny.– «Haykakan eposy yev hamashkharhayin epikakan zharangut'yuny» (khmb.` A.Ye. Petrosyan, A.K. Yeghiazaryan), Yerevan, HH GAA «Gitut'yun» hrat., ej 8–51 (In Armenian).

Petrosjan A. E. 2014, Strukturnye svjazi armjanskih i osetinskogo éposov. – «Armjanskij épos i vsemirnoe épičeskoe nasledie», Erevan, Izd. «Gitutjun» NAN RA, s. 47–53 (In Russian).

Petrosyan A.Ye. 2018, Hay zhoghovrdakan herosakan eposy.– «Hnagitut'yan yev azgagrut'yan instituti ashkhatut'yunner–1: hay zhoghovrdakan mshakuyt' XVII: avandakany yev ardiakany hayots' mshakuyt'um», Yerevan, HAI hrat., ej 414–425 (In Armenian).

Petrosyan A.Ye. 2024, Nor k'aghak'i himnman araspely hndevropakan vipakan avandut'yan mej.– «Epos, ink'nut'yun yev mshakuyt'»: «Sasna tsrer» eposi usumnasirut'yan 150-amyakin nvirvats mijazgayin eposagitakan 6-rd gitazhoghovi amp'op'agreri zhoghovatsu (khmb.` T. S. Dalalyan), Yerevan, HAI hrat., ej 51–53 (In Armenian).

Sahakyan A. Sh. 1975, «Sasna tsreri» patumneri k'nnakan hamematut'yun, Yerevan, HSSH GA hrat., 191 ej (In Armenian).

Skazanija o nartah. 1978. Osetinskij épos, izdanie pererabotannoe i dopolnennoe (perevod s osetinskogo Ju. Lebedinskogo), Moskva, «Sovetskaja Rossija», 512 s (In Russian).

Sruandzteants' G. V. 1874, Grots' u brots' yev Sasunts'i Dawit' kam Mheri dur, K. Polis, Tpagrut'iun Ye. M. Tntesean, 192 ej (In Armenian).

Պատմա-բանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

# ОБЩИЕ ЭПИЧЕСКИЕ СХЕМЫ В АРМЯНСКИХ И ОСЕТИНСКОМ ЭПОСАХ

ТОРК ДАЛАЛЯН

Р е з ю м е

*Ключевые слова: эпос, четырехветвевая структура, громовой прото-персонаж, близнецы, тройняшки, «митраический» герой, главный герой-драконоборец, умирающий-воскресающий герой.*

В статье рассматриваются общие эпические схемы трех армянских эпосов: этногонического, языческого и средневеково-христианского, а также осетинского «Нартского» эпоса. Эти фольклорные памятники обрели свою окончательную форму в разные исторические эпохи. Формирование эпоса «Айкян» (Гайкиды) завершилось в IX–VIII вв. до н. э., языческий эпос «Ергк випасанац» («Випасанк») сложился во II в. до н. э. – I в. н. э., тогда как «Сасна Црер» окончательно сформировался главным образом в IX–X вв. Основное ядро осетинского «Нартского» эпоса сложилось в средневековье – в XIII–XIV вв., однако формирование древнейших сюжетов относится к скифскому языческому периоду, около VIII–VII вв. до н. э. На основе метода сравнительной мифологии и сравнительного эпосоведения сделана попытка обосновать точку зрения касательно того, что все перечисленные эпосы характеризуются пятипоколенным генеалогическим древом героев и четырехветвевой эпической структурой. В соответствующих подразделах приводятся мифологическое описание главного героя каждого поколения и его эпическое воплощение в указанных эпосах: а. Громовой прото-персонаж, б. братья-близнецы / тройняшки, в. герой, отстаивающий справедливость, г. главный драконоборец, д. умирающий-воскресающий герой. Основной вывод состоит в том, что указанные эпосы соответственно имеют следующие четырехветвевые структуры: 1. Айк, Араманяк-Арамайис; Амасиа / Гелам / Харма; Арам; Ара Гелецик; 2. Цовинар, Тигран; Санатрук; Арташес; Артавазд; 3. Цовинар, Санасар-Балдасар; Старший Мгер; Давит; Младший Мгер; 4. Уархаг, Ахшар-Ахшартаг; Вырызмаг; Батрадз; Сослан.

*Торк Далалян – к. филол. н., заместитель директора Института археологии и этнографии НАН РА, заведующий отделом Фольклористики, старший научный сотрудник отдела Общей и сравнительной лингвистики Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: вопросы армяно-кавказской и армяно-иранской фольклористики, эпосоведения и языкознания. Соавтор 2 книг, автор более чем 100 научных статей.*
*ORCID: 0000-0002-8686-5341. tork.dalalyanl@iae.am*

# GENERAL EPIC SCHEMES IN THE ARMENIAN AND OSSETIAN EPICS

TORK DALALYAN

S u m m a r y

*Keywords: epic, four-branch structure, thunder proto-character, twins, triplets, "mithraic" hero, main dragon-fighting hero, dying and resurrecting hero.*

The article addresses general epic schemes of the three Armenian epics: ethnogonic, pagan, and medieval-Christian, as well as the Ossetian "Nart" epic. These folklore monuments received their final forms in different historical eras. The formation of the ethnogonic epic "Haikian" (Haikids) was completed in the 9th–8th centuries BC, the pagan epic "Ergk Vipasanats" ("Vipasank") was composed from the 2nd century BC – 1st century AD, while the medieval epic "Sasna Tserer" was finally formed mainly in the 9th–10th centuries. The main core of the Ossetian Nart epic was completed in the Middle Ages – in the 13th–14th centuries. However, the formation of its most ancient plots dates back to the Scythian pagan period, around the 8th –7th centuries BC. Based on the method of comparative mythology and comparative epic studies, an attempt was made to justify the point of view that a five-generation genealogical tree of heroes and a four-branch epic structure characterize all the listed epics. In the corresponding subsections, the mythological description of the main character of each generation and his epic incarnation in the epics are given: a. Thunder proto-character; b. twin brothers/triplets, c. justice-asserting hero, d. general dragon-fighter, e. dying-and-resurrecting hero. The main conclusion is that all mentioned epics have the following four-branch structures: 1. Hayk, Aramanyak-Aramayis; Amasia / Gelam / Harma; Aram; Ara Gełec'ik; 2. Tsovinar, Tigran; Sanatruk; Artashes; Artawazd; 3. Tsovinar, Sanasar-Baldasar; Elder Mher; Davit; Younger Mher; 4. Warxag, Axshar-Axshartag; Werezmag; Batradz; Soslan.

*Tork Dalalyan – Ph.D. in Philological Sciences, Deputy Director of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Head of Folklore Studies Department, Senior Researcher at the Departmen of General and Comparative Linguistics of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: issues of Armenian-Caucasian and Armenian-Iranian folklore, epic studies and linguistics. Co-author of 2 books, author of more than 100 academic papers. ORCID:0000-0002-8686-5341. tork.dalalyanl@iae.am*

ՀՏԴ : 891.981-93 + 850-93 +398.2

Doi:10.54503/0135-0536-2025.2-157

# ՉԱՓԱՀԱՍՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԾԵՍԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԻՏԱԼԱԿԱՆ ՄԻ ՀԵՔԻԱԹԱԽՄԲՈՒՄ*

ԹԱՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**Բանալի բառեր՝** չափահասության խորհրդածես, հայկական և իտալական հեքիաթախումբ, Հանս-Յորգ Ութեր, արխայիկ մտածողություն, նպրինջ, հավկիթ (ձու), հեքիաթ, խորհրդանշան, այուժե, առասպել:

**Ամփոփում**

*Գերմանացի բանագետ Հանս-Յորգ Ութերի «ժողովրդական հեքիաթների տիպերի» միջազգային նշացանկի (կատալոգ) 408 թվահամարին համապատասխանող հայկական «երեք հավկիթ» և իտալական «երեք նարինջ» հեքիաթախմբի համեմատական քննությունը ցույց է տալիս, որ տարիքային մի խմբից անցումը մյուսին, տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ ունեցել է զանազան դրսևորումներ ու խորհրդանշանային ծածկագրեր, բայց բոլորն էլ ամենակարևորը համարել են նախամուտնական չափահասության կարգն անցնելու ծեսի հաղթահարումը:*

*Ե՛վ հայկական, և՛ իտալական հեքիաթախմբում հավկիթներից ու նարինջներից ելած առաջին երկու աղջիկները մահանում են, միայն երրորդ աղջկան է հաջողվում հաղթահարել ծեսը, կենդանի մնալ, ամուսնանալ և կարգավիճակ փոխել: Երկու դեպքում էլ աղջիկների համար պարփակման ամենաբնորոշ տեղը հայկական հեքիաթներում հավկիթն (ձուն) է, միջազգային, մասնավորապես՝ իտալական տարբերակներում՝ նարինջը, ինչը պայմանավորված է հեքիաթը ստեղծող ժողովրդի պատմաաշխարհագրական միջավայրով, ծիսաառասպելաբանական մտածողությամբ, հավատալիքներով, կրոնական ավանդույթներով և այլ գործոններով: Այս առումով կարևորվում են բուսակենդանական հավկիթ-նարինջ ծածկագրերը, որոնք աննդային-կիրառական և դարմանող նշանակությունից զատ ընկալվում են որպես փակ տարածք՝ վերածվելով նախամուտնական փորձությունների հաղթահարման ծեսի խորհրդանշանների:*

**Նախաբան**

*Հեքիաթների միջազգային նշացանկը կազմել են ֆիննական դպրոցի պատմաաշխարհագրական մեթոդի ամենահայտնի ներկայացուցիչները՝ ամերիկացի բանագետներ Անտի Աարնեն, Սթիթ Թոմփսոնը և գերմանացի բանագետ Հանս-*

---

* *Ներկայացվել է 10. II. 2025 թ., գրախոսվել է 13. II. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*Յորգ Ուխերը: Ա. Աարնեն 1910 թ. հրատարակել է «Հեքիաթների տիպերի նշացանկը»* (“Verzeichnis der Märchentypen”) *աշխատությունը, որով աշխարհում առաջին անգամ ի մի են բերվել հեքիաթների միջազգային սյուժեները, տիպերը և մոտիվները: Սրանց օրինակով տարբեր երկրների բանագետներ սկսել են կազմել իրենց ժողովրդական հեքիաթների նշացանկերը:*

*Ս. Թոմփսոնը 1928 թ. Ա. Աարնեի վերոնշյալ «Հեքիաթների տիպերի նշացանկը» անգլերեն է թարգմանել, համալրել նոր նյութերով և հրատարակել իրենց երկուսի անունով՝ Աարնե-Թոմփսոնի նշացանկ:*

*Ս. Թոմփսոնը հայկական հեքիաթներին անդրադարձել է հպանցիկ՝ բավարար չափով նյութ չունենալու պատճառով: Հեքիաթների դասակարգման մեջ նա հիշատակում է Հակոբ Խաչատրյանցի հեքիաթների ժողովածուի անգլերեն տարբերակը՝ Նիկոլայ Օռլովի թարգմանությամբ և ամերիկահայ բանասեր Մարտիրոս Անանիկյանի «Հայ դիցաբանություն» աշխատությունը: Հետագայում՝ 1966 թ., ամերիկահայ բանագետ Սյուզան Հուգասյան-Վիլան «100 հայկական հեքիաթներ» ժողովածուում հայկական հեքիաթները ենթարկել է մոտիվային դասակարգման՝ ըստ Աարնե-Թոմփսոնի նշացանկի:*

*2004 թ. հրատարակվել է Հանս-Յորգ Ուխերի «Միջազգային հեքիաթների տեսակները» եռամաս նոր նշացանկը[1], որի հիմքում ընկած է Աարնե-Թոմփսոնի բանագիտական նշացանկը՝ համալրված նոր նյութերով, բացթողումների լրացումներով և ծավալուն ծանոթագրություններով: Ուխերը հավատարիմ է մնացել աշխարհի ժողովուրդների հեքիաթների տիպերի դասակարգման նախորդ հեղինակների ստեղծած կիրառական սկզբունքներին, ինչի չնորհիվ էլ իր աշխատանքն ընդունված է անվանել Աարնե-Թոմփսոն-Ուխերի* (Aarne/ Thompson / Uther) *նշացանկ* (ATU): *Դրա առաջին մասը նվիրված է կենդանապատում, հրաշապատում, կրոնական և իրապատում հեքիաթներին, երկրորդ մասը՝ երգիծական հեքիաթներին ու գրույցներին, երրորդ մասը հավելվածն է: Նշացանկը վերահրատարակվել է 2011 թ., Հելսինկիում:*

**Հայկական և իտալական «Երեք հավկիթ» / «Երեք նարինջ» հեքիաթախմբի բուսակենդանական ծածկագիրը**

*Հայաստանի պատմազգագրական տարբեր շրջաններից՝ Այրարատ, Գուգարք, Շիրակ, Արցախ, Բասեն, Մուշ, Մոկս, ինչպես նաև Իտալիայի տարբեր քաղաքներից ու բնակավայրերից՝ Ջենովա, Պալերմո, Նեապոլ, Սիցիլիա, գրառված հեքիաթների մի խումբ՝ «Երեք նարինջ» ընդհանուր խորագրով, համապատասխանում է Հանս-Յորգ Ուխերի՝ հեքիաթների միջազգային նշացանկի 408 թվահամարին: Մեզ հետաքրքրող հայկական հեքիաթներում խաղարկվում է հավկիթը, իսկ իտալական հեքիաթներում՝ նարինջը: Ըստ այդմ էլ, նույն 408 թվահամարին պատկանող հայկական հեքիաթները ստացել են «Երեք հավկիթ» անունը:*

*Բովանդակային և դիպաշարային տեսանկյունից այս հեքիաթախումբը դրսևորում է ընդհանրություններ ու առանձնահատկություններ՝ պայմանավորված հեքիաթը ստեղծող ժողովրդի արխայիկ մտածողությամբ և ծիսառասպելաբանական պատկերացումներով, որոնք ծածկագիր նշաններ են:*

[1] Uther. 2011, I; Uther. 2011, II; Uther. 2011, III.

*Նշանի խորհրդաբանությունն արտահայտվում է հաղորդակցման կամ ճանաչման գործընթացում: Խորհրդանշանը որևէ առարկայի, կենդանու կամ երևույթի, որոշակի գաղափարների, հասկացությունների պատկերն է կամ պայմանական նշանը, որի միջոցով մատնանշվում է տվյալ առարկայի կամ երևույթի հատկանիշը[2]: Խորհրդանշանը հնարավոր է դարձնում գաղտնաղերծել ղարերի հոլովույթում բազմաթիվ սերունդների կենսափորձով ամրագրված հասկացությունները:*

*Հայկական ժողովրդական հեքիաթներում հիշատակվում են տարբեր տեսակի մրգեր, պտուղներ, բանջարեղեն և օրգանական այլ բարիքներ, որոնք աղերսվում են բուսակենդանական աշխարհի առասպելներին: Այդ բարիքները՝ խնձորը, նուռը, ձմերուկը, սեխը, դդումը, խաղողը, վարունգը, բիբարը, հատիկազգիները (բոլորն իրենց մեջ սերմեր կամ հատիկներ են կրում) և հավկիթը (որն ինքնին բեղմնավորում է նշանակում), թե՛ հայկական հրաշապատում հեքիաթներում և թե՛ հայ ժողովրդական տարբեր տոների ժամանակ զոհաբերվում են՝ փոխակերպվելով որոշակի տեղեկատվություն հաղորդող՝ խոսքային և ոչ խոսքային նշանի: Նույնը տեսնում ենք իտալական «Երեք նարինջ» հեքիաթախմբում, որտեղ նարինջը նույնպես սերմեր է կրում իր միջուկի մեջ: Իսկ առասպելաբանական մտածողության մեջ սերմեր կրող յուրաքանչյուր բուսակենդանական բարիք պտղաբերություն է խորհրդանշում՝ մահ և վերածնունդ: Օրինակ՝ հայկական հեքիաթներում աղջիկը հղիանում է պատահաբար կուլ տված նռան հատիկից, ոսպից, ցորենից, ինչպես նաև մարջանից[3] կամ ուլունքից[4] (մարգարիտ), որոնք երկուսն էլ բնակազմական բաղադրություն ունեն և հատիկազգիներ են հիշեցնում: Ավստրացի հոգեվերլուծաբան Կարլ Գուստավ Յունգի արքետիպային տեսության մեջ վերոնշյալ ուլունքներն ու ձուն համադրվում են, դառնում նշան[5]:*

*Նշանը նյութական է, որի նշանակությունը դրանով ներկայացված առարկան է[6], այսինքն՝ խնդրո առարկա բուսակենդանական ծածկագրեր ընկալվող բարիքները: Ատիճանաբար նշանը վերածվում է խորհրդանշանի, որն իր մեջ ներառում է մարդկության սոցիալ-մշակութային ավանդույթում ամրագրված կոլեկտիվ հիշողությունն ու կուտակած փորձը[7]:*

*Այդ ծածկագիր-խորհրդանշանները թեև հայկական հեքիաթներում բազմազան են, սակայն մեզ հետաքրքրող հեքիաթախմբում գերիշխում է հավկիթը, որոշ տարբերակներում՝ նաև նուռը, ձմերուկը և վարունգը: Իսկ իտալական հեքիաթներում գրեթե միշտ գերիշխում է նարինջը, հազվադեպ՝ նուռը[8]:*

*Տարբեր ժողովուրդների ավանդույթներում տարիքային մի խմբից մյուսն անցնելու արբունքի նվիրագործման ծեսը, առավել ևս ամուսնությունը, ուղեկցվել է եռամասն չափահասության խորհրդածեսով, լատիներեն* “initiatio”՝



[2] Saussure. 1916, 271–272.

[3] *Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետ՝ ՀԺՀ). 1959, 228–235:*

[4] *ՀԺՀ. 1968, 103:*

[5] Юнг. 2005, 87–88.

[6] Пирс. 2000, 212–213.

[7] Юнг. 1991, 25–25.

[8] Итальянские сказки. 1959, 129–130.

*նվիրագործում բառից [բնակատեղից օտարում, փորձության ենթարկում (մահ), ծիսական լվացում (վերածնունդ)][9]:*

*Հեքիաթներում հարանացու աղջիկները պարփակված են հավկիթների և նարինջների մեջ: Հավկիթ / նարինջ զուգադրությունը՝ դաղտնագիտական (օկուլտային) այլաբանություն է, փակ տարածք, որտեղ իրականացվում է արբունքի հասած աղջիկների նախամուսնական նվիրագործման ծեսը: Ի դեպ, նախամուսնական այդպիսի ծես են անցնում նաև հրաշապատում հեքիաթների տղաները, որոնք պարփակվում են կարասի, թռչունի կաղապարի կամ անդուռ, անպատուհան չինության մեջ[10]:*

### Հեքիաթախմբի ստեղծման բանահյուսական հենքը

*Միջազգային նշացանկի վերոնշյալ 408 թվահամարին համապատասխանող հայկական հեքիաթներում խաղարկվում է Զատիկին զոհաբերվող հավկիթը, որը համադրվում է իտալական նույն հեքիաթախմբի դիպաշարերում լայնորեն տարածված նարնջի հետ:*

*Ինը տպագիր տարբերակ ունեցող հայկական հեքիաթախումբը [«Ենգիչարու հեքիաթը»[11](Այրարատ), «Ղուլ-զադա և Նուռի-Գյոզալի»[12] (Շիրակ), «Ծուսվին ծառը»[13] (Արցախ), «Շարի մարգրիտ»[14] (Տուրուբերան-Հարք), «Իրեք հավկիթ»[15] (Տուրուբերան-Մուշ), «Սամել թագավորի տղաներ»[16] (Տուրուբերան-Մուշ), «Հավկիթին մեջեն ելած աղջիկը»[17] (Կարին), «Արևելոց թագավորի տղեն»[18] (Թիֆլիս), «Ոսկի ծամ»[19] (Թիֆլիս)] հենց այդպես էլ կոչվում է՝ «երեք հավկիթ» կամ «երեք նարինջ», որի համառոտ դիպաշարը հետևյալն է. չափահասության նվիրագործման ծես անցնող արբայազնը հոլով կամ քարով խաղալիս պատահաբար ջարդում է պառավի կուժը / դավարը: Իտալական հեքիաթներում[20] հոլին փոխարինում է փայտե մեծ գնդակը, որով արբայազնն ուզում է հարվածել կեգլի[21] խաղափայտին, բայց չեղվելով՝ կոտրում է պառավի փարչը: Իտալական հեքիաթներում պառավն անիծում է, որ տղան չափահաս դառնալուն պես որոնի երեք նարինջները: Հայկական հեքիաթներում պառավն անիծում է, որ տղան փերու (տարբերակներում՝ Նուռի-Գյոզալի, Ենգիչարու,*

---

[9] Левинтон. 1987, 343–344.

[10] *ՀԺՀ. 1963, 404–407:*

[11] *ՀԺՀ. 1962, 310–315:*

[12] *ՀԺՀ. 1963, 149–152:*

[13] *ՀԺՀ. 1966, 157–162:*

[14] *ՀԺՀ. 1980, 323–331:*

[15] *ՀԺՀ. 1985, 178–182:*

[16] *ՀԺՀ. 1985, 183–187:*

[17] *«Բիւրակն» (Կ. Պոլիս), 1899, № 15, 231–232:*

[18] *Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից. 1892, 85–90:*

[19] *Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից. 1892, 101–113:*

[20] *Իտալական ժողովրդական հեքիաթներ. 1971, 123–124:*

[21] *Կեգլի (գերմ.՝* Kegel*՝ խաղափայտ, խաղ): Փոքր քանակի փայտե գնդիկներով խփում են մեծ քանակությամբ փայտե կամ պլաստմասե ֆիգուրների (կեգլիների) վրա, որոնց որոշակի կարգով դասավորում են ու հարվածում:*

*Գյուլիզարի, Ձվի ծառի, Ոսկի ծամի) սիրուց այրվի: Տղան երեք հավկիթ (տարբերակներում՝ նուռ[22], ճմերուկ[23], վարունգ[24]) է գտնում, ջարդում, որից փերիներ են դուրս գալիս, երկուսը մեռնում են ծարավից, երրորդն ապրում է, դառնում նրա հարսնացուն:*

*Ջար ու տգեղ աղջիկը (իտալական հեքիաթում՝ կույր ու կաղ ապաստուհին)[25] ծառի ճյուղերի մեջ պարփակված փերուն ջուրն է նետում՝ ինքը դրավելով նրա տեղը: Փերին, կերպարանափոխվելով զանազան իրերի ու առարկաների (մանուշակ, ծառ, ռեհան, ծիծեռ, թռչուն, չամփուր, խնձոր), օգնում է մի պառավի և արժանանում նրա ջակցությանը: Թագավորի տղան իմանում է ճշմարտությունը, պատժում չար ու խաբեբա աղջկան և ետ բերում փերուն:*

*Իսկ «Ենգիչարու[26] հեքիաթում» «պառավը տղային «ուշունց» տվեց, ասելով. «Ենգիչարու դարդով մեռնես: Էրեխեն չհասկացավ, թե էն կնիկը դրանով ի՞նչ էր ուզում ասի: Քանի գնում, էս թաքավորի էրեխեն հալից ընկնում էր: Թաքավորը էլ աչխարհում հեքիմ չմնաց՝ բերեց, համա ոչ ով չկարաց նրա տղին լավացնի:*

*Հետո էկավ մի պառավ ու ասեց. — Ես կարամ լավացնի:*

*Էս պառավը էն կնիկն էր, որ մի վախտ քուչով անց էր կենում, ու թաքավորի տղեն հոլով նրա կուժը կոտրեց»[27]:*

*Պառավը թագավորի տղային պատվիրում է քաղաքից դուրս որոնել, գտնել այն ծառը, որի վրա երեք հավկիթ կա, մեկ-մեկ կոտրել դրանք և դրանցից դուրս եկող փերիներին հաց ու ջուր տալ, հակառակ դեպքում՝ նույն պահին կկորցնի նրանց[28]:*

*Տղան կատարում է պառավի ասածները, բայց հավկիթի միջից դուրս եկած դեղեցկուհիները քաղցից ու ծարավից անմիջապես մեռնում են, իսկ երրորդին թեև հասցնում է հաց ու ջուր տալ և ապրեցնել, բայց նրան էլ փորձությունների են ենթարկում չար ու տգեղ աղջիկը կամ նրա ջադու (կախարդ) մայրը:*

*Այս նույն դիպաշարը տեսնում ենք հայկական «Ծուվին ծառը» իտալական «Ճերմակ, ինչպես կաթը, կարմիր, ինչպես արյունը»[29] և այլ հեքիաթներում:*

*Իտալական «Երեք նարինջ» հեքիաթում, երբ թագավորի տղան կեզլի խաղալու ժամանակ պատահաբար ջարդում է ճերմակ մազերով կուզիկ պառավի փարչերը, պառավն իր ծուռտիկ մատով սպառնում է և բարակ ճղճղան ձայնով ասում. «— Լսիր ինձ, թագավորի տղա, դու որ կոտրեցիր իմ փարչերը, ես քեզ անիծում եմ: Հենց որ լրանա երեք անգամ յոթ տարիդ, քեզ թող պատի թախիծը ու դու թախծից տանջվես այնքան ժամանակ, մինչև որ գտնես այն ծառը, որի վրա երեք նարինջ կա: Իսկ հենց որ գտնես այդ ծառը և նարինջները պոկես, խմել ուզենաս, դրանից հետո կտեսնենք, թե ինչ կլինի: Պառավը չարակամ ծիծաղեց ու քարշ գալով հեռացավ»[30]:*

---

[22] *ՀԺՀ. 1963, 149–152:*

[23] *ՀԺՀ. 1999, 507–512:*

[24] *ՀԺՀ. 1984, 101–105:*

[25] Три апельсина. 1960, 136–137.

[26] *Ենգիչարին փերիների գլխավորն է:*

[27] *ՀԺՀ. 1962, 310:*

[28] *ՀԺՀ. 1962, 310:*

[29] Итальянские сказки. 1959, 129–134.

[30] Три апельсина. 1960, 129.

*Պառավի սահմանած ժամկետը լրանալուն պես թախիծը «կրծում է» արքայորդու սիրտը. «— Ա՛խ, ես որտեղի՞ց գտնեմ երեք նարինջը, — կրկնում էր նա»[31]: Ոչինչ չի փարատում արքայորդու վիշտը, թեև ծնողները նրա առջև սարի չափ ոսկեգույն նարինջներ են «կիտում»: Տղան թամբում է ձին ու պատրաստվում երեք նարինջները որոնելու: Ճանապարհին արքայորդուն օգնում են հավկիթի, չագանակի, ընկույզի կճեպների մեջ թաքնված փերիները, որոնք քիչ էր մնում, որ տրորվեին նրա ճիու ամբակների տակ: Արքայորդին իր ոսկյա զարդերը նվիրում է նրանց: Նա մատից հանում է թանկարժեք քարով մատանին ու հագցնում փերու մեջքին՝ որպես գոտի: Նրանք ուրախանում են և տղային ուղղորդում են, թե որտեղից գտնի ալմաստե բանալին և ինչպես բացի ոսկե դռնակը, որի հետևում նարնջի ծառի վրա փայլում են երեք նարինջները. «Բայց ինչպիսի՛ նարինջներ էին: Մեծ-մեծ, հոտավետ, ոսկե կեղևով: Կարծես Իտալիայի չոայլ արևը միայն նրանց էր բաժին ընկել: Թագավորի տղան դրանք քաղեց, դրեց թիկնոցի տակ և վերադարձավ»[32]: Անապատով անցնելիս տղան սաստիկ ծարավում է, և հետաքրքրությունը նրան տանջում է. «Տեսնես ի՞նչ է թաքնված ոսկե կեղևի տակ»[33]: Արքայորդու կիսած երկու նարինջներից գեղեցկուհիներ են դուրս գալիս և «ջո՛ւր, ջո՛ւր» աղաղակելով մեռնում: Դիմանալով տանջալից տապին՝ տղան երրորդ նարինջը կիսում է հարազատ թագավորության սահմանի մոտով անցնող գետի մոտ, որպեսզի գեղեցկուհին հագենա ջրից. «Արքայորդին չէր կարողանում հիացական հայացքը հեռացնել աղջկանից: Նրա դեմքն ավելի նուրբ էր, քան նարնջենու ծաղիկը, աչքերը կանաչ էին, ինչպես պտղի կոկոնը, վարսերը ոսկե, ինչպես հասած նարնջի կեղևը»[34]:*

*Աշխարհի շատ երկրների արևադարձային ու մերձարևադարձային շրջաններում մշակվող նարնջենու պտուղներն ունեն անընդարար, բուժիչ նշանակություն, իսկ ծաղիկը կապվում է հարսնացուի բախտի հետ և կիրառվում հարսնացուների ծաղկեփնջերի ու գլխի ծաղկեպսակների զարդարման մեջ: Պատահական չէ, որ այդտեղի հեքիաթներում, նախամուսնական փորձություններն հաղթահարման ծես անցնող հարսնացուները պարփակված են նարնջի մեջ: Այս առումով մշտադալար նարնջենին համադրվում է տիեզերական ծառի հետ:*

*Հայկական հրաշապատում հեքիաթներում հավկիթի մեջ պարփակված աղջիկները չափահասության խորհրդածեսի փորձություններով են անցնում: «Ծուվին ծառը» հեքիաթում պառավն անիծում է տղային, ասելով՝ «ձվի ծառի տիրանաս»:*

*Հայկական առասպելաբանական պատկերացումներով՝ հավկիթը նույնպես կապվում է կենաց ծառի հետ: Հայկական հեքիաթներում «ձվի ծառը» նկարագրվում է հետևյալ կերպ. «Էղ տղան էթումա, հասնում սարի գլուխը: Հենց էնա լիսվելիս էր, տղան բիրդան մըտիկ ա անում, տենում սարի վիրա մի կանանչ,*

---

[31] Три апельсина. 1960, 129.

[32] *Իտալական ժողովրդական հեքիաթներ. 1971, 127:*

[33] *Իտալական ժողովրդական հեքիաթներ. 1971, 127:*

[34] Три апельсина. 1960, 135.

*փարթամ ծառ, ճղները՝ ըշխարքիս չորս դիհավը փռած, վիրեն էլ ճվերը չողշողում են: Թաք ա կենում, մին քարավ խըփում ճվին: Մին էլ տեհում ա մին հուրի փարի ա հելնում ճվի մեջից ու ջո՛ւր, ջո՛ւր կանչելով մեռնում ա»[35]:*

*2000 թ. դաշտային բանահյուսական աշխատանքների ընթացքում Սյունիքում գրառել ենք հեքիաթներ, որոնք արտահայտում են Տիեզերքի եռամաս կառուցվածքի ուղղաձիգ պատկերացումը: Նկարագրվում է ծառը, ծառի կատարին թռչունն ու հավկիթները, արմատի մոտ՝ վիշապ-օձերը, որոնք հսկում են ծառին[36]: Դրանցից դարձյալ դեղեցկուհիներ են դուրս գալիս. «Էդ ծառեն պըտկեն իրեք ծու կա, մեջին ղաշանգ ըխճըկերք, տակեն էլ՝ ծառը պահող վիշապ-օձեր»[37]:*

**Հեքիաթավամբի ստեղծման աղբյուրական հենքը**

*«Հավկիթին մեջեն ելած աղջիկը» հեքիաթում նախամուսնական փորձությունների միջով անցնող տղան կարողանում է փրկել միայն երրորդ աղջկան և նրան է նվիրում իր մատանին: Ջար ու տգեղ աղջկա մայրը փերուն նետում է ջուրը և նրա փոխարեն իր աղջկան է նստեցնում ծառի ճյուղին ու ներկայացնում որպես արքայորդու հարսնացու: Ջուրը, որտեղ նետված էր փերին, անմիջապես ծածկվում է անուշաբույր ծաղիկներով: Տղան փորձում է մխիթարվել այդ ծաղիկներից հավաքած ծաղկեփնջերով, և, երբ հիվանդանում է, նրան կազդուրում է միայն հավկիթից ելած աղջկա եփած կաթնապուրը, որի մեջ էլ տղան գտնում է աղջկան նվիրած իր մատանին: Ավելորդ չէ հիշել, որ Համբարձման տոնի գլխավոր ծեսը «Վիճակի» կամ «Կաթնապուրի» ծեսն է:*

*Կարծում ենք, որ վերոհիշյալ հեքիաթներում առկա են ջրերի ակունքներում, աղբյուրների մոտ կատարվող Վարդավառյան զոհաբերությունների՝ մատաղի հետքերը, քանի որ հավկիթներից ելած աղջիկները մահանում են՝ ջուր կանչելով և այդ աղբյուրներին չհասնելով: Հետաքրքիր է նկատել, որ մեծ ընդհանրություն կա թե՛ հեքիաթներում և թե՛ Վարդավառի «ինդում տօք» ծեսի պառավների անեծքների միջև: Իրականում դրանք անեծքներ չեն, այլ միջոց, որպեսզի սիրող սրտերը, փորձություններ հաղթահարելով, գտնեն իրար:*

*Ինչպես Վարդավառին, այնպես էլ Համբարձման տոնին աղջիկները խմբով պտտվում և երգներանգ ծաղիկներ էին փնջում: Բացօթյա հանդեսները գրավում էին ամիսներով տանը փակված աղջիկներին, քանի որ սոցիալական փորձի, գիտելիքների, վարքի նորմերի յուրացում էր տեղի ունենում, աղջկատեսի և կարգավիճակի փոփոխման հնարավորություն էր ստեղծվում:*

*Այս առումով ուշագրավ է իտալացի գրող, Բոլոնիայի համալսարանի նշանագիտության պրոֆեսոր Ումբերտո Էկոյի դիտարկումն այն մասին, որ ցանկացած մշակութային երևույթ կարելի է ուսումնասիրել հաղորդակցության միջոցով[38]: Էկոն լեզվի արտասովոր ունակության է վերագրում թե՛ անհետացած և թե՛ գոյություն չունեցող երևույթների նկարագրությունը[39]:*

---

[35] *Վ ա ր դ ա ն յ ա ն. 1980, 10:*

[36] Т о п о р о в. 2010, 217–218.

[37] *Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. 2000, 25:*

[38] E c o. 1986, 145.

[39] E c o. 2005, 5.

*Համբարձման տոնին վերոնշյալ «Վիճակի» կամ «Կաթնապուրի» ծեսով գուշակում էին մանկակից աղջիկների ճակատագիրը: Նրանց փարչի մեջ յոթ տեսակ ծաղիկ և յոթ աղբյուրից ջուր էին հավաքում, գիշերը մեկական հավկիթ էին դնում տանիքին, որպեսզի հրեշտակները դրանց վրա իրենց բախտը գրեն: Համբարձման տոնի կաթնապուրը մատաղ էր, որը բաժանվում էր առնվազն յոթ տեղ և աստծուց սեր էին աղերսում: Ի վերջո, մեր քննած հեքիաթախմբում, արքայազնը հենց հավկիթից ելած աղջկա եփած կաթնապուրի միջոցով է կազդուրվում և գտնում սրտով սիրածին, ինչին համախոս է նաև ժողովրդական խաղիկը.*

Ա՛յ տղա հուր ես մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Մախմուրէ բանուած չոր ես,
Համբարձուայ գիշերն ո՞ւր ես[40]:

*Հավկիթից ելնող և մեռնող աղջիկների զոհաբերությունը, ակնհայտորեն, համադրելի է հայկական ժողովրդական տարբեր տոներին կատարվող բերքի օրհնության և նվիրաբերման ծեսերի հետ. օրինակ՝ Վարդավառին զոհաբերում էին խնճոր ու հասկեր, Համբարձմանը՝ կաթնով, Աստվածածնի տոնին՝ խաղող, Ամանորին, Տյառնընդառաջին և Ս. Սարգսին՝ հատիկներ (փոխինճ, աղանճ), որոնց մասին տեղեկությունները իրենց արտացոլումն են գտել բուսակենդանական պաշտամունքի և մասնավորապես Նավասարդյան բերքահավաքի ծիսական արարողություններում, որոնք հետագայում միաձուլվել են Վարդավառին և Աստվածածնի տոնին:*

*«Խիար-խաթուն»[41] հեքիաթում տղան հալիվորի խորհրդով բոստանի մարգերի մեջ առավոտ չուտ եռանդագին որոնում ու գտնում է լուսս տվող վարունգը, որը չի կարելի ուտել, քանի որ նրա մեջ պարփակված խիար-խաթունը ծիտ կդառնա, կթռչի: Տղան ճամփին ծարավում է, ուտում է սովորական վարունգները, իսկ խիար-խաթունի վարունգից սխալմամբ մի թեթև կծում, դնում է ծոցը: Վարունգը ծիտ է դառնում, թռվռում տղայի ծոցում: Տղան անմիջապես կոճկում է հագուստը, որ ծիտը չթռչի. «Տղի հուշք կընգնի, կպատի գետին, ճնճուղ կէղնի հուրնիկ-հրեղեն ախչիկ մա, տղի ծոցեն կէլնի»[42]:*

*Հեքիաթում բուսական առաջնատուղը՝ նուբարը, համադրվում է ջահել սրտերում բուն դրած թրթիռների հետ, ինչին համախոս է նաև ժողովրդական խաղիկը.*

Ղուշը կանչից բաղումը,
Կանաչ խիյար թաղումը,
Ես մին նուբար բար բիղի,
Յարիս ծոցին ծալումը[43]:

---

[40] *Ի ս ա հ ա կ ե ա ն. 1898, 167:*
[41] *Հ ԺՀ. 1984, 101–105:*
[42] *Հ ԺՀ. 1984, 102:*
[43] *Հ ա յ ր ա պ ե տ յ ա ն. 2006, 45:*

*Հայկական «Ղուլ-զադա և Նուռի-Գյոզալի»[44] և իտալական «Ճերմակ, ինչպես կաթը, կարմիր, ինչպես արյունը»[45] հեքիաթներում փերիները դուրս են գալիս նուռից: Իսկ հայկական «Մարգարիտ չար»[46] հեքիաթում փերիները պարփակված են նաև ձմերուկի մեջ: Առաջին երկու ձմերուկներից ելած աղջիկները ծարավից մեռնում են: Թագավորի տղան շատ է տխրում և երրորդը կորում է մի պաղ աղբյուրի հասնելուն պես. «Ձմերուկի միջից տյուս կթռնի աղջիկ մը, աղջիկ մի՛ ասե, խուրն-խրեղեն, լուսնկից, արեգակից պայծառ մի խրիչտակ, «ճյո՛ւր, ճյուր» կասի, ուր կթալի աղբրի ական մեջ. կվացվի, կսերսիվի, տյուս կէլնի աղբրի միջից»[47]:*

*Այս դրվագում ակնհայտորեն առկա է նախամուսնական ծեսի ավարտական փուլը՝ ծխական լվացում-վերածնունդ:*

*Նույնն աղերսում է վարդավառին՝ աղբյուրների մոտ գառ, ուլ, հորթ, աքլոր զոհաբերելու, մատաղի արյուն հեղելու ծեսի հետ[48]:*

*Հայկական հեքիաթներից մեկում արքայազնը ճյան վրա սև հավ է զոհաբերում (մատաղ) գտնելու համար իր երազի աղջկան, որի գեղեցկությունը նկարագրում է հետևյալ կերպ. «Քյանճ էսա խավու արյուն կարմիր, քյանճ էսա ճյուն սիվտակ, ծամերն էլ քյանճ իմ խանչալի կոթն սև քյաթայի պես աղջիկ»[49]:*

*Իտալական հեքիաթում կենդանու զոհաբերության դրվագը ուղղակիորեն բացակայում է, բայց արքայազնը հոր խորհրդով աղբյուրի մոտ կիսում է նուռը և դրա միջից ելած փերու մաշկը համեմատում է կաթի, իսկ այտերը՝ նռան կարմիր արյուն հիշեցնող հյութի հետ. «Ճերմակ, ինչպես կաթը, կարմիր, ինչպես արյունը»[50]:*

*Հայկական և իտալական հեքիաթի աղջկա այս անիրական գեղեցկության նկարագրությունը, ավանդույթի առանձնահատկություններով հանդերձ, համապատասխանում է Գրիմ եղբայրների «Ձյունանուշիկ» սկզբնամասի հետ, որտեղ անզավակ թագուհին պատուհանի առաջ նստած կար անելիս հանկարծ ասեղով ծակում է մատն ու ճյան վրա ընկած երեք կաթիլ արյունն այնքան գեղեցիկ է լինում, որ թագուհին ակամա մտածում է. «Ա՛խ, երանի մի երեխա ունենայի՝ ճյան պես ճերմակ մաշկով, արյան պես կարմիր թշիկներով ու շրջանակի պես սև մազերով»[51]:*

*Հայկական հեքիաթներում առաջին երկու հավկիթները տղան ջարդում է ժամանակից շուտ, դեռ աղբյուրին չհասած: Կարծում ենք՝ հենց այդ պատճառով*

---

[44] *ՀԺՀ. 1963, 149–152:*

[45] Итальянские сказки. 1959, 129–134.

[46] *ՀԺՀ. 1999, 507–512:*

[47] *ՀԺՀ. 1999, 507–508: Հայոց մեջ հարսնացու աղջկան հաճախ համեմատում են անկտրել ձմերուկի հետ:*

[48] *Խաչատրյան-Ահաքելյան. 2005, 215:*

[49] *ՀԺՀ. 1999, 507:*

[50] Итальянские сказки. 1959, 129–130.

[51] *Գրիմ եղբայրներ. 1981, 213–221: Կարծում ենք՝ թե՛ հավի ու նռան զոհաբերված «արյունը» և թե՛ թագուհու վնասված մատից թափված արյունը նույնպես կարելի է դիտել իբրև նախամուսնական ծես անցնող աղջիկների անմեղության զոհաբերման և կարգավիճակի փոփոխման մասնակի դրսևորում:*

*էլ հավկիթներից դուրս եկած աղջիկները մահանում են, քանի որ (մինչև Վարդավառ խնձոր չուտելը և մինչև խաղողօրհնեք «խաղողի պաս» պահելը պայմանավորված է չհաս աղջիկների ամուսնության արգելքով և հասունացած առաջին բերքը ուխտավայրերում զոհաբերելու հնագույն սովորույթով):*

*Հեքիաթներում անիծող պառավը համադրվում է Վարդավառի «խնդում տօք» ծեսը հակող պառավի հետ, որը «խնդումը»[52] գլխավերևում բռնած՝ հրապարակում պար է ածում և իբրև խնդության տոնի գլխավոր պահապան՝ ծիսական երգով սաստում է տղաներին, որ հանկարծ չվնասեն «խնդումը», որպեսզի չխախտվի ծիսական կարգուկանոնը.*

Խնդում օնիմ վարդաւ լի,
Զըրդըփչեծ խնձուր լի.
Վախիմ թա քունըս տանի,
Խնդումըս եաղին տանի[53]:

*Երբ երիտասարդներից հնարամիտին հաջողվում է գավազանով խփել ու ցած գլորել «խնդումը», բոլորն անմիջապես վրա են հասնում և խլխլում «խնդումի» վրայի վարունգները, մրգերն ու ծաղիկները, իսկ ճարահատյալ պառավը «խնդումը» «կործանողին» անխնա անիծում է, որ «Բուլթերին եղունգ չմնա», «երկու աչքով կուրանա», «Այնքան նվաղի, որ ասեղը իրեն նեցուկ դառնա», «Աստված չանին քոր տա», «Գինդար[54] սարի չափ վերքեր ունենա», «Դալար մեռնի» և այլն[55]:*

*Ինչպես «խնդում տօք» ծեսում պառավն անիծում է երիտասարդին իր «խնդումը» ավերելու համար, այնպես էլ հայկական ժողովրդական հեքիաթներում պառավն անիծում է հեքիաթի ջահել հերոսին հոլով կամ քարով իր կուժը կամ փարչը կոտրելու համար: Երկու դեպքում էլ՝ պառավին պատկանող կամ պառավի հակողության տակ գտնվող «խնդումը» կամ կուժը (փարչը) պատուհասվում են, և կորստին հետևում են անեծքները՝ «ենգիչարու ղարղով մեռնես», «Նուռի-Գյոզալի սերը սիրտդ ընկնի, վառիս ու էրիս», «Ըստուծանա կըխընթըրիմ, վըեր տու ծուվին ծառին տըրանաս», «Իրեք հավկթի սեր մաչիս դու բալքիմ», «Գյուլիզար խանըմին հ'էշխլու էղնիս, յոթ տարի ուր եռևեն օլորտիս, նոր գտնաս», «Հավկթի միջուկը գտնես», «Դև Թագավորի աղջկա սերը քո սրտում մնա», «Ոսկի ծամի սերը քո սրտին լինի» և այլն:*

*Թե՛ ծեսում և թե՛ հեքիաթներում պառավներն անիծում են չինծու ոգևորությամբ, և խորհրդանշական մակարդակում «խնդում տօք» ծեսի պառավի անեծքը համախոս է հեքիաթի պառավի անեծքի տրամաբանությանը, որը, ի*

---

*[52] Մանր վարունգներով, խնձորներով ու վարդերով զարդարված մեկ մետրանոց խաչաձև փայտը՝ ծլած ցորենի ու գարու հետ կոչվում էր «խնդում», իսկ ծեսը՝ «խնդում տօք» (ժողովրդական ստուգաբանությամբ՝ «ուրախության տալ») (տե՛ս Լ ա լ ա յ ե ա ն. 1905, 151):*

*[53] Լ ա լ ա յ ե ա ն. 1905, 151:*

*[54] Ագուլիսի մոտ գտնվող սար է (Լ ա լ ա յ ե ա ն. 1905, 151):*

*[55] Լ ա լ ա յ ե ա ն. 1905, 151:*

*վերջո, ծալված բարեխոսություն է, որպեսզի հերոսը հասնի իր մուրազին: Պահաս ուշադրավ չէ «Սասնա ծռեր» հերոսավեպում արտատեր պառավի անեծքը՝ ուղղված Սասունցի Դավթին, ով ավերել էր պառավի մշակած կորեկի արտը.*

Ասաց. – գըո՛ղ քեզի տաներ, Թլլոր Դավիթ.
Տու վոչ պարով քու մորեն ծնվեր.
Քու խոր չունի՞ ավղուշի տեղ,
Որ Պառվի կուրկի մեջ ավղուշ կենիա[56]:

*Իրականում ժողովրդական բանահյուսության, ազգագրության մեջ և, մասնավորապես, հրաշապատում հեքիաթներում հերոսների նախամուտնական փորձությունների հաղթահարումը հաճախ իրականացվում է պառավի միջոցով, քանի որ պառավն իբրև բանահյուսական արխայիկ կերպար՝ իր կենսափորձով և գործառույթներով համարվում է Մայր աստվածության արարողական դրսևորում[57]:*

*«Խնդում» բառը, թերևս, խնդության իմաստ է պարունակում և պառավի սահմանած «արգելքներն ու անեծքները» ինքնին աղերսվում են ժողովրդական տոնակատարություններ չղթայում (Համբարձում, Վարդավառ, Խաղողօրհնեք) ծաղիկներ փնջելու, հաստնացած հասկերի հավաքման, խաղողի ու խնձորի օրհնության և ճաշակման ծեսի, ինչպես նաև Վարդավառին վառվող երկնաքեր ղեղի չուրջը սիրած յարին որոնելու, նրա «թաղայ նուբար գիրկն ու ծոցը» վայելելու բաղձալի ցանկության հետ: Ծիսական երգաշարում սրտով սիրածը համեմատվում է «բաղի թաղա բարի» հետ.*

Ջաղցի դըռներ բիբար էր,
Աղջիկ լաճուն նուբար էր[58]:

*Կամ՝*

Բաղին մեջը ղամիշ ա,
Ծոցըս լիգյը եմիշ ա,
Խաբար ըրեք իմ նանին,
Սրտավ սիրածն օրիշ ա[59]:

*Հայկական «երեք հավկիթ» և իտալական «երեք նարինջ» խորագրով հեքիաթախումբն աղերսվում է չափահասության խորհրդածին՝ արտացոլելով վաղնջական հանրույթներին բնորոշ արխայիկ ավանդույթներ, չափահասության լիարժեք կարգավիճակ ձեռք բերելու համար համայնքի յուրաքանչյուր անդամի առջև ծառացած փորձությունների հաղթահարումը:*

## Եզրակացություն

*Հնագույն հասարակությունները միշտ էլ բաժանված են եղել խստորեն սահմանված իրավունքներ ու պարտականություններ ունեցող սեռատարիքային խմբերի՝ երեխաներ, պատանիներ, չափահասներ: Անցումը մի խմբից մյուսը*

[56] *Սասնա ծռեր. 1936, 261:*
[57] Рабинович. 1987, 178–180.
[58] *Ժողովրդական խաղիկներ. 1940, 272:*
[59] *Հայրապետյան. 2006, 23:*

*տարբեր ժողովուրդների բանահյուսության մեջ ունեցել է զանազան դրսևորումներ ու խորհրդանշանային դրսևորումներ, բայց առանցքայինը համարվել է նախամուսնական չափահասության կարգն անցնելու ծեսը, որը ենթադրում էր բազում փորձություններ հաղթահարում և ամուսնական կարգավիճակի ամրապնդում:*

*Հայկական հեքիաթներում աղջիկները պարփակված են հավկիթի, նռան, վարունգի, երբեմն ճմերուկի, դդումի և այլ մրգերի ու բանջարեղենների մեջ: Սակայն հեքիաթախմբի հարսնացուների համար մեկուսացման ամենաբնորոշ տեղը հայկական հեքիաթներում հավկիթն է, իտալական տարբերակներում՝ նարինջը:*

*Հեքիաթների միջազգային նշացանկի 408 թվահամարի տակ զետեղված հեքիաթախմբում բուսակենդանական ծածկագրի միջոցով բացահայտվում է հայկական և իտալական հեքիաթներում առկա չափահասության փորձությունների հաղթահարման ծեսի ներփակ, էզոթերիկ բնույթը, որտեղ հավկիթն ու նարինջն ընկալվում են որպես նախամուսնական փորձությունների հաղթահարման ծեսի խորհրդանշաններ:*

**Թամար Հայրապետյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող, ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ հայ ժողովրդական բանահյուսության վիպական ժանրերի, մասնավորապես՝ հայկական հրաշապատում հեքիաթների և միջազգային հեքիաթանյութի համեմատական տիպաբանության, խորհրդանշանային համակարգի ուսումնասիրություն: Հեղինակ է 2 մենագրության, 5 ժողովածուի և ավելի քան 150 հոդվածի:**
ORCID: 0009-0001-1023-8683. tamar.hayrapetyan@iae.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Բիւրակն». բանասիրական, լեզվաբանական և գրական հանդէս (Կ. Պոլիս), 1899, էջ 231–232:

Գրիմ եղբայրներ. 1981, Հեքիաթներ, թարգմ.՝ Ա. Ղուկասյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 701 էջ:

Ժողովրդական խաղիկներ. 1940, խմբագրեց պրոֆ. դ-ր Մ. Աբեղյան, մասնակի աշխատակցությամբ՝ Կոմիտասի, Երևան, «Հայպետհրատ», 582 էջ:

Իսահակեան Մ. 1898, Շիրակի ժողովրդական երգեր. – «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, Դ գիրք, տպարան Մ. Ռօտինեանցի և Կ. Մարտիրոսեանցի, էջ 161–176:

Իտալական ժողովրդական հեքիաթներ. 1971, Երեք նարինջ, ռուսերենից թարգմանեց Ռ. Վ. Ռուբինյանը, Երևան, «Հայաստան», 215 էջ:

Լալայեան Ե. 1905, Գողթն. – «Ազգագրական հանդէս», Թիֆլիս, գիրք XII, Արագատիպ տպարան Կ. Մարտիրոսեանցի, էջ 151–152 էջ:

Խառատյան-Առաքելյան Հ. 2005, Հայ ժողովրդական տոները, Երևան, «Զանգակ-97», 360 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1959, հ. I, Այրարատ, պատրաստեց և առաջաբանը գրեց Ա. Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 670 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1962, հ. III, Այրարատ, պատրաստեց և նախաբանը գրեց Ա. Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 671 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1963, հ. IV, Շիրակ, պատրաստեց և նախաբանը գրեց Մ. Ս. Մկրտչյանը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 551 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1966, հ. V, Արցախ, բնագիրը և ծանոթագրությունները՝ Ա. Մ. Նազինյանի և Մ. Մ. Գրիգորյան-Սպանդարյանի, նախաբանը գրեց Ա. Մ. Նազինյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 759 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1968, հ. IX, Բագրևանդ, Ալաշկերտ, Մանազկերտ, Բաղեշ, պատրաստեց և առաջաբանը գրեց Մ. Ս. Մկրտչյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 649 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1980, հ. XI, Տուրուբերան-Հարք, տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Մ. Ս. Մկրտչյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 547 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1984, հ. XII, Տուրուբերան-Մուշ, կազմեց և տպագրության պատրաստեց Վ. Գ. Սվազլյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 651 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ, 1985, հ. XIII, Տուրուբերան-Մուշ-Տարոն, տպագրության պատրաստեց և ծանոթագրեց Ա. Ս. Ղազիյանը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 616 էջ:

Հայ ժողովրդական հեքիաթներ. 1999, հ. XIV, Վան-Վասպուրական, կազմեց և տպագրության պատրաստեց Ա. Ս. Ղազիյանը, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 590 էջ:

Հայրապետյան Թ. 2000, Դաշտային բանահյուսական նյութեր, Գորիս, տետր № 1, թերթ 25 (պատմել է Մարտուն Գալստյանը), հեղինակի արխիվ:

Հայրապետյան Թ. 2006, Դաշտային բանահյուսական նյութեր, Արցախ, տետր № 2, թերթ 45 (պատմել է Էլմիրա Դաբաղյանը), հեղինակի արխիվ:

Սասնա ծռեր. 1936, հ. Ա, Ընդհանուր խմբագրությամբ պրոֆ. – դր. Մանուկ Աբեղյանի, Երևան, «Հայպետհրատ», 1128 էջ:

Վարդանյան Ս. 1980, Դաշտային բանահյուսական նյութեր, Էջմիածին, տետր № 3, թերթ 10 (պատմել է Մելքոն Սարգսյանը), Ս. Վարդանյանի արխիվ:

Փշրանքներ ժողովրդական բանահյուսութիւնից. 1892, ժողովեց Գ. սարկավագ Հովսէփեանց, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 139 էջ:

Итальянские сказки. 1959, обработанные Итало Кальвино. Москва, Государственное изд. Художественной литературы, 207 с.

Левинтон Г. 1987, Инициация и мифы. – «Мифы народов мира», т. 1. Москва, «Советская Энциклопедия», с. 343–344.

Пирс Ч. 2000, Избранные философские произведения. Пер. с англ. / Перевод К. Голубович, К. Чухрукидзе, Т. Дмитриева. Москва, «Логос», 411с.

Рабинович Е. 1987, Богиня мать. – «Мифы народов мира», т. 1. Москва, «Советская Энциклопедия», с. 178–180.

Топоров В. 2010, Мировое дерево, универсальные знаковые комплексы, т. 1, Зав. редакцией М. Тимофеева, редактор А. Григорян. Москва, изд. Рукописные памятники Древней Руси, 448 с.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Три апельсина. 1960, Итальянские народные сказки, перевод с итальянского Ю. Ильина и Э. Козаковой. Ленинград, Госиздательство детской литературы министерства просвещения РСФСР, 224 с.

Эко У. 2005, Заметки на полях «Имени розы». Эссе / пер. с итал. Е. Костюкович. Предисл. Автора. Послесловия Е. Костюкович, Ю. Лотмана. Санкт-Петербург, «Симпозиум», 96 с.

Юнг К. 1991, Архетип и символ. Москва, изд. «Ренессанс», 304 с.

Юнг К. 2005, Душа и миф, Шесть архетипов. Минск, Харвест, изд. «Аст», 400 с.

Eco U. 1986, “Semiotics and the Philosophy of Language”. Bloomington: Indiana University Press, 242 p.

Saussure F. 1916, Cours de linguistique generale. Paris: Payot. Published by Charles Bally and Albert Sechehaye, 346 p.

Uther H.-J. 2011, The Types of International Folktales. A Classification and Bibliography, Part I, Animal Tales, Tales of Magic, Religious Tales, and Realistic Tales, with an Introduction, Helsinki, Academia Scientiarum Fennica, 619 p.

Uther H.-J. 2011, The Types of International Folktales. A Classification and Bibliography, Part II, Tales of the Stupid Ogre, Anecdotes and Jokes, and Formula Tales, Helsinki, Academia Scientiarum Fennica, 536 p.

Uther H.-J. The Types of International Folktales. A Classification and Bibliography, Part III, FF Communications. Helsinki, Academia Scientiarum Fennica, 2011, 285 p.

REFERENCES

«Byurakn». banasirakan, lezvabanakan ev grakan handes (K. Polis), 1899, ej 231–232 (In Armenian).

Eko U. 2005, Zametka na polyakh «Imeni rozi». Esse / per. S. ital. E. Kostyukovich. Predisl. Avtora. Posleslovіya E. Kostyukovich, Yu. Lotmana. – Sankt-Peterburg: «Simpozium», 96 s. (In Russian).

Grim eghbayrner 1981, Heqiatner, targm.` A. Ghukasyani, Yervan, «Sovetakan grogh» hrat., 701 ej (In Armenian).

Isahakean M. 1898, Shiraki zhoghovrdakan erger. – Azgagrakan handes, Tiflis, D girq, tparan M. Rotineanci ev K. Martiroseanci, ej 161–176 (In Armenian).

Italakan joghovrdakan heqiatner. 1971, Ereq narinj, ruserenic targmanec R. V. Rubinyany, Yerevan, «Hayastan» hrat., 215 ej (In Armenian).

Lalaean E. 1905, Goghtn. – Azgagrakan handes, Tiflis, girq XII, Aragatip tparan K. Martiroseanci, ej 151–152 (In Armenian).

Kharatyan-Arakelyan H. 2005, Hay zhoghovrdakan tonery, Yerevan, «Zangak-97», 360 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1959, h. I, Ayrarat, patrastec ev arajabany grec A. M. Nazinyany, Yerevan, HSSR GA hrat., 670 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1962, h. III, Ayrarat, patrastec ev nakhabany grec A. M. Nazinyany, Yerevan, HSSR GA hrat., 671 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1963, h. IV, Shirak, patrastec ev nakhabany grec M. S. Mkrtchyany, Yerevan, , HSSR GA hrat., 551 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1966, h. V, Arcakh, bnagiry ev tsanotagrutyunnery A. M. Nazinyani ev M. M. Grigoryan-Spandaryani, nakhabany grec A. M. Nazinyany, Yerevan, HSSH GA hrat., 759 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1968, h. IX, Bagrevand, Alashkert, Manazkert, Baghesh, patrastec ev arajabany grec M. S. Mkrtchyany, Yerevan, HSSH GA hrat., 649 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1980, h. XI, Turuberan-Harq, tpagrutyan patrastec ev tsanotagrec M. S. Mkrtchyany, Yerevan, HSSH GA hrat., 547 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1984, h. XII, Turuberan-Mush, kazmec ev tpagrutyan patrastec V. G. Svazlyany, Yerevan, HSSH GA hrat., 651 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1985, h. XIII, Turuberan-Mush-Taron, tpagrutyan patrastec ev tsanotagrec A. S. Ghaziyany, Yerevan, HSSH GA hrat., 616 ej (In Armenian).

Hay zhoghovrdakan heqiatner. 1999, h. XIV, Van-Vaspurakan, kazmec ev tpagrutyan patractec A. S. Ghaziyany, Yerevan, HH GAA hrat., 590 ej (In Armenian).

Hayrapetyan T. 2000, Dashtayin banahyusakan nyuter, Goris, tetr № 1, tert 25 (patmel e Martun Galstyany), herinaki arxiv (In Armenian).

Hayrapetyan T. 2006, Dashtayin banahyusakan nyuter, Arts'akh, tetr № 2, tert 45 (patmel e Elmira Dabaghyany), herinaki arxiv (In Armenian).

Sasna tsrer. 1936, h. A, Yndhanur khmbagrutyamb prof. – dr. Manuk Abeghyani, Yerevan, Haypethrat, 1128 ej (In Armenian).

Vardanyan S. 1980, Dashtayin banhyusakan nyuteri grarum, Edjmiatsin, tetr № 3, tert 10 (patmel e Melqon Sargsyany), S. Vardanyani arxiv (In Armenian).

Pshranqner zhoghovrdakan banahyusutyunic. 1892, zhoghovec G. Sarkavag Hovsepeanc, Tiflis, tp. M. Sharadzei, 139 ej (In Armenian).

Italyanskie skazki 1959, obrobotannie Italo Kalvino, Moskva, Gosudarstvennoe izd. Khudozhestvennoy literaturi, 207 s. (In Russian).

Levinton G. 1987, Iniciacia i mifi. – «Mifi narodov mira», t. 1, Moskva, «Sovetskaya Enciklopedia», s. 343–344 (In Russian)

Pirs Ch. 2000, Izbrannie filosofskie proisvedenia. Per. s angl./ Perevod K. Golubovich, K. Chukhrukidze, T. Dmitreva. Moskva, «Logos», 411s. (In Russian)

Rabinovich E. 1987, Boginya mats. – «Mifi narodov mira», t. 1, Moskva, «Sovetskaya Enciklopedia», s.178–180 (In Russian)

Toporov V. 2010, Mirovoe derevo, universalnie znakovye kompleksi, t. 1, Zav. Redakciey M. Timofeeva, redaktor A. Grigoryan, Moskva, isd. Rukopisnie pamyatniki Drevnoy Rusi. 448 s. (In Russian)

Tri apelysina 1960. Italyanskie narodnie skaski, perevod s italyanskogo Yu. Ilyina i E. Kozakovoy, Leningrad, Gosizdatelstvo detskoy literaturi ministerstva prosveshenia RSFSR, 224 s. (In Russian).

Yung K. 1991, Arkhetip i simvol, Moskva, izd. «Renessans», 304 s. (In Russian).

Yung K. 2005, Dusha i mif, Shests arkhetipov, Minsk, Kharvest, izd. «Ast», 400 s. (In Russian).

Zhoghovrdakan khaghikner. 1940, khmbagrets' prof. d-r M. Abeghyan, masnaki ashkhatakts'ut'yamb, Komitasi, Yerevan, «Haypethrat», 582 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

# ОТРАЖЕНИЕ ЦЕРЕМОНИИ ИНИЦИАЦИИ В ОДНОЙ ГРУППЕ АРМЯНСКИХ И ИТАЛЬЯНСКИХ СКАЗОК

ТАМАР АЙРАПЕТЯН

Р е з ю м е

*Ключевые слова: ритуал посвящения, группа армянских и итальянских сказок, Ганс-Йорг Утер, архаичное мышление, апельсин, яйцо, сказка, символ, сюжет, миф.*

Сравнительное исследование армянской «Три яйца» и итальянской «Три апельсина» сказки соответствующее номеру 408 международной классификации «Типов народных сказок» немецкого фольклориста Ганса-Йорга Утера, показывает, что переход из одной возрастной группы в другую имел различные проявления и символические коды в фольклоре разных народов, но все они считали обряд перехода в предбрачную зрелость наиболее важным, поскольку не всем удавалось его преодолеть. В исследуемых сказках первые две девочки, вылупившиеся из яиц и апельсинов, погибают, только третьей девочке удается преодолеть ритуал, остаться в живых, выйти замуж и сменить статус.

Наиболее характерным местом изоляции для девочек в обеих группах сказок является яйцо в армянских сказках и апельсин в международных, особенно в итальянских вариантах, что обусловлено историко-географической средой, ритуально-мифологическим мышлением, верованиями, религиозными традициями и другими факторами народа, создавшего сказку. В этом плане важны растительно-животные яично-апельсиновые коды, которые, помимо своего пищевого, практического и лечебного значения, воспринимаются как замкнутое пространство, превращаясь в символы ритуала преодоления добрачных испытаний.

*Тамар Айрапетян – д. филол. н., ведуший научный сотрудник Института археологии и этнографии НАН РА, заведующая отделом текстологии фольклора, преподаватель кафедры культурологии факультета истории ЕГУ. Научные интересы: эпические жанры армянского фольклора, в частности, сравнительная типология и система символов армянских волшебных сказок и группы международных сказок, изучение символической системы. Автор 2 монографий, 5 сборников и более 150 статей.*
*ORCID: 0009-0001-1023-8683. tamar.hayrapetyan@iae.am*

# REFLECTION OF THE INITIATION CEREMONY IN ONE GROUP OF ARMENIAN AND ITALIAN FAIRY TALES

TAMAR HAYRAPETYAN

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

## Summary

*Keywords: initiation ritual, group of Armenian and Italian fairy tales, Hans-Jörg Uther, archaic thinking, orange, egg, fairy tale, symbol, plot, myth.*

A comparative analysis of the Armenian "Three eggs" and Italian "Three oranges" fairy tales corresponding to number 408 of the international classification of "Types of folk tales" by the German philologist Hans-Jorg Utter, shows that the transition from one age group to another had different manifestations and symbolic codes in the folklore of different peoples, but they all considered the rite of passage into premarital maturity to be the most important, since not everyone managed to overcome it.

In the studied fairy tales the first two girls hatched from eggs and oranges die, only the third girl manages to overcome the ritual, stay alive, get married and change the status.

The most typical place of isolation for the girls in both groups of fairy tales is an egg in Armenian fairy tales and an orange in international, especially in the Italian versions, which is determined by the historical and geographical environment, ritual and mythological thinking, beliefs, religious traditions and other factors of the people who created the fairy tale.

In this regard, the plant-animal egg-orange codes are important, which, in addition to their nutritional, practical and medicinal value, are perceived as a closed space, turning into symbols of the ritual of overcoming premarital trials.

*Tamar Hayrapetyan – Doctor of Sciences in Philology, Leading Researcher at the Institute of Archaeology and Ethnography of NAS RA, Head at the Department of Folklore Textology, Lecturer at the Department of Culture Studies of the Faculty of History of YSU. Scientific interests: epic genres of Armenian folklore, in particular, comparative typology and system of symbols of Armenian fairy tales and a group of international fairy tales, study of symbolic system. Author of 2 monographs, 5 collections and over 150 articles.*
*ORCID: 0009-0001-1023-8683. tamar.hayrapetyan@iae.am*

ՀՏԴ : 894.35 + 398.22

Doi:10.54503/0135-0536-2025.2-174

# ТЮРКСКИЙ ЭПОС И ТЕОДОРОС ГАВРАС: КНЯЗЬ, ВОЕНАЧАЛЬНИК И МУЧЕНИК*

САМВЕЛ РАМАЗЯН

*Ключевые слова: Теодорос Гаврас, Византия, Понт, Трапезунд, Армения, Тагавор (Такфур), «Деде Коркут», тюрки.*

*Аннотация*

Тюркский эпос «Деде Коркут» сложился в Центральной Азии, но в результате продвижения тюрко-огузских племен в Малую Азию географическая среда эпоса была перенесена на Армянское нагорье, где и произошло его окончательное формирование. Важным фактором является наличие в VI главе эпоса образа Тагавора, противника огузов и христианского правителя Трапезунда и Байберда.

Очевидно, что с этим титулом упоминались не только армянские цари Киликии, но и правители Трапезунда и других византийских территорий, по крайней мере, в тюркских и мусульманских источниках XIII-XV вв. В отличие от более поздних форм «такфур» и «текфур», которые были частично изменены фонетически, образ правителя, противостоящего тюркам, представлен в эпосе в оригинальном фонетическом варианте, что указывает на ранние контакты между армянами и тюрками.

Теодорос Гаврас (ок. 1050–1099), один из государственных и военных деятелей, выступавших против тюркского продвижения в регионе, происходил из армяно-византийской семьи. Ему удалось оказать успешное сопротивление и сохранить собственную власть в Понте на протяжении почти трех десятилетий и тем самым заложить основу правления Гаврасов. Действия, предпринятые Гаврасом, полностью соответствуют аналогичным действиям армянских князей на других территориях после падения царства Великой Армении в 1044 г. и разгрома в Маназкерте (Манцикерт) в 1071 г.

После мученической кончины Теодорос Гаврас был не только канонизирован, но и стал одной из знаковых фигур христианской традиции и тюркского фольклора, что нашло отражение в тюркских эпических произведениях в образах Тагавора и Трапезундского бека.

* Представлена 06. IV. 2025 г., рецензирована 18. IV. 2025 г., принята к печати 11. VII. 2025 г.

© Автор(ы), 2025. Доступно по лицензии Creative Commons Attribution 4.0.

*Введение*

Приняв ислам, огузы или тюрки-огузы – один из тюркских средневековых народов, начали свое продвижение по Центральной Азии и уже в XI в. дошли до Ирана, где и основали государство Сельджукидов. В 1038-1055 гг. сельджуки завоевали Хорасан, Хорезм, большую часть Ирана и Ирак. Уже в период правления Тогрул-бека в 1049 г. сельджуки предприняли первые попытки завоевания Армении, что продолжил Алп-Арслан (1063–1072), в 1064 г. захватив Ани – столицу Багратидской Армении, перешедшую к Восточно-Римской империи (Византия). После поражения византийской армии в битве при Маназкерте в 1071 г. нашествие тюрок было уже состоявшимся фактом.

Проводимая Византией политика ослабления Великой Армении способствовала её делению на отдельные царства, которые с течением времени были присоединены к самой Византии. В 1044 г. путем аннексии Анийского царства, т. е. полным завоеванием Армении и ликвидацией армянской государственности, Византия приблизила собственное падение и коллапс. Ликвидировав армянские государственные образования, империя одновременно уничтожила армянскую буферную зону, образовавшуюся между ней и могущественными тюрками-сельджуками. Ту зону, которая на протяжении веков традиционно играла уникальную роль в условиях конфронтации между Византией и Ираном, а затем Арабским халифатом.

Вышесказанное действительно было крупной стратегической ошибкой, последствия которой незамедлительно сказались на регионе. Через 20 лет после аннексии Ани город был захвачен сельджуками, а ещё через 7 лет последовала катастрофа Маназкерта. Это оказалось судьбоносным не только для империи, но и для ослабленной продолжающимися переселениями Армении, территории которой фактически были переданы новым завоевателям. Часть армян со своими воинскими силами покинула оккупированные территории и мигрировала в Горную и Равнинную Киликию, где и они основали «новую Армению». Недальновидная имперская политика вынудила армян сконцентрироваться на собственных территориях и создать собственные политические и административные образования.

Около 1080 г. Рубен, один из князей Гагика II, последнего армянского царя Багратидов, смог основать княжество в Таврских горах, которое впоследствии послужило основой для создания Армянского царства Киликии. В отличие от переселенных в результате политики империи во Фракию и вообще на Балканы армян, которые со временем ассимилировались и исчезли, армянские полководцы проявили дальновидность в том, чтобы сконцентрироваться в Киликии и спасти её. Таким образом, они смогли сохранить местное армянство и восстановить национальную государственность. Более того, в постманазкертский период армянским

князьям удалось противостоять и разгромить вторгшихся в Киликию сельджуков, что было проблемой для слабеющей империи.

Тюрки признавали армянских царей Киликии с заимствованным из армянского титулом «Такфур» («Текфур»), который использовался также в отношении правителей Трапезунда и других областей Византии. Одновременно тюрки пытались найти общий язык с князьями Великой Армении, что дало определенные результаты в силу предшествовавшей этому порочной политики Византии.

*Тагавор тюркской эпической традиции*

В тюркском эпосе «Деде Коркут» («Китаб-и Дедем Коркут», т. е. «Книга моего деда Коркута») основные действия, согласно топонимическому анализу, происходят на Армянском нагорье («на армянской возвышенности»)[1]. В целом эпос примечателен тем, что стал известен в письменной форме, а устные сказания были зафиксированы лишь в конце XIX в. В европейских научных кругах сведения о существовании эпоса датируются еще XVIII в. До недавнего времени были известны две недатированные рукописи эпоса – дрезденская и ватиканская[2]. В

[1] Бартольд. 1962, 116; 120; Жирмунский. 1962, 142. По понятным причинам со временем оба исследователя в советских изданиях неоднократно упоминали также несуществовавший в данный период Азербайджан (не исторический иранский Атурпатакан) как одну из локаций действий эпоса. Об армянских топонимах и связях в эпосе см.: Рамазян. 2002, 32–35.

[2] Первая из них была обнаружена в 1815 г., в Дрезденской библиотеке немецким востоковедом Гайнрихом Фридрихом фон Дицем, поэтому ее условно называют «Дрезденской рукописью». В 1892 г. материалы были переданы В. В. Бартольду, который в то время учился в Германии. Полный перевод рукописи с 12 главами был осуществлён в 1922 г. самим Бартольдом, но опубликован позднее, в 1962 г. Известна также краткая копия, найденная в Берлине и написанная в начале XIX в., которая, однако, рассматривается в качестве 37-страничной сводной копии, сделанной фон Дицем с Дрезденской рукописи, поэтому по сути не может считаться отдельной версией. В 1950 г. в библиотеке Ватикана итальянским востоковедом Этторе Росси была обнаружена вторая рукопись эпоса – «Ватиканская рукопись», которую он опубликовал в 1952 г., переведя на итальянский, с соответствующими обширными комментариями (Rossi. 1952, 1–95). В отличие от дрезденской, ватиканская версия включает всего 6 глав (I, II, III, IV и частично XII), состоящих из 109 страниц, каждая из которых содержит 13 строк. В Ватиканской версии в основном представлены рассказы о Казан-беке. По мнению многих исследователей, рукопись имеет более позднее происхождение и была скопирована с Дрезденской рукописи, скорее всего, в XVI в.

В 2018 г. на книжном рынке Тегерана частным коллекционером из города Гонбад-э Кавус иранской провинции Голестан была обнаружена рукопись объемом в 31 страницу, при этом первая страница отсутствовала, а общее название неизвестно. На основании сообщений, это также может быть одной из сокращенных рукописных версий эпоса, написанной во второй половине XVIII в. в Иране,

контексте обсуждаемой темы интерес представляет «Дрезденская рукопись», которая считается полной версией эпоса, насчитывающей 154 страницы, на каждой из которых по 13 строк. Рукопись датируется 993 г. хиджры (т. е. 1585 г.), и палеографические исследования также подтверждают, что она относится к XVI в. Рукопись написана на «языке племени огузов»[3], как указано в добавленном позже названии, арабской вязью. Реальной основой для изучения эпоса была и остается «Дрезденская рукопись», представляющая собой наиболее полную и завершенную версию интересующего нас эпоса.

Эпос состоит из вступления и 12 сказаний, которые хотя и имеют самостоятельный сюжет, но связаны между собой некоторыми общими персонажами, и каждый из них называется «огуз-наме»[4]. В 9 сказаниях повествуется о войнах огузов с «гявурами» («неверными», т. е. христианами). Из общего огузского цикла четко выделяются 2 рассказа – V и VI, которые, несомненно, более позднего происхождения и сложились после переселения огузских племен в Малую Азию[5]. Согласно оценке акад. В. М. Жирмунского, эти разделы первоначально не входили в цикл Коркута, «в котором они и сейчас занимают изолированное положение»[6].

Как пишет акад. В. А. Гордлевский, «Книга Коркуд-деде» изображала время огузов в Малой Азии как «век богатырей»[7]. Однако местные противники у них разные, их обьединяет только то, что они «неверные» и правители-князья, в отличие от вождей кочевых племен. В VI главе («Песнь о Кан-Турали, сыне Канлы-Коджи») главный противник огузов назван не иначе, как с армянским титулом «Тагавор» (арм. *թագավոր*, от парф. **tag(a)-bar* - носящий корону, от слова *թագ* - корона, венец), т. е. царь, монарх[8], хотя речь идет о правителе или князе Трапезунда. Наличие термина *t'agawor,* используемого вместо более позднего *kral*[9]*,* указывает на ранее происхождение произведения.

---

на тюркском языке (тюрки), но включающей отрывки, также посвященные одному из героев эпоса, Казан-беку и его соратникам.

[3] Ж и р м у н с к и й. 1962, 131.

[4] Не путать с другими одноименными тюркскими эпическими произведениями.

*Այս դեպքում նկատի ունենք հասկացությունների արտահայտությունը ոչ ընդհանուր կամ տարածված բառանվանումներով, որը հաճախ հետևանք է իմաստային անցումների: Այսպես, անտառ հասկացությունը Սանահինում, Ձոռկանում, Դսեղում, Թեղուտում և այլ բնակավայրերում արտահայտվում է ծըմակ, Կուրթանում և Վարդաբլուրում՝ մէրի բառանվանումներով: Աչտարակում և Փարպիում գործածական է մէչա ձևը, Փարպիում հանդիպում է նաև ծըմակ բառանվանումը: Հայ մատենագրության մեջ ծմակ բառը, ըստ Հ. Աճառյանի, վկայված է «արև չտեսած՝ չուք տեղ ձորի մեջ» իմաստով: Երևանի, Թբիլիսիի, Մուշի, Համշենի, Զեյթունի, Կարինի և այլ բարբառներում ծմակ բառի հնչատարբերակներն ունեն «հիւսիսահայեաց անարև՝ ստուերոտ տեղ, յատկապէս անտառի մէջ» իմաստը, որից էլ, ինչպես նշում է լեզվաբանը, ձևացել է ծմակ բառի՝ Գորիսին և Ղարաբաղին հատուկ «անտառ» իմաստը[27]: Պետք է կարծել, որ իմաստային այս տեղաշարժը հենց Ղարաբաղի բարբառից էլ անցել է Լոռու խոսվածքին:*

*Դիտարկվող խոսվածքում կողմ հասկացությունը կուռ բառանվամբ է արտահայտվում: Հ. Աճառյանի դավառական բառարանում կուռ բառի առաջին՝ թիւ, բազուկ իմաստն արձանագրվում է Լոռու, Ղազախի, Ղարաբաղի, Թբիլիսիի բարբառային միավորներում, իսկ չորրորդ՝ կողմ իմաստը վկայվում է Լոռիում և Թբիլիսիում[28]: Ըստ «Հայոց լեզվի բարբառային բառարանի»՝ այդ իմաստային անցումը կա նաև Ղազախի խոսվածքում[29]: Հակված ենք կարծելու, որ Լոռին այս դեպքում կրել է Թբիլիսիի ազդեցությունը:*

*Եղինջ հասկացությունը բանջար բառով է արտահայտվում Լոռիի դիտարկվող բոլոր բնակավայրերում: Բանջար բառը, ըստ Արմատական բառարանի, հայ մատենագրության մեջ վկայված է «կանաչեղէն, խոտեղէն» իմաստով, այդ իմաստով էլ գործածական է բարբառային հայերենում[30]: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» բանջար բառի գործածություն եղինջ իմաստով վկայում է*

---

[27] Ա ճ ա ռ յ ա ն. 1973, 463–464:

[28] Ա ճ ա ռ ե ա ն. 1913, 606:

[29] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, 213:

[30] Ա ճ ա ռ յ ա ն. 1971, 409:

*միայն Ղարաբաղի բարբառում[31], ուստի Լոռիի խոսվածքում այս իրողության դրսևորումը պետք է համարել Ղարաբաղի բարբառի ազդեցություն:*

*«Հարսանիքում փեսային շրջապատող ամուրի երիտասարդներ» հասկացությունը գինվոր բառով է արտահայտում Կուրթան, Շամուտ բնակավայրերում: Այս բառի՝ վերոհիշյալ իմաստով գործածությունը, իբրև 6-րդ նշանակություն, վկայված է «Արդի հայերենի բացատրական բառարանում»՝ գվռ. նշումով և «Հարսին բերելու գնացող տղամարդ հարսանքավոր (սովորաբար՝ ձիավոր)» բացատրությամբ[32]: Այլ վկայությունների բացակայությունը թույլ է տալիս կարծել, որ գործ ունենք Լոռու խոսվածքում տեղի ունեցած իմաստային անցման հետ:*

*Աղջև հասկացությունը Լոռու խոսվածքում արտահայտում է աղաք, ըղաքին ձևերով: Աղաղ ձևը հին մատենագրության մեջ մեկ անգամ է հանդիպել՝ ճանապարհ իմաստով: Հետագայում գործածվել է նաև հնարք, կերպ, միջոց իմաստներով: Սակայն, ինչպես վկայում է Հ. Աճառյանը, հին և ընտիր են այս բառի հոլովաձևերը՝ աղաղաւ և յաղաղս «պատճառով, համար, վասն» իմաստներով[33]: Հ. Աճառյանը վկայում է նաև, որ աղաղ բառը շատ գավառականներում (նշում է՝ «եր. Լ. ԼՀ. Ղգ. Ղրբ. Ղրդ. Սր. Տփ.») կա աղաք ձևով և նշանակում է «առջևը»[34]: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» իմաստային այս անցումն արձանագրել է Արարատյան, Թբիլիսիի, Ղարաբաղի և Կոզեռնի բարբառներում[35]: Պետք է կարծել, որ աղաղ բառի՝ առջև իմաստով գործածությունը բարբառային հայերենի որոշակի հատվածում տեղի ունեցած զարգացման արդյունք է՝ տարածական իմաստի կոնկրետացումով:*

*Բարկանալ իմաստը Լոռու խոսվածքի Սանահինի տարբերակում արտահայտվում է չըրանալ բառով: Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» չարանալ բառի առաջին իմաստն է չար դառնալ, այնուհետև՝ նախանձել, չարություն անել: Բառի 5-րդ իմաստն է՝ բարկանալ[36]: Գավառական բառարանում չարանալ բառով բարկանալ իմաստի արտահայտումը վկայված է Երևանի, Լոռու, Ղազախի, Ղարաբաղի, Թբիլիսիի բարբառային միավորներում[37]:*

*Սեղանառամ հասկացությունը Լոռու խոսվածքում արտահայտվում է սօղնակ բառով: Այս իրողությունն արձանագրվել է միայն Լոռու խոսվածքում՝ ներկայացվելով իբրև սողնակ (դուռը փակելու փայտե կամ մետաղյա ձող) բառի 3-րդ նշանակություն[38]:*

*Պարսկերենից փոխառյալ փալաս բառը, որ բարբառային հայերենում որպես կանոն ունի լաթի կտոր իմաստը, Լոռու խոսվածքի շատ տարբերակներում ունի երեխայի տակաշոր իմաստը: Սանահինում այդ իմաստն արտահայտվում է տրկափալաս բաղադրությամբ: Հնարավոր է, որ այս բաղադրության իմաստն է անցել արմատին:*

---

[31] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, 163:
[32] Աղայան. 1976, 374:
[33] Աճառյան. 1971, 117:
[34] Աճառյան. 1971, 117:
[35] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, 37:
[36] Մալխասեանց. 1945, 14:
[37] Աճառեան. 1913, 877:
[38] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2008, 377:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

2. Բնիկ և գավառական բառեր

*Լոռու խոսվածքում կան բնիկ և գավառական բառեր, որոնք Արարատյան բարբառի՝ մեր կողմից համեմատվող խոսվածքներում չեն արձանագրվել:*

Արմատ հասկացությունը *Լոռու խոսվածքում արտահայտվում է տակուի բառանվանմամբ: Այս բառը հայ մատենագրության մեջ վկայված է «արմատ կամ արմատի մազմզուք» իմաստներով և, ըստ Հ. Աճառյանի, անշուշտ, ձևավորված է տակ բնիկ արմատով[39]: Նա բառի գործածությունն արձանագրել է Գորիսի, Ղարաբաղի, Շամախիի, Թբիլիսիի բարբառային միավորներում[40]: Գավառական բառարանում բառի գործածության վայրերի շարքում են նաև Ղազախն ու Ղարադաղը[41]: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» տակուի հիմքով մի շարք բաղադրություններ է հիշատակում Ղարաբաղի բարբառում՝* տակուիճ, տակուլըհան, տակուտա, տակըքապակ[42], *ինչից կարելի է եզրակացնել, որ բառը շրջակա բարբառներում հայտնվել է Ղարաբաղի բարբառի ազդեցությամբ:*

Խոնավ *իմաստը Սանահինի խոսվածքում արտահայտվում է բնիկ հայերեն դէջ արմատով, որը Արմատական բառարանում վկայված է* խոնավություն, թացություն *իմաստով: «Հայոց լեզվի բարբառային բառարանում» այս բառը վկայված է Արարատյան, Ղարաբաղի, Թբիլիսիի և Համշենի բարբառներում[43]:*

Գիծ *հասկացությունը Սանահինի, Դսեղի, Հաղպատի և այլ խոսվածքներում արտահայտվում է* ճիժ *գավառական բառով, որն Աճառյանն ենթադրաբար կապում է թուրքերեն* ճիզ *բառի հետ[44], իսկ Մալխասյանցը համարում է փոխառություն տաճկերենից[45]: Հ. Աճառյանը, նրա հետևողությամբ և «Հայոց լեզվի բարբառային բառարանը» բառն արձանագրում են միայն Արարատյան բարբառում՝ չրջապիծ իմաստով: Փարպիի խոսվածքում արձանագրվել է* ճիճ ձևը[46]: *Արարատյան և Ղարաբաղի բարբառներում վկայված են նաև* ճժպախտի *(լախտախաղ) բառի հնչատարբերակներ[47]:*

Աղբանոց *հասկացությունը Կուլթանում և Վարդաբլուրում արտահայտվում է* պսպըհար *գավառաբառով: Գավառական բառարանն այս բառի գործածությունը վկայում է Ղարաբաղի բարբառում[48]:*

3. Փոխառյալ բառեր

*Բարբառներն ու խոսվածքները հաճախ աչքի են ընկնում ինքնատիպ փոխառություններով, ինչը հիմնականում պայմանավորված է այլալեզու, նաև այլաբարբառ հանրույթների հարևանությամբ կամ ազդեցությամբ: Լոռու խոսվածքը ևս ունի այդ կարգի յուրօրինակ բառեր: Այսպես, խեժ իմաստի համար Լոռու խոսվածքը հաճախ օգտագործում է* ծէքօ *ձևը կամ դրա որևէ*

---

[39] Աճառյան. 1979, 361:
[40] Աճառյան. 1979, 361:
[41] Աճառեան. 1913, 1011:
[42] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2010, 123:
[43] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, 237:
[44] Աճառեան. 1913, 714:
[45] Մալխասեանց. 1944բ, 209:
[46] ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 9 տետր:
[47] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, 385:
[48] Աճառեան. 1913, 74:

*հնչատարբերակ: Ըստ Ստ. Մալխասյանցի՝ այդ բառը փոխառություն է վրացերենից[49]: Բառը Լոռու խոսվածքին կարող է անցած լինել կա՛մ Թբիլիսիի բարբառի միջնորդությամբ, կա՛մ անմիջականորեն վրացերենից: Ի դեպ, բացառված չէ, որ տարբեր բնակավայրերում արձանագրված հնչատարբերակները՝ ձէբօ, ձօբօ, ձիմօ, պայմանավորված են փոխառության աղբյուրի տարբերություններով:*

*Եգիպտացորենը Լոռու խոսվածքում ունի սիմինդ անվանումը: Աճառյանի վկայությամբ՝ Թբիլիսիի սիմինդը և Երևանի սիմինդ ձևերը նշանակում են եգիպտացորեն, իսկ այլ բարբառներում (Մուշ, Զեյթուն, Վան, Կարին, Ակն և այլն) բառի հնչատարբերակներն ունեն մանր ձավար իմաստը: Ի դեպ, սիմինդը բառը փոխառնված է հունարենից, որտեղ ունի բարակ, մանր ալյուր իմաստը[50]: «Եգիպտացորեն» նշանակությամբ սըմընդր ձև արձանագրվել է նաև Վանի բարբառում[51]: Այդ նույն նշանակությամբ սիմինդր ձև գրանցվել է Փարպիի խոսվածքում[52]:*

*Դիտարկվող խոսվածքն ընդգրկող բնակավայրերում առու իմաստով գործածական է թուրքերենից փոխառյալ արխ ձևը: Այս բառն արձանագրվել է Արարատյան, Թբիլիսիի, Ղարաբաղի, Հավարիկի և Շիրակի բարբառային միավորներում[53]:*

4. Խոսվածքին բնորոշ կազմություններ

*Լեզվական յուրաքանչյուր հանրույթի, հաղորդակցման ընթացքում հանդես բերելով ստեղծագործական, բառաստեղծական ունակություններ, հաճախ անհրաժեշտությունից ելնելով, միջավայրի ու կենցաղի իրողությունները համադրելով, առկա ձևույթներով ու կաղապարներով ձևավորում ու գործածում է բաղադրություններ, որոնք, չատ դեպքերում ստանալով որոշակի տարածում չրջակա բարբառային միավորներում, ունենում են զգալի տարբերակիչ նշանակություն կոնկրետ խոսվածքի, բարբառի կամ որոշակի տարածաշրջանի համար: Լոռու խոսվածքում կան նման կազմություններ, որոնց մի մասը բնութագրական է միայն խոսվածքի համար, իսկ մի մասն էլ ընդգրկում է ավելի մեծ տարածք: Այսպես, երդիկ հասկացությունը Սանահինի, Կուրթանի և Հաղպատի խոսվածքներում արտահայտվում է լիսաձակ (լիա/<լոյա/+ա+ձակ) կազմությամբ, Հաղպատում կա նաև կըտէր ծակ (կտուրի ծակ) հարադրությունը: Բաղադրությունը որևէ այլ բարբառային միավորում վկայված չէ, իսկ «Հայոց լեզվի բարբառային բառարանում» լիսաձակ ձևով օրինակ է բերված Թումանյանի «Լոռեցի Սաքոն» պոեմից[54]:*

*Բովել իմաստը Լոռու խոսվածքում արտահայտվում է տըքտաքել (տաք+տաք+ել) կրկնավոր բարդությամբ: Բառը որևէ բառարանում վկայված չէ, ուստի կարող է համարվել միայն Լոռու խոսվածքին բնորոշ կազմություն:*

[49] *Մ ա լ խ ա ս ե ա ն ց. 1944ա, 336:*
[50] *Ա ճ ա ռ յ ա ն. 1979, 214:*
[51] *Հայոց լեզվի բարբառային բառարան. 2008, 328:*
[52] *ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 9 տետր (Փարպի):*
[53] *Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, 127:*
[54] *Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, 227:*

*Լոռու խոսվածքի տարբերակներում գոլ հասկացությունն արտահայտվում է մըտնապոլ (մատն+ա+գոլ) բառով, որը Հայոց լեզվի բարբառային բառարանում վերագրված է միայն Արարատյան բարբառին և ունի «այնքան գոլ՝ տաք, որ մատը մեջը դիմանում է»[55] իմաստը: Բառի մաննապոլ, մառնապոլ տարբերակներն արձանագրվել են նաև Արարատյան բարբառի Օշականի խոսվածքում[56]:*

*Դիտարկվող խոսվածքի Թեղուտի տարբերակում խեժ իմաստն արտահայտվում է ծըռամաստակ (ծառ+ա+մաստակ) բառով: Բառը որևէ այլ վայրում արձանագրված չէ, մեզ հայտնի բառարաններում վկայված չէ, ուստի այն համարում ենք Լոռու խոսվածքին բնորոշ կազմություն: Այդպես նաև Կուրթանում արձանագրված փայտփորիկ նշանակությամբ փէտկըռծող ձևը պետք է համարել խոսվածքին բնորոշ բառամիավոր:*

*Գավառական բառարանում իբրև փառ (թաղանթ) բառի 6-րդ իմաստ ներկայացվում է «սարդի ոստայն» նշանակությունը՝ դիտված Արարատյան բարբառում[57]: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» ևս սարդոստայն իմաստի արտահայտությունը փառ բառով արձանագրում է միայն Արարատյան բարբառում: Լոռու մարզի Դսեղ, Կուրթան, Վարդաբլուր, Շամուտ գյուղերում սարդ հասկացությունը ներկայանում է փառգօրծող բառով, Կուրթանում՝ նաև փառանակ բառով: Երկու բառերն էլ որևէ բարբառում արձանագրված չեն և կարող են համարվել Լոռու խոսվածքին բնորոշ կազմություններ: Նկատենք, որ թե՛ Լոռու խոսվածքի տարբերակներում, թե՛ Արարատյան բարբառի խոսվածքներում արձանագրված են գործ արմատով սկսվող բաղադրություններ՝ սարդ իմաստով (գործարար, գօռձարանուգ և այլն):*

### Լոռու խոսվածքի և բարբառային այլ միավորների առնչությունների արտացոլումը բառապաշարում

*Մ. Ասատրյանի՝ վերը բերված այն դիտարկումը, որ Լոռու խոսվածքը չփման եզրեր ունի Արարատյան, Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառների հետ, իր արտահայտությունն է ստանում նաև բառապաշարում, մասնավորապես՝ բարբառախոս այլ տարածքներից զատող բառաշերտում: Այսպես, Լոռու խոսվածքն ունի մի շարք բառային միավորներ, որոնք արձանագրվել են հիմնականում Արարատյան, Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներում: Օրինակ՝ խոսվածքում պարան հասկացությունն արտահայտում է թօզ բառով: Ըստ Արմատական բառարանի՝ թոկ բառը հայերենը փոխառել է վրացերենից, այն հետին շրջանի փոխառություն է և «այժմ էլ գործածական է միայն Կովկասեան բարբառներում»[58]: Բառի առկայությունն արձանագրվել է Երևանի, Լոռու, Ղազախի, Ղարաբաղի, Թբիլիսիի բարբառային միավորներում[59]:*

*Գավառական բառարանում արձանագրված է տերողորմյա բառը՝ համրիչ իմաստով, և այդ բառի գործածությունը դիտված է Երևանի, Ղարաբաղի ու*

---

[55] *Հայոց լեզվի բարբառային բառարան. 2007, 32:*
[56] *ՀԲԱ ծրագրով լրացված թիվ 20 տեսր (Օշական):*
[57] *Ա ճ ա ռ ե ա ն. 1913, 1064:*
[58] *Ա ճ ա ռ յ ա ն. 1973, 194:*
[59] *Ա ճ ա ռ յ ա ն. 1973, 194:*

*Թբիլիսիի բարբառներում[60], այդ նույն արձանագրումը կա նաև «Հայոց լեզվի բարբառային բառարանում»[61]: Լոռու խոսվածքում այդ բառամիավորի հնչատարբերակները մեծ զանազանություն հանդես չեն բերում՝ տէրըղօրմի, տէրաղօրմի, տէրօղօրմա և այլն:*

*Ահա համատի արտահայտությունը հըրէս բառով Արմատական բառարանն արձանագրում է Երևանի, Լոռու, Ղազախի և Ղարաբաղի բարբառային միավորներում[62]: «Հայոց լեզվի բարբառային բառարանը» այդ բառը վկայում է Արարատյան, Թբիլիսիի և Ղարաբաղի բարբառներում[63]:*

*Թթխմոր իմաստով խաչ բառի գործածությունը, ըստ «Հայոց լեզվի բարբառային բառարանի», բնորոշ է Լոռու, Թբիլիսիի, Ղարաբաղի, Հավարիկի բարբառային միավորներին[64]: Ածխյանը բառը փոխառված է համարում վրացերենից, որտեղ կա խաչի ձևը[65]:*

*Լոռու խոսվածքի բառապաշարը, բնականաբար, ավելի շատ ընդհանրություններ ունի Արարատյան բարբառի բառապաշարի հետ, և այդ հանգամանքը փաստարկվելու կարիք չունի: Առավել հետաքրքրական են ընդհանրությունները Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառների հետ: Դիտարկումները մեզ հետաքրքրող բառաշերտում երևան են հանում Ղարաբաղի բարբառի բառապաշարի հետ բավականաչափ ընդհանրություններ (իրողությունն արտահայտված է նաև վերևում արված դիտարկումներում): Բերենք բառերի օրինակներ, որոնցով Լոռու խոսվածքը մոտենում է Ղարաբաղի բարբառին և տարբերվում Արարատյանից. մուվ (Ար. ծուխ, մուխ), յէղաբըդոց (Ար. սրոց), պնդան (Ար. պըրօպկա), ճունճ (Ար. ջուլ), պատրոն (Ար. կէտառ), փայ հավաքող (Ար. ուզվօր), պէծվոռիկ (Ար. կեծոռիկ), ոռցակ (Ար. աքլոր), խապտ (Ար. փուշ), անղամ (Ար. բուղ), կրկենի (Ար. բաղաջ), գերեզմանուտ (Ար. գերեզմաններ) և այլն: Մի շարք բառերով էլ Լոռու խոսվածքը մոտենում է Թբիլիսիի բարբառին, այսպես՝ ծեբօ (Ար. խիժ), կաթնէպապա (Ար. կաթնով), կօճի (Ար. ճան), ըժում (Ար. հետո) և այլն:*

## Եզրակացություն

*Բարբառային լեզվի բառապաշարի համակողմանի քննությունն անհրաժեշտություն է ոչ միայն բարբառագիտական, այլ նաև լեզվաբանական նկատառումներով: Այդ բառապաշարը հայերենի ընդհանուր բառային ֆոնդի անքակտելի մասն է, որի ուսումնասիրությունը կարևոր է ընդհանուր լեզվի և՛ համաժամանակյա, և՛ տարաժամանակյա ամբողջական նկարագրության առումով: Բարբառային բառապաշարի հետազոտությունը կարող է ընթանալ տարբեր դիտանկյուններով՝ շարունակաբար լրացվելով ինչպես առանձին բարբառային միավորների բառապաշարային շերտերի, իմաստային ու կառուցվածքային յուրահատկությունների դիտարկումներով, այնպես էլ տարբեր առնչությունների, ազդեցությունների ու կապերի հետազոտությամբ, ժողովրդագրական խնդիրների արծարծմամբ: Փորձը ցույց է տալիս, որ բարբառախոս*

[60] Աճառեան. 1913, 1028:
[61] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2010, 173:
[62] Աճառեան. 1913, 676:
[63] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, 311:
[64] Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, 283:
[65] Աճառյան. 1973, 347:

*վայրերի ու բառապաշարի նույնիսկ սահմանափակ շրջանակի դիտարկումը կարող է կարևոր լինել՝ հնարավորություն տալով շրջանառության մեջ դնել տվյալներ, որոնք կարող են ոչ միայն գաղափար տալ ընդհանուրի մասին, այլև նյութ տրամադրել առավել ընդհանուր հետազոտությունների համար:*

*Լոռու խոսվածքը թե՛ Արարատյան, թե՛ այլ բարբառներից այս կամ այն չափով տարբերակող բառաշերտի՝ միայն խոսվածքին բնորոշ բառերի մեջ ավելի մեծ քանակություն են կազմում բաղաձրությունները, իմաստային ինքնատիպ անցումները, որը պայմանավորված է տեղային լեզվամտածողության, լեզվագործածության առանձնահատկություններով: Լեզվամտածողական ու լեզվագործածական ընդհանուր իրողությունների, ինչպես նաև սերտ չփումների արտահայտություն են խոսվածքի բառային ընդհանրություններն Արարատյան, Թբիլիսիի և Ղարաբաղի բարբառների հետ: Լոռու խոսվածքի բառապաշարի վրա պատմական հանգամանքների, ժողովրդագրական տեղաշարժերի ազդեցությունը փաստվում է Ղարաբաղի, ինչպես նաև Թբիլիսիի բարբառների տարրերի զգալի առկայությամբ: Քննության ենթարկված բառաշերտում փոխառյալ բառերի առկայությունը կարող է հետևանք լինել ինչպես այլ լեզուների հետ անմիջական չփման, այնպես էլ բարբառային այլ միավորների ազդեցության: Պետք է փաստել, որ Լոռու խոսվածքի բառապաշարի յուրահատկությունները էական նշանակություն կարող են ունենալ Արարատյան բարբառի հետ փոխհարաբերությունների ավելի հանգամանալի դիտարկման ժամանակ:*

*Ընդհանուր առմամբ, բառապաշարային իրողությունների դիտարկումը և հաշվառումը մեծապես կարող է նպաստել բարբառային տարբեր միավորների առնչությունների քննության ու ճշգրտմանը:*

**Վիկտոր Կատվալյան – բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունները՝ բարբառագիտություն, հայոց լեզվի պատմություն, ճանաչողական լեզվաբանություն, դրապար, հնչյունաբանություն, բառագիտություն, քերականագիտություն, ոճագիտություն: Հեղինակ է 15 մենագրության և շուրջ 100 հոդվածի:**
ORCID: 0009-0002-2597-4808. instlingv@sci.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 2013, Երկրագործական գործիքների անվանումները հայերենի բարբառներում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 333 էջ:

Աղաբեկյան Մ. 2010, Սյունիք-Արցախ տարածքի բարբառների պատմական հնչյունաբանություն. – Հայերենի բարբառագիտական ատլաս, պր. 3, Երևան, «Նաիրի», էջ 154–165:

Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան», 1615 էջ:

Աճառեան Հ. 1911, Հայ բարբառագիտութիւն. Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների. – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը, Մոսկուա–Նոր-Նախիջեւան, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 307 էջ:

Աճառեան Հ. 1913, Հայերէն գաւառական բառարան. – «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Թ, Թիֆլիս, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1144 էջ:

Աճառյան Հ. 1971, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 698 էջ:

Աճառյան Հ. 1973, Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 688 էջ:

Աճառյան Հ. 1979, Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 623 էջ:

Ամիրջանյան Հ. 2010, Լոռին 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 163 էջ:

Ասատրյան Մ. 1962, Ուրմիայի /Խոյի/ բարբառը, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 256 էջ:

Ասատրյան Մ. 1968, Լոռու խոսվածքը, Երևան, «Միտք», 198 էջ:

Բառնասյան Ձ. 2009, Ժամանակակից բառերը հայերենի բարբառներում, Երևան, «Նաիրի», 124 էջ:

Գրիգորյան Ա. 1957, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 543 էջ:

Խաչատրյան Հ. 2009, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Երևան, «Լուսաբաց», 315 էջ:

Կոստանդյան Դ. 1979, Երզնկայի բարբառը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 191 էջ:

Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր. 1982, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 141 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2001, հ. Ա, Երևան, «Գիտություն» հրատ., 451 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2002, հ. Բ, Երևան, «Գիտություն» հրատ., 451 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2004, հ. Գ, Երևան, «Գիտություն» հրատ., 425 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2007, հ. Դ, Երևան, «Գիտություն» հրատ., 451 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2008, հ. Ե, Երևան, «Գիտություն» հրատ., 420 էջ:

Հայոց լեզվի բարբառային բառարան. 2010, հ. Զ, Երևան, «Գիտություն» հրատ., 407 էջ:

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1988, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 992 էջ:

Ղարիբյան Ա. 1953, Հայ բարբառագիտություն, Երևան, ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 457 էջ:

Մալխասեանց Ստ. 1944ա, Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 512 էջ:

Մալխասեանց Ստ. 1944բ, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 614 էջ:

Մալխասեանց Ստ. 1945, Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երևան, ՀՍՍՌ պետ. հրատ., 646 էջ:

Մեսրոպյան Հ. 2016, Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Երևան, «Ասողիկ», 349 էջ:

Միքայելյան Ժ. 2009, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները (համաժամանակյա և տարաժամանակյա քննություն), Երևան, «Նաիրի», 144 էջ:

Մուրադյան Մ. 1982, Ուրվագիծ Մոկսի բարբառի. – Հայերենի բարբառագիտական ատլաս, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 108–183:

Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 346 էջ:

REFERENCES

Abrahamyan A. 2013, Yerkragortsakan gortsik'neri anvanumnery hayereni barbarnerum, Yerevan, HH GAA "Gitutyun" hrat., 333 ej (In Armenian).

Aghabekyan M. 2010, Syunik'-Arts'akh taratski barbarneri patmakan hnch'yunabanutyun. – Hayereni barbaragitakan atlas, pr. 3, Yerevan, "'Nairi", ej 154–165 (In Armenian).

Aghayan E. 1976, Ardi hayereni bats'atrakan bararan, Yerevan, "Hayastan", 1615 ej (In Armenian).

Acharyan H. 1911, Hay barbaragitut'iwn. Uruagits ew dasaworut'iwn hay barbarneri. – "Eminean azgagrakan zhoghovatsu", h. Y, Moskua – Nor-Nakhijewan, hrat. Lazarean chemarani arewelean lezuats', 307 ej (In Armenian).

Acharyan H. 1913, Hayeren gawarakan bararan. – "Eminean azgagrakan zhoghovatsu", h. T, T'iflis, hrat. Lazarean chemarani arewelean lezuats', 1144 ej (In Armenian).

Acharyan H. 1971, Hayeren armatakan bararan, h. A, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 698 ej (In Armenian).

Acharyan H. 1973, Hayeren armatakan bararan, h. B, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 688 ej (In Armenian).

Acharyan H. 1979, Hayeren armatakan bararan, h. D, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 623 ej (In Armenian).

Amirjanyan H. 2010, Lorin 18-rd dari verjin ev 19-rd dari arajin yeresnamyakin, Yerevan, HH GAA patmut'yan institut, 163 ej (In Armenian).

Asatryan M. 1962, Urmiayi /Khoyi/ barbary, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 256 ej (In Armenian).

Asatryan M. 1968, Loru khosvatsk'y, Yerevan, "Mitk", 198 ej (In Armenian).

Barnasyan J. 2009, Zhamanakanish barery hayereni barbarnerum, Yerevan, "Nairi", 124 ej (In Armenian).

Grigoryan A. 1957, Hay barbaragitut'yan dasynt'ats', Yerevan, Yerevani hamalsarani hrat., 543 ej (In Armenian).

Khach'atryan H. 2009, Azgakts'kan haraberut'yunner artahaytogh barery hayereni barbarnerum, Yerevan, "Lusabats", 315 ej (In Armenian).

Kostandyan D. 1979, Yerznkayi barbary, Yerevan, HSSH GAA hrat., 191 ej (In Armenian).

Hayereni barbaragitakan atlasi nyut'eri havak'man tsragir. 1982, Yerevan, HSSH GA hrat., 141 ej (In Armenian).

Hayots' lezvi barbarayin bararan. 2001, h. A, Yerevan, "Gitut'yun" hrat., 451 ej (In Armenian).

Hayots' lezvi barbarayin bararan. 2002, h. B, Yerevan, "Gitut'yun" hrat., 451 ej (In Armenian).

Hayots' lezvi barbarayin bararan. 2004, h. G, Yerevan, "Gitut'yun" hrat., 425 ej (In Armenian).

Hayots' lezvi barbarayin bararan. 2007, h. D, Yerevan, "Gitut'yun" hrat., 451 ej (In Armenian).

Hayots' lezvi barbarayin bararan. 2008, h. E, Yerevan, "Gitut'yun" hrat., 420 ej (In Armenian).

Hayots’ lezvi barbarayin bararan. 2010, h. Z, Yerevan, “Gitut’yun” hrat., 407 ej (In Armenian).

Hakobyan T’., Melik’-Bakhshyan St., Barseghyan H. 1988, Hayastani ev harakits’ shrjanneri teghanunneri bararan, h. 2, Yerevan, Yerevani hamalsarani hrat., 992 ej (In Armenian).

Gharibyan A. 1953, Hay barbaragitut’yun, Yerevan, HSSR pet. her. mank. inst. hrat., 457 ej (In Armenian).

Malkhaseants’ St. 1944a, Hayeren bats’atrakan bararan, h. 2, Yerevan, HSSR pet. hrat., 512 ej (In Armenian). .

Malkhaseants’ St. 1944b, Hayeren bats’atrakan bararan, h. 3, Yerevan, HSSR pet. hrat., 614 ej (In Armenian).

Malkhasyants’ St. 1945, Hayeren bats’atrakan bararan, h. 4, Yerevan, HSSR pet. hrat., 646 ej (In Armenian).

Mesropyan H. 2016, Kronayekeghets’akan barapashary hayereni barbarnerum, Yerevan, “Asoghik”, 349 ej (In Armenian).

Mik’ayelyan Zh. 2009, Vaspurakani khosvatsk’neri k’mayin dzaynavornery (hamazhamanakya ev tarazhamanakya k’nnut’yun), Yerevan, “Nairi”, 144 ej (In Armenian).

Muradyan M. 1982, Urvagits Moksi barbari.- Hayereni barbaragitakan atlas, Yerevan, HSSH GA hrat., ej 108–183 (In Armenian).

Jahukyan G. 1972, Hay barbaragitut’yan neratsut’yun, Yerevan, HSSH GA hrat., 346 ej (In Armenian).

## О НЕКОТОРЫХ СЛОВАХ, ХАРАКТЕРНЫХ ДЛЯ ГОВОРА ЛОРИ
(Сравнительный анализ)

ВИКТОР КАТВАЛЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Лорийский говор, словарный запас, влияние, заимствование, языковое мышление, семантический сдвиг, сложные слова, словарь.*

Каждый диалект или говор характеризуется уникальным словарным запасом, который, обнаруживая общие черты и различия со словарным запасом других диалектных единиц, проявляет себя как система с уникальными семантическими, словообразовательными и этимологическими характеристиками. Изучение словарного запаса также важно не только с точки зрения всестороннего изучения диалектной речи, но и определения взаимосвязей и влияний диалектных единиц, особенно при возникновении спорных вопросов. Внимание, уделяемое в данной работе лексике Лорийского говора, обусловлено разногласиями в армянской диалектологии относительно соотношения этого говора с Араратским диалектом. У Лорийского говора, входящего в состав Араратского диалекта, есть много особенностей, отличающих его от этого диалекта, но в то же время он имеет и

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

значительное сходство с диалектами Карабаха и Тбилиси. Исследователи рассматривали эти отношения в основном с точки зрения фонетических и грамматических особенностей, почти не обращаясь к лексике. Стремясь в какой-то мере восполнить имеющийся пробел, мы попытались выявить некоторые особенности лексики, характерные для Лорийского говора, рассмотрев несколько десятков лексических единиц, сначала сопоставив их с другими говорами Араратского диалекта, а затем с диалектами Карабаха и Тбилиси. Наши исследования показывают, что отличия словарного состава Лорийского говора от других говоров Араратского диалекта обусловлены как наличием уникальных лексических единиц, так и значительным влиянием Карабахского и Тбилисского диалектов. Таким образом, особенности лексики Лорийского говора согласуются с выводами, полученными в результате изучения фонетических и грамматических реалий.

*Виктор Катвалян – д. филол. н., директор Института языка им. Р. Ачаряна НАН РА. Научные интересы: диалектология, история армянского языка, когнитивная лингвистика, грабарь, фонология, лексикология, грамматика, стилистика. Автор 15 монографий и около 100 статей.*
*ORCID: 0009-0002-2597-4808. instlingv@sci.am*

## ABOUT SOME WORDS CHARACTERISTIC OF SPEECH OF LORI
(Comparative analysis)

VIKTOR KATVALYAN

S u m m a r y

*Keywords: dialect of Lori, vocabulary, influence, borrowing, linguistic thinking, semantic shift, compound words, dictionary.*

Each dialect or speech is characterized by a unique vocabulary, which, by presenting commonalities and differences with the vocabulary of other dialect units, manifests itself as a system with unique semantic, word-formational, and etymological characteristics. The study of vocabulary is also important not only in terms of a comprehensive study of dialect speech, but also from the perspective of determining the interrelations and influences of dialect units, especially when there are controversial issues. In this work, the focus on the vocabulary of the Lori speech is due to the disagreements in Armenian dialectology regarding the relationship of this speech with the Ararat dialect. Being included in the Ararat dialect, the Lori speech has many features that distinguish it from that dialect, while at the same time it also has significant similarities with the dialects of Karabakh and Tbilisi. Researchers have considered these relationships mainly in terms of phonetic and grammatical features, with almost no reference to vocabulary. In an attempt to fill the existing gap to some extent, we tried to

uncover some of the peculiarities of the vocabulary characteristic of the Lori dialect by observing several dozen lexical units, first by comparing them with the other speeches of the Ararat dialect, and then with the dialects of Karabakh and Tbilisi. Our observations show that the differences in the vocabulary of the Lori speech from the other speeches of the Ararat dialect are due to both the presence of unique lexical units and the significant influences of the Karabakh and Tbilisi dialects. Thus, the vocabulary features of Lori speech are consistent with the conclusions drawn from the study of phonetic and grammatical realities.

*Viktor Katvalyan – Doctor of Sciences in Philology, Director of the Institute of Language after H. Acharyan of NAS RA. Scientific interests: dialectology, history of the Armenian language, cognitive linguistics, Grabar, phonology, lexicology, grammar, stylistics. Author of 15 monographs and about 100 articles. ORCID: 0009-0002-2597-4808. instlingv@sci.am*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

ՀՏԴ : 902/904(479.25) + 28

Doi:10.54503/0135-0536-2025.2-226

# THE PETROGLYPHS OF ARMENIA AND THEIR ENVIRONMENT AS A SACRED AREA*

GOHAR VARDUMYAN, KAREN TOKHATYAN

*Key words: Armenia, rock carving, cult, worship, mythology, world creation, magic, ritual, imaginary creature, cosmological ideas, patriarch Hayk, dragon-vishap, symbol.*

*Abstract*

In ancient Armenia there were various types of sanctuaries and sacred places. They served the purpose of worship and its various manifestations, in which the ritual, its traditions and customs were significant and important. In archaic times the petroglyph environment was also a unique sacred area. The votive elements, in various forms of expressions, are present in many scenes and compositions.

The rock paintings with ritual and worship scenes are classified in this article according to their content: a/ world creation and fertility, b/ magic and ritual, c/ imaginary creatures, d/ cosmological ideas, e/ symbols. A comprehensive analysis of these cult types and components presents the petroglyph and its environment as a unique space, where prehistoric man performed rituals vital for his everyday activities, worshiping the forces of nature, luminaries and celestial bodies, and various mythical creatures.

Each type of worship is also presented in the context of its later manifestations in other spheres of culture and ethnographic realities. Over the centuries, the petroglyph environment as a sacred area gave way to constructive environments such as temples, altars and others, which were dedicated to gods and goddesses who inherited mythological images from the distant past.

## *Introduction*

Rock art as the deepest layer of the pictorial heritage, is at the origins of the eternal process of human faith and aspirations, cognitive and creative activity. Initially, in most ancient petroglyphs almost all creatures, objects and phenomena are the result of observation of natural realities, simple or artistic reflection, but often there is also ritualization of reality, supernaturalization,

* Submitted as of 13. V. 2025, reviewed on 07. V. 2025, approved for publication on 11. VII. 2025.

© Author/s, 2025. Available under Creative Commons Attribution 4.0 License.

flight of imagination, and they reflect the inner world and mythological perceptions of archaic man.

The petroglyphs of Armenia with their multifaceted semantics and imagery, appeal to almost all essential spheres of culture, including worship, the elements of which are present in various scenes and compositions. Archaeologists have studied certain images of cult scenes and compositions, however, the petroglyphs with their environment as a sacred area have not yet been specifically studied. Meanwhile, the material collected recently gives us the opportunity to examine the subject in a new way, from the appropriate perspective.

We examine the rock paintings of Armenia with ritual scenes, classifying them according to the content of the composition and elucidating the types of worship expressed in them. They are analyzed due to each thematic group, with the aim to reveal what role the scenes engraved on the stones played in archaic community's life, and whether the petroglyph environment can be characterized as a sacred space. The images are compared with later manifestations in other spheres of culture, in certain artifacts, and sometimes in ethnographic realities[1].

*Theories on rock art interpretation*

At the beginning of the 20th century, two main directions explaining the origin and purpose of rock art were formed: the magical and the cultic. The French archaeologist and religious scholar S. Reinach proposed the magical theory, due to which the depiction and the resulting image are a means of remote influence on a living being, the main part and form of magic that contributes to successful hunting or warfare[2]. The French archaeologist and anthropologist A. Leroi-Gourhan elucidated primitive art in the frames of cult, as a result of reliance on supernatural forces, rejecting the absolute exclusivity of the magic factor, as it could not explain the frequent presence of certain pictorial elements, such as dangerous beasts or imaginary, fantastic creatures, monsters[3].

We believe that as part of the general ritual sphere and a manifestation of mythical thinking, magic and cult are very close. While, the means of implementation are different: in the case of magic, a person relies on the influence of his internal power; in the case of worship, he conditions the expected result with the possible participation of another, supernatural, intermediary third force. So, we can say, that rock art is an emotional sphere of human cognition, in which enchantment and worship are important components. These reflections of the archaic wisdom are a unique combination of science and art, knowledge and emotion, and even a pictorial language.

Պատմա-բանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

[1] Petroglyph–worship connections are partially reflected in our previous publications: *Վարդումեան, Թոխաթեան. 2002, 386–407,* Tokhatyan. 2015, 187–193; *Վարդումյան. 2016, 156–165, Թոխաթյան. 2016, 189–190,* Vardumyan. 2020, 167–183; Vardumyan. 2024, 126–145.

[2] Reinach. 1903, 257–266.

[3] Leroi-Gourhan. 1964.

Modern aesthetic thought makes greater emphasis on the cognitive aspect of rock art, seeing in this sphere a tendency to realistically reflect the surrounding world. In addition to these approaches, including both sacred and profane features of rock art, we emphasize its cult aspect, which was one of the significant sides of prehistoric man's life, since through it he ensured his contact with the supernatural good forces. In the sacred petroglyph environment, he felt himself under the protection of higher powers and considered the ritual actions as a guarantee of his aspirations' fulfillment. In contrast to profane space, the sacred places were a kind of man's private universe, as if it were in such spots that he had received the revelation of a reality other than that in which he participated through his ordinary daily life[4].

*Mythological ideas, cult and ritual in rock art*

The petroglyphs of Armenia were characterized as sacred monuments back in 1971, by archaeologists H. Martirosyan and H. Israelyan who wrote: "They are the cherished sanctuaries of prehistoric people, the 'temples' of ancient art"[5]. And they were right, because in the compositions of archaic 'canvases' it is possible to notice the manifestations of the ancestors' thoughts, their beliefs and mythological ideas.

In earliest times the choice of the appropriate place, the creation of the images, the ritual ceremony – all this was a unified ritual process and thinking. The engraver used a rich arsenal of artistic means and techniques to visually reproduce his concepts and mythological ideas. Understanding the past and present as simultaneous states, every ritual with cosmogonic meaning was modeling the primordial time of creation, phenomena, and real events.


Rock art was intertwined to almost all essential spheres of Armenian culture by constant theme and invariants, such as living beings, gods, luminaries, ancestors and motherhood, mythical creatures, dragons and symbols, etc. The rock paintings reflect archaic beliefs and rituals, the worship of plants, animals, spirits, higher powers, ancestors, heroes, deities, twins, time [tab. $1_{1–3, 8–12}$], Earth and Sky, heavenly luminaries [tab. 4], atmospheric phenomena [tab. $5_{1–9}$], etc. There are direct depictions of votive rituals, dances, the images of goddesses, maternity and fertility [tab. $1_{4–6}$, $2_{11–13}$], as well as pregnancy and childbirth[6] [tab. $1_{6–7}$, $2_{17}$].

[4] E l i a d e. 1959, 24.

[5] *Մ ա ր տ ի ր ո ս յ ա ն, Ի ս ր ա յ ե լ յ ա ն. 1971, 7:*

[6] The iconography of rock images is characterized by the syncretism typical for primitive culture. The mixed, undifferentiated state of perception of things and phenomena, a combined representation of the real and the imaginary, the themes are often intertwined, mutually complementary, even within the composition of one rock image *(Վ ա ր դ ո ւ մ յ ա ն, Թ ո խ ա թ յ ա ն. 2023, 207–212)*.

**Table 1.** Figs. 1, 3–4, 9–12 (Geghama Mountains). Figs. 2, 5–6 (Syuniq). Fig. 7 (Aragats). Fig. 8 (Sevsar).




Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

The vivid ritual, game, dance and performance of the prehistoric era were symbolic, a means of marking and decorating any memorable event. During human history, phenomena and situations occurring in nature and in everyday life have been initially differentiated and valued, and due to their meaning, beliefs and worship related to them, have been formed. As a result of all this, the old customs traditions passed from generation to generation, and were carved on rocks. Moreover, it can be assumed that near those engraved stones ancient man performed rituals that were significant to his life and activities, thus turning the petroglyph environment into a sacred area.

Below, we examine the versatile worship content of certain rock carvings, classifying them by cult types and their representations.

*World creation and fertility*

In creation myths, the disordered state of the Universe – Chaos, was often embodied in a feminine image, from which, through struggle and travail, the ordered Cosmos was born. The earthly (chthonic) nature of woman in ancient religions (Mesopotamian, Indian, Hittite, Greek, Roman, etc.) was symbolized by her generative role[7]. Even in the early Paleolithic, the worship of Great Mother – the goddess of fertility, arose from the woman's role in childbirth.


In the Neolithic, with the development of agriculture and cattle breeding, the concepts of fertility and abundance, the image of the mother-goddess became more significant. She was worshiped as the guardian of the clan and tribe, the protector of household prosperity, and the guarantee of the community's well-being. Numerous rock images and stone female figurines with emphasized breasts, hips, abdomen, and other signs of fertility, serve as vivid testimony to the archaic "Venuses".

The woman in rock art is mainly depicted alone, which perhaps symbolizes the importance of her specific status in community [tab. 2 $_{1–5, 11}$, 1 $_{4–6}$]. She is mostly portrayed naked, which should not be interpreted as a reflection of lifestyle, but merely as a symbolic iconographic manifestation of fertility [tab. 1$_{4–5, 8}$]. In some rock pictures, which also depict familial or everyday scenes, there is a ritual group-dance near or around domestic or wild animals [tab. 2$_{6–10}$, 1$_{8}$]. In some canvases, a family is pictured, sometimes with a child [tab. 2$_{8–10}$]. The rock paintings of maternity goddesses are very expressive. Occasionally, they are accompanied by fertile animals, such as mountain goat and deer [tab. 2 $_{12–13}$]. Near them often appear images of a lightning spirit or zigzag sign emphasizing the divine and supernatural forces associated with fertility [tab. 5$_{1–9}$]. H. Martirosyan related the rock carvings depicting lightning and a goat together, to the riddle "it's the goat, and his back is lightning"[8],

[7] Lincoln. 1975, 121–145; Lincoln. 2024, 65–85; *Վարդումյան, Թոխատյան. 2023, 206–207,* Вардумян, Тохатян. 2024, 347, рис. 1$_{10}$.

[8] *Նաւասարդեանց. 1883, 17,* Abeghian. 1899, 78; *Աբեղյան. 1975, 66, 530, Հարությունյան. 1965, 11, 20, Վարդումյան, Թոխատյան. 2023, 209:*

**Table 2.** Figs. 1–4, 6, 8, 14–15, 17 (Geghama Mountains). Figs. 5, 7, 9–10 (Syuniq). Fig. 11 (But, Vaspurakan). Fig. 12–13 (Aragats). Fig. 16 (Lori).




Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

noting that the bitriangle image of the goat is also present in Urartian and medieval ideograms, with the meaning “the nunny, the lightning” (Arm. «*դայակն, փայլակն*»)[9].

An important place of woman worship is the Virgins’ cave on the slope of the sacred Paghato Mountain, in Vaspurakan Province, near the But village. There are five small colour paintings of dancing goddesses, dating back to the 8th–5th millennia BC. [tab. $2_{11}$]. Near the summit, once there were also the temples of Anahit, Aramazd and Astghik[10], and not far from this place, in Darbnatskhar (mentioned in Sasna Epic), was a significant worship center of the Mother Goddesses Arubaini and Anahit. Later, in the 4th century, the Hogeats Monastery, dedicated to the Holy Begotten, was built on the place of the old temple[11]. The historical-cultural connection between Mother Goddesses and Saint Mary yhe Virgin is more than obvious, and it has survived in the reliefs of religious buildings, and in miniatures[12].

The architect-theorist S. Mnatsakanyan, analyzing the relief portraits at the Cathedral of Holy Cross Akhtamar church, notices that the ancient image, “preserving its existence for dozens of centuries, reached the 10th century and found its place on the walls of the temple. That the most beloved deities of Ancient Armenia were not forgotten even in the 11th century is evidenced by the appearance of Anahit's image in miniature compositions of several gospels”[13]. In this regard, he refers to T. Izmaylova, a specialist in Armenian miniatures, who writes: “In the image of the goddess, revived in Armenian manuscripts of the 11th century, one should see Anahit”[14].

Some petroglyphs contain direct or symbolic depictions of fertilizing deity and sacred coitus[15] [tab. $2_{14–15}$], pregnancy and childbirth [tab. $1_{4, 6–7}$, $2_{17}$],

---

[9] *Մարտիրոսյան, Իսրայելյան. 1971, 15, Մարտիրոսյան, Իսրայելյան. 1973, 21–24, աղ.* V, *Մարտիրոսյան, Իսրայելյան. 1978, 41–42, 94, 97, աղ.* $I_{10–13}$, XIVa; *Մարտիրոսյան, Իսրայելյան. 1981, 10–11, 21.* About this ideogram see: *Աբրահամյան. 1959, 173:*

[10] *Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք. 1843, 295, 301, also: Ալիշան. 1895, 38, 48:*

[11] *Սրուանձտեանց. 1884, 67–68, Երեմյան. 1963, 36, Մելիք-Փաշայան. 1963, 58, 108–109:*

[12] *Թոխաթեան. 2003, 87.* About the local origin of the goddesses, their relationship to the Begotten see: Капанцян. 1956, 311–313; *Մելիք-Փաշայան. 1963, 65, 80–88, 111, 128–135,* Вардумян. 1991, 79, 105–111, 127; *Վարդումյան, Թոխաթյան. 2023, 205–206, 210,* Вардумян, Тохатян. 2024, 351–354.

[13] *Մնացականյան. 1970, 198–199:*

[14] Измайлова. 1967, 217.

[15] There is a petroglyph in Syunik, near Sepasar Mountain (Knoll, Meller. 2015, 44, fig. 3), where the celestial fertilizing father god holds a scepter in his hand – the symbol of power, and the woman with halo is the fertile Mother Goddess. Halo is also present in other rock paintings and can be considered the earliest prototype of

childcare [tab. $2_{8–10}$]. Within the scope of prehistoric beliefs and rituals, particularly striking is the scene with women worshiping higher powers [tab. $1_{1–2}$]. In veneration scenes, the images of women are remarkable by their dynamic expression and impressive graceful forms, representing mermaids, nymphs or other water spirits [tab. $1_{4–5, 8}$]. Most likely, in those distant times, women came to such petroglyphs to appeal to heavenly powers and sought help for their various desires.

*Magic and ritual*

In the context of archaic beliefs and mythological thinking, the rock images reflecting magical actions are of great importance. In some compositions animals or mythical creatures are depicted, bound or captured (net-like signs), killed (straight line along the body, or as skeleton), rarely shot by arrow or spear. Engraving such scenes before the upcoming hunt, man hoped to get the help of spirits and higher forces.

Elements of magic rituals could also be expressed in rock carvings, depicting the surrounding and distant nature, phenomena, aspects of human activity and results of creation, and especially scenes related to the inner world (such as imaginary creatures, inner visions, faces, uncertain images, symbols, etc.).

The magic and enchantment factors are key in rock art. Hunting scenes were made with main purpose to fix the wanted action, and the expected result. The sculptor in this way expressed his gratitude to the higher forces, the spirit protecting the hunt, the totem, and also sought the animal's "forgiveness". Musical instruments were used to enchant the prey with dance movements and to distract attention by imitating sounds. Especially in hunting and group ritual scenes, there are images reminding the prototypes of musical instruments: a lyre, cymbals, tambourine, bowl, horn, and drum[16].

We suppose, there is a certain understanding of balance between survival and environmental issues. Prehistoric man perceived himself as a part of nature and, as a result, endowed the world around him with human features. He probably had the same attitude towards himself and animals. He did not see the beast as a creature different from himself; he perceived it as "another being", different only in appearance, and, by depicting it on stone, hoped to charm and hunt it.

*Imaginary creatures*

Fantastic creatures are also a part of mythological images in rock carvings. There are depictions connected with legends and myths: supernatural, fantastic amphibian or triphibian creatures, two-headed snakes, hydras, dragons, goat-bodied snake-headed beings, vulture-goats or griffins, and many others[17]. They

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

the symbol of holiness [tab. $1_{10}$]. It was widespread in the Middle Ages, very often depicted on khachkars (cross-stones), tombstones, and bas-reliefs.

[16] *Վարդումյան, Թոխաթյան. 2023, 208–209,* Тохатян, Вардумян. 2025. 127–130, рис. 3.

[17] *Մարտիրոսյան, Իսրայելյան. 1971, 18:*

seem to be a direct reflection of archaic beliefs and superstitions, visions and dreams, good and evil spirits from myths, water nymphs [tab. $2_2$], demons, monsters[18] [tab. $3_{1–7}$].

Among the imaginary creatures the dragon predominates, both in alone and group scenes, in a peaceful position, mostly long-bodied, bull-like, serpent-like, tailed, one-headed, often multi-horned and multi-legged [tab. $3_{8–15}$]. Related to those is the 'vishapakar' – dragon-stone, found only in the Armenian Highland, usually in sacred areas, near water sources, sometimes accompanied by petroglyphs[19]. H. Martirosyan and H. Israelyan believe that they are related to dragon stones: "Vishap stelae interpreted as monuments embodying the natural forces and fertility, are associated with dragon in folklore. The dragon in prehistoric thinking appears as a symbol of storm, thunder and lightning, sometimes in the image of bull, embodying the powerful forces of the Universe"[20]. The archaic man "communicated" with dragons, as well as other mythical creatures, by carving their image on stone and performing ritual actions in the petroglyph area that had become sacred to him.

In further periods, the dragon motif is everywhere: pottery, bronze belts and seals, the walls of fortresses and churches, tombstones, miniatures and carpets, textile and handicrafts, ornaments and jewelry, as well as in folklore and medieval written sources. The depiction of plants and some animals in later periods often symbolized the spirit of fertility or divinity in a disguised, hidden manner[21].

### *Cosmological ideas*

Mythological thinking, based on the earliest perceptions connected with celestial luminaries and phenomena, were central in archaic worldview. In the sacred areas high in the mountains of Armenia, many rock carvings emphasize the significant role of luminaries and heavenly bodies: the Sun, the Moon, planets, stars, star clusters, constellations, Milky Way [tab. 4], comets and meteors. Within the millennia-old stone heritage, images with cosmological meaning vividly reflect the human perceptions of the Earth, the Sky, heavenly phenomena, seasons, and the cycles of day and year.

---


[18] Evil and good spirits are known from folklore, written sources, and ethnography *(Աւիշան. 1895, 168–230*, Abeghian. 1899, 10–125; *Աբեղյան. 1975, 17–99, 462–577, Բդոյան. 1950, 31–66, Մնացականյան. 1955, 519–521, 552, 575–580, նկ.* 1098–1103; Вардумян. 1991, 74; *Վարդումյան. 2020, 16–20).*

[19] About the sacredness of vishap landscape*: Բոբոխյան, Ջիլիբերտ, Հնիլա. 2015, 275–277, 283–295, Բոբոխյան. 2023, 170–174:*

[20] *Մարտիրոսյան, Իսրայելյան. 1971, 11, Մարտիրոսյան, Իսրայելյան. 1973, 34–38, 50, Մարտիրոսյան, Իսրայելյան. 1978, 108–111, աղ.* XX$_{7–11}$, XXI$_8$*:*

[21] *Բդոյան. 1986, 25–27, 38:*


**Table 3.** Figs. 1–5, 8–14 (Geghama Mountains). Figs. 6–7 (Syuniq). Fig. 15 (Huso sar, Vayq).




Spirits, *Geghama mountains*




Spirits and demons, *Geghama* and *Syuniq mountains*










Dragons, *Geghama* and *Vayq mountains*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

By mythologically interpreting the world, our far ancestors spiritualized and anthropomorphized celestial luminaries and phenomena, forming the worship of their deities. Compositions have often been repeated in the form and function of archaeological finds and structures, in the peculiarities of ornament and style, in mythology, art and science, music and poetry. There are numerous vivid manifestations of celestial and solar perceptions in calendar, written and ethnographic heritage[22].

Remarkable images are carved on two neighboring stones in the Geghama Mountains: on one – an archer and a bull, on the other – a swastika and a bull [tab. $4_{5–6}$]. The connection to the constellations Hayk (Orion) and Taurus is quite obvious. The archer's image may be an echo of the epic founder of Armenia, the ancestor of the Armenian nation, Patriarch Hayk, who killed the tyrant Bel with his huge bow and arrow[23]. The image is consistent with the mythological figure of the Great Forefather, who was worshipped as god-creator, personifying time, and as cosmic archer, who embodied the Orion constellation named Hayk in the first Armenian translation of the Bible. The connection to the worship of ancestors is also evident, to whom ancient man appealed with the hope of help in difficult or decisive moments of life, and it is more than possible that especially near this petroglyph he performed his ritual contact with the heroic Patriarch who defeated the enemy.

*Symbols and vague images*

Some images do not resemble any known reality, and are still uncertain. They are found near the clearly perceptible images of well-known objects, phenomena, and living beings. It is possible that the vague appearance is a result of chance, error, imperfection or incompleteness. But, very likely, the image is meaningful, since it is often placed separately and has independent role, its own function [tab. $5_{10–24}$]. Such a petroglyph could also reflect preconceived ideas, dreams, or deliberate disguise, distortion, and imitation of appearance in the subconscious of archaic man. As in the case of visible creatures, these images also demonstrate the transition from the simple to the imaginary and abstract.


---


[22] Referring to the worship of celestial luminaries, ethnographer V. Bdoyan notices that the remnants of astral religion in Armenian mythology are reflected in the so called Akhtark literature, and among them are the notions according to which certain star groups are directly connected with agricultural tools, animals, and the farmer *(Բդոյան. 1950, 34–35, Բդոյան. 1972, 460, 462)*.

[23] Khorenatsi. 1991, 32–37. Armenian history and its chronology take their sources from Hayk's glorious victory against Bel, that took place on Navasard 1 (corresponding to August 11) 2492 BC. This date has become the beginning of the Armenian national calendar, and the months in Haykid calendar are called by the names of his sons and daughters *(Անանիա Շիրակացի. 1940, 76–77, Ալիշան. 1869, 96)*. About the cosmic content of Hayk's image see: Vardumyan. 2024, 126–145.

**Table 4.** Figs. 1–6, 8, 10–11 (Geghama Mountains). Fig. 7 (Sevsar). Fig. 9 (Vardenyats Pass).



1 Rising Sun


2 Sunrise or sunset



3 Sun



4 Star


5


6 Hayk-Orion and Taurus


7 Milky Way, *Sevsar*


8 Constellations: Aquila, *Geghama mountains*


9 Leo, *Vardenyats Pass*


10 Planets ?


11 Moon

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

**Table 5.** Figs. 1–2, 5, 7–8, 10–23 (Geghama Mountains). Fig. 3 (Navasar). Figs. 4, 6, 9 (Syuniq). Fig. 24 (Huso sar, Vayq).



Perhaps, it was through such vague images and symbols that man communicated with his worshipped powers, and just such a petroglyph was his sacred environment.

It is well known that the origins of many medieval religious symbols trace back to prehistoric times, to the ideas and beliefs of hunter-herders of the Eneolithic and even earlier periods, and within this frames many pre-ideas were developed, later evolving into deeply rooted symbolic forms. The majority of Christian symbols are the same ancient pagan motifs that were given entirely new interpretations by Christianity. Animals and fantastic, imaginary creatures appear on the walls of temples and palaces, the meaning of which is not always clear. However, they find expression in folk beliefs and traditions, and were well known to medieval people[24].

Thus, rock art was intertwined to almost all essential spheres of Armenian culture by constant theme and invariants, such as living beings, gods, luminaries, ancestors and motherhood, mythical creatures, dragons and symbols, etc. In the further stages of development, the ritualistic and symbolic concept of creation became more emphasized. The majority of these cult motifs continued their natural evolution in the design of Bronze Age pottery [tab. $2_{16}$], seals, bronze votive plates and belts, weaponry, as well as in the forms and ornaments of dragon-stelae, statuettes, in the depiction of ancient and medieval temples[25], wall-paintings, mosaics, bas-reliefs, miniatures, tombstones, amulets, in the weaving of carpets and carving of khachkars.

During many centuries, the sacred environment formed by petroglyphs, contributed to the formation of constructive sacred environment – temples and other sanctuaries dedicated to gods who inherited many mythological ideas from the deep past.

*Conclusions*

Examining rock images with votive content and showing the types of worship depicted and expressed in them, we come to the conclusion that petroglyphs were a kind of sacred places for the people of archaic times. They reflected man's ideas and perceptions about the world and life, his desire to communicate with higher forces through his paintings. Our far ancestors carved images on rocks expressing their conceptions of world creation, cosmological ideas, scenes of magic and ritual, pictures of mythical creatures, and performed their rituals in that sacred environment.

They portrayed women as a symbol of fertility and fecundity, depicted their ancestors in the form of stars and constellations, engraved spirits and dragons symbolizing the forces of nature, people worshiping the higher powers with their arms outstretched to the sky, and many other scenes

[24] *Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1970, 185–187, 193, Վ ա ր դ ու մ ե ա ն. 2010–2011, 279–307, Վ ա ր դ ու մ յ ա ն. 2020, 163–186:*

[25] All symbols and rituals having to do with temples, cities, and houses are finally derived from the primary experience of sacred space (E l i a d e. 1959, 58).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

testifying to the fact that the petroglyph environment was a sacred place.

Due to those numerous cult images and compositions, the rock art area can be considered ancient place of worship, mountain sanctuary, prehistoric man's ritual life space. From times immemorial, the petroglyph with its sacred environment, has reflected the eternal process of human faith and aspirations, cognitive and creative activities. These images of archaic wisdom are a unique source of people's beliefs and mythological ideas, rituals and customs, pictorial speech. From those traditions over the centuries have been formed state pantheons with their religious ideology, temples and altars, art works and scientific thought in pre-Christian Armenia.

*Gohar Vardumyan – PhD in History, Leading Researcher at the Department of History of Ancient Ages, Institute of the History of NAS RA; Associate Professor, Brusov State University, Chair of Armenian Studies. Scientific interests: Armenian mythology, history and culture, folk traditions and customs. Author of 1 monograph and about 135 articles.*
*ORCID: 0009-0006-4120-9929. gohar.vardumyan@gmail.com*

*Karen Tokhatyan – PhD in History, Senior Researcher at the Department of History of Ancient Ages, Institute of the History of NAS RA; Senior Lecturer, Brusov State University, Chair of Armenian Studies. Scientific interests: Rock art, Primitive art, archaeoastronomy. Author of 1 monograph and about 85 articles.*
*ORCID: 0009-0001-3246-9116. karen.tokhatyan@gmail.com*

## REFERENCES

Աբեղյան Մ. 1975, Երկեր, հ. է, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 603 էջ:

Աբրահամյան Ա. 1959, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, «Հայպետհրատ», 415 էջ:

Ալիշան Ղ. 1869, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա, Վենետիկ–Սբ Ղազար, 538 էջ:

Ալիշան Ղ. 1895, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ– Սբ Ղազար, 523 էջ:

Անանիա Շիրակացի. 1940, Տիեզերագիտութիւն և տոմար, Երևան, «Հայպետհրատ», XXX+95 էջ:

Բդոյան Վ. 1950, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ. – Աշխատություններ ՀՊՊԹ, հ. III, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 5–71:

Բդոյան Վ. Հ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ, 172 տախտակ:

Բդոյան Վ. Հ. 1986, Հայկական աղամաններ, Երևան, «Սովետական գրող» հրատ., 163 էջ:

Բոբոխյան Ա. 2023, Աստվածները, հերոսները և սրբերը. հայոց լեռները որպես սրբազան թաղումների միջավայր. – ՊԲՀ, № 1, էջ 166–182:

Բոբոխյան Ա., Ձիլիբերտ Ա., Հնիլա Պ. 2015, Վիշապաքարերի հնագիտություն. – Վիշապ քարակոթողները (խմբ.՝ Ա. Պետրոսյան, Ա. Բոբոխյան), Երևան,

«Գիտություն» հրատ., էջ 269–396:

Երեմյան Ս. Տ. 1963, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (փորձ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 155 էջ:

Թոխաթեան Կ. 2003, Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ. – «Բազմավէպ» (Վենետիկ – Սբ Ղազար), CLXI, № 1–4, էջ 44–100:

Թոխաթյան Կ. 2016, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը. – ՊԲՀ, № 2, էջ 180–198:

Հարությունյան Ս. Բ. 1965, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 39+392 էջ:

Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ. 1971, Գեղամա լեռների ժայռապատկերները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 66 էջ, 333 նկ.:

Մարտիրոսյան Հ. Ա. 1973, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 82 էջ, 23 աղ.:

Մարտիրոսյան Հ. Ա. 1978, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, «Սովետական գրող» հրատ., 206 էջ, 40 աղ., 127 նկ.:

Մարտիրոսյան Հ. Ա. 1981, Գեղամա լեռների ժայռապատկերները, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 128 էջ, 40 նկ., 81 աղ.:

Մելիք Փաշայան Կ. Վ. 1963, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 164 էջ:

Մնացականյան Աս. 1955, Հայկական զարդարվեստ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 658 էջ:

Մնացականյան Ստ. 1970, Պահպանիչ խորհրդանշանները միջնադարյան հայ քանդակագործության մեջ. – ՊԲՀ, № 3, էջ 185–202:

Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք. 1843, Վենետիկ–Սբ Ղազար, 641 էջ:

Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. 1991, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 486 էջ:

Նաւասարդեանց Տ. 1883, Ժողովածու. հայ-ժողովրդական աւանդութիւններ, գիրք 1, Երևան, տպագրութիւն էմին Տէր Գրիգորեանցի, 22 էջ:

Սրուանձտեանց Գ. Վ. 1884, Համով-հոտով, Կ. Պոլիս, տպագրութիւն Գ. Պաղտատլեան, 384 էջ:

Վարդումեան Գ. Դ. 2010–2011, Վաղ միջնադարեան Հայաստանի հոգեւոր մշակոյթը (հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն). – «Բազմավէպ» (Վենետիկ – Սբ Ղազար), CLXVIII, № 1–2, էջ 279–307:

Վարդումյան Գ. 2016, Տիեզերքը հայոց դիցաբանական պատկերացումներում. – «Մշակութային աստղագիտությունը Հայկական լեռնաշխարհում» երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Գիտություն» հրատ., էջ 156–165:

Վարդումյան Գ. 2020, Ժողովրդական քրիստոնեության դրսևորումները հայոց տոնական կյանքում. – ՊԲՀ, № 1, էջ 163–186:

Վարդումեան Գ., Թոխաթեան Կ. 2002, Հայոց լուսարեւային պատկերացումները. – (ըստ ժայռապատկերների և ազգագրական նիւթերի). – «Բազմավէպ» (Վենետիկ–Սբ Ղազար), CLX, № 1–4, էջ 383–407:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Վարդումյան Գ., Թոխաթյան Կ. 2023, Կնոջ կերպարը Հին Հայաստանի դիցաշխարհում. – «Կինը Արևելքում», II, «Կանայք Արևելքում» միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի հրատ., էջ 205–229:

Вардумян Г. Д. 1991, Дохристианские культы армян. – Армянская этнография и фольклор, 18. Ереван, изд. АН Армении, с. 60–146, 24 табл.

Вардумян Г. Д., Тохатян К. С. 2024, Цовинар: эволюция образа от первозданного хаоса до героини Армянского эпоса. – Stratum Plus, 5. Антропология представлений. Санкт-Петербург, Кишинев, Одесса, Бухарест, с. 345–357.

Тохатян К., Вардумян Г. 2025. Отражение танца в культуре бронзового века Армении (по наскальным изображениям Сюника и Вайоц-Дзора). – Stratum Plus, 2, В поисках культурных корней. Санкт-Петербург, Кишинев, Одесса, Бухарест, с. 121–134.

Измайлова Т. А. 1967, Образ богини в армянских миниатюрах XI века. – «Византийский временник» (М.), XVII, с. 205–228.

Капанцян Гр. 1956, Малоазийские (азианические) боги у армян. Историко-лингвистические работы: к начальной истории армян. Ереван, изд. АН Арм. ССР, 472 с.

Abeghian M. 1899, Der armenische Volksglaube (Inaugural-dissertation). Leipzig, “Druck von W. Drugulin”, 127 S.

Eliade M. 1959, The Sacred and the Profane: The Nature of Religion (transl. Willard R. Trask). New York, “Harcourt Brace”, 256 p.

Knoll F., Meller H. 2021, “Gauchos” in the Armenian Highlands? Bolas or Slings in Syunik Rock Art. – “Archaeology of Armenia in Regional Context”, Proceedings of the international conference dedicated to the 60th anniversary of the IAE. Yerevan, Institute of Archaeology and Ethnography, pp. 42–51.

Leroi-Gourhan A. 1964, Les religions de la Préhistoire (Paléolithique). Paris, “PuF”, 154 p.

Lincoln B. 1986, Indo-European Themes of Creation and Destruction. London, “Harvard University”, 286 p.

Lincoln B. 1991, Death, War, and Sacrifice: Studies in Ideology & Practice. Chicago, “Chicago University”, 312 p.

Reinach S. 1903, L’art et la magie. A propos des peintures et des gravures de l’âge du Renne. – “l’Anthropologie”, t. XIV, № 3. Paris, pp. 257–266.

Tokhatyan K. S. 2015, Rock Carvings of Armenia. – “Fundamental Armenology” (Yerevan), № 2, pp. 184–205.

Vardumyan G. 2020, Ancient Armenian Cosmogonic and Theogonic Myths. – “Studies on Cultures Along the Silk Roads”, vol. 2. Budapest, pp. 167–183.

Vardumyan G. 2024, Heaven and Earth in Ancient Armenian Mythology. – “Communications of Byurakan Astrophysical Observatory”, vol. 71/1, pp. 126–145.

## REFERENCES

Abeghyan M. 1975, Yerker, h. E. Yerevan, HSSH GA hrat., 603 ej (In Armenian).

Abrahamyan A. 1959, Hay gri yev grch’ut’yan patmut’yun, Yerevan, “Haypethrat”, 415 ej (In Armenian).

Alishan Gh. 1869, Yushikk’ hayreneats’ hayots’, h. A, Venetik – Sb Ghazar, 538 ej (In Armenian).

Alishan Gh. 1895, Hin hawatk' kam het'anosakan kronk' Hayots', Venetik – Sb Ghazar, 523 ej (In Armenian).

Anania Shirakats'i. 1940, Tiezeragitut'iwn yev tomar, Yerevan, "Haypethrat", XXX+95 ej (In Armenian).

Bdoyan V. 1950, Yerkragortsakan pashtamunk'i mi k'ani hetk'er hayeri mej. – Ashkhatut'yunner HPPT', h. III, Yerevan, HSSR GA hrat., ej 5–71 (In Armenian).

Bdoyan V. H. 1972, Yerkragortsakan mshakuyt'y Hayastanum, Yerevan, HSSH GA hrat., 510 ej, 172 taxtak (In Armenian).

Bdoyan V. H. 1986, Haykakan aghamanner, Yerevan, "Sovetakan grogh" hrat., 163 ej (In Armenian).

Bobokhyan A., Gilibert A., Hnila P. 2015, Vishapak'areri hnagitutyun. – Vishap k'arakot'oghnery (khmb.` A. Petrosyan, A. Bobokhyan), Yerevan, "Gitut'yun" hrat., ej 269–396 (In Armenian).

Bobokhyan A. 2023, Astvatsnery, herosnery ev srbery. hayots' lernery vorpes srbazan t'aghumneri mijavayr. – PBH, № 1, ej 166–182 (In Armenian).

Yeremyan S. T. 1963, Hayastany yst "Ashkharhats'oyts'"-i (p'ordz VII dari haykakan k'artezi verakazmut'yan zhamanakakits' k'artezagrakan himk'i vra), Yerevan, HSSR GA hrat., 155 ej (In Armenian).

T'okhat'ean K. 2003, Mashtots'ean taradzeveri yev drants' zhayrapatker nmanakneri aghersneri shurj. – «Bazmavep» (Venetik – Sb Ghazar), CLXI, № 1–4, ej 44–100 (In Armenian).

T'okhat'yan K. 2016, Hayastani zhayrapatkerneri bovandakut'yuny. – PBH, № 2, ej 180–198 (In Armenian).

Harut'yunyan S. B. 1965, Hay zhoghovrdakan hanelukner, Yerevan, HSSR GA hrat., 39+392 ej (In Armenian).

Martirosyan H. A., Israelyan H. R. 1971, Geghama lerneri zhayrapatkernery, Yerevan, HSSH GA hrat., 66 ej, 333 nk (In Armenian).

Martirosyan H. A. 1973, Hayastani nakhnadaryan nshanagrery yev nrants' urartahaykakan krknaknery, Yerevan, HSSH GA hrat., 82 ej, 23 agh. (In Armenian).

Martirosyan H. A. 1978, Gitut'yunn sksvum e nakhnadarum, Yerevan, "Sovetakan grogh" hrat., 206 ej, 40 agh., 127 nk. (In Armenian).

Martirosyan H. A. 1981, Geghama lerneri zhayrapatkernery, HSSH GA hrat., 128 ej, 40 nk., 81 agh. (In Armenian).

Melik' P'ashayan K. V. 1963, Anahit dits'uhu pashtamunk'y, Yerevan, HSSR GA hrat., 164 ej (In Armenian).

Mnats'akanyan As. 1955, Haykakan zardarvest, Yerevan, HSSR GA hrat., 658 ej.

Mnats'akanyan St. 1970, Pahpanich' khorhrdanshannery mijnadaryan hay k'andakagortsut'yan mej. – PBH, № 3, ej 185–202 (In Armenian).

Movsisi Khorenats'woy Matenagrut'iwnk'. 1843, Venetik – Sb Ghazar, 641 ej (In Armenian).

Movsisi Khorenats'woy Patmut'iwn Hayots'. 1991, k'nnakan bnagiry yev neratsut'iwny M. Abegheani yev S. Yarut'iwneani, lrats'umnery A. B. Sargseani, Yerevan, HKHSH GA hrat., 486 ej (In Armenian).

Nawasardeants' T. 1883, Zhoghovatsu. hay-zhoghovrdakan awandut'iwnner, girk' 1, Yerevan, tpagrut'iwn Emin Ter Grigoreants'i, 22 ej (In Armenian).

Sruandzteants' G. V. 1884, Hamov-hotov, K. Polis, tpagrut'iwn G. Paghtatlean, 384 ej (In Armenian).

Պատմա-բանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Vardumean G. D. 2010–2011, Vagh mijnadarean Hayastani hogevor mshakoyt'y (het'anosut'iwnits' depi k'ristoneut'iwn). – "Bazmavep" (Venetik – Sb Ghazar), CLXVIII, № 1–2, ej 279–307 (In Armenian).

Vardumyan G. 2016, Tiyezerk'y hayots' dits'abanakan patkerats'umnerum. – "Mshakut'ayin astghagitut'yuny Haykakan lerrnashkharhum" yeritasardakan gitazhoghovi nyut'eri zhoghovatsu, Yerevan, "Gitut'yun" hrat., ej 156–165 (In Armenian).

Vardumyan G. 2020, Zhoghovrdakan k'ristoneut'yan drsevorumnery hayots' tonakan kyank'um. – PBH, № 1, ej 163–186 (In Armenian).

Vardumean G., T'okhat'ean K. 2002, Hayots' lusarevayin patkerats'umnery (yst zhayrrapatkerneri yev azgagrakan niwt'eri). – "Bazmavep" (Venetik – Sb Ghazar), CLX, № 1–4, ej 383–407 (In Armenian).

Vardumyan G., T'okhat'yan K. 2023, Knoj kerpary hin Hayastani dits'ashkharhum. – "Kiny Arevelk'um", II, "Kanayk' Arevelk'um" mijazgayin gitazhoghovi hodvatsneri zhoghovatsu, Yerevan, HH GAA arevelagitut'yan instituti hrat., ej 205–229 (In Armenian).

Vardumyan G. D. 1991, Dokhristianskiye kul'ty Armyan. – Armyanskaya etnografiya i fol'klor, 18. Yerevan, izd. AN Armenii, s. 60–146, 24 tabl. (In Armenian).

Vardumyan G. D., Tokhatyan K. S. 2024, Tsovinar: evolyutsiya obraza ot pervozdannogo khaosa do geroini Armyanskogo eposa. – Stratum Plus, 5. Sankt-Peterburg, Kishinev, Odessa, Bukharest, s. 345–357 (In Armenian).

Tokhatyan K., Vardumyan G. 2025. Otrazheniye tantsa v kul'ture bronzovogo veka Armenii (po naskal'nym izobrazheniyam Syunika i Vayots-Dzora). – Stratum Plus. 2, V poiskakh kul'turnykh korney. Sankt-Peterburg, Kishinev, Odessa, Bukharest, s. 121–134 (In Armenian).

Izmaylova T. A. 1967, Obraz bogini v armyanskikh miniatyurakh XI veka. – "Vizantiyskiy vremennik" (M.), XVII, s. 205–228 (In Russian).

Kapantsyan Gr. 1956, Maloaziyskiye (azianicheskiye) bogi u armyan. Istoriko-lingvisticheskiye raboty: k nachal'noy istorii armyan. Yerevan, izd. AN Arm. SSR, 472 s (In Armenian).

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ՍՐԲԱԶԱՆ ՏԱՐԱԾՔ

ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ, ԿԱՐԵՆ ԹՈԽԱԹՅԱՆ

### Ա մ փ ո փ ո ւ մ

**Բանալի բառեր՝ Հայաստան, ժայռապատկեր, պաշտամունք, դիցաբանություն, աշխարհարարում, հմայանք, ծես, երևակայական էակ, տիեզերաբանական պատկերացումներ, Հայկ նահապետ, վիշապ, խորհրդանշան:**

***Հին Հայաստանում սրբավայրերը բազմազան են եղել՝ տաճարներ, բագիններ, մեհյաններ: Դրանք ծառայել են պաշտամունքին ու դրա տարաբնույթ դրսևորումներին, որոնցում կարևորվում էին արարողակարգը, ծիսական ավանդույթը և այլն: Վաղնջական ժամանակներում պաշտամունքային ուրույն միջավայր է***

*եղել նաև ժայռապատկերը: Պաշտամունքային տարրերը զանազան դրսևորումներով առկա են չատ տեսարաններում ու հորինվածքներում:*

*Միասպաշտամունքային տեսարաններով ժայռապատկերները դասդասվում են ըստ բովանդակության ու թեմային հորինվածքների՝ ա. աշխարհարարում և արգասավորություն, բ. հմայանք և ծես, գ. երևակայական էակներ, դ. տիեզերաբանական պատկերացումներ, ե. խորհրդանշաններ: Պաշտամունքային այս տեսակների և բաղադրիչների համակողմանի վերլուծությամբ ներկայացվում է, որ վաղնջական ժամանակներում ժայռապատկերը և դրա տարածքը յուրահատուկ սրբավայր էր, որտեղ հնադարի մարդը կատարել է իր ամենօրյա կյանքի և գործունեության համար կարևոր ծեսեր՝ երկրպագելով իրեն չրջապատող բնության ուժերին, երկնային մարմիններին ու լուսատուներին և զանազան առասպելական էակներին:*

*Պաշտամունքի յուրաքանչյուր տեսակի համատեքստում ներկայացված են նաև դրա հետագա դրսևորումները մշակույթի այլ բնագավառներում, արտեֆակտներում և ազգագրական իրականության մեջ: Դարերի ընթացքում ժայռապատկերը՝ որպես սրբազան միջավայր, իր տեղը զիջել է կառուցային միջավայրերին՝ տաճարներին, բագիններին, մեհյաններին, որոնք նվիրված էին հեռավոր անցյալից ղեցաբանական պատկերացումներ ժառանգած աստվածներին ու աստվածուհիներին:*

**Գոհար Վարդումյան** – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի առաջատար գիտաշխատող, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Հայագիտության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հին Հայաստանի պատմություն և մշակույթ, ղեցաբանություն, ավանդություններ: Հեղինակ է 1 մենագրության և չուրջ 135 հոդվածի:
ORCID: 0009-0006-4120-9929. gohar.vardumyan@gmail.com

**Կարեն Թոխաթյան** – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի ավագ գիտաշխատող, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Հայագիտության ամբիոնի ավագ դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ ժայռապատկերաբանություն, նախնադարյան արվեստ, հնաստղագիտություն: Հեղինակ է 1 մենագրության և չուրջ 85 հոդվածի:
ORCID: 0009-0001-3246-9116. karen.tokhatyan@gmail.com

## ПЕТРОГЛИФЫ АРМЕНИИ И ИХ СРЕДА КАК СВЯЩЕННЫЙ АРЕАЛ

ГОАР ВАРДУМЯН, КАРЕН ТОХАТЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Армения, петроглиф, культ, мифология, сотворение мира, магия, ритуал, воображаемое существо, космологические представления, патриарх Айк, вишап-дракон, символ.*

В Древней Армении существовало множество типов святилищ: храмы, багины, алтари, и они служили одной цели – культу и его различным проявлениям, в которых подчеркивалась важность церемонии, ритуальной традиции и т. д. В древности петроглифы также представляли собой уникальную среду для поклонения. Во многих сценах и композициях элементы культа присутствуют в различных проявлениях.

Наскальные рисунки с ритуально-культовыми сценами классифицированы по тематическому составу и содержанию: а) сотворение мира и плодородие, б) магия и ритуал, в) воображаемые существа, г) космологические представления, д) символы. На основе комплексного анализа этих типов и компонентов культа представлено, что в древности петроглиф и его среда были своеобразным святилищем, где древний человек совершал важные для своей повседневной жизни и деятельности обряды, поклоняясь силам природы, небесным телам и светилам, различным мифическим существам.

В контексте каждого вида поклонения также рассматриваются его дальнейшие проявления в других областях культуры, артефактах и этнографических реалиях. На протяжении столетий наскальное искусство как сакральная среда уступило место конструкционным средам: храмам, пагодам и монастырям, которые были посвящены богам и богиням, унаследовавшим мифологические образы из далекого прошлого.

*Гоар Вардумян – к. и. н., ведущий научный сотрудник отдела Древней истории Института истории НАН РА, доцент Государственный университет имени В. Брюсова, каферда Арменоведения. Научные интересы: история и культура древней Армении, армянская мифология, традиции. Автор 1 монографии и около 135 статей.*
*ORCID: 0009-0006-4120-9929. gohar.vardumyan@gmail.com*

*Карен Тохатян – к. и. н., старший научный сотрудник отдела Древней истории Института истории НАН РА, старший преподаватель Государственный университет имени В. Брюсова, каферда Арменоведения. Научные интересы: петроглифология, первобытное искусство, археоастрономия. Автор 1 монографии и около 85 статей.*
*ORCID: 0009-0001-3246-9116. karen.tokhatyan@gmail.com*

ՀՏԴ : 902/904(479.25) + 725.94

Doi:10.54503/0135-0536-2025.2-247

# ԱՐՑԱԽԻ ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ*

ԳԱՐԵԳԻՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**Բանալի բառեր՝ Արցախ, դամբարան, դամբանաղաչտ, ննջեցյալ, ձի, սանձ, հատկանիշ, սկյութական, նետասլաք:**

**Ամփոփում**

*Հայկական լեռնաշխարհի արևելքում սկյութական ցեղերի երբեմնի ներկայության փաստը վաղուց է արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Հավանական է՝ Մեծ Հայքի Ուտիք նահանգում գտնվող Գանձակի հարթավայրը, որը հայերի կողմից անվանակոչվեց Շակաշեն, Այսրկովկաս ներթափանցած սկյութական ցեղերի կենտրոնացման վայրերից էր: Այդ տարածաշրջանին սահմանակից Արցախ նահանգի որոշ դամբանաբլուրների մասին դեռևս մեկ դար առաջ կարծիք է հայտնվել, որ դրանք կառուցվել են սկյութների կողմից: Հետագայում Արցախում պեղվել են հարյուրավոր դամբարաններ, որոնցից ընտրվել են 15-ը: Դրանք ներառում են Արցախի այն դամբարանները, որոնցում առկա են սկյութական մշակույթին առանձնահատուկ հատկանիշներից առնվազն երեքը, որոնցից գոնե մեկը՝ բնորոշիչ: Վարանդա և Փառնես պատմական դավառների, Խաչենագետի ավազանի ու Վարանդա գետի ակ ափի դամբանների հնագիտական ուսումնասիրությամբ ստացված տվյալների հիման վրա Արցախի սկյութական հատկանիշներով դամբարանների թաղման որոշ ծիսակարգերի և արարողությունների վերակազմության փորձ է արվում: Ծիսական սերտ ընդհանրություններ են ուրվագծվում Արցախի ու այլ տարածաշրջանների սկյութական մշակույթին պատկանող դամբարանների միջև:*

**Նախաբան**

*Ուսումնասիրողները գտնում են, որ Գանձակի տարածաշրջանը (Շակաշենը) սկյութների նստավայրերից էր[1]: Դեռևս 1924 թվականին՝ Ուտիքին հարավից սահմանակից Արցախի հուշարձաններն ուսումնասիրելիս, հնագետ Սմբատ Տեր-Ավետիսյանն առանց պեղումներ կատարելու եկել է այն եզրակացության,*

---

* *Ներկայացվել է 25. IV. 2025 թ., գրախոսվել է 29. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

[1] *Երեմյան. 1968, 94–95, Ադոնց. 1972, 304,* Дьяконов. 1956, 251; Меликишвили. 1959, 224.

*որ որոշ դամբանաբլուրներ կառուցվել են սկյութների կողմից[2]: Հնագետ Ալեքսանդր Յեսենի ղեկավարած արշավախմբին թեև չի հաջողվել Արցախին հարող տափաստանային հուշարձաններում «նշմարել բուն սկյութական բաղադրիչը», սակայն Հրաքոտ-Պերոժի (Փայտակարան) Փոքր դամբանաբլրի (մ. թ. ա. VII դ.) պեղումների հիման վրա հնարավոր է դարձել ապացուցել, որ Մինգեչաուրի (Ուտիք) հարուստ դամբանաբլուրները մ. թ. ա. XI–IX դդ. թվագրելը զուրկ է գիտական հիմքից: Դրանով առաջ է քաշվել Փայտակարանի և Ուտիքի հիշյալ դամբանաբլուրների համաժամանակացման անհրաժեշտությունը: Ա. Յեսենը լիովին հնարավոր էր համարում, որ սկյութական հեծյալ ջոկատների համար ձմեռոց են ծառայել Արցախի տափաստանները[3]: Պատմական Փառխոսում և Գարգարացվոց դաշտում մ. թ. ա. II դարի սկզբին սկյութական ցեղերի ներկայությունը հիշատակում է վրաց պատմիչ Լեոնտի Մռավելին[4]: Սկյութները «հնդեվրոպական ժողովուրդ» են համարվում[5] և բնորոշվում են որպես իրանական լեզուներին պատկանող ցեղախումբ[6]:*

*Մեր ընտրանքի մեջ են մտել Արցախի մ. թ. ա. VII–VI դդ. թվագրվող այն դամբարանները, որոնցում համատեղ առկա են սկյութական թաղումներում հանդիպող մի քանի տասնյակ հատկանիշներից առնվազն երեքը, այդ թվում՝ գոնե մեկ բնորոշիչ հատկանիշ: Բնորոշիչ կամ բուն սկյութական հատկանիշներ են համարվել մարդակերպ մահարձանները, կոր պատով օժտված դամբանախցերը, կմախքի՝ մեջքի վրա ձգված դիրքը, մարդու, ձիու, ուղտի, շան / գայլի զոհաբերությունները, ձիասարքի համապատասխան տիպերը, մարտական կոր դանակները, ակինակները, բոլորատեգերը, քլունգաձև մարտական կացինները, սկյութական տիպի նետասլաքները, կախազակով սրոցաքարերը, զարդախողովակները, ներճկված կամ երկծայլ ապարանջանները և եղջերագավաթները: Որոշակի ձևաբանությամբ ու պատկերագրությամբ օժտված մարդակերպ քարե արձանի կամ մեջքի վրա ձգված դիրքով կմախքի ներկայությունը խոսուն վկայություն է դամբարանի մշակութային պատկանելության վերաբերյալ, մինչդեռ սկյութական նետասլաքի առանձին հայտնաբերումը դեռ չի նշանակում, որ գործ ունենք հատկապես սկյութի հուղարկավորության հետ, թեև այդ արտեֆակտ-հատկանիշը, անկասկած, չի կարող ոչ տիպական համարվել քննարկվող թաղումների համար: Էլ չենք խոսում ջլաղեղով օժտված խողովակակոթառ նիզակի մասին, որը սկյութական զինական համալիրի բաղադրատարրերից է, սակայն բնորոշիչ / մարկեր չի հանդիսանում:*

### Վարանդա գավառի դամբանախմբերը

*Արցախի հնավայրերի շարքում ամենանշանավորներից է Խոջալիի դամբանադաշտը, որի մեծ դամբանաբլուրները չափերով իրենց հավասարը չունեն Հայաստանի հուշարձաններում: Այն գտնվում է Վարանդա (Պարսականք) գավառում, Գարգար (Կարկառ) գետի և նրա վտակ Պատարայի միջև, դրանց միախառնման վայրից ոչ հեռու՝ Ասկերանի շրջանի Խոջալի ավանի արևմտյան արվարձանում: Թվով շուրջ 100 դամբանաբլուրներ տեղաղրված են մեկը մյուսին բավականին մոտ՝ մի քանի մետր հեռավորության վրա, երբեմն՝ ուղղակի իրար կից: Խոջալիի դամբանադաշտի առաջին ուսումնասիրողներն են էմիլ Ռոյսները,*

[2] Тер-Аветисян. 2010, 189.

[3] Иессен. 1965, 22–30.

[4] Мровели. 1979, 33–34, 71–72.


[5] *Ստրաբոն. 1940, 111, Ադոնց. 1972, 272:*

[6] *Ջահուկյան. 1987, 501,* Дьяконов. 1956, 241.

*Ալեքսեյ Իվանովսկին և Խաչիկ Դադյանը[7]: XX դարի երկրորդ կեսին այդ հնավայրում պեղումներ է կատարել Կարինե Քուշնարյովան[8]: Մեզ հետաքրքրող դամբարանները տեղադրված են դամբարանադաշտի արևելյան ու հարավարևելյան հատվածներում: Դրանցից երկուսն ունեն հողե լիցք, իսկ մյուսները քարե լիցքով դամբանաբլուրներ են, որոնցով ծածկված են քարարկղային խոշոր դամբանասրահները:*

*Խոջալիի № 2 հողե դամբանաբլուրն ընկած է դամբանադաշտի արևելյան հատվածում: Հատակագծում այն ձվածիր է և ունի 11,5 մ բարձրություն, մեծ առանցքի երկարությունը 76 մ է, փոքրինը՝ 13 մ: Այստեղ հայտնաբերվել են տախտակամածի ածխացած մնացորդներ, մարդու և զոհաբերված կենդանիների (ներառյալ ձիու և շան) ոսկորներ: Ուղեկցող գույքի կազմում կան բրոնզե նետասլաքներ, կաթսա, գոտի, պերճանքի առարկաներ, քարե ամաններ, խեցանոթներ, «այլ իրեր» (աղ. I): Փաստագրվել է սկյութական թաղումներում հանդիպող 10 հատկանիշ:*

Աղյուսակ I



Խոջալիի № 2 դամբանաբլրի թաղման գույքը (Кушнарева. 1970, 112, рис. 2):

*№ 18 հողե դամբանաբլուրը գտնվում է № 2-ից քիչ հեռու՝ դեպի արևմուտք, տրամագիծը 84 մ է, բարձրությունը՝ 10 մ: Դամբանաբլրի հարավային հատվածում՝ 4,5 մ խորությունում, հայտնաբերվել են արևմուտք-արևելք առանցքով ուղղված 3 ննջեցյալների կմախքներ՝ մեջքի վրա ճզված դիրքով: Թաղման գույքի կազմում առկա են եղել բրոնզե գոտիներ, զարդախողովակներ, եղջերուի արձանիկով ավարտվող գավազանի գլխիկ, պերճանքի առարկաներ, խեցանոթներ: Գրանցվել է սկյութական 6 հատկանիշ:*

*Գետաքարե լիցքով № 11 դամբանաբլուրը տեղադրված է դամբանադաշտի հարավարևելյան հատվածում: Մեծ առանցքի երկարությունը 39 մ է, փոքր առանցքինը՝ 11 մ, դամբանաբլրի բարձրությունը՝ 4 մ: Թաղման քարարկղի*

[7] Реслер. 1897, 49–51; Реслер. 1900, 151–154; Ивановский. 1911, 148–151; *Դադեան. 1898, 63–74:*

[8] Кушнарева. 1959, 370–385; Кушнарева. 1970, 109–116.

*չափերն են՝ 3,9 x 2,0 x 1,9 մ: Թաղումն ուղեկցող գույքի կազմում նշվում են բրոնզե ու երկաթե առարկաները, ջնարակած ափսեն, Ասորեստանի արքա Աղաղնիրարիի արձանագրությամբ ագաթե ուլունքը, պերճանքի մյուս առարկաները: Արձանագրվել է սկյութական մշակութային 5 հատկանիշ:*

*Գետաքարե լիցքով № 19 դամբանաբլրի բարձրությունը 4 մ է, երկար առանցքը՝ 22 մ, կարճ առանցքը՝ 8 մ: Երկար ու նեղ՝ 5,50 x 2,74 x 2,50 մ չափերով թաղման քարարկղում դրված են եղել բրոնզե դաշույն, քառակող բիզ, պերճանքի առարկաներ, որոնց թվում՝ ջնարակած ուլունքներ: Թերի տվյալներով ներկայացված այս փակ համալիրում, այնուամենայնիվ, կարելի է փաստել սկյութական 4 հատկանիշի առկայությունը:*

*Խոշոր գլաքարերի լիցքով № 20 դամբանաբլրի բարձրությունը 3 մ է, երկար առանցքը՝ 18 մ, կարճ առանցքը՝ 8 մ: Ինչպես դամբանաբլուրը, այնպես էլ ուղղանկյուն հատակագծով, երկար ու նեղ թաղման քարարկղը (5,0 x 2,5 x 2,0 մ) չափերով համադրելի են նախորդ դամբանաբլրի կառուցվածքային համապատասխան բաղադրիչներին: Հուղարկավորության սրահում ննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով: Հանգուցյալին ուղեկցող գույքի կազմում եղել են բրոնզե նրբագեղ հարթ կացին, կլորացող ծայրերով դանակներ, պերճանքի առարկաներ, պատկերազարդ ուղղաձիգ պատերով ջնարակապատ անոթ[9]: Գրանցվել է սկյութական մշակութային 5 հատկանիշ:*

*Շուշիից հարավ՝ ճանապարհամերձ տեղանքում, մարդու կմախքին կից գտնվել են երկաթե դանակի բեկոր, քառակող բիզ և բրոնզե զարդախողովակներ[10]: Այստեղ դիտվում են ննջեցյալի թաղման պարտադիր նվազագույն երեք բաղկացուցիչներից երկուսը՝ մարդու կմախքի և ուղեկցող գույքի առկայությունը: Բայց է մնում հուղարկավորության խցի գոյության հանգամանքը: Ամեն դեպքում, կարելի է խոսել սկյութական 4 հատկանիշի առկայության մասին:*

*Ներքին Հոռաթաղի դամբարանադաշտը տարածվում է գյուղի հյուսիս-արևմտյան հատվածում՝ «Պռաչանց կալ» կոչվող տեղանքում: Այստեղ կատարված հողային աշխատանքների ընթացքում պատահաբար բացվել են քարարկղային և հիմնահողային խցերով դամբարաններ: Հիմնահողային դամբարանախցերից մեկում ամփոփված են եղել երկու ննջեցյալ՝ դիաթաղման եղանակով, մեջքի վրա պառկած ղիրքով: Հանգուցյալներին ուղեկցող գույքի կազմում (աղ. II) եղել են սկյութական նետասլաքներ, բիզ, սրոցաքար, ձիասանձի մասեր, պերճանքի առարկաներ, խեցանոթներ[11]: Քննարկվող խաթարված դամբարանում գրանցվել է սկյութական 7 հատկանիշ:*

### Փառնես գավառի դամբանախմբերը

*Պատմական Փառնես գավառում՝ Շամքոր գետի ավազանում, հայտնի է Գետաբեկի դամբանադաշտը, որտեղ 1896 թ. 72 քարարկղներ ու սալարկղներ է պեղել Ա. Իվանովսկին: Պեղված մի խումբ դամբարաններում հայտնաբերվել են երկաթե կոր դանակներ, սրոցաքարեր, սկյութական եռաթև նետասլաքներ, բրոնզե ու երկաթե նիզակներ, բրոնզե դաշույններ, ձիասանձի մասեր, քարե*

[9] Реслер. 1897, 50–51, рис. 102; Реслер. 1900, 151–154, рис. 299–303; Кушнарева. 1970, 109–116, рис. 1–8.

[10] Реслер. 1900, 150.

[11] *Ա ս ր յ ա ն. 1973, 297–298,* Асрян. 1999, 23–24, 107, таб. 21.

*անոթ, «այլ իրեր»[12]: Զոհաբերված ձիերի գանգեր են գտնվել № 33 և № 56 դամբարաններում: Սկյութական մշակութային հատկանիշներով դամբարանների այդ խմբից առանձնացվել են 5-ը:*

*№ 33 թաղման սալարկղն ունեցել է 2,50 x1,05 x1,15 մ չափեր և ուղղված է եղել հյուսիս-արևմուտք–հարավ-արևելք առանցքով: Հուղարկավորման խցում աննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով, թաղումն ուղեկցվել է ձիու զոհաբերությամբ:*

Աղյուսակ II



Ներքին Հոռաթաղի «Պտաչանց կալ» տեղանքի դամբարանում հայտնաբերված մի խումբ արտեֆակտեր (Асрян. 1999, 107, таб. 21):

*Ուղեկցող գույքի կազմում առկա են եղել բրոնզե դաշույն, սրոցաքարեր, պերճանքի առարկաներ, վանակատե նետասլաքներ, բրոնզե կոճակներ, խեցանոթներ: Գրանցվել է սկյութական 5 հատկանիշ:*

*№ 42 ստորգետնյա քարարկղի չափերն են 2,05x1,10 x1,20 մ, որն ուղղված է եղել դեպի արևելք–հարավ-արևելք: Հանդուցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով, մեջքի վրա ձգված դիրքով: Թաղման խցում ի հայտ են եկել բրոնզե դաշույն, երկաթե նիզակ, տերևաձև նետասլաք, փոքր դանակ, խեցանոթներ: Պեղումների արդյունքներով փաստագրվել է սկյութական մշակութային 4 հատկանիշ:*

*№ 48 սալարկղի չափերն են 2,05x0,90x1,15 մ, կողմնորոշվածությունը՝ հարավ–հարավ-արևմուտք: Անհատական դիաթաղումն ուղեկցող գույքի կազմում եղել են բրոնզե դաշույն, սկյութական տիպի նետասլաքներ, պերճանքի առարկաներ, «այլ իրեր»: Կարելի է փաստել սկյութական ընդամենը 3 հատկանիշի առկայությունը:*

*Նախորդի ուղղվածությունն է ունեցել նաև № 56 քարարկղը, որն իր 2,20x1,00x1,05 մ չափերով ևս համադրելի է հիշյալ № 48 սալարկղին: № 56 դամբարանի թաղման խցում աննջեցյալի դին տեղադրված է եղել կողքի վրա*

[12] Ивановский. 1911, 108, 116, 120, 133, 137, 146–147, 162, 186, таб. III,12–13, V,1–3,7–8, VIII,35–36.

*ձգված դիրքով, թաղումն ուղեկցվել է ձիու զոհաբերությամբ: Դամբարան են դրվել նաև ձիասանձը և ձիու զարդարանքը կազմող առարկաներ: Ուղեկցող գույքը բաղկացած է եղել բրոնզե նիզակից, հարթ կացնից, քարե անոթից, խեցանոթներից: Կարելի է վաստել սկյութական 6 հատկանիշի առկայությունը:*

*Գետաբեկի դամբանադաշտի № 62 քարարկղի չափերն են 2,00x0,90x1,10 մ, կողմորոշվածությունը՝ հարավ-արևելք: Հանգուցյալն այստեղ ամփոփվել է դիաթաղման եղանակով: Թաղման խցում գտնվել են զենք, աշխատանքի գործիք, պերճանքի առարկաներ, խեցեղեն: Գրանցվել է սկյութական 4 հատկանիշ:*

### Խաչենագետի ավազանի դամբանախմբերը

*Խաչենագետի ավազանում 5 դամբանաբլուր է պեղել Ա. Իվանովսկին: Հնագիտական այդ վիակ համալիրներից մեր ընտրանքի մեջ տեղ են գտել № 2 (79) և № 4 (81) դամբարանները:*

*№ 2 դամբանաբլրի քարահողային լիցքը ծածկել է 2,60x1,30x1,40 մ չափերով ստորգետնյա քարարկղը, որն ուղղված է եղել արևմուտք-արևելք առանցքով: Ննջեցյալն ամփոփվել է դիաթաղման եղանակով՝ մեջքի վրա ձգված ոտքերով պառկած վիճակում, գլխով դեպի արևմուտք: Թաղումն ուղեկցվել է չոն զոհաբերությամբ: Դամբարան դրված գույքի կազմում եղել են բրոնզե դաշույն, երկաթե նիզակ, պերճանքի առարկաներ, խեցանոթների բեկորներ, «այլ իրեր»: Դամբարանում արձանագրվել է սկյութական 6 հատկանիշ:*

*Քարահողային լիցքով ու ավելի քան 40 մ տրամագծով № 4 դամբանաբլուրը գտնվել է Քոլատակ գյուղից մոտավորապես 1–1,5 կմ դեպի հարավ: Թաղման քարարկղի չափերն են 3,00x1,35x1,40 մ, կողմնորոշվածությունը՝ դեպի հարավ–հարավ-արևելք: Թաղման խցում կատարվել է միայնակ դիաթաղում: Հանգուցյալն ամփոփվել է մեջքի վրա ձգված վիճակում: Նրան ուղեկցող գույքի կազմում առկա են եղել բրոնզե դաշույն, նիզակ, երկաթե բոլորատեգ, տնտեսական փոքր դանակ, քառակող բիզ, պերճանքի առարկաներ[13]: Փաստագրվել է սկյութական 6 հատկանիշ:*

### Վարանդա գետի աջափնյա դամբանախումբը

*Զինարի գյուղից հյուսիս՝ Վարանդա գետի աջ ափին սփռված դամբարանադաշտում, Ա. Իվանովսկին 1896 թ. հաշվառել է 22 դամբանաբլուր, որոնցից մեկը կոչվել է «Սև չուն»: Այն ձգված-թմբաձև տեսքով արհեստական բլրակ է եղել և ունեցել է ավելի քան 40 մ երկարություն: Հիշյալ խմբի դամբարաններից պեղվել են 5-ը, որոնցից մեր ընտրանքի մեջ է մտել № 5 (91) դամբանաբլուրը: Սա այն եզակի հարուստ գույքով դամբարաններից է, որը մինչև պեղումների պահը, բարեբախտաբար, անխաթար է մնացել:*

*Քննարկվող դամբանաբլուրն ունեցել է մոտավորապես 26 մ տրամագիծ ու 6 մ բարձրություն: Երեք շարք գերաններով ծածկված, 10x2x2 մ չափերով հիմնահողային դամբանասրահն ուղղված է եղել հյուսիս-արևմուտք–հարավ-արևելք առանցքով: Դամբանասրահում կատարվել է անհատական դիաթաղում, որն ուղեկցվել է մարդկանց ու կենդանիների զոհաբերություններով: Հիմ-*

[13] Ивановский. 1911, 143–147.

*նական ննջեցյալի դին տեղադրվել է մեջքի վրա ձգված դիրքով, իսկ զոհաբերված երկու մարդկանց դիերն ամփոփվել են նստած վիճակում: Հայտնաբերվել են զոհաբերված երկու ուղտերի կմախքներ, որոնք, հավանաբար, սանձեր են կրել և պճնված են եղել զարդերով: Բրոնզից պատրաստված զենքի հարուստ տեսականին ներկայացված է նիզակով, դաշույններով, բոլորատեզերով, դուրգերով, հարթ կացնով, տարբեր նյութերից պատրաստված նետասլաքներով: Պեղումներով ի հայտ են եկել նաև կոր ծայրով դանակ, ոսկրե 2 բիզ, պերճանքի առարկաների ոսկրե հավաքածու, քարե անոթ, խեցանոթներ (աղ. III–IV), «այլ իրեր»[14]: Արձանագրվել է սկյութական 6 հատկանիշ:*

*Ընտրանքի ցուցակից դուրս է մնացել Արցախի Արևշատ գյուղի (նախկին Դոլանլար, Հադրութի շրջան) դամբանախումբը, որը ներկայացված է բավարար թվով սկյութական հատկանիշներով, սակայն իր կազմում եղած որևէ առանձին դամբարան՝ անբավարար տեղեկատվության պատճառով, չի ընդգրկվել թաղման համալիրների քննարկվող ցուցակում: Արևշատի դամբանադաշտի տարածքից հայտնի են երկաթե նիզակներ, կոր դանակներ, թերի դաշույններ, մետաղյա մանյակներ, բրոնզե հայելի, բրոնզե թաս, «փչավոր» դուրգ, պերճանքի առարկաներ և սկյութական մշակույթին բնորոշ այլ իրեր[15]:*

**Թաղման ծեսի բնորոշ բաղադրիչները**

*Հուղարկավորման ծեսին վերաբերող տեղեկատվական չտեմարանի ընդլայնմանը զուգահեռ, դրա պարզաբանման հարցում եղած տարակարծություններն աճում են ու իրենց արտացոլումն են գտնում հնագիտական աշխատություններում[16]: Թեև ասվածը վերաբերում է նաև Արցախի դամբանադաշտերին, որոնց հետազոտողները երբեմն պատշաճ ուշադրություն չեն դարձրել թաղման ծեսի որոշ ծիսակարգերին ու արարողություններին, այնուամենայնիվ, ձեռքի տակ եղած տեղեկատվության հիման վրա կարելի է պատկերացում կազմել մի շարք բնորոշ ծիսակատարությունների մասին: Հուղարկավորման ծիսակարգի կարևոր բաղադրիչներից են թաղման եղանակն ու ննջեցյալի դիրքը: Արցախի սկյութական մշակութային հատկանիշներով դամբարաններում դիաղդման / դիաթաղման եղանակով ամփոփվել են 1–3 ննջեցյալներ, որոնցից 6-ում՝ մեջքի վրա ձգված, իսկ մեկ դեպքում՝ կողքի վրա ձգված դիրքով (Գետաբեկի № 56 դամբարան): Այս 7 թաղումները կազմում են ընտրանքի մեջ մտնող 15 դամբանների մոտավորապես 46,7 %-ը: Կարելի է ենթադրել, որ Ջինարիի № 5 դամբանաբլրի թաղման սրահում մարդկանց զոհաբերություն է կատարվել: Զոհաբերված անձանց դիերը տեղադրվել են նստած վիճակում, իսկ հիմնական ննջեցյալն ամփոփվել է մեջքի վրա ձգված դիրքով:*

*Ձիու զոհաբերություն է փաստագրվել 3 դամբարաններում, երկու ուղտեր են զոհաբերվել 1 դամբարանում (Ջինարիի № 5): Այսպիսով, ձիերի և ուղտերի զոհաբերություններ են կատարվել ընդամենը 4 դամբարաններում, որոնք կազմում են դրանց ընդհանուր քանակի մոտավորապես 26,7 %-ը: Ջինարիի*

---


[14] Ивановский. 1911, 151–153, 157–164.

[15] Минкевич-Мустафаева. 1949, 51–54, 59, 64, 67–68, таб. I,1–3, IV,4, VI,1–6.

[16] Stevenson. 2007, 1–2.


*№ 5 դամբարանում գոհաբերված ուղտերի և Գետաբեկի № 56-ում գոհաբերված ձիու հետ դամբարան են դրվել նաև սանձերը, իսկ Ներքին Հոռաթաղի դամբարանում հայտնաբերվել են միայն ձիասարքի մասերը՝ առանց ձիու կմախքի:*

Աղյուսակ III



Զինարիի № 5 հիմնահողային դամբարանի թաղման գույքը (Ивановский. 1911, таб. XV):

Աղյուսակ IV



Զինարիի № 5 հիմնահողային դամբարանի թաղման գույքը (Ивановский. 1911, таб. XVI):

*Հին պատկերացումների համաձայն՝ մասը փոխարինում էր ամբողջին, ուստի դամբանախցում մեկ լկամ թողնելը, ըստ երևույթին, համարժեք էր ձիու գոհաբերությանը[17]: Շան գոհաբերություն է փաստագրվել Խոջալիի № 2 և Խաչենագետի № 2 դամբարաններում, որոնք կազմում են ընտրանքի մեջ մտնող 15 դամբանների մոտավորապես 13,3 %-ը: Սկյութական տիպի նետասլաքներ են հայտնաբերվել Ներքին Հոռաթաղի ու Գետաբեկի № 48 դամբարաններում: Խաչենագետի № 4 դամբարանում գտնվել է երկաթե բոլորատեգ, իսկ Զինարիի № 5 դամբարանում ի հայտ են եկել բրոնզե բոլորատեգեր: Սրոցաքարեր են հայտնաբերվել Գետաբեկի № 33 և Ներքին Հոռաթաղի դամբարաններում: Խոջալիի № 18 դամբանաբլրում և Շուշիից հարավ ընկած «դամբարանում» փաստագրվել են բրոնզե զարդախողովակներ:*

[17] Туманян. 2023, 76.

**Թաղման ծեսի որոշակի զուգահեռներ**

*Համարվում է, որ ձգված ոտքերով մեջքի վրա պառկած դիրքը, որը բնորոշ է սկյութական մշակույթին պատկանող դամբարաններում ամփոփված հիմնական ննջեցյալներին, խիստ հազվադեպ է հանդիպում Այսրկովկասի ուշբրոնզեդարյան թաղումներում[18]: Դրանք բնորոշ չեն ինչպես Հայաստանի[19], այնպես էլ Արևելյան Վրաստանի ուշբրոնզեդարյան դամբարանադաշտերին[20]:*

*Հայտնի է, որ օսերը՝ ալան նախնիներով միջնորդավորված, համարվում են սկյութների ժառանգորդները[21]: Օսեթիայում՝ թաղման արարողության համար հատուկ հանդերձավորված ձիուն գերեզմանի մոտ էին բերում ու սանձը ղնելով մահացած տղամարդու ձեռքերի մեջ՝ ասում էին. «Թող այս ձին քոնը լինի»: Ձիուն երեք անգամ պտտում էին գերեզմանի շուրջը, խուզում էին պոչի ծայրը, ականջին կտրվածք էին անում, ջուր էին տալիս դրան ու կերակրում: Այնուհետև մի թաս խփելով ձիու ամբակին՝ ջարդում էին ու բեկորները գերեզման դնում: Ձիուն նվիրագործող ծերունին իր խոսքում նկարագրում էր ննջեցյալին սպասվող դժվարին ճանապարհը և խնդրում էր ձիուն օգնել իր տիրոջը նախնիների օթևանը տանող ճանապարհին[22]:*

*Թաղման ծեսի վերականգնմանը և ուսումնասիրությանն էապես կարող է նպաստել արցախյան գորգերից մեկի պատկերագրության վերլուծությունը, որը կատարել է Լիլյա Ավանեսյանը: Գորգը գործել են XX դարի սկզբին Վարանդայում, որը նվիրաբերվել է Ավետիքյանց ազգանունով նշանավոր մի անձնավորության հիշատակին: Հետազոտողը դրա հիմնադաշտի զարդաբանվածքը, իրավացիորեն, համեմատում է Պազիրիկի (Ալթայ) դամբարաններից մեկում հայտնաբերված գորգի պատկերագրության հետ և Արցախում գործված գորգն անվանում Պազիրիկ: Բացի այդ՝ արցախահայերի ու սկյութների թաղման ծեսերում ընդհանուր է նաև գորգը ննջեցյալի հետ գերեզմանոց տանելու սովորությունը[23]:*

*Պազիրիկի դամբանաբլուրներում ձիերը թաղված են եղել դամբանախցերի հյուսիսային պատերի երկայնքով, դեպի արևելք ուղղված գլուխներով, մի քանի շարքով՝ յուրաքանչյուրում 4-ական առանձնյակ: Քիչ տեղ զբաղեցնելու նպատակով դրանք տեղադրվել են «վիրավոր եղջերուի» դիրքով: Դամբարան իջեցված բոլոր ձիերն արական են, ենթադրաբար՝ ամորձատված, պոչերը՝ հյուսված: Իրողություն, որը, ըստ երևույթին, բնորոշ է թաղման արարողությանը[24]: Այս ենթադրությունը հաստատվում է Հարավային Սիբիրում հայտնաբերված սկյութական գոտիներից մեկի վահանակի պատկերագրությամբ[25]: Պազիրիկի հիշյալ դամբարանում հայտնաբերված թաղիքե գորգին պատկերված է մահացած հեծյալը՝ մահվան աստվածուհու առջև[26]: Գորգի վրա պատկերված ձիերի պոչերը նույնպես հյուսված են:*

---

[18] ფიცხელაური. 1973, 80; Пицхелаури. 1979, 27.

[19] *Թոմասյան. 2007, 147:*

[20] Садрадзе. 1991, 25.

[21] Абаев. 1949, 36–47; Ковалевская. 1984, 74–76; Дюмезиль. 1990, 7.

[22] Дюмезиль. 1976, 42; Кузьмина. 1977, 43; Дюмезиль. 1990, 189.

[23] *Ավանեսյան. 2003, 112–113, 119, Ավանեսյան. 2010, 397–399:*

[24] Витт. 1952, 163–168, 182–184.

[25] Гуляев. 2013, 13, илл. 2.

[26] Hansen. 1980, 35.

**Եզրակացություն**

*Արցախի դամբանադաշտերում հանդիպում են սկյութական մշակութային հատկանիշներով դամբարաններ: Դրանք հնարավոր է առանձնացնել սկյութական թաղումներում հանդիպող մի քանի տասնյակ (այդ թվում՝ բնորոշիչ) հատկանիշների դիտարկման շնորհիվ: Այդ մեթոդով առայժմ հաջողվել է ընտրել արցախյան 15 հնագիտական փակ համալիր: Արցախի սկյութական հատկանիշներով դամբարաններում փաստագրված թաղման ծիսակարգերը և ծիսակատարություններ սերտ ընդհանրություններ ունեն Հայկական լեռնաշխարհի և այլ տարածաշրջանների դամբարանադաշտերում կիրառություն գտած թաղման ծեսի համապատասխան բաղադրիչների հետ: Հիշյալ տիպի դամբարաններին բոլոր տարածաշրջաններում բնորոշ են դիադրման եղանակով, մեջքի վրա պառկած կամ կողքի վրա ձգված դիրքով թաղումները, որոնք ուղեկցվել են մարդկանց, ձիերի ու շների զոհաբերություններով: Ուղեկցող գույքի կազմում զգալի տեղ են զբաղեցնում սկյութական զենքը, ձիասարքի որոշակի տիպերը և «կենդանական ոճի» նմուշները:*

*Ազգաբանական ուսումնասիրությունները նույնպես վկայում են թաղման ծեսերի որոշ ընդհանրությունների հնարավորության մասին: Օսերը, որոնք ալան նախնիներով միջնորդավորված, սկյութական ցեղերի ժառանգորդներից են, ննջեցյալին ձի էին նվիրաբերում: Համեմատության եզրեր կարելի է գտնել անցյալ դարասկզբին Արցախում գործված գորգերից մեկի պատկերագրության և շատ ավելի հեռու տարածաշրջանում՝ Պազիրիկի հնագույն դամբարաններից մեկում հայտնաբերված թաղիքե գորգի զարդաբանվածքի հետ:*

**Գարեգին Թումանյան – պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեղարյան հնագիտական մշակույթներ, թաղման ծես, կիմերական հնագիտական մշակույթ, մշակութային վոխառնչություններ: Հեղինակ է 5 գրքի և 70 հոդվածի:**
ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն. 1972, Հայերի ծագումը (անավարտ). – «Հայաստանի պատմություն», Երևան, «Հայաստան» հրատ., էջ 287–346:

Ասրյան Յ. 1973, Հնագիտական նորույթներ Լեռնային Ղարաբաղում. – ՊԲՀ, № 2, էջ 295–300:

Ավանեսյան Լ. 2003, Արցախյան գորգ թաղման ծեսի պատկերով. – «Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ», II, Երիտասարդ գիտնականների հանրապետական X գիտաժողովի նյութեր (խմբ. Դ. Վարդումյան, Լ. Աբրահամյան, Գ. Շագոյան), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 112–120:

Ավանեսյան Լ. 2010, Գորգի ծագումը և ծիսական կիրառությունը. – «Հայ ժողովրդական մշակույթ», XV, Ավանդականը և արդիականը հայոց մշակույթում (խմբ. Լ. Աբրահամյան, Ա. Թադևոսյան, Թ. Հայրապետյան), Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., էջ 389–399:

Դադեան Խ. 1898, Նախապատմական հնութիւններ. – Ցուցակ ձեռագրաց Դադեան Խաչիկ Վարդապետի, Մասն Ա (կազմ. Յ. Թօփճեան), Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, էջ 63–74:

Երեմյան Ս. 1968, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ. – ՊԲՀ, № 2, էջ 89–116:

Թումանյան Գ. 2007, Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում. – ՊԲՀ, № 1, էջ 138–152:

Զահուկյան Գ. 1987, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 748 էջ:

Ստրաբոն. 1940, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Յերևան, Պետական համալսարանի հրատ., 124 էջ:

Абаев В. И. 1949, Осетинский язык и фольклор, т. 1. М.–Л., изд. АН СССР, 601 с.

Асрян Ю. А. 1999, Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II–I тыс. до н.э.). Степанакерт, изд. центр ГЗАО «Полиграф», 119 с.

Витт В. О. 1952, Лошади Пазырыкских курганов. – «Советская археология» (М.), XVI, с. 163–205.

Гуляев В. 2013, Скифы: расцвет и падение великого царства. М., «Новый Акрополь», 400 с.

Дьяконов И. 1956, История Мидии. М.–Л., изд. АН СССР, 485 с.

Дюмезиль Ж. 1976, Осетинский эпос и мифология, пер. с франц. А. З. Алмазовой. М., «Наука», 276 с.

Дюмезиль Ж. 1990, Скифы и нарты, сокр. пер. с франц. А. З. Алмазовой. М., «Наука», 229 с.

Ивановский А. 1911, По Закавказью. – «Материалы по археологии Кавказа», вып. VI. М., Товар. тип. А. И. Мамонтова, 194 с.

Иессен А. 1965, Из исторического прошлого Мильско-Карабахской степи. – «Материалы и исследования по археологии СССР», № 125. М.–Л., изд. АН СССР, с. 10–36.

Ковалевская В. Б. 1984, Кавказ и аланы. Века и народы. М., «Наука», 192 с.

Кузьмина Е. Е. 1977, Распространение коневодства и культа коня у ираноязычных племен Средней Азии и других народов Старого Света. – «Средняя Азия в древности и средневековье (история и культура)» (ред. Б. Г. Гафуров, Б. А. Литвинский). М., «Наука», с. 28–52.

Кушнарева К. 1959, Археологические работы 1954 г. в окрестностях сел. Ходжалы. – «Материалы и исследования по археологии СССР», № 67. М.–Л., изд. АН СССР, с. 370–387.

Кушнарева К. 1970, Ходжалинский могильник. – ИФЖ, № 3, с. 109–124.

Меликишвили Г. 1959, К истории древней Грузии. Тбилиси, изд. АН ГрССР, 510 с.

Минкевич-Мустафаева Н. 1949, Об археологических находках из сел. Доланлар.– «Материальная культура Азербайджана», I. Баку, изд. АН АзССР, с. 50–70.

Мровели Л. 1979, Жизнь картлийских царей, перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая. М., «Наука», 104 с.

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Пицхелаури К. Н. 1979, Восточная Грузия в конце бронзового века. Тбилиси, «Мецниереба», 160 с.

Реслер Э. 1897, Производство археологических раскопок в Елизаветпольской губернии. – «Отчеты Императорской археологической комиссии за 1895 год». СПб., Типография Главного управления уделов, с. 49–51.

Реслер Э. 1900, Извлечение из отчета Э. А. Реслера о раскопках, произведенных им в Елизаветпольской губернии. – «Отчеты Императорской археологической комиссии за 1897 год». СПб., Типография Главного управления уделов, с. 150–160.

Садрадзе В. Г. 1991, Мцхета в XV–XIII вв. до н.э. (вопросы хронологии и периодизации памятников Шида Картли). Тбилиси, «Мецниереба», 121 с.

Тер-Аветисян С. 2010, Памятники древности Карабаха и скифская проблема. – «Арменоведческие исследования». Ереван, «Гитутюн», с. 175–194.

Туманян Г. С. 2023, Жертвоприношение коня в погребальных обрядах (по данным погребений эпох бронзы и раннего железа в Армении). – «Российская археология» (М.), № 1, с. 70–83.

Hansen L. J. 1980, Death and the Indo-Europeans: some traditions. – “The Journal of Indo–European studies” (Washington), vol. 8/1–2, pp. 31–40.

Stevenson A. 2007, Introduction: the materiality of burial practices. – “Archaeological Review from Cambridge” (Cambridge), vol. 22/1, pp. 1–5.

ფიცხელაური კ. 1973, აღმოსავლეთ საქართველოს ტომთა ისტორიის ძირითადი პრობლემები (ძვ.წ. XV–VII სს.) (არქეოლოგიური მასალების მიხედვით), თბილისი, “მეცნიერება”, 224 გვ.

## REFERENCES

Abayev V. I. 1949, Osetinskiy yazyk i fol'klor, t. 1. M.–L., izd. AN SSSR, 601 s. (In Russian).

Adonts’ N. 1972, Hayeri tsagumy (anavart). – «Hayastani patmut’yun», Yerevan, «Hayastan» hrat., ej 287–346 (In Armenian).

Asryan Y. 1973, Hnagitakan noruyt’ner Lernayin Gharabaghum. – PBH, № 2, ej 295–300 (In Armenian).

Asryan Yu. A. 1999, Nagornyy Karabakh v epokhu pozdney bronzy i rannego zheleza (II–I tys. do n.e.). Stepanakert, izd. tsentr GZAO «Poligraf», 119 s (In Russian).

Avanesyan L. 2003, Arts’akhyan gorg t’aghman tsesi patkerov. – «Hay azgabanut’yan yev hnagitut’yan khndirner», II, Yeritasard gitnakanneri hanrapetakan X gitazhoghovi nyut’er (khmb. D. Vardumyan, L. Abrahamyan, G. Shagoyan), Yerevan, HH GAA «Gitut’yun» hrat., ej 112–120 (In Armenian).

Avanesyan L. 2010, Gorgi tsagumy yev tsisakan kirarut’yuny. – «Hay zhoghovrdakan mshakuyt’», XV, Avandakany yev ardiakany hayots’ mshakuyt’um (khmb. L. Abrahamyan, A. T’adevosyan, T’. Hayrapetyan), Yerevan, HH GAA hnagitut’yan yev azgagrut’yan instituti hrat., ej 389–399 (In Armenian).

Dadean Kh. 1898, Nakhapatmakan hnut'iwnner. – Ts'uts'ak dzeragrats' Dadean Khachik Vardapeti, Masn A (kazm. Y. T'op'chean), Vagharshapat, Tparan Mayr Atoroy S. Ejmiatsni, ej 63–74 (In Armenian).

D'yakonov I. 1956, Istoriya Midii. M.–L., izd. AN SSSR, 485 s. (In Russian).

Dyumezil' Zh. 1976, Osetinskiy ēpos i mifologiya, Per. s frants'. A. Z. Almazovoy. M., «Nauka», 276 s. (In Russian).

Dyumezil' Zh. 1990, Skify i narty, Sokr. per. s frants. A. Z. Almazovoy. M., «Nauka», 229 s. (In Russian).

Gulyayev V. 2013, Skify: Rasts'vet i padeniye velikogo ts'arstva. M., «Novyy Akropol'», 400 s. (In Russian).

Ivanovskiy A. 1911, Po Zakavkaz'yu. – «Materialy po arkheologii Kavkaza», vyp. VI. M., Tovar. tip. A. I. Mamontova, 194 s. (In Russian).

Jahukyan G. 1987, Hayots' lezvi patmut'yun. Nakhagrayin zhamanakashrjan, Yerevan, HSSH GA hrat., 748 ej (In Armenian).

Kovalevskaya V. B. 1984, Kavkaz i alany. Veka i narody. M., «Nauka», 192 s (In Russian).

Kushnareva K. 1959, Arkheologicheskiye raboty 1954 g. v okrestnostyakh sel. Khodzhaly. – «Materialy i issledovaniya po arkheologii SSSR», № 67. M.–L., izd. AN SSSR, s. 370–387 (In Russian).

Kushnareva K. 1970, Khodzhalinskiy mogil'nik. – IFZH, № 3, s. 109–124.

Kuz'mina Ye. Ye. 1977, Rasprostraneniye konevodstva i kul'ta konya u iranoyazychnykh plemen Sredney Azii i drugikh narodov Starogo Sveta. – «Srednyaya Aziya v drevnosti i srednevekov'ye (istoriya i kul'tura)» (red. B. G. Gafurov, B. A. Litvinskiy). M., «Nauka», s. 28–52 (In Russian).

Melikishvili G. 1959, K istorii drevney Gruzii. Tbilisi, izd. AN GrSSR, 510 s (In Russian).

Minkevich-Mustafayeva N. 1949, Ob arkheologicheskikh nakhodkakh iz sel. Dolanlar.– «Material'naya kul'tura Azerbaydzhana», I. Baku, izd. AN AzSSR, s. 50–70 (In Russian).

Mroveli L. 1979, Zhizn' kartliyskikh ts'arey. Perevod s drevnegruzinskogo, predisloviye i kommentarii G. V. Tsulaya. M., «Nauka», 104 s (In Russian).

Pitskhelauri K. 1973, Aghmosavlet' Sak'art'velos tomt'a istoriis dzirit'adi problemebi (dzv. ts. XV–VII ss.) (ark'eologiuri masalebis mikhedvit'), Tbilisi, "Mets'niereba", 224 gv (In Georgian).

Pitskhelauri K. N. 1979, Vostochnaya Gruziya v konts'e bronzovogo veka. Tbilisi, «Mets'niereba», 160 s (In Russian).

Resler Ē. 1897, Proizvodstvo arkheologicheskikh raskopok v Yelizavetpol'skoy gubernii. – «Otchety Imperatorskoy arkheologicheskoy komissii za 1895 god», SPb., Tipografiya Glavnogo upravleniya udelov, s. 49–51 (In Russian).

Resler Ē. 1900, Izvlecheniye iz otcheta Ē. A. Reslera o raskopkakh, proizvedennykh im v Yelizavetpol'skoy gubernii. – «Otchety Imperatorskoy arkheologicheskoy komissii za 1897 god». SPb., Tipografiya Glavnogo upravleniya udelov, s. 150–160 (In Russian).

Sadradze V. G. 1991, Mts'kheta v XV–XIII vv. do n. ě. (voprosy khronologii i periodizatsii pamyatnikov Shida Kartli). Tbilisi, «Mets'niereba», 121 s. (In Russian).

Պատմություն • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Strabon 1940, K’aghets’ yev t’argmanets’ H. Acharyan, Yerevan, Petakan hamalsarani hrat., 124 ej (In Armenian).

Ter-Avetisyan S. 2010, Pamyatniki drevnosti Karabakha i skifskaya problema. – «Armenovedcheskiye issledovaniya». Yerevan, «Gitutyun», s. 175–194.

T’umanyan G. 2007, T’aghman tsisakargery ushbronzedaryan Hayastanum. – PBH, № 1, ej 138–152 (In Armenian).

Tumanyan G. S. 2023, Zhertvoprinosheniye konya v pogrebal'nykh obryadakh (po dannym pogrebeniy epokh bronzy i rannego zheleza v Armenii). – «Rossiyskaya arkheologiya» (M.), № 1, s. 70–83 (In Russian).

Vitt V. O. 1952, Loshadi Pazyrykskikh kurganov. – «Sovetskaya arkheologiya» (M.), XVI, s. 163–205 (In Russian).

Yeremyan S. 1968, Kimerakan u skyut’akan ts’egheri arshavank’nery yev Urartui u Asorestani payk’ary k’och’vorneri dem. – PBH, № 2, ej 89–116 (In Armenian).

Yessen A. 1965, Iz istoricheskogo proshlogo Mil'sko-Karabakhskoy stepi. – «Materialy i issledovaniya po arkheologii SSSR», № 125, M.–L., izd. AN SSSR, s. 10–36 (In Russian).

## ПОГРЕБЕНИЯ АРЦАХА С ПРИЗНАКАМИ СКИФСКОЙ КУЛЬТУРЫ

ГАРЕГИН ТУМАНЯН

Р е з ю м е

*Ключевые слова: Арцах, погребение, могильник, усопший, конь, уздечка, признак, скифский, наконечник стрелы.*

Факт былого присутствия скифских племен на востоке Армянского нагорья давно стал объектом внимания исследователей. По всей вероятности, Гандзакская равнина в провинции Утик Великой Армении, называемая армянами Шакашен, являлась одним из ареалов концентрации скифских племен, проникших в Закавказье. Еще в прошлом столетии бытовала точка зрения, согласно которой часть курганов в провинции Арцах, граничащей с этим регионом, была сооружена скифами. Впоследствии в Арцахе были проведены раскопки сотен погребений, из которых 15 нами были выбраны в качестве предмета исследования. В данную выборку включены те погребения Арцаха, которым присущи минимум три признака, характерные для скифской культуры, по меньшей мере один из которых является маркером. На основе данных, полученных в результате археологического изучения погребений исторических провинций Варанда и Парнес, бассейна Хаченагета и правого берега реки Варанда, мы попытались реконструировать некоторые погребальные ритуалы и церемонии. Между погребениями, относящимися к скифской культуре Арцаха и других регионов, прослеживается очевидное сходство.

*Гарегин Туманян – д. и. н., старший научный сотрудник отдела ранней археологии Института археологии и этнографии НАН РА. Научные интересы: археологические культуры эпох бронзы и железа Армянского нагорья, погребальные обряды, киммерийская археологическая культура, культурные взаимосвязи. Автор 5 книг и 70 статей.*
*ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am*

Պատմություն հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

## SEPULCHRES IN ARTSAKH WITH SCYTHIAN CULTURAL CHARACTERISTICS

GAREGIN TUMANYAN

S u m m a r y

*Keywords: Artsakh, sepulchre, burial ground, deceased, horse, bridle, characteristic, Scythian, arrowhead.*

The fact of the former presence of Scythian tribes in the east of the Armenian Highland has long attracted the attention of researchers. In all likelihood, the Gandzak plain in the Utik province of Greater Armenia, which the Armenians called Shakashen, was one of the places of concentration of Scythian tribes that penetrated into Transcaucasia. A century ago, it was believed, that some burial mounds in the Artsakh province, bordering this region, were built by the Scythians. Later, hundreds of sepulchres were excavated in Artsakh, 15 of which were selected as a subject of research. This sample includes the sepulchres of Artsakh in which there are at least three characteristics of the Scythian culture, at least one of which is a marker. Based on the data obtained from archaeological investigation of sepulchres in historical provinces of Varanda and Parnes, Khachenaget basin and the right bank of the Varanda River, we made an attempt to reconstruct some burial rituals and ceremonies. Obvious ritual similarities are observed between Scythian sepulchres located in Artsakh and other regions.

*Garegin Tumanyan – Doctor of Sciences in History, Senior Researcher at the Department of Early Archaeology of the Institute of Archaeology and Ethnography of NAS RA. Scientific interests: Bronze and Iron Age cultures of the Armenian Highland, burial rites, Cimmerian archaeological culture, cultural relationships. Author of 5 books and 70 scientific articles.*
*ORCID: 0000-0002-6696-0093. garegin.tumanyan@iae.am*

ՀՏԴ : 947.925

Doi:10.54503/0135-0536-2025.2-262

# ՀԱՅ ՊԱՏՄԻՉՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (V դ.– XX դ. սկիզբ)*

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

**Բանալի բառեր՝ պատմիչ-պատմաբաններ, Խորենացի, Հայաստան, պատմության պարբերացում, Հասարակարգ, Զամչյան, Ալիշան, Լեո, Ադոնց:**

**Ամփոփում**

*Հայ պատմագրության կարևոր հիմնահարցերից է հայոց պատմության պարբերացումը, որը, անշուշտ, նպաստում է Հայաստանի ու հայ ժողովրդի պատմական անցյալի համակարգված չարադրման, գիտական հետազոտության մակարդակի բարձրացման և պատմական ճշմարտության բացահայտման իմաստով: Հայ պատմիչ-պատմագիրների հարուստ դրավոր ժառանգությունը հիմք է տալիս ասել, որ ի սկզբանե փորձեր են արվել հայոց պատմության պարբերացման ուղղությամբ: Նման քայլի առաջնեկը հայ պատմագրության հիմնադիր հայր Մովսես Խորենացին է՝ իր «Հայոց պատմություն» կոթողային աշխատությամբ (V դար): Հետագա դարերում հայ պատմիչ-պատմաբանները՝ Սեբեոսը, Կ. Գանձակեցին, Ա. Դավրիժեցին և ուրիշներ, հիմնականում շարունակել են խորենացիական ավանդները ինչպես պատմության չարադրման, այնպես էլ դրա ժամանակային համակարգման ուղղությամբ: Հայ պատմիչների միջնադարյան ժամանակաշրջանի աշխատությունների քննությունը ցույց է տալիս, որ նրանց երկերում, բնականաբար, մեծ է եղել քրիստոնեական, աստվածաշնչյան մտածելակերպը և գործելակերպը:*

*Արդեն նոր ղարաշրջանում պատմության պարբերացման եվրոպական բազմազործոն մոտեցումներին ու չափանիշներին հաղորդակից լինելը մեծապես նպաստել է պատմության վերաբերող աշխատությունները ժամանակային ու բովանդակային առումներով համապատասխանեցնել արևմտյան չափանիշներին՝ անշուշտ, հաշվի առնելով հայոց պատմության առանձնահատկությունները: Այդ ուղղությամբ հարկ է հատուկ առանձնացնել Մխիթարյան միաբանության հայ երախտավոր պատմագիր հեղինակներից Մ. Զամչյանին, իսկ ավելի ուշ՝ արևելահայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներ Լեոյին, Ն. Ադոնցին և Հ. Մանանդյանին, որոնք իրենց մինչխորհրդային աշխա-*

* *Ներկայացվել է 23. V. 2025 թ., գրախոսվել է 05. VI. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

*տումբյուններում ներկայացրել են հայոց պատմությունը ոչ միայն զուտ ժամանակագրական-փուլային բաժանումների տեսքով, այլև պարբերացումները կատարելիս հաշվի են առել տվյալ ժամանակաշրջանի պետահրավական, քաղաքական, ընկերային-արտադրատնտեսական, դասակարգային կառուցվածքի, հոգևոր-մշակութային հարաբերությունները փաստարկված հոլովույթի մեջ:*

**Նախաբան**

*Պատմագիտական հետազոտության կարևոր հիմնախնդիրներից է պատմության գիտականորեն համակարգված ու ժամանակային որոշակի շրջանակի մեջ պարբերացումը, առանց որի այն կվերածվի թվերի ու փաստերի մի անձև քաոսի: Ընդհանրապես, յուրաքանչյուր առարկայի պատմության գիտականորեն հիմնավոր պարբերացումը նպաստում է նրա պատմական զարգացման ընթացքի ճշմարիտ ընկալմանն ու լուսաբանմանը:*

*Եվ պետք է ասել, որ ի սկզբանե հայ պատմիչ-պատմաբանները փորձեր են արել ժամանակային ու բովանդակային առումներով համակարգել ու պարբերացնել հայոց պատմությունը հասկանալիորեն մինչև իրենց ապրած ժամանակները: Հայոց պատմության պարբերացման գործընթացը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ մինչխորհրդային, խորհրդային և հետխորհրդային:*

*Հայոց պատմության պարբերացման հիմնահարցը, սկսած պատմահայր Մ. Խորենացուց, դարերի ընթացքում հայ պատմագրության մեջ բարեշրջում է ապրել: Չնայած խորհրդային շրջանում գաղափարական տրամաբանությամբ այն չեղում ապրեց՝ հանձին մարքս-լենինյան հասարակական-տնտեսական հնգաստիճան ֆորմացիոն սկզբունք-մոդելի, սակայն Հայաստանի անկախության վերականգնումից հետո այն կրկին չոկվեց ու համապատասխանեցվեց համաշխարհային բազմագործոն պարբերացման չափանիշներին և մեզանում, իբրև առանձնահատկություն, դրվեց պետականության գաղափարը՝ որպես հայոց պատմության պարբերացման հիմնական գործոն:*

*Հայոց պատմության պարբերացման պատմագիտական հետագիծը մարքս-լենինյան հնգաստիճան ֆորմացիոն մոդելով արմատավորելու տեսակետից գաղափարաքաղաքական լուրջ գիտաժողով-քննարկումների ընույթ ստացավ խորհրդահայ պատմագրության մեջ, իսկ հետագայում այն սկզբունքային փոփոխություն կրեց՝ ավելի հիմնավոր ու գիտական բովանդակություն ձեռք բերելով նորանկախ Հայաստանի երրորդ Հանրապետությունում:*

*Մասնավորապես, խորհրդային պատմաշրջանում Հայաստանի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված գիտաժողով-քննարկումներ անցկացվեցին 1925 թ., 1946 / 1948 թթ. և 1951 թ: 1925 թ. խորհրդաժողովում, մասնակցությամբ պատմաբանների՝ Աչ. Հովհաննիսյանի, Հ. Մանանդյանի, Լեոյի, Թ. Ավդալբեկյանի, Դ. Անանունի և ուրիշների, քննարկումների արդյունքում, տեսակետների տարբերությունների (տարաձայնությունների) հետևանքով չի հաջողվում մարքս-լենինյան հնգաստիճան ֆորմացիոն սկզբունքի արմատավորման ուղղությամբ վերջնարդյունքի հասնել[1]:*

*Արդեն հետպատերազմյան շրջանում՝ 1946 / 1948 թթ. և 1951 թ., հայոց պատմության պարբերացմանը նվիրված գիտաժողով-քննարկումներում, որին մասնակից են եղել պատմաբաններ Ա. Աբրահամյանը, Ս. Հակոբյանը, Ս. Երեմյանը,*

[1] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1990, 127–132:*

*Գ. Սարգսյանը, Ս. Պողոսյանը, Աբ. Հովհաննիսյանը և ուրիշներ, սկզբունքորեն հավանություն է տրվում մարքսյան դասակարգային հնգաստիճան ֆորմացիոն մոդելին: Ընդ որում՝ արձանագրվում է, որ Հայաստանում իբրև թե գոյություն է ունեցել ստրկատիրական հասարակարգ[2]:*

*Արդեն նորանկախ Հայաստանի Հանրապետությունում պատմության պարբերացման հիմնահարցում հանդես է բերվել միանգամայն սկզբունքային այլ մոտեցում ու մեթոդաբանություն: 1992 և 2017 թթ. Երևանում կազմակերպված գիտաժողովներում՝ մասնակցությամբ պատմաբաններ Լ. Խուրշուդյանի, Վ. Դիլոյանի, Պ. Հովհաննիսյանի, Ա. Սիմոնյանի, Պ. Ավետիսյանի, Աչ. Մելքոնյանի, Ռ. Սաֆրաստյանի, Ա. Մովսիսյանի, Ա. Եղիազարյանի, Կ. Խաչատրյանի և ուրիշների, տեղի ունեցած գիտական քննարկում-բանավեճերի արդյունքով կատարվում է հայեցակարգային փոփոխություն՝ հայ պատմագրությունը և պատմագիտական միտքը վերջնականորեն հրաժարվում է մարքս-լենինյան գաղափարաքաղաքական կարծրատիպերից և, որպես տեսական-մեթոդաբանական սկզբունք ու չափանիշ, որդեգրում է պատմության պարբերացման արդի գիտական չափանիշներին համապատասխանող բազմագործոն շրջափուլային սկզբունք-մոդելը՝ այդ ճանապարհին հիմքում ունենալով հայոց հազարամյակների պատմության բուն ընթացքը, նրա պատմական առանձնահատկությունները, ինչպես նաև՝ պատմության պարբերացումների համաչխարհային փորձը[3]:*

## Միջնադարյան հայ պատմագիրների պարբերացման փորձերը

*Հայ իրականության մեջ հայոց պատմության պարբերացումը գործնականում սկզբնավորվել է հայ պատմագրության ձևավորման հետ և դրա սկզբնավորողը համարվում է Քերթողահայր Մովսես Խորենացին (մոտ 410–493 թթ.): Ավելին՝ Գ. Սարգսյանը Խորենացուն համարում է ոչ միայն պատմիչ, այլև գերազանցապես պատմաբան ու գիտական հետազոտող[4]: Մ. Խորենացին, իրավամբ, հայոց պատմության պարբերացման հիմնադիրն է: Հարկ է նկատել, որ պատմության պարբերացման խնդրի հետ է կապված նաև դեպքերի և իրադարձությունների լայն առումով ժամանակագրությունը: Հայտնի է, որ Պատմահայրը շատ մեծ տեղ է տվել ժամանակագրությանը՝ ասելով. «Ոչ է պատմութիւն ստուգ, առանց ժամանակագրութեան»[5]: Սկսած Խորենացուց՝ հայ պատմիչ-պատմագիրները իրենց ժամանակատարածական հատույթում բուն պատմության շարադրանքի հետ փորձել են ժամանակային առումով պարբերացնել հայոց պատմությունը:*

*Պատմահայր Խորենացին մինչև իր ապրած ժամանակաշրջանը, այսինքն՝ մինչև V դարը, հայոց պատմությունը բաժանել է երեք հիմնական փուլի, ներկայացվել են երեք գրքերի ձևով, որոնք, փաստորեն, բովանդակում են հայոց ամբողջական պատմությունը:*

---

[2] Հ ա կ ո բ յ ա ն. 1947, № 7, 35–58, 1948, № 8, 13–38, № 11, 33–77, 1952, № 1, 115–124, Е р е м я н. 1950, 12–26.

[3] Մ ա ն ր ա մ ա ս ն տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1993, № 4, 148–161, Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները. 2017, 194–240, տե՛ս նաև Ս ա ր ո ւ խ ա ն յ ա ն. 2013:

[4] Տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 1965, 5, 146:

[5] Խ ո ր ե ն ա ց ի. 1961, 40:

*Առաջին փուլը կամ գիրք Առաջին՝ «Ծննդոցը», բնականաբար, սկսել է նախապատմական Ջրհեղեղից ու Հայոց մեծերի՝ Նոյի որդիներից՝ Հաբեթի, այնուհետև՝ Թորգոմի, Հայկի և մյուս ժառանգների ծնունդից՝ ընդգրկելով մինչև Ք. ա. II դ. կեսերը (132 թ.), այսինքն՝ ավանդական պատմությամբ Պարսից Արշակ Թագավորի կողմից իր եղբորը՝ Վաղարշակին, Հայաստանի վրա թագավոր կարգելը՝ իբրև Առաջին գրքի ավարտ[6]: Նկատենք, որ Մ. Խորենացու՝ Հայկյանների մասին ավանդապատումում նկարագրված Հայկ Նահապետի՝ իր ընտանիքով Արարադի երկրում հաստատվելը և Ք. ա. 2492 թ. իրեն հետապնդող բռնակալ Տիտանյան Բելին հաղթելն ու նրա 300 հոգանոց ընտանիքի անդամների Հայք–Հայաստանով մեկ բնակեցնելը ինքնին խորհրդանշում է հայկական պետականության առաջացումը: Երկրորդ գիրքը կամ «Միջին պատմությունն մեր նախնիքների» ներառված է Ալեքսանդր Մեծի պատմությունից մինչև Սբ Տրդատ Մեծ թագավորի գահակալման շրջափուլի ավարտը՝ Ք. հ. IV դարի 20-ական թվականները[7]: Եվ Երրորդ գիրքը կամ ժամանակահատվածը, որը վերնագրել է «Մեր հայրենիքի պատմության ավարտը» կամ «Ավարտաբանության» շրջանը, ընդգրկում է Հայոց հայրապետ (եպիսկոպոսապետ) Մեծն Վրթանեսից մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.)՝ «Ողբը», «Մեծն Սահակ Պարթևի և երանելի Մեսրոպի մահը, այսինքն՝ մինչև իր ժամանակը՝ V դարը»[8]:*

*Ավելին՝ Մ. Խորենացին ոչ միայն պատմության պարբերացման փորձ է արել, այլև Հայոց պատմությունը ժամանակագրական առումով փորձել է ներդաշնակել հարևան պետությունների՝ պարթևա-պարսկական և սելևկյա-հռոմեական հարստությունների թագավորների ու կայսրերի գահակալումների ժամանակագրությունների, ինչպես նաև ընդհանրական բնույթի (քաղաքական, սոցիալական, տնտեսական) շատ հարցերի հետ: Ընդ որում՝ Մ. Խորենացու ժամանակագրությունը սկսվում է Առաջավոր Ասիայում Սելևկոս Նիկատորի իշխանության առաջին տարվանից, այսինքն՝ Սելևկյան տոմարին մոտ տարվանից (Ք. ա. 311 թ.)[9]: Եվ այդ ժամանակագրական համակարգի կիրառման մեթոդով հնարավոր է դառնում ներկայացնել ոչ միայն Հայք–Հայաստանյան, այլև հարակից երկրների, այդ թվում՝ Պարսից և Հռոմի պատմության շատ հարցեր:*

*Ի մի բերելով Պատմահայր Մ. Խորենացու երկում առկա մտքերն ու դատողությունները Հայոց պատմության պարբերացման և պետականության գաղափարի մասին՝ կարելի է ասել, որ միանգամայն ընկալելի և ընդունելի է նրա ներկայացրած պատմության փուլաբաժանությունն իր ժամանակի ու տարածության մեջ, իսկ պետականության գաղափարը նա մարմնավորել է՝ հանճին Հայոց խորհրդանիշ Հայկի տարած հաղթանակի ու իր հայրենիքի՝ Հայք–Հայաստանում ծավալած գործունեության: Կարելի է համաձայնվել պատմաբան-մշակութաբան Գ. Վարդումյանի այս առնչությամբ տրված այն մեկնաբանությանը, որ Հայկ Նահապետը ներկայանում է «Հայերի» կամ «արմենների» էթնոնիմն ու Հայաստանի տոպոնիմը՝ իբրև հայկական պետականության գա-*

---

[6] *Խ ո ր ե ն ա ց ի. 1961, 22, 79–137:*

[7] *Տե՛ս Խ ո ր ե ն ա ց ի. 1961, 147–262:*

[8] *Խ ո ր ե ն ա ց ի. 1961, 265–355:*

[9] *Տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 1965, 15–22:*

*զափարի, Թերևա, առաջին կրողն ու սկզբնավորողը, իսկ Հնագույն ու Հին Հայաստանում պետականության ձևավորման գործում կրոնական ու պաշտամունքային գործոնները խաղացել են որոշակի համախմբիչ դեր[10]:*

*Հայ պատմիչ-պատմագիրներից պատմության պարբերացում է կատարել Սեբեոս եպիսկոպոս պատմիչը՝ սկսելով Հայոց պատմությունը Վիպասանական շրջանից մինչև իր ժամանակը՝ VII դ.: Նա պատմության ժամանակային բաժանումը կատարել է ըստ 3 շրջանների՝ 1. Վիպասանական շրջան, 2. դրան հաջորդող՝ պատմական միջնաշրջան և 3. ժամանակակից շրջան[11]: Ինչպես ասվեց, բնականաբար, այդպես պիտի լիներ. միջնադարյան հայ պատմիչ-պատմագիրները ավելի շատ չեշտը դրել են իրենց ապրած, Թերևա, բազմաչարչար կյանքի դրվագների պատմությանը:*

*Մ. Խորենացու և Սեբեոսի այդ պարբերացումներն աննշան փոփոխություններով հիմնականում կրկնել են միջնադարյան մեր մյուս պատմագիրները: Ի դեպ, վաստակաշատ պատմագիր Ղ. Ալիշանը հայոց վերջին պատմիչ համարում է Առաքել Դավրիժեցուն (XVII դ.)[12]: Վերջինս Փիլիպոս կաթողիկոսի հանձնարարությամբ գրել է իր ժամանակների շատ հագեցած պատմությունը՝ ժամանակագրական առումով հետևելով Քերթողահոր պատվիրանին, սակայն հատուկ պատմության պարբերացում չի կատարել, քանզի նրա պատմության առանցքը հիմնականում ընդգրկել է ժամանակային ավելի նեղ՝ XVII դ. առաջին կեսի իրադարձությունները՝ Շահ-Աբասի արշավանքը Հայաստան, Նոր Ջուղայի հիմնադրումը, Ջալալիների ապստամբությունը, Թուրք-պարսկական պատերազմները և այլն[13]: Դավրիժեցու գրքի աղբյուր են հանդիսացել՝ իր տեսածը, մանր ժամանակագրություններ, ականատեսների պատմածը, թեև հազվադեպ է հղում աղբյուրը:*

*Ընդհանուր առմամբ, միջնադարյան հայ պատմիչ-պատմագիրների մոտ հայոց պատմության պարբերացման հարցում կարելի է տարբերակել երեք մոտեցում՝ 1. որ հեղինակների մի մասն առաջնորդվել է Խորենացու առաջադրած սկզբունքով[14], երբ պատմությունը սկսում է ի սկզբանե՝ «Հայկ և Բել» ավանդապատումից մինչև իր ապրած ժամանակաշրջանը, 2. որ սահմանափակվել է միայն բուն ժամանակաշրջանի պատմական դեպքերի և իրադարձությունների նկարագրությամբ՝ կատարելով ժամանակագրական որոշ բաժանումներ և հետևողական չի եղել պատմության պարբերացման հարցում, և 3. որ պարզապես սահմանափակվել է հայ նախարարական կամ արքայական տոհմի պատմության շարադրմամբ: Այսպես՝ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին հայոց պատմությունը սկսել է քրիստոնեության ընդունումից մինչև X դ. իր*

---

[10] Վարդումյան. 2024, 6, 20.

[11] *Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն. 1939:*

[12] *Ալիշան. 1901, 5:*

[13] *Տե՛ս Դավրիժեցի. 1990:*

[14] *Նկատենք, որ Պատմահոր աշխատությունից ձեռագրերի և հատվածական կամ պատառիկ արտագրությունների վիճակով օգտվել են հետագա ժամանակների հայ պատմիչ-պատմագիրները: «Հայոց պատմության»-ն ունեցել է բազում խմբագրություններ, իսկ հայերեն անդրանիկ տպագրությամբ լույս է տեսել Ամստերդամում 1685 թ.:*

*ամփոփակալումը[15]: XI դ. պատմիչ Արիստակես Լաստիվերցին սելջուկյան արշավանքների փոթորկահույզ և աղետաբեր շրջանին վերաբերող իր պատմությունում լայն ընդգրկմամբ պարբերացում չի կատարել: Իր ներկայացրած պատմությունը բաժանել է 25 մասերի՝ այն սկսում է Բագրատունյաց վերջին զորեղ թագավոր Գագիկ I-ից (990–1020 թթ.) և հասցնում մինչև Բյուզանդիայի Միքայել Է Դուկաս (1071–1078 թթ.) կայսրը[16]: Կամ, օրինակ, Թովմա Արծրունի և Ստեփանոս Օրբելյան պատմիչներն անդրադարձել են սոսկ իրենց նախարարական տոհմերի պատմություններին[17]: XIII դ. պատմիչ Վարդան Արևելցու «Տիեզերական պատմությունը» ևս պարբերացված չէ, թեև հպանցիկ այն սկսում է երկրի արարչագործությունից՝ հասցնելով մինչև իր ժամանակները՝ 1267 թ.[18]: Իսկ Վարդան Արևելցու ժամանակակից Կիրակոս վրդ. Գանձակեցու (1203–1271 թթ.) ուշագրավ երկասիրությունը ժամանակագրական առումով անհամեմատ պարբերացված է. նախ ուրվագծի ձևով ներկայացված է Հայոց և տարածաշրջանի պատմությունը՝ սկսած Սբ Գրիգոր Լուսավորչից, ապա ավելի հանգամանորեն հասցնում է այն մինչև իր վերջին օրերի իրադարձությունները, այսինքն՝ XIII դ. երկրորդ կեսերը[19]:*

*Այսպիսով՝ գրեթե առանց բացառության միջնադարյան հայ պատմիչ-պատմագիրները, թերևս, բացի Պատմահորից, որոշակի խնդիր չեն դրել իրենց առջև՝ տալ «Հայոց պատմություն»-ը գիտական պարբերացման սկզբունքով, քանզի միջնադարյան աշխարհընդհանրումների և պատմափիլիսոփայական ընկալումների ու գիտելիքների մակարդակը, ըստ էության, այդ հնարավորությունը չի տվել: Սակայն նրանք պատմությունը շարադրելիս գերազանցապես առաջնորդվել են քրիստոնեական աշխարհայեցողությամբ ու աստվածաբանական մոտեցումներով, մանավանդ որ միջնադարյան պատմիչ-պատմագիրների մեծագույն մասը եղել են հոգևորականներ: Այստեղից էլ նրանց պատմական աշխատությունների թե՛ ժամանակագրական բաժանման և թե՛ բովանդակային տեսակետից ընորոշ է եղել աստվածաշնչյան մեկնությունները, ավելի շատ կրոնական կանոնները, ոգին ու մոտեցումները: Այս առնչությամբ, ռուս տարաբեր փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևի (1874–1948 թթ.) դատողությամբ՝ պատմության աստվածաբանական պարբերացման համաձայն՝ երկրային մարդն անցյալը է, նրա պատմությունը՝ կանխորոշված ու ժամանակավոր, իսկ երկնայինը, Աստվածայինը հավերժական է: Դրա համար էլ մարդն անընդհատ ձգտում է Աստծուն: Եվ նրանց միացումով իբրև կավարտվի պատմությունը[20]: Այս համատեքստում, հասկանալի է, որ միջնադարյան հայ պատմիչ-պատմագիրները հաղորդակից չէին արևմտաեվրոպական (Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա) պատմափիլիսոփայական մտքի նվաճումներին և պատմության պարբերացման գիտական սկզբունքներին ու չափանիշներին:*

---

[15] Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի. 1996:

[16] Լ ա ս տ ի վ ե ր ց ի. 1971, 5–105:

[17] Ա ր ծ ր ու ն ի և Ա ն ա ն ու ն. 1978, 44–308, Օ ր բ ե լ յ ա ն. 1986:

[18] Ա ր և ե լ ց ի. 2001:

[19] Գ ա ն ձ ա կ ե ց ի. 1982, 21–283:

[20] Տե՛ս Բ ե ր դ յ ա և. 2019, 10–11, 231–232, նաև՝ Б е р д я е в. 1990, 81.

**Նոր շրջանի հայ պատմագիրների դիտարկումները հայոց պատմության պարբերացման հարցում**

*Արդեն բոլորովին այլ վիճակ ենք տեսնում Նոր դարաշրջանի արշալույսից, երբ Մխիթարյան միաբանության պատմագիր հեղինակների աշխատություններում, որոնք, հաստատվելով ու գործելով Վենետիկի Սբ Ղազար կղզում, Վիեննայում, Կ. Պոլսում և այլուր, մեծապես հաղորդակից են դառնում եվրոպական պատմափիլիսոփայական մտքին, Ռեֆորմացիայի, Վերածննդի ու Հումանիզմի դարաշրջանի առաջադեմ գաղափարներին ու սկզբունքներին՝ իրենց ծանրակշիռ ներդրումն են ունենում հայոց պատմության բազում հիմնահարցերի, այդ թվում՝ նաև պատմության պարբերացման ուղղությամբ: Այդպիսի ներկայացուցիչների թվին է դասվում եվրոպական պատմափիլիսոփայական մտքի ու արժեքների հետ սերտ կապված, ճանաչված պատմագիր ու պատմաբան Միքայել Չամչյանը (1738–1823 թթ.)՝ հանճին իր եռահատոր մեծածավալ «Հայոց պատմության» աշխատության: Նա, հայոց համակարգված պատմության բազում հիմնահարցերի քննությունից զատ, փորձել է ժամանակագրական առումով պարբերացնել այն: Հեղինակը պատմության պարբերացումը ստորաբաժանել է 6 հիմնական ժամանակային շրջափուլերի՝ դրանց հիմքում դնելով հայկական թագավորությունները, այսինքն՝ **պետական նության գաղափարը**՝ որպես ազգ-ժողովրդի համախմբման ու կազմակերպման լավագույն ձև: Մ. Չամչյանը պատմության պարբերացումը սկսում է, ինչպես նախկինում սովորաբար ընդունված էր, հին և միջին դարերից՝ աշխարհի արարչագործությունից, առաջին մարդկանց արարումից մինչև «ի Նոյ և անտի մինչև՛ ի Հայկ, որից վերընճյուղվել են մեր ազգի նահապետները»[21]: Չամչյանի պարբերացմամբ՝ բերվում է պատմական վեց շերտ՝ «Առաջին. պայազատեցին (ժառանգեցին –Ա.. Հ.) նահապետքն հայկազինք՝ կէս մի ազգային տէրութեամբ, և կէս մի արքայական չքով և ապա կուսակալք: Երկրորդն է այն, յորում թագաւորեցին արշակունիք՝ ի սերնդոց արշակայ պարթևի: Երրորդն այն է, յորում իշխեցին մարզպանք պարսից, և ոստիկանք իշխանութեան հազարացւոց (արաբների –Ա.. Հ.), ևս և նախարարք՝ ի հայոց: Չորրորդն է այն, յորում թագաւորեալ տիրեցին բագրատունիք: Հինգերորդն է այն, յորում զօրացան ռուբինեանք՝ ի կիլիկիա, մինչև՛ ի բնաջինջ բարձումն տէրութեան հայոց: Վեցերորդն է այն, յորում կային և կան ազգ մեր յանիշխանութենէ: Եւ ահա ըստ վիճակի այսոցիկ վեց դարուցս բովանդակեմք զպատմութիւն մեր՝ ի վեց գիրս առաջի եդեալ զո՛ւմ հարթ ոճիւ՝ և պարզ չարադրութեամբ»[22]:*

*Հետագա շրջանում հայոց պատմության պարբերացման փորձեր են կատարել Ա. Գարագաշյանը, Ղ. Ալիշանը, Հ. Գամրճյանը, Ստ. Պալասանյանը, Ք. Պատկանյանը, Գր. Խալաթյանցը և ուրիշներ: Նկատենք, որ Նոր դարաշրջանի հայ պատմագիրները, անշուշտ, օգտագործել են Վերածննդի և Լուսավորության դարաշրջանի մտածողների փուլաբաժանման սկզբունքները՝ հաշվի առնելով հայոց պատմության առանձնահատկությունները: Այսպես՝ Ա. Գարագաշյանն (1818–1903 թթ.) իր «Հայոց քննական պատմության» բազմահատորյակը բաժանել է երկու գլխավոր ժամանակահատվածների: Այդ առնչությամբ նա գրում է. «Պատշաճ թուեցաւ մեզ Հայոց պատմութիւնը բաժանել երկու գլխաւոր ժամանակների՝ Ա. Նախնական և Բ. Պատմական: Նախնական*

[21] *Չ ա մ չ ե ա ն ց. 1784, 51:*
[22] *Չ ա մ չ ե ա ն ց. 1784, 50:*

*անուանեմք զմիջոցն, որ է ի սկզբանէ մինչև Տիգրան մեծ արշակունի, կամ մինչև Ք. ա. 90 նախքան զՔրիստոս: Պատմական անուանեմք զմիջոցն ի Տիգրանայ և այսր, կամ 90-էն նախ քան զՔրիստոսն մինչև մեր ժամանակը»[23]: Հեղինակը նման բաժանման հիմքում դրել է այն հանգամանքը, որ նախնական պատմության մեջ շատ են ավանդություններն ու առասպելախառն պատումները, իսկ հետագրանյան շրջանից մեր պատմությունը ներկայանում է որպես վավերական ու աղբյուրաշատ: Բայց դրա հետ նա անչափ բարձր է գնահատում Պատմահայր Մ. Խորենացուն: Գարագաշյանը Խորենացուն համարում է այն առաջին պատմիչը, որ «զՀայս համարի սերեալ ի Հայկայ», ով չորրորդ (Դ) սերունդն էր Հաբեթից հետո[24]: Նման գնահատականից հետո նա տալիս է հայոց քննական պատմության բուն չարադրանքը:*

*Հայագիտության վաստակաշատ մշակ, Վենետիկի Սբ Ղազարի միաբան Ղևոնդ Ալիշանը (1820–1901 թթ.) ևս հոգևոր-կրոնական աշխարհայացքին հաղեհարազատ՝ հայոց պատմությունը սկսում է համաշխարհային ջրհեղեղից և «Նոյի նաւարկութեամբ ի ցամաք ելանելով ի Հայս» և նշում՝ Թորգոմի 8 որդիներից մեկը Հայկն էր, ով կռվի է բռնվում Բելի հետ, հետո եվրոպական ընդունված ժամանակային բաժանումներով ներկայացնում է Մեծ ու Փոքր Հայքերի պատմությունը՝ ընդգծելով հայոց արքաների, նախարարների ու, հատկապես, եկեղեցու խաղացած մեծ դերակատարությունը[25]: Նա հայ ազգային ինքնության ընդգծման և արժևորման տեսակետից շատ բարձր է գնահատում սեփական ազգի պատմությունը: Ալիշանի արտահայտությամբ՝ «Ամէն ազգի սեփականագոյն յիշատակն իր Պատմութիւնն է»[26]:*

*Համաշխարհային պատմության ու այդ համատեքստում նաև հայոց պատմության պարբերացման ուղղությամբ փորձ է կատարել նաև պոլսահայ պատմաբան, հայագետ Հովսեփ Գաթրճյանը (1820–1882 թթ.) Ստեփանոս Տարոնեցու (Ասողիկ)[27] և Վարդան Արևելցու նմանությամբ իր գրած «Տիեզերական պատմություն» երկհատոր աշխատությունում: Ըստ նրա աստվածաբանական-փիլիսոփայական մեկնության՝ պատմության մեջ ամեն ինչ փոփոխության է ենթարկվում: «Ամենայն ինչ որ փոփոխման կրէ, – գրում է Գաթրճյանը,– տայ նիւթ պատմութեան՝ որ ոչ այլ ինչ է բայց ընծայութիւն փոփոխմանն այնորիկ. ուստի ամենայն իրիք՝ բաց յԱստուծոյ որ առանց փոփոխութեան է, գոյ ինչ պատմութիւն»[28]: Նա հասկանալիորեն տիեզերական պատմությունը լայն իմաստով բաժանել է երկու մեծ հատվածի՝ նախաքրիստոնեական (հին) և հետքրիստոնեական (նոր), այն է՝ «ի պատմութիւն յառաջ եւ յետոյ քան զքրիստոնէութիւն»[29]: Բայցև միաժամանակ ժամանակագրական ու բովանդակային առումով համաշխարհային պատմությունն ավելի կոնկրետ բաժանել է երեք շրջափուլերի՝ 1. «Ի հին պատմութիւն, որ է ի սկզբանէ անտի յորինելոյ տէրու-*

*[23] Տե՛ս Գ ա ր ա գ ա շ ե ա ն. 1895, 1:*
*[24] Տե՛ս Գ ա ր ա գ ա շ ե ա ն. 1895, 4:*
*[25] Ա լ ի շ ա ն. 1901, 1:*
*[26] Տե՛ս Ա լ ի շ ա ն. 1901, 10:*
*[27] Տ ա ր օ ն ց ի. 1885:*
*[28] Գ ա թ ր ճ ե ա ն ց. 1849, 1:*
*[29] Գ ա թ ր ճ ե ա ն ց. 1849, Ե:*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*թեանց ցՔրիստոս, եւ կամ յաճախագոյն սովորութեան մինչեւ ցգաղթականութիւնս ազգաց եւ ցկործանումն արեւմտեան տէրութեանն Հռոմայեցւոց մինչեւ ցամն 476 կամ՝ 480 յետ Քրիստոսի, նրա մեկ այլ ձեւակերպմամբ՝ աշխարհի արարչագործումից ու Մեծ ջրհեղեղից մինչեւ Հիսուս Քրիստոսի ծնունդը (այսինքն՝ Ք. ա 4000, ավելի ստույգ՝ 2345 թ. – 1 թ. Ք. ծ.), 2. Ի միջին պատմութիւն՝ որ անտի ձգեալ (այսինքն՝ Քրիստոսի ծննդից սկսած – Ա. Հ.) հասանէ մինչեւ ցգիւտ աշխարհին Ամերկացւոց, եւ ծովային ճանապարհին որ ընդ արեւելեան Հնդիկս է, ցկատարած կոյս հինգետասաներորդ դարու 1492 (կլոր ժամանակային արտահայտութեամբ՝ 1–1500 թթ.): 3. Ի նոր պատմութիւն, ի գիւտոյ անտի երկրին Ամերիկացւոց ցմեր իսկ աւուրս (այսինքն՝ մոտ 1500 թ. մինչեւ 1848–1849 թթ. եվրոպական հեղափոխությունները է – Ա. Հ.)»[30]: Վերը բերվածից դժվար չէ կռահել, որ պատմագիր Հ. Գամրճյանը լայն համայնապատկերով համաշխարհային պատմությունը շարադրելիս պատմության իր պարբերացման հիմքում դրել է աստվածաբանական և պատմաաշխարհագրական գործոնները, ինչն ընկալելի ու տրամաբանական է նրա հոգևոր ծառայության և ուսումնասիրվող թեմայի մասշտաբային ընդգրկման տեսակետից:*

*Ռոմինահայ պատմաբան Ստեփան Պալասանյանը (1837–1889 թթ.) հայոց պատմությունը պարբերացման առումով բաժանել է վեց շրջանի՝ «Ա. շրջան՝ «Մեր ազգի ծագումից մինչեւ Պարթևաց Հայաստան գալը (2300–150 թթ. Ք. ա.), Բ. շրջան՝ Պարթևաց Հայաստան գալուց մինչեւ Քրիստոնէութեան հաստատութիւնը (150 Ք. ա. – 300 թթ. Ք. Հ.), Գ. շրջան՝ Քրիստոնէութեան հաստատութիւնից մինչեւ Արաբացոց արշավանքները (300–640 թթ.), Դ. շրջան՝ Արաբացոց արշավանքներից մինչեւ քաղաքական կեանքի անկումը (640–1080 թթ.), Ե. շրջան (մինչանկյալ). Հայոց իշխանութիւնը Կիլիկիայում (1080–1375 թթ.), և Զ. շրջան՝ Քաղաքական կեանքի անկումից մինչեւ մեր օրերը (1080–1885 թթ.)»[31]:*

*Ստ. Պալասանյանը հայոց պատմության պարբերացման համար հիմք է ընդունել հիմնականում ռազմա-քաղաքական և ազգային-կրոնական գործոնները: Նա ևս պատմության շարադրանքը սկսում է Նոյի ժառանգներից՝ Հայկի Հայաստան գալու և Հայոց պետության սկզբնավորումից (2300 թ. Ք. ա.), այսինքն՝ սկսած Հայկի Բելի հետ պատերազմից: Ըստ «Հայկ և Բել» ավանդապատմության՝ Հայկ Նահապետը Տիտանյան Բելին սպանել է Ք. ա. 2492 թ. Օգոստոսի 11-ին, և այդ թվականն էլ համարվում է Հայաստանի անկախության և հայկական հնագույն տոմարի սկիզբը: Բայց Պալասանյանի աշխատությունում այդ թվականը ներկայացված է չուրջ երկու դար պակաս, ինչը, հավանաբար, կարելի է համարել խմբագրա-տպագրական վրիպակ: Քրիստոնեության ընդունման ստույգ թվականը ևս կլորացված է՝ 301-ի փոխարեն նշված է 300 թվականը և այլն:*

*XIX դ. պատմաբան Քերովբե Պատկանյանը (1833–1889 թթ.) Էջմիածնի գրադարանից ի հայտ բերած Սարգիս եպ. Ջալալյանի մատենագիտական ձեռագիր ժամանակագրությունից՝ «Պատմութիւն թագաւորացն Հայոց, որ ի Սիս» վերտառությամբ, որում արձանագրում է Հայոց պետականության գաղափարը,*

---

[30] Գ ա թ ը ր ճ ե ա ն ց. 1849, 4–5, 15, Գ ա թ ը ր ճ ե ա ն ց. 1852, Ի:

[31] Պ ա լ ա ս ա ն ե ա ն. 1902, 13:

*ընդ որում՝ հոլովույթի մեջ ներառելով Կիլիկիայի հայկական թագավորությունը: Դրանում մասնավորապես կարդում ենք. «Հեթում, որ է շառավիղ բարեշնորհ բղխեալ յարմատոյ թագաւորութեան Թորգոմեանս սեռի ի Աւգանազեանս տոհմի»[32]: Բերվածից դժվար չէ տեսնել պետականության տեսլակապով ժառանգորդական կապը հայոց Աբգանազյան տոհմի և Կիլիկիայի Հեթումյան արքայատոհմի միջև:*

*Հայոց պատմության պարբերացման հարցը չոշափած հաջորդ հեղինակը Լազարյան ճեմարանի պրոֆ. Գրիգոր Խալաթյանցն (1858–1912 թթ.) էր, ով իր դասախոսություններում և 1910 թ. լույս տեսած «Ուրվագծեր Հայոց պատմության» աշխատությունում պարբերացում է կատարել միջազգայնորեն ընդունված երեք հիմնական պատմափուլերով. Ա. Հին շրջան, այն է՝ հնագույն ժամանակներից մինչև Արշակունիների թագավորության անկումը (428 թ.), Բ. Միջին շրջան՝ V դարից մինչև հայկական վերջին թագավորության անկումը՝ XIV դար (1375 թ.), Գ. Նոր շրջան՝ Կիլիկիայի Հայկական թագավորության անկումից մինչև իր ապրած ժամանակները (XX դարասկիզբը)[33]: Նկատելի է, որ նման պարբերացում կատարելիս Գր. Խալաթյանցը հաշվի է առել Հայաստանի ինչպես արտաքին, նմանապես և ներքին պայմաններն ու առանձնահատկությունները, այդ թվում՝ քաղաքական, սոցիալական և հոգևոր-մշակութային գործոնները: Նա Հայաստանի հին շրջանի պատմությունը բնորոշել է որպես հայոց արքաների նվաճումների, պետականության ձևավորման ու ազգային ինքնության կայացման շրջան: Խալաթյանցը հատուկ ընդգծում է քրիստոնեության խաղացած դերը, որը, նրա մեկնությամբ, հնարավորություն ստեղծեց կտրվել հեթանոսական անցյալից և կապվել Արևմուտքի հետ[34]: Ըստ նրա՝ Տիգրան Մեծի ժամանակներից երկրի իշխող վերնախավը (ազնվականությունը)՝ որպես ֆեոդալ-հողատերեր, հանդիսացել են նախարարները, որոնց կալվածքներում ապրելիս են եղել իրենց ենթակա՝ տնային ծառայություններ և դաշտային աշխատանքներ կատարող գյուղացիները, իսկ ստրկությունը՝ որպես իրավական ինստիտուտ, բացակայել է, սակայն եղել են ռազմագերի ստրուկներ: Գր. Խալաթյանցը նշում է, որ միջնադարյան Հայաստանում գերիշխող են եղել եկեղեցին ու ֆեոդալիզմը[35]: Ինչպես տեսնում ենք, պատմաբանը բավականին իրազեկ է եղել հայոց պատմության հիմնահարցերին և նրա դատողություններն ու մեկնաբանությունները առանձնապես առարկություն չեն վերցնում:*

## Հայոց պատմության պարբերացման Լեոյի, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի փորձերը նոր դարաշրջանում

*Հայոց պատմության պարբերացման ծիրում որակական նոր մոտեցումներ ու փոփոխություններ ենք տեսնում հայ պատմագրության ականավոր դեմքեր՝ Լեոյի, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի աշխատություններում: Հայոց պատմագրության երախտավոր Լեոն (Առաքել Բաբախանյանը, 1860–1932 թթ.) «Հայոց պատմություն»-ը բաժանում է 4 մեծ դարաշրջանների. 1. Հին դարերի պատմություն՝ նախամարդուց մինչև Ք. հ. V դ., 2. Միջին դարերի պատմություն, որը սկսվում է մոտավորապես Ք. հ. V դարից՝ ընդգրկելով շուրջ հազար տարի՝ հասնելով մոտ XV դ. երկրորդ կեսը, այսինքն՝ (V–XV դդ.), 3. Նոր ժամանակի*

[32] *Պ ա տ կ ա ն ե ա ն. 1884, 29:*

[33] Х а л а т ь я н ц. 1910, III–V и 1.

[34] *Տե՛ս* Х а л а т ь я н ц. 1910, III–IV.

[35] Х а л а т ь я н ц. 1910, 165.

*պատմությունն՝ XVI –XVIII դդ. ավարտը և 4. ժամանակակից՝ XIX դ. սկզբներից մինչև XX դ. իր ապրած օրերը[36]: Նրա այս բաժանումների հիմքում ընկած են քաղաքական, տնտեսական և մշակութային որոշ գործոններ, թեև այդ բաժանումները համարում է պայմանական: Լեոն հայոց պատմության ամենաընդգրկուն շրջանը, սոցիալ-տնտեսական ու քաղաքական հարաբերությունների առումով, համարում է ավատական տիրապետության դարաշրջանը, որը, ըստ նրա, «հատուկ էր Հայաստանին հենց նրա պատմության սկզբից»[37]: Վաստակաշատ պատմաբանը միջնադարի առաջին հատվածը, ինչպես որ ներկայացված է նրա երկրորդ հատորի բովանդակության մեջ, բաժանել է հետևյալ շրջանների. 1. Պարսկա-հունական տիրապետության, 2. Արաբա-բյուզանդական տիրապետության և 3. Գավառական անկախությունների շրջանների[38]: Այնուհետև՝ հաջորդ հատորում, նա պիտի ներառեր Միջնադարի երկրորդ մասի՝ սելջուկյան, մոնղոլական, կիլիկյան դարերի ժամանակաշրջանը, բայց, ինչպես պարզվում է, նրա «փխրուն» առողջական վիճակով և «տկար» աչքերով պայմանավորված, չի հասցրել Միջին դարերի ամբողջական պատմությունը ավարտին հասցնել[39]: Բացի այդ, ինչպես ինքն է խոստովանում, Միջնադարի պատմության 2-րդ մասի շարադրանքը թողել և կենտրոնացել է ժամանակակից (XX դ.) պատմությանը՝ հատկապես հաշվի առնելով այն ազդեցությունը, որ Լեոյի վրա թողել են 1917–1920 թթ. բեկումնալի իրադարձությունները[40]:*

*Հարկ ենք համարում միջանկյալ նշել, որ Լեոն պատմության պարբերացման և, ընդհանրապես, պատմության հիմնահարցերին անդրադառնալիս Միջնադարից, Փրանսիական պատմագրության օրինակով, դեպի ժամանակակից պատմության անցման սահմանագիծ է համարել XV դ. ու, հատկապես, դարի երկրորդ կեսը, երբ աշխարհիկ ու հոգևոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում տեղի էին ունենում բնաշրջման (էվոլյուցիոն) լուրջ գործընթացներ, որոնք հետագայում պիտի անդրադարձ ունենային Հայաստանի ու հայության վարքագծի ու գործելակերպի վրա: Լեոն նկատել էր տալիս, որ այդ անցումն արտահայտվել է ոչ այնքան տնտեսաճևերի փոփոխությամբ, որքան նոր մտածելակերպի ու աշխարհայացքների ի հայտ գալով: Նա այդ շրջանի ոգին համարում էր Ռեֆորմացիան՝ եկեղեցու և կղերականության լծից ազատվելը, մարդկային մտքի աշխարհականացումը, միջնադարյան ավատատիրական կապանքներից ազատագրվելը[41]: Ինքնին հասկանալի է, որ հայոց խոջայական (առևտրական) կապիտալի հարցերով զբաղված պատմաբանն այդ անցման փուլում առաջնային տեղ է հատկացրել XV դ. աշխարհագրական մեծ հայտնագործություններին, ծովային և օվկիանոսային նոր ուղիների բացմանը, առևտրի ու վաշխառուական կապիտալի զարգացմանը: Վաստակաշատ պատմաբանն այդ հայտնագործությունները գնահատում էր ոչ թե գուտ մերկանտիլ, կապիտալ ու շահույթներ ձեռք բերելու առումով, այլ, որ աշխարհագրական հայտնագործությունները, ծովային ու ցամաքային նոր ուղիների բացահայտումը և ճանաչումը*

---

[36] *Լ ե ո. 1917, 2, նաև՝ Լ ե ո. 1940, 1, Լ ե ո. 1947, 3, Լ ե ո. 1967, 7:*

[37] *Լ ե ո. 1967, 9:*

[38] *Տե՛ս Լ ե ո. 1967, 787: Գավառական անկախություններ ասելով՝ Լեոն նկատի է ունեցել Բագրատունիների, Արծրունիների, Սյունիների, Զաքարյանների, Օրբելյանների, Տարոնի և այլ թագավորություններն ու իշխանությունները:*

[39] *Այդ մասին տե՛ս Լ ե ո. 1984, 7–8, 11:*

[40] *Լ ե ո. 1984, 8:*

[41] *Տե՛ս Լ ե ո. 1969, 7–8:*

*փոփոխություններ առաջ բերեցին մարդկանց մտածելակերպում, ինչը հնարավորություն տվեց ազատագրվելու միջնադարյան սխոլաստիկայից (տիրացուականությունից), հավատալիքներից ու նախապաշարմունքներից. կույր հավատը տեղի տվեց բանականությանը, վերածնությունը հռչակեց մարդու ազատությունը և այլն*[42]*: Լեոն իր այս մեկնություններով փորձում է հիմնավորել, որ XV դ. եվրոպական աշխարհականացման այդ շրջադարձը թեև դանդաղ, բայց, այնուամենայնիվ, սկսած XVI դ., աստիճանաբար տարածում էր ստանում հայ իրականության, մասնավորապես՝ միջնադարյան քաղաքների, հայկական գաղթօջախների, հայ վաճառականության, տպագրության, մամուլի, դրականության և այլ ոլորտներում: Նա համոզմունք է հայտնում, որ մեր տառապալից հայրենիքում բուն դրած թափառական մոնղոլ-թաթարական քոչվոր, անողոք նվաճողի տիրապետության տակ ընկած, ինքնությունից և ազատությունից զրկված հայությունը, ճակատագրի բերումով գաղթաշխարհում նրա առանձին հատվածների մշտական շփումներն արևմտյան աշխարհի հետ նպաստավոր գաղափարական հող էին նախապատրաստում իրենց քաղաքական գործունեության և վերջին հաշվով Հայոց հայրենիքի ազատագրության համար: Այդ փաստարկների հիման վրա էլ նա եզրակացնում է, որ եթե Եվրոպայի համար XV դարն է համարում Նոր դարաշրջանի պատմության պարբերացման սկիզբը, ապա Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության համար այդ պարբերացման սկիզբը համարվում է XVI դարը*[43]*: Լեոն, օրինակ, առևտրական կապիտալի մասին խոսելիս նշում էր, որ ինչպես Եվրոպայում, այնպես էլ Հայաստանում ու հայության շրջանում դա եղել է հասարակական զարգացման հիմնական շարժիչ ուժը: Այդ մասին նա գրում է խոջայական կապիտալին նվիրված իր աշխատությունում: Նրա կարծիքով՝ հայկական խոջայական կապիտալն իր նպաստն է բերել Առաջավոր Ասիայի մեծ բռնապետություններից հայ ժողովրդի ազատագրական պայքարի ու ազգային անկախության հասնելու նպատակին*[44]*:*

*Այս առնչությամբ՝ մեր ժամանակների ճանաչված պատմաբան Վ. Դիլոյանը (1930–2005 թթ.) նշում է, որ XVI–XVII դդ. հայ իրականության մեջ տեղի էր ունենում հայ վաճառականական կապիտալի նախասկզբնական կուտակում, որը XVIII դ. հանգեցնում է դրա վերածվելն արդյունաբերական կապիտալի, ինչը, ցավոք, տեղի էր ունենում ոչ թե բուն հայրենիքում, այլ՝ հայկական գաղութներում: Սակայն այդ կապիտալը գրատպության, հրատարակությունների, թերթերի, հասարակական մտքի ներուժի վերածվելու միջոցով սկսում է մշակել ու տարածել հայրենիքի ազատագրության և պետականության վերականգնման լուսավոր գաղափարներ: Եվ դրա դրոշակակիրը դառնում է Հնդկահայ գաղթօջախը, հանձինս՝ նրա վառ ներկայացուցիչներ Հովսեփ Էմինի, Մովսես Բաղրամյանի, Շահամիր Շահամիրյանի*[45]*:*

*Այս փաստարկներն ու գործոնները նկատի ունենալով՝ չի կարելի առարկել, որ, իրոք, XV–XVI դդ. սահմանագիծը համաշխարհային կտրվածքով էական դեր է խաղացել հայ ազատագրական մտքի ու գաղափարաբանության ձևավորման վրա: Այստեղ հիշեցման կարգով փաստենք, որ ականավոր պատմաբաններ Մ. Պոկրովսկու և Լեոյի միջև մտավոր ընդհանրություններից մեկն այն էր, որ*

---

*[42] Տե՛ս Լ ե ո. 1969, 9:*

*[43] Լ ե ո. 1969, 12–14:*

*[44] Տե՛ս Լ ե ո. 1934, 5–6:*

*[45] Տե՛ս Դ ի լ ո յ ա ն. 1993, 7–8:*

*Պոկրովսկին, խոսելով ուշ միջնադարում համառուսական շուկայի ձևավորման մասին, գտնում էր՝ «առևտրական կապիտալը հանդիսացել է ռուսական ինքնակալության ձևավորման գործոն»[46]: Արդյունքում ստացվում է, որ եթե Պոկրովսկին խոսում է Ռուսաստանում ինքնակալության ձևավորման, ապա Լևոն՝ հայ ազատագրական մտքի ու անկախության գաղափարի խմորումների մասին, որոնք, ի վերջո, պիտի հանգեցնեին անկախ պետականության վերականգնմանը:*

*Սովորաբար պատմության պարբերացման հիմնախնդիրը սերտորեն կապվում է հասարակության դասակարգային կառուցվածքի, քաղաքական ու արտադրատնտեսական հարաբերությունների պատմության հետ, քանզի, առանց այդ կառուցվածքներն ու երևույթները հստակ պատկերացնելու և հասկանալու, հնարավոր չէ լիարժեքորեն ներկայացնել պատմության դիտականորեն հիմնավոր պարբերացում: Այդ համատեքստում խնդրին առանձնահատուկ անդրադարձել է հայ պատմագիտության խոշորագույն դեմքերից Նիկողայոս Ադոնցը (1871–1942 թթ.): Նրա հետազոտության առանցքում է եղել ֆեոդալական (ավատատիրական) տնտեսական ու քաղաքական համակարգի ուսումնասիրումը, ինչին որ նվիրված է նրա գլուխգործոց համարվող կապիտալ աշխատությունը[47]: Ն. Ադոնցը հայ հասարակական-քաղաքական կյանքի ելակետային գործոններից մեկը համարում է տոհմը, տոհմատիրական հարաբերությունները, իսկ հետագայում դրա անմիջական շարունակությունը կազմող էթնիկ ու ոչ էթնիկ գյուղական համայնքը: Նա իր այս կապիտալ աշխատությունում դուրս է եկել իր հետազոտության ժամանակագրական շրջանակներից և Հայաստանի սոցիալ-քաղաքական զարգացման պատմությունը գործնականում սկսում է հայ ժողովրդի կազմավորման շրջանից մինչև Ք. հ. VII դարը: Ադոնցը, հենվելով Քսենոփոնի «Անաբասիս»-ի (Ք. ա. V–IV դդ.) ու Պլինիոս Ավագի (Ք. ծ. I դ.) «Բնական պատմություն» և ուրիշ հեղինակների սկզբնաղբյուրային վկայությունների վրա, այդ ժամանակաշրջանը Հայաստանի ներքին սոցիալական տեղաշարժերի ու առաջընթացի առումով բաժանել է երկու փուլի. 1-ին փուլն անվանել է «կոմարքոսների» (հուն.՝ գյուղապետերի) շրջան՝ օգտագործելով Քսենոփոնի գեղջավագի համար կիրառած հունական տերմինը, նաև աշխատությունում նկարագրված տոհմային համակեցության կացութաձևը: Այդ փուլը նա անվանել է նաև «Տիգրանյան» շրջան՝ նկատի ունենալով VI դ. Տիգրան Երվանդյան թագավորին՝ Կյուրոսի և Աժդահակի ժամանակներում, իսկ 2-րդ փուլը, արդեն ավելի ուշ՝ «սատրաեգոսների» ժամանակաշրջանը, երբ ըստ Պլինիոս Ավագի նկարագրած Հայաստանը (I դար) բաժանված էր 120 սատրաեգիաների (լատ.՝ պրեֆեկտուրաների)[48], Ադոնցի բնորոշմամբ՝ «Արշակունյաց» շրջան, երբ Տրդատ I Արշակունին հաստատվում է Հայոց գահին, և թե ինչպես կոմարքոսներից մինչև սատրաեգիաների ձևավորումն ընկած 4-դարյա*

---

[46] *Տե՛ս* pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razvitii-sovetskoj-istoricheckoj-nauki/ *(դիտվել է՝ 08. IV. 2025 թ.):*

[47] *Տե՛ս* А д о н ц. 1908 *(սույն մենագրությունը առաջին անգամ հայերեն թարգմանվել է Ա. և Է. Խոնդկարյանների կողմից՝ А д о н ц. 1987):*

[48] *Գ. Սարգսյանը տեսակետ է հայտնում, որ սատրաեգները հիմնվել են ոչ թե Տրդատ I-ի օրոք (I դ.), այլ ավելի վաղ՝ Արտաշես I-ի ռեֆորմների ժամանակներից (Ք. ա. II դ.) (տե՛ս* С а р г с я н. *1962, 7–9):*

*ժամանակաշրջանում Մեծ Հայքում տոհմա-համայնքային կացութաձևից անցում է կատարվել վաղ ֆեոդալական դասային իշխանավորների՝ նախարարական համակարգի[49]: Ն. Ադոնցը Տիգրան II Մեծի դարաշրջանը համարում է տոհմատիրական հիմքերի կործանման և դասային իշխանավորների (ազնվականության) առաջացման «փոթորկալից դարաշրջան»[50]: Նա գտնում է, որ ֆեոդալական-նախարարական կարգերի հաստատումը Հայաստանում սկսվել է Տիգրան Մեծի շրջանից, երբ տոհմատիրական հարաբերությունները սկսեցին ճեղքեր տալ, ու առաջացան ապագա հողատեր-իշխանների (նախարարների) կարգեր, ինչն ավարտվեց, ականավոր պատմաբանի բնորոշմամբ՝ «Տիգրան Մեծի փոթորկալից էպոխայում»[51]: Ն. Ադոնցն Արշակունիների օրոք սոցիալական հարաբերությունները բնութագրում է որպես նախարարական դարաշրջան[52], իսկ Ք. ծ. IV–VII դդ. համարում է նախարարությունների ծաղկման շրջան:*

*Այսպիսով՝ Ն. Ադոնցը հին և վաղ միջնադարյան Հայաստանի պատմությունը ներկայացրել է ոչ միայն սոսկ ժամանակային նկարագրությամբ, այլ երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական երևույթների ու տեղաշարժերի խորքային փոփոխությունները ու զարգացումները համալիր կերպով: Այդ իսկ պատճառով էլ այս ուսումնասիրությունը դասվում է, թերևս, հայ պատմագրության չգերազանցված աշխատությունների շարքին: Նա նախարարական համակարգի կողքին տվել է նաև եկեղեցական հողատիրության և եկեղեցական կառույցի ու թեմերի բաժանվածության հիերարխիկ կառուցվածքը: Սակայն նկատենք, որ Ադոնցը ֆեոդալիզմը դիտարկել է ոչ թե մարքսյան սոցիալ-դասակարգային սկզբունքով՝ իբրև արտադրության եղանակ, այլ որպես տնտեսական, քաղաքական, իրավական կազմակերպության որոշակի ձև: Հավանաբար այդ հանգամանքը նկատի ունենալով է, որ ճանաչված պատմաբան Գ. Սարգսյանը, ցավոք, նրան ներկայացնում է որպես բուրժուական պատմագրության ներկայացուցիչ[53]:*

*Պատմության արտադրաեղանակային (ֆորմացիոն) պարբերացման տեսակետից, ինչպես նկատում ենք, Ն. Ադոնցն անգամ Տիգրան Մեծի շրջանում ակնարկ չի անում ստրկության և ստրկատիրական հասարակության գոյության մասին: Ն. Ադոնցի գործը ավատատիրության մեկնության բնագավառում շարունակել ու զարգացրել է Խորհրդային Հայաստանի համալսարանի առաջին ռեկտոր Հակոբ Մանանդյանը (1873–1952 թթ.) հատուկ այդ խնդրին նվիրված իր մենագրություններում[54]: Նա նույնպես ֆեոդալիզմի սկզբնավորումը Հայաստանում տանում է ավելի վաղ շրջան՝ Արտաշեսյան թագավորության հաստատումից առաջ՝ նույնիսկ հնարավոր համարելով ֆեոդալիզմի որոշ սաղմերի*

---

[49] *Տե՛ս Ադոնց. 1987, 434–435, 474:*

[50] *Ադոնց. 1987, 455:*

[51] Адонц. 1908, 410.

[52] *Տե՛ս Ադոնց. 1987, 485: Նախարար* (naxarar) *բառը ծագում է «նահապետ» բառից, որը, սակայն, իր մեջ մարմնավորում էր սոցիալական, տնտեսական, վարչաքաղաքական և իրավական իմաստ: «Նախարար»-ը համարվել է նաև «սատրապ» բառի հոմանիշ (Սարգսյան. 1962, 8–9):*

[53] *Սարգսյան. 1962, 6:*

[54] *Տե՛ս Մանանդյան. 1934: Հիշեցնենք, որ նա պատմագիտությամբ է զբաղվել ինչպես նախախորհրդային, այնպես էլ Խորհրդային Հայաստանում:*

*առկայություն խալղական կամ թե նույն է՝ ուրարտական պետությունում[55]: Հ. Մանանդյանը ֆեոդալիզմը դիտարկում է ոչ միայն սոցիալ-տնտեսական, այլ նաև որպես սոցիալ-քաղաքական հատկանիշներ ունեցող կազմակերպություն[56]: Նա ֆեոդալիզմի զարաշրջանը Հայաստանում ժամանակագրական առումով բաժանում է երեք շրջափուլի՝ 1. Նախարարական ֆեոդալիզմի շրջան, 2. Զարգացած ֆեոդալիզմի շրջան և 3. Քայքայվող ֆեոդալիզմի շրջան[57]: Մանանդյանը գտնում է, որ Հայաստանում ստրկություն եղել է, սակայն գերիշխել է համայնական հողատիրությունը, որ ստրկությունը, դասական համարվող հունա-հռոմեական ստրկատիրության համեմատ, կրել է նահապետական բնույթ և էապես չի թափանցել արտադրության ոլորտ[58]: Բացի այդ՝ Ադոնցի պես նա ևս հաստատում է, որ Հայաստանում հնագույն ժամանակներից ի վեր հիմնական արտադրողը եղել է համայնական գյուղացին, ով իրավապես ազատ էր, սակայն ժառանգաբար կապված էր իր համայնքի հետ: Ի տարբերություն Ն. Ադոնցի՝ եթե Հ. Մանանդյանն ակնարկում է նահապետական տիպի ընտանեկան ստրուկների կամ գերիների գոյության մասին, ապա դա բնավ հիմք չի տալիս խոսելու ստրկատիրական կարգերի գոյության մասին: Այս առնչությամբ աղբյուրագետ Ա. Աբրահամյանը, համաձայն չլինելով Հ. Մանանդյանի արտահայտած տեսակետներին Հայաստանում ստրկության գոյության հարցում, գտնում է, որ պետք է մերժել Արտաշեսյանների և դրա նախորդող շրջանում ֆեոդալիզմի երևույթի մասին տեսությունը և դրա փոխարեն ընդունել ստրկատիրական հասարակության փաստը: Եվ այդ հիման վրա էլ նա Արշակունիների թագավորության սկիզբնավորումը դիտել է որպես միջին դարեր[59]:*

## Եզրակացություն

*Հանրագումարի բերելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ, սկսած Պատմահայր Մ. Խորենացուց, գրեթե ամբողջ միջնադարում հայ պատմիչ-պատմագիրների մի մասը հետևել է պատմության շարադրման ու պարբերացման խորենացիական մոտեցմանն ու սկզբունքներին, իսկ մյուս մասը պարզապես բավարարվել է մեծամասամբ հայ թագավորական, նախարարական, իշխանական տոհմերի ու իրենց ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների նկարագրությամբ: Դրա հետ հայ միջնադարյան պատմիչ-պատմագիրներին, բնականաբար, բնորոշ է եղել այդ ժամանակաշրջանը հատկանշող աստվածաբանական (թեոլոգիական), հոգևոր-կրոնական ոգին, գաղափարական մոտեցումներն ու չափանիշները:*

*Արդեն նոր դարաշրջանում՝ Մխիթարյան միաբանության ասպարեզ իջնելը մեծապես նպաստեց հայ հոգևոր-մշակութային, նաև պատմագրության վերելքին, այդ թվում՝ պատմության պարբերացման հիմնահարցերի քննության: Մխիթարյան պատմագիր հեղինակներն իրենց ծանրակշռ ներդրումն են ունենում հայոց պատմության բազում հիմնահարցերի, այդ թվում՝ նաև պատմության պարբերացմանը: Մխիթարյան միաբանության պատմագիր հեղինակներից*

---

[55] Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 10–11, 251, 257, նաև՝ Манандян. 1945, 5.

[56] Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 24, նաև՝ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1981, 206:

[57] Տե՛ս Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 304:

[58] Մ ա ն ա ն դ յ ա ն. 1934, 239, նաև՝ Մ ա ն ա ն դ յ ա ն. 1981, 443:

[59] Ա բ ր ա հ ա մ յ ա ն. 1947, 42:

*հատկապես կարելի է առանձնացնել Մ. Զամչյանին, ով հայոց պատմության պարբերացումների հիմքում դրել է հայկական թագավորությունների գործոնը, այսինքն՝ պետականության գաղափարը:*

*Հայոց պատմության պարբերացման ծիրում XIX դ. վերջից որակական նոր մոտեցումներ ու փոփոխություններ ենք տեսնում հատկապես հայ պատմագրության ականավոր ներկայացուցիչներ՝ Լեոյի, Ն. Ադոնցի և Հ. Մանանդյանի աշխատություններում: Նրանց մինչխորհրդային շրջանի աշխատություններին բնորոշ է դառնում պատմության պարբերացման բազմագործոնայնության՝ պետաքաղաքական, արտադրատնտեսական, իրավական, հոգևոր-մշակութային գործոններն ու հատկանիշները: Ընդ որում, նրանք հիմնահարցը փորձել են ներկայացնել ոչ թե զուտ ժամանակագրական-փուլային, այլ տվյալ դարաշրջանի ընկերային-տնտեսական, դասակարգային կառուցվածքի, պետաիրավական ու քաղաքական հարաբերությունների փաստարկված հոլովույթի մեջ, ինչը հատկապես շատ վիճահարույց է եղել հայոց հին պատմաշրջանի հիմնահարցերը լուսաբանելիս:*

**Արարատ Հակոբյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն պատմաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի, Հայաստանի առաջին Հանրապետության, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, հայ պատմագրության, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, Հայաստանի առաջին Հանրապետության պարբերական մամուլի հիմնահարցեր: Հեղինակ է 20 մենագրության և ավելի քան 160 հոդվածի:**
ORCID:0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. 1947, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի շուրջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 2, էջ 29–44:

Ադոնց Ն. 1987, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, հայերեն թարգմ.՝ Ա. և է. Խոնդկարյանների, Երևան, «Հայաստան» հրատ., 635 էջ:

Առաքել Դավրիժեցի. 1990, Գիրք պատմութեանց, Երևան, ՀԳԱ հրատ., 592 էջ:

Արիստակես Լաստիվերցի. 1971, Պատմություն, Երևան, «Հայաստան» հրատ., 155 էջ:

Բերդյաև Ն. 2019, Պատմության իմաստը, թարգմ. Դ. Մոսինյանի, Երևան, «ՎՄՎ-պրինտ», 268 էջ:

Գաթըրճեանց Հ. Վ. Տիեզերական պատմութիւն ի սկզբանէ աշխարհի մինչեւ ցմեր ժամանակս, հ. Ա (Հին պատմութիւն), Վիէննա, ի վանս պաշտպան Սբ Աստ., 1849 (ՌՍՊԸ), 620 էջ և հ. Բ, Վիեննա, 1852, 608 էջ:

Գարագաշեան Ա. 1895, Քննական պատմություն Հայոց, մասն Ա, Թիֆլիս, տպ. «Մ. Շարաձէ եւ ընկ.», 278 էջ:

Դիլոյան Վ. 1993, Հայոց պատմության պարբերացման մը քանի հարցեր. – «Բանբեր Երևանի Համալսարանի» (Երևան), № 3, էջ 3–9:

Թովման Արծրունի և Անանուն. 1987, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 406 էջ:

Լեո. 1917, Հայոց պատմություն, հ. Ա, Թիֆլիս, տպ. «Սլովո», 728 էջ:

Լեո, 1934, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական–հասարակական դերը հայերի մեջ, հ. 1, Յերեվան, «Պետհրատ», 373 էջ:

Լեո. 1940, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, «Արմֆան», 510 էջ:

Լեո. 1947, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, Հայպետհրատ, 761 էջ:

Լեո. 1967, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 787 էջ:

Լեո. 1969, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 511 էջ:

Լեո. 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 591 էջ:

Կիրակոս Գանձակեցի. 1982, Հայոց պատմություն, թարգ.՝ Վ. Առաքելյանի, Երևան, «Սովետական գրող» հրատ., 352 էջ:

Հակոբյան Ս. 1947, Հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցի շուրջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ , № 7, էջ 35–38:

Հակոբյան Ս. 1948, Ստրկությունը և ստրկատիրական հասարակական ֆորմացիան Հին Հայաստանում. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 8, էջ 13–38:

Հակոբյան Վ. 1952, Դիսկուսիա՝ նվիրված հայ ժողովրդի պատմության պերիոդիզացիայի հարցերին. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 1, էջ 115–124:

Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները. – «Հայագիտության հարցեր» (Երևան), 2017, № 3, էջ 194–240:

Հովհաննես Դրասխանակերտցի. 1996, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 397 էջ:

Հովհաննիսյան Պ. 1990, Հակոբ Մանանդյանի թղթերից. – «Բանբեր Հայաստանի արխիվների», № 2, էջ 127–132:

Հովհաննիսյան Պ. 1993, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված գիտաժողով. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 4, 148–161:

Ղևոնդ Ալիշան. 1901, Հայապատում (պատմիչք եւ պատմութիւնք Հայոց), Վենետիկ, ի Վանս Ս. Ղազարու, 649 էջ:

Մանանդյան Հ. 1934, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում (Արշակունիների ու մարզպանության շրջան), Յերեվան, Մելքոնյան ֆոնդի հրատ., 337 էջ:

Մանանդյան Հ. 1981, Երկեր, հ. Դ, Երևան, Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 518 էջ:

Մովսես Խորենացի. 1961, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայպետհրատ», 448 էջ:

Չամչեանց Միքայել. 1784, Պատմութիւն հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ տեառն 1784, հ. Ա, Վենետիկ, տպ. Պետրոսի Վաղվազեանցի, 803 էջ:

Պալասանեան Ստ. 1902, Պատմութիւն Հայոց սկզբից մինչեւ մեր օրերը, Թիֆլիս, տպ. Տ. Մ. Ռօտինեանցի, 599 էջ:

Պատկանեան Ք. 1884, Նշխարք մատենագիտութեան հայոց, Ս. Պետերբուրգ, տպ. Ա. Կրաևսկու, 72 էջ:

Սարգսյան Գ. 1962, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 94 էջ:

Սարգսյան Գ. Խ. 1965, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ., 191 էջ:

Սարուխանյան Ն. 2013, Հայ պատմագրությունը XIX դարում և XX դարասկզբին, Երևան, «Գիտություն» հրատ., 544 էջ:

Սեբէոսի Եպիսկոպոսի պատմութիւն. 1939, առաջաբան և ծանոթ. Ստ. Մալխասեանցի, Յերեվան, «Արմֆան», 216 էջ:

Ստեփանոս Օրբելյան. 1986, Սյունիքի պատմություն, Երևան, «Սովետական գրող» հրատ., 616 էջ:

Ստեփաննոսի Տարօեցւոյ Ասողական Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի, 1885, 437 էջ:

Վարդան Արևելցի. 2001, Տիեզերական պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 408 էջ:

Адонц Н. 1908, Армения в эпоху Юстиниана. С.-Петербург, тип. «Императорской Академии наук», 526 с.

Вардумян Г. 2024, Взаимосвязь религиозной и государственной систем в Древней Армении. – «Вопросы истории Армении» (Ереван). № 2, с. 3–23.

Еремян С. Т. 1950, О рабстве и рабовладении в Армении. – «Вестник древней истории» (М.-Л.), № 1, с. 12–26.

Халатьянц Г. 1910, Очерки истории Армении. М., Типограф Ю. Венер., 360 с.

Бердяев Н. 1990, Истоки и смысл русского коммунизма. М., «Наука», 224 с.

Манандян Я. А. 1945, Проблема общественного строя доаршакидской Армении. – «Исторические записки» (М.), № 15, 20–25 с.

«pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razvitii-sovetskoj-istoricheckoj-nauki/ (դիտվել է՝ 08. IV.2025 թ.).

## REFERENCES

Abrahamyan A. 1947, Hay zhoghovrdi patmut’yan periodizats’iayi shurj. – «Teghekagir» Hayk. SSRR GA, t’iv 2, 29–44 ej (In Armenian).

Adonts’ N. 1987, Hayastany Hustinianosi darashrjanum, hayeren t’argm.՝ A. yev E. Khondkaryanneri, Yerevan, «Hayastan» hrat., 635 ej (In Armenian).

Adonts N. 1908, Armeniya v epokhu Yustiniana. S.-Peterburg, tip. «Imperatorskoy Akademii nauk», 526 s. (In Russian).

Arak’el Davrizhets’i. 1990, Girk’ patmut’eants’, Yerevan, HGA hrat., 592 ej (In Armenian).

Aristakes Lastiverts’i. 1971, Patmut’yun, Yer., «Hayastan» hrat., 155 ej (In Armenian).

Berdyayev N. 1990, Istoki i smysl russkogo kommunizma. M., «Nauka», 224 s. (In Russian).

Berdyayev N. 2019, Patmut’yan imasty, t’argm. D. Mosinyani, Yerevan, «VMV-print», 268 ej (In Armenian).

Diloyan V. 1993, Hayots’ patmut’yan parberats’man my k’ani harts’er. – «Banber Yerevani Hamalsarani» (Yerevan), № 3, ej 3–9 (In Armenian).

Gat’yrcheants’ H. V. Tiyezerakan patmut’iwn i skzbane ashkharhi minch’ev ts’mer zhamanakans, h. A (Hin patmut’iwn), Vienna, i vans pashtpan Sb Ast., 1849 (RRSGHY), 620 ej yev h. B, Viyenna, 1852, 608 ej (In Armenian).

Garagashean A. 1895, K’nnakan patmut’yun Hayots’, masn A, T’iflis, tp. «M. Sharadze yev ynk.», 278 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

T’ovman Artsruni yev Ananun. 1987, Patmut’yun Artsrunyats’ tan, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 406 ej (In Armenian).

Leo. 1917, Hayots’ patmut’yun, h. A, T’iflis, tp. «Slovo», 728 ej (In Armenian).

Leo, 1934, Khojayakan kapitaly yev nra k’aghak’akan-hasarakakan dery hayeri mej, h. 1, Yerevan., «Pethrat.», 373 ej (In Armenian).

Leo. 1940, Hayots’ patmut’yun, h. G, Yerevan, «Armfan», 510 ej (In Armenian).

Leo. 1947, Hayots’ patmut’yun, h. 2, Yerevan, Haypethrat, 761 ej (In Armenian).

Leo. 1967, Hayots’ patmut’yun, h. 2, Yerevan, «Hayastan» hrat., 787 ej (In Armenian).

Leo. 1969, Yerkeri zhoghovatsu, h. 3, «Hayastan» hrat., 511 ej (In Armenian).

Leo. Yerkeri zhoghovatsu,1984, h. 4, Yerevan, «Hayastan» hrat., 591 ej (In Armenian).

Hakobyan S. 1947, Hay zhoghovrdi patmut’yan periodizats’iayi harts’i shurj. – «Teghekagir» Hayk. SSRR GA, № 7, ej 35–38 (In Armenian).

Hakobyan S. 1948, Strkut’yuny yev strkatirakan hasarakakan formats’ian Hin Hayastanum. – «Teghekagir» Hayk. SSRR GA, № 8, ej 13–38 (In Armenian).

Hakobyan V. 1952, Diskusia, nvirvats hay zhoghovrdi patmut’yan periodizats’iayi harts’erin. – «Teghekagir» Hayk. SSRR GA, № 1, ej 115–124 (In Armenian).

Hayots’ patmut’yan nor parberats’man khndirnery. – «Hayagitut’yan harts’er» (Yerevan), 2017, № 3, ej 194–240 (In Armenian).

Ghevond Alishan. 1901, Hayapatum (patmich’k’ yev patmut’iwnk’ Hayots’), Venetik, i Vans S. Ghazaru, 649 ej (In Armenian).

Khalat’yants G. 1910, Ocherki istorii Armenii. M., Tipograf Y. Vener., 360 s. (In Russian).

Kirakos Gandzakets’i. 1982, Hayots’ patmut’yun, t’arg. V. Arak’elyani, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 352 ej (In Armenian).

Hovhannes Draskhanakertts’i. 1996, Hayots’ patmut’yun, Yerevan, YePH hrat., 397 ej (In Armenian).

Hovhannisyan P. 1990, Hakob Manandyani t’ght’erits’. – «Banber Hayastani arkhivneri», № 2, ej 127–132 (In Armenian).

Hovhannisyan P. 1993, Hay zhoghovrdi patmut’yan parberats’man himnaharts’in nvirvats gitazhoghov. – HH GAA «Lraber hasarakakan gitut’yunneri», t’iv 4, 148–161 (In Armenian).

Manandyan H. 1934, Feodalizmy Hin Hayastanum (Arshakunineri u marzpanut’yan shrjan), Yerevan., Melk’onyan fondi hrat., 337 ej (In Armenian).

Manandyan Y. A. 1945, Problema obshchestvennogo stroya doarshakidskoy Armenii. – «Istoricheskiye zapiski» (M.), № 15, 20–25 s. (In Russian).

Manandyan H. 1981, Yerker, h. D, Yerevan, Hayk. SSH GA hrat., 518 ej (In Armenian).

Movses Khorenats’i. 1961, Hayots’ patmut’yun, t’argm. yev tsanot’. St. Malkhasyants’i, Yerevan, «Haypethrat», 448 ej (In Armenian).

Ch'amch'eants' Mik'ayel. 1784, Patmut'iwn hayots' i skzbane ashkharhi minch'ev ts'am tearn 1784, h. A, Venetik, tp. Petrosi Vaghvazeants'i, 803 ej (In Armenian).

Palasanean St. 1902, Patmut'iwn Hayots' skzbits' minch'ev mer orery, T'iflis, tp. T. M. Rotineants'i, 599 ej (In Armenian).

Patkanean K'. 1884, Nshkhark' matenagitut'yean hayots', S. Peterburg, tp. A. Krayevsku, 72 ej (In Armenian).

Sargsyan G. 1962, Hin Hayastani sots'ial-tntesakan zargats'man ughineri masin, Yerevan, Hayk. SSRR GA hrat., 94 ej (In Armenian).

Sargsyan G. Kh. 1965, Movses Khorenats'u «Hayots' patmut'yan» zhamanakagrakan hamakargy, Yerevan, Hayk. SSRR GA hrat., 191 ej (In Armenian).

Sarukhanyan N. 2013, Hay patmagrut'yuny XIX darum yev XX daraskzbin, Yerevan, «Gitut'yun» hrat., 544 ej (In Armenian).

Sebeosi Yepiskoposi patmut'iwn. 1939, arajaban yev tsanot'. St. Malkhasyants'i, Yerevan, «Armfan», 216 ej (In Armenian).

Step'anos Orbelyan. 1986, Syunik'i patmut'yun, Yerevan, «Sovetakan grogh» hrat., 616 ej (In Armenian).

Vardan Arevelts'i. 2001, Tiyezerakan patmut'yun, Yerevan, YePH hrat., 408 ej (In Armenian).

Vardumyan G. 2024, Vzaimosvyaz' religioznoy i gosudarstvennoy sistem v Drevney Armenii. – «Voprosy istorii Armenii» (Yerevan). № 2, s. 3–23 (In Russian).

Yeremyan S. T. 1950, O rabstve i rabovladenii v Armenii. – «Vestnik drevney istorii» (M.-L.), № 1, s. 12–26 (In Russian).

«pokrovsky.newgod.su/research/pokrovskij-i-ego-rol-v-razvitii-sovetskoj-istorichec koj-nauki/ (դիտվել է՝ 08. IV. 2025 թ.):

## АРМЯНСКИЕ ИСТОРИОГРАФЫ И ИСТОРИКИ ПО ВОПРОСУ ПЕРИОДИЗАЦИИ ИСТОРИИ АРМЕНИИ (V в. – начало XX в.)

АРАРАТ АКОПЯН

Р е з ю м е

*Ключевые слова: историографы-историки, Хоренаци, Армения, периодизация истории, общественный строй, Чамчян, Алишан, Лео, Адонц.*

Одним из фундаментальных вопросов армянской историографии является периодизация истории Армении, способствующая систематизированному изложению исторического прошлого Армении и армянского народа, повышению уровня научного исследования и раскрытию исторической истины. Богатое письменное наследие армянских историографов дает основание утверждать, что попытки периодизации истории Армении предпринимались изначально. Основоположником армянской историографии является

Мовсес Хоренаци – автор монументального труда «История Армении» (V век). В последующие века армянские историографы-историки – Себеос, Гандзакеци, Даврижеци и др. продолжили традиции Хоренаци как в направлении изложения истории, так и ее хронологической систематизации. Изучение трудов армянских историков средневекового периода показывает, что в их трудах естественным образом преобладал христианский, библейский образ мышления.

Уже в новую эпоху приобщение к европейским многофакторным подходам и критериям периодизации истории в значительной степени способствовало приведению в соответствие работ по истории (как в хронологическом, так и содержательном отношении) с западными стандартами, разумеется, с учетом особенностей армянской истории. В этой связи следует особо выделить работы одного из известных историографов Мхитарянского ордена М. Чамчяна, а позже – представителей восточноармянской историографии Лео, Н. Адонца и А. Манандяна, которые в своих трудах дореволюционного периода не только представили хронологическую периодизацию армянской истории, но и при этом учли аргументированную совокупность государственно-правовых, политических, социально-экономических, классовых и духовно-культурных реалий данного исторического периода.

*Арарат Акопян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: проблемы общественно-политической мысли нового и новейшего периодов истории Армении, Первой Республики Армения, Московского и Карсского договоров 1921 г., армянской историографии, советских политических репрессий, проблемы периодической печати Первой Республики Армения. Автор 20 монографий и более 160 научных статей.*
*ORCID: 0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com*

## ARMENIAN HISTORIOGRAPHERS AND HISTORIANS ON THE PERIODIZATION OF HISTORY OF ARMENIA
(V – early XX centuries)

ARARAT HAKOBYAN

### Summary

*Keywords: historiographers and historians, Khorenatsi, Armenia, periodization of history, social system, Chamchyan, Alishan, Leo, Adonts.*

One of the important fundamental issues of Armenian historiography is the periodization of Armenian history, which undoubtedly contributes to the systematized presentation of the historical past of Armenia and the Armenian people, to the improvement of the level of scientific research and to the disclosure

of historical truth. The rich written heritage of Armenian historiographers gives grounds to affirm that attempts to periodize the history of Armenia were undertaken from the very beginning. The founder of Armenian historiography is Movses Khorenatsi, the author of the monumental work "History of Armenia" (V century). In the following centuries Armenian historiographers and historians- Sebeos, Gandzaketsy, Davrizhetsy and others, continued the traditions of Khorenatsi both in the direction of presenting history and in its chronological systematization. The study of the works of Armenian historians of the medieval period shows that the Christian, biblical way of thinking naturally prevailed in their works.

Already in the new era, the introduction of European multifactorial approaches and criteria for periodization of history significantly contributed to the alignment of works on history (both in chronological and substantive terms) with Western standards, of course, taking into account the peculiarities of Armenian history. In this regard, it is necessary to highlight the works of one of the famous historiographers of the Mkhitaryan Order, M. Chamchyan. It is also necessary to mention the later representatives of Eastern Armenian historiography- Leo, N. Adonts and A. Manandyan, who, in their works of pre-revolutionary period, not only presented chronological periodization of Armenian history, but also took into account the reasoned totality of state-legal, political, socio-economic, class and spiritual-cultural realities of this historical period.

*Ararat Hakobyan – Doctor of Historical Sciences, Professor, Leading Researcher at the Department of Modern History of the Institute of History of the National Academy of Sciences RA. Scientific interests: problems of social and political thought of the new and modern periods of the history of Armenia, the First Republic of Armenia, the Moscow and Kars Treaties of 1921, Armenian historiography, Soviet political repressions, problems of the periodical press of the First Republic of Armenia. Author of 20 monographs and more than 160 scientific articles.*
*ORCID: 0009-0005-8875-5970. ararathakobyan47@gmail.com*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2


ՀՏԴ : 929:78(479.25) Մանսուրյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-284

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ. Տիգրան Մանսուրյան, *Երևան, «Գիտություն» հրատ., 2025, 223 էջ + 32 էջ նկ.*:*

**Բանալի բառեր՝ Տիգրան Մանսուրյան, ազգային, Կոմիտաս, խմբերգային, նվագարանային, ստեղծագործություն, ժառանգություն:**

*ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս է ընծայվել ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող Աննա Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրությունը: Այն նվիրված է կոմպոզիտորի 85-ամյակին: Բաղկացած է ինը գլխից, նախաբանից, վերջաբանից: Ամփոփումը եռալեզու է: Գիրքը համալրված է գիտական ապարատով, որ կազմում են կոմպոզիտորի երկերի ցանկը, գրքի մատենագրությունն ու լուսանկարների բաժինը:*




*Այն հանգամանքը, որ Տ. Մանսուրյանն արդի ամենասիրված և ամենահամբավավոր հայ արվեստագետներից է, նրա մասին գրված բազում հոդվածներն ու ակնարկները դարձնում է անբավարար. նրան նվիրված համապարփակ մենագրության կարիք վաղուց կար:*

*Գիրքը հասցեագրված է թե՛ մասնագետներին, թե՛ երաժշտասերներին: Այս ցուցումը, թերևս, աշխատության կարևոր բնութագրիչներից է: Նախաբանում էլ հեղինակը՝ Ա. Արևշատյանը, հատուկ ընդգծել է իր նպատակի՝ ոչ նեղ ակադեմիական բնույթը (էջ 12)՝ այն պայմանավորելով Տ. Մանսուրյանի անհատականության և արվեստի հանդեպ մեր հասարակության լայն շերտերի սիրով ու հետաքրքրությամբ: Ինքնին հասկանալի է, որ այս դեպքում սոսկ թիրախային շրջանակներին հասու, մասնագիտական դժվարամարս վերլուծություններից խուսափելը խնդիրը չէր լուծի. անհրաժեշտ էր պատկերավոր լեզվով կենդանի պատումի աշխույժ չարադրանք ստանալ, ինչն Ա. Արևշատյանին լիովին հաջողվել է: Սակայն մասնագիտական դատողությունների, անհրաժեշտ վերլուծական դրվագների պակաս գրքում ևս չկա: Երաժշտագետը իրար հյուսելով պատմում է կոմպոզիտորի թե՛ կյանքի, թե՛ արվեստի մասին՝ արծարծելով նաև մասնագիտական հասկացություններ, երաժշտական արվեստի պատմության մեջ երևացած գեղագիտական, ստեղծագործական երևույթներ և կոմպոզիտորական տեխնոլոգիաներին առնչվող բազում հարցեր:*

---

* *Ներկայացվել է 16. III. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*Գրքի առաջին, երկրորդ ու իններորդ գլուխները նվիրված են Տ. Մանսուրյանի կենսագրականին և աշխարհայեցողական, գեղարվեստական ընկալումների հատակեցմանը: Դրանք չարադրված են կոմպոզիտորի ստեղծագործական ուղու, շրջադարձային նշանակալիության ստեղծագործություններ, հիշարժան կատարումների և համաշխարհային արտիստների հիշատակմամբ: Մյուս վեց վերլուծական գլուխներն էլ, որ բաժանված են կոմպոզիտորական արվեստի ժանրային ոլորտների երաժշտագիտական դասիչներով, նաև կյանքի պատում են, որում գեղարվեստի մարդու կյանքն ու գործը դիրկընդխառն պատկերավորում են ստանում:*

*Տ. Մանսուրյանի կենսագրական ակնարկից (առաջին գլուխ) ընդհանրանում է XX դարի հայ մարդու հավաքական մի ճակատագիր, որ հյուսվում է Սիյուռքում (Բեյրութ, Լիբանան) հայրենակորույս մարդկանց ընտանիքում ծնված ապագա կոմպոզիտորի մանկական երազական աշխարհի թանկ ծվեններից, ապա հայրենաղարձված հայի հիասթափություններից և դժվար պատանեկության բավիղներով դեպի կայացում, հասունացում և համաշխարհային ճանաչում տանող ընթացքից: Եթե իր՝ կոմպոզիտորի խոսքը (էջ 179) փոքր-ինչ փոխենք, ապա կստացվի, որ սա «ծովի մարդուց»՝ «լեռան մարդու» փոխակերպման պատմություն է. բայց «ծովը» կմնա …*

*Ստեղծագործ մարդու անհատականության բնութագրման գործում մեծ կարևորություն ունեն նրա ուսման տարիները և ուսուցիչները, աշխարհայացքի հիմնատարրերն ու գեղարվեստական միջավայրը: Տ. Մանսուրյանին նվիրված մենագրության մեջ ևս դրանք կարևորված են՝ Գյումրու (Լենինականի) տարիներից մինչև Երևանի Ռ. Մելիքյանի անվան ուսումնարան, ապա Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա: Ապագա կոմպոզիտորի կայացման ճանապարհին հատկապես ընդգծված է իր ուսուցչի՝ կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի դերը և Սարյան ընտանիքի մթնոլորտը (էջ 15–18): Գեղարվեստական միջավայրը, որում բյուրեղացել է Տ. Մանսուրյանի անհատականությունը, XX դ. 60-ականների խորհրդային արվեստի իրականությունն է՝ կոմպոզիտորների, կատարողների և երաժշտագետների, դրողների ու նկարիչների, վաղուց կայացած խոշոր վարպետների և ասպարեզ իջնող ըմբոստ նորարարների ստվար փաղանգով, որոնցից շատերի հետ Մանսուրյանը մտերմություն ուներ և կենսագրություն ապրեց:*

*Տ. Մանսուրյանի գեղարվեստական աշխարհայացքը կայացավ եվրոպական ավանգարդիզմի, ընդ որում, դրա երկու փուլերի և ազգային երաժշտության խորքային ընկալումների հատույթում: Այս երևույթն արժանացել է Ա. Արևշատյանի հատուկ ուշադրությանը (երկրորդ և իններորդ գլուխներ): Հեղինակը զուգադիր չարադրանքով ներկայացրել է XX դարասկզբի եվրոպական նորարարական շարժման ոճական տարասեռ հոսանքների հակիրճ բնութագրերն ու դրանց վերախմաստավորման ճգտումները դարի երկրորդ կեսի խորհրդային իրականության մեջ. Արևմուտքի հետպատերազմյան գեղարվեստական իրողությունների ներհակ բնույթը, որ նորարարական էր թե՛ դարասկզբին ձևավորված գաղափարական դիրքորոշումների առումով և թե՛ ավելին՝ հենց այդ դիրքորոշումներին հակադրվելով: Դա նոր ձևակերպվող պոստմոդեռնի գաղափարական ետնախորքն էր, որ Ա. Արևշատյանը կոմպոզիտոր Դյորդ Լիգետիի մեկ ձևակերպմամբ ընդգծել է իր մենագրության էջերում (էջ 37–38): Մանսուրյանի*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*գեղարվեստական ընթացքն այդ ետնախորքի վրա երաժշտագետի կողմից հստակ է ձևակերպված՝ 1970–1980-ականներին արևմտյան ու ազգային ընկալումների օրգանական սինթեզից մինչև 1990–2000-ականների տիրույթը, երբ առավել չափով ազգային թանձրացումները դարձան կոմպոզիտորի անհատական գրելաոճի ողնուցը (էջ 38–39): Առաջինի համատեքստում տրվում են Դեբյուսիի, Ստրավինսկու, Բարտոկի, Նոր վիեննական դպրոցի մեծերից՝ Շյոնբերգի, Բերգի, Վեբերնի, ապա՝ Բուլեզի և այլոց անունները, մյուս կողմից՝ Կոմիտասի ... Մանսուրյանական ոճի արդի փուլի արտահայտությունները, արդեն, ազգային ձայնակարգային և ձայնեղանակային արմատներից սնվող, ազգային մոդալ համակարգերից կերպարանք առնող գեղարվեստական երևույթներ են:*

*Ազգայինի և համամարդկայինի փոխառնչության հարցը, որ խիստ օրինաչափորեն ի հայտ է գալիս մեծ արվեստագետների ժառանգության մեջ, Մանսուրյանական արվեստի առիթով այլ ծալքեր էլ ունի: Դրանք արժանի կերպով ընդգծվել են Ա. Արևշատյանի կողմից, և հանգույցը դարձրել ողջ գրքի կարևոր առանցքներից մեկը:*

*Որպես աշխարհայացքային մեկնակետ «Կոմիտաս» երևույթը կարևորված է Տ. Մանսուրյանի համար. նախ, որպես XX դ. մեծ կոմպոզիտոր, բայց նաև երաժշտական արվեստի հիմնահարցեր ձևակերպած և լուծումներ առաջադրած մտածող: Այս իմաստով նրա համար հոգեհարազատ ընդհանրություն, աշխարհընկալման զուգահեռականություն ձևավորող հանգամանք է հայոց լեզվի և նրան համարժեք եղանակավորման հիմնատարրերի հանդեպ Կոմիտասի ունեցած գիտական-գեղարվեստական դիրքորոշումը: Դա, թերևս, «ազգայինի» հանգուցակետային բանալիներից է, որ ազգային դպրոցի հիմնադիրը թողել է իրեն հաջորդող խոշոր կոմպոզիտորներից այս մեկին՝ Տիգրան Մանսուրյանին (էջ 180):*

*Կոմիտաս-Մանսուրյան հարաղրություն համատեքստում Ա. Արևշատյանն էլի ընդգծումներ ունի, որ ուշարժան են: Սակայն լեզվամտածողության և երաժշտական մտածողության համարժեքայնության հարցերը, որոնք հրապարակ են նետվել դեռևս XIX դարավերջից, դարձել ազգային դպրոցների բնութագրիչ հատկանիշ և հումանիտար գիտություններին հետաքրքրող հիմնահարց, նաև գեղարվեստական մտածողության հզոր լիցքեր պարունակող դաշտ են ձևավորել: Այդ լիցքերի փայլատակումները Տ. Մանսուրյանի արվեստում բազմաթիվ են: Կոմպոզիտորի արվեստի առանցքային նշանակության ոլորտներից երկուսը՝ վոկալ-նվագարանային և խմբերգային ժանրային դաշտերը, հենց այս հարաղրության տարբեր առանցքների շուրջ ձևակերպված դարձդարձումներ են: Ա. Արևշատյանը ճշգրիտ շեշտառումներ է անում, երբ XX դ. 60-ականների նորարարական միտումների հիմնական ժանրային ոլորտներից առանձնացնում է կամերայինը: Այդտեղ և հաջորդ էջերում էլ (երրորդ և չորրորդ գլուխները) ընդգծվում են վոկալ-նվագարանային, խմբերգային և վոկալ-սիմֆոնիկ այն ստեղծագործությունները, որոնք հեղինակը ստեղծել է հայ քնարերգության ատաղձով՝ որպես ազգայինի հայտանիշ: Եթե շարունակենք մտածել այս հունի մեջ, ապա ակնհայտ կդառնա, որ հայոց լեզվի գրական բոլոր շերտերի հնչավորումը Մանսուրյանի համար ստեղծագործական խնդիր է և ցայսօր գեղարվեստականորեն կատարյալ երկեր կերտելու առիթ է տալիս: Այս տեսանկյան տակ կարող են դիտարկվել Թումանյանի, Իսահակյանի, Տերյանի, Չարենցի, Կ. Զարյանի պոեզիայի երաժշտական մարմնավորումները, որպես աշխարհաբար հայերենի «երաժշտականացում»: Սակայն մյուս կողմից, 60-ականների երկրորդ*

*կեսին Մանսուրյանն առաջիններից էր, որ դիմեց հայ միջնադարյան քնարերգության օրինակներին՝ Խաչատուր Կեչառեցու, Նահապետ Քուչակի (նրան վերագրվող) պոեմային, ապա վերջին շրջանում՝ Ներսես Շնորհալու, Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը: Կարող ենք պնդել, որ «Տետր ողբագին տաղերգության», «Զորս հայրեն Նահապետ Քուչակից», «Հաւատով խոստովանիմ», «Օրհներգ-նաւապետ բարի» և այլ երկերով Մանսուրյանի արվեստում հնչավորվել են հայոց գրական լեզվի երկու շերտերը՝ միջին հայերենն ու գրաբարը: Այսինքն՝ կոմպոզիտորին հաջողվել է իր երաժշտական մտածողության արտահայտչաձևերով ու միջոցներով ձևավորել հայոց լեզվի ողջ հնչական հիմքի երաժշտական համալիրը:*

*Սակայն «երգվող» արվեստի հանդեպ կոմպոզիտորի մեծ հակվածությունը պայմանավորված չէ սոսկ հայոց լեզվի և հայ պոետիկ արվեստի հանդեպ ունեցած խոնարհումով: Այդ են վկայում նրա թե՛ օտարազգի բանաստեղծների ստեղծագործություններով, թե՛ օտարալեզու տեքստային հիմքով ստեղծված երկերը: Այս առումով, իհարկե, առանձնանում է «Ռեքվիեմը», որի համար հեղինակը 2013 թ. արժանացավ ՀՀ պետական մրցանակի: Այն լատիներենի և հայ երաժշտության ձայնակարգային, իսկ որոշ դրվագներում ուղղակի ձայնեղանակային արտահայտությունների զարմանալիորեն կենսական համաձուլվածք է: «Ռեքվիեմը» հայ կոմպոզիտորական արվեստի պատմության նորագույն շրջանի կանտատ-օրատորյալ ժանրի ամենամեծ ձեռքբերումներից է: Ուստի ստեղծագործության հանդեպ մենագրության հեղինակի մեծ ուշադրությունն արդարացված է (էջ 68–79):*

*Լեզվի, խոսքի ուղղակի արտացոլանքներից զատ, որ այդքան կարևորված են Տ. Մանսուրյանի արվեստում, գուցե նույնիսկ ղրանցից առաջ, կոմպոզիտորի երաժշտական տարերքի հիմնական ոլորտներից է նվագարանային արվեստը: Ա. Արևշատյանն այն իր ժանրային տրոհումներով բերել է դրքում: Իհարկե, լեզուն, խոսքը, քնարերգությունն այլ արտացոլումներով ներթափանցում են նաև կոմպոզիտորի նվագարանային արվեստ՝ լինեն ղրանք երաժշտական մտքի ձևաբանական կազմակերպման (չարահյուսություն) օրինաչափություններ, թե միջնադարյան մոնոդիայի վերարծարծումներ (ինչը կոմպոզիտորն այնքան էլ չի սիրում անել): Սակայն Մանսուրյանի նվագարանային արվեստն այն ոլորտն է, որն արտացոլել է նրա թե՛ նորարարական, թե՛ ազգային նկրտումները: Բնավ միտում չունենալով վերաշարադրել մենագրության համապատասխան (հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ) գլուխները, սոսկ նկատենք, որ 60-ականներին հայ իրականություն ներթափանցած արևմտյան ավանգարդիզմի դրսևորումները որոշ դեպքերում առաջին անգամ Մանսուրյանի արվեստում երևացին: Նոր վիեննական դպրոցի դեղագիտությունն ու կոմպոզիտորական տեխնոլոգիայի սկզբունքներն ավել կամ պակաս արտացոլվեցին նրա 60-ականների երկրորդ կեսին գրված նվագարանային սոնատներում: Սակայն դրա հետ երևան եկան ազգայինի բոլորովին նոր երևակումներ ևս: Օրինակ՝ դաշնամուրային սոնատում չափի հարաբերական բնույթի արտացոլումը, տակտի գծերի բացակայությունը, տեմպային գործոնի երաժշտական ձևագոյացման գործընթացին զուգադիր կազմակերպելու ցուցումը կարող է բացատրվել ինչպես արևմտյան ավանգարդիզմի ուղղություններից մեկի՝ ալեատորիկայի մասնակի արտացոլանքով, այնպես էլ՝ հայկական մոնոդիայի բնուստ հատկանիշով: Վերջապես ազգայինի ծրագրային հղումով են դրոշմված վաղ նվագարանային երկերից «Թովեմը» (1979), վերջին շրջանից՝ «Երեք միջնադարյան տաղերը» (1996–*

*2004)։ Եթե առաջինում հայկական մեղեդային մտածողության վաղագույն շերտերի արտահայտվածություն կա (էջ 97–98), ապա վերջիններն ուղղակի միջնադարյան մոնոդիաների հիմքով են կերտված։*

*Տ. Մանսուրյանի նվագարանային մտածողության մեծակտավ արտահայտությունները սիրված են նրա ստեղծագործական ուղու երկայնքով՝ «Պարտիտայից» մինչև նվագարանային կոնցերտները, ու թեև այսօր հեղինակին առավել հետաքրքիր են երգն ու խմբերգը, նրա նվագարանային ստեղծագործությունները հայ կոմպոզիտորական արվեստի պատմության փայլուն էջերից են։*

*Ա. Արևշատյանը բնավ չի վրիպել, երբ առանձին գլուխ է նվիրել Մանսուրյանի կինոերաժշտությանը (ութերորդ գլուխ)։ Շուրջ քսանհինգ տարի այս բնագավառում ծավալած աշխատանքը առիթ էր, որ կոմպոզիտորը համագործակցի հայ կինոյի մեծանուն ռեժիսորների (առանձին ընդգծված է Ս. Փարաջանովի, Հ. Մալյանի, Հ. Հախվերդյանի հետ աշխատանքը), դերասանների հետ, մյուս կողմից՝ ստեղծի կինոերաժշտություն, որ իր կյանքով ապրող, անվերապահորեն սիրված երաժշտական իրողություն է։ Վստահաբար կարելի է ասել, որ Տ. Մանսուրյանի ստեղծագործությունների չարքում լիարժեք գեղարվեստականությամբ փայլում են նաև նրա կինոերկերը։ Թեև թատերական ներկայացումների և մուլտֆիլմերի համար գրած երաժշտական ստեղծագործություններն անհամեմատ քիչ են, սակայն այստեղ ևս նշանավոր երկեր կան։*

*Գրքի վերջաբանը կրում է հեղինակ միջնադարագետ-երաժշտագետի ձեռքի դրոշմը։ Այն կազմված է «Հարցմունք եւ պատասխանիք» գրվածքների օրինակով։ Նպատակը գրքի ասելիքը մի չարք հարցերով հստակեցնել, հայտարարի՝ ի մի բերելն է։*

*Գիրքը հայ մեծ արվեստագետի, նրա արվեստի, ժառանգության, անհատականության և, պարզապես, հայ մարդու կենսագրության մասին է, որ գրվել է բարձր պրոֆեսիոնալի ձեռքով և այլևս մեզ է պատկանում։ Ա. Արևշատյանի «Տիգրան Մանսուրյան» մենագրությունը ոչ միայն հայ մեծ կոմպոզիտորին նվիրված արժանի մենագրություն է, այլև մասնագիտական հարցերի արծարծման, ընթերցողների լայն շրջանակին հասկանալի երաժշտագիտական աշխատանքի օրինակ՝ ստեղծված իր գրքի հերոսին բացահայտելու հիմնական նպատակին հավատարիմ։*

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Արվ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող։ Գիտական հետաքրքրությունները՝ հայ երաժշտության պատմության ու տեսության հարցեր, հայ երաժշտական միջնադարագիտություն։ Հեղինակ է 4 մենագրության և շուրջ 70 հոդվածի։ ORCID:0009-0008-1081-1639. mhernavoyan@gmail.com


ՀՏԴ : 281.6(091)

Doi:10.54503/0135-0536-2025.2-289

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությունը, խմբ.՝ Գ. Սարգսյան, *Երևան, Հեղ. հրատ., 2025, 160 էջ*:*

**Բանալի բառեր՝ Մայր տաճար, Սբ Էջմիածին, կաթողիկոս, վիմագիր, գրաֆիտային հիշատակագրություն, ուխտավոր-նվիրատու, տարեգրություն:**

*Մայր տաճարի վիմագրերը, թեև ոչ ամբողջական ընդգրկմամբ, վաղուց ի վեր եղել են հայագետների ուշադրության կիզակետում: Դրանցից մի քանիսը տեղ են գտել դեռևս XIX դարի և նախորդ դարասկզբի տեղագրական-նկարագրական բնույթի աշխատություններում[1]:*




*Մայր տաճարի և, ընդհանրապես, Վաղարշապատի վանքերի վիմագրական ժառանգության ուսումնասիրությամբ բազմաթիվ աշխատանք են կատարել Ս. Սաղումյանն[2] ու Վ. Հարությունյանը[3]: Խնդրո առարկային անդրադարձումներ ունեն նաև օտարազգի ուսումնասիրողներից Մ. Բրոսսեն[4], Յո. Ստրժիգովսկին[5]:*

*«Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությանը» ուսումնասիրմանը լրացնելու են գալիս պ. գ. թ., ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող Արսեն Հարությունյանի ուսումնասիրությունները, որոնց առհավատչյան 2016 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կողմից հրատարակված «Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները» խորագրով մենագրությունն է: Գիրքը հրատարակության է երաշխավորվել ԳԱԱ*

---

** Ներկայացվել է 15. XII. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*[1] Յ ո վ հ ա ն ն է ս ե պ ի ս. Շ ա հ խ ա թ ո ւ ն ե ա ն ց. Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ՝ Ա. Տեր-Ստեփանյանի, Սբ Էջմիածին, 2014, Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Սբ Ղազար, 1890, Ս. Է փ ր ի կ ե ա ն. Էջմիածին (303–1903). պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ-Սբ Ղազար, 1903:*

*[2] Ս. Ս ա ղ ո ւ մ յ ա ն. Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի գանգակատունը.– «Էջմիածին», 1976, թիվ Ը, էջ 25–33:*

*[3] Վ. Յ ա ր ո ւ թ ի ւ ն ե ա ն. Եկայք չինեսցուք, Սբ Էջմիածին, 1988:*

*[4] Մարի Բրոսսեի՝ Սբ Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետական կառույցի և որմնանկարների մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. Մարի Բրոսսեն հայագետ, Երևան, 2002:*

*[5]* J. S t r z y g o w s k i. Das Etchmiadzin – Evangeliar, Beitrage zur geschighte der Armenischen, Ravennatischen und Syro-Agyptischen Kunst. Wien, 1891, pp. 6–9.

*հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական խորհուրդների որոշմամբ: Աշխատության խմբագիրն է պ. գ. թ., հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող Գագիկ Սարգսյանը:*

*Նախորդի տրամաբանական շարունակությունն ու ամփոփումն է նաև գրախոսվող աշխատությունը, ուր համահավաք և ժամանակագրական կարգով ներկայացված է Մայր տաճարի վիմագրական ժառանգությունը՝ սկսած վաղմիջնադարյան հուշարեն վիմագրերից մինչև վերջին ժամանակների նորոգչական աշխատանքների արդյունքում ի հայտ եկած XVII–XVIII դդ. գրաֆիտային հիշատակագրությունները (175 միավոր): Գրքում վիմագիր սկզբնաղբյուրների հենքով ներկայացվում են Մայր եկեղեցու շինարարական և նորոգման փուլերը, Հայ առաքելական եկեղեցու գահակալների եկեղեցաշեն գործունեությունը, ուխտավոր-նվիրատուների անվերապահ հավատն առ Սբ Էջմիածին:*

*Հեղինակի ուշադրության կիզակետում են նաև Մայր տաճարի՝ քրիստոնեությունը խորհրդանշող յուրօրինակ քանդակային-հորինվածքային լուծումներն ու հուշարեն վիմագրերը (էջ 16–21), տաճարի շինարարական աշխատանքների մեկնարկը, տարբեր ղարերով թվագրվող հիշատակագրությունները, որոնք թեև բովանդակային խորությամբ աչքի չեն ընկնում, բայց և էապես կարևորվում են տաճարի՝ տվյալ ժամանակահատվածում գործելու և նվիրատվություններ ստանալու տեսանկյունից (էջ 22–26): Միաճնաէջ տաճարի նորոգմանը և բարեզարդմանը վերաբերող փաստերը փաստագրվում են նաև ժամանակի պատմագիրների, չնորհաշատ գրիչների ձեռագիր մատյանների հիշատակարաններով: Նշվում է, որ դեպքերի ժամանակակից պատմագիր Առաքել Դավրիժեցին Սբ Էջմիածնի նորոգման աշխատանքների սկիզբ է համարում Հայոց ՌՀԶ (1627) թվականը (էջ 25):*

*Գրքում ներկայացվում են նաև մեծ զանգակատան կառուցումն ու գմբեթի նորոգումը (էջ 27–40): Նշվում է, որ զանգակատան միջնահարկի ճակատոնները հարդարված են պատկերաքանդակներով. դրանցից երեքին ագուցված են Քրիստոսի, Սբ Գրիգոր Լուսավորչի, Սբ Տրդատի պատկերաքանդակները՝ կից գրություններով: Հեղինակային հիմնավոր դրույթներն ու եզրահանգումները զուգորդվում են գունավոր նկարներով և աղյուսակներով:*

*Ուսումնասիրության մեջ հետաքրքրական դիտարկումներ կան Մայր տաճարի XVII դ. վերջին տանտամյակների և XVIII դ. նորոգման ու որմնանկարազարդման աշխատանքների վերաբերյալ (էջ 41–56), որոնց արձանագրություններից պարզվում են ժամանակի կաթողիկոսների (Ղուկաս Ա. Կարնեցի, Սիմեոն Ա. Երևանցի, Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի) գործունեության մանրամասները, նրանց նախաձեռնած շինարարական աշխատանքների ծավալները, որոնք ամրագրվել են նաև վիմագրերով:*

*«Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությունը» աշխատությունում ներկայացվում են Մայր տաճարի բարենորոգչական աշխատանքներին վերաբերող վավերագրերը XIX–XXI դդ. (էջ 57–68): Հանրագիտարանային մանրակրկիտ տվյալներով ներկայացվում են ժամանակաշրջանի բարենորոգչական աշխատանքների ընթացքը, արձանագիր քարերից մեջբերումները, բազմաշխատ հայրապետների սրտացավությունն ու նվիրումը: Ուշագրավ գիտական բացահայտումների հիմնապատկերին ներկայացվում են նաև Մայր տաճարի՝*

*Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ սկսած հիմնանորոգման լայնածավալ աշխատանքները:*

*Ուշարժան է նաև աշխատանքի վերջին հատվածը՝ «Մայր տաճարի գմբեթի թմբուկի նորահայտ գրաֆիտային հիշատակագրությունները» (էջ 69–104) խորագրով, որոնք, ըստ էության, գեղարվեստական վավերագրության ժանրատիրույթում են: Առանձնակի ներկայացված այս հիշատակություններն ուղղակիորեն պարզում են, որ վիմագիր աղբյուրները նորահայտ հուշ-վկայություններ են ժամանակաշրջանի տարբեր իրողությունների վերաբերյալ: Խնդրո առարկա վիմագրերը խոսուն վկայություններ են Սբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրության:*

*Մեծ է սույն աշխատության գիտական հենքը. ծավալուն ծանոթագրություններ, պատկերացանկ, անձնանունների, տեղանունների առարկայական ցանկեր, օգտագործված հարուստ գրականություն, որոնք նոր լույս են սփռում գրքի գիտական հիմնադրույթներին: Նշելի է, որ վիմագրերն ուղեկցվում են նաև գրչանկարներով. գրանք տեղորոշված են նաև տաճարի ծավալային գծապատկերներում (էջ 105–112): Գրքի վերջում ողջ նյութն ամփոփված է երկլեզու (հայերեն և անգլերեն) տարեգրության տեսքով, ինչն այս աշխատության առանցքային կողմն է: Շահեկան կլիներ գիրքն ունենար ռուսերեն ամփոփում:*

*Փաստելի է, որ մանրակրկիտ և լուրջ աշխատանք է իրականացված: Ա. Հարությունյանի՝ հանրագիտարանային արժեք ունեցող պատկերազարդ սույն աշխատանքը, որ նվիրվում է Մայր տաճարի վերաօծմանը, արժանի է գնահատանքի:*

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, Գևորգյան հոգևոր ճեմարանի ղեկավոս: Գիտական հետաքրքրությունները՝ մշակութային ժառանգություն, տեքստի ոճաբանություն և խոսքի զարգացման հիմնախնդիրներ, հաղորդակցական իրավիճակների մեթոդաբանություն: Հեղինակ է 4 և համահեղինակ 10 գրքերի, շուրջ 150 հոդվածի: ORCID: 0000-0001-9506-8611. galstyanashot42@aspu.am

ՀՏԴ : 929:891.981.09 Պարտիզունի

Doi:10.54503/0135-0536-2025.2-292

# ՎԱՉԷ ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

(Ծննդեան 110-ամեակի առթիւ)*

*Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայագիտական ակունքներն արգասաւորած սիւներից մէկն է եղել Վաչէ Պարտիզունին (ծննդեան աւազանով՝ Թադէոսեան), որի անմնացորդ ծառայութիւնը գիտութեանը եւ հայ գրականութեան բազմահազար ուսուցիչների՝ յիսուն եւ աւելի տարիների մանկագիտական պատրաստման գործին վաղուց դարձել է նրա բերած նուիրումի բացառիկ խորհրդանշան:*



*Նա, ըստ էութեան, համալսարանի գիտամանկավարժական ներուժը ճանաչողական հունի մէջ դրած ամբողջական դէմքերից էր, հայ գրականութեան հարուստ պատմութեան ծալքերը սերունդներին շարունակաբար բացայայտած առաջնակարգ մանկավարժ: Երեսուներեք տարի շարունակ՝ 1951–1984 թթ., նա հմտօրէն ղեկավարել է հայ գրականութեան պատմութեան ամբիոնը՝ գործընկերներին եւ ուսանողութեանը խորհրդային ամբողջատիրութեան պայմաններում տոգորելով ազգային մշակոյթի առաջնայնութեան գիտակցութեամբ: Նա գիտելիքների չտեմարան էր. նրանից կարելի էր սերտել ոչ միայն գիտական ճանաչողութիւն, այլեւ՝ կենսակերպ:*

*Ինչ մնում է ինձ, եղել եմ նրա ասպիրանտը, նրա ղեկավարութեամբ պաշտպանել թեկնածուականատենախօսութիւն: Անգամ նրա մահից յետոյ փորձել եմ ուսել աշխարհաճանաչողութեան եւ սկզբունքների պաշտպանութեան յամառ գծերը, որոնք ժամանակի մէջ ղարձել էին նրա մտաւոր կարողանականութեան ու մանկավարժական հմայքի գումարելիները: Դրանք առանձնացնում էին ոչ միայն գիտնականին եւ մանկավարժին, այլեւ, ինչն առաւել կարեւոր է, անհանգիստ քաղաքացուն եւ չիտակ մարդուն:*

*Երկու հանգամանք ստիպում է վերադառնալ բովանդակային առումով գիտնականի ուժի եւ հմայքի յարաբերութեանը, որոնք մատնանշում են, մի կողմից՝ իմացական հարցադրումների, գիտական առումով՝ չարենցեան «նշանի ահագնութիւնը», միւս կողմից՝ մարդկային անհատականութեան գործօնը՝ խօսքի ճգողութիւնը եւ վարքականոնը, որը չատերի համար էր ընդօրինակելի:*

*Մինչդեռ կենսագրական դժուարին ճանապարհը բացում է պարզ մարդու ուրուագծումի յայտնի ընթացք. ծնուել է 1915 թ. Արարատեան դաշտի Բուրաս-*

---

* *Ներկայացվել է 07. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*տան գիւղում, 1940-ին աւարտել է Երեւանի պետական համալսարանի պատմա-լեզուագրական բաժանմունքը, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ծառայել խորհրդային բանակի զօրամասերում, ետպատերազմեան դժուարին ժամանակներում ընտրել բանասիրութեան բաւիղները:*

*Պետական համալսարանն աւարտելուց յետոյ անմիջապէս, եւ արդէն ընդմիշտ, աշխատանքի է անցել Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, ուր աշխատել է մինչեւ 1997 թ., մի ամբողջ կեանք՝ գիտականութեան նոր որակ հաղորդելով նրա ուղղութիւններին, ընդլայնելով հետաքրքրութիւնների շրջանակը՝ ընդհուպ մինչեւ արեւմտահայ գրական դարպասները, պատրաստելով տասնեակ թեկնածուներ եւ դոկտորներ:*

*Նկատենք, որ քիչ է պատահում, երբ գրականագէտները գրչանուն են ընտրում, աւանդոյթ, որն աւելի ներյատուկ է ստեղծագործողներին: Վ. Թադէոսեանն այստեղ էլ առանձնանում է նախընտրութիւնների խմաստալից վերակառուցմով. յիրաւի, ո՞վ է ինքը, եթէ ոչ ազգային գրական թովչական պարտէզի մշակը՝ պարտիզպանը, այգեպանը: Ուրեմն՝ «էս գլխից»՝ «Պարտիզունին»: Այստեղ միայն այգեպանի ենթակայական դերակատարութեան նախընտրութիւնը չէ. գերիչխողն աւելի շատ այգու ճանաչումն է, այն այգին, որ աշխարհի գրական պարտէզների մէջ դիւթում է իր բոյրով:*

*Գիտական առաջին իսկ քայլերից մօտեցել է Տէրեանի ստեղծագործական բարդ ու հակասական աշխարհին, սակայն նկատելի տագնապով ու, ինչու չէ, նաեւ վախով. 1945-ին պաշտպանեց «Վահան Տէրեանի պօէզիան» ատենախօսութիւնը, ինչի համար ստացաւ բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան:*

*Ահա «Խաչատուր Աբովեան» մենագրութիւնը, որը 1948-ին մանկավարժական ինստիտուտին նուիրեց որդիական գորովով: Արդէն 1952-ին՝ սոցիոլոգիական գրական յայտնի որոմի շրջանում, պարտիզպանը որսաց ազգայինի առողջ հատիկը. գիտնականի մօտեցումն արժեւորութեան ոգի էր՝ «էլ ետ առաջին փառքին հասնելու»[1] ձգտումով:*

*Ըստ խորքով գնահատութեան՝ առանձնացնենք գիտաճանաչողական տեսական բնոյթի մի մանրամասն. գաղտնիք չէ, որ Պարտիզունին, ի թիւս հետազօտական այլ նախաձեռնութիւնների, ձեռք զարկեց իրարից էապէս տարբեր երկու նուիրական երախտաւորների՝ Մուրացանի եւ Վահան Տէրեանի ռոմանտիզմների ընկալման՝ շատ հարցերում ներհակ, բայց տարբեր գնահատութիւններով հանդերձ՝ ամբողջացած հետագծին: Երկուսի պարագայում էլ գիտական նորարարութիւնը կշիռ է հաղորդել փնտռտուքի սլացքին:*

*Իր առաջին եւ յետագայ շրջանի աշխատասիրութիւններում նա խորապէս անդրադարձաւ Մուրացանի ստեղծագործական չերտերին, որոնցից յիշենք «Մուրացան. կեանքը եւ ստեղծագործութիւնը» (1956) ստուար գիրքը, ինչը միանգամից վկայեց գրականութեան պատմաբանի տիրական մուտքը, եւ որը 1957-ին արդէն գիտական հանրութեանը ներկայացրեց իբրեւ դոկտորական ատենախօսութիւն: Պրոֆեսոր դարձել է նույն թվականին: 1965-ին ակամայ նորից յոբելեան կարծես ստացուեց. արժանացաւ գիտութեան վաստակաւոր գործչի կոչման:*

*Ի դէպ, զուտ ստեղծագործական խնդիրների լուծումները ենթաղրում էին գիտական մշակումի որոշակի դժուարութիւն հոգու տարերքի եւ բանաստեղ-*

[1] *Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկեր, Երեւան, 1984, էջ 145:*

*ծական տիպաբանական զարգացման քննութեան ճանապարհին, երբ անհրաժեշտ էր իւրացնել նիւթն ու գաղափարը, իրարից զատել զգացումն ու տեսողական ճանաչողութիւնը:*

*1960-ական թվականներին նա ձեռնամուխ եղաւ ծրագրային աշխատանքների՝ «Գրականութեան ուժն ու հմայքը» (1963), ինչից յետոյ իւրատեսակ տուրք-վերադարձ կատարեց Տէրեանի աշխարհ՝ հրատարակելով «Տէրեան. ստեղծագործութիւնը» (1968) վերլուծական մանրակրկիտ եւ ամբողջական մենագրութիւնը, որին 1970–1980-ական թվականներին յաջորդեցին «Իսահակեանը եւ Տէրեանը» (1975) զուգահեռների երկկենտրոն գիրքը, «Տաղանդի ուժը» (1977) եւ «Պայծառ համաստեղութիւն» (1987) յօդուածների ժողովածուները:*

*Ճիշդ է, խորհրդահայ գրականագէտին չահագրգռել են ազգային գրականութեան ուշագրաւ մեծութիւններ, ի շարս այլոց՝ Մ. Նալբանդեան, Ալ. Շիրվանզադէ, Յովհ. Թումանեան, Ե. Չարենց, նորագոյն շրջանում դիմագիծ բռնած չատ ուրիշներ, բայց Վ. Պարտիզունու աշխարհում Վ. Տէրեանն առաջին սիրոյ հմայք ունի: Նրա հետ տէրեանագիտութիւնը երկար ճանապարհ է անցել, աճել ու կարծրացել: Ընկալման զգացմունքային վերաբերմունքից, պաշտամունքից, ազդեցութեան յախուռն դպրոցից մինչեւ գիտական բանավէճերի ու ճշմարտութիւնների հանգրուաններ. ահա՛ հասողութեան այն ճանապարհը, որը յաղթահարել է գրականագէտը, ինչը նրան ոլորաններով տարել է բարձունքի, ջրդեղել, դարձրել գիտնական:*

*Վ. Տէրեանն ի՛նքն էր գլխաւոր ստուգիչ զգայաչափը՝ արդեօ՞ք այդ ճանապարհը «թեթեւ» էր ու «խնդում»: Յաճախ նա էլ դժուարանում էր մենութեան որեւէ պահի անկեղծ չշնջալ՝ «Այնպէս անլոյս է այսօր / Առաւօտըս լուսացել»[2]: Եւ ինչքա՜ն ներքին գաղտնիքներ ունէր տէրեանական յագեցած տողը...: Յաճախ արդեօք չէ՞ն խաչուղուել բանաստեղծի ու նրա մեկնաբանի, աւելին՝ ընթերցողի եւ քերթութեան յուշած ճակատագրերը, որոնք քմահաճ մեկնութեան տրամադրութիւնից կարող էին բախել հոգեբանութեան անծանօթ դռներ: Ո՛վ կարող է որսալ, թէ որքա՜ն է յուսախաբութիւնը բախել նրանց երկուսի դռները՝ ներքնապէս հարազատացնելով անհատին բանաստեղծական անակնկալ գիւտի հետ:*

*Վ. Պարտիզունին վիթխարի դեր ունի տէրեանասիրութիւնը տէրեանագիտութեան վերափոխելու, գիտական նոր հայեացքի ձեւաւորման ճանապարհին: Եւ դա այն պարագայում, երբ ինքը սկսեց բնական տէրեանասիրութեան վայրկենական տրամադրութիւնից առանձնացնելով գիտական մեկնութեան սահմանը, եւ ընդհակառակը: Կարելի է ասել, որ աւելի քան չիսնամեայ գործունէութեան շրջանում Տէրեանը եղել է առանցքային եւ մշտահմայ հեղինակ, արժանացել բոլորակողմ ուշադրութեան, ուղղորդել:*

*Վ. Պարտիզունին առանձնակի ուշադրութիւն է նուիրել քնարերգակի ճանաչողութեան պատմահամեմատական մեթոդին: Համադրական լայն քննական կարկինով փորձել է տեսնել նոր եւ նորագոյն գրականութեան սահմանագծում տերեանագիտական գեղագիտութեան զարգացման տիպաբանութիւնը՝ միջավայրի մէջ ներառելով նրա հզօր ժամանակակիցներին՝ Յովհ. Թումանեանին, Աւ. Իսահակեանին, Ե. Չարենցին:*

---

[2] *Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երեւան, 1972, էջ 135:*

*Պատմաբանասիրական ոլորտումները նա տարել է վերլուծական փաստարկուած, համոզիչ, միշտ աչխոյժ ու ինքնատիպ ոճով՝ մեծ մասամբ փորձելով լուծել վիճայարոյց, կնճռոտ հարցականները: Վ. Պարտիզունին առաջիններից մէկն էր, որ հայ գրականագիտութիւնը ու նրա՝ անցեալ դարասկզբի նորագոյն ղէմքերին, յատկապէս՝ Վ. Տէրեանին, փորձեց գնահատել ռուս եւ համաչխարհային գրական տեսողութեան հունով, ռոմանտիզմի, սիմվոլիզմի նորատիպ չաղախով: Եւ դա՝ այն ժամանակ, երբ ասում էին՝ ինչքան «իզմերից» հեռու, այնքան ապահով: Աւելին՝ թւում էր, թէ ինչքան Վ. Տէրեանին «մօտեցնես» իրապաչտ գնահատութեան, այնքան լաւ նրա համար: Տիրապետող «պսեւդոզգիտական» այս նորաճեւ տարազներից Վ. Պարտիզունին աչխատում էր հեռու պահել «իր» բանաստեղծին: Եւ դա նրան մեծ մասամբ յաջողւում էր:*

*Տէրեանը ճգողական հզօր ուժ էր Վ. Պարտիզունու համար, որի նորովի բացայայտումները դարձան «Վահան Տէրեանի հետ» (1989) եւ թերեւս լաւագոյն՝ «Տէրեանի կենսապատումը» (1984) գրքերը: Դժուարութիւնների առկայութիւնը գրականագէտը խորութեամբ էր զգում՝ քաջ ծանօթ լինելով Վ. Տէրեանի ինտիմ կեանքին, հարազատների՝ երբեմն զգացական հակաղարձումներին: Յիրաւի, բանաստեղծի գրական ստեղծագործական ակունքների ճանաչողական իւրացումը բաւական երկար է տեւել: Անտեսելու չէր «նիւթի դիմադրութիւնը». բազում տէրեանական մենագրութիւնների մէջ լաւագոյն աչխատանքը ուշ՝ միայն կեանքի վերջին շրջանում «տրուեց»: Ընդ որում՝ Տէրեանի գիտական կենսագրական շարադրումը կառուցուած էր համակողմանի խոր գնահատութեամբ, առաջին անգամ շրջանառուած արխիւային վկայագրերի ճանաչողութեամբ, հին փաստերի նոր մեկնութեան հանդերձով: Արդէն այդ տարիներին տէրեանագիտութեան ակներեւ նուաճումները, բնականաբար, կապւում էին իր անուան հետ:*

*Տէրեանը բանաստեղծական չարային մտածողութեան, թեմատիկ ընդգրկումների նախասկզբութեամբ առաջնորդուած վարպետ է, չգերազանցուած թերեւս ողջ հայ պօէզիայում: Յորդում էին նրա գեղարուեստական մտքի անակնկալ ոլորանները: Ինքն էլ դա քաջ գիտակցում էր՝*

Ո՛վ գերագոյն փառք, վերջին հիացմունք,
Արիւնիր սիրտըս քո համբոյրներում:
Թախուէք, իմ երգեր, արցունք առ արցունք
Այնտեղ, ուր մարդկանց տանջանքն է լռում…[3]

*Պարտիզունին ոլորում է բանաստեղծական ենթախորքի բազում ծալքեր ու վերհանում պատկերների հոգեպարար չերտեր բոլոր չարքերում՝ «Գիչեր եւ յուչեր»ից մինչեւ «Կատուի ղրախտ» կամ թէկուզ երկու հատուածով գրուած «Վերադարձ»: Վ. Տէրեանի չարքերի կազմումի մէջ նորարարական էր Վ. Պարտիզունու մօտեցման ջիղը: Նա մտայղացաւ տէրեանական երգերից առանձնացնել «Ջօների գիրքը» (2002), ինչը բանաստեղծի բուն ցանկութիւնն էր՝ ներմուծելով «կամօքն Վահան Տէրեանի» թուով 53 քերթուած՝ մեկնաբանութիւններով, ծանօթագրութիւններով: Գաղափարը վաղուց էր գիտնականի աչխատանքային օրակարգում. յօդուածներ էր գրել, նախապատրաստել խնդիրը, ուրուագծել քննութեան ենթակայ բանաստեղծութիւնների շրջանակը: «Ջօների գիրքը», սակայն, լոյս տեսաւ տէրեանագէտի մահից (1997 թ.) հինգ տարի*

[3] *Նոյն տեղում, էջ 118:*

*անց, նրա դատեր՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզան Թաղէոսեանի նախաձեռնությամբ:*

*Շարքերի նախընտրության սկզբունքը Վ. Տէրեանին կանգնեցրել էր «Երկիր Նաիրի»-ի ծննդեան առջեւ՝ «Մթին չաղի անուրջներ» գրքից տարիներ անց՝ արդէն 1910-ական թվականներին: Թեմաների սահմանագատումի ջիղն ակնյայտ է, սակայն այն, ինչպէս որսում է գրականագէտի աչքը, անվրէպ ցոյց է տալիս հայրենի եզերքը, լեզուական անաղարտութեան, ոճային պարզ կառոյցի ըմբռնման միաւնականութիւնը, որ բերել է իր հետ բանաստեղծը 1900-ականներից: «Անել վշտի մէջ» գտնուող հայրենիքի առթած տրամադրութիւնը «Երկիր Նաիրի» շարքի երգչի հոգու հաւաքական պոռթկումն է: Դեռ առաջին գրքի էջերում առկայծող «քաղցր արբանքը» պիտի ամբողջանար հենց այստեղ՝*

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու եւ իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հըմայող ու հին խոստում:
Եւ մինչ այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպէս քնքուշ
Եւ խոնարհւում քեզ պէս յամառ,
Օ, հայրենիք, դառն ու անուշ[4]:

*«Երկիր Նաիրի» շարքում բանաստեղծի խոհերը ընթերցողին առաջնորդում են տարբեր հերոսների միջոցով՝ տրամադրութեան տարբեր վիճակների, հոգեբանութեան անգամ հակադիր բեւեռների առաջ կանգնեցնելով և՛ բանաստեղծին, և՛ ընթերցողին: Նրանք մե՛րթ երազայնութեան, մե՛րթ տառապանքի ներհակ պահերի կրողներն են, մե՛րթ էլ՝ «հայրենական տան» մոլար սիրահարի անհուն տխրութեանը վարժեցնող անհայրենիք տրուբադուրներ: Ահա ամէնից «հակասական» քերթուածը, որի առիթ գրականագէտը իր առջեւ խնդիր է դրել պարզելու Վ. Տէրեանի մտքի անակնկալ թռնճուկը.*

Ես անջատուած եմ հայրենի հողից,
Հայրենի տունը՝ իմ սրտին օտար,
Ինձ այրում է միշտ մի անյագ թախիծ,—
Յաւիտեան ղիւթող անյայտ ճանապարհ...[5]

*Վ. Պարտիզունին 1968-ին այս առիթ գրում է. «Թող խոստովանանք լինի, որ տարիներ շարունակ մտածելուց յետոյ էլ հաստատ չգիտենք, թէ «Ես անջատուած եմ հայրենի հողից» բանաստեղծութեան[6] ենթիմաստները, որոնք են: Արդեօ՞ք չգիտէր. գիտէր, բայց չէր կարող բացել քաղաքական ենթախորքը՝ Արեւմտեան Հայաստանից պարտադրուած «անջատուածութիւնը»: Ընդունելի՞ է արդեօք «հայրենի տունը՝ իմ սրտին օտար» տէրեանական մտքի ուղղագիծ վերծանման խօսքը: Տէրեանագէտը բաւարարւում է ներթաքոյց անզօր մտայ-*

[4] *Նոյն տեղում, էջ 243:*

[5] *Նոյն տեղում, էջ 53:*

[6] *Վ. Պ ա ր տ ի զ ո ւ ն ի. Վահան Տէրեան. ստեղծագործութիւնը, Երեւան, 1968, էջ 213:*

*նուիրեամբ. «Այս բանաստեղծութիւնը միայն հայրենասիրական չէ, այլ արտայայտութիւն բաւական հակասական տրամադրութիւնների»[7]: Նա բերում է նոր սահմանագիծ, երբ գրականագէտին գրաքննութիւնը եւս մէկ անգամ յուշում է լինել ուշադիր. չէ՞ որ Զնհալի շրջանն աւարտուած է, ուրեմն՝ նոր խօսքը կարկամած պիտի լինի: Մասնաւորապէս մեկնաբանութեան չերտերից դուրս պիտի լինի տէրեանական խոռվքի առաւել քան վտանգաւոր, գրեթէ պայթուցիկ ակնարկը, ինչպէս իր նախասիրած Շառլ Բոդլէրի «մելամաղձի» երգերը, որոնք նա թարգմանում էր սիրով: Տէրեանը յայտարարում է՝*

Միեւնոյն է ինձ հիւսիս թէ հարաւ, –
Մի խենթ տագնապ կայ իմ հիւանդ սրտում,
Կայ իմ հոգու մէջ մի անյագ ծարաւ.
– Յաւիտեան օտար, հայրենական տո՛ւն …[8]

*Պատահական չէին Պարտիզունու գիտական աշխարհում տէրեանական այդչափ ընդգրկումները: Նոր գնահատութեան արժանացաւ նրա կազմած «Վահան Տէրեանը ժամանակակիցների յուշերում» ստուար հատորը (1964), ուր գրականագէտը վերհանել էր անցեալ դարի 10-ական թվականների բարդ յարաբերութիւնների ոչ միաչերտ շղթան՝ կապուած քնարական երգչի կեանքի ու գործունէութեան հետ, պատմական անձերի գրողի խորը ճանաչողութեան աղերսները՝ ընդգծուած քաղաքական ու ընկերային հակուածութեամբ, տարաբնոյթ բանասիրական ճշգրտումներով: Ինչպէս անտեսել ականաւոր տէրեանագէտի խմբագրութեամբ կազմուած, բանաստեղծի երկերի եռահատորի (1960–1963) հիման վրայ կատարած շարունակական, այս անգամ՝ քառահատոր ժողովածուն (1972–1979)՝ ծաւալուն, խորաչերտ ծանօթագրութիւններով, որը առայսօր մնում է Վ. Տէրեանի երկերի յարաբերականօրէն ամբողջական լաւագոյն հաւաքածուն: Աւելացնենք, որ նա, ըստ էութեան, նախապատրաստում էր երգչի՝ իր այնքան փայփայած ակաղեմիական լիակատար ժողովածուի կազմումն ու հրատարակումը, տէրեանագէտների գիտակ խումբ ձեւաւորելը, որոնք ժամանակի մէջ աւարտի պիտի հասցնէին թերեւս առաջնահերթ յանձնառութիւնները: Վ. Պարտիզունին ափսոսում էր, որ դեռեւս ի յայտ չեն եկել ամբողջական Տէրեանի ժառանգութեան մէջ կորստեան մատնուած շուրջ 400 քերթուածները, որոնց փնտռտուքի արդիւնքին անվերապահօրէն հաւատում էր անգամ մահուան օրերին:*

*Իբրեւ ամփոփում ընդգծենք, որ մահից այսքան տարիներ յետոյ էլ Վաչէ Պարտիզունին մնում է առաջատարներից տէրեանագէտների շարքում:*

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա ուսուցանման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները՝ Սփիւռքի գրական աշխարհի կենսապատում, արեւմտահայ կրթական խնդիրներ: Հեղինակ է 9 գրքի և 100-ից աւելի հոդուածների:
ORCID: 0000-0001-7033-2041. danielyansuren21@aspu.am


[7] *Նոյն տեղում, էջ 212:*
[8] *Վ. Տ ե ր յ ա ն. Նշվ. ժող., էջ 53:*

ՀՏԴ : 929:947.925 Գրիգորյան + 39

Doi:10.54503/0135-0536-2025.2-298

# ԳՐԻԳՈՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ
## (Ծննդյան 95-ամյակի առթիվ)*

*Սյունյաց աշխարհի պատմության լավագույն գիտակներից և իրեն ճանաչողների նվիրական հուշաշխարհում անկորնչելի տեղ ունեցող անհատներից է վիմագրագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Գրիգոր Գրիգորյանը:*



*Ծնվել է 1930 թ. մարտի 2-ին Հյուսիսային Օսիայի Վլադիկավկազ քաղաքում, տեղի միակ հայկական եկեղեցու քահանա Տեր Մեսրոպի՝ ծնունդով Բիթլիսից, Էրզրումի Սանասարյան վարժարանում կրթություն ստացած ուսումնառյալ ու գիտակ հոգևորականի և Սարիղամիշում ծնված Շուշանիկի ընտանիքում:*

*1937 թ. Գրիգորյանների ընտանիքը տեղափոխվում է Երևան, որտեղ հայագիտության ապագա մշակը հաճախում է № 11 դպրոցը: 1947–1949 թթ. կրթությունը շարունակում է Էջմիածնի հոգևոր ճեմարանում, 1950–1954 թթ.՝ Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-լեզվագրական ֆակուլտետում, որն ավարտելուց հետո գործուղվում է Եղեգնաձորի շրջան, նշանակվում Հորս գյուղի դպրոցի տնօրեն (1954–1956 թթ.): 1956–1960 թթ. աշխատում է «Հայպետհրատ»-ում՝ որպես ավագ սրբագրիչ, 1962-ից՝ ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Այստեղ նա պիտի իրականացներ իր արդյունավոր ու բովանդակալից առաքելությունը՝ ավագ լաբորանտից հասնելով առաջատար գիտաշխատողի և վիմագրության բաժնի վարիչի պաշտոնի՝ դառնալով գիտական այդ օջախի սյուներից:*

*Գիտության աշխարհ Գ. Գրիգորյանի մուտքն ազդարարվում է «Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին» հոդվածով («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 260–263):*

*Անխոնջ գիտահետազոտական աշխատանքի առաջին իսկ տարիներից ուշադրության կենտրոնակետ է դառնում Սյունյաց աշխարհը՝ իր վանական կյանքով: Գիտության անդաստան նոր մուտք գործած հետազոտողն իր անձը նվիրում է Սյունիքի վանական խոշոր միաբանությունների վարչատնտեսական գործունեության հետազոտմանը: Արդյունքում ծնվում է «Սյունիքի վանական*

---

* *Ներկայացվել է 06. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*կալվածատիրությունը IX–XIII դարերում» թեկնածուական ատենախոսությունը, որը պաշտպանում է 1967 թ.՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան. 1973-ին աշխատանքը հրատարակվում է առանձին գրքով: Ու թեև այն նվիրված է Սյունյաց վանքերին, այնուհանդերձ, ներառում է առհասարակ հայոց վանքերին վերաբերող շատ ու շատ արժեքավոր բացահայտումներ:*

*1981 թ. Գ. Գրիգորյանն իր հաջորդ մեծարժեք աշխատության մեջ՝ «Սյունիքը Օրբելյանների օրոք», հիմնվելով մատենագրական և վիմագրական վկայությունների վրա, ուսումնասիրում է Սյունիքի քաղաքական-տնտեսական և մշակութային կյանքը՝ սելջուկ-թուրքերի, թաթար-մոնղոլների և թուրքմենական ներխուժումների ժամանակաշրջանում, ներկայացնում հայ-վրացական գինակցության չնորհիվ Սյունիքում Օրբելյանների հաստատման, նրանց՝ գերիշխանության հասնելու, ինչպես նաև միջավատական հարաբերությունների իրական պատկերը, տալիս Սյունիքի կրթամշակութային օջախների սեղմ նկարագիրը:*

*Սյունիքը նաև գիտնականի դոկտորական ատենախոսություն թեման է՝ «Սյունիքի հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությունը IX–XV դարերում»: Այս աշխատության մեջ վիմագրական ու մատենագրական սկզբնաղբյուրների հիման վրա հեղինակը ներկայացնում է Սյունյաց լեռնաշխարհում տիրող քաղաքական իրադրությունը և իշխանական տների ծավալած գործունեությունը՝ հատկապես բարձրագույն դպրոցների բացման և պահպանման ուղղությամբ: 1985-ին հետազոտողին չնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:*

*1990 թ. Երևանում հրատարակված* «Очерки истории Сюника (IX–XV вв.)» *ուսումնասիրության մեջ ներկայացված են նոր գրավոր աղբյուրներ, մասնավորապես՝ հեղինակի կողմից Վահանավանքի՝ Սյունյաց տիրակալների հանգստարանների պեղումների ժամանակ հայտնաբերված վիմական արձանագրությունները:*

*Ռուսաստանի գիտական միջավայրում լայն արձագանք է գտնում 2004 թ. Մոսկվայում լույս տեսած* «Род Орбелянов и история Сюника в IX–XV вв.» *աշխատությունը՝ չարադրված փաստական հարուստ նյութի՝ մատենագրական և վիմագրական սկզբնաղբյուրների հիման վրա: Այստեղ անվանի միջնադարագետ-պատմաբանը հանգամանորեն քննում է հարևան հարավային երկրի վայ պատմաբաններ Զիա Բունիաթովի, Դավուդ Ախունդովի, Ֆաիգա Մամեդովայի ու այլոց հավակնոտ տեսությունները Արցախի և Սյունիքի անցյալի վերաբերյալ. գիտնականը ոչ թե պարապում, այլ փաստերով, հիմնավորումներով հերքում է կովկասյան ժողովուրդների պատմությունը խեղաթյուրողներին և տարածքային հավակնություններ ունեցող քաղաքական վերնախավի սպասարկու «գիտնականներին»:*

*Պատմաբան Ս. Հախվերդյանի համահեղինակությամբ՝ Գ. Գրիգորյանը կազմում է բուհական ձեռնարկ՝ «Սյունիքի պատմությունն (բուհական համառոտ դասընթաց)» (2001), որ նվիրված է Սյունյաց աշխարհի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի լուսաբանմանը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:*

*Հայաստան աշխարհի Սյունյաց հատվածում կա հոգևոր-ճարտարապետական մի մարգարիտ, որն առմիշտ դառնում է ճանաչված գիտնականի մեծ սիրո ու խանդաղատանքի առարկան՝ X դարում Զաքիկ իշխանի որդի Վահանի կառուցած Վահանավանքի վանական համալիրը: 1966 թ. Գ. Գրիգորյանը նշանակվում է Կապանի հնագիտական արշավախմբի ղեկավար և կրում այդ առաքելությունը ողջ կյանքի ընթացքում: Արշավախումբը նպատակ ուներ պեղումներ կատարելու հայ ճարտարապետության Սյունյաց դպրոցի առավել հայտնի հուշարձանախմբերից մեկում՝ Վահանավանքում: Այդ ժամանակվանից ի վեր՝ Վահանի կառուցած վանական համալիրը մուտք է գործում բոլորանվեր ուսումնասիրողի գիտական, նաև առօրյա կյանք: Ավելի քան 40 տարի ճգված հետևողական աշխատանքի շնորհիվ անհայտության մշուշից ազատվում են պատմագիտական տեսանկյունից բարձրարժեք մի քանի տասնյակ վիմագրեր, որոնք անձայն բարբառում են զանազան պատմություններ Սյունյաց և Աղվանից արքայատան ներկայացուցիչների, ինչպես նաև՝ հոգևոր գործիչների մասին: Երկրորդ ծնունդն ապրած վիմագրերը նորություն էին հայագիտության՝ մասնավորապես Սյունիք և Արցախ աշխարհների միջնադարյան պատմության հիմնահարցերը լուսաբանելու առումով: Առաջին անգամ գիտության մեջ շրջանառվում է Սյունյաց արքայատան ներկայացուցիչների գահացանկը. նշվում են նրանց գահակալության ստույգ տարեթվերը, որոնք եթե ոչ մինչև վերջերս, գոնե տևական ժամանակ ոչ լիարժեք էին ներկայացվում հայագիտական աշխատություններում: Բազմատասնամյա աշխատանքի արդյունքներն ամփոփում են գոնում 2007 թ. Երևանում լույս ընծայված երկլեզու՝ հայերեն և ռուսերեն «Վահանավանք (պատմահնագիտական ուսումնասիրություն)» գրքում:*

*Տարբեր տարիների Վահանավանքում կատարված պեղումներին մասնակցում են հարյուրավոր ուսանողներ. նրանցից մի քանիսը հետագայում դառնում են գիտության, արվեստի, կրթության, քաղաքականության և մարդկային գործունեության այլ ոլորտների հայտնի անուններ:*

*Վահանավանքի պեղումները ղեկավարելու տարիներին բազմեռանդ ուսումնասիրողն ու կազմակերպիչը թղթին հանձնելով անմահացնում է առավել հիշարժան դեպքերն ու իրադարձությունները: Դրանք 2009-ին Երևանում լույս են տեսնում առանձին գրքով (հայերեն և ռուսերեն)՝ «Վահանավանքի վերածննդը. հնագետի օրագրից»: Խոսելով պեղումների մասնակիցների մասին՝ հեղինակն ասում է. ««Գործող անձանցից» շատերն այսօր մեզ հետ չեն. նրանց երբեք չի կարելի մոռանալ: Այս գիրքը մի կերոն է նրանց հիշատակը հավերժացնելու ճանապարհին»: Անգամ ոչ մասնագետները, կարծում ենք, մեծ հետաքրքրությամբ ու հաճույքով կընթերցեն այս գիրքը: Վահանավանքի վերամարմնառության գործում մեծ է Գ. Գրիգորյանի դերը:*

*Ազնիվ ու բարեխիղճ մտավորականի գիտական աշխատանքի հիմնական ուղղությունը, իհարկե, հայոց վիմագիր արձանագրություններն էին: 1986–2010 թթ. գլխավորում է հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժինը: Մեծաեռանդ իր աշխատանքով լուրջ ներդրում է ունենում հայագիտության այս բնագավառում: Հիշատակության է արժանի հայ գաղթաշխարհի մի հատվածի վիմական արձանագրությունների հետազոտությունը:*

*1960-ականների վերջերին Խորհրդային Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտխորհրդի որոշմամբ կազմվելու էր վիմագրական արշավախումբ՝ Խորհրդային Միության տարածքում ժամանակին եղած հայկական գաղթօջախների հայերեն ու հայերին վերաբերող օտարալեզու վիմագրերը հավաքելու և գիտական հիմունքներով հրատարակելու նպատակով: 1960–1996 թթ. հայ-ուկրաինական և հայ-ռուսական միացյալ արշավախմբերը, Գ. Գրիգորյանի գլխավորությամբ, ուսումնասիրում են Մոլդովայի, Ուկրաինայի և Ռուսաստանի տարածքում գտնվող հայերեն և հայերին վերաբերող ավելի քան 1500 վիմագիր արձանագրություն, ինչպես նաև՝ Ուկրաինայի և Ռուսաստանի թանգարաններում պահվող թանգարանային իրերի բազմաթիվ հայերեն մակագրություններ: Այս աշխատատար գործի ծանրակշիռ մասը իր ուսերին է կրում հայ վիմագրագիտության երախտավորը: Նրա աշխատասիրությամբ՝ գիտարշավների արդյունքները լույս են տեսնում «Դիվան հայ վիմագրության» (Ուկրաինայի և Մոլդովայի հայկական վիմագրերը) 7-րդ (1996) և «Դիվան հայ վիմագրության» (Ռուսաստանի Դաշնության հայկական վիմագրերը) 8-րդ (1999) պրակներում:*

*Գ. Գրիգորյանի մասին երախտիքի խոսքեր են ասել Կրեմլի Զինապալատի, Մոսկվայի Պատմության կենտրոնական թանգարանի, Թեոդոսիայի Հայկական քարեղարանի գիտաշխատակիցները, որոնց խնդրանքով վաստակաշատ գիտնականը ուսուցեն է թարգմանել բազմաթիվ գրաբարյան բնագրեր, հիմնադրել թանգարանային առանձին բաժիններ: Վիմագրագետին է վստահվել նաև Թեոդոսիայի Սբ Սարգիս եկեղեցու սրահներում բացված՝ Խորհրդային Միության մեջ առաջին հայկական քարեղարանի արձանագրությունների ուսուցեն թարգմանությունը: Բացառիկ արժեք են Գ. Գրիգորյանի՝ գրաբարյան վիմական բնագրերի ուսուցեն թարգմանությունները՝ խիստ կարևոր սկզբնաղբյուրներ կովկասագիտության համար. այդ բնագրերի լույսընծայումից հետո Ադրբեջանի Հանրապետության «միջնադարագետները» դադարեցրին անխմաստ պնդումները, թե, իբր, Սյունիքն ու Արցախը եղել են «Կովկասյան Ալբանիայի ծայրամասային գավառներ»: 1976 թ. Կրեմլի Զինապալատի թանգարանային բաժնի վարիչ Մ. Պոստնիկովայի խնդրանքով հայ գիտնականը ուսումնասիրել է «Վրացական» հորջորջվող ֆոնդը և պարզել, որ այնտեղ պահվող 26 իրերից 21-ն ունեն հայերեն, 3-ը՝ հունարեն և ընդամենը 2-ը՝ վրացերեն արձանագրություններ. ֆոնդը վերանվանվել է «Հայկական»:*

*Գ. Գրիգորյանը ոչ միայն ուսումնասիրել ու հրատարակել, այլև կորստից փրկել է որոշ արձանագրություններ. Թեոդոսիայում գտնվող Հովհ. Այվազովսկու տուն-թանգարանի ծովակողմյան պատին եղել են ավազապատ հայերեն արձանագրություններ: Համառ ջանքերի շնորհիվ ավազը մաքրվել է, վերականգնվել են մեսրոպագիր արձանագրությունները: Ավազից, ասել է թե՝ մոռացումից ազատվել են նաև Կիևի Սբ Սոֆիա տաճարի պատերին փորագրված 24 հայերեն արձանագրությունները:*

*Իր արդյունաւատ գործունեության ընթացքում Գ. Գրիգորյանը հավաքել և վերծանել է հարյուրավոր նորահայտ վիմագրեր:*

*Գ. Գրիգորյանի գրչի ծնունդ են մեծաթիվ գիտական հոդվածներ, որոնց մի մասը հրապարակվել է արտասահմանում: Ճանաչված մասնագետը հոդվածներ*

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

*է գրել նաև «Հայկական սովետական հանրագիտարանի» և «Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան»-ի համար: Մոտ երեք տասնյակ են կազմում նրա գիտական, նույնքան էլ՝ լրագրային և ամսագրային հոդվածները: Վիմագրագետի խմբագրությամբ հրատարակվել են գրքեր, եղել են նաև հրապարակումներ նրա ու նրա աշխատությունների վերաբերյալ: Հաճախ է զեկուցումներով հանդես եկել Սյունիքի աշխատավորության, ուսանողության առջև, տարածաշրջանում տեղակայված գինվորական ստորաբաժանումներում:*

*1980 թվականից ցկյանս վիմագրագետն եղել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի անդամ, 1993 թ.՝ ստացել պրոֆեսորի կոչում:*

*Մեծ է նրա դերը երիտասարդ գիտնականների պատրաստման գործում: Եղել է շուրջ մեկ տասնյակ ասպիրանտների գիտական ղեկավար, նրանցից չատերը դարձել են գիտության թեկնածուներ:*

*Գիտական աշխատանքին զուգահեռ՝ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1973–2010 թթ. դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, 1973–2016 թթ.՝ Երևանի պետական համալսարանում, 2003–2010 թթ.՝ Հր. Աճառյանի անվան համալսարանում: 1975–1979 թթ. ակադեմիկոս Վ. Հարությունյանի հրավերով, գրաբար և վիմագրություն է դասավանդել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության բաժնում:*

*Գիտության վաստակավորը հեղինակել է հայ վիմագրության՝ մեր իրականության մեջ առաջին բուհական ձեռնարկը՝ «Հայկական վիմագրություն (համառոտ ձեռնարկ բուհերի պատմության և բանասիրության ֆակուլտետների համար)» (Երևան, 2000):*

*Անցյալ դարի 80-ականների վերջին ու 90-ականների սկզբին՝ Արցախյան շարժման և ԽՍՀՄ փլուզման պատմաշրջանում, Գ. Գրիգորյանը Արցախի ու արցախահայության համար կենսականորեն կարևոր հարցեր արծարծող բազմաթիվ նամակներ ու հեռագրեր է հղում խորհրդային ղեկավարությանը՝ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարությանը, Գերագույն խորհրդի պատգամավորներին, կենտրոնական մամուլի և հեռուստատեսության պատասխանատուներին. վորձեր էին սրանք, որ անում էր ազգակից մարդկանց, առհասարակ մարդկանց սիրող անհատը՝ նրանց ցավն ու տվայտանքը գոնե ինչ-որ չափով մեղմելու նպատակով: 2005 թ. Երևանում այդ նամակները հրատարակվում են «Ղարաբաղյան օրագիր (1988–1992)» վերնագիրը կրող առանձին գրքով:*

*Գիտության ասպարեզի նվիրյալ ներկայացուցչի ներդրումը գնահատվել է. 1988 թ. մայիսի 12-ին ԳԱ նախագահության կողմից նա պարգևատրվել է գովեստագրով, 2003 թ.՝ պատվոգրով, 2005 թ.՝ վաստակագրով, 2010 թ. մայիսի 24-ին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրով նրան շնորհվել է «Գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:*

*Գիտամանկավարժական ահռելի վաստակ ունեցող մտավորական գործիչը մահկանացուն կնքում է 2018 թ. հոկտեմբերի 14-ին՝ 88 տարեկան հասակում:*

*2019 թ. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը «Վաստակաշատ գիտնականներ» մատենաշարով տպագրում է գիտնականի կենսամատենագիտությունը (կազմող՝ Սաթենիկ Խուրշուդյան, խմբագիր՝ Գագիկ*

*Սարգսյան)՝ յուրօրինակ քայլ՝ գնահատանքի, երախտագիտության, խնկարկումի՝ առ հոգեստար ուսուցչապետը, նվիրյալ գիտնականը, բարեհիշատակ մարդը:*

*Ինքս բարեբախտություն եմ ունեցել լինելու Գ. Գրիգորյանի սաներից: Նա նաև իմ ավարտաճառի ղեկավարն էր: Սա այն դեպքն է, երբ խոսքը տարբեր սերունդների ներկայացուցիչների իսկական մեծ ու անկեղծ բարեկամության մասին է, որ չարունակություն ունեցավ բուհական տարիներից հետո էլ՝ մինչև ուսուցչապետի մահը:*

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ

Բ. գ. թ.: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, արևմտահայերեն, հայոց լեզվի պատմություն, տերմինաբանություն: Հեղինակ է 1 մենագրության և 5 հոդվածի:
ORCID: 0009-0009-0758-8752. hrachyab@gmail.com

ՀՏԴ : 929:891.981.09 Դեմիրճյան + 82.035

Doi:10.54503/0135-0536-2025.2-304

# ՊԵՏՐՈՍ ԴԵՄԻՐՃՅԱՆ
## (Ծննդյան 75-ամյակի առթիվ)*



*Բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող, գրաքննադատ, գրականագետ, թարգմանիչ, մանկավարժ, ազգային-պետական և գրական-մշակութային գործիչ, Հայաստանի գրողների միության (ՀԳՄ) և ժուռնալիստների միության անդամ Պետրոս Դեմիրճյանի կենսական բազմակողմանի ուղին ավելի քան կեսդարյա պատմություն ունի, որի մեջ արտացոլված է մեր հոգեմտավոր կյանքի մի զգալի ժամանակահատված, մշակութային, ավելի կոնկրետ՝ գրական զարգացման մի մեծ, դժվար և խիտ շրջան՝ 1970-ականներից մինչև մեր օրերը:*

*Պ. Դեմիրճյանը ծնվել է Երևանում 1950 թ. մայիսի 30-ին: 1957–1967 թթ. սովորել է Երևանի Րաֆֆու անվան դպրոցում: Այնուհետև, 1972-ին՝ ԵՊՀ բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո, աշխատանքի է ընդունվել ՀԳՄ «Գրական թերթ»-ում՝ որպես գրաքննադատության բաժնի գրական աշխատող, ապա՝ բաժնի վարիչ (մինչև 1998 թ.): Հրապարակել է արդի գրական ընթացքին, գրականության տեսական խնդիրներին նվիրված բազմաթիվ հոդվածներ՝ այդ ամենն ամբողջացնելով նաև «Ժամանակը և գրականության զարգացումը» հետազոտությամբ, որն իբրև թեկնածուական ատենախոսություն, պաշտպանել է ԵՊՀ-ում 1981 թվականին: Աշխատությունն այնուհետև հրատարակվել է առանձին գրքով (Երևան, 1986, 220 էջ):*

*Զուգահեռ Դեմիրճյանը զբաղվել է նաև թարգմանական գործունեությամբ՝ հայ ընթերցողի դատին հանձնելով Վ. Պեկելիսի «Քո հնարավորությունները, մարդ» (1979), Ն. Պետրովիչի «Զրույցներ գյուտարարության մասին» (1980), Հ. Դուբախի, Ռ. Տաբերի «1001 հարց օվկիանոսի մասին և 1001 պատասխան» (1983), Ա. Գալանոպուլոսի, Է. Բեկոնի «Ատլանտիդա. առասպելի ետևում ճշմարտությունն է» (1985), ավելի ուշ՝ Վ. Սանսոնեի «Քարեր, որ հոգի ունեն» (2009) գիտահանրամատչելի գրքերը:*

*Բավական բուռն է եղել Պ. Դեմիրճյանի գործունեությունը Հայաստանի անկախացման սկզբի տարիներին (1980-ականի վերջ – 1990-ականի սկիզբ): Այդ շրջանում ակտիվ մասնակցություն է ունեցել Էստոնիայում հայկական մշա-*

---

* *Ներկայացվել է 22. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

*կութային ընկերության ստեղծմանն ու գործունեությանը, ընկերության «Վահագն» թերթի հրատարակմանը, կազմել (բանաստեղծ, թարգմանիչ Բաբկեն Սիմոնյանի հետ) և Բելգրադում հրատարակել է «Կնիժևնա լեչ» սերբական գրական թերթի՝ հայ գրականությանը նվիրված հատուկ համարը (16 էջ), հանրային հեռուստատեսությամբ ու Հայկական ռադիոյով վարել է «Բանավեճի ակումբ» և «Գրական անդաստան» գրական-մշակութային հաղորդաշարերը:*

*Անկախացումից հետո հետագա տասնամյակներին՝ գրական-գիտական-մշակութային աշխատանքներին զուգահեռ, Պ. Դեմիրճյանն ակտիվ գործունեություն է ծավալել նաև ազգային-պետական, հասարակական-լրագրողական ասպարեզներում: 1998–2000 թթ. աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարության լրատվության և քարոզչության վարչությունում (մամուլի բաժնի պետ), 2000–2009 թթ.՝ ՀՀ կառավարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունում (գլխավոր մասնագետ, վարչության պետի տեղակալ), 2011–2013 թթ.՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հասարակության հետ կապերի բաժնում (բաժնի պետ), ապա՝ 2013 թ. նույն նախարարության «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ում (տնօրենի խորհրդական): 1995–1997 և 2000–2005 թթ. նա դասավանդել է Երևանի Հր. Աճառյանի անվան համալսարանում: 2013–2023 թթ. վարել է ՀԳՄ վարչության քարտուղարի պաշտոնը: 2010 թ. ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ, ապա՝ առաջատար գիտաշխատող:*

*Պ. Դեմիրճյանի ծավալած բազմակողմանի գործունեությունն ու գրական-գիտական վաստակը գնահատվել են ինչպես պետական, այնպես էլ հասարակական, մշակութային մարմինների կողմից: Տարբեր տարիների արժանացել է ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալի (2014), Ռուսաստանի գրողների միության Մոսկվայի կազմակերպության Ա. Ս. Գրիբոեդովի անվան գրական մրցանակի (2014), ՀԳՄ «Վաստակի համար» մեդալի (2020), Ֆրիտյոֆ Նանսենի անվան Ոսկյա հուշամեդալի (2015), «Արաբկիր համայնքի պատվավոր քաղաքացի» կոչման՝ պարգևատրվելով հուշամեդալով (2009), ՀԳՄ Նիկոլ Աղբալյանի անվան մրցանակի և այլն:*

*Պ. Դեմիրճյանի հոգեմտավոր զարգացմանը հետևելիս հստակորեն երևում է, որ նա, անցնելով բարդ, իրարամերժ ժամանակների միջով, երբեք չի դավաճանել ինքն իրեն, հավատարիմ է մնացել իր համոզմունքներին: Նրա գրականագիտական տաղանդի լիարժեք բացահայտումը տեղի ունեցավ Անկախության չրջանում, երբ գրական մամուլում և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի, ուսումնական և այլ հաստատությունների գիտական պարբերականներում մեկը մյուսի ետևից սկսեցին հրատարակվել արդի ու դասական հայ պոեզիային և արձակին նվիրված նրա հոդվածներն ու մենագրությունները («Վարք Ինտրայի», 2003, «Տիրան Զրաքյան (Ինտրա) կամ «Հեքիաթի» իրականությունը», 2016), որոնք ունեն գիտական լուրջ մակարդակ, լայն ընդգրկում, փաստական և տրամաբանական ամուր հիմքեր, պատմական ճշգրիտ մոտեցում և դիրքորոշում: Նա կազմել և արևելահայերեն ուղղագրության է փոխադրել նաև Ինտրայի գլուխգործոց երկը՝ «Ներաշխարհ»-ը (2006):*

*Պ. Դեմիրճյանի՝ և՛ քննադատական (ժամանակակից ընթացիկ գրականության), և՛ գրականագիտական (գրական պատմության, անցյալի դասական արժեքների և գրականության ամբողջական զարգացման) աշխատանքների բնորոշ կողմերն են.*

*1) հավասարակշռությունը, որն օգնում է նրան ազատ մնալու բոլոր տեսակի դեռևս լրիվ չհաստատված, չհիմնավորված ծայրահեղություններից, զգայական և դեռևս գիտական ճշգրիտ ձևակերպում չստացած դատողություններից և հետևություններից, երևակայության ակտիվ միջամտություններից, որոնք կարող են տեքստն ավելի հետաքրքիր դարձնել, բայց չունեն գիտական հիմնավորում,*

*2) ճշգրտությունը, որը նրա աշխատանքային հիմնական սկզբունքն է, նրա, այսպես ասած՝ «կատեգորիկ իմպերատիվը», այն չափանիշը, որով նա մոտենում է փաստերին, տվյալներին, աղբյուրներին, ինչպես նաև՝ մտքերին, կարծիքներին, այն ամենին, ինչը վերաբերում է տվյալ հեղինակի անձնավորությանը, կենսագրական հանգամանքներին,*

*3) դիխավոր խնդիրները երկրորդական հարցերից տարանջատելու, տարբերակելու և աշխատանքի մեջ հիմնական ուշադրությունը դրանց վրա կենտրոնացնելու ձգտումը, որը գիտական տեքստը դարձնում է ավելի ամբողջական, իսկ աշխատանքի կոնցեպցիան՝ ավելի կառուցիկ, առանց ավելորդ կուտակումների,*

*4) առանձին հեղինակների (մասնավորապես՝ Տ. Զրաքյանի և Ե. Տեմիրճիպաշյանի) ինքնատիպության և անհատական ոչ ստանդարտ հոգե-աշխարհների ազդեցությունների որոնումը ստեղծագործությունների ընդհանուր կատարման վրա, որոնք կարող են վճռական նշանակություն ունենալ այդ ստեղծագործությունների համար (արտաքին աշխարհի հետ դրանց կոնֆլիկտային հարաբերությունների բնույթն ու եղանակը, որոնք ամենևին էլ երկրորդական չեն),*

*5) գիտական լեզվի պարզ, հստակ շարադրանքը, առանց բարդացումների և խճողումների (որոնք հաճախ են հանդիպում նման տիպի աշխատանքներում):*

*Ըստ այդմ՝ չնայած բազմակողմանիությանը, Պ. Դեմիրճյանի գործունեության հիմնական ասպարեզը գրականագիտությունն է, որտեղ նրա գիտական-ստեղծագործական միտքն իրականացվում է լավագույն ձևով: Կարելի է ասել, որ դա նրա առաջատար ոլորտն է, նույնիսկ ընթացիկ գրականությանը նվիրված նրա առանձին հոդվածները, գրաքննադատությունները, անդրադարձները հիմնվում են գրականագիտական որոշակի չափանիշների վրա: Բնականաբար, գրաքննադատությունը կտրված չէ գրականագիտությունից (կամ գրականության պատմությունից), բայց քննադատությունը, մինչև գրական նոր երևույթի վերլուծությունը և արժեքավորումը, ըստ էության, առաջնորդվում է նախևառաջ ստեղծագործությունից ստացած իր անմիջական տպավորությամբ, սուբյեկտիվ մոտեցմամբ, իր անձնական ճաշակով և նախընտրությամբ, որը կարող է նրան տանել սխալ ուղղությամբ (դա, ի վերջո, առաջին կարծիքն է տվյալ ստեղծագործության մասին, որտեղ սխալվելու հնարավորությունը չափազանց մեծ է): Այդ պատճառով, Պ. Դեմիրճյանը գրական նոր երկը գերադասում է դիտել գրական ընդհանուր համատեքստի մեջ՝ ձգտելով լինել ավելի օբյեկտիվ և ճշգրիտ: 1970–1980-ական թվականներին (հատկապես՝*

*«Գրական թերթ»-ում աշխատած տարիներին) նոր սերնդի պոեզիային և արձակին նվիրված հոդվածներում նա աշխատում էր լինել հնարավորինս օբյեկտիվ և անսխալ (մեծ մասամբ դա նրան հաջողվում էր): Նա հետամուտ էր այդ թվականներին նոր սերնդի գրական որոնումներին, նոր տիպի գրականության ստեղծմանը, որը հետևանքն էր ոչ միայն ներքին զարգացման տրամաբանության, այլև համաշխարհային գրականության որոշակի ներգործության: Դրանով է պայմանավորված նաև Պ. Դեմիրճյանի հետաքրքրությունը Սիյուռքի գրականության նկատմամբ, ինչպես նաև հայ գրականության (ընդհանրապես՝ հայ մշակույթի) ամբողջական և միասնական համակարգային ըմբռնմամբ, երբ արևելահայ, արևմտահայ ու սիյուռքահայ գրական շարժումները դիտվում են որպես մեկ միասնական գրական ամբողջություն:*

*Չափազանց կարևոր են Պ. Դեմիրճյանի հետաքրքրություններն արդի և դասական հայ գրականության միջազգային կապերի և առնչությունների, ինչպես նաև XIX դ. երկրորդ կեսերից արևմտահայ գրականության մեջ եվրոպական արժեքների ներմուծման և ուսումնասիրության խնդիրների նկատմամբ, որոնք ստեղծագործական նոր «իմպուլսներ» հաղորդեցին մեր գրականության ընթացքին (հատկապես՝ եվրոպական ռոմանտիզմը, որը, լինելով արևմտյան, այսինքն՝ քրիստոնեական մշակույթի զարգացման օրինաչափ երևույթ, հոգեհարազատ դարձավ հայ հեղինակների, մասնավորապես արևմտահայ գրականության մեջ, Պետրոս Դուրյանից անմիջապես հետո հանդես եկած հայ բանաստեղծների համար (Թովմաս Թերզյան, Եղիա Տեմիրճիպաշյան, Տիրան Զրաքյան), որոնց ստեղծագործական քիչ ուսումնասիրված հարցերին են նվիրված Պ. Դեմիրճյան գրականագետի հիմնարար ուսումնասիրությունները: Հայ գրականության մեջ հանիրավի մոռացված այս նշանակալից հեղինակների կյանքի և ստեղծագործական խնդիրներով առաջինը սկսեց զբաղվել հենց նա: Խորհրդային գրականության կյանքների մեջ դժվար տեղավորվող այս հեղինակների նկատմամբ ժամանակին ստեղծվել էր մերժողական «լուսանցքային» վերաբերմունք, որով նրանք հայտարարվում էին գաղափարապես խոտորված, հայ իրականության համար օտար, միստիկական կամ «հոգեխախտված», մինչև վերջ չկայացած հեղինակներ, որոնց նկատմամբ «չի կարող լինել լուրջ մոտեցում» (միակ բացառությունը Ալբերտ Կոստանյանի մի քանի հոդվածներն էին, որոնց շուրջը ստեղծվել էր «լռության պատնեշ», ձևացնելով, թե ոչինչ էլ չի եղել): Ձեռնարկելով կարևորագույն այս հեղինակների կյանքի և ստեղծագործությունների գիտական մանրակրկիտ ուսումնասիրությանը, Պ. Դեմիրճյանը նախ ժխտում է նրանց շուրջը ստեղծված անբարյացակամ վերաբերմունքը և ցույց տալիս այդ հեղինակների անառարկելի մեծ դերը հայ մշակութային զարգացման մեջ, նրանց համամարդկային և համազգային արժեքը, հոգևոր որոնումների փիլիսոփայական-գեղարվեստական բարձր նշանակությունը հայ գրականության (մասնավորապես՝ արևմտահայ գրականության) զարգացման համար: XX դարասկզբի պոլսահայ իրականության մեջ վիթխարի հեղինակություն ունեցող Տիրան Զրաքյանի (Ինտրա) կյանքին և ստեղծագործության գիտական ուսումնասիրությանը նվիրված «Վարք Ինտրայի» և «Տիրան Զրաքյան (Ինտրա). կամ «Հեթխաթի իրականությունը» մենագրություններում Պ. Դեմիրճյանն առաջին անգամ գիտական լուրջ հետազոտության է ենթարկում Տ. Զրաքյանի գրական ամբողջ ժառանգությունը՝ «Ներաշխարհը», «Նոճաստանը» և*

*պոլսահայ մամուլում հրապարակված նրա բազմաթիվ հոդվածները: Իհարկե, խոսքն այստեղ Հայաստանի գրականագիտության մասին է. Սփյուռքի գրականության մեջ այդ գրողի մասին ստեղծված է պատկառելի գրականություն, որը, սակայն, ունի ֆրագմենտար բնույթ ելնելով Սփյուռքի հոգեմտավոր առանձնահատուկ իրավիճակից: Վերլուծությունները գլխավորապես կենտրոնացած են Տ. Զրաքյանի «Ներաշխարհի» չուրջը. Բնականաբար, «Ներաշխարհը» նրա գլխավոր ստեղծագործությունն է, նրա ներքին կյանքի գիրքը, ուր խտացված են գրողի աշխարհայացքի բոլոր շերտերը, նրա բարդ, կրոնափիլիսոփայական, գեղագիտական, հասարակական գաղափարները, Հոգու և Ոգու որոնման նրա տառապանքները, Աստծո ներքին գգացողության և ներըմբռնման նրա պոետական մեդիտացիաները, բնության և գեղեցկության էքստազային վերապրումները: Դրանցում նա գտնում է Աստծո ներկայության գաղտնի և բացահայտ ձևերը (գաղտնի՝ ներքին խմաստների, խորհուրդների, այսպես ասած՝ «ներաշխարհային», և բացահայտ՝ բնության արտաքին, նյութական, պլաստիկ), որոնց կարելի է մտահասու լինել միայն պոետական բացառիկ վիճակների, բարոյական ինքնակատարելագործման և լեզվական կատարյալ վերամարմնավորման միջոցով:*

*Զգտելով լուծել «Ներաշխարհի» ժանրային հարցը՝ Պ. Դեմիրճյանը այն չի համարում փիլիսոփայական տրակտատ (թեև ստեղծագործությունը լեցուն է փիլիսոփայական խորհրդածություններով, որոնք սակայն չեն խանգարում նրա պոետական հյուսվածքին), ոչ էլ արձակ ստեղծագործություն, այլ՝ պոեզիա, բանաստեղծական յուրատեսակ հայտնություն, որ գրված է արձակ լեզվով (հայ գրականության մեջ հազվադեպ հանդիպող երևույթ, որ հետագայում հիմք է դառնում ազատ ոտանավորի համար):*

*XIX դարի վերջին տասնամյակների և XX դարի սկզբների պոլսահայ ամենահինքնատիպ և «ամենապարադոքսալ» բանաստեղծներից էր եղիա Տեմիրճիբաշյանը, որի՝ իր ժամանակին ունեցած մեծ հեղինակությունը և նրա մասին եղած ուսումնասիրությունները չեն համապատասխանում մեկը մյուսին: Պատճառը, թերևս, բանաստեղծի չափազանց ինքնատիպ անհատականության, ծայրահեղ դրամատիզմի և բարդ, հաճախ իրարամերժ, որոշակի համակարգային մոտեցման չտրվող ստեղծագործական աշխարհն է, որի ուսումնասիրությամբ զբաղվում է Պ. Դեմիրճյանը: Այդ աշխարհի «բանալին» գտնվում է ոչ այնքան արտաքին հանգամանքների (միջավայրի, կրթության, պատմական հասարակական հարաբերությունների), որքան նրա անձնական խռովահույզ կյանքի և ճակատագրի մեջ (հոգեկան լարված կյանքը, ի վերջո, նրան հասցրեց ինքնասպանության, 1908 թվականին): Իր բնույթով եղիա Տեմիրճիպաշյանի ստեղծագործական դրամատիկ աշխարհը հակադիր է Տիրան Զրաքյանի ներհուն և ներդաշնակ արվեստին, որը, ինչպես ցույց է տալիս Պ. Դեմիրճյանը, իր մեջ ընդգրկում է հեղինակի ձգտումը՝ ազատվել անձնականությունից, հաղթահարել սեփական «Ես»-ի սահմանները, ձուլվել «հոգևոր կոսմոսին», մինչդեռ եղիա Տեմիրճիպաշյանն այդ ամենը փնտրում է իր սեփական անձնական ճակատագրի մեջ, այդ պատճառով գրականագետը մանրամասնորեն հետևում է նրա կենսագրական տվյալներին, կյանքի ընթացքին: Վերջին տարիներին Պ. Դեմիրճյանը մի շարք գիտաժողովներում հանդես է եկել Տեմիրճի-*

*պաշյան ինքնատիպ գրողի, հրատարակչի, խմբագրապրի, մանկավարժի կյանքին և գործունեությանը նվիրված հետաքրքիր զեկուցումներով, որոնք հրապարակվել են հանրապետության պիտական հանդեսներում («Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գրականագիտական հանդես», «ՎԷՄ» և այլն) և գիտական նստաշրջանների նյութերի ժողովածուներում, որոնց ամբողջացումն է բոլորովին վերջերս հրատարակված «Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և գործը կամ «Միշտ ճամփան փնտրող մարդը պիտի ըլլամ»» ծավալուն (600 էջ) մենագրությունը (2025):*

*Իր ուժերի ծաղկման շրջանում գտնվող գրականագետը Թովմաս Թերզյանին նվիրված մենագրությամբ կավարտի արևմտահայ պոեզիայի ինքնատիպ եռյակի (Թերզյան-Տեմիրճիպաշյան-Ինտրա) ստեղծագործական ուսումնասիրությունը, որը մեծ ներդրում կլինի մեր ժամանակակից գրականագիտության մեջ:*

ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, համեմատական գրականության և գրականության տեսության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ գրականության տեսություն, դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 3 մենագրության և բազմաթիվ հոդվածների:
ORCID: 0009-0009-7946-1590. henrikedoyan@list.ru


Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

ՀՏԴ : 929:39(=919.81) Վարդանյան

Doi:10.54503/0135-0536-2025.2-310

# ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ

*Հայագիտության մեջ ոսկե տառերով է գրված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող, Աբխազիայի հայ գրողների «Սևծովյան այգաբաց» գրական միավորման Պատվավոր անդամ (2012 թ.) Սերգեյ Վարդանյանի անունը, ով ավելի քան կես դար զբաղվել է հայագիտությամբ և հատկապես՝ Համշենի հայերի բանահյուսության և ազգագրության ուսումնասիրությամբ: Ինչպես երեկ՝ իր ողջության օրոք, այնպես էլ այսօր՝ մահից հետո, եթե չասենք անհնար, ապա գոնե դժվար է խոսել համշենագիտության մասին՝ առանց հոլովելու նրա անունը: Արտերկրի գիտական շրջանակներում Ս. Վարդանյանին ճանաչում են հենց որպես համշենագետի, իսկ Հայաստանում, կարելի է ասել, Համշեն և Սերգեյ Վարդանյան անուններն անքակտելիորեն կապված են իրար:*



*Ս. Վարդանյանը ո՛չ գիտական կոչում ուներ, ո՛չ էլ աստիճան, նրա կոչումը մեկն էր՝ համշենագետ: Այդ բառը, իհարկե, չենք գտնի հայերենի որևէ բառարանում, որովհետև դա բնութագրում է միայն իրեն: Համշենագիտությունը Ս. Վարդանյանի համար պարզապես գիտություն չէր, ոչ էլ զբաղմունք, այլ համոզմունք էր, պայքար և ազգային արժանապատվություն: Նրա գիտությունը կյանքի ընթացք եղավ, որովհետև անձնական կյանքն ու գիտականը միահյուսվել ու առաջ էին չարժվում համընթաց:*

*Ս. Վարդանյանը ծնվել է 1952 թ. նոյեմբերի 9-ին Երևանում: 1969 թ. ավարտել է Հակոբ Պարոնյանի անվան թիվ 59 դպրոցը, 1974 թ.՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Այնուհետև աշխատանքի է անցել նույն ինստիտուտի Հոգեբանության ամբիոնում:*

*Արժանահիշատակ են «Պիոներ կանչ» (հետագայում՝ «Կանչ») թերթում և «Պիոներ» (հետագայում՝ «Աղբյուր») ամսագրում նրա աշխատած երկուսական տարիները, երբ Ս. Վարդանյանը, առանց չափազանցության, հսկայածավալ աշխատանքի միջոցով մատաղ սերնդին կապել է հայրենի բառ ու բանին՝ ժողովրդական բանահյուսությանը: Այդ կապի արդյունքը շատ չի ուշացել: 1981 թ. լույս է տեսել «Հրեղեն ճին» ժողովածուն, որի նյութը, Ս. Վարդանյանի կոչով, Հայաստանի, Վրաստանի, Աբխազիայի, Ադրբեջանի, Արցախի, Նա-*

*խիջևանի, Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների աշակերտներն էին հավաքել և ուղարկել իրենց հայրենի բարբառներով: Հավաքված նյութի մյուս մասը 2003 թ. հրատարակվել է «Թագավորի երազները» ժողովածուում: Այդ երկու ժողովածուները, իրավամբ, անզուգորդելի և ցօրս իրենց հաղթարշավը շարունակող աշխատանքներ են: Հետագայում դրանցից ընտրված արճակ նմուշները «Փրկված հեքիաթներ» վերնագրով Երևանում լույս են տեսել անգլերեն* ("The salvaged tales", 2007) *և երկու անգամ՝ գերմաներեն* ("Gerettete Märchen", 2009, "Vor dem Vergessen gerettete armenische Märchen", 2023)*:*

*Ս. Վարդանյանի հանրահայտ «Հայոց մայրաքաղաքները» (1985) գիրքը սկզբնապես, որպես հոդվածաշար, 1983 թ. տպագրվել է «Պիոներ» ամսագրում՝ դառնալով հայ աշակերտների համար հայրենագիտության անփոխարինելի աղբյուր: Այս հետաքրքրաշարժ գիրքը, նոր նյութերով համալրված, «Հայաստանի մայրաքաղաքները» վերնագրով վերահրատարակվել է 1995 թվականին: Դա, իրավամբ, գիտական և գրքային նոր մշակույթ էր:*

*Հետագա տարիներին Ս. Վարդանյանն աշխատել է Հայ ճարտարապետության թանգարան-ինստիտուտում, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, 1991–2002 թթ. եղել է ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհրդի փոխնախագահը:*

*Ս. Վարդանյանի մանանգիտական ուղին նախանշվել է իր պատանեկության հիշարժան մի դրվագով: 1969 թ. ամռանը 16-ամյա Սերգեյը, Սև ծովի առափնյա Ադլեր քաղաքում ամառային հանգիստն անցկացնելու ժամանակ, ականատես է դառնում մոտակա Մոլդովկա գյուղում հայկական դպրոց բացելու ստորագրահավաքի և խորապես դառնանում է Կրասնոդարի երկրամասի հայկական դպրոցների ծանր վիճակից: Վերադառնալով Հայաստան՝ նա չի կարողանում մոռանալ այդ պատկերը: Եվ ահա, նրա անմնացորդ նվիրմանը հայրենյունը վկա եղավ հատկապես 1970-ականներից, երբ սկսել է զբաղվել անծայրածիր տարածք և 11 ժամային գոտի ունեցող ԽՍՀՄ-ում սփռված հայերի խնդիրներով: Հենց այդ ընթացքում էլ Ս. Վարդանյանը բացահայտել է համշենահայերին, որոնք դարձել են նրա գիտական պրպտումների հիմնական առանցքը: Բազում գրկանքների գնով՝ բազմիցս գործուղման է մեկնել թե՛ խորհրդային տարբեր հանրապետություններ, թե՛ Արևմտյան Հայաստան (ժամանակակից Թուրքիա)՝ հաճախ առերեսվելով կյանքին սպառնացող ստույգ վտանգների:*

*1979 թ. «Գրքերի աշխարհ» ամսաթերթում տպագրվել է Ս. Վարդանյանի «Համշենցիների ձայնը» հոդվածը, որում նա անդրադարձել է 1971 թ. Սերո Խանզադյանի կազմած «Ձայն համշենական» ժողովածուի առաջին գրքին և Ադլերում բնակվող երկարամյա մանկավարժ, գրող ու բանահավաք Անդրանիկ Զեյթունյանի 1979 թ. կազմած երկրորդ գրքին: Դա ապագա համշենագետի առաջին հոդվածն էր Համշենի ու համշենահայերի մասին: Մեկ տարի անց նույն թեմայով մեկ այլ գրախոսական է տպագրել «Գարուն» ամսագրում: Արդեն 1982 թ., դարձյալ «Գարուն»-ում, տպագրվել է «Համշենցիները՝ ծանոթ և անծանոթ» ուղեգրությունը, որում Ս. Վարդանյանը պատմում է 1981 թ. Մոլդովկայի դպրոցի հայկական բաժին այցելության, առհասարակ Կրասնոդարի երկրամասի և Աբխազիայի համշենահայերի գյուղերում չրջագայության, հայկական դպրոցների վիճակի մասին: Այդ հոդվածը մեծ արճագանք ունեցավ,*

*որի շնորհիվ հաջողվեց Հայաստանի մանկավարժական բուհերում տարեկան 32 արտամրցութային տեղի հատկացման որոշում կորզել Ռուսաստանի Կրասնոդարի երկրամասի, Ռոստովի մարզի և Աբխազիայի հայ չրջանավարտների համար: Այսօր Աբխազիայի հայկական դպրոցների ուսուցիչներից չատերն այս նախաձեռնութեան չնորհիվ Հայաստանում ուսում ստացածներն են:*

*Ս. Վարդանյանի գիտական կյանքում բեկումնային է եղել 1981 թվականը, երբ նա մեկնել է Ռուսաստան՝ Կրասնոդարի երկրամասի համշենցիների գյուղերն ուսումնասիրելու, որտեղ իրեն հայտնել են, թե Ղազախստանից ու Ղրղզստանից եկած ինչ-որ մարդիկ կան, որոնք, խոսում են համշենցիների պես: Նա միանգամից գլխի է ընկել, որ Կենտրոնական Ասիայի բնակիչների նման հագնված այդ մարդիկ պետք է որ 1944 թ. Ակարիայից բռնի տեղահանված համշենահայերը լինեն, որոնց ինքը մի քանի տարի փնտրում էր՝ ջանալով փաստագրել և՛ բռնի տեղահանութիւնը, և՛, առաջին հերթին, բանահյուսական նյութեր հավաքել: Բայց, ժամանակի սղութեան պատճառով, նա չի հասցրել խորամուխ լինել մանրամասների մեջ և վերադարձել է Երևան:*

*Մոտ երեք տարի անց՝ 1984 թ. ապրիլին, տեղեկանալով, որ Կրասնոդարի երկրամասում վերաբնակված համշենահայերից ոմանք եկել են Ղրղզստանի Օշի մարզի Կըզըլ-Կըյա քաղաքից, մեկնել է նախ Ղրղզստան, ապա՝ Ղազախստան: Այդ ուղևորութեան ընթացքում Ս. Վարդանյանին հաջողվել է գրառել համշենցիների բանարվեստի՝ զգալի քանակի նմուշներ և փաստագրել նրանց բռնագաղթը: Ղազախստանում, Ղրղզստանում և Ուզբեկստանում Ս. Վարդանյանը եղել է նաև 1987 թ.: Այդ չրջագայութիւնների ընթացքում Ղազախստանում գրառված «Արդէլէցիք՝ ավչի» երգիծական մանրավեպին ու դրա փոփոխակներին է նվիրված «Բանահյուսական պատումի միջավայրը (կրոնափոխ համշենահայերի մի զվարճապատումի տարբերակները)» մենագրութիւնը (Երևան, 2022, 352 էջ), որը, ի չարս այլ յուրահատկութիւնների, առանձնանում է մուսուլման և քրիստոնյա հայերի բանահյուսութիւնն առաջին անգամ համապարփակ քննութեան ենթարկելու առումով:*

*Թեև Ս. Վարդանյանն արմատներով Վանից էր, սակայն հիմնադրման օրվանից՝ 1992 թ., եղել է Հայաստանի «Համշեն» հայրենակցական-բարեգործական ՀԿ նախագահի տեղակալ, իսկ 2004–2018 թթ. հասարակական հիմունքներով աչխատել է որպես նույն ՀԿ «Ձայն համշենական» պաշտոնաթերթի գլխավոր խմբագիր: 13–14 տարի, Ս. Վարդանյանը միայնակ հրատարակել է այդ թերթը, որի յուրաքանչյուր համարի հազար օրինակ տպաքանակն անվճար բաժանել է Հայաստանի և Սփյուռքի ընթերցողներին, ուղարկել Ռուսաստանի, Աբխազիայի ու Թուրքիայի համշենցիներին: Միայն բացառիկ կամքի տեր մարդը, իր գործի մոլեռանդ նվիրյալը կարող է տարիներ չարունակ իր տան մի սենյակը տպարան-խմբագրատուն դարձնել հանուն գաղափարի:*

*Հարազատ ինստիտուտում՝ գործընկերների հետ զրույցների ժամանակ, Ս. Վարդանյանը վերջին մեկ-երկու տարիների ընթացքում անընդհատ խոսում էր իր կյանքի մատենագիտութեան մասին՝ այն համարելով իր «կարապի երգը», և չատ անհանգիստ էր՝ «չլինի, թե չհասցնեմ»: Հասցրեց, բայց դրանից հետո, երբ առողջութիւնն ամբողջովին քայքայված էր, իսկ գիտակցութիւնը հաճախ մթագնում էր, նա, այնուամենայնիվ, չկարողացավ հանգարտ ու հանգիստ ապրել իր կյանքի վերջին ամիսները և գրեց ու լուսյ ընծայեց 1944 թ. Ակարիայի*

*սահմանամերձ գյուղերից այլազգիների հետ Ղազախստան և Ղրղզստան աքսորված կրոնափոխ համշենահայերի մասին պատմող «Աքսորված համշենահայերի հետքերով» (Երևան, 2025, 432 էջ) ուշագրավ աշխատությունը, որը, ցավոք, այս անգամ իրապես դարձավ նրա «կարապի երգը» ... Ընդամենը մոտ մեկ ամիս անց՝ 2025 թ. մայիսի 30-ին, դադարեց բաբախել մեծ համշենագետի սիրտը:*

*Ս. Վարդանյան բանասերի, պատմաբանի, բանահավաքի, բանագետ-բարբառագետի, արձակագրի, հրապարակախոսի կեղաբյա գիտական ուղին՝ դրքեր, հոդվածներ և այլ հրապարակումներ, ամփոփված է իր իսկ կազմած և 2025 թ. լույս տեսած «Ընդարձակ մատենագիտություն (1974–2024)» աշխատության մեջ (Երևան, 2025, 380 էջ): Հանրագիտարանային ոճով գրված այս աշխատանքը եզակի արժեք ունի բանասերների, պատմաբանների, ազգագրագետների, մշակութաբանների, սփյուռքագետների և, հատկապես, ցեղասպանագետների, քրիստոնյա և կրոնափոխ համշենահայերի պատմությամբ հետաքրքրվողների համար:*

*Հայագիտությանը, հայ մշակույթին մատուցած բացառիկ ծառայություններին համար Ս. Վարդանյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների ու պարգևների՝ «Գրքերի աշխարհ» ամսաթերթում «Հուհա» հումորի մրցույթի կրկնակի դափնեկիր (1974 և 1975), «Հրապարակախոսական հոդվածի և ակնարկի համար» Հայաստանի ժուռնալիստների միության տարվա մրցանակ (1980), Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի կողմից չնորհված Արծաթե հուշամեդալ (Վատիկան, 1992), «Հայաստանի մայրաքաղաքները» գրքի համար՝ Թեքեյան մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակ (1997), Հռոմի պապ Հովհաննես Պողոս Երկրորդի՝ Հայաստան կատարած ուխտագնացությանը նվիրված հուշամեդալ (2001), Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի ժուռնալիստների միության բարձրագույն մրցանակ՝ որպես խմբագիր (2009), Ռուսաստանի հայերի միության հիմնադրման 10-ամյակին նվիրված մեդալ (2010), Հայաստանի Ֆրիտյոֆ Նանսեն միջազգային հիմնադրամի «Ֆրիտյոֆ Նանսեն» Ոսկե հուշամեդալ (2012), ՀՀ մշակույթի նախարարության Ոսկե մեդալ (2012), ՀՀ սփյուռքի նախարարության «Վիլյամ Սարոյան» մեդալ (2012), Երևանի քաղաքապետի Ոսկե մեդալ (2012), Հովհաննես Թումանյանի թանգարանի մրցանակ և մեդալ (2013), Հայաստանի գրողների միության «Գրական վաստակի համար» մեդալ (2015):*

*Ս. Վարդանյանի անցած գիտական ճանապարհը պարզապես հետազոտողի ուղի չէր. դա հայ մարդու անմար հիշողության, հավաքական ցավի և գոյապայքարի արձանագրումն էր գիտության լեզվով: Նրա գործը հատեց առարկայական հետազոտության սահմանները՝ վերածվելով հոգևոր ու ազգային պարտքի մարմնավորման: Որպես բանագետ և ազգագրագետ՝ նա ապրեց այն գիտակցումով, որ գիտնականը պատմությունն ու մշակույթը ոչ միայն վերլուծելու, այլև այն փրկելու առաքելություն ունի:*

*Սերգեյ Գագիկի Վարդանյանի անունը մշտապես վառ կմնա իր բոլոր գործընկերների սրտերում՝ որպես նվիրյալ և անկոտրում գիտնականի օրինակ: Նրա կյանքի պատմությունը ոգեշնչման և պատասխանատվության աղբյուր կդառ-*

*նա հայագիտության ոլորտում առաջին քայլերն անող երիտասարդների համար: Որքան տարիները գլորվեն, այնքան ավելի է արժևորվելու նրա գործը, այնքան ավելի է ընդգծվելու ու երևան գալու նրա մեծությունը, որը ողջության օրոք երբեմն, ցավոք, չէր նկատվում ... առաջին հերթին հենց իր չափազանց համեստության պատճառով: Նրա կենսագրությունն ապացույց է, որ գիտությունը կարող է լինել ոչ միայն մասնագիտական ընտրություն, այլև ամբողջական ապրած կյանք՝ ազգային հիշողության պահապանի առաքելության:*

ՀՀ ԳԱԱ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,
ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
110-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Ավետիս Հարությունյան –** Վանի 1915 թ. «ապստամբության» հայեցակարգի ժխտելիության հարցի շուրջ .....3
**Հենրիկ Խաչատրյան –** Մարզպանական Հայաստանի եկեղեցական թեմական բաժանումը (428–630-ական թվականներ) .....34
**Վահե Սարգսյան –** Ձավախահայության կյանքի արտացոլումը «Ձավախք» ամսաթերթի էջերում (1990-ական թվականների սկիզբ) .....51

## ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 160-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Հերիքնազ Որսկանյան –** Ականավոր հայագետ Մանուկ Աբեղյանը՝ ակադեմիական գիտության ակունքներում .....73

ՆԻԿՈՂ ԱՂԲԱԼՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

**Արմեն Մանուկյան –** Նիկոլ Աղբալյան. կյանքը և գործունեությունը .....101
**Սուսաննա Հովհաննիսյան –** Պատմությունը Հովհաննես Թումանյանի անավարտ երկերում (պատմական դրամաներ և պատմվածքներ) .....124

## ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Տորք Դալալյան –** Վիպաբանական ընդհանուր սխեմաները հայկական և օսական էպոսներում .....137
**Թամար Հայրապետյան –** Չափահասության խորհրդածեսի դրսևորումը հայկական և իտալական մի հեքիաթախմբում.....157
**Սամվել Ոամազյան –** Թյուրքական էպոսը և Թեոդորոս Գավրասը. իշխան, զորավար և նահատակ (ռուս.) .....174

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Վիկտոր Կատվալյան** – Լոռու խոսվածքին հատուկ որոշ բառերի մասին (համեմատական վերլուծություն) .....209

## ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Գոհար Վարդումյան, Կարեն Թոխաթյան** – Հայաստանի ժայռապատկերները և դրանց միջավայրը որպես սրբազան տարածք (անգլ.) .....226

## ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Գարեգին Թումանյան** – Արցախի սկյութական մշակութային հատկանիշներով դամբարանները .....247

## ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

**Արարատ Հակոբյան** – Հայ պատմիչներն ու պատմաբանները հայոց պատմության պարբերացման հիմնահարցի շուրջ (V դ. – XX դ. սկիզբ) .....262

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Միեր Նավոյան** – Աննա Արևշատյան. Տիգրան Մանսուրյան .....284
**Աշոտ Գալստյան** – Արսեն Հարությունյան. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությունը .....289

## ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

**Սուրէն Դանիէլեան** – Վաչէ Պարտիզունի (ծննդյան 110-ամյակի առթիվ) .....292
**Հրաչյա Բալոյան** – Գրիգոր Գրիգորյան (ծննդյան 95-ամյակի առթիվ) .....298

## ՄԵՐ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԸ

**Հենրիկ Էդոյան** – Պետրոս Դեմիրճյան (ծննդյան 75-ամյակի առթիվ) .....304

## ԼՐԱՏՈՒ

**Սերգեյ Վարդանյան** .....310

# СОДЕРЖАНИЕ

## ИСТОРИЯ

К 110-ЛЕТИЮ ГЕНОЦИДА АРМЯН

**Аветис Арутюнян** – К вопросу об отрицании концепции «восстания» в Ване 1915 г. .....3
**Генрик Хачатрян –** Церковно–диоцезальное деление Марзпанской Армении (428–630-ые годы) …….....34
**Ваэ Саркисян** – Отражение жизни армян Джавахка на страницах ежемесячной газеты «Джавахк» (начало 1990-х годов) …….51

## ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

К 160-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ МАНУКА АБЕГЯНА

**Эрикназ Ворсканян** – Выдающийся арменовед Манук Абегян у истоков академической науки .....73

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ НИКОЛА АГБАЛЯНА

**Армен Манукян** – Никол Агбалян: жизнь и деятельность .....101
**Сусанна Ованесян –** История в незавершенных произведениях Ованеса Туманяна (исторические драмы и рассказы)……..124

## ФОЛЬКЛОРИСТИКА

**Торк Далалян** – Общие эпические схемы в армянских и осетинском эпосах ...137
**Тамар Айрапетян** – Отражение церемонии инициации в одной группе армянских и итальянских сказок ……157
**Самвел Рамазян** – Тюркский эпос и Теодорос Гаврас: князь, военачальник и мученик (на русск. яз.) ……174

## ЛИНГВИСТИКА

**Виктор Катвалян** – О некоторых словах, характерных для говора Лори (сравнительный анализ) ……...209

## КУЛЬТУРОЛОГИЯ

**Гоар Вардумян, Карен Тохатян** – Петроглифы Армении и их среда как священный ареал (на англ. яз.) ……...226

АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ

**Гарегин Туманян** – Погребения Арцаха с признаками скифской культуры ….247

ОБСУЖДЕНИЯ

**Арарат Акопян** – Армянские историографы и историки по вопросу периодизации истории Армении (V в. – начало XX в.) ……...262

РЕЦЕНЗИИ

**Мгер Навоян –** Анна Аревшатян: Тигран Мансурян…….....284
**Ашот Галстян –** Арсен Арутюнян: Каменная летопись кафедрального собора Святого Эчмиадзина .....289

НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

**Сурен Даниэлян –** Вече Партизуни (к 110-летию со дня рождения) ……..292
**Грачья Балоян** – Григор Григорян (к 95-летию со дня рождения) …….....298

НАШИ ЮБИЛЯРЫ

**Генрик Эдоян** – Петрос Демирчян (к 75-летию со дня рождения) …….304

ХРОНИКА

**Сергей Варданян** ……310

CONTENTS

HISTORY

TO THE 110TH ANNIVERSARY
OF THE ARMENIAN GENOCIDE

**Avetis Harutyunyan** – On the Issue of denial of the concept of “Rebellion” of Van in 1915 .....3
**Henrik Khachatryan** – The ecclesiastical diocesan division of Marzpan Armenia (428–630s) ……34
**Vahe Sargsyan** – Coverage of Javakhk Armenians’ life on the pages of “Javakhk” montly newspaper (In the early 1990s) ……...51

## LITERARY STUDIES

TO THE 160TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF MANUK ABEGHYAN

**Heriknaz Vorskanyan** – Prominent Armenologist Manuk Abeghyan at the origins of the Academic Science …..……73

TO THE 150TH ANNIVERSARY
OF THE BIRTH OF NIKOL AGHBALYAN

**Armen Manukyan** – Nikol Aghbalyan: Life and Activity ……101
**Susanna Hovhannisyan** – History in the unfinished works of Hovhannes Tumanyan (historical dramas and stories) …….....124

## FOLKLORE STUDIES

**Tork Dalalyan** – General epic schemes in the Armenian and Ossetian epics .....137
**Tamar Hayrapetyan –** Reflection of the initiation ceremony in one group of Armenian and Italian fairy tales …….157
**Samvel Ramazyan** – The Turkic epic and Theodoros Gavras: governor, commander and martyr (in Russ.) ……..174

## LINGUISTICS

**Viktor Katvalyan** – About some words characteristic of speech of Lori (comparative analysis) ……209

## CULTURAL STUDIES

**Gohar Vardumyan, Karen Tokhatyan –** The petroglyphs of Armenia and their environment as a sacred area (in Eng.) ……...226

## ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**Garegin Tumanyan –** Sepulchres in Artsakh with scythian cultural characteristics …….247

## DISCUSSIONS

**Ararat Hakobyan –** Armenian historiographers and historians on the periodization of history of Armenia (V – early XX centuries) ……..262

REVIEWS

**Mher Navoyan –** Anna Arevshatyan: Tigran Mansuryan…….....284
**Ashot Galstyan –** Arsen Harutyunyan: Stone chronicle of the Cathedral of Holy Etchmiadzin.....289

OUR HONOURED SCHOLARS

**Suren Danielyan –** Vache Partizuni (on the occasion of his 110th birthday) ……292
**Hrachya Baloyan –** Grigor Grigoryan (on the occasion of his 95th birthday) ……..298

OUR JUBILEES

**Henrik Edoyan – Petros Demirchyan** (on the occasion of his 75th birthday) .....304

NEWS

**Sergey Vardanyan** ……..310

| | |
|---|---|
| Հայերեն բաժնի խմբագիր | Լիանա Օհանյան |
| Հայերեն բաժնի սրբագրիչ | Աղավնի Շահինյան |
| Ռուսերեն բաժնի խմբագիր | Գայանե Հարությունյան |
| Անգլերեն բաժնի խմբագիր | Մարինե Ժամկոչյան |
| Համակարգչային ձևավորում և էջադրում | Գոհար Հովհաննիսյան |

| | |
|---|---|
| Редактор армянского отдела | Лиана Оганян |
| Корректор армянского отдела | Агавни Шагинян |
| Редактор русского отдела | Гаянэ Арутюнян |
| Редактор английского отдела | Марине Жамкочян |
| Компьютерный дизайн и пагинация | Гоар Оганнисян |

| | |
|---|---|
| Editor of Armenian segment | Liana Ohanyan |
| Proofreader of Armenian segment | Aghavni Shahinyan |
| Editor of Russian segment | Gayane Harutyunyan |
| Editor of English segment | Marine Zhamkochyan |
| Computer design and pagination | Gohar Hovhannisyan |

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. (010)581872
Адрес редакции: 0019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. (010)581872
Address: 24G Marshal Baghramyan av., 0019, Yerevan, Armenia, tel. (010)581872

Հանդեսի պաշտոնական կայքէջեր՝ https://patmabanasirakanhandes.sci.am / https://pbh.sci.am
http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Официальный сайты журнала: https://patmabanasirakanhandes.sci.am / https://pbh.sci.am
http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html
Official sites of the journal: https://patmabanasirakanhandes.sci.am / https://pbh.sci.am
http://academhistory.am/hy/պատմաբանասիրական–հանդես.html

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ info@pbh.sci.am
Электронная почта журнала: info@pbh.sci.am
E-mail of the journal: info@pbh.sci.am

*Հրատ. պատվեր № 1382*
*Ստորագրված է տպագրության 14. 07. 2025 թ.:*
*Տպագրական 20,25 մամուլ: Թուղթ № 1, 70x100:*
*Տպաքանակը՝ 150:*

ՀՀ ԳԱԱ տպարան, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:

Изд. заказ № 1382
Подписано к печати 14. 07. 2025 г.
Печ. 20,25 л. Бумага № 1, 70x100.
Тираж −150.

Типография НАН РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.